



Հայկական գիտահետազոտական հանգույց  
Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Մտեղծագործական համայնքներ  
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

ստանձնել և տարածել նյութը ջանկացած մեջադիմով կամ կրիչով  
մեջադիմով կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

# Գ Ա Յ

# Գ Ա Ն Ե Ր Ա Գ Ի Տ Ա Կ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՔԱՂԱՔՆԵՐԸ, ԳԻՒՂԵՐԸ, ԼԵՈՒՆԵՐԸ, ԳԵՏՆԵՐԸ, ՎԱՆՔԵՐԸ ԵՒ ՊԱՏՄԱԿԱՆ ՎԱՅՐԵՐԸ, ՀԻՆ ՈՒ ՆՈՐ ՀԱՅ ԳԱՂՈՒԹՅՆԵՐ, ՀԱՅ ՀԻՆ ՈՒ ՆՈՐ ԴԷՄՔԵՐ (Թագաւորներ եւ իշխանաւորներ, կարողիկոսներ եւ եկեղեցականներ, ազգ. գործիչներ, համալսարանականներ, հեղինակներ, խմբագիրներ, վասակաւոր ուսուցիչներ եւ այլն), ՀԱՅՈՒԹԵԱՆ ՀԵՏ ԿԱՊ ՈՒՆԵՑՈՂ ՀԻՆ ՈՒ ՆՈՐ ՕՏԱՐԱԿԱՆՆԵՐ, ՀԱՅ ՊԱՐՔԵՐԱԿԱՆ ՄԱՄՈՒԼԸ Եւ այլն

Խ Մ Բ Ա Գ Ի Ե Յ

Հ. ՄԿՐՏԻԶ ՎՐԴ. ՊՈՏՈՒՐԵԱՆ

Պ Ա Ր Տ Ի Ջ Ա Կ Յ Ի



1938

ՏՊ. ՊՈՒՔՐԷՇ

Ընթերցող, կարգա՛, երբ ո՛րեւ անուն կամ ծանօթութիւն պակաս կը գտնես՝ հաղորդէ հետեւեալ հասցեին P. M. Bodurian Frumoasa-Ciuc (România)  
Գինն է 120 լէյ, 1,25 տղար, 25 Ֆրանկ, 4 շիլլին, 90 լեվա, 100 դրու, 100 սրախմի



Սիրելի բաժանորդ «ՀԱՅ ՀԱՆՐԱՊԵՏԱԿ»ի

Վստան Ձեր նիրալան աջակցութեան, քանի որ բաժանորդ արձանագրուեցա՛մ՝ այս վիթխարի գործին ձեռնարկեցի միս մինակս, ապաւինած իմ յաժառ աշխատանքիս եւ Ձեր բաժնեգրեցիս:

Մինչեւ նիմակ ո՛չ մեկ անձ, ո՛չ մեկ ընկերութիւն եւ Միաբանութիւն չէ հրատարակած այսպիսի մեծածաւալ գիրք մը, ինչ որ պիտի թլլայ «ՀԱՅ ՀԱՆՐԱՊԵՏԱԿ»ը:

Պատկերազարդ, մեծադիր այս ամէ՛ն հայու օգտակար գիրքը՝ 4000 էջերէ պիտի բաղկանայ:

Որպեսզի գէթ նիրալանի մտատանջութիւն չունենամ, կը խնդրեմ որ երբ «Հայ Հանրագիտակ»ի մեկ գիրքը կը ստանամ ԻՍԿՈՅՆ անոր փոքրիկ արժէքը որկե՛ք Ձեր շրջանի մեր ընդհանուր զանձիչին՝ որուն հասցէն գրքին կողքին վրայ կը գտնուի:

Ուրիշ ազգեր այսպիսի մեծ գործեր պետական նպաստներով լոյս կ'ընծայեն. իսկ ես միայն Ձեր բաժնեգրելով կը գոհանամ:

Պատշաճ է ուրեմն որ այս գրքիս վերջը արձանագրեմ բոլոր իմ վնարող բաժանորդներուս անունները, ապագայ դարերուն յանձնելու զանոնք՝ որոնք նիրապէս օգնեցին ինձի:

Ո՞՞՞ ԲԱՐԵԿԱՄԻ, Ո՞՞՞ ԾԱՆՕԹԻ ԵՒ Ո՞՞՞ Ո՛՛ ԵՒ Է ԱԶԳԱՅԻՆ ՀԱՍՏԱՏՈՒԹԵԱՆ ՉԻՒ ՉԻ ՏՐՈՒԻՐ «Հայ Հանրագիտակ»ը: Դպրոցներու, ուսուցիչներու, փոքրիկ համայնքներու գրադարաններուն միայն զեղչեալ գինով կը տուի. երբ անոնք մեզի դիմեն:

Ո՛վ որ իր բաժնեգրին իսկոյն չի վնարեր, ԱՆ ՄԵՐ ԳՈՐԾԻՆ ԿԱՂԱՆՈՒՆ ՊԱՏՃԱՌ ՊԻՏԻ ԸԼԼԱՅ:

†. գիրքը արդէն հրատարակ հանած եմ եւ որկած բաժանորդներուն, որոնցմէ կրկին կը խնդրեմ որ ամէնէր բարեհաճին բաց ֆարդով մը ՂՐԿԵԼ ինձի (անոնք որ չեն որկած) իրենց ձեռնագրովայրին անունը, գրադումնին եւ այլն:

Կրկին կը յիշեցնեմ Ձեզ, Յարգելի Բաժանորդներ. ԻՍԿՈՅՆ ՎՃԱՐՆՅԷՔ Ձեր ստացած գրքերուն գինը:

Հ. Մ. ՊՈՏՈՒՌԵԱՆ



ԲԻՐՋԵՒԱՆ, այլազգարնակ գղ. Զանգեզուր գու. մէջ:

ԲԻՐՄԱՆԻԱ (Հիւսիսային), քաղ. Լնդկաստանի ուր հայերը 1860—3 Ս. Գրիգոր Լուսաւորչի անուամբ եկղ. մը կը շինեն: (Գաբաւանեան «Գրպ. Տար.» 1935 էջ 135):

ԲԻԻՉԱՆԻՍ. Փաւսոս Բիւզանդ:


ԲԻԻՉԱՆԻՍԻՍ. Մարտիրոս Գալիս:

Բ Ի Ի Չ Ա Ն Դ Ա Յ Ի Նորայր Ծնած է Բերա 1845 Մարտ 4 — 16ին: 9 տարու վեներակոյ Ս. Ղազարու վանքը կը զրկուի: Դեռ մընօքին մէջ է նոյն տարւոյն Խրիմու պատերազմը: Այդ ժամանակ քահանայացու փոքր աշակերտաց կրթիչներն էին դաստիարակ Հ. Պետրոս Մինասեան վրդ. և ներկայ Արքայապետ Գեր. Իգնատիոս Արքեպ. Կիւրեղեան, հայերէնի ուսուցիչն էր Հ. Սուքիաս Պարոնեան: Այս նախապատրաստական շրջանին՝ փոքրիկն Նորայր իր գիմացն առած էր մեծ Հայկաղեանն ու Զարգացելոց քերականութիւնը, հանդստեան ժամերը կ'ախորժէր զանոնք ուսումնասիրելով զրադիլ: 6 տարի ետք իր ընկերներով վանքին վարժարանը կը փոխադրուի, բարձրագոյն ընթացքին հետեւելու, և ի սկզբան իրեն դաստիարակ կ'ունենայ Հ. Համադասով Թէրճիմանեանը, յետոյ Հ. Ղ. Ալիշանը: Այդ շրջանին մէջ ժամանակ կ'ունենայ ինքզինքը հայագիտութեան նուիրելու, մանաւանդ որ Հ. Ալիշան ըստ կարելոյն յագուրդ կու տայ անոր փափագանաց: 1866ի Զատիկին քահանայ կը ձեռնադրուի: Այս վեց տարուան մէջ կը դնէ նա հիմն իր այն ընդարձակ և ամենակարեւոր եզական մասնաճիւղին՝ որ ապագային պիտի կոչուէր «Հայկական բառաքնութիւն», որուն իրը նմոյշ ցարդ շատ քիչ բան հրատարակած է: Հազիւ քահանայ ձեռնադրուած՝ ուսուցիչ պաշտօնով Ռափայէլեան վարժարանը կը զրկուի ուր մօտ 2 տարի կը պաշտօնավարէ: Այդ շրջանի աշակերտներէն կը յիշէ Արփիարը, Մ. Տիւղեանն ու Զ. Շիշմանեանը: 1866ի աշնան վանք դառնալով Տպագրաց և Զեռագրաց գրապետութեան պաշտօնը կ'ստանձնէ: 1869ի Ապրիլին Պոլիս կ'ուղևորի: 1870ին Գատըքէօյի Մխիթարեան վարժարանը երբ կը բացուի՝ Նորայր իրրեւ ուսուցիչ հոն կ'անցնի: 1873ին Լօզան գտնուելով՝ ի պատասխանի Հիւրմիւզ Արքայօր նոյն տարուոյ Յունիսի 13ին գրած նամակին, իր Հայր Պատուելոյն՝ Իգնատիոս վրդ. Կիւրեղեանի կը գրէ նամակ մը՝ որով կը հրաժարի Մխիթարեան Միաբանութեան անդամակցութենէն:— 1879ի գարնան, իրրեւ աշխարհական

Բարիզէն Պոլիս կը դառնայ իր Գալղ. Հայ բազմիքը հրատարակելու և յաջորդ տարին ի լոյս կ'ընծայէ անոր առաջին թերթը: Այդ գործն ի գլուխ հանելու համար կը ստիպուի նիւթական նեղութեամբ ապրիլ 1882ի Դեկտեմբերին Սոքըհոյմ կը մեկնի, ուր կը մնայ մինչև 1903: 1903ի Սեպտեմբերի վերջին օրերէն ի վեր նա կ'ապրի վենետիկ, Ս. Ստեփանոս եկեղեցւոյն զիմացը: (Հասցէն՝ Mr. N. de Byzance Norair—Sant' Angelo No. 3536, VENIZIA): Վերջին տարիները շատ ծանր հիւանդութենէ կը տառապէր, 1910ի Օգոստոսին իր ցաւերուն վերջ տալու համար ստիպուեցաւ երկիւղալից սրագործութիւն մը կրել, և ամենաքաջ վիրաբոյժ մը կրցաւ փրկել անոր կեանքը:— Նորայր՝ հայ բանասէրներու հետ պիտի ապրի իրրեւ բառաքննադատ, իսկ հայ ժողովրդեան հետ՝ իր ֆրանսահայ բառգիրքով, որ ցարդ լոյս տեսածներէն ամէնէն կատարեալն է, և այսօր հայ ժողովուրդը կ'ափսոսայ սնկէ ուղղակի չկարենալ օգտուելուն համար, վասն զի գրաբար է:— Նորայրի 9 ստուգարանութիւնները գաղղիերէն բառերու — որոնց ծագումն արեւելեան է —, ընդունած է Լիզրէ իր մեծ բառգիրքին Յաւելուածին մէջ: Քննադատական գործերուն մէջ ամէնէն աւելի աչքի զարնողն է Կորիւնը, որ 1900ին Թիֆլիս հրատարակուեցաւ: Հրատարակուած այս գործը կրնայ պատկերել հեռաւորներուն Նորայրի ընդարձակ հայագիտութեան հմտութիւնը, տարօրինակ յիշողութիւնը: Այս մեծ գործէն առաջ առանձին հրատարակած էր «Հայկական բառաքնութիւն», Ուղղութիւնք ընթերցուածոց մատենադրութեանց նախնեաց և նշանակութեան բառից ինչ»: 1884ին հրատարակեց «Քննադատութիւն Նուպարեան թարգմանութեան Վիկտոր Հիւկոյի Նօքր-Տամ»ին: Սոքըհոյմ եղած միջոցին վիճաբանութեամբ հրատարակել սկսաւ «Քննասէր»ը (երկու պրակ), որուն ընթացքում գրած էր «Որքան կարեմ՝ զայն առնեմ», և Ա. պրակը 15 Մայիսի 1887ին հրատարակեց: 1892ին լոյս ընծայեց ֆրանսերէն տետր մը: Բացի այս գործերէն, աշխատակցած է շատ մը հանդէսներու և օրագիրներու իր հայ բանասիրական յօդուածներով, ինչպէս «Մասիս»ի՝ «Թէրճիմանը էֆքեար»ի, «Փուլնջ»ի, «Լուսնայ»ի, «Մշակ»ի, «Հ. Ամսօրեայ»ի, «Բագմավէպ»ի: Մակայն այս հրատարակած գործերով չէ որ Նորայր Հայութեան մէջ նշանաւոր անուն մը թողած է, իր 50 տարուան անընդհատ աշխատութեան արդիւնքը դեռ անտիպ կը մնայ, բայց ի մասնական ուսումնասիրութիւններէ՝ ձեռագիր կը թո-



դու նախնեաց բոլոր գործերուն սրբագրութիւնները, Հայերէն Բառգիրքը, Ստորին Հայերէնի Բառգիրքը Այս վիթխարի գործերն են, որոնց վրայ գիշեր ու ցորեկ աշխատած է ան, և բնական է իրեն համար խորունկ ցաւ մը զգալ հանդէպ հայ հասարակութեան անտարբեր զգացման, որուն լուսաւորութեան համար աշխատած է ան. և որ դեռ չի գիտեր գնահատել և վարձատրել աշխատաւորը՝ նա տրտմութեամբ կը թղթատէ ներկայիս ի Թիֆլիզ հրատարակուելի սկսած Հայ պատմագրաց շարքը, որ խոստացած է ըլլալ ցարդ հրատարակուածներէն կատարելագոյնը, և որ Նորայրի համար իրաւամբ անկատար գործ մ'է։ Հիմայ իր ձեռքին տակն ունի «Նահապետ Քուչակ»ը, որուն վրայ քանի մը տարիներէ ի վեր կ'աշխատի և զոր պիտի տպագրել տայ ընդարձակ ուսումնասիրութեամբ։



ՆՈՐԱՅՐ ԲԻԻԶԱՆԳԻԱՅԻ

Բարգէն եպիսկոպետի «կոչ»ը եթէ արձագանգ գտնէ Հրատարակչական ընկերութեան մը մէջ. ապահովագէտ հայ հասարակութիւնը պիտի վայելէ մեծ աշխատաւորին անխոնջ ուսումնասիրութեանց պտուղը և այդ պիտի ըլլայ իր գրչին յիսնամեակը։ Իր սեւ մագերէ ձեւոված են և այդ առոյգ դէմքն աշխատութեան և ցաւերու տակ ընկճուած է։ Բայց իր միտքը նոյն իսկ իր կրած դառն ցաւերուն ժամանակ միշտ հայագիտութեան համայնագիտակը մնացած է. նախնեաց գործածած ո՛րեւէ հիմաստ և բառ՝ իր մտքին մէջ բառգրքի ոճով դասաւորուած են, հարցո՛ւր իրեն բառ մը նա իսկոյն քեզի կ'ըսէ՝ թէ զայն ո՛ր հեղինակները գործածած են, և մէկ վայրկեանին մէջ կոչած հեղինակին գործը դիմացդ կը դնէ՝ ցուցամատը հարցուած բառին վրայ դնելով։ (Հ. Մ. Պոստոլեան՝ Թեոդիկի «Ամ. Տարեցոյց»ը, 1912 էջ 373 6)։

ԲԻԻԶԱՆԳԻԱՅԻ ՄԻՆԻՐԱՆ. Սուրբիական Սահմանադիր Ժողովի երեսփոխան. ծնած է Հալէպ. նախնական ուսումը առած է տեղւոյն Ազգ. վարժարանին մէջ. մէկ տարի յաճախած է Կեդր. Թուրքիոյ գոյէճը. 1895ին կ'աւարտէ Հալէպի Ֆրանսական գոյէճը և նոյն տարին կը մասնակցի Օսմ. կայսերական պանքայի նորահաստատ

մասնաճիւղի բացած մրցումին և առաջնութիւնը շահելով կը մտնէ նոյն հաստատութեան մէջ։

1906ին, պանքայի ընդհ. տնօրէնութիւնը գնահատելով իր աշխատութիւնը զինքը կը զրկէ Այնթապ եւ 1911ին այն տեղ ճիւղ մը հաստատելով կը վարէ անոր տնօրէնութիւնը։ Տիգրանակերտի մէջ իր կողմէ հիմնած մասնաճիւղին տնօրէնութիւնը ևս կը վարէ մինչև 1915։ ԲԻԻԶԱՆԳԻԱՅԻ ՄԻՆԻՐԱՆ Մինչև 1924 վարած է նաև Եաֆայի, Երուսաղէմի, Մանպուճի, Բատուսի մասնաճիւղերուն տնօրէնութիւնները և Կ. Պոլսոյ մէջ քօնթրօլի փափուկ պաշտօնը։



ԲԻԻԶԱՆԳԻԱՅԻ Ն. Իսթանպուլ։  
ԲԻԻԶԱՆԳԻԱՅԻՆ, ազատ հայաթերթ ամենօրեայ, տպ. Պոլիս 1896—1918. Արտօնատէր խմբագրապետ՝ Բիւզանդ Քէչեան, խմբագիրներ՝ Պարոյր և Աշոտ Քէչեաններ, ապա Արշակ Ալպոյսանեան։ 1911—12ին թիւ 1—16 կոչուեցաւ «Ռահվիրա»։  
ԲԻԻԼՔ Ն. Բուլք։

ԲԻԻԹԱՆԻԱ, Փոքր Ասիոյ հիւսիսային-արևմտեան մասը, սկսած Ակիւտարէն մինչև Էսկիչէհիր, բովանդակելով իր մէջ Նիկոմիդիոյ գաւառը, Պրուսայի նահանգը և Գասթէմուռնի նահանգին արևմտեան մեծագոյն մասը։

Հայերը Բիւթանիոյ մէջ զաղութներ հաստատած են մասնաւանդ այս հողամասը թուրք իշխանութեան տակ իյնալէ յետոյ, սկսած 16րդ դարու վերջերէն։

Բիւթանիոյ ամէնէն շատ հայաբնակ մասը կը կազմէ Նիկոմիդիոյ թեմը, բաղկացած Նիկոմիդիոյ գաւառէն և Պրուսայի նահանգի Եալովայի շըրջանէն։ Նիկոմիդիոյ թեմին մէջ էր Արմաշու զպրեմանքը, որուն փոխ-վանահայրը նաև առաջնորդն էր Արմաշ և Խասկալ գիւղերուն։ Պրուսայի նահանգին մէջ կային Պրուսայի և Պիլէճիկի առաջնորդութիւնները, իսկ Գասթեմուռնին, երբեմն մաս կազմած Նիկոմիդիոյ թեմին, վերջերը ունէր իր ուրոյն առաջնորդը՝ Պոլսոյ շրջանի վայրերը, մինչև Գարթալ, ենթարկուած էին Պատրիարքարանի ուղղակի ղեկավարութեան։

Բիւթանիա ունէր բազմաթիւ զուտ հայաբնակ



գիւղեր, իսկ մեծ քաղաքներու մէջ Հայերը ունէին իրենց առանձին թաղերը:

Բացի Պոլսոյ շրջանէն՝ Բիւթանիոյ մէջ հայաշատ քաղաքներ էին Ատապաղար, Նիկոմիդիա, Պրուսա, Պիլէճիկ, Էսկիշէհիր: Զուտ հայաբնակ գիւղեր էին Պարաիզակ, Օվաճըզ, Արսլանպէկ, Մանիշակ, Տէօնկէլ, Մեծ Նոր-գիւղ, Սէօլէօզ, Չէնկիլէր, Քարցի, Շաքշաք, Ծալաք Տէրէ, Գուրտպէլէն, Գնճըլար, Էջմէ, Արմաշ, Սասկալ, Սաշ գիւղ, Ֆէրիզլի, Թամլըզ, Էլմալը, Սէթ գիւղ, Արամ գիւղ, Գեղամ գիւղ, Հովիւ գիւղ, Մէրաէկէօզ: Կէլվէի Միջագիւղը խառն էր հայ-Հոռոմով: Մուրաաշայ, Սապանճա, Ազհիսար, Գասթէմունի, Տիւզճէ կային հայ գաղութներ, որոնք ունէին իրենց եկեղեցիները:

Բիւթանիոյ Հայերու մասին ուսումնասիրութիւն մը ունի Մինաս Գասպեան (Պարճատ):

ԲիւթԱնիԱ, «գաւառական ազգային, գրական, քաղաքական, անտեսական (տասնօրեայ), տպ. Նիկոմիդիա 1910—1911. Ատապաղար՝ 1911: Պատասխանատու տնօրէն՝ Յակոբ Դ. Սարգիսեան, յետոյ՝ Գր. Գայեան:

ԲիւթԱնիԱ, օրաթերթ (Հ. Յ. Դաշնակցութեան) տպ. Կ. Պոլիս 1912: Շարունակութիւն «Առաջամարտ»ի և «Ազգակ»ի ընդմիջումով՝ 16 թիւ:

ԲիւլԼեՏիՆ «Հայաստանի Կոմիւրիտ Միութեան Կենտր. Կոմիտեի», տպ. Երևան 1921, խմբ. Ն. Խերանեան:

ԲիւլԼեՏիՆ «ՀԱՍՀ արաքին գործերի ժողովրդական կոմիտեի Կոմիտեի Կենտրոնի» տպ. Երևան 1921—3. (Թիւ 1—9?): Բյուլետիւն:

ԲիւՍԱԿԱՆ, գղ. Այրարատայ Արագածոտն գու. ի, ԲիւթԱնիԱ, գղ. Այրարատայ Արագածոտն գու. ի

Աշտարակի վիճակի, 1900ին 1000էն աւելի հայ բնակիչ ունէր: Եկղ. Ս. Յովհաննէս: Անբերդ գետակը ո՛չ թէ միայն կ'ուղղէ գիւղս, այլ և կուտայ կարմրախայտ ըսուած ձուկը: Գիւղս առաջին անգամ յիշուած կը գտնենք Ժ. դարու սկիզբը Յովհան կթղ. ի պատմութեան մէջ, որուն սեփականութիւնն եղած է եղբր Բիւրականը, որուն մէջ կը յիշուի ամրոց մը և վանք: Ամրոցի և վանքի շինութիւնք չկան ներկայիս, միայն չափաւոր մեծութեամբ անսիւն եկղ. մը մնացած է: Գիւղիս բնակիչները նորեկ կամ զաղթականներ են. որովհետև հիները արարացուց արշաւանքի ատեն սպաննուած են: ԺԾ. դարու մէջ (1467ին) ևս կը յիշուի Մենասան Բիւրականի Ս. Ասուածածին եւ Ս. Յովնան եկեղեցիներով, ուր Մկրտիչ աւուամբ քհ. մը ընդօրինակած է

Ն. Շնորհալուոյ Յիսուս Որդին Այդ յիշատակարանէն կ'իմանանք թէ Բիւրականի Սարգիս վրդ.ը շիներ է Տեղերոյ Ս. Ասուածածինը: Հոն կը յիշուին 15էն աւելի քահանաներ Անբերդի և Բիւրականի, և երեք եպիսկոպոսներ Կարապետ. Մկրտիչ և Թաղէոս: Գրեթէ 200 տարի ետք Յակոբ Գ. Կաթողիկոսը ուրիշ քանի մը գիւղերու հետ Բիւրականն ալ սեփականեց Էջմիածնի աթոռին: 1835ին Ռուսները Բիւրականի արեւելեան սահմանները ամարանոցներ շինեցին: 1817ի առեւտները Բիւրականի սահմանները գտնուեցաւ սահմանաքար մը, որ կարծուեցաւ մեր Արտաշէս Ա. էն կանգնուած կոթողներէն մին: (Էփրիկեան՝ «Բնագիտութիւն» քաղուած Հ. Ալիսանի «Այրարատ»էն):

ԲիւթԱնիԱՄԱՆ ԲԵՆԱՐԱՆ, վանք համանուն գիւղին մէջ. ԺԵ. դարու յիշատակագիր մը կը յիշէ Ս. Ասուածածին և Ս. Յովհան եկեղեցիներ. շատ մը քահանայք և երեք եպս. վանքիս:

ԲիւթԱնիԱ, Բիւրակեան կամ Բիւրակեք, այսպէս կոչուած է Այրարատայ սահմանակից Սըրմանց կամ Պէնկէօլ լեռը:

ԲիւթԱնիԱ, «Հանգէս գիտական, քաղաքական և ազգային ամսագիր. տպ. Կ. Պոլիս 1882-1908. տէր և խմբագիր՝ Կ. Ստեփան Հ. Իւթի ճեան: 1901էն տնօրէն՝ Ս. Դաւթեան. խմբագիր՝ Գայուստ Անդրէասեան, 1902—6 խմբ. Յ. Ճիզմէճեան: 1906էն խմբագիրք՝ Սիմ. Չէօմէլկէճեան և Արտ. Գայրակճեան:

ԲիւթԱՊԱՏ, հայաւան, այժմ այլազգարնակ գղ. Բագրևանդ գու. ի, որուն մօտ հին բերդ մը կայ:

ԲիւթԱՏ ՍՄԲԱՏ (Տեք Ղազարեանց) Ծնած 1862 Մարտ 3, Չէյթուէի Պօղ-Պայր թաղը. 9 տարեկանին Երուսաղէմի Ժառանգաւորաց վարժարանը մտած՝ ուր գիչերթիկ աշակերտելով 1880ին շրջանաւարտ ելած՝ Մուրատեան Մեկք. վրդ. ի օրով: Հայրենիք վերադարձած և 1880—2 Մարտի Կիլիկեան Հայրենասիրաց ընկ. հան կեդր. վարժարանի մէջ պաշտօնավարած՝ նախ օգն. ապա տնօրէն: 1882—84ի վերջը Չէյթուէի Միացեալ ընկ. հան կեդրոնական վարժարանը դասախօսած: 1885ին Սիս մասնաւոր վարժարան մը բացաւ՝ զոր 6 ամիս կրցաւ շարունակել, կիմային անյարմարութեան պատճառաւ: Նոյն տարին ամառը Պոլիս կու գայ և կը ծանօթանայ ժամանակին բոլոր գրական ղէմքերուն, Տէմիրճիպաչեան. Պէրպէրեան, Չերազ, Թէրգեան, Լուսինեան Սրբ. եւն. իր Ա. գրուածքը՝ «Մեռեալները» քերթուածը կ'երևի «Երկրագունդ»ի 1885ի Օգոստոսի թիւին մէջ: 1880ին երբ Կիլիկիոյ Մկրտ. Բէյֆիզեան Կաթող. Պոլիս կ'երթայ



Ստոյ մայր աթոռը Պոյսոյ Պատրիարքական իրաւասութենէն զառեւելու, Բիւրատ Մարաշի մէջ կը յաջողի հիմնել «Կիլիկիոյ պահապան» անուն ընկ. մը որով իսկոյն յարարեցութեան կը մտնէ Կիլիկիոյ բոլոր թեմերուն հետ, այդ առիթով պատրաստելով Կիլիկիոյ հայ բնակչութեան լիակատար մարդահամարը, զոր անտիպ պահած ունի ցարդ իր քով: Երբ պատրիարքարանը օտարնագութիւն մը նկատելով Կաթող.ին անջատողական ընթացքը՝ փորձեր կ'ընէ սեղմելու նոյն աթոռին իրաւասութիւնները՝ զայն հասարակ վիճակի մը վերածելու, Բէյֆուրիեան կը յաջողի նոյն ատենի զատական նախարար Ճէվտէթ փաշայի միջոցաւ պէրաթ մը ձեռք ձգել Համիտէն և դառնալ Սիս, մինչ միւս կողմէ Բիւրատ բուռն յօգուածներ կը հրատարակէր Մասիսի մէջ (Սմրատ Բիւրտաղիենց ստորագրութեամբ), ի պաշտպանութիւն լոկ Ստոյ աթոռին, թէ և ինք զվերջ հակառակորդ մնաց Կաթողիկոսին՝ անոր թիւր քաղաքականութեան համար — 1885ին կ'ամուսնանայ Հասքէոյ Գալֆ. Որբանոցէն վարժուհիի մը հետ (Եւզոքսիա Շիշմանեան) որ 5 տարի յետոյ իր յեղափոխական գործակցութեամբ ամուսինին հետ պիտի բանտուէր և պիտի զրկուէր աչքերուն լոյսէն (Տե՛ս «Բանտէ բանա»)»: 1885 Սեպտեմբերին կը մեկնին Կիւմիւլիսնէ, վարժարանին տնօրէնութեան պաշտօնով, որուն ջերմոտ կլիմայէն հիւանդացած՝ 6 ամիս յետոյ կը վերադառնան Պոլիս ուրկէ կ'անցնին Զէյթուն՝ Միացեալի կողմէ տնօրէն կարգուելով տեղւոյն զպրոցներուն: 1887ին տեղի կ'ունենայ Զէյթունի հրդեհը, այրելով 950 տ. եկեղեցի, վարժարան: Բիւրատ կ'ստիպուի մեկնիլ Պոլիս ընտանեօք, ուրկէ քանի մը ամիս վերջ կ'անցնի Սամսոն, միշտ տնօրէնի պաշտօնով, ուր տարի մը պաշտօնավարելէ վերջ՝ աղայական պայքարի մը հետեանքով կ'ստիպուի լեզուագիտական անկախ վարժարան մը հիմնել հոն — Ժողովուրդին խնդրանօք, — զոր կանգուն կը պահէ 2 տարի, 1890ին Գուժարուի ցոյցը տեղի կ'ունենայ, և Բիւրատ կը պարտաւորի փակել վարժարանն ու իրը Հնչակեան ներկայացուցիչ ընտանեօք կ'անցնի Կիլիկիա, ճամբան անվերջ կերպով իր կուսակցութեան բրորականտնէնքով, Մարգուան, Ամասիա, Թօքթաթ, Չիֆլիք, Եէնի Պան և Սըվաղ, ուր հանդիպելով ընկեր Շմաւոնի՝ 5 օր ալ հոն կը մնայ առաքելութեամբ ու կը մեկնի Կիւրիսի ճամբով իր ծննդավայրը: Սակայն 10 ժամ հեռու՝ Եարբուղ գիւղին մէջ կը ձերբակալուի ընտանեօք

և ուղղակի Մարաշ կը փոխադրուի, ուրկէ Հալէպ (տես «Բանտէ բանա») մահուան դատապարտութեամբ — Հինգ տարի զնդանները մընայէ վերջ, 1895ի ընդհանուր ներումին՝ ինքն ալ ազատ կ'արձակուի: Իրեն արգիլուած ըլլալով ծննդավայրը դառնալ, կ'ստիպուի Երուսաղէմ երթալ և անկէ Պոլիս, ուր կը մնայ 1 տարի Գատրքէոյ Արամեան վարժարանի իրր այցելու ուսուցիչ, մինչև որ կը պայթի 96ի դէպքը: Կը փնտուի և իսկոյն կը յաջողի կծիկը դնել ընտանեօք Եգիպտոս շող կ'սկսի իր կեանքի նոր շրջանը, կրթ., գր. և հասարակական Գահիրէ կը հիմնէ «Կեդրոնական Կրթարան Գահիրէի» անուն վարժարան մը զոր կը վարէ 4 տարի, միաժամանակ հրատարակելով Փիւնիկ կիսամսեայ պարբերականը, յետոյ՝ Նոր Օր եռօրեան 1 տարի: Կուսակց. վէճերէ զգուած՝ կը մտադրէ քաշուիլ Կիպրոս, Թիֆլիզի «Հրատարակչակապն»ին հետ համաձայնած ըլլալով պարբերաբար զրկել իր անտիպ ձեռագիրները: Կ'անցնի Բօս. Սայիտ ուր քարանթինայի պատճառով ամիս մը կը ստիպուի մնալ, նոյն միջոցին է որ «Հրատարակչական»ին խափանման գոյժը կ'առնէ: Աղեքսանդրիայէն բարեկամներ կը հրաւիրեն զինք: Անցնելով կրկին Աղեքսանդրիա, կը վերսկսի իր նոր կեանքին: Գանի մը ամիս աղցաւոր վիճակէ մը անցնելէ յետոյ, կը վերսկսի հրատարակութեանը «Փիւնիկ» շաբաթաթերթի, զոր կը շարունակէ 4 տարի և զոր պայքարի թերթ մը կ'ընէ, հարուածելով որջացած կամայականութիւններ, մինչև որ կ'աջողի Սահմանադրական Ա. ընտրութիւնը կատարել տալ Թաղ. խորհուրդին: 1904ին կը կոչուի Աղեքսանդրիոյ ազգ. վարժարանաց տնօրէնութեան զոր կը վարէ 2 տարի, միաժամանակ Աղեքսանդրիոյ Պառն Գատարանաց Էփսէքի պաշտօնին Այդ միջոցին Իտալիա կը ճամբորդէ իր 2 զաւակները Վենետիոյ Ռափայէլեան վարժարանը զնելու և այդ առթիւ Իտալիոյ կարևոր քաղաքները կ'այցելէ: 1907ին կ'անցնի Ռուսիայի ուր կը մնայ 10 ամիս: Հոն Ֆրնս. բանաստեղծութեամբ մը կը ծանօթանայ Գառմէն Սիլվայի որմէ գնահատական գիր ալ կ'ստանայ: Գոստանցայի մէջ վատ մատնութեան մը զոհ, կը հարկադրուի հեռանալ Ռուսիայէ՝ շղթայակապ Պոլիս զրկուելու սպառնալիքին տակ, համիտարարոյ ուսման ոստիկանապետ Չիմպրուի օրով: Կը վերադառնայ Եգիպտոս 1908ին, երբ քիչ վերջ կը հռչակուի Օսմ. Սահմանադրութիւնը: Բիւրատ Պոլիս կու գայ ընտանեօք: Կը պաշտօնավարէ իրր խմբա-



գիր Մանգուսէի, Թերթօնելով Բանէ բանս վէ-  
 պը: — Երկերը. 1. Բուրգերէն, 2. Աւարայրի  
 արծիւը, 3. Վեղարաւոր հերոսը, 4. Բանաէ բանա,  
 5. Երլարզէ Սասուն, 6. Թիակապուտները, 7.  
 Դէպի Երլարզ, 8. Իննսուն Վեց, 9. Երլարզէ  
 Սասուն» և այլն: Հրատարակած է նաև «Փիւ-  
 նիկ»ը 5 և «Գաղափար»ը 42 թիւ: Զաւկին Վա-  
 ղինակի հետ հիմնած է հրատարակչական տուն  
 մը «Ժամանակակից մատենադարան» անունով,  
 որ ցարդ լոյս ընծայած է 20է աւելի զանազան  
 երկեր: — 1908 Հոկտ.ին Զէյթուն-Մարաշի Աղդ.  
 Երեսփ. ընտր.: — 1896էն ի վեր դադրած է որ  
 և է յեղ. կուսակցութեան մը պատկանելէ և  
 կ'անդամակցի մայրաքաղաքիս երեսփ. ժողովի  
 Ազատական բարբիին: — Գր. ծածկանունները,  
 Հայկ-Լեւոն, Ապսակ, Թար, Մտրակ, Խայրոց, Լեւ-  
 ոնդի, և այլն: — 1910ին՝ 23 ամեայ նժգհնու-  
 թենէ մը վերջ՝ հայրենարարձութեանը յազուրդ  
 առած է, անցնելով Զէյթուն, բանտածին տղուն  
 Հայկ-Լեւոնի հետ 3 ու կէս ամիս Կիլիկիոյ կարե-  
 ւոր կեղրոններն այցելած է ուսումնասիրու-  
 թեանց համար վերադարձին օգտուելով ճամ-  
 բորդութենէն՝ անցած է Յունաստան, Աթէնքի  
 հնութիւններն այցելով — Գահիրէի մէջ է որ  
 ճանչցած է Տիգր. Երկաթը որուն մօր և ողբաց-  
 եայ եղբոր Մարտիրոս Պիլէգիկճիի հետ մտերմա-  
 նալով, յաջողած է ձեռք ձգել կենսագր. նօթե-  
 րու անագին սթօք մը, զոր ի մօտոյ մտաղիր է  
 հրատարակութեան տալով Հայութեան ճանչը-  
 նելու այդ մեծանուն ու մեծողի երիտասարդը:  
 Այս առթիւ յիշենք թէ յաւերժացնելու համար  
 անոր յիշատակը, թունդ Հնչակեան Շաւարշ-Հո-  
 վիւեանի, Տօքթ. Էնֆիլէճեանի, Օննիկ Թաշ-  
 ճեանի և Բարսեղ Օհանեանի ընկերակցութեամբ  
 1904ին յԱղեքսանդրիա հիմնած է «Տիգրան եր-  
 կաթ» միութիւնը (յարան-ընթերցատուն): (Թե-  
 դիկ՝ Տար. 1912, էջ 371):

Սմբատ Բիւրատ զոհ զնաց 1915ի թրքական  
 եղեռնին:

ԲԻԽՐԱՏ Բագրատուցի, Արգարու օրով:

ԲԻԽՐԱՏԻ ՎԱՆՔ, հին գիւղ Սիւնեաց Ծղուկ  
 գաւառի:

ԲԻԽՐՔ կամ Բուրք, հայաբնակ գիւղ Ծ. Գարա-  
 հիսարի, 400 տուն հայ բնակիչ ունէր Երկու ե-  
 կեղեցի՝ Ս. Յակոբ և Ս. Գէորգ. ունէր նաև ազ-  
 գային վարժարան մը, ուր 1900ին 102 մանչ կը  
 յաճախէին: Ս. Աստուածածնայ եկեղեցւոյն ճա-  
 կատը կար սա արձանագրութիւնը.

«Լուսապսակ մարտիրոսաց  
 Երկուց բիւրոց ցահասակաց»:

ԲԼԱԹԱՆԱ կամ Պլարանա, գղ. Տիգրանակերտի.  
 քն. խառն, 25 տուն հայ, ունէին Սարգսեան  
 զպրոց մը:

ԲԼԲԼԱԿ s. Բլլլլլիկ:

ԲԼԳԱՆ ՉԱՅ, լեռնային դետակ Խ. Հայաստա-  
 նի մէջ, որուն հանքային ջուրը «Թթու» կ'ան-  
 ուանեն գիւղացիք:

ԲԼԵՎԱՆՅ, հին գիւղ Սիւնեաց Ծղուկ գո.ի:

ԲԼԵՂ, հայաբնակ գիւղ Աղուանից Հողի գո.ի,  
 քն. 45 տուն, Խաչեն և Վարանդա գաւառներէն  
 զաղթած. եկղ. Ս. Մինաս, Նուխիէն 75 վերստ  
 հեռի:

ԲԼԵԹԱՆՅ, հայաբնակ գիւղ Սիւնեաց՝ ըստ Զա-  
 լալեանի. եկեղեցին կառուցուած է 1696ին:

ԲԼԵՅ ԳԱՐ, գղ. Տիգրանակերտի, 50 տ. հայ  
 բնակիչ ունէր և եկեղեցի մը:

ԲԼԵՋԱՆ, բարձրագոյն և գլխաւոր լեռ Պաւ-  
 լանքիս գաւառի:

ԲԼ ՀԱՍԱՆ (Աբլ Հասան) բժիշկ, որդի Զաքա-  
 րիա բժշկի կը յիշուի Հերոմիտոս վանքի ար-  
 ձանագրութեան մէջ: («Բագմ», 1931 էջ 76):

ԲԼՈՒՐ, մեծ գղ. Ճակատք գո.ի մէջ, 1900ին  
 230 տուն հայ բն. ունէր:

ԲԼՈՒՐ, հին գղ. Բագրեանդայ մէջ: Ս. Սահակ  
 հոս աւանդած է հողին: Կորիւն Բլորցաց գիւղ  
 կը կոչէ: 1900ին 90 տ. հայ բն. ունէր:

ԲԼՈՒՐ, գիւղակ Թորթում վիճակի:

ԲԼՈՒՐ, գղ. Կարնոյ, 45 տ. հայ բնակիչ ունէր.  
 և 35 տ. թուրք. եկղ. Ս. Գէորգ, ունէր նաև  
 զպրոց մը:

ԲԼՈՒՐ, գղ. Բարեբրդի, 1900ին 350 տ. հայ եւ  
 թուրք բնակիչ ունէր. Հայերը 120 տուն՝ առան-  
 ձին թաղի մէջ կը բնակէին. եկղ. Ս. Գէորգ՝  
 1840ին կառուցուած: Կայ մատրանաձև գմբէթ  
 մը, որ Սահակ եպ.ի մը գերեզմանը կը համար-  
 ուի: 1855ին նէվրուղեան Յովհ. վրդ. կը բանայ  
 զայն և արձանագրութենէն յայտնի կ'ըլլայ որ Հա-  
 յոց կը վերարերի: Կան Ս. Մարտիրոս, Ս. Եղիա,  
 Ս. Վառվառ ուխտատեղիները:

ԲԼՈՒՐ, գղ. Վերին Պուլանքի վիճակի մէջ.  
 քն. 60 տուն կէսը հայ էին, կէսը քուրտ:

ԲԼՈՒՐ կամ Բլուրս, բարձրադիր աւան Վերին  
 Բասեն գո.ի Սելճուգեանց արշաւանքի ատեն  
 երբ հոս ապաստանած էին շրջակայ հայ բնակիչք  
 և վանականք՝ թշնամիք սլարիսպը խոթակելով  
 ներս կը մտնեն և ներսիները, որոնց թիւն էր  
 7000 բն. և 60 կրօնաւոր կը սպաննեն:

ԲԼՈՒՐԵԿ, գիւղակ Հայոց Տուրուբերանի Բոնա-  
 չէն վիճակի մէջ:

ԲԼՈՒՐՄԱԿ, գիւղ Արճէ: գո.ի, բն. 60 տուն  
 հայ էին և 61 տուն քուրտ:

ԲԼՈՒՐՍ s. Բլուր:



ԲԼԲԱԿ, հայաբնակ գիւղ Բաբերդի, 1900ին 65 ա. հայ բն. ունէր. եկղ. Ս. Աստուածածին 1864ին շինուած: Ունէր ներսիսեան վարժարան մը: Մօտը կայ Ս. Կիրակոս անուն հրաշագործ աղբիւր, կայ նաև Կապոյոյ խաչ խաչքար մը, զոր համբուրելու կ'երթան Համբարձման տօնին: Կը կարծուի որ Ժ.Ր. դարու սկիզբները գիւղս 700 բնակիչ ունեցած ըլլայ:

ԲԼՐՈՅ ՎԱՆՔ կամ Բլրցի անապատ, Կիլիկիոյ հին վանքերէն մին, զիրքը անծանօթ:

ԲԼՐՈՅԱՅ ԳԻՒՂ, ս. Բլուր:

ԲԾԱՅՐ, Բժրայր կամ Բժրայրի գոմ, այս անուամբ գիւղ մը կը յիշուի Կողովրտ կամ Ասպազուհիք գո.ի մէջ:

ԲԾԻՄՍ ս. ՊՃԵՏԱ:

ԲՂԲՈՒՅ, անյայտ գիւղի մը անուանը, ուր ծնած էին Ս. Թաթուլ և Ս. Վարոս, որոնց ուխտատեղիք կան տակաւին Գարեղէնք գո.ի մէջ:

ԲՂԻՆ, Բղեան, գղ. Ծղուկ գո.ի: Այս անուամբ Բղենայ գաւառ մը կը յիշուի Սիւնիքի մէջ, ինչպէս Բղենոյ բերդ և Բղենոյ ջուր:

ԲՃՆԻ ս. ԲՉՆԻ:

ԲՅՈՒԼԼԵՏԻՆ «ներքին գործոց ժողովրդ. կոմիտարիատի (երկշարաթաթերթ)», տպ. Երևան 1922—3:

ԲՅՈՒԼԵՏԻՆ «Հայ անդր-հեռագրի» տպ. Երևան 1925:

ԲՅՈՒԼԵՏԻՆ «Հայաստանի Կենդր. վիճակագրական վարչութեան (յերկամսյա)», տպ Յերեվան 1926—1929: Տե՛ս Բիլլեթին:

ԲՆԱԲԵՂ, բերդ Չորրորդ Հայոց Ծովք գո.ի մէջ, ուր Տիրան թգ.սպաննեց Ս.Յուսիկ կթղ.ը: Փ. Բուզանդ արքունի բերդ կ'անուանէ, կը յիշէ նաև եկեղեցին՝ որուն պաշտօնեաները սրբոյն թորտան գիւղը փոխադրեցին:

ԲՆԱՍԱՐ, կը յիշուի Սիւնեաց մէջ՝ իրրև սահման Տաթևի վանքին:

ԲՆԱՍԵՆ, վերջնոյն նման կը յիշուի Սիւնեաց մէջ:

ԲՆԻՆԻԿ Իշխան, խմբագիր անօրէն Հեթիք շարաթաթերթին որ Բարիզ լոյս տեսաւ 1905ին (1—9 թիւ):

ԲՆՈՒՆԻՍ կամ Բնուցիք, հայաբնակ գիւղ Սիւնեաց Ծղուկ գո.ի, Լասա լեռան հիւսիսակողմը: Հիւսիսային կողմը կը դանուի հին գերեզմանատուն մը, ուր Ժ.Վ. գարու արձանագրութեամբ գեղեցիկ դամբարան մը կայ: Ժ.Գ. գարու վերջերը Բնուցիք և Կիրակոսիկ գիւղերուն տէրնէր ոմն Մարտիրոս, որ իր միակ որդւոյն Օրպէլի

մահուան պատճառաւ նուիրեր էր Տաթևու վանքին:

ԲՆԼԻԲԿ, երրորդ թեմ Տիգրանակերտի և գաւառակ Ռընտվանու գայմազամութեան ներքև. ունէր 40 հայաբնակ գիւղ, մօտ 800 տուն հայ բնակչով և 11 եկեղեցիներով: Գաւառագլուխն է Լյմէտի:

ԲՇՆԿՈՅ, գղ. Թորթուժի:

ԲՇՐ, ոստիկան՝ Աշոտ Երկաթի օրով Հայաստանի վրայ կ'ասպատակէ:

ԲՈՒՈՒՍ, «երգիծազաւեշտական երկշարաթաթերթ, աղգային, հասարակական, եւն». տպ. Թեհրան 1920—1930. խմբ. Հայկ Գարագաչ:

ԲՈՒՈՎԻՉ կամ Փոփովիչ Անդրեաս, բժիշկ, ծն. Պուքովինայի Սուչավա (այժմ Ռուսաստանի մէջ) քաղաքը: Նախնական ուսումը ծննդավայրին մէջ առնելէ յետոյ, ղէպի 1826 կամ 1827 թուականներուն կը սկսի աշակերտիլ Պուտարէշտի բժշկական համալսարանին, որուն ընթացքը յաջող կերպով կ'աւարտէ 1831 Փետր. 28ին, ինչպէս ցոյց կու տայ անոր վկայականը, զոր իր աղջիկը՝ Բերարնակ տիկ. Վ. Փափաղեան ներկայացուցած է ինձ 1894ին:

Բաւական ժամանակ Մոլտավիոյ մայրաքաղաքը Եաչի մէջ բժշկութիւն ընելէ յետոյ, 1883-ին կ'անցնէ Կ. Պոլիս ու կը հաստատուի Հասքէօյ, որ այն ատեն ունէր ճոխ ու փայլուն վիճակի մէջ նշանաւոր Հայութիւն մը:

Շուտով հոն նկատելի դիրք կ'ունենայ Տոքթ Փոփովիչ, և միանգամայն Պոլսոյ բոլոր արուարձաններուն մէջ կարող ծնուցիչի (accoucheur) համբաւը:

Ժամանակակից եղած է Սերվիչէն և Ասյանեան Սափան փաշա երեւելի բժիշկներուն, որոնք պատմած են ինձ ժամանակին, թէ Անդրէաս Փոփովիչ հեղ. քաղցրալեղու, վերին աստիճանի բարեսիրտ, աղքատասէր, կրօնասէր և ուսումնասէր բժիշկ մը եղած է:

Ազգ. պաշտօններու բնա՛ւ և երբեք մասնակցութիւն չէ ունեցած. բայց իրրև ժողովրդական մարդ և յոյժ աղգասէր, հայ աղգային առողջապահութեան բարելաւութեանը եղած է նախանձախնդիր, և այս նպատակաւ՝ ճիշդ 8 տարի աշխատելով կը պատրաստէ գեղեցիկ զիրք մը, որ 1850ին տպագրել կու տայ Պոլսոյ Միւհէնտիսեան տպարանը:

Այս զիրքին անունն էր՝ Արուես երկայնակեցութեան, կամ Առողջ երկայն ու երջանիկ ապրելու ուսումը: 400 էջէ բաղկացեալ, բաւական մեծակ հատոր մըն է ան՝ երկու մասի բաժնուած:



Առաջինը կը խօսի՝

1. Մարդուն կենդանական յօժարութիւններուն ու գրգիռներուն բնական ճամբով կատարուելուն վրայ: Իսկ երկրորդը՝

2. Մարդուն հոգեկան կարողութիւնները ու յօժարութիւնները բնութեան համաձայն կամ բնական կերպով կարգաւորելու ու կատարելու վրայ:

Առաջին մասը կը պարունակէ՝ եօթը գլուխ և երկրորդը՝ վեց: Գիրքին երկու մասերն ալ կը պարունակեն առողջապահական յոյժ օգտակար դասեր, որոնց վրայ հարկ չեմ տեսներ յամենալ, քանի որ 1894ին այդ մասին մանրամասն կերպով խօսած եմ՝ Վիեննայի «Հանդէս Ամսօրեայ»-ի մէջ, Փոփովիչի կենսագրութիւնը հրատարակած ատենս:

Միայն թէ սա չափը լաւ կը համարեմ՝ ըսել, «Արուեստ Երկայնակեցութիւն»ը ա՛յնքան ընդունելութիւն գտած է Պոլսահայ հասարակութեան մէջ որ հեղինակին մահէն 18 տարի յետոյ, 1876ին երկրորդ տպագրութիւն մը ունեցած է ան:

Անդրէաս բժիշկ Փոփովիչի այս աշխատութիւնը այսօր թղթափելով, կը տեսնեմ թէ նա շա՛տ գիրքեր էր կարդացած և նպատակ ունէր անշուշտ դեռ ուրիշ առողջապահական երկեր ընձեռել իր ազգին եթէ մահը վրայ չհասնէր:

Անոր անհետացումը մեծ կորուստ մը կ'ըլլայ Պոլսոյ հայ բժշկական դասուն, որ արդէն ողաւոր էր նշանաւոր բժիշկ Մանուէլ Շաշեանի մահով, որ տեղի ունեցած էր նոյն տարուան յունուարի 9ին:

Փոփովիչ բժիշկ ամուսնացած էր ձանիկ Ամիրայի աղջկանը հետ և ունեցած էր աղջիկ զաւակ մը, Տիկ. Վ. Փափազեան և արու զաւակ մը՝ Տիար Պօղոս Փոփովիչ, որ 1894 Օգոստ. 17ին ինձ գրած է սիրուն նամակ մը Պրայիւայէն: Ունեցած է նաև եղբորորդի մը՝ Տօթթ. Էմմանուէլ Փոփովիչ, որ բժշկութիւն կ'ընէր Ֆօքշանի մէջ:

Անդրէաս Փոփովիչ մեռած է 1858 զեկտ. 25ին: (Տոֆ. Վ. Յ. Թորգոմեան):

ԲՈՒՔՎԻԾ Պօղոս, որքի Տթթ. Բորովիչ Անդրէասի, Պոլսոյ մէջ ուսումը ստանալէ ետք Ռուս-մանիա կ'անցնի, 1894ին Պրայա կը գտնուի յետոյ Պուքրէշ, ուր Ասիկուրարիա Նացիոնալի (Asigurarea Naționala) ընդհ. տնօրէն եղած է և ընդհ. պատերազմին ինքն ալ Ռուսաստան անցած ու վախճանած է Մոսկուայի մէջ 1917ին? Տե՛ս Փոփովիչ:

ԲՈԳՈՐ (Bogore) քղ. ի ձաւա, ուր Վրթանէս Արգարեան կղմինարի գործարան մ'ունի:

ԲՈԳՈՒՆԻՔ, Բոսնիցի կամ Բուսնիցի, հին գա. վասպուրականի:

ԲՈԳԷՆՇՏԷՒ s. ՅԱԻԵԼՈՒԱՆԸՐ:

ԲՈԳԻ կամ Պոսի, գղ. Բագրեւանդայ, բն. 15 տ. քուրա: Ի հնումն կալուած և բնիկ թեմ՝ Ս. Յովհաննու վանքին:

ԲՈԳՈՒՆԻՔ s. Բոզուցիք:

ԲՈԶԼՈՒԽ, գղ. Ջրաբերդ գա. ի. բն. 18 տ. հայ եկղ. Ս. Մինաս: Մօքը Ս. Մինաս ուխտատեղի մը կայ, որուն շուրջը՝ աւերակ գիւղատեղի և հանգստարան:

ԲՈՒԱՏ Ղազար, ծնած է Կ. Պոլիս 1861ին, գիւղատնտես ճարտարագէտ, 1896ին Կ. Պոլսոյ մէջ հրատարակել կը սկսի Հանրագիտակ «գրական և գիտական, ազգային և միջազգային (չարթաթաթերթ)»ը՝ մինչև 1899, իսկ 1899—1900 կը խմբագրէ «Ծաղիկ»ը (որ 1886էն ի վեր յոյս կը տեսնէր Պոլսոյ մէջ) ազգային, քաղաքական տնտեսական, գրական և գիտական օրաթերթը: Ղ. Բոլաս 1927ին Գահիրէի մէջ կը վախճանի:

ԲՈՒԱՏԵԱՆ ՕԳԳԻԿ, ճարտարագետ, ծնած է Պոլիս, ուր նախնական և միջնակարգ ուսումնեցրը ընելէ ետք կ'անցնի Վենետիկ և յետոյ Հռոմի համալսարանը ճարտարագիտութեան ճիւղին հետեւ լըւ: Շուրջ 1922ին Պուքրէշ եկած հաստատուած է: Մասնակցած է ազգային հասարակական գործերու: Հասցեն է՝ B-dul Ferdinand 76, București



ԲՈՒԱՏԵԱՆ ՕՆՆԻԿ

(Roumanie):

ԲՈՒԼԷՆ (Յրանսայի գիւղաքաղաք Մարսէլէն 3 ժամ հեռու, ուր 300 Հայեր կը բնակին, որոնք աղիւսի գործարաններու մէջ կ'աշխատին Ազգային կազմակերպութիւն չկայ:

ԲՈՒՆԻՍ s. Բոզուցի:

ԲՈՒՈՄԷՐ, Բոլմօրի կամ Բլումօրֆ, կեզրոնավայր գիւղաքաղաք համանուն գաւառակի, Երզնկայէն 10 ժամ հեռու. 1900ին քանի մը տուն հայ մնացած էին:

ԲՈՒՈՄԷՐ գաւառակ Երզնկայի, 1900ին ունէր 18 գիւղ, 1900ի չափ աներով, Հայարնակ գիւ-



ղերն էին Տանձիկ, Կէրոնուղ և Բերկրի: Գաւառակս հին Մաւանաղին կը համարուէի:

ԲՈՂՈՆԻՒՍ, s. Լեւուսան:

ԲՈՂՈՐԱԲԵՐԳ, հին բերդ Սիւնեաց Վայոց ձորի:

ԲՈՂՈՐԱԲԵՐԳՈՅ ԱՆԱՊԱՍ, կը յիշուէ ժ.Յ. դարու գրուած յիշատակարանի մը մէջ. եկեղեցին նուիրուած էր Ս. Աստուածածնի և Ս. Կարապետի:

ԲՈՂՈՐԱՆ, հայաբնակ գ.Ղ. Փէրիա գաւառակի (Իրան), ունի 170 տուն (995 անձ) հայ և եկեղեցի մը Ս. Ղուկաս՝ 1912ին կառուցուած, որ գաւառիս հոյակապ եկեղեցին է. դպրոցը Հայրիկեան՝ 1908ին կառուցուած է ի յիշատակ Խրիմեան Հայրիկի:

ԲՈՂՈՐԱՊԱՀԱՎ, պահակատուն կամ իջեւան Բասնի մէջ:

ԲՈՂՈՐ ԴՈՒՉ, հին կալուածք Տաթև վանքին: ԲՈՂՈՐԿՈՒՆ, կը յիշուէ Խաչն գ.ձ. ի մէջ:

ԲՈՂՈՐՃՈՒԹ, հին կալուած Տաթևի:

ԲՈՂՍ, գիւղակ Մոկաց Շառախ վիճակի մէջ. եկղ. Ս. Աստուածածին:

ԲՈՂ, կը յիշուէ Վասպուրականի Թոռնաւան գ.ձ. ի մէջ:

ԲՈՂԱԽՈՒՆ, հին գ.Ղ. Սիւնեաց Չորք գ.ձ. ի:

ԲՈՂԱԲՈՒՐ, Տարօնի մէջ, Մուշի նորջէն գիւղէն կէս ժամ հեռու, այժմ ծանօթ Շատեր անուամբ. բլուրիս վրայ տեղացիք գտած են հնութիւններ. խեցիի թեկորներ, սանդեւն. որոնք կը հաստատեն թէ ժամանակաւ այդ տեղ եղած ըլլայ գիւղ և բնակութիւն:

ԲՈՂԱԶՔԵԱՍԱՆ, s. Չորակապ:

ԲՈՂԱՇԵՆ, կը յիշուէ Սիւնեաց Մաքենոցաց վանքի նուիրատուի մը արձանագրութեան մէջ:

ԲՈՂԲԵՐԳ, հին ամուր բերդ, հաւանօրէն Այրարատայ Բասեն գ.ձ. ի մէջ. դիրքն անյայտ է. Ղաղար Փարպեցի «Ամուր բերդն Բասենոյ» կը կոչէ:

ԲՈՂԲՈՋ, աշակերտական թերթիկ տպ. Չմիւռնիս 1862ին: Հրատարակութիւն և խմբ. Մեսրոպեան սանուց:

ԲՈՂԲՈՋ, «պաշկերաղարդ հանդէս ամսօրեայ» տպ. Մարզուան 1911—4, խմբ. Մամիկոն Վարժապետեան:

ԲՈՂԲՈՋ, «գրական, գեղարուեստական երկչարթաթերթ», տպ. Թիֆլիս 1919. Մակուռայի Հայկ. կոմիտէի Որբ-Աշակերտական Միութեան:

ԲՈՂԲՈՋՆԵՐ, ձեռագիր թերթ որ կը խմբագրուէր 1900ի ատենները Խարբերդի Եփրատ գոլէճին մէջ:

ԲՈՂԵԱՆ կամ Բուճեան, հին գիւղ Սիւնեաց Հարանդ գ.ձ. ի:

ԲՈՂԻ, կը յիշուէ Տուրուբերանի Կինձ վիճակի մէջ:

ԲՈՂՆԵԱՅ կամ Բոլնիս գեթ. Գուգարաց Բողնափոր գաւառին մէջ: Մին Բոլնիս Խաչեն կամ Մեծ Բոլնիս, 1900ին 91 տուն հայ բնակիչ ունէր. գաղթած Խաչեն գ.ձ. էն, մօտը կայ քարաշէն Սիոն եկեղեցի մը և հարաւային կողմը՝ Դուռուղաշէն մենաստանը: Ներկայիս ունին նորակառոյց քարաշէն եկղ. մը, Հայերը իրենց դրացի Ռատեւան գղ. ի գերմանացիներէն այգեգործութիւն, գինեգործութիւն սորված են. վերջիններն ալ Հայերէն հողագործութիւն: Ժողովուրդը Համբարձման օրը կամակատար եկեղեցին ուխտի կ'երթայ Հոս ծնած է Ղաղարոս Աղայեան: Գիւղէս 3 վերստ հեռի է Փոքր Բոլնիս, ուր բլուրի մը վրայ կայ ուխտական Ս. Գէորգ եկեղեցին, բնակիչք՝ սակաւաթիւ հայ և վրացի: Բողնիսեցւոց մէջ ցարդ կենդանի մնացած է Մելիք-Արովի յիշատակը:

ԲՈՂՆՈՒՏ, գղ. Բաղէշի Մօսկան գաւառակի մէջ, 15 տ. հայ կար:

ԲՈՂՆՈՒՓՈՐ, կամ Բոլնի, Գուգարաց կամ Վրահայոց գաւառներէն մին. ի հնումն ունէր հոյակապ մենաստաններ և մատուռներ, ամուր բերդեր և բազմամարդ գիւղեր. այժմ ամայի է:

ԲՈՂՈՒՆ ԱՄՐՈՅ, կը յիշուէ Պրոկոպիոսէն Թէոզուպոլսի (Կարին) մօտ:

ԲՈՂՈՏԻ ԶՈՒՐ, հին գ.Ղ. Սիւնեաց Ծղուկ գ.ձ. ի:

ԲՈՂՈՒՆԻՔ, կամ Համակ, գաւառ Վասպուրականի, ուր է Ակն Դաշտայ Աստուածածին վանքը: ԲՈՂՈՒՔԱԿԱՆՔ, հայ յարանուանութիւն մը որոնք 1847ին (նոյ. 3ին) Կայսերական իրաւէով կը ձանչցուին իբրև անջատ հայ հասարակութիւն:

ԲՈՂՐԻԱՆ, սար Վարանդա գ.ձ. ի մէջ:

ԲՈՂՐԻԱՆԻ ՎԱՆՔ, կը գտնուէ Արցախի Վարանդա գ.ձ. ի մէջ, համանուն սարի հարաւ արեւելեան կողմը երկնցող ձորակի մը ձախակողմը: Եկեղեցին կառուցուած է անտաշ կաթնագոյն քարով: Վանքս շրջապատուած է պարիսպով. ունի բազմաթիւ խուցեր. անվնաս կը մնայ միայն վանահօր սենեակը, միւսները բոլոր կիսաւեր են: Վանքիս շուրջը անտառներ կան, ունի պատուական ջուր և օդ:

ԲՈՄԲ, իշխան, որ Գուգարաց Չորափոր գ.ձ. ի այժմ աւերակ Բերդիկ գղ. ի մօտ Դէղէգոյ գետին վրայ կամուրջ մը շինել կու տայ:

ԲՈՄԲԷՅ s. Պոմպէյ:

ԲՈՄՈՆ s. Սեն Ժիւլիէ:

ԲՈՅԱՃԵԱՆ Ա. խմբագիր Սոֆիայի մէջ 1925ին լոյս տեսած Զանգ շաքաթաթերթին:

ԲՈՅԻՔ, գղ. Դերջանի:



ԲՈՅՐ, պարբերաթերթ հրտ. Պոլսոյ Պէրպէրեան վարժարանի սանուց 1890ին:

ԲՈՆԱՐ (Պոնառ) Քրաֆթ, հայասէր գուեցերիացի ծնած է 1869ին էկլի մէջ. ուսած Լոզան, Պերլին և Բարիլդ. Հովիւ Պէնիէնի, յետոյ ժընեւի ուր կը մնայ մինչև իր մահը: 1896ին Համբուրնի Զարդերը երբ արձագանգ կը գտնէին Եւրոպա, Քրաֆթ իր ազգականին Ալբեր Բոնարի առաջարկով Պէնիէնի մէջ Հայոց Օգնութեան Զուլիցերիոյ Քոմիթեներու ժողովը կը կազմուի նախագահութեամբ Նէօշաթէլի բրոֆ. Ժորժ Կոտէի. և այս վերջինի առաջարկով Բոնար Քրաֆթի կը յանձնուի կազմակերպելու գործը՝ Հայ որբերու դաստիարակութեան Զուլիցերիոյ մէջ: Բոնար Քրաֆթ ժընեւի մօտ Պէնիէնի գիւղին մէջ որբանոց մը բացաւ ուր 50 հայ որբեր դաստիարակեց, ուսուցիչ կարգելով Յովհ. Ասպետը († 1922ին):

ԲՈՇԱՏ, գղ. Տիգրանակերտի, ունէր 25 տ. հայ ԲՈՇԽԵՆՅ ՎԱՆՔ s. Խաչի (Ս.) վանք:

ԲՈՍԻ, հին գիւղ Սիւնեաց Կովսական գո.ի:

ԲՈՎԱԶՈՐ, կը գտնուի Գուգարաց Բողնոփոր գո.ի մէջ:

ԲՈՎԱԶՈՐ, ձոր կամ կամուրջ, կը յիշուի Հոռոմոսի վանքի արձանագրութեան մէջ:

ԲՈՐ կամ Փռ, գղ. Սիւնեաց Վայոց-ձոր գո.ի, ի հսուսմ մեծ գիւղ եղած է, այժմ Պարսկաստանէ գաղթող Հայեր և սակաւաթիւ այլազգիներ կը բնակին ժ.Գ. ժ.Գ. դարու արձանագրութիւններ կան հոս:

ԲՈՐԴՈՅ (Bordeau), ֆրանսական քաղաք, ուր 150ի չափ Հայեր կը բնակին:

ԲՈՐԺՈՍ կամ Պոռժոմ, Թիֆլիսի ամարանոց, ունի հանքային ջուրեր: Բնակիչք 1000էն աւելի, մեծ մասը Վրացիք, յետոյ Ախալցխայէն, Ախալքալաքէն եկած Հայեր, Ռուսք. Յոյնք, Հրեայք: Հայք ունին եկղ. մը:

ԲՈՐԻ, կը յիշուի Գուգարաց Բողնոփոր գո.ի մէջ:

ԲՈՐԿՍ կամ Բերկա, գղ. Բարբերդի:

ԲՈՐՈՐԱՆ կամ Բորոնայ բերդ, Սիւնեաց աշխարհի հին բերդերէն մին:

ԲՈՐՏԻ, կրկին գիւղեր, Ներքին և Վերին՝ Սիւնեաց Մղուկ գո.ի մէջ:

ԲՈՅԻՎ, լեռ Ալթրատայ Հաւնունեաց գո.ի մէջ:

ԲՈՒԱՆ, հայաբնակ գղ. Մոկաց Մամրտանք գո.ի, ունի Ս. Գէորգ եկղ. մը:

ԲՈՒԳԻԷ Էլսեուս Սոփուս (Bugge Elseus-Sophus) — Նորվեկիացի յայտնի բանասէր, ծնած Լաուրվիկ 1833ին: Ուսուցչապետ Քրիստինիայի համալսարանին (1866), Բուզգէ նշանաւոր հանդիսացած է մանաւանդ իր լեզուագիտական աշխատութիւններով: Երկար ժամանակ ուսումնասիրած է Ասք և Ետրուսկեան րարաւանները և 1886-ին հրատարակած՝ Origine des Etrusques expliquée par deux inscriptions de Lemnos գործը:

Ետրուսկեան լեզուն հայերէնով վերծանելու Հորբերդ Ելլեսի անյաջող փորձէն վերջ, Բուզգէ նոյն ուղղութեամբ աշխատեցաւ, բայց աւելի լրջութեամբ ու նմտութեամբ: Կ'ընդունի հին նախնեաց աւանգութիւնը թէ Ետրուսկեանք Լիւզիայէն եկած ըլլան և իր կարծիքը կը հիմնէ Ետրուսկերէնի և հայերէնի միջև գոյութիւն ունեցող մերձաւորութեան վրայ: Հրատարակած է բազմաթիւ ուսումնասիրութիւններ որոնցմէ ամէնէն կարեւորներն են՝

1. Beiträge zur etymologischen Erläuterung der Armenischen sprache (1889):

2. Etruskisch und Armenisch (1890):

3. Ueber den Einfluss der armenischen sprache auf die gotische (1894) եւ այլն. եւ այլն:

Բուզգէի յոգուածները թարգմանուած են նաև հայերէնի և հրատարակուած «Հանդէս Ամսորեայ»-ի մէջ (Գ. Գրլլընեան):

ԲՈՒԳՈՎԻՆԱ s. Բուկովինա:

ԲՈՒԳ s. Բուք:

ԲՈՒԳԱՂԱՆ ԵՆՈՎ Ծամախեցի, կը վախճանի 1900ին. սա մեծագումար գրամ նուիրած է ազգային բարենպասակ հաստատութեանց:

ԲՈՒԳԱՂԱՆՅ ՅՈՎԱԿԻՄ Խմբագիր 1907ին խմբագրած է Աղեքսանդրապոլի մէջ «Ժայռ» հասարակական, քաղաքական լրագիրը (համակիր Հ. Յ. Դաշնակցութեան):

ԲՈՒԳԱՂԱՆ ԵՂԱՐԲ. առետրական տուն և չոր մրցեղէնի գործարան Թաւրիզի մէջ:

ԲՈՒԳՈՒՆԻՔ s. Բուզունի:

ԲՈՒԶԱՅԵԱՆ Հ. Նիկողայոս, Վենետիկի Մխիթարեան միաբանութեան անդամ:

ԲՈՒԶՈՎՆԱՅԻ Ս. Եղիա վանքը Արարատ 1902 էջ 481 տե՛ս Եղիա (Ս.) վանք Բուզովնայի մէջ:

ԲՈՒԹ կամ Բուդ, գղ. Վասպուրականի Բողունիք գո.ի, բնակիչք այժմ այլազգիք: Մօտն է Բութայ Ս. Աստուածածին հիւանուրց վանքը. կ'աւանդուի թէ վանքս շինուած է Ս. Թաղէոս և Բարդուղիմէոս առաքելոց օրով: Կառուցուած է խիստ հաստատուն, ամրաշէն հիմերով ու պարիսպներով, որոնց մէջ կը գտնուին գեղեցկայարմար պահարաններ: Վանքս ներկայիս ամայացած է, սենեակներէն ոմանք փլիլած եւ ոմանք կիսակործան. ունի բաւական թիւով խաչքարեր առանց արձանագրութեանց կամ եղածներն ալ անընթեռնի:

ԲՈՒԹԱԿ կամ Բուդով, գղ. մը որ կը յիշուի Վերին Բասենի մէջ:



ԲՈՒԳԱՑ Ա. Ասուածածին վանք տե՛ս Բուք գղ.  
 ԲՈՒԹՎՈՒՍ. Գեորգ. Հինաւուրց վանք Մոկաց  
 աշխարհի. Ռչտունեաց դռ.ի մէջ: Վերջերս իրրե  
 ապաստանարան կը ծառայէր ճամբորդներու:  
 Վանքի մէջ վաղեմի սովորութիւն կայ աքա-  
 զաղ մը պահելու. ձմեռը մինչև այդ աքաղաղը  
 չկանչէ, ճամբորդները չեն համարձակիր ճամբայ  
 ելլելու. և այն էր համոզումնին որ առանց ա-  
 նոր ձայնելուն՝ եթէ ապաստանողներ ճամբայ  
 ելլէին ձիւնի և բուքի մէջ կը բռնուէին:

Ինչպէս Ս. Սարգիս զօրավարը ցամաքի վրայ  
 արագահաս կը դաւանին գիւղացիք, Ս. Գէորգ  
 զօրավարն ալ ջրերու վրայ պաշտպան սուրբ  
 կ'ընդունին Աւանցի նաւավարները եթէ փո-  
 թորի՛ մ'ունենան, Բուքիւր Ս. Գէորգը օգնու-  
 թեան կը կանչեն: Վանքս հոգեւորապէս Աղթա-  
 մարայ իրաւասութեան ենթարկուած էր: «Արե-  
 ւելի բիւ 1143»:

ԲՈՒԹՆԱՍ, գու. Ռուսմանիոյ, որուն գլխաւոր քա-  
 զաքն է Ֆոքչան. գաւառիս մէջ ըստ 1881ի վի-  
 ճակադրութեան 1100 հայ կայ. այժմ այս թիւը  
 նուազած է:

ԲՈՒԺԱԿ. «ամսօրեայ հանդէս բժշկական և ա-  
 ողջապահական», տպ. Պրովիտենս և Բոստոն,  
 տնօրէն խմբագիր՝ Դոկտ. Արչակ Տէր Մարկոս-  
 եան Լոյս տեսած է 1917—1919:

ԲՈՒԺԱՆՔ, առողջապահական, գիտական և ըն-  
 կերային ամսագիր. տպ. Բարիզ 1926—1930.  
 խմբագիր՝ բժ. Լ. Գրիգորեան:

ԲՈՒԺԱՍՆ, ԳԱՒԱՍ, ԺԵ. դարուն այսպէս կը  
 կոչուէր նիգ գռ.ի արեւելեան մասը:

ԲՈՒԺՈՒՆԻՔ ռ. Բաժուցի:

ԲՈՒԻՎ. կրկին գիւղեր Արշարունեաց դռ.ի մէջ,  
 Վերին և Ասորին, առաջինը հայարնակ, 600 բնա-  
 կիչ, եսկ երկրորդը որ կը կոչուի նաև Սուքլա  
 Բուիկ՝ 66 ա. քուրտ ունէր 1900ին:

ԲՈՒԼԱՂ-ԱՅՏԻՆ, գղ. Աղուանից Շաքէ գռ.ի  
 մէջ. 1900ին 50 ա. հայ բնակիչ ունէր, որոնց  
 նախնիք գաղթած են Պաչին և Ջրաբերդ գա-  
 ւառներէն. եկղ. Ս. Աստուածածին:

ԲՈՒԼԵՆՑ, գղ. Մոկաց աշխարհի, ունէր 35 ա.  
 հայ եկղ. Ս. Գէորգ:

ԲՈՒԼԲՈՒԼ, գղ. Թորթումի:

ԲՈՒԼՈՓՎՈՒՄ. հին քղ.ի անուն Ուաի նահան-  
 գին մէջ:

ԲՈՒԼՔ, գղ. Դերջանի, 1900ին 100 տուն հայ  
 ունէր, եկղ. Ս. Գէորգ, Ազգ. վարժարանը 40  
 մանչ կը յաճախէին: Այժմ քրտարնակ:

ԲՈՒԽԼՈՒՑ, ԲԵՅՈՐԱՑ կամ ԲՈՒՐՈՒՑ, հայանուն  
 բայց այժմ թաթարարնակ գղ.ը Սիւնեաց Գող-  
 թան գռ.ի: Տե՛ս Ազախ:

ԲՈՒԿՈՎՆԱՍ կամ Բուգովիւնա, նահանգ Ռու-  
 մանիոյ, ուր գաղթած են և իրենց բնակութիւ-  
 թիւնն հիստատած Անիէն Ղրիմ և անկից Լե-  
 հաստան և հոս գաղթող Հայեր: Հայաշատ գըլ-  
 խաւոր պատմական քաղաքն եղած է Սուչավա  
 (տե՛ս իր կարգին) ուր դեռ հայ համայնք կայ  
 իր պատմական Հաճկատար վանքով, Չերնովից  
 և այն որոնք ընդհ. պատերազմէն առաջ Աւստրիոյ  
 սահմաններուն մէջ էին: Նահանգիս Հայոց մա-  
 սին տե՛ս «Հանդէս Ամսօրեայ» (1906 էջ 161),  
 «Բուկովինայի Հայերը», Բարսիան Լ. «Մշակ»ի  
 մէջ (1906 թ. 106) ունի «Բուքովինայի Հայերը  
 յօդուածը:

ԲՈՒՂԳԱ-ԱՄԲԱՐ ռ. Բոլորաց:

ԲՈՒՆ գղ. Դերջանի, ուր ատենօք Գուրտ բէ-  
 կեր կը նստէին:

ԲՈՒՆԻԱԹ Խոջա, Ազարիայի որդի, Խօջկաչէնցի  
 ԺԸ. դարուն սկիզբը Վենետիկ կու գայ և 1706-  
 ին գրքեր տպել կու տայ: (Տե՛ս Էփրիկեան  
 «Բնագիտական» Բ. 229):

ԲՈՒՆԻԱԹԱՆ ՄԵՆՏՐ, բրոֆ. միջազգային  
 հռչակ հանած տնտեսագէտ մը, քաղաքական  
 գիտութեանց տօքթոր Միլենիխի (Գերմանիա) հա-  
 մալսարանէն և magister անուանուած Մոսկուայի  
 համալսարանէն. ուր ինչպէս նաև Թիֆլիսի բազ-  
 մարուեստեան վարժարանին մէջ վարած է ու-  
 սուցչական պաշտօն: Ան հեղինակն է շատ մը  
 գիտական կարևոր աշխատութիւններու, աըն-  
 տեսական տազնապններուն պատմութեանը ինչ-  
 պէս նաև այս տազնապններուն վրայ, ուստերէն,  
 գերմաներէն լեզուներով հրատարակած, զիբքեր  
 ունի արժեքի սեւուրեան և տնտեսական քաղա-  
 քականութեան մասին և այսօր կ'աշխատակցի  
 Ֆրանսերէն, գերմաներէն և անգլիերէն տնտե-  
 սական գլխաւոր հանդէսներուն:

Բունիաթեանի գլխաւոր հեղինակութիւնը կը  
 կազմէ տնտեսական տազնապններու մասին գրած  
 գիրքը, սր 1907ին պատրաստուած և 1908ին  
 հրատարակուած է առաջին անգամ Միլենիխի  
 մէջ: Այս գիրքը, որ ինքնատիպ տեսութիւններ  
 կը պարունակէ սնեսական ցագնապներուն և  
 արժեքի սեւուրեան մասին, թարգմանուած է  
 Ֆրանսերէնի 1922ին և երկրորդ հրատարակու-  
 թեան արժանացած 1930ին: Իր տեսութիւնները  
 առիթ տուած են շատ մը մասնաղէտներու, ը-  
 նելու մասնաւոր ուսումնասիրութիւններ և գրե-  
 թէ դասական դարձած են, նիւթ մատակարարելով  
 շատ մը համալսարանական դասագրքերու եւ  
 տնտեսագիտական մեծ համայնագիտարաններու:

Իր հեղինակութիւնները թէև ոչ բազմաթիւ,  
 բայց ամէնքն ալ արժէքաւոր են:




1. Wirtschafts Krisen und Überkapitalisation, Munich, 1907, 2. Geschichte der Standels krisen In England 1640—1840, Munich, 1907. 3. Süßh-sական Տազնապները (սուսերէն, Մոսկուա, 1915). 4. Բամպակի գնոյն որոշումը և բամպակի ճարտարաբուստը (ղարձեալ սուսերէն). 5. Les crises economiques, 2me édit. Paris, 1930, 6. La loi de variation de la valeur et le: mouvements générales des prix, Paris, 1926:

Իսկ իր ամէնէն վերջին գործը որ գեռ նոր հրատարակուեցաւ Բարիզի մէջ 1933ին՝ Credit et l'onjoncture անունը կը կրէ:

Պ. Բուենիաթեան տիպար հայ մըն է նաև, եւ 1905էն ի վեր սերտորէն խառնուած է հայ կեանքին: 1912—1916 Մոսկուայի Հայկական խորհուրդի անդամ եղած է: 1916ին Թիֆլիսի մէջ անդամ եղած է Կովկասի Հայոց Բարեգործական Միութեան և մին եղած է Ժողովրդական Կուսակցութեան հիմնադիրներէն ու անոր փոխ-նախագահը, 1918ին անդամ՝ Տրպիզոնի և Պաթուսի հաշտութեան խորհրդատուներուն, ինչպէս նաև նոյն տարուան Պոլսոյ մէջ գումարուած խաղաղութեան խորհրդատուներուն, Հայաստանի պատուիրակութեան: Յետոյ Երևանի մէջ ելեմտական նախարար անուանուած է, բայց այս պաշտօնը չէ ընդունած և մնացած է Թիֆլիսի մէջ իբրև ելեմտական խորհրդական Հայաստանի կառավարութեան: 1920ին Հայաստանի կողմէ պատուիրակ նշանակուած է Պրիւսէի մէջ գումարուած ելմտական միջազգային խորհրդատուին, եւն եւն:

Աւելցնենք որ Հարվուրդի համալսարանի հանդէսին՝ անօրէնութեան հրաւերով պ. Բուենիաթեան պարզած է իր տազնապներու տեսութիւնը այս հանդէսին 1928 Մարտի թիւին մէջ երկար ուսումնասիրութե ամբ մը: («Կեանք եւ Արուեստ»՝ Հր. Ն. Թ.):

ԲՈՒՆԻԱԹԵԱՆ Նիկողայոս, Բրոֆ. ճարտարագետ է. Հայաստանի մէջ (Երևան) իր գործերն են Գիւղաբանկի, Երեւանի հիւրանոցի և այլ շատ մը պետական հիմնարկութիւններու շէնքերը: 1933ին լոյս ընծայած է



ԲՈՒՆԻԱԹԵԱՆ ՄԵՆՏՈՐ

122 էջնոց հետեւեալ երկը «Հեթանոսական տաճար Տրդատի պալատին կից, Գառնի ամրոցում»:

ԲՈՒՇԱԳ, գետակ Սիւնեաց վայոց ձոր գո. ի մէջ, ձախակողմեան օժանդակ Արփա գետի:

ԲՈՒՇԵՌԻ, քղ. Հնդկաստանի, ուր Հայերը Ս. Գէորգ եկղ. մը ունին. զոր Մովսէս Խան Սաչաուրեան 1911ին կը նորոգէ: 1884ին հոս կը բնակէր բժշկագետ պարոն Կարապետ Աբրահամեան վիրաբոյժը:

ԲՈՒՇԵՐԻԿ, գաւառ, յիշուած է յիշատակարանի մը մէջ:

ԲՈՒՌԿԱՆՈՍ, հայարնակ գղ. Ախալքալաքի բն. 300:

ԲՈՒՌԻԱՆՈՍ, գղ. Թրիալէթ վիճակի մէջ. ունի 35 տուն հայ:

ԲՈՒՌՈՍ կամ Առոս, հին գաւառ Փայտակարանի:

ԲՈՒՍԻԱՆ, այլազգարնակ գղ. Տարուր գո. ի:

ԲՈՒՍ կամ Բիւս կամ Պուս հին և մեծ գղ. Գողթնի Աղուլիսի վիճակի, համանուն գետակի եզերքը: Բն. 700 հայ և 700 թաթար: Ունի հին եկղ. և վանք: Այս գիւղէս էր Յովհ. Որոտնեցւոյ և Գրիգոր Տաթևացւոյ աչկ. Յակոբ վրդ., որուն խնդրանքով գրեց Գրիգոր Տաթևացի՝ Փոքր Հարցմանց զիբը: 1708ին կը յիշուի Բոտացի ոմն տէր Ղուկաս, որ Ագուլեցի տէր Փիլիպպոսի հետ Երուսաղէմ դնաց: Աբրահամ կթղ. Կրետացի կը նկարագրէ Պուսի վանքը, (տե՛ս): (Եփրիկեան՝ «Բնագիտութիւն»):

ԲՈՒՐԱՆԻ, գղ. Մոկաց, բն. հայ և քուրտ, եկղ. Ս. Աստուածածին:

ԲՈՒՐՁՈՅ, աւերակ գղ. Ոստան գո. ի:

ԲՈՒՐԱՏ, գղ. Գարեղէնք գո. ի:

ԲՈՒՐԱՍԱՆ «Սուրբ Սահակեան, օրագիր բարոյական, բանասիրական, տնտեսական և ուսումնական (ամսագիր), տպ. Պոլիս 1851—2. (Խմբագրութեամբ Ս. Սահակեան դպրոցի աշակերտաց մարմնի):

ԲՈՒՐԱՍԱՆ. ՄԱՆԿԱՆՅ «պատկերազարդ հաւաքածոյ բարոյական, քրիստոնէական, պատմական, ուսումնական, աշխարհագրական և այլ պիտանի գիտելեաց» (ամսագիր): Տպ. Պոլիս 1882-1890, խմբ. Կ. Կարակիւլեան, տպաւ Ս. Տէովլէթեան:

ԲՈՒՐԱՍԱՆ Արժակ, Երևանի պետական թատրոնի ղերուսոյց, եղբ. Բուրջալեան Գէորգի:

ԲՈՒՐԱՍԱՆ Գեորգ, գեղարուեստական թատրոնի հիմնադիր-ղերասան, 57 տարու կը վախճանի Մոսկուայի մէջ 1924 դեկտ. 10ին:

ԲՈՒՐՈՒՂ, կը յիշուի հին Չըլտըր (Կարս) վիճակի մէջ:

ԲՈՒՐՎԱՌ կամ Պուրպար, հարաւային Իրանի



(Ապահանու), որ կ'իյնայ փէրիա գա.ի կից, ունի 22 գիւղ, 21 եկղ. 6 դպրոց և 6870 հայ բնակիչ: ԲՈՒՐՎԻՇ գղ. որ կը յիշուի Վախուշտէն Իրա-կաձորի մէջ:

ԲՈՒՐԲ s. Բիւրբ:

ԲՈՒՔՈՎԻՆԱ s. Բուկովինա:

ԲՉԱՆԻՍ, այլազգարնակ գիւղ Աղահէճք գա.ի մէջ:

ԲՋՆԱՂ կամ Բիջեմակ լեռ ձահուկ գա.ի Ի Սիւեհիս. հարաւային կողմը Բջնաղ գիւղը:

ԲՋՆԻ կամ ԲՃՆԻ, նշանաւոր և հին գղ. Այրա-բատայ նիզ գա.ի արեւելեան մասին մէջ, շրաղ-դան գետի աջակողմը: Ե. դարու վերջերը կը յիշուի գիւղս և իր ամուր բերդը: Ասկից էր սրբակեաց Աթիկ քահանան, որ հաւատոյ պաշտ-պանութեան համար Վահան Մամիկոնեանի հետ միաբանողներէ երդումն առաւ: Պահլաւունեաց պայազատութեան ժամանակ, որոնց ոստանն ե-ղաւ, խիստ բարգաւաճեցաւ Բջնի, այնպէս որ տասներորդ դարէն ետք եկող պատմիչք, քաղաք և բերդաքաղաք կը կոչեն դայն: ԺԱ. դարու սկիզբն ալ եպիսկոպոսանիստ եղաւ, ինչպէս կը յայտնէ եկեղեցւոյ արձանագրութիւնը:

Մեծահռչակ Գրիգոր Մագիստրոս, որ յատկա-պէս Բջնեցի կը կոչուի, Բջնիի մէջ կառուցանել տուաւ մեծ և հոյակապ եկեղեցին Ս. Աստուա-ծածինը. որ մինչև ցարդ կանգուն է և դեռ շի-նութեան թուականը ՆՁ (1031) կը նշմարուի:

Բջնիի եպիսկոպոսական թեմը ի սկզբան կը տարածուէր արեւելքէն՝ Գեղամայ ձովէն մինչև Ախուրեան գետը և հիւսիսէն՝ Գուգարաց սահ-մաններէն մինչև ընկի Բջնի վիճակին հարաւա-յին ձայրը ժ.ի. դարէն սկսեալ համարուած է չորս գլխաւոր աթոռներէն մին, որոյ միաբանու-թիւնը հարկաւոր էր կաթողիկոսի ընտրութեան համար: Պետրոս Գետաղարձ կաթողիկոս որ Յով-հաննէս Սմբատ թգ.ի հաւանութեամբ հաստա-տեց այս աթոռը՝ քիչ վերջը (1035) նոյն թա-գաւորէն մերժուելով հայրապետական աթոռէն, տարի մը ընակեցաւ Բջնիի մէջ՝ հիւրընկալուե-լով իր մտերիմ Գր. Մաղիսարուէն, որ 1045ին Բջնիի բանայինները Յունաց թագաւորին յանձ-նեց: Մեծն Չաքարիա և իր Իւանէ եղբայրը 1201ին Բջնին այլազգեաց ձեռքէն առին: Ասոնց իշխանութեան օրով, ինչպէս ցոյց կու տայ 1029 թուականով արձանագրութիւն մը, Վահան ա-նունով մէկը կը կառուցանէ Իշխանավանից մեծ եկեղեցին և կը նորոգէ Բջնիի Ս. Աստուածածին եկեղեցին: Մինչև ժ.ի. դարուն կէսէն անդին կը գտնուին Չաքարեանց տոհմի Բջնիի ժառանգա-ւորաց յիշատակները: Մեծին Չաքարիայի Շա-

հանչահ որդւոյն օրով. 1251 թուին Բջնիի երկու եպիսկոպոսները, տաճարի հարաւային դրան վրայ կ'արձանագրեն կոստանդին կթղ.ի հրամանը նկատմամբ օրինաւոր ձեռնադրութեան ժ.ի. դարու վերջերը Իւանէի թոռնորդին Չաքարէ, ապահարկ ըրաւ Բջնին, իր հրամանը արձանագրե-լով վերոյիշեալ արձանագրութենէն վեր: Յա-ջորդ դարուն սկիզբը (1303—6) քանի մը նուի-րատուներ, զբաժ են իրենց արձանագրութիւնք տաճարին ներսը հարաւային որմոյն վրայ: Ամէ-նէն վերջը 1358ին, տոհմին պայազատը Աթա-րէկ Ամիր Չաղայ, վերստին առեր է Բջնին այ-լազգեաց ձեռքէն, որոնք շատ վնասներ հասցու-ցեր են քաղաքին և քրիստոնէից. ինչպէս եր-կարօրէն արձանագրուած է եկեղեցւոյ հարաւա-յին կողմի պատուհանին ներքև: Նոյնը արձա-նագրուած է նաև, քիչ փոփոխութեամբ, հիւ-սիսային որմին վրայ:

Ս. Աստուածածնայ եկեղեցիէն դատ կ'սն նաև ուրիշ փոքրերու աւերակներ, որոնց մէջ արձա-նագրութիւններ չեն նշմարուիր:

Աշխարհաւեր լէնկթիմուրի հարուածոց ևս հան-դիպեցաւ Բջնի 1387 թուականին, և նոյն միջոց սպանուեցաւ իմաստուն, գիտնական և ողորմած եպիսկոպոսն Տէր Վանական: Գրեթէ 120 տարի վերջ կը յիշուի Բջնի աւետարանի մը յիշատա-կարանին մէջ, յորում անառիկ ղղեակ կոչուած է: Իսկ այնուհետեւ քաղաքս աւերակ դառնալով, քանի մը տարի միջոց անյիշատակ կը մնայ, եւ դարձեալ ախուր վիճակի մէջ կը յիշուի ժ.ի. դարու սկիզբը ձէլալեանց ասպատակութեանց ժամանակ: Բայց նոյն դարու կէսէն առաջ սկսաւ Բջնի դարձեալ շէննալ, Տէր Փիլիպպոսի առաջ-նորդութեան օրով, որուհ 1631ին Մովսէս կթ.ը յանձնած էր Բջնիի վանքը: Այս միջոցին նո-րոգուեցաւ եկեղեցւոյ տանիքը Չուղայեցի խոջայ Պետրոսի ձախքով: Փիլիպպոսի աշակերտն ու յա-ջորդը Մովսէս վրդ. վանաց շուրջը պարիսպ շի-նել տուաւ և բուրգերով ամրացուց: 1673ին հոս գիշերած է զաղղիացի ճանապարհորդը Շարտէն:

Մինչև ժ.ի. դարու կէսը կը յիշուին Բջնիի վանքին առաջնորդները, վասնզի հին եպիսկո-պոսարանը վանքի փոխած էին, նաև իր օրերը (1763—80) իբրև շէն՝ կը յիշէ Բջնի Սիմէոն կա-թողիկոս: Այդ ժամանակէն վերջ կը թուի, թէ դադրած է վանքի միաբանութիւնը և մեծ եկե-ղեցին մնացեր է անխնամ մինչև վերջին ժա-մանակներս: Բջնիի վանաց եպիսկոպոսներէն եւ առաջնորդներէն արձանագրութեանց և զրոց մէջ ծանօթ են 19 հոգի:



Այժմ (1900ին) ԲՆՆի գիւղը ունի մօտ 700 հոգի հայ բնակիչ, բաժնուած 94 տան և 76 տուն այլ լազգի: (Էփրիկեան՝ «Բնագիտարհիկ», Բաղուած Հ. Ալիբանի «Այրարատ»էն):

ԲՈՒԱԲԵՐԳԻ կամ Բրաբերդ, գղ. Սերաստիոյ արեւելակողմը, բն. 70 տ. հայ, 45 տ. թուրք, եկղ. Ս. Թորոս:

ԲՈՒԱԹՈՒՄԲ, կը յիշուի Սիւնեաց Բաղք գա. ի մէջ:

ԲՈՒՊՆԻՔ կամ Բրգնիկ, գղ. Սերաստիոյ արեւելակողմը, մէկուկէս ժամ հեռու Բնակիչք 1900-ին 1300էն աւելի էին բոլորն ալ հայ կաթողիկէ: Եկղ. Ս. Սարգիս, նորաչէն և քարակերտ 1631ին գրուած Սերաստիոյ Ս. Նշանի վանքի գրքի մը յիշատակարանին մէջ հետեւեալը գրուած է «Բագրատունիք այն է Բնգնիք, ի սմանէ ասի յօմանց, թէ էին ի ցեղէն Բագրատունեաց, և եկեալ աստ արարին հիմնարկութիւն, և էին տունք իրր եօթն, և յետոյ ի գոնկաց դարձուցեալ զԲագրատունիք Բոգնիք և է իրր ժամաւ եւ կիսով հեռի ի քաղաքէ Սերաստիոյ, և այժմ են ի սմա տունք իրր և հոգեատասան, ի թուին Հայոց ՈՁ»: Բագրատունեաց սերունդներէն մաս մը մեր աշխարհի վրդովմանց միջոց եկած հաստատուած են այստեղ:

Բոգնիք գիւղի հնութեան վկայ է նաև ՉԺԶ (=1267) թուականաւ խաչքար մը: Գիւղիս մէջ վարժարան ունեցած են հայազգի Անարատ Յղութեան Բոյրերը: Գիւղս հայրենիքն է մեր տաղանդաւոր բանաստեղծին. Գանիէլ Վարուժանի:

ԲՈՒԻ ԵՂՅԷ (Եկեղեցի) 8. Հացի գիւղ:

ԲՆԱԿԱՊԱՆ, հայանուն գղ. Կարնոյ արեւմտեան ծայրը, ունի 40 տուն բնակիչ, որոնք թուրքերէն կը խօսին և հայր բարքերը կը պահեն:

ԲՈՒՆԱԿՈԹ, հին և մեծ գղ. Սիւնեաց Ծղուկ գա. ի, եկղ. Ս. Գրիգոր, ուր է զպրոցը. ՌՃԾԳ թուականով հին եկղ. մը կայ, զոր գեղացիք Կիոյ կ'անուանեն. մօտը կայ երկու տապանաքարեր ԶԼԵ (=1326) թուականով: Բն. 2100 հայ, Հոս ծնած է Ատրպատականի առաջնորդ Ներսէս Արքեպ. Մելիք-Թանգեան:

ԲՆԱՇԷՆ, գա. Վասպուրականի հին Սոյթ գա. ի արեւմտակողմը. սակաւաթիւ գիւղ ունի:

ԲՈՒՆԱՇԷՆ, գղ. համանուն գա. ի, 10 տ. հայ:

ԲՈՒՆԱՎԷԺ, շահաստան, Սիւնեաց մէջ ըլլալ կը կարծուի:

ԲՈՒՆԻԿ, իշխան, ըստ աւանդութեան՝ թագէտս Առաքեալ ասոր որդին կը բռնէ և կը մկրտէ ընտանիքը և կը շինեն Աղբրիկ եկեղեցին, զոր


յետոյ Գր. Լուսաւորիչ այդ հինին կից դմբեթաւոր վայելչաձև եկեղեցի մը կը շինէ:

ԲՍԱՆՔ, կը յիշուի Սասնոյ մէջ:

ԲՍԱԶՈՐ, Գողթն գա. ի ձորահովիտներէն ընդարձակագոյնը և ամենաերկայնը, որը ծանօթ է Գիլան կամ Կիլան անուամբ:

ԲՐԱԲԵՐԳ, գղ. Սերաստիոյ, 180 տուն հայ բն. ունէր եկղ. մը իր զպրոցով՝ ուր 75 մանչ կը յաճախէին, թուրքեր ևս կը բնակին: Տե՛ս Բուբերդ:

ԲՐԱՅՍ, Լօրս ձէյսու, (Lord James Bryce viscount of Dechemont) կամ Պրայս: Անգլիացի յայտնի քաղաքագէտ ու հայատէր Ծնած է Պէլֆաստ 1838ին և մեռած Սիտմութ 1922ին Փաստաբանութիւն ըրած Լոնտոնի մէջ և շուտով ճանչցուած իրր լաւ իրաւագէտ: Իր «Պատմութիւն Հռոմէական Սըրբազան կայսրութեան» գործին հրատարականութիւնով



ԼՕՐՏ ՁԷՅՄՍ ԲՐԱՅՍ

1864) հռչակաւոր դարձաւ գիտական աշխարհին մէջ: 1970ին Օքսֆորտէն կանչուեցաւ «Քաղաքային Իրաւունք» ռեսուզպետութիւնն ստանձնելու համար Անգամակցելով ազատական կուսակցութեան երեսփոխան ընտրուեցաւ և 1889ին ստանձնեց արտաքին գործոց փոխ նախարարութիւնը: 1905ին կրկին կառավարութեան անդամակցեցաւ իրր Իրլանտայի փոխ նախարար: Յատուկ առաքելութեամբ գացած է Ուաշինկթըն և հոն մնացած վեց տարի շարունակ: Վերադառնալով Անգլիա, ընդհանուր պատերազմին մեծ գործունէութիւն ունեցաւ իրր ղեկավար Անգլիական Փրոփականտի ճիւղին: Ընդհանուր պատերազմի ընթացքին Հայոց տարագրութեան ու ջարդին վերաբերեալ փաստաթուղթերը հաւաքեց զորս առանձին տեղեկագրով մը ներկայացուց Անգլիոյ արտաքին գործոց նախարարին (Le Traitement des Arméniens dans l'Empire Ottoman 1915—1916):

ԲՐԱՏԻ, գիւղակ Զմչկաձագի առաջնորդական թեմի:

ԲՐԱԶՈՒՐ, կամ Աղբերաշուր, գղ. Գարդման գա. ի, բն. 33 տ հայ, եկղ. Ս. Գարբիէր:



ԲՐԱՍՏԻՔ, հայարնակ գիւղ Չմշկածագի, եկղ. Ս. Աստուածածին:

ԲՐԳԱՇԷՆ, գղ. Տուրուքերանի ներքին Պուլա- նըխ գաւառակի, 38 տուն հայ և 4 տուն քուրա բնակիչ ունէր:

ԲՐԳԱՇՈՆՁԻՆ կամ Բրդաունչին եղցին. հին եկղ. Վարանդա գ. ի մէջ, Քէօնդալանի աջ կողմը կը կարծուի թէ ժամանակին վանք եղած է:

ԲՐԳԱՇՈՆՁԻՆ կամ Բրդաունչ դալա, Վարանդա գ. ի մէջ, ներքին Թաղաւարդի արեւելակողմը, 3300 ոտնաչափ բարձրութեամբ առանձնացած սար մը, որուն երեք կողմը ահագին ժայռեր կան, իսկ հիւսիսակողմը՝ դառիվայր Այդ կողմը ձգուած կրկնապարիսպը կը կոչուի Բրդաունչ դալա:

ԲՐԳԱՁՈՐ, գիւղակ Գուգարաց Պոռչալու գ. ի մէջ, բն. 150 հայ քաջ մարդիկ: Գիւղս հիմնած է Սանահնեցի Գիթ-Վերսան անուն կարծ մը:

ԲՐԳԻ ԱՅՐ, վանք մը, որուն անապատական եղած է է. դարուն՝ Յովսէփ անապատական, Գեղամացին: (Աղաւունցի՝ «Միաբան» 389):

ԲՐԳՈՆ կամ Բրգոն s. Բրքոն:

ԲՐԵՆԻ, հայարնակ գղ. Չմշկածագի, ունի 30 տուն բն. եկղ. Ս. Գէորդ:

ԲՐԵՆՆԷՔ Հենրիկ, հայագէտ, տե՛ս ՅԱՆԵԼՈՒԱՄՐ:

ԲՐԻՏԻՍ, գղ. Աղուանից մէջ, կը յիշուի Առա- քել Գաւրիճեցիէն:

ԲՐՄԱՍՏԱՆ, Հնդկաստանի տիրապետութեան մէկ մասը Բէնդալի (Պենկալի) արեւելակողմը. ուր Հայք ժ.Չ գարու սկիզբները գաղթած են և հաստատուած Սիրիամ, Պիզու, Աւա եւ Մանդիէ կոչուած տեղերը, որոնք յաջորդաբար Բրմաստա- նի հին մայրաքաղաքներն եղած են: Ամբողջ Բրմաստանի մէջ ներկայիս 60 տուն հայ կը բնակին, որոնց 50ը Ռանգունի մէջ: («Մուրն» ի մէջ (1904 p. 9) Համբարձում քն. Վարդանեան ունի «Հայր Բրասանում»․ տե՛ս նաեւ Հ. Գարագաթի «Պարսկահայ Տարեցոյց» 1930 էջ 102—7):

ԲՐՈՍԷ, Մարի-Ֆելիսի Broset (Marie Félicité) կամ Պրոսէ. նշանաւոր արեւելագէտ, ծնած է Բարիզ 1802ին և մեռած Պետերբուրգ 1880ին: Նախնական կրթութիւնն Օռլէանի կղերանոցին մէջ ստանալէ ետք, 1818ին կը մտնէ Մոնրուսի Յիսուսեանց դպրոցը: 1821ին կը ստանայ «bachelier» ի արտոգոսը: Այդ թուականին, ան հմուտ էր արդէն յունարէն լեզուի և ծանօթ՝ երրայեցե- բէնի, արաբերէնի, չինարէնի եւայլն: 1825ին Բրոսէ կը նուիրուի հայերէնի և վրացերէնի ուս- ման: 1836ին Պեղերպուրդի գիտութեանց աքա- ղեմիային անդամակից ընտրուելով կը հրատիր-

ուի հաստատուել Ռուսիոյ մայրաքաղաքին մէջ: Բրոսէ սիրով կ'ընդունի այս հրաւերը, մանա- ւանդ որ նիւթական նեղ պայմաններու մէջ կը գտնուէր (իր ապրուստը հողալու համար, ստիպ- ուեր էր նոյն իսկ գրաշարութիւն ընել):

1838ին Բրոսէ կ'այցելէ Մոսկուայի Լազար- եանց ուսումնարանը և հինգ տարիէն անոր կա- ճառակից կ'ըլլայ: 1845ին կ'այցելէ Վենետիկի Մխիթարեաններու վանքը, ծանօթանալով Այ- վազովսկի և Ալիշան վարդապետներուն հետ: 1847ին այցելեց Վրաստանն ու Հայաստանը և իր ճանապարհորդութեան վրայ մանրամասն տե- ղեկագրութիւններ ներկայացուց:

Բրոսէ ձեռք դարկաւ նաև Հայ պատմիչներու թարգմանութեան: Գրած է ռաղմաթիւ ուսում- նասիրութիւններ Հայոց և Վրաց պատմութեան վրայ, որոնց մէջ սակայն, ինչպէս կ'ըսէ ուրիշ յայտնի հայագէտ մը՝ Տիւլորիէ, կը պակսի յա- ճախ քննադատական ոգին: Բրոսէի զլխաւոր գործերն են՝

1. Chronique Géorgienne.
2. Rapport sur un voyage archéologique dans la Géorgie et dans l'Arménie.
3. Les Ruines d'Ani, capitale de l'Arménie sous les Roi Bagratides.
4. Des sources originelles de l'histoire de Géorgie.
5. Collection d'historiens Arméniens.
6. Histoire de Géorgie.
7. Histoire diplomatique du Patriarche Arménienne Avédik de Constantinople եւայլն:

Բրոսէ եղած է նաև խորհրդական ուսւ պե- տութեան (Գ. Գրյոնեան):

ԲՐՈՒԳՄԱՆ Կ. (Brugmann Karl). գերմանացի նշանաւոր բանասէր: Ծնած է Վիդպառէն 1849- ին և մեռած Լայպցիկ 1919ին նաև Ֆրիպուրկի, ապա Լայպցիկի համալսարաններուն ուսուցչա- պետ սանսկրիտ լեզուի և բաղդատական քերա- կանութեան, գրած է ռաղմաթիւ լեզուաբանական ուսումնասիրութիւններ, ինչպէս նաև 5 հատոր- նոց «Համեմատական Քերականութիւն հնդեւրո- պական լեզուաց» գործը, որուն մէջ նկատի ա- ռած է նաև հին հայերէնը, լոյս տեսած Սթրազ- պուրկի մէջ 1886—93:

ԲՐՈՒՆԳՈՒԼ կամ Փրուցալ Գաբրիել սպայ, որ 1916ի ընդհանուր պատերազմին Մըրըշէշտի ճա- կատին առաջին զոհերէն կ'ըլլայ:

ԲՐՈՒՆԳՈՒԼ Վարդեես Ասպէս, ծնած 1859ին Փետր. 12, Պուքովինայի Սուչավա քաղաքը, կը պատկանի վաղեմի ազնուական Բրունզուլեան







րէն երգեր: Երկար ժամանակ երաժշտութեան ուսուցիչ եղած է: («Հ. Կոչնակ» 1936 եջ 1002):

ԲՐՈՒՏՔ, գղ. Բաղէշի Մտական գ. ի մէջ:

ԲՐՏԱՆՅ, Բrswang կամ Փրքրանոս, այլազգարնակ գղ. Կարնոյ:

ԲՐՏԵՆԻՔ, կը յիշուի Գեղարքունիքի Կթանոցի արձանագրութեանց մէջ:

ԲՐՏԻ ԱՅՐԻՔ, հին գղ. և վանք Գեղարքունի գ. ի մէջ կը համապատասխանէ այլազգարնակ Դայքէնտ գիւղը: Մէջը կան հին շինութեանց աւերակներ. ունի կրկին սազաչէն կոփածոյ հասարակ քարերով եկեղեցիներ հանդերձ արձանագրութեամբք: Մովսէս Կաղանկատուացին (Բ. ծ.) կը յիշէ վանքս Պրտի կոչելով:

ԲՐՈՈՒԱՆ, գղ. Տրամայի (Յունաստան) ուր 1922էն ետք 65 հայ ընտանիք գաղթած է:

ԲՕԹՅՐԻ Յովնանեկ Անոն, եպ. ծնաւ 1754-ին ի Պաշֆայով (Եղիսարեթուպոլիս) Թրանսիլվանիոյ մէջ: Հոն հաստատուած հայկական ընտանիքէ մը ծագումն ունի: Իր ծննդավայրը բարձրագոյն ուսմունքները աւարտելէն վերջը, 1780ին Լվով կ'երթայ, Թէադինեան Հարցվարչութեան տակ գտնուող քահանայապետական դպրոցը մտնելու համար, ուր որ մեծ եռանդով և յաջողութեամբ ինքզինքը գիտութեանց կը նուիրէ: 1785ին նրեք աստուածաբանական մըրցածառեր կը գրէ և հրատարակու զանոնք պաշտպանելով Աստուածաբանութեան վարդապետի տիտղոսին կ'արժանանայ: Քահանայական ձեռնագրութիւնը այն ատեն Հայոց արքեպիսկոպոսն եղող Յակովբ Թումանովիչէն կ'ընդունի: 1786ին Աստուածաբանութեան ուսուցիչ կը կարգուի ու Թրանսիլվանիայէն և Հունգարիայէն դպրոց եկող կղերիկոսներուն լատին լեզուով հովուական աստուածաբանութեան դասեր կ'աւանդէ: 1787ին քրօֆէսոր (ուսուցչապետ) կ'անուանուի և 1793ին Լվովի համալսարանի վերատեսուչ: Երբ տարիներ վերջը արտասահմանէն նոր աշակերտներ գալ կը դադրին. հովուական աստուածաբանութեան դասախօսութիւնն ալ կը վերցուի և իրեն արդիւնաւորութեան ռոճիկ կը կապուի: Այս առթիւ Բօթոցքի հայկական ծէսը ձգելով լատին ծիսի կ'անցնի և ժիտաչուվ քաղաքին ժողովրդապետութիւնը կ'ընդունի: Աւստրիական կառավարութեան կողմանէ

չատ յարգուած և սիրուած ըլլալով մեծ պաշտօններու կը հասնի և Ս. Լէորովաի շքանշանին կ'արժանանայ: 1825ին կայսրը իրեն անակնկալ մը ընելով զինքը եպիսկոպոս կ'անուանէ և Լեւոն ժ. Ս. պապէն հաստատուելով այդ ընտրութիւնը Բչէմիչլ քաղաքին եպիսկոպոս կը կարգուի վախճանած է մայիս 16 1832ին: Շատ մը լեզուներու տեղեակ էր, ինչպէս հունգարերէն, հայերէն, լատիներէն, ֆրանսերէն, գերմաներէն և լեհերէն: Լատին լեզուով մի քանի գրուած երկեր ձգած է:

1. Positiones ex prima Theologiae dogmaticae parte, տպ. Լվով 1785ին,

2. Positiones ex universa Theologiae dogmatica et polemica տպ. Լվով 1786ին:

3. Claudii Abbatis Fleuri dissertatio II in Historiam ecclesiasticam sex primorum saeculorum. և ուրիշ շատ մը երկեր:

ԲՔԼԻՅ, գղ. Տարօն գ. ի Մշոյ դաշտի մէջ. ունի 50 տուն հայ բնակիչ:

ԲՕԶԱՒԱՆԻ, գղ. Աղուանից Կոկիսոն գ. ի, բն. 50 տ. հայ, որոնց նախնիք գաղթած են Հաստուրդ, Դանավարդ և Հղորդի գիւղերէն: Եկղ. Ս. Աստուածածին:

ԲՕԹԱՄՕ Յունաստանի (Գորֆուէլլգիլի<sup>ո</sup> մէջ) ուր հայկական հին մատուռ մը կայ (Տե՛ս Թեոդիկ՝ «Ամ. Տար.» 1923 եջ 259):

ԲՕԼ Հանրի Պորսո, Ֆրանսացի, գրած է «Տրապիդոնցի Անքառաւ» վէպը, զոր Հ. Յովհ. վրդ. Թորոսեան թարգմանած և լոյս ընծայած է Ս. Ղազարու տպարանէն:

ԲՕԼՈՒՍԱՐ կրկնագագաթ լեռ 7500՝ բարձր, Երեջակ գ. ի մէջ, այժմ՝ Երլան քաղ կը կոչուի:

ԲՕՄԲ Իշխան, որուն քարաչէն աւերակ տունը կը գտնուի Լալուար լեռան ստորոտը:

ԲՕՍՍԱՔԻՆՏ, գղ. Մշոյ դաշտի մէջ, ունէր 50 տ. հայ և քանի մը տուն քուրտ:

ԲՕՐԱԶԱՆ, գղ. Թաթարաց՝ Թերիք գետին եղերքը: Հին ատեն հարուստ հայ վաճառականներ կը բնակէին, որոնք այլազգեաց չհանդուրժելով Աստրախան և Ղզլար դաղթած են:

ԲՕՐՈՒՄԻ, աւերակ գիւղաքաղաք Ուտի Առանձնակ գ. ի, Կուր գետի աջակողմը: Մէջը կայ Ս. Յովհաննէս ու խտատեղի մը:

ԲՖԷՅՖԷԻՐ Աւկուս ս. Պեթյեք:



Գ.Ա.Բ.

Գ.Ա.Բ.

Գ.Ա.Բ.Պ., այսպէս հոշուած է Ղափանը՝ Վառնայի տապանագրի մը մէջ: (Բազմ. 1929 էջ 118):

Գ.Ա.Բ.Ղ., նահապետ Հայոց՝ Վաղարշակայ օրով, որուն պարգևեց Վաղարշակ այն գաւառը՝ որ Գարեղէնք կոչուեցաւ:

Գ.Ա.Բ.Ղ. Գաբեղեան, ընկեր Վահանեաց 483ին:

Գ.Ա.Բ.Մ.Ա.Ճ.Ե.Ս. Գառնիկ, ուսուցիչ, ինք բացած է նախակրթարան մը Սկիւտարի մէջ, զոր մինչև մահը 1924 վարած է իր տիկնոջ հետ:

Գ.Ա.Բ.Մ.Ա.Ճ.Ե.Ս. Գեորգ, նկարիչ և արձանագործ որ ասկէ 6 տարի առաջ յուսահատական նուպայի մը մէջ՝ անձնասպան եղած է Պոլիս, տանը ջրհորը նետելով ինքզինք: Իր եղբերական մահուան առթիւ Տիկ. Չ. Եսայեան գրած է «Մասիս» շաբաթաթերթի մէջ սրտայոյզ վերլուծական մը արուեստագէտին կարողութեան մասին, թուելով անոր չարքայ կեանքը Բարիկի մէջ՝ նկարչական սակարկութիւններու ատեն: Երջանաւարտ կայս. Գեղ. վարժարանէն: Յետոյ Բարիկ կատարելագործած իր արուեստը: Ճամբորդած է Պուլկարիա և Անգլիա, բայց իր մօր կարօտին չզիմանալով՝ Պոլիս վերադարձած, ուր — բռնապետական ռէժիմին — բաւական



Գ.Ա.Բ.Մ.Ա.Ճ.Ե.Ս. Գեորգ

ատեն բանտ պառկած է: Ատեն մը իր retoucheur աշխատած է Ապտուլ լահնեբու լուսանկարչատունը: Բարիկի Հայոց եկեղեցւոյն մէջ ունի յաջող եկեղ. պատկերներ: Պահ մը արձանագործութեամբ ալ պարապած է: (Թեոդիկ՝ «Ամ. Տարեց», 1912, էջ 254):

Գ.Ա.Բ.Մ.Ա.Ճ.Ե.Ս. Մինաս, 1876 Սեպտ. ին կը ձեռնարկէ հրատարակել օրուան լուրերու համար «Մասիս»-ի արտօնութեամբ, «Բուզնամէի Մասիս» անուն հայերէն փոքր օրաթերթ մը: (Այլպոյանեան՝ «Հայ կեսարիա» 2075):

Գ.Ա.Բ.Մ.Ա.Ճ.Ե.Ս. Սիմոն, դաստիարակ և հեղինակ, որդի Յովհաննէսի և Տիրուհիի (ծն. Արսէնեան) ծնած է Գում-գարու (Կ. Պոլիս) 1863ին: Նախնական կրթութիւնը կը ստանայ Սկիւտարի Ս. Խաչ վարժարանը, յետոյ կ'անցնի Նոր-Թաղի

ձեմարան վարժարանը, ուր իրեն հայերէնի ուսուցիչ կ'ուսենայ Սիմոն Ֆէլէկեանը և յետոյ ֆէլիվանեան ինքն ք.է.ն ետք Միհրան Դուրեանը (այս եղիչէ պատրիարք Դուրեան), կրօնական ուսուցիչն էր այդ ատեն Իզմիրլեան Մատթէոս (այսպէս կ'ըս.): Սիմոն որ հմտացած էր հայերէն լեզուի մէջ, «ուսանողութեան վերջին տարիներուն՝ աշակերտ ըլլալով հանդերձ՝ օգնական ուսուցիչ կը կարգուի՝ իրրև յաջորդ եղիազար Տէօվլէթեանի, և երբ Դուրեան վարժապետ Պարտիզակ կը մեկնի իրրև տեսուչ զըրոցին և քարոզիչ, այնուհետև անոր կը յաջորդէ Սիմոն՝ նոյնիսկ Դուրեանի յանձնարարութեամբ, դեռ շատ մատաղ՝ հազիւ 16 տարեկան հասակին մէջ, որ ատեն կը սկսի նաև ոտանաւոր գրել և հրատարակել Գէորգ Այվազեանի Մամուլ գաւեշտաթերթին մէջ:

«1880-85 տարիներուն Սիմոն ձեմարանի հայերէնի գլխաւոր ուսուցիչ կ'ըլլայ, Պողոս Թորգոմեանի հոգարարութեան ներքէ: Այս տարիներուն, կարելի է ըսել, թէ ձեմարանը իր ոսկեզարու օրերը կ'ապրէր, որուն յառաջդիմութեան մեծապէս կը նպաստեն տնօրէն Գարեղին Գավաֆեան և ինքը Ս. Գարամաճեան:

«Միջոց մըն ալ Պաղլար-պաշի, Հայոց գերեզմանատան ղէմ մասնաւոր վարժարան մը կը բանայ Սիմոն՝ Նոր Գպրոց անունով, բայց հաղիւ տարուան մը կարճ կեանք կ'ուսենայ: Իսկ 1887-ին, երբ ձեմարանը և Ս. Կարապետ եկեղեցին կ'այրին՝ Սիմոն Գարեղին Գավաֆեանի հետ կը յաջողին գոյքերը փրկել:

«Նոյն պաշտօնավարութեան տարիներուն՝ Սիմոն կը հրատարակէ Լիսաբոնի խորագրով, բարոյական հանդէս մը (1883—4): Դարձեալ, Հասուածք ի Ս. Գրոց տետրակ մը և էմէ Մարդէնի Մարց դասխարակութեան Ա. հատորի թարգմանութիւնը:

ձեմարանէն վերջ՝ ուսուցչի պաշտօն կը ստաննէ Սկիւտար, Իճատիէ՝ Ներսէսեան վարժարան, Սէլամիէ՝ Ս. Խաչ ձեմարանի այրած տարին պաշտօնի կը կոչուի Գում-գարու՝ Մայր վարժարան, այնուհետև հետզհետէ կը պաշտօնավարէ Ենի-գարու՝ Հայկանուշեան վարժարան, Գատրգիւղ՝ Տատեան և Արամեան վարժարանները, Սկիւտար՝ Մէզպուրեան ազգական վարժարան, Բերա՝ Էսայեան վարժարան, Գում-գարու՝ Դըպ-



րոցասէր Տիկնանց վարժարան, Սասգիւղ՝ ներսէսեան վարժարան, և դարձեալ Սկիւտար Ֆրէրներու վարժարան հայ տղոց հայերէնի ուսուցիչ, նաև գոյէժ Սէն-Պրնուա, նոյնպէս:

Ս. Գարամաճեան ուսուցչական և դաստիարակչական զբաղումներէն վերջ՝ գրական գանձանակը յի գուցեր է իր բազմաթիւ ինքնակենսագրութիւնն երբ ուզուի թարգմանութիւնն երբ, որոնց ցանկը կը զետեղենք հոս:



1. Թեոսոբ Սայնունի կամ Քրիստոսեայ նահատակը, ողբերգութիւն:

ԳԱԲԱՄԱՄԱՃԵԱՆ ՍԻՄՈՆ

2. Հաւաքածոյ ընկիր գրուածոց ազգային և օտար մտանազարաց, պատկերազարդ, աշխարհիկ լեզուաւ, արձակ և ոտանաւոր, մասն Ա. սպուաւ 5 անգամ:

3. Նոյն Բ. մասն. բարձրագոյն ընթացք, տպ. 4 անգամ:

4. Նոր բառգիրք հայ լեզուի, բառք 30.000:

5. Նոյն, աւելի ընդարձակ, պատկերազարդ, արձանացած իզմիրեանց մրցանակին 1910ին:

6. Առձեռն նամակակնի, տպ. 3 անգամ:

7. Փնջիկ, աշխարհարար հաւաքածոյ կամ նասպատրաստական տարի հայերէն արտասանութեանց, պատկերազարդ: Հետեւողութեամբ Մօնոյի:

8. Նոր փեականութիւն հայերէն գրաբար լեզուի, 1907ին:

9. Նոր ծաղկաբաղ, հաւաքածոյ աշխարհիկ լեզուաւ, պատկերազարդ դասագիրք ընթերցանութեան, կազմական կանոնին համաձայն պատրաստուած:

10. Բարեկիրք աղջիկ, պատկերազարդ ընթերցարան աղջկանց վարժարաններու համար, թրգմ. ֆրանսերէնէ, 1900ին:

11. Փոքրիկ ընթերցարան, հետեւողութեամբ Նէէյի Բ. ընթերցարանին, Ա. տարի:

12. Գամբ, տեղադրական (համառօտ):

13. Գրպանի Տարեցոյց, պատկերազարդ 1920 — մինչև այս տարի (1938):

Բացի այս հրատարակութիւններէն՝ Ա. Գարամաճեան ունի անտիպ երկասիրութիւններ,

զանազան օրագիրներու և պարբերաթերթերու մէջ հմտալից յօդուածներ, բանաստեղծութիւններ:

Յոգնած երկարամեայ ուսուցչական և դաստիարակչական պաշտօններուն աշխատութիւններէն 1914ին կը զազրի ուսուցչութիւն ընելէ և 1916ին գրատուն կը բանայ Կ. Պոլիս, Չամազճըլար, ու կը շարունակէ զայն մինչև 1929, որ ատեն՝ ամենամեծ դժբախտութիւնը կ'ունենայ ընդունելու կաթուածի հարուած մը իր յոգնած մարմնոյն վրայ, որ կը ցնցուի և ձեռնթափ կ'ըլլայ գործերէն. միայն ձեռքէն չի թողուր երբեք իր սիրուն, փոքրածաւալ Գրպանի Տարեցոյցը:

1932ին Ս. Գարամաճեան Ֆրանսա կը մեկնի, իր մէկ հատիկ զաւկին քով, ուր կը շարունակէ լ'յս ընծայել Գրպանի Տարեցոյցը: (Քաղուած Հ. Եփրեմ ծ. վ. Ապրոյեանի գրուածէն Գրպ. Տար. 1934 էջ 128—139):


Ս. Գարամաճեանի հասցէն է՝ 44 Rue de Commerce Colombes (Seine) France.

ԳԱԲԱՄԱՄԱՃԵԱՆ տե՛ս նաև ԳԱՓԱՄԱՄԱՃԵԱՆ:

ԳԱԲԱՄԱՄԱՃԻ Տիրան, բժիշկ, ծնած Սասգիւղ (Կ. Պոլիս) 1855ին, նախնական կրթութիւնը ստացած է Սկիւտարի Ինասիլի թաղային վարժարանը, յետոյ Պոլսոյ բժշկական վարժարանը մտնելով՝ յաջողութեամբ աւարտած է անոր չըրջանը:

Առաջին անգամ երիտասարդ բժիշկը պաշտօնի կոչուեցաւ Պէլլեպպի հիւանդանոցը և զբաղեցաւ միեւնոյն ատեն Սկիւտարի և Գուզկունճուքի թաղային բժշկութեամբ:

Ժամանակ մը վերջը այդ շրջանակը իր յառաջդիմութեան նեղ գտնելով՝ Բարիդ մեկնեցաւ, ուր բրոֆ. Լազէքի քով մասնաւորաբար ուսումնասիրեց ներքին և կանանց հիւանդութիւնները: Վերադարձին հաստատուեցաւ Բերա գործելով միեւնոյն ժամանակ իր ծննդավայրին՝ Սասգիւղի մէջ:



Այսպէսով իր ասպարէզին մէջ հետզհետէ առաջացաւ Բերայի Աղքատախնամը մեծապէս օգտուած է անկէ, թէ՛ իր բժիշկ և թէ՛ հիւանդապահութեան դասընթացքի որպէս ուսուցիչ: Թէ՛ աշխար-

Տոքթ. Ս. ԳԱԲԱՄԱՄԱՃԻ



հարար և թէ զբարար լեզուին հմտացած է Տոքթ. Գարամաճի ու գրած է ոտանաւորներ, զամբանականներ որոնք հրատարակուած են պարբերաթերթերու մէջ:

«Գիտութեան այս դաւակը, (կը գրէ Տ.քթ. Ե. Շահպաղ), որ նմաններուն ցաւերը կէս դար շարունակ ամօքել աշխատեցաւ, ինքը զրկանքի և չքաւորութեան մէջ հիւանդանոցի մը անկիւնը փակեց իր աչքերը երկու տարի առաջ (26 Յունիս 1926):» («Հիւ. Տարեցոյց» 1929, էջ 145):

ԳԱԲԵՂԱՆ Խոսում s. Խոսում Գաբելեան:

ԳԱԲԵՂԱՆԻ կամ Գաբելեան Այրարատայ հին գաւառներէն մին որ կը համապատասխանէ Կաղզուան և Կկէչուան վիճակաց, սահմանակից Արեղէնից: Իր անունը առաւ Գարաղ նահապետէն, որ Վարդաշակայ օրով սերմանց և համբարաց վերապետուէն էր. յայտէս և տոհմը կոչուեցաւ Գաբելեան:

Մեր աշխարհի մի քանի ուրիշ գաւառներու նման Գաբելեանից ճիշդ սահմանքն որոշելն դժուար է: Ըստ Հ. Ալիշանի գաւառիս սահմանքն են արեւելքէն՝ Ճակափ և Արշարունիք, հիւսիսէն՝ Վանանդ, Արեւմուտքէն՝ Արեղենք և Հաւնունիք (Բասեն), և հարաւէն՝ Բագրեւանդո իսկ վայրացս ականատեսն Հայկունի հետեւեալ աստղերը կը գրէ գաւառիս վրայ. «Ըստ իս հինն Գաբելեանք այս երկու (Խալեաղի և Սիցեկ) ընդարձակ լեռնահովիտներէն մին լինելու է. որոց մինն, որպէս գիտենք, բուն Այաշկերտի դաշտի յարեւմուտս բարձր զիրք մի բունած է խալեաղ անունով, երկրորդն՝ յարեւելս Սինեկ անունով հանդէպ իրարու: — Առաջնոյն մէջ՝ մօտ 20 քրտական գիւղեր կան. Գալբալու և Գաբս գիւղերն ևս այս տեղ են, որք ինձ կարծել կտան թէ Գաբելեան անուան աղաւաղունն եղած լինին: Երկրորդի մէջ այսօր 160 ասն մօտ եղաի և թուրք ու քուրտ ժողովուրդ լը բնակին: Երկուքին մէջ ևս Մարգամիր (Թագաւորական մարգեր) անունով լեռնադաշտեր կան. առաջնոյն ի հարաւ արեւմուտս և երկրորդին ի հիւսիս արեւմուտս: Պատմագիրներու վկայութեան նայելով Վարդիհօր վանքը Գաբելեանց սահմանի վերայ լինելու է. և արդէն երկուքին միջավայր կը գտնուի այս վանքը. իսկ չենք գիտեր թէ ո՞ր կողմն լինելու է Գաբելեանք: — Եթէ Գարաղ նշանակուած է խոտի կոյտերու վերայ հսկող, երկու յիշեալ վայրերն ևս մին քան զմիւսն խոտաւէտ են. սակայն ըստ իմ կարծեաց Գարաղ նշանակուած լինելու է ձեան կոյտերու առջեւ արգելուած կարաւանի վերայ հսկող և կարգադ-

րող, որ ամենակարեւորն է, այսօր ևս քանի քանի կարաւանք և անձինք բազմեցնէ լը լինին»:

Ինչպէս որ Արեղենից երկիրն կանխաւ Բասենի մասն էր, յայտնի է թէ այս գաւառս ալ ուրիշ զօրագոյն տոհմի մը վիճակած էր, և վերջը Վարդաշակ գատելով, Գաբաղ անունով մէկու մը ժառանգութիւն տուաւ և առանձին նախարարութիւն և գաւառ ձեւացուց: Պատմական զանազան դէպքերու մէջ կը յիշուին Գաբելեանց տոհմի պայազատներն մինչև թ. դարու մէջ: — Գաբելեանից անուամբ եպիսկոպոս չի յիշուիր պատմութեան մէջ, բայց յայտնի է թէ կար գէթ քորեպիսկոպոս մը: Յետին դարուց մէջ միայն Վարդիհօր վանքը եղած եպիսկոպոսը կը յիշուի Գրիգոր 1470ին. ժէ գարու կէսէն առաջ, Ոսկանայ վիճակագրութեան համեմատ, վերցուած է տեղույս եպիսկոպոսական աթոռը. բայց գրեթէ նոյն դարուն կէսէն վերջ, կը յիշէ Շարաէն գաղղիացի ճանապարհորդը, տեղույս եպիսկոպոսը Կաղզուանի մօտ Գարձեալ 1802ին ևս Բագրեւանդայ Ս. Յովհաննու վանաց ժողովին մէջ գտնուեցաւ Վարդիհօր վանքի Մանուէլ եպիսկոպոսը (Եվրիկեան «Բնաւխարհիկ» քաղուած Հ. Ալիշանի «Այրարատ» էն):

ԳԱԲԸ-ԱՂՁԸ. հայարնակ գղ. մըն էր Եւզոկիոյ նիքսար քղ.ի մօտ:

ԳԱԲԻԱՆՈՍ, Հուովմայեցի զօրավար, սա Ասորուց երկրին վերակացու դրուած էր երբ այդ երկրին վրայ յարձակեցաւ մեր Տիգրան Բ.ը (89—55 ն. ք. Ք.), ուսկից զարհուրած Գարիանոս Եգիպտոս փախաւ:

ԳԱԲԻԹԵԱՆ, հին գղ. Վասպուրականի Պարակաւոյց սահմանին մօտ. ունէր համայնուն քաղաք մը և Քապոտան (Ուրմիա) ծովակը:

ԳԱԲԻԿԵԱՆ Անուաւան Ֆրանսայի Seine & S. O. նահանգին մէջ 1937 նոյեմբերին՝ կոչկակարներու մրցումի մը միջազգային ցուցահանդէսին մէջ առաջնութիւն կը շահի ու վկայական և ոսկի շքանշան կը ստանայ: (1937 լրագրներէն):

ԳԱԲԻԿԵԱՆ Կարապետ, բանասէր, հայկարան, պատմաբան, ուսուցիչ, Ս. Գ. Հնչակեան կուսակցութեան կարկառուն անդամներէն մէկը ծնած է Սերաստիա 1867ին, ուր աշակերտած է Ս. Թարգմանչաց վարժարանին: 1855էն սկսեալ վարած է ուսուցչական զանազան պաշտօններ: 1915ին ընտանեօք Սերաստիայէն Հալէպ կը տարագրուի, ուրկէ 1920ին Երուսաղէմ կը հրաուրուի ստանձնելու համար ժառ. վարժ.ի հա-



յերէնի և պատմութեան դասերը: Տարազրու-  
թեան տարիներու կրած ֆիզիքական և հոգե-  
կան տառապանքները  
հիւժած ըլլալով  
զինք՝ կարապետ չկա-  
րենալով զէժ զնել՝ կը  
վախճանի Երուսաղէ-  
մի մէջ 1925 Փետր.  
19ին:

Իր երկասիրութիւն-  
ներն են.

1. Բառգիրք Սեբասիոյ  
գաւառական լեզուի  
(անտիպ), որ 1905ին  
պատկուած է Իզմիր-  
եանց մրցանակով:

2. Հայ Բուսաւելաբան  
(Թէոդիկի 1926 էջ 728

իշած Բոյս-Բուսակը) այս ալ անտիպ, որ 1912ին  
արժանացած է Իզմիրեանց մրցանակին ամբող-  
ջութեան:

3. Եղեռնապատում, որով Հայոց ընդհանրապէս  
յաւերժացուցած է. տպ. Պոսթին 1924ին:


4. Գարիկեան շատ մը հանդէսներու աշխա-  
տակցած է Բուսաւելաբան և լեզուաբանական  
յոդուածներով: (Թէոդիկ՝ «Ամ. Տարեց.» 1922, 1926  
727—8):

ԳԱՐԱՆԵԱՆ Տ Գալիլանեան  
ԳԱՐՈՒԳԱՅՅ, հայագիւղ Սամսոնէն 10 ժամ  
հեռի, լիբան կողքին (Հնչ. Յուսարձան 228):

ԳԱՐՈՒՃԱՆ Արամ, տէր և տնօրէն Նոր Հա-  
լասան շարաթաթերթին, տպ. Կ. Պոլիս 1918-9:  
ԳԱՐՈՒՌՎԱՍԱԿ Սիւնի Տ. Վասակ Սիւնի Գա-  
րուռ:

ԳԱՐՏԱՆԵԱՆ Արամ, բժիշկ, ծնած 1912ին  
Աքսորի սարսափներուն միջոցին սրբացած և  
1920ին Ամերիկա անցած, ուր Գոլիմպիայի հա-  
մալսարանին բժշկական ճիւղը յաջողութեամբ  
աւարտելով՝ 1926ին կը ստանայ M. D. օրտղասը:  
Ութը տարեկան էր երբ Ամերիկա գնաց և հոն  
իր բոլոր դպրոցական կեանքին մէջ թէ՛ ուսման  
հետեւեցաւ և թէ՛ ապրուստը ճարեց, նոյն ատեն  
նաև շահելով միշտ սխալբերիքի իր յառաջդիմու-  
թեան համար ներշնչող օրինակ մ'եղած է յա-  
մառ աշխատանքի և արժանի ըրած է ինքզինք  
բարեսէր անձնաւորութեանց ինքնաբուխ աջակ-  
ցութեանց: («Հ. Կոչնակ» 1936 էջ 618):

ԳԱՐԻԷԼ Կրեյտակապետ Տ. Հրեհակ:  
ԳԱՐԻԷԼ ԵՒ ՄԻՔԱՅԷԼ ՀՐԵՇՏԱԿԱՊԵՏԱՅ  
ՎԱՆՔ. Արցախի Փառխոս գոռի Գառնակիր գգրի



ԳԱՐԻԿԵԱՆ ԿԱՐԱՊԵՏ

մօտ. գեափը, սագաձև: Վանքս ունի 9 հին  
խուցեր նոր լուսամուտներով:

ԳԱՐԻԷԼ: Կթղ. վրաց, որ 491ին մեր Բարզէն  
կթղէն էջմիածնի ժողովին ներկայ ըլլալու կը  
հրաւիրուի:

ԳԱՐԻԷԼ, պատրիարք Երուսաղէմի. ծնած է  
Նիկոմիդիա 1770—5ին. աշակերտելով Գրիգոր  
վրդ. Էօսէմիչցիի՝ (յետոյ եպ.) արեղայ կը ձեռ-  
նադրուի Երուսաղէմայ մէջ, իսկ 1813ին եպ.  
կը ձեռնադրուի Իրրե նուիրակ Կեսարիա և Գա-  
ղատիա կ'երթայ: 1819ին Երուսաղէմի պատրիարք  
կ'ընտրուի, իսկ 1824ին վարչական կարգադրու-  
թիւններու համաձայն Պոլիս կ'ուղեւորի և 1828-34  
Չմիւսիոյ առաջնորդութիւնը կ'ընէ և 1834ին  
Երուսաղէմ վերադառնալով իր պաշտօնին զլուխը  
կ'անցնի: 1839ին կը տեղեկագրէ Յովհաննէս Ը,  
Կարբեցի կթղ.ին (1831—1842ին). Յունաց և Լա-  
տինաց կողմէն Ս. Համբարձման լիբան վրայ Հա-  
յոց կառուցած վանքին ապօրինի քանդումը և  
կը հայցէ հայրապետին աջակցութիւնը: Կը վախ-  
ճանի 1840ին և կը թաղուի Ս. Փրկչի վանքը,  
պատրիարքաց շարքին:

Իր տապանաքարին ընդօրինակութիւնն է հե-  
տեւեալը.

«Ի բարձրեղոյն երգէ Սիրաբ Մսեղեաց,  
Ոյս դասասան՝ բարբ՝ եւ զի վայելուչ.  
Յապաղել յի՛մ նուազելոյս ի կարեաց.  
Ընդ ո՞ր անոյս. ոյր եւ անձն իմ ընկալուչ:  
Գաբրիէլ եմ Սուրբ Արոսոյս գանակալ,  
Այլ Նիկոմիդ ծնել ես ինձ գօղ նախկին,  
Որ իմն եր բաղդ յայս աստեան վերառեալ,  
Ընդ փորձ անցոյց որպէս գոսկի բուրային:  
Քսան երկու ամաց ցոջանս ի գանիս,  
Զիշխանութեան յաջս ընկալեալ գաւազան,  
Զիմ շունչ վերջին յաւանդ քողի, ո՛վ ճնորհիս,  
Յայս սուրբ Սիօն յեցեալ յայիս ճերութեան:  
Որ փառաւորի քն սուրբ անուն յոյս կայան.  
Տեր իմ Յիսուս, ուր եւ փայլի բոյղ շիրիմ.  
Ի փոխ գուարբնոյն անդ անճառիցն ի խորան.  
Հնչեալ յականջս, հանգի՛ր ծառայ մտերիմ»:

Յամի Տեառն 1840 Ապրիլ 15 Ամաց 76,  
(Աղաւնունի՝ «Միաբանք էջ 56»):

ԳԱՐԻԷԼ, ասորի. բանասերու, 725ին Հայաս-  
տան գալով Բարչասպուհի հետ ժողովրդեան մէջ  
խոսովութիւն կը հաննեն ըսելով թէ՛ զուք Յուլիոս  
Աղիկառնացւոյ մոլորութիւնը ունիք: Երբ այդ  
ատենի կթղ.ը Յովհաննէս Գ. իմաստասէր՝ զի-  
րենք երկրէն դուրս քշելու տայ, ասոնք իրենց  
Աթանաս կթղ.ին ներկայանալով Հայերը իրրեւ  
մոլորեալ բամբասեցին և այդ առթիւ տեղի ու-



նեցաւ 726ի ժողովը (Չամչեան «Պատմ. Հայոց» Բ. 397—8):

ԳԱԲԲԻԷԼ, եպ. Էջմիածնի, 1441ին Էջմիածնի ժողովին ներկայ կը գտնուէի:

ԳԱԲԲԻԷԼ, եպ. Յովհաննու վանքին 1443ին կը յիշուի իբրև հակառակորդ Կիրակոս կթղ. ի, (Չամչ Պատմ. Գ. 489):

ԳԱԲԲԻԷԼ, եպ. Կարբեցի կազմող Ժ. Դարուն:

ԳԱԲԲԻԷԼ Արքեպ. Խուզաչանցի (Տէրսիմ), միաբան Երուսաղէմայ վանքին, պատրիարքական փոխանորդ եղած և վախճանած է 1782ին. իր տապանաքարը որ Ս. Փրկիչ վանքին մէջ կը գտնուի՝ հետեւեալ արձանագրութիւնն ունի.

«Այս է սապան հանգսեան Սուրբ արոտոյս միաբան եւ վէքի Խաչուչանցի Գաբրիէլ Արևի Եպիսկոպոսին որ հանգեաւ Ի ՌՄԱ. (= 1782) րուին. ընթերցողք Տուք գողումին»: (Աղաւնունի՝ «Միաբանք» 53):

ԳԱԲԲԻԷԼ, եպ. Գալեմեան, Մարաշցի, ծնած է ԺԸ. դարուն վերջին տարիները. կ'ուսանի Երուսաղէմայ Ժառանգաւորաց վարժարանին մէջ և 1822ին իբրև միաբան Երուսաղէմայ վանքին վարդապետ կը ձեռնադրուի: 1825ին Աղեքսանդրիա կը զրկուի միաբանութեան կողմէ և 1832ին երբ Գահիրէի նուիրակ Կիրակոս Եպիսկոպոս առաջնորդութեան պաշտօնէն կը հրժարի՝ Գաբրիէլ վրդ. հոն կ'անցնի իբրև տեսուչ Երուսաղէմի:

Երբ Երուսաղէմայ Զաքարիա պատրիարքը Դաւիթ վրդ.ը իբր առաջնորդ Գահիրէ կը զրկէ՝ ժողովուրդը գոհ իր նախկին առաջնորդէն՝ վերջինս չ'ընդունիր և խռովութիւնները ծայր կու տան և վերջապէս Եզրիպոս կ'անջատուի Երուսաղէմի իրաւասութենէն. 1839 Յունիսին Գաբրիէլ վրդ. Սիս, Մինաս կաթողիկոսին կը զրկուի Գահիրէցիներու յանձնարարականով, որոնք ի վարձ անոր բարւոք ծառայութեան Եպիսկոպոս ձեռնադրել կը խնդրեն, որ տեղի կ'ունենայ Յունիս 19ին: 1853ին՝ Խալտիններու պատրիարքական ընտրութեան առթիւ տեղւոյն Եպիսկոպոսներու անհամաձայնութեան պատճառաւ պետական որոշումով յանձն կ'առնու հաշտարարի գեր կատարել, ինչպէս կը հասկցուի Յովհաննէս պատրիարքի գրած 1853 թուական նամակէն: Գաբրիէլ եպ. հիւանդութիւնը դարմանելու համար կը ճամբորդէ Իտալիա և կը վերադառնայ 1859ին: Խոսիվ

Սայիտ փաշա 500 ոսկիի չափ նուիրած է իրեն՝ աղքատներու համար:

Գաբրիէլ եպ. ձեր և հիւանդոտ ըլլալուն, 1863-

ին Եզրիպոս կու գայ Մեսրոպ վրդ. (Մեսրոպ եպ. Սուքիասեան) Աղգային Սահմանադրութիւնը գործադրելու համար և ժողովրդեան քուէով կ'ընտրուի առաջին թագական խորհուրդը: Մեսրոպ վրդ. ի մեկնումէն ետք թագականութիւնը պատրիարքարանէն կը խնդրէ փոխանորդ մը. ու կը զրկուի Մկրտիչ Գաբրիէլ եպ. Գալեմեան եպ. (պապ կթղ. Կիրիկոյ)՝ որ 2—3 տարի պաշտօնավարելէ ետք կը թողու պաշտօնը, անոր կը յաջորդէ Գաբրիէլ եպ. ձեռնասուէնը կարապետ ք՛ն. Անամայի:



Գաբրիէլ եպ. քաշուելով Մարմինայի գերեզմանատան ղրմացի աղգային տան մէջ, առանձնացած կ'ապրի և ուր կը վախճանի 1867 Ապրիլ 21ին և կը թաղուի Գահիրէի Եկեղեցւոյն մէջ հետեւեալ արձանագրութիւնը կրող տապանաքարին ներքեւ:

Գաբրիէլ եպ. քաշուելով Մարմինայի գերեզմանատան ղրմացի աղգային տան մէջ, առանձնացած կ'ապրի և ուր կը վախճանի 1867 Ապրիլ 21ին և կը թաղուի Գահիրէի Եկեղեցւոյն մէջ հետեւեալ արձանագրութիւնը կրող տապանաքարին ներքեւ:

Գամբարան Գաբրիէլ եպ. Մարաշցիի Գեղզգոն հովիւ հօտին Քրիստոսի Արքեպիսկոպոս հայկազեան տնմի, Բարեխնամ տեսուչ հոգւոց ամենի, Բաբունի ընկիր պատուոյ արժանի, Ի Մարաշ ձեռնալ բրնիկ հայրենեոք, Էր ծաղկեցուցիչ տեղոյս սանաթ, Լի էս դու ուրեմն սապան գեղապան, Բարեոք՝ որ կրես զայս պատուական զանն:

Յամի Տեառն 1867 Ապրիլ 22 (Աղաւնունի՝ «Միաբանք» էջ 54, Զարդարեան՝ «Յիւսասկարանք» Գ. 1—22, Գալուստեան Գր. «Մարաշ» էջ 618):

ԳԱԲԲԻԷԼ, եպ. Պրուսայի առաջնորդ, միաբան Երուսաղէմի. նախ իբրև նուիրակ կ'երթայ Պրուսա և 1741—1751 մինչև մահը առաջնորդութիւն կ'ընէ հոն: (Աղաւնունի՝ «Միաբանք» էջ 53):

ԳԱԲԲԻԷԼ, եպ. Սեբաստացի, առաջնորդ Հալէպի, 1766ին Պոսէն կը ստանայ առաջնորդութեան Յեման (Սիւրմեան Եպ. ձեռք 1936, էջ 36):

ԳԱԲԲԻԷԼ, եպ. միաբան Երուսաղէմի. Կաֆայի մէջ 1778 Փետր. 14ին, Կաֆայի Ս. Համբարձ-



ման եկեղեցիին վրայ քահանայ կը ձեռնադրէ 55 տարեկան դպիր մը տէր Մարտիրոս Աւետիքով անուամբ, որ Ղրիմի գաղթականներուն հետ միասին Նախիջևան գացող քահանաներէն մին էր: (Աղաւնուցի՝ «Միաբան» էջ 517):

ԳԱՐԻԷԼ Կահանայ, անյայտ վկայ մը. (Տե՛ս «Հանդէս Ամսօրեայ» 1907 էջ 61, Իսահակ վրդ. Արապեանէ):

ԳԱՐԻԷԼ միաբան Յովհաննու վանից կը յիշուի 1464ին Մատթէոս գրչէն (ըստ Ս. Ղազարու 1, 2 Մաշտոցի յիշատակարանին). նոյն վանքին մէջ գտնուած ԺԶ. Սաղմոսը ընդօրինակուած է ԶԶ... (146...ին) թուին այս միեւնոյն Գարրիէլ արեղայէն, որ չէ Գարրիէլ եպ. Յովհաննավանից առաջնորդը (տե՛ս վերը):

ԳԱՐԻԷԼ գրիչ, միաբան երուսաղէմի վանքին, Զէյթունցի, որդի Կոստանդինի և Ոսկիի, 1526ին երուսաղէմի մէջ Յայմաւուրք մը կ'ընդօրինակէ (Աղաւնուցի՝ «Միաբան» 517). զինքը 1534ին Զէյթունի մէջ կը գտնենք, ուր մայր մաշտոց մը կ'ընդօրինակէ (Վանայեանց ցուցակ ր. 942), 1539ին Յանուղի Ս. Կարապետ նորաչէն վանքին մէջ Մաշտոց-Գանձարան մը կ'ընդօրինակէ (Զեւագիրս Նիկոսիա կը գտնուի բոս վ. Քիւրքեանի ցուցակին): Նոյն տարին և նոյն վայրը կ'ընդօրինակէ Ոսկի փոքրիկը (Վանայեանց 1593). 1541ին Յայմաւուրք մը կ'ընդօրինակէ, որ կը գտնուի Ս. Ղազարու վանքին մէջ:

ԳԱՐԻԷԼ վրդ. Աջպանեան, Առաջնորդ Հայէպի 1737—43, եղբ. Միքայէլ և Ղուկաս Աջպանեան Ստոյ կաթողիկոսաց. սա ևս 1758—70 երկու տարի կաթողիկոսութիւն կ'ընէ Ստոյ աթոռին վրայ: Տե՛ս ՅԱԻԵԼՈՒՍԵՐ ԳԱՐԻԷԼ կրդ. Ստոյ:

ԳԱՐԻԷԼԵԱՆ Գրիգոր, 1868ին չրջանաւարտ՝ Պոլսոյ Անտառարանական բարձրագոյն վարժարանէն:


ԳԱՐԻԷԼԵԱՆ Հէլէն, (օրիորդ) Գալիֆօրնիոյ հայ դաղութէն, Գարրիէլ Մ. Գարրիէլեանի դուստրը, 1931ին Րիալիի Հայ Սփուլէն շրջանաւարտ կ'ըլլայ ամենաբարձր սփալլըօփի մրցանակը ստալով, և 1936ին Իրրեւուսուցչուհի կը հրաւիրուի Րիալի դպրոցին:



Օր. Հէլէն Գարրիէլեան

ԳԱՐԻԷԼԵԱՆ Մ. Ս. րժիշկ, խմբագիր և բանասէր, ծնած է 1856 Դեկտ.ին Ակնայ մէջ, ուր ստացած է նախնական կրթութիւնը: Հրատարակած է հետեւեալ կարեւոր գործերը, Հայ բողոքականութեան անցեալն ու ներկան, Հայկական նրգանաժամն ու վերածնութիւն, Ակնայ գաւառաբարուր եւ Հայ Յեղը: Տոքթ. Գարրիէլեան կանուխէն 1896ի ջարդերէն առաջ Ամերիկա անցած է, և 1891—1898 Նիւ-Եորքի մէջ լոյս ընծայած է Հայք «հանդէս ազգային, գրական և քաղաքական» կիսամսեայ պարբերաթերթը, զայն 1896ին ամսագրի վերածելով մէջ ընդ մէջ անդլիերէն յաւելուածով:

1897ին կրկին կիսամսեայի վերածեց: Մ. Ս. Գարրիէլեան ընդհանրապէս ինքը լեցնէր Հայքը քաղաքական, առողջապահական, գրական յոդուածներով: 1898ին վեց թիւ միայն հրատարակելէ ետք դադրեցուց: Տոքթ. Մ. Ս. Գարրիէլեան մեռած է Ամերիկայի Ուէսթ Հոյօքըն քաղաքին մէջ 1919 Յունիս 3ին:



ԳԱՐԻԷԼԵԱՆ Մ. Ս.

ԳԱՐԻԷԼԵԱՆ Յակոբ, հայացած փաստարան ծնած Տիգրանակերտ 1885 Սեպտ. 26ին Քաղղէացի ծնողքէ մը: Սկզբնական կրթութիւնը ստացած է իր ծննդավայրի պետական «Րիշտի վաթման» դպրոցին մէջ: Պատանութեան շրջանին դժբախտութիւնը կ'ուշնայ կոսանցներու իր հայրը, և իր կիսատ թողած ուսումը շարունակելու եւ կատարելագործելու մտադրութեամբ և դժպի կացութեան բերումով հարկադրուած՝ Համիտեան ահաւոր հալածանքէն վերջնականապէս կը թողու իր ծննդավայրը առանց վիստելու տաժանելի ճամբորդութենէ յետոյ կը յաջողի Կալիպոլ (Հնդկաստան) մտնել, 1910ին կ'աւարտէ տեղւոյն «Այրիշ Քրիշտիէն Պրըաըրս» բարձրագոյն վարժարանի լիակատար դասընթացը: Մինչև համաշխարհային պատերազմի հռչակումը (1914) կը վարէ առեւտրական և պետական պաշտօններ Հնդկաստան և Պասրա: Ապա տարիներով ինքնաշխատութեան կը նուիրուի, ուսումնասիրելով Անգլիական և Օսմանեան կառավարութեան ընդհանուր օրէնքները: 1915ին Իրրեւուսուստարան Անգլիական կառավարութեան վկայականով ի-



բաւուէք կը ստանայ իր արուեստը կիրարկելու Պասրայի մէջ: 1919ին նոյն իրաւունքը կը շնորհուի նաեւ Իրաքեան, կառավարութեան կողմէ: Յաճախ զննատուած է Պասրա նահանգի դատարաններու ընդհ. նախագահ Գըրնըլ Նօքսի կողմէ: 1923ին, յետ քննութեան փաստարանի վկայական կը ստանայ Իրաքի կառավարութենէն՝ բովանդակ երկրին մէջ իր արուեստը կիրարկելու համար: Հմուտ է արարեղէն, անդլիերէն



ԳԱՐԻԷԼԵԱՆ ՅԱԿՈՒՐ

թուրքերէն լեզուներու. կը խօսի նաև հայերէն: Իր անհատական կեանքէն զատ ունեցած է ազգանուէր ծառայութիւններ: Քանիցս ընտրուած է Պասրայի Հայոց Ազգ. թաղական խորհրդոյ, Հոգաբարձութեան անդամ և Աղղային եր'սիւս վարժարանի վերատեսուէր: Իրրև հայասէր եւ օրէնսգէտ փաստարան կը վայելէ յարգանք եւ համարրանք:

Հասցէն՝ Armenian church Basrah (Iraq).

ԳԱՐԻԷԼԵԱՆ Յ. ԲԺԻՂԿ, աշխատակից «Հայ Բոյժ»ի:

ԳԱՐԻԷԼԵԱՆ Յ. (Հ.) ԲԺԻՂԿ ԲՐՕՖ. Երևանի մէջ:

ԳԱՐԻԷԼԵԱՆ Ռ. սաւառնորդ որ 1937ին Մոսկուայէն ղէպի Թաշքէնտ 13 ժամուայ մէջ թռիչք կը կատարէ 13 ժամէն, իրմէ առաջ ուրիշներ 24 ժամէն հասած էին:

ԳԱՐԻԷԼԵԱՆ Ս. խմբագիր տնօրէն 1908ին Կ. Պոլիս հրատարակուող ԱՌԵՏՈՒՐ վաճառակաշական շարաթաթերթին:

ԳԱԳ, լեռ Արցախի սահմանակից Գուգարաց կողորոհոր գաւառի, Գագայ դաշտի մէջ, գրեթէ 6 վերստ կոթ գիւղէն հեռու: Պատմական գանազան ժամանակներու մէջ նշանաւոր եղած է եղեր լեռս իւրպնուն Գագայ բերդով, որուն երբեմն կը տիրէին Աղուանիդ թագաւորները: Տասներորդ դարու վերջերը Տաշրաց իշխանն Գաւիթ՝ եղսորդին Գագայ Շահնշահի, ընդարձակելով իւր իշխանութեան սահմանները, կը տիրէ նաև բերդիս, որոյ նախկին տիրապետող հայ իշխանը, որ ընդունէր էր Վրաց դաւանութիւն և Դիմետր անուն, որպէս զի Վրացիներէն օգնութիւն գտնէ

Գաւիթի ղէմ, փախչելով կ'ազատի: Ժ. Գարուն Թաթարաց յարձակմանց միջոց շատ բերդեր կ'առնուին, շատ տեղեր կ'ամայանան և բնակիչք գերի կ'իներնան. իսկ Գագայ բերդը անտոկ ապաստանարան կը լինի շրջակայ հայ ժողովրդոց կենաց և գոյքի. և երբ Մուլար Նուին Թաթար զօրապետը փրկանք կը պահանջէր Վանական վարդապետի համար, անոր կեանքը մեծ գնով զնեցին և զրկեցին այս ամուր բերդը:—Ամրացաւոր քարաժայռ լեռնս տափարակ գագաթի վրայ շինուած է Ս. Սարգսի հուշակաւոր ուխտատեղին, որ ծանօթ է Գագայ Ս. Սարգիս անունով, և որոյ սկզբնաւորութիւնը մեր եկեղեցական պատմութիւնը Սուրբ Մեսրոպի կու տայ, որ Սուրբ Սարգսի մէկ ատամը խաչի մէջ անցընելով օրհներ է և հոս կանգնէր էր. ինչպէս կը յիշեն ստէպ մեր Ժ. Գարուն պատմիչք եւ վարդապետք, Վանական, Վարդան և Կիրակոս: Նոյնը կը հաստատէ նաև Ս. Սարգսի շարականի հետեւեալ տունը. «Ուաշաշարշար սուրբ զիտապետ, նշանագործ անուամբ ի խաչ և յեկեղեցի առաւել պայծառ ի գլուխս Գագայ, ի գագաթան տեղոջ օրհնեալ սրբոյն Մեսրոպայ»: Այս ուխտատեղիս սրբատաշ քարաշէն մատուռ մի է, առջևը ունի փոքրիկ գաւիթ, իւր կաթողիկէով: Կայ նաև ուրիշ ցած ու փոքրիկ մատուռ մը, կոփածոյ քարով, վերնոյն արեւելակողմը: Թէ՛ այս երկու մատուռները և թէ՛ գաւթի պատերէն թափած քարերն, իւր սեփական ձախքով նորոգեր և իրենց տեղն է դրեր կոթի գիւղացի Արզուման Տէր Սահակեանցը, 1838 թուին: Բարի և գովելի է այդ պարոնին գործն, սակայն նա այնպէս արձանագրեր է իւր յիշատակարանն գաւթի և ցած մատրան դրանց վրայ, իրր թէ ի հիմանց ինքն է կառուցեր: Ս. Սարգսի մատրան, գաւթի և փոքր մատրան մէջ կան ուրիշ դանազան կիսեղծ արձանագրութիւններ, որոնց յայտնի հնագոյն թուականները Ժ. Գարուն կը վերաբերին. սակայն այս շինութիւններն դեռ աւելի հին ժամանակ կառուցուած լինելու են, որովհետեւ Ժ. Գարուն արձանագրութիւնք ևս նորոգութեան յիշատակութիւն կ'ընեն և ոչ ի հիմանց շինութեան:

Մեծաղիր լեռնս չորս կողմը. գագաթէն քիչ մը վար փորուած են բազմաթիւ այրեր, որոնք ժամանակաւ եղեր են ապաստանարան կամ բնակարան զինուորաց: Այդ այրերէն երկուքին մէջ կան ժայռի վրայ փորագրուած հայկական արձանագրութիւններ, բայց մաս մը հնութեամբ և մաս մը, այրերուս մէջ ձմեռ ժամանակ ոչխար-



պահող թուրք մոլեռանդներու շարամտութեամբ եղծուած լինելով, կարգացուած է միայն մի քանի բառ և ՈՄԷ (==1208) թուականը: Նոյն այրերու մօտ կայ ժայռի մէջ փորուած ջրամբար մը: Լեբանս հարաւակողմը կը բարձրանան երկու ուրիշ լեռներ. միոյն հիւսիսային կողմ վրայ միակըտուր քարէ փորուած է փոքրիկ եկեղեցի մը, որուն մօտ կայ նաև ջրամբար: Լեբանս չորս կողմը տարածուած են տներու և պարիսպներու աւերակներ. իսկ արևմտեան կողմը ընդարձակ գերեզմանատուն, մեծ մասամբ հողի հետ հաւասարած և ծածկուած: (Էփրիկեան՝ «Բնագիտութիւն» էջ 419):

ԳԱԳԱՅ ԴԱՇՏ, ուր է համանուն լեռը:

ԳԱԳԱՅ Ս. ՍԱՐԳԻՍ, ուխտատեղի Գայ լեբան վրայ:

ԳԱԳԱՅ ՎԱՆՔ, հին գիւղ Սիւնեաց կողմական գա.ի մէջ:

ԳԱԳԻԿ, ազգային տեղեկագրով մը այս անուամբ քաղաք մը կը յիշէ Աղձնիսի Ուղան գա.ի մէջ:

ԳԱԳԻԿ Ա. Բագրատունի, թգ. Շահնուան, որդի Աշոտ ողորմածի. եղբայր Սմբատ Տիեզերակալի, որուն յաջորդելով գահը բարձրացաւ 990ին:

Գագիկ Ա. Բագրատունեաց արքայական տան պարծանքներէն մին եղաւ. իր նախորդներուն նման սիրեց հաշտ և խաղաղ կեանքը: Ստ. Ասողիկ որ ականատես պատմիչ մըն է՝ կը գրէ Գագիկի մասին. «էր այր սրամիտ, և վարժ ի պատերազմի, և առասաձեռն ի բաշխել» և իւրով իմաստութեամբ և քաջութեամբ՝ զբաժ հարկաց յոլովից տեղեաց ազատեաց», և զհիւրակեացն զցայգուէն պաշտօն սաղմոսերգութեամբ կատարէր»: Գագիկ տիրեց շատ մը բերդերու և գաւառներու, զորս թշնամիք յափշտակած էին: Սա իրեն կնութեան առած էր Սիւնեաց Վասակ իշխանին դուստրը Կարրամիղէն ուսկից ունեցաւ երկու որդի Յովհաննէս-Սմբատ և Աշոտ:

Գագիկ 1000 թուականին շինեց Անիի մէջ մեծ և ահեղ՝ լուսազարդ և հրաշալի եկեղեցին, յանուն Ս. Գրիգորի՝ Ծաղկացածորի բարձունքը և Ախուրեան գետին մօտ Գագիկ այդ թուականին իր Յովհաննէս որդին Արուսաշի քեռորդուոյն վրայ զրկեց, որովհետև շարախօսած էր Յունաց Վասիլ կայսեր. Յովհաննէս իր բանակով Արուսաշի քաղաքներուն վրայ յարձակեցաւ և տիրելով անոնց իր հօրը դարձաւ:

Գագիկ Ա. 30 տարի թագաւորելէն ետք մեռաւ 1020ին ու թագուեցաւ Անիի կաթողիկէ մայր

եկեղեցւոյ բակը, ուրոյն մատուոնիկով մը օժտուած դամբարանի մը մէջ:

Նիկողայոս Մար հայագէտ հնախոյզը չգտաւ հոն Գագիկի մարմինը, սակայն հետախուզութեամբ և ուրիշ տեղէ մը երևան հանուեցաւ Գագիկի մանրակերտ արձանը:

Այս արձանին գիււար կատարուեցաւ Մարի



Գագիկ Ա. Բագրատունիի արձանը եւ Իզմիրլեան կաթողիկոս

Թորամանեանի և Վրոյրի ձեռքով, իր կառուցած Ս. Գրիգոր եկեղեցիէն: Կը կարծուի որ ժողովուրդը ինքը ուզած է անմահացնել իր բարեպաշտ թագաւորին յիշատակը, և արձանագործը՝ անոր երկարած երկու ձեռքերուն վրայ գետեղած Ս.Գրիգոր եկեղեցւոյ մանրանկարը: Գագիկ Ա.ի արձանը կը գրէ Ս. Մ. Ծոցիկեան («Հայաստանի Կոչնակ» 1930 էջ 1552) ունի երեք կանգուն բարձրութիւն: Գլուխը կը կրէ փաթթոցաւոր թագ: Այս ձեւով արքայական ապարոյններ յատկապէս նուէր կը զրկուէին Բագրատունի թագաւորներուն, իրենց ժամանակակից Պաղտատի տէր և Հայոց բարեկամ խալիֆաներէն: Արձանին կրած արեւելեան ձեւով երկար վերարկուն յեանամասի քղանցքը ճեղքուած է մինչև մէջքին մօտ: Յառաջամասի քղանցքն ալ բաց է մինչև կուրծքը: Վերարկուն տակ, հաւասար երկար ծայրեր ունեցող պարեգօտ մը կայ, որուն



լայն թեղանիքները, ուսերէն սկսած, ծալք ծալք եղած են՝ վերարկուն ու պարեգօտը կարմրագոյն են, ինչպէս Գազիկի թխորակ, պատկառաղղու դէմքին այտերը: Իսկ գլխուն մազերը, խոշոր մորուքն ու պեխերը սևորակ են: Սոչոր աչքերուն նայուածքը կենդանի արտայայտութիւն մը ունի, Գազիկի բարի հոգին ցոլացնող: Կրճքին վրայ կը կրէ խաչ մը, չղթայակապով մը վիզէն ի վար կախուած»:

ԳԱԳԻԿ Բ. վերջին թգ. Բագրատունեաց, որդի Յովհաննէս Սմբատ թգ.ի եղբոր Աշոտի, թոռն Գազիկ Ա.ին Տակաւին 16 տարեկան էր երբ 1042ին Պետրոս Գետաղարձ կթղէն թագաւոր կ'օծուէ Անիի Մայր եկեղեցիին մէջ: Վեստ Սարգիս, որ մտադրած էր թագաւորական գահը բարձրանալ, երբ տեսաւ որ Գազիկը թագաւոր օծեցին՝ իր համախոհներուն հետ քաշուեցաւ Անիի ներքնակողմը և հոն ամրացաւ: Գազիկ անձամբ գնաց և համոզեց որ հեռանայ Անիէն. Սարգիս թէև հեռացաւ բայց ետ չտուաւ այն ամրութիւնները զորս յափշտակած էր. մտադիր զանոնք Յոյներու յանձնել և Բիւզանդիոնն ապաւինիլ:

Գազիկ բանակով մը Սարգիսի վրայ գնաց, բռնեց զինքը և Անի տանելով բանտեց. բայց քիչ ետք միջնորդներու աղաչանքին վրայ ազատ արձակեց զինքը: Այդ միջոցին Սկիւթացիք Այրարատայ նիգ գաւառը կը մտնեն և Բջնի բերդին մօտ կը բանակին: Գազիկ բանակով յարձակեցաւ թշնամուռոյն վրայ և կոտորեց զայն: Յաջորդ տարին, 1043ին Յունաց Մոնոմախ կայսրը զիւլանին մէջ գտնելով Յովհաննէս-Սմբատ թագաւորին այն նամակը որով իր մահէն ետք Անին Յունաց կը յանձնէր՝ պատգամ զրկեց Գազիկին որպէս իր նախորդին խոստումը յարգէ: Գազիկ սիրով ընդունելով պատգամաւորները՝ ինքզինքը կայսեր ծառայ և հպատակ կը խոստովանէր, բայց Անին իրենց յանձնել յանձն չէր առնել: Մոնոմախ զօրաւոր բանակով մը Ասիտ Միքայիլի յանձնեց որ եկաւ Անին պաշարեց: Գազիկ որ մինչև այդ ատեն Յունաց բարեկամ մնացած էր, Հայոց զօրքին գլուխն անցնելով յարձակեցաւ Ասիտի բանակին վրայ և զայն խայտառակաբար աշխարհէն դուրս հանեց:

Մոնոմախ դատնացած մեծ պատրաստութեամբ և զօրաւոր բանակով Նիկողայոս զօրավարը կրկին Անիի վրայ զրկեց: Գազիկ իր կողմը շահելով Դուինի իշխան Ապուսովարը՝ ջախջախեց Յունաց բանակը:

Մոնոմախ տեսնելով որ զինու զօրութեամբ պիտի չկարենայ Անիի տիրանալ՝ բարեկամ ձևա-

նայով Գազիկը Պոլիս հրաւիրեց. Գազիկ ակամայ կայսեր դնաց Պետրոս Գետաղարձ կթղ.ի և Վեստ Սարգսի խորհուրդով: Ի սկզբան Մոնոմախ պատուով ընդունեց զինքը և յետոյ Անին պահանջեց, և երբ Գազիկ մերժեց Մարմարայի կղզիներէն մէկուն մէջ աքսորեց: Անիի բանալիները 1045-ին Բիւզանդիոնի կայսեր յանձնուեցան: Գազիկ դեռ բաւական ատեն աքսորուած և հաղորդակցութենէ զրկուած մնաց. յետոյ կայսրը զինքը կապաղովկիոյ Բիզու զրկեց, ուր ամուսնացաւ Սեբաստիոյ Տէր Սենեքերիմ Արծրունուոյ որդուոյն Դաւիթ թգ.ի դստեր հետ:

1078ին, Գազիկ Բ. կապաղովկիոյ կողմերը գացած էր, անկից փախչելու և Պարսից Մելիք Շահ թագաւորին քով ապաստանելու և անկից օգնութիւն խնդրելու զիտուամով: Լսելով թէ կեսարիոյ մետրապոլիտը Հայերը նախատելու համար իր մէկ մեծ շանը Արմեն (հայ) անունը տուած էր՝ իր մարդոց հետ կեսարիա երթալով Մարկոս Մետրապոլիտին քով իջևանեց: Վերջինս թէև կ'ատէր զինքը, բայց ակնածելով՝ ստիպուեցաւ մեծարանքով ու պատիւներով ընդունիլ: Եւ երբ վստահ եղաւ որ Մարկոս իր շանը Արմեն անունը տուած էր՝ երկուքը միասին պարկի մը մէջ դնել տուաւ և հրամայեց ա'յնքան ծեծել շունը որ կատաղած սկսաւ իր տէրը խածոտել և սպաննել: Գազիկ աւարի առնելով մետրապոլիտին ապարանքը կեսարիայէն դուրս ելաւ: Յոյները այս եղիւթիւնը իմանալով Հայոց, մահաւանդ Գազիկի դէմ զրդուեցան և ջանացին զայն բռնել ու սպաննել:

Այդ ատենները (1079ին) Գազիկայ որդին Դաւիթ, իր Ապղարիպ աներոջ հետ զժտած ըլլալով երբ վերջինս զինքը Պապերոն բերդաքաղաքին մէջ բանտեց՝ Գազիկ Ապղարիպի մօտ երթալով իր որդին աղատեց և կրկին Գամրաց կողմերը գարձաւ, ճանապարհին՝ երբ Արծիաս դաշտին Կիզիսդիա ամրոցին մօտ գնաց հանգչելու իր երեք թիկնապահներու հետ, Մանտալեան յոյն երեք եղբայրները յիսուէն զինուած յոյներ զարանի դնելով Գազիկի ներկայացան, համբուրեցին անոր ոտքերը և իրենց ամրոցը հրաւիրեցին. եւ երբ Գազիկ հոն հասաւ, ուր յիսուէն Յոյները պահուրտած էին՝ Մանտալեանք յանկարծակի Գազիկը ձիէն վար նետեցին, այդ միջոցին անդին պահուրտած յիսուէն զինեալ Յոյները Գազիկի վրայ յարձակեցան, կապեցին զինքը ու ամրոցը տարին, մինչդեռ Գազիկի թիկնապահները խորհելով որ պիտի չկարենան իրենց թագաւորը ազատել՝ գացին լուր առւին հայ իշխաններուն,



որոնք ամբողջին անջև հասնելով պատգամ զըրկեցին Մանտալեան եղբայրներուն որպէսզի Գագիկը ազատ արձակեն: Պատասխանն եղաւ շարաշար տանջանքով սպաննուած Գագիկի մարմինը կախել ամբողջին պատին վրայ:

Հայ իշխանները յուսահատած ետ դարձան: Յոյները պարխպէն դուրս թաղեցին Գագիկի մարմինը, զոր վեց ամիս ետք Անեցի Բանիկ անուն մէկը Բագրատունեաց վերջին ինգաւոյին ոսկորները գողնալով՝ տարաւ թաղեց Պիղոս քաղաքին մօտ անոր ձեռակերտ վանքին մէջ: Գագիկ 55 տարեկան ապրեցաւ, 3 տարի թագաւորեց և 35 տարի աքսորական կեանք վարեց: (Չամչեան՝ Հայոց պատմ. Բ. հատր):

ԳԱԳԻԿ Աբախեան, թգ. Կարուց, որդի Աբասայ, կը թագաւորէ 1025—1081. 1050ին ըստ Արիստակէս Լաստիվարացոյ Պարսիկները Կարսի վրայ կը յարձակին աստուածայայտնութեան տօնին երբ յանպատրաստի էին, և կոտորեցին ու աւերեցին անխնայօրէն: Գագիկ 1053ին Տուզըրի դէմ կը պատերազմի. իսկ 1064ին երբ Ալփասլան Անին գրաւելէ ետք Կարսի մօտեցաւ՝ Գագիկին պատգամաւոր մը զրկեց, հրամայելով որ իրեն երթայ երկրպագելու և հնազանդելու:

Գագիկ սեւեր հազած, մոխիրի վրայ նստած կու լար, երբ պատգամաւորը անոր ներկայացաւ, և երբ զարմացած պատճառը հարցուց՝ Գագիկ պատասխանեց. — «Այն օրէն ի վեր երբ մեռաւ իմ սիրելի բարեկամը, Պարսից Տուզըրի արքան, Ալփասլանի եղբայրը՝ այսպէս սեւեր հազած զինքը կ'ողբամ»:

Պատգամաւորը իսկոյն ետ դառնալով պատմեց իր տեսածը Ալփասլանի, որ անձամբ գալով և տեսնելով՝ զինքը իր թագաւորութեան մէջ հաստատեց:

Յետոյ սակայն, տեսնելով որ Հայոց տշխարհին մէջ հանգիստ պիտի չունենայ՝ Յունաստան գնաց 1064ին և Ծամնդաւի մէջ ապրեցաւ, փոխարէն վանանդ գաւառը Տուկից կայսեր տալով: Գագիկ Աբասեան մեռաւ 1081ին:

ԳԱԳԻԿ Աբժրունի, թգ. Վասպուրականի, որդի Դերենիկ Գրիգորի և քեռորդի Սմբատ թգ.ի. 908ին, Յունուփ ոստիկանի օգնութեամբ կը թագաւորէ Վասպուրականի մէջ՝ հակառակ Սմբատ թգ.ի կամքին, որ երբ լսեց թէ Գագիկ իբրև իրեն հակառակորդ Յունուփէն պատուուած է՝ Յովհաննէս կթղ.ը շատ մը ընծաներով Ոստիկանին զրկեց խնդրելով որ հաշտուի Սմբատայ և նախարարաց հետ: Յունուփ ընծաները ընդունելով հանդերձ բարեկամ մնաց Գագիկին և վեր-

ջինս շատ վեհաներ հասցուց Սմբատայ: Գագիկ 926ին Յունաց հետ բարեկամանալ ուղեց և որովհետև կրօնական շատ մը հարցեր այդ անկարելի կը դարձնեն՝ նաև Պոլոս Յունաց պատրիարքին և Ռոմանոս կայսեր թուղթ զրեց (տե՛ս Չամչեան «Պատմ. Հայոց» Բ. էջ 819) և կրօնական միաբանութիւն կնքեց, սակայն ասով չկրցաւ Յունաց համակրանքը շահիլ, որովհետև Յոյները զիտէին թէ Հայերը շատ անգամ այդ միաբանութիւնը կնքած ու յետոյ զրժած էին, յաջորդ տարին (927ին) արդէն վախճանեցաւ Գագիկ Արծրունի և իրեն յաջորդեց երէց որդին Դերենիկ:

ԳԱԳԻԿ Աբժրունի, հայր Սրբոց իշխանացն Սահակայ և Համազասպայ, որ 761ին Ողկան բերդը ամրացած էր. սա բանակի մը գլուխն անցած Պարսկաստանի կողմերը գնաց իր եղբարց վրէժը լուծելու համար: Թշնամիք 762ին եկան ամրոցը պաշարեցին և երբ չկրցան զինու գօրութեամբ զայն գրաւել՝ դաւով Գագիկ Արծրունին ձերբակալեցին ու բանտ դրին ու վախճանեցաւ:

ԳԱԳԻԿ Աբժրունի Վասպուրական, աներ Աշոտ Արծրունուոյ, դաւածան 896ին Ահմատ Միջագետքի ոստիկանին հետ կը միաբանի և Սմբատ թգ.ի դէմ դարաններ կը լարէ Հայոց վրայ թագաւորելու համար: Իր նպատակին հասած երբ վան մտաւ թագաւորական զգեստներով՝ միւս Գագիկ Արծրունի Վասպուրականի թգ.էն կը սպաննուի:

ԳԱԳԻԿ Կամսարական, որդի Վահանայ, եղբ. Շուշանայ, 706ին Վարդանակերտի մէջ եկեղեցի մը կը շինէ:

ԳԱԳԻԿ Իշխան որդի Գուրգէնի Արծրունուոյ, Կէմէրէկի շրջանին մէջ գտնուող Մուտառասունի կ'իշխէր ԺԲ. դարու վերջերը, սա Գրիգոր վկայասէր կթղ.ին աթուաւնիստ ընել տուաւ Մուտառասունը: (Ալպոյանեան՝ «Հայ Կեսարիա» էջ 440—366):

ԳԱԳԻԿ, առաջնորդ Ս. Ատոմայ վանքին, որ ըստ Ստ. Ասողիկ պատմչի՝ Մարտիրոսաց վկայաբանութեանները ի մի հաւաքեց և Աստուղի կռիւց. ապրած է Թ. դարուն մէջ, գործը անյայտ կը մնայ:

ԳԱԳԻԿ կթղ. Աղուանից (շուրջ 965ին):

ԳԱԳԻԿ Ապոււմբան, փորձէ՛ տեսնել ՅԱԻԵԼՈՒԱԾԻԿ մէջ:

ԳԱԳԻԿԱԿԵՐՏ, գգ. Մարմանդ գռ.ի Օձ ձորին գլուխը, զոր շինել տուած է Գագիկ Արծրունի թգ. Վասպուրականի:

ԳԱԳԻԿՆՔ, թերևս Գագիկուան, հին գիւղ, կը



կարծուի թէ Արշարունեաց գա.ի մէջ կը գտնուէր Խծկոնից վանքի Ս. Սարգիս եկեղեցւոյ արձանագրութեան մէջ կը յիշուի այդեւէտ գիւղս՝ Երասխայ եզերքը, որ 1033ին Եաղտու անուէն մէկու մը որդիներէն Տիկորոյ վանքին նուէր տրուած է:

ԳԱԳՄԱՃԵԱՆ Իգնատիոս, պատրիարք, տես Իգնատիոս պատրիարք:

ԳԱԳ, եպ. Վանանդայ, Ղեւոնդեանց օրով Շահապիվանի ժողովին մէջ կը յիշուի (Յ. դար):

ԳԱԳԱՎԱՆԻՔ կամ կասալանք, հին գիւղ Սիւնեաց Հարանդ գա.ի:

ԳԱԳԵՇՈՅ Մաղխալ Խորխոռուցի, նախարար Վարդանանց օրով, ուրացող (450—481):

ԳԱԶԱ, հին քղ. Պաղեստինի, ուր կայ ներկայիս փոքրիկ հայ դաղութ մը Ս. Հրեշտակապետ վանք մը:

ԳԱԶԱԶԵԱՆ Արախի, օրիորդ, առաջին հանդիսացած Բարիգեան բոլոր դպրոցներուն մէջ, ամալերջի աթիւ բացուած մրցումին Բարիգի բոլոր օրիորդաց նախակրթարաններու ընթացաւարտ կարգի յառաջագոյն աշակերտներու մէջ, մասնակցութեամբ 972 հոգիներու, որ առաջնութիւն շահած է և ստացած երկու վկայական և մէկ բարձրագոյն վկայագիր: Իր քոյրը ՀԲԱՆՈՅԵ, որ Սօսիէքի Սալանքի մէջ սղագրութեան և մեքենագիտութեան ուսուցչուհի է, ամէն տարի առաջին հանդիսացած է մրցումներուն մէջ: («Յառաջ» 1934):

ԳԱԶԱԶԵԱՆ Զարեհ, հիմնադիր խմբագիր «Հայ Գրականութիւն հանդէս ամսօրհայ»-ի, տպ. Զմիւռնիա 1911—1914, իսկ 1919—1921՝ խմբագիր տնօրէն եղած է Միմոս շաքաթաթերթին:

ԳԱԶԱԶԵԱՆ ԼԵՈՆ, նկարիչ, Գօմթիւնի (Կիւմիւլիս) 1898ին, ինքնօրնութեամբ զարդացուցած է նկարչութիւնը. հաստատուած է Սեւանիկ. իր նկարները փնտռուած են:

ԳԱԶԱԶԵԱՆ (Քաղազեան) Յակոբ Փաշա, Ելեմտից նախարար Օսմանեան Պետութեան, ծն. Բերա (Պոլիս) 1831ին համեստ ընտանիքէ. առնչութիւն չունի Գաղազ Ամիրայի հետ: Յակոբ փաշայի հայրը արհեստով գաղգազ էր, իր զաւկին բարձրագոյն կրթութիւն տալու կարողութիւն չունէր: Յակոբ փաշա՝ մայրենի լեզուէն զատ լաւ գիտէր թուրքերէն և ֆրանսերէն և միանգամայն քաջ հաշուողէտ էր:

Փամանակ մը առևտրական գործով պարապելէ ետք՝ կառավարական պաշտօնի մէջ մտաւ, ուր առաջին անգամ փայեցաւ իրրե Ղայաթիոյ Դեր-կառավարիչ, յետոյ Օսմանեան Արքունի

Դրամատունը մտաւ, ուր թուրքերէն խմբագրութեանց և թարգմանութեանց Պետ անուանուեցաւ և այս աթիւ յարարութեան մէջ մըտաւ պետութեան գանձային պաշտօնաւանց և կայսերական պալատան հետ: Դրամատան գործուած մեծ գողութեան մը դատին մէջ՝ դատարանաց առջև պաշտպանելով Դրամատան շահերը, գործնական մեծ կարողութիւններ ցոյց տուաւ, որով այս մեծ հաստատութեան տնօրէններուն համար



Գաղազեան Յակոբ փաշա ըսն ու վստահութիւնը շահելով՝ շուտով յառաջացաւ:

Երբ Սուլթանը կարգի ուղեց զնի իր Արքունի անձնական գանձուն հաշուական գործողութիւնները՝ պ. Յօսիթը, Օսմանեան Դրամատան ընդհ. տնօրէնը՝ այդ գործին իրրե յարմարագոյն անձ Յակոբ էֆ.ին ներկայացուց: Գաղազեան իրեն յանձնուած գործերը կարգի դնելով՝ արժատանացաւ Սուլթանին բարձր համարման և քիչ ետք նոյն գանձուն պաշտօնեայ անուանուեցաւ: Այս կերպով անդամակցելով Օսմանեան պաշտօնարանին (Ministère), Յակոբ էֆ. Արքունի Անձնական Գանձուն մտակարարութեան մէջ կարեւոր բարեօրններ մտցուց: Ծախքերը կանոնաւորեց, և մանրակրկիտ հսկողութեան ենթարկեց: Ճարտարապէս շահարեր ըրաւ արքունի շատ մը ազարակներ և կալուածներ:

Սուլթանը գոհ մնալով իր գանձային պաշտօնէին հաւատարիմ և արդիւնաւոր ծառայութիւններէն, վէճիրութեան աւագ աստիճանը բարձրացուց զինքը վաւայի տիտղոսով, և պետութեան ելեմտից պաշտօնէութիւնն անոր յանձնելու կամք յայտնեց: Յակոբ փաշա առաջին անգամ ընդունեցաւ Մալիլիէի (Ելեմտից) պաշտօնէութիւնը, բայց իր զրած բարեփոխութեանց մասին քիչ ետք անհամաձայնութեան մէջ գտնուելով իր պաշտօնակցաց հետ՝ հրաժարեցաւ, պահելով Անձնական գանձուն վերատեսչութիւնը:

Հրաժարումը տեսական չեղաւ: Սուլթանը համոզուած թէ պետութեան ելեմտից բարեօր յարդարումը Յակոբ Փաշայի պէս ձեռնհաս, հաւատարիմ, ուղղամիտ պաշտօնէի մը ծառայութիւնը կը պահանջէ, նոյն ելեմտից պաշտօնէու-



Թիւնը ընդարձակագոյն իշխանութիւնն երո՞վ վերստին յանձնեց Յակոբ փաշային, որ այս անգամ յաջողեցաւ իրագործել իր խորհած բարեկարգութեանց մէկ մասը:

Ազգային շրջանակի մէջ, Յակոբ փաշա երբեմն բերայի թաղական խորհրդոյ անդամ եղած է, նաև Ազգային Երեսփոխանական Ժողովոյ անդամ, և հանգուցեայ մեծանուն Ներսէս Պատրիարքի օրով եղած է Բաղաքական Ժողովոյ անդամ: (Հանդէս Ամսօրեայ 1891 էջ 12—14):

Իրագոյն փաշա Երուսաղէմի մէջ Ս. Յակոբայ վանքին տուն մը կը կտակէ, որուն համար 1894ին կը հաստատուի Մեսլեցեանոր յիւսակարան: Սա, Յարութիւն պատրիարքի դիմումներուն վրայ կը դիւրացնէ Ս. Յակոբի վանքին զինուորական տրոց գանձումներէն վճարուելիք նպասաները: (Աղաւնուցի՝ «Միաբան» էջ 331):

Յակոբ փաշա 60 տարու կը վախճանի 1891 Սեպտ. 7ին, Եէնի-քէօյի մէջ՝ եղբրական մահուամբ: («Հիւ. Տարեցոյց» 1905 էջ 89 և 1906 էջ 67):

ԳԱԶԱԶԵԱՆ Սմբատ, եպ. միաբան Երուսաղէմայ Ս. Յակոբայ վանքին. ծնած Պոլիս 1873ին. ուսած Երուսաղէմայ Ժառանգաւորաց վարժարանին մէջ, ուր 1902ին արեղայ և 1924ին եպ. ձեռնադրուած: Պոլսոյ մէջ զանազան վարչական պաշտօններ վարած ու երկար առն եղած է փոխանորդ՝ Կ. Պոլսոյ Երուսաղէմատան: Վերջին տարիները Երուսաղէմ կոչուեցաւ և հոն վախճանեցաւ 1935ին:

ԳԱԶԱԶԵԱՆ Օվրիկ (Ովրիկ), ծն. Պոլիս, արեւելեան երաժշտութեան ծանօթ նշանաւոր մասնագէտ լավուրանի, եզրայր Սմբատ Կո.ին, կը վախճանի Պոլսոյ մէջ 1936ին:

ԳԱԶԱՆԱՄԱԿԻ, այս անուամբ ծակեր կամ այրեր կան Գարեղէնք գո. ի մէջ, որ ըստ Ստեփանոս Ասողիկի կը կոչուի նաև Թաթլոյ վանք:

ԳԱԶԱՆԱԼ, գղ. ծովային Կիլիկիոյ, Մերսինի արեւելակողմը. ունի բազմաթիւ հնութիւններ: Մինչև 1850 Տարսոնի նաւահանգիստն էր:

ԳԱԶԱՆՃԵԱՆ Կարապետ, ծնած 1892ին, Պոլիս նախնական կրթութիւնը ստանալով՝ Մազրիգիւղի Տատեան վարժարանին մէջ: Ազգ. Կեդրոնականը աւարտած 1909ին: Պոլսոյ իրաւաբանականէն շրջանաւարտ 1913ին: Նոյն տարին մասնակցած թուրք դատական նախարարութեան մէջ բացուած պաշտօնէից ընտրութեան քննութեան եւ յաջողելով, երեք ամիս հետեւած՝ դատական պաշտօնեաներու յատուկ գործնական դասընթացքին: Ընդհանուր պատերազմին՝ սպայ՝ թրք. բանա-

կին: Պատերազմէն վերջ, Պոլիս փաստարանութիւնով զբաղած.— 1922ին Սելանիկ հասած եւ վարած՝ Ազգ. Խնամաւարութեան անօրէնութիւնը, յետոյ ընդգրկած ուսուցչական ասպարէզը: Եղած է նաև Թրակիոյ և Մակեդոնիոյ Բաղաք. Ժողովի անդամ: Կարճ ժամանակ մը եղած է Սելանիկի Յունական Ոճրագաւ Ատեանի Երգուեալ դատաւոր:

Ատեն մը՝ «Ալիք» թերթի Տէր և Տնօրէն և խմբագիր: Իսկ այժմ՝ ուսուցիչ՝ Սելանիկի Ազգային վարժարանին: Գազանձեան Պոլիս եւ ուսուցչական պաշտօններ վարած է իրր այցելու: (Մակարեան՝ Յուլազիք էջ 228):

ԳԱԶԱՆՃԵԱՆ Հրանդ, ճարտարապետ ընկ Կ. Պոլսեցի, իր գործն է Գում գափուէի մայր վարժարանը: Բարիզ անցած է 1922էն ետք, կ'աշխատակցի «Կեանք և Արուեստ»-ի: Տե՛ս ՅԱՒԵԼՈՒԱՄԸ:

ԳԱԶԱՆՃԵԱՆ ձորն, տղթոր փիլիսոփայութեան, շրջանաւարտ Ամերիկայի ԵէՄ համալսարանէն:

ԳԱԶԱՆՃԵԱՆ Յովհաննէս եպ. Կիլիկիոյ թեմին. ծնած է Կ. Պոլիս 1826ին, սարկաւազ 1860ին, վարդապետ՝ 1864ին, եպիսկոպոս 1883ին: 1867-71 Ուրֆայի և 1871—2 Մարաշի առաջնորդութիւն ըրած է: 1873ին Սիսի Ժառանգաւորաց վարժարանին տեսուչ: Յետոյ Պոլիս կանչուելով՝ հովուական պաշտօնով թեմերը կը ղրկուի: Արրահամ եպ. Մամիկոնեանի և Նիկողայոս եպ. Դաւթեանի գործակցութեամբ Գրիգորիս Արքեպ. Ալէաթեանի Կիլիկիոյ կաթողիկոսութեան ղէմ ըմբոստանալով՝ Կիլիկիոյ Աթոռին համար կաթողիկոս կ'օծուի, սակայն անվաւեր կը մնայ: Կը վախճանի 1908 Յունիս 12ին: (Գալուսեան՝ «Մարաշ» էջ 584):


ԳԱԶԱՆՃԵԱՆ Յովհաննէս, ծնած 3 Ապրիլ 1870ին Եւդովկիա՝ ուր իր նախնական կրթութիւնը ստացած: Իր զարգացումը կը պարտի ինքնաշխատութեան: Պոլիս գալով Յ. Գասարճեանի հետ հրատարակած է իր Ա. դիրքը «Գաղտնիք եւ արուեստ Մոզուրեան» (1889): Իրաւաբանական ուսմանց հետեւելով՝ 1893ին վերադարձած ծննդավայր, ուր փաստարանութեամբ պարագած, պահ մ'ալ առեւտուրով: Իր զբաղման գոր-



ԳԱԶԱՆՃԵԱՆ ԿԱՐԱՊԵՏ



ծունէութիւնը կը սկսի 1892ին, հրատարակելով յօդուածներ «Արեւելք»ի մէջ, մինչև 1904, նաև գրեթէ րոյր Պոլսոյ օրաթերթերու և պարբերականաց, «Ա. Մամուլ»ի և «Հանդէս Ամսօրեայ»ի աշխատակցած՝ և ընդհանրապէս լեզուաբանական քննադատ. ուսումնասիրութիւններով, որոնցմով շինած է հրմուտ բանասէրի համբաւ մը։ Ատոնցմէ է՛ն երկրաշունչն է Եւզովկիոյ Հայոց գաւառաբարրաբող՝ 1899ին տպ. վիեննա և 1901ին պըսակուած Իզմիրեանց մրցանակով։ 1908-10ին յոյս ընծայած Արդի Հայերէն լեզուի Քերականութիւններու դասընթացք մը 3 հատոր, վերջինն իսկապէս աշխատուած գործ, 1909ին հրատարակած Մագնիսականութիւն և Ոգեհարցութիւնն՝ որուն շօշափած նիւթոց մասին կը թուի մասնաւոր նախասիրութիւն մ՝ ունենար։ Եւզովկիա վարած ազգային զանազան պաշտօններ, 1909ին եկած է Պոլիս և հայերէնի ուսուցիչ կարգուած կեդրոնականի։ Ընտրուած է Ազգ. երեսփոխան Ամասիա Մարզուանի վիճակէն։ (Թեոդիկ՝ «Ամ. Տարեցոյց» 1911 էջ 249)։ Պոլսոյ «Հայրենիք»ի նոր շրջանին (1901—1909) խմբագիր եղած և 1915ին նահատակուած։



ԳԱԶԱՆՃԵԱՆ ՅՈՎՀ.

ԳԱԶԱՆՃԵԱՆ ՅՈՎԱԵՒՓ, դեղագործ, ծնած Պաղտատ, ուր կը գործէ։

ԳԱԶԱՆՃԵԱՆ Վարազդաս, բր. ֆ. դիմային վիրաբուժութեան, ծնած է Երզնկա 1880ին. ուսած է Սերաստիա և 1895ին մեկնած է Ամերիկա և Հարտֆըրտի ատամնարուժական գոլէճէն ընթացաւարտ եղած 1905ին D. M. D. արտոնով։ 1906էն ի վեր կը պաշտօնավարէ նոյն հաստատութեան մէջ իբրև զաստիսոս մեքենական ատամնարուժական և գործնական ատամազննութեան (Սահակ Մեսրոպ «Հայուն Տարեցոյց»-ի էջ 227)։ Նոյնը ըլլալ կը կարծեմ Գազանճեան Վ. Գ. որ կը յիշուի իբրև բռն. դիմային վիրաբուժութեան Հարսֆրեսի նամայսարանին մէջ)։

Ամերիկեան «Պօսթըն Բէթրս» քերքը հրատարակած է այս խորագրով յօդուած մը, որուն քարգմանութիւնն է հետեւեալը.—

Ամերիկեան ամենամեծ դիմագծային վիրաբոյ-

մին մուտքը իշխանութիւններէն գրեթէ պիտի արգելուէր, երբ ան 1895ին իբր աղքատ գաղթական երիտասարդ հոս կու գար։

Ան Տոքթ. Վարազդատ Գազանճեանն է, Հարվըրտ Համալսարանի բերնի և վիրաբուժական բրոֆէսորը, որուն համբաւը, իբր երես վերսնորոգող՝ տարածուեցաւ ամբողջ աշխարհի մէջ։

Այս անձն էր որ գաղթային իշխանութիւնները շարաթներով վար զրին Նիւ Եորքի էլիզ Այլէնտին մէջ, երբ ան իր ծննդավայր Հայաստանէն եկաւ այս երկիրը։

Աղքատ ծնողքի մը զաւակ եղած է Հայաստանի մէջ, իր երիտասարդ օրերուն ստացած է շատ տարրական դաստիարակութիւն։ Այդ օրերուն իսկ երազած է մեծ մարդ ըլլալ աշխարհի գործերուն մէջ։

Իր ծնողքն ալ յուսացած են թէ բան մը պիտի արժէ։ Իրենց բարեկամներէն ոմանք նախապէս Ամերիկա եկած և յաջողութիւն գտած են բախտի այս ցամաքամասին վրայ։ Ծնողքը խորհած են որ եթէ կրնան երիտասարդ Վարազդատն ալ Ամերիկա զրկել, ան ևս պիտի յաջողի։

Երիտասարդը գործի դրուեցաւ ագարակի մը մէջ։ Կրցաւ ճամբու ծախս մը ապահովել որով հնարաւոր եղաւ այնքան երկարօրէն երազած ճամբորդութիւնը կատարել։

Ասիկա այն շրջանն էր, որ Միացեալ Նահանգներ գաղթականութեան մուտքը օրէնքները խըստացուցած էին։ Երբ զինքը բերող նաւը Նիւ Եորք հասաւ, պաշտօնէութիւնն արգելեց իր մուտքը և զրկեց էլիզ Այլէնտ, զինք Հայաստան վերագարձնելու դիտումով։

Շարաթներով էլիզ Այլէնտ մնաց, մինչ գաղթային պաշտօնէութիւնը կը վիճէր թէ պէ՞տք է թոյլ տալ կամ ոչ այս երիտասարդին մուտքը, որ կրնար հանրութեան բեռ մը ըլլալ։ Ամէն անդամ որ պատենութիւն կ'ունենար այս երիտասարդը պաշտօնեաներուն հետ խօսելու, կը խնդրէր անոնցմէ որ արտօնեն իր մուտքը։ Վստահ էր որ պիտի կրնար գործ մը ձգել և իր ապրուստը հանել, միայն թէ իրեն պատենութիւն մը արուէր։

Վերջապէս պաշտօնէութիւնը կակուղցաւ։ Իր Ամերիկա մուտքը արտօնուեցաւ և զրկուեցաւ Ուստր, ուր այն առեւն գործարանները օգնող ձեռքեր կը վարձէին։

Թէև ան վարժուած չէր գործարանային կեանքին և շատ խեղճուկ անգլիներէն մը գիտէր, յաջողեցաւ գործ մը ապահովել թելի գործի գործարանին մէջ։ Գործարանի գործին համութիւն ունէր, պարզապէս արհեստ մը սորվելու իբր աշ-



կերտ ընդունուեցաւ գործարանին մէջ: Իր առաջին շաբաթականը 90 սէնթ էր:

Այդ գումարը հազիւ դինք ապրեցընելու կը բաւէր. բայց բարակ թել քաշելու մեքենային վրայ հարկ եղած վարժութիւնը ունեցաւ: Այդ ձեռքերը որ վերջէն այնքան ճարպիկ եղան մարդկային դիմագիծ երբ վերաշինելու, երկար օրեր գործեցին թելերու լծակներու և իւրոտ մանեւոր անիւներու վրայ:



Երբ արհեստը սորվեցաւ, սկսաւ աւելի Գազանեան Վարազդաս դրամ շահիլ: Երբեմն շաբաթական քսան տոյար շինեց: Շատ կամ քիչ ան միշտ իր շահածէն մաս մը Հայաստան կը զրկէր, իր մօրը օգնելու համար:

Եօթը տարի գործարանին մէջ աշխատեցաւ, խնայողութեամբ ապրելով իր փոքր վաստակէն կրցածին չափ խնայելով: Գիշերները կ'ուսանէր: Որոշած էր կեանքի ամբողջ օրերուն գործարան չմնալ:

Այս ժամանակամիջոցին միշտ ալ վիրարոյժ մը ըլլալու փափաքն ունէր: Ամբողջ կեանքին մէջ բժշկութիւնով շահագրգռուած էր: Ատամնարուժութիւնը բժշկութեան մէկ մասն էր որ տակաւին լիովին զարգացած չէր, Վարազդաս կ'ուզէր այդ զարգացումին իր բաժինը բերել:

Իր պարապոյ ժամերուն, գրադարանին մէջ իր ընտրած ճիւղին վերաբերեալ գիրքեր կը քրքրէր: Իր ժամանակի մեծ մասը ինքնապատրաստութեան յատկացուց, որպէսզի շուտ դրամ խնայէր, ատամնարուժութեան դպրոց մտնելու համար:

Կողմնակի ուսումնասիրութեամբ չորս տարուան համալսարանի ուսանողի մը չափ ծանօթութիւն ձեռք բերաւ, ամբողջութեամբ նուիրուած ակադեմական զբաղմանց:

Եւ երբ, եօթը տարի ետք, 400 տոյար խնայած էր, որոշեց մտնել Հարվըրտի ատամնարուժական դպրոցը:

Այդ 400 տոյարի գումարը ունէ կերպով բաւ չէր իրեն ատամնարուժական դպրոցը լրացնելու համար: Որպէսզի տարեթիւակի և բնակարանային ծախքերը կարենար վճարել, պարտաւորուե-

ցաւ յաւելեալ ունէ աշխատանք կատարել: Հակառակ յաւելեալ գործի երկար ժամերուն, դպրոցի մէջ երբիցէ տեսնուած ամենափայլուն ուսանողներէն մին ըլլալու փաստը ցոյց տուաւ: Իր բրօքէտորները հիացած էին բերնի վիրարութեան իր հմտութեան: Երբ 1926ին ընթացքը աւարտեց, անմիջապէս դասախօս նշանակուեցաւ նոյն դպրոցին:

Տասը տարի շարունակեց իր դասախօսութիւնը: Այդ ժամանակին, իր հաճոյքի բոլոր ժամերը յատկացուց բերնի և դէմքի վիրարութեան հետազոտութեան: Յարաբերաբար ասոնք նոր գիտութիւններ էին և զինք կը հմայէին:

Բայց դիմագծային վիրարութեան մէջ իր հմտութիւնը զարգացնելու, ինքզինք ցուցադրելու պատեհութիւն տրուած չէր, մինչև որ համալսարանային պատերազմի ընթացքին անհրաժեշտ պէտքը զինքը ճակատ տարաւ:

1915ին, ան միացաւ Հարվըրտի առաջին բժշկան խումբին, ատամնարուժական բաժնի իրր վարիչ: Իրիտանական բանակին մէջ ծառայեց հաղարապետի աստիճանով: Այդ ատենն էր որ մեծագոյն հմտութիւնն երեւան եկաւ:

Պատերազմի մէջ պատուած երեսներով զինուորներ իրեն բերուեցան: Կանոնաւոր վիրարոյժներու պէտքը կար կենաց-մահու գործողութիւններ կատարելու համար: Սակայն, վիրարոյժներ այս զինուորներու դէմքերը վերաշինելու ունէ մեթոտ չունին:

Եթէ անոնց ունէ բան պէտք էր ընել, ատամնարոյժ Գազանեան և իր օղականները պէտք էր ընէին:

«Ես չէի, ըսած է Գազանեան, ոչ ալ իմ օղականներս, այլ՝ ժամանակի մեծ պահանջն էր որ զարգացուց արուեստը և հնարաւոր դարձուց վիրաւորուողներուն կրկին խօսիլ և իրենց նախկին պատկերին նմանիլ որոշ չափով:

«Նկատի ունեցէք պէտքը, աւելցուցէք համբերութիւն, յոյս և բազմամիջոցներ, ու դուք կ'ունենաք բազկացուցիչները, որոնք վիրարութիւն պիտի տան յաջողութիւնը ջախջախուած ծնօթներու, խանգարուած լեզուներու և վտանգուած քիթերու վերանորոգման մէջ»:

Մինչ պատերազմը կը շարունակուէր, Գազանեանի հմտութիւնն աւելի մեծցաւ և իր համբաւը տարածուեցաւ ամբողջ աշխարհի մէջ: Հիմա, այլևս կը ճանչցուէր իր «հրաշագործ վիրարոյժ»:

Անդիոյ հանգուցեալ ձօրձ թագաւորը իր կուրծքը զարդարեց Ս. Գէորգ և Միքայէլի աս-



պետի շքանշաններով, ի պատիւ այն ճարտարագիտական, որ իր ձեռքերը կատարած էին զիմազմային վիրաբուժութեան մէջ:

Բրիտանական բանակը քանի քանի անգամներ յիշատակեց զինք, այն յաջող արդիւնքներուն համար, որով ան կրցած էր պատերազմին մէջ անճանաչելի դարձած մարդոց նոր երեսներ շինել:

Պատերազմը վերջանալէն քիչ յետոյ, տեսակցութեան մը մէջ, Գազանձեան պարզեց մեծ նեղութիւնները, որոնք կը դժուարացնեն զիմազմային վիրաբուժութիւնը:

Ամէն բանէ առաջ, ան յայտարարեց, մարդուն ընդհանուր առողջութիւնը նկատի առնելու ետ թերեւ իր երեսին վերի ամբողջ մասը չկայ: Պէտք է արդիւնս արեան հոսումը, որպէսզի կարենաս ողջ պահել ենթական, և թէ չզարգանայ ներսումը: Ասկէ զատ պէտք է կերակրես մարդը:

Նկատելու էք որ այս պատահարներու մեծագոյն մասը, հիւանդը հոգ չէ թէ վնասուած է պատերազմին մէջ թէ արկած ունեցած է, ոչ կրնայ ուտել և ոչ խօսիլ, որով խողովակ մը կը դրուի իր կոկորդին մէջ կամ կը գետեղուի քթին, որպէսզի հեղուկ սնունդ արուի: Անկէ ետքն է որ վիրաբուժութիւնը կը սկսի:

Բերնի վիրաբոյժը, առաջին անգամ պէտք է տեսնէ թէ հրապէնի հարուածը կամ ինքնաշարժի արկածը և գործարանի անգուլթ մեքենան սակորէն և հիւսկէնէն ինչ թողուցած է, որպէսզի իրարու բերուին: Զարդուած ոսկորներ իրարու քով բերել և կամ մեքենականութեամբ զիրար կապելու է, արգիլելու համար տձեւութիւնը:

Յետոյ պէտք է կարել մասերը, որքան որ կարելի է, իրենց բնական ձևին մէջ:

Պատահարներու մեծամասնութիւնը կարելի է վայելուչ ձևի մը բերել չորս հինգ շաբթուան մէջ: Իժուարութիւն այն ատեն կ'ունենաս, երբ վարի կզակէն, քթէն և կամ հիւսկէնէն կորսուած մաս կայ»: Պատերազմէն յետոյ, իր Ամերիկա վերադարձին, Հարվըրտի բժշկական դպրոցը պատուեց զինք՝ նշանակելով բրոֆէսոր՝ Ատամնաբուժական դպրոցի բերնի վիրաբուժութեան, ուր մինչև հիմա կ'ուսուցանէ:

Բայց միայն ուսուցում չէ իր գործը: Դէմքի արկած ունեցողներէն հարիւրաւորներ կը բերուին իր քով և ինք ջախջախուած դէմքերը կը վերաշինէ: Իր գործին մեծ մասն է ատիկա, որ կը կատարէ Պոսթոնի Քամբլուէք Էվլնիլի իր պաշտօնասենեակին մէջ:

... Գաղթական տղան, որուն Ամերիկա մուտ-

քը կ'արդիւնէր, այսօր մեր ամենամեծ գիտնականներէն և մարդասէրներէն մին է: («Ջարթոն» Ա. արի քիւ 11):

ԳԱԶԱՆՃԵԱՆ Բօզ, ծնած Սերաստոյ Զարա զիւղաքաղաքը: Ամերիկա գացած 1914ին, նախնական կրթութիւնը առած Նիւ Եորքի 14 հանրային դպրոցին մէջ և որպէս կարգին ամէնէն յառաջադէմ աշակերտուհին՝ առաջին կարգի ոսկի մէտայլ ստացած է: 1926ին աւարտած է Նիւ Եորքի Ուաշինկթըն Լըվինկ հայ սքուլը, մասմածիւղն է հաշուապահութիւն: («Հ. Կոչնակ» 1926 էջ 1077):

ԳԱԶԱՆՃԵԱՆ Փիլիպպոս, ծնած է 1874ին Խարբնրէի Քիսրիկ գիւղը: Բնած է Լօս Անճըլէսի մէջ 1936 Հոկտ. 22ին: Միշտ քսակը բացած է ազգային պէտքերուն աջակցելու թղթակցած է հայ թերթերու: Կը թողու ձեռագիր գիրք մը երեք մասերէ բաղկացած, որ կը բովանդակէ Խարբերդի և շրջակայ հայաբնակ զիւղերու վրայ ուսումնասիրութիւններ հետաքրքրական նօթեր եւլն: («Մշակ» 1936 ք. 1126):

ԳԱԶԱՆՃԻ կամ Ղազաննի, թաթարական գղձակաւք գ. ի, ունի 106 տ. բն. հոս գտնուած է 1886ին՝ բեւեռածէ արձանագրութիւն մը («Տե՛ս Էփրիկեանի «Բնագիտարիկ էջ 420):

ԳԱԶԱՆՃԻ կամ Գայգուլի Ղազաննի, գղ. Աւշոցք գ. ի Շիշթէփէ գղ. ի մօտ. եկղ. Ս. Աստուածածին, քարաչէն, կառուցուած 1865ին, 1900ին 800 բն. ունէր, ամբողջ հայ կաթողիկէ:

ԳԱԶԱՆՃԻ կամ Ղազաննի, հայաբնակ գղ. Շիրակի, բն. 900, եկած են Կարսի Պաշ-Շօրակէլէն և Բասենի Պլասոն զիւղերէն:

ԳԱԶԱՆ Քիլիսէ, զիւղատեղի Խարակոնիսի սահմանին մէջ. բնակիչք 1630ին անհետացեր են. միայն եկեղեցուոյն հիմնատեղին կը նշմարուի:

ԳԱԶԱՆՖԱՐ կամ Ղազանֆար, գղ. Նիգ գ. ի, 1900ին մօտ 2000 բն. ունէր:

ԳԱԶԱՆՖԱՐ, գղ. Արագածոտն գ. ի քրդաբնակ:

ԳԱԶԱՐ, գղ. և գետ Աղձնեաց Սղերդ քաղաքաւանի:

ԳԱԶԱՒՈՆ Կամսարական, որդի Սպանդարտի, կորովի զօրավար 378ին: 390ին կը կուռի Խոսրով Գ. Հայոց թգ. ի դէմ ի պաշտպանութիւն Արշակ Բ. ի, նոյն թուին՝ Արշակի մահէն ետք Յունաց կայսրէն ստրատելատ կամ սպարապետ կ'անուանուի, յետոյ կը միանայ Խոսրով Գ. ի հետ, կը մեռնի 392ին Անյուչ բերդին մէջ:

ԳԱԶԱՒՈՆԻ ՎԱՆՔ, մեր նախնիք այս անուամբ վանք մը շինած են Երուսաղէմի Ս.




Յարութիւն զրան մօտ յատկապէս նորիւրում Ս. Հռիփսիմեանց եւ Գայեանեանց յիշատակին:

ԳԱԶԲՈՅԻ Գ կամ Կասբէլ, լեռ Սիւնեաց Ծղուկ գ.ի Տաթևի արեւմտակողմը, բարձրութիւնն է 10550':

ԳԱԶԷՂԵԱՆ Հ. Աւետիք վրդ. Վենետիկոյ Մխիթարեան Աթոռակալ, ծնած է Կարին, հազիւ 1864ին 10 11 տարեկան Ս. Ղազարու վանքը կը զրկուի, ուր ուսման ընթացքը աւարտելէ ետք 1886ին քահանայ կը ձեռնադրուի և 1890—1902 Պարտիզակի, Տրապիզոնի, Նիկովիդիոյ մէջ ժողովրդապետի պաշտօն վարելով հանդերձ տեղւոյն Մխիթարեան վարժարաններուն մէջ ուսուցչութեամբ ու դաստիարակութեամբ կը յարապարհուի: 1902—6 Ս. Ղազարու բարձրագոյն դասին վերակացութիւն կ'ընէ, եռանդուն ու գործունեայ կարգ մը Մխիթարեաններ ընծայելով վանքին և ազգին: 1909—1919 կրկին Պարտիզակ և Նիկովիդիոյ կը պաշտօնավարէ, «ուր արցունքով դիտած է երկար տարիներու քրտինքով և զոհողութեամբ կառուցած վանատան, եկեղեցւոյ և դպրոցին աւերածը սուրի և հուրի օրերուն. և ինքն ալ ուրիշ միարաններու հետ տարի մը մերնահատակներու գողգոթան ապրեցաւ»: Ընդհ. պատերազմը երբ վերջ կը գտնէ (1919ին), Ս. Ղազար կը դառնայ 1921—29 վարչական խորհուրդի անդամ և 1929ին ընդհ. աթոռակալ կ'ընտրուի, և հազիւ տարի մը վարելէ ետք այդ պաշտօնը կը վախճանի 1930 նոյ. 8ին Բատուայի մէջ:

Երիտասարդ հասակէն աշխատակցած է «Բաղմավէպ»ին, կը թողու անտիպ երկեր՝ թարգմանութիւններ ազգային կամ եկեղեցական նիւթերու. իբրև նմոյշ հրատարակած է Թուռնըպիզի Հայոց պատմութեան թարգմանութիւնը՝ համառօտած:

ԳԱԶԷՂԵԱՆ Օր Մէյրի, ծնած է Միացեալ Նահանգաց մէջ 1916ին, զուստրն է Տէր և Տիկին Յարութիւն Գազէզեանի. 1936ին մեծ յաջողութեամբ և բարձրագոյն նիշերով չրջանաւարտ եղաւ Փէնսիլվանիոյ համալսարանէն, ստանալով պակակաւոր գիտութեան արտոգոսը: Իրեն մասնաճիւղ ընտրած է Միջազգային պատմութիւն, անգլիերէն և լատիներէն լեզուները: Յաջորդ տարին (1937)



Օր Մէյրի Գազէզեան

յաճախեց Գոյումպիա համալսարանը, պատմութեան ճիւղին մէջ աւելի խոր պրպտումներ կատարելու առաջադրութեամբ: («Հ. Կոչնակ» 1936 էջ 763):

ԳԱԶԸՔ ԳՕՓԱՐԱՆ ամբողջ ձեւակառք գ.ի մէջ. մօտը հանքային ջուրեր կան:

ԳԱԶԻ-ՄԱՂԱՐԱ, հայարնակ գղ. Սերաստիոյ, 1900ին 40 տ. բնակիչ ունէր. եկղ. քարաշէն. ունէր և դպրոց մը:

ԳԱԶԻՄԻՐ, թգ. Մեծն Լեհաստանի ԺԳ. դարու վերջերը, Գրիգոր եպ.ին իրաւունք կու տայ Լվուվ (Լէմպէրկ) բնակելու:

ԳԱԶԼՈՒԿԵՕԼ կամ Սագուց լիճ, Սիւնեաց Կոզովիտ գ.ի մէջ:

ԳԱԶԿԻԻԼԻԻ Լ. Սիւնեաց Հարանդ գ.ի մէջ. Կորէսի հիւսիսակողմը. 6620' բարձր:

ԳԱԶՎԻՆ Տ. Ղազուիճ:

ԳԱԶՏԱՂԼԵԱՆ Տիգրան, փաստարան, ծնած Իզմիր 1862ին, մեռած 1927ին:

ԳԱԶՐԻԿԵԱՆ կամ Գագրիգեհ. հին գ. Վասպուրականի:

ԳԱԹԱՐԻՆԷՆ Ֆելիս, Եկասարիճ Ֆէյս կամ Ռասեւան, զերմանական գաղթաշէն Վրահայոց Քուշափոր ձորագաւառի մէջ, Բողնիս գղ.ի մօտ, ուր կան և Հայեր:

ԳԱԹԸՐ, գղ. Տրապիզոնի, 1900ին տեղւոյս վարժարանին մէջ 20 մանչ կ'ուսանէին:

ԳԱԹԸՐԼՈՒ, կրկին գիւղեր, Վերին ու Ատրին ձեւակառք գ.ի մէջ: Երկուքն ալ այլազգարնակ:

ԳԱԹԸՐՃԵԱՆ Յովսէփ վրդ. բանասէր, պատմագէտ, Վիեննայի Մխիթարեան, ծնած է Պոլիո 19 Փետր. 1820ին, փոքր հասակին Վիեննայի վանքը զրկուած, ուր ուսման շրջանը լրացնելէ ետք 1841ի Մայիս 30ին քահանայ կը ձեռնադրուի:

Հ. Գաթըրճեան իր անունը անմահացուց իր արդիւնալից գրական գործունէութեամբ: Իր բաղմաթիւ աշխատութիւնք մասամբ աստուածաբանական են, մասամբ պատմական և մասամբ պատմական-մատենագրական: Իր սրատեսութիւնը սակայն կ'ուղղուի նաև այս սահմաններէն անդին՝ հեռաւորագոյն հորիզոններ, և մենք կը տեսնենք զինքը զնգերած նաև այնպիսի խնդիրներու քով, որոնք արդարև զուրս կ'իյնան իր գրական հետազօտութեանց սահմանէն:

Արդէն դպրոցական սեղանին վրայ կը սկսի Գաթըրճեան գրական գործունէութիւնը, երբ ընկերակցութեամբ Գարագաշեանի, Յովնանեանի ոսկեղարեան հայերէնի կենդանութիւն կու տայ, կ'իւրացնէ գայն և նոյն յստակ պատկերալից լեզուին խօսիլ կու տայ իր գրչին տակ: Հմտա-



տացած միաժամանակ նաև հին և նոր դասականներու՝ լատիններէնի, յունարէնի, զաղղիներէնի եւայլն, կը ձեռնարկէ հայացքնել հին և նոր գասկանները, սկիզբ ընելով Բոսուէի Խօսք վասն Տիեզերական պատմութեան գրուածքէն (տպ. 1841), զոր կը թարգմանէ ընկերակցութեամբ Լ. Մ. Գարազաշեանի մեծ յաջողութեամբ, որուն կը յաջորդեն ապա ուրիշներ. Կուրսեայ Թուփայ՝ Վասն գործոց և արութեանց Աղեփսանդրի Մեծի (տպ. 1844), Կիլերոնեայ՝ Վասն ծերութեան (տպ. 1843), Քսենոփոնեայ՝ Խրատք Կիւրոսի (տպ. 1843), Կիպրիանու՝ Վասն միութեան եկեղեցւոյ (տպ. 1846):

Իր ուսումնական դործունէութեան մէջ նշանակալից փոփոխութիւն մը տեղի ունեցաւ, երբ 1848ին Տատեան պէշի առաջարկութեամբ իրեն յանձնուեցաւ ընդարձակ Տիեզերական պատմութեան մը պատրաստութիւնը: Այս բազմակնճիռն և փշալից ասպարէզին վրայ ցոյց պիտի տար Գաթրճեան իր մտաց կորովութիւնը: Տարի մը ետքը յանձնեց արդէն մամլոյ ընդարձակ հատոր մը, որ պիտի կազմէր խնդրուած Տիեզերական պատմութեան առաջին հատորը: Հին ամէն ազգերուն շնորհուած էր հոն տեղ. բնականարար նաև ազգային պատմութեան չէր կրնար զլացուիլ տեղ. այս բաժինը մասնաւորապէս ուշադրութեան առնուած է Բ. հատորին մէջ, որ լոյս տեսաւ երեք տարի ետքը: Հոս կ'ենթարկուէր ազգային պատմութիւնն անաչառ և մանր քննութեան մը, որուն արդիւնքը կ'ըլլար Հայոց քննական պատմութիւնը՝ հիմնուած օտար եւ ազգային աղբիւրներու միաձայնութեան վրայ, քանայով միշտ ազգային աւանդութիւնը ճշդել օտար աղբիւրներու համեմատ, և ոչ, ինչպէս իր նախորդներն ընել սովոր էին՝ զուր ճգնիլ «զարեգակնային ժամացոյց տիեզերաց ուղղել ըստ ժամացուցին, զոր ի ծոցի մերում գտանեմք, այլ զսա մանաւանդ ըստ նմին յերիւրել՝ որչափ ինչ հնարն իցէ»: Եւ Գաթրճեան իր քննադատական այս զննութեամբ ո՛չ միայն չմեղանչեց ազգասիրութեան դէմ, ինչպէս դեռ չհատուցած ժամանակը դատած էր, այլև ստեղծեց զիսնական նոր ուղղութիւն մը, որով կարելի էր հասնիլ հայկական իրաց պատմական եղելութեան: Եւ այսօր բանասիրութիւնը զիտէ յարգել քննադատ մտքին մեծ արժանիքը:

Քննադատական այս ուղղութեամբ առաջնորդուեցաւ Լ. Գաթրճեան նաև մատենագրական հետազոտութեանց մէջ: Տիեզերական պատմութեան հետ ի միասին կ'ուսումնասիրէր նաև

Հայոց մատենագրութեան պատմութիւնը, որուն առաջին տետրակը՝ Հայոց անգիր ժամանակի գրականութեան պատմութիւնը, լոյս տեսաւ 1851ին արդիւնք սրտես և նուրբ քննութեան թէեւ ինչպէս Տիեզերական պատմութիւնը, նոյնպէս այս գործը անաւարտ թողոյց Գաթրճեան. բայց օր աւուր աւելի խոր միջամուխ կ'ըլլար նոյն մատենագրական ուսումնասիրութեանց մէջ՝ ձեռք զարնելով քննել, լուսարանել և հրատարակել հայերէն պաշտամանց գրքերը՝ ձեռագրական և պատմական հետազոտութիւններով: Գաթրճեանի ծրագիրն էր լոյս հանել հայերէն Պատարագամատոյցը, Մաւցոյցը, Տօնացոյցը, Վկայաբանութիւնը, Կանոնագիրքը և մինչև ժե. զար հայերէն և Հայոց վերաբերեալ նամակներու ժողովածուն՝ Գիրք Թղրոցը: Առ որ հաւաքած ալ էր հարուստ ատղած, բայց դժբախտաբար իր բազմաթիւ արտաքին գրազմունք և կենաց վերջին 4 տարիներուն դժնդակ հիւանդութիւն մը կը կաշկանդեն իր ձեռուրները, և հազիւ վերջին օրերուն կը յաջողի ըստ էական մասին աւարտել պատարագամատոյցի ուսումնասիրութիւնը, որ մահուրէ 15 տարի ետք միայն լոյս կը տեսնէ խնամօք Լ. Յ. Տաշեանի (Սրբազան պատարագամատոյցը Հայոց, թարգմանութիւնք պատարագաց Յունաց, Ասորոց և Լատինացոց 1897): Ասոր մասն կը կազմէր նախնարար Հանգանակին քննութիւնը, որ հայերէն և լատիներէն կրկին հրատարակութեամբ տպագրուեցաւ 1891ին և 1893ին (Հանգանակ հաւատոյ որով վարի Հայաստանեայց եկեղեցի 1891): Զեռագիր կը մնան դեռ միւս աշխատութիւնք՝ Կանոնագրոց, Մաշտոցի և այլոց քննութիւնք. իր այս հոյակապ ծրագրին մէկ մասը կը կազմէր նաև Աստուածաշնչի վաւերական և անվաւեր գրոց քննական հրատարակութիւնը, առ այս իրրև նախափորձ ընծայեց 1877ին «Հանգիստ երանելոյն Յովհաննու» անվաւերականին քննութիւնը՝ հայերէն և լատիներէն:

1860ական թուականներուն Լ. Գաթրճեան կը գտնուէր Կ. Պոլիս իրրև վարիչ վարժարանին, կրօնական խնդիրք հրատապ կը յուղուէին կաթողիկեայ և ոչ կաթողիկեայ Հայերուն մէջ: Այս առիթ կու տայ Լ. Գաթրճեանի ուսումնասիրելու մանրամասնօրէն երկու եկեղեցեաց հաւատոյ իրաց մէջ ունեցած տարբերութիւնները՝ զուտ աստուածաբանական տեսակէտով, որուն արդիւնքը կ'ըլլայ Հիմնական արքեպիսկոպիտի գործը (տպ. 1864ին), որ փայլուն գրաւական մ'էր հեղինակին աստուածաբանական իրաց մէջ հրմ-



տուժեան Գրուածքս պատճառ կու տար Տէրոյնեցի հրապարակ հանելու Իրաւախօնը. որուն չի յապաղիր Գաթըրճեան իր պատասխանը և ահա կը սկսի նոր շարք մը պոլեմիկ գրուածոց՝ Իրաւախօնի կեղծիք և իրաց նշմարութիւնը, որուն առաջին տետրակը լոյս կը տեսնէ 1873ին, և Բ.ը ձեռագիր աւարած արդէն կը յանձնուի մամուլի բայց խոչնդոտք կ'արգելուեն տպագրութիւնը: Բ. տետրակի գրուածքին ամէնէն հետաքրքրական մասը՝ պիտի պարզէր Հայոց Զ-Ը. դարերու եկեղեցական պատմութիւնէն նորանոր էջեր: Նաև այս տետրակները ցոյց կու տան հեղինակին մտաց սրութիւնն աստուածարանական իրաց մէջ: Այս տեսակետով ճոս յիշուին նաև իր Քանի մը խօսք «Մասիս» լրագրոյ 114 բուռն վրայ (1854) ազամանդակուռ տողերը, որ իր ձևով հայ գրականութեան մէջ ցանցառ անգամ կ'ընայ նմանն ունենայ: ||



Հ. Յովսէփի Գաթըրճեան

Սակայն այս մեծ դիտունին գրական դործունէութիւնը չի սահմանափակուիր ղեռ այս ղոյզն տողերուն մէջ, իրրե ուսուցիչ Մխիթարեան միաբանութեան այլևայլ վարժարաններու մէջ մերթ կրօնից, մերթ փիլիսոփայութեան, մերթ երկրաչափութեան և մերթ բնապատմական գիտութեանց, թարգմանած է նաև այլևայլ դասագրքեր, ինչպէս Փիլիսոփայութիւն, երկրաչափութիւն (Մոնիէրի, տպ. 1864), Կենդանաբանութիւն և բուսաբանութիւն (Պակոսնիս) եւն, եւն, որոնք կը մնան անտիպ:

Բայց Գաթըրճեանի համբաւը կի հանգչի յառկապէս իր քննադատական-պատմական գրուածոց վրայ. որով նա քննական Հայոց պատմութեան նորակերտ շինուածոյն հիմը դրաւ առաջին անգամ: Եւ իրր այսպիսի ալ ճանչցուած է առ հասարակ ամէնէն: (Ակնարկ Վիեն. Մխիթարեան Միաբանութեան վրայ», էջ 38—41. տե՛ս նաև Թեոդիկ՝ «Ամ. Տար.» 1911 էջ 250. Հ. Ղազիկեանի «Նոր Մասեմագրութիւն»ը):

Գ.Ա.Թ.Ըրճեան Հ. Սամուել, եղբայր վերնոյն, նոյնպէս վիեննայի Մխիթարեան, այլևայլ գրքեր տպարակած է 1852. (տե՛ս ՅԱ.Ի.ԵԼ.ՈՒԱ.Թ.ը):

Գ.Ա.Թ.Ա.Ն-ՏԷՐԷՍԻ, ձորակ քարային Գիլիկիոյ մէջ:

Գ.Ա.Լ.Ա.Լ.Ի, գղ. Խ. Հայաստանի. 1926ի երկրաչարժէն 85 տուն կ'աւերի:

Գ.Ա.Լ.Ա.ՃԼ.Գ, գղ. Եօզզասի, 1926ին 10 տ. հայ կար:

Գ.Ա.Լ.Ա.ՄԵԼԼ.Ա. s. Գարամելլա:

Գ.Ա.Լ.Ա.ՄՇԵԱՆ, գղ. Գուգարաց Պորչայու գ.՝ ունի 158 տ. հայ. 20 տ. վրացի:

Գ.Ա.Լ.Ա.ՄՈՒՍ, կը յիշուի Կամախի մէջ:

Գ.Ա.Լ.Ա.ՅԱՐԻՆ կամ Գայե-արխ, հայարնակ գիւղ Արագածոտն գ.՝ Շահրիարի մօտ: 1900ին ունէր 500 տ. բն. եկղ. Ս. Աստուածածին: Մօտը կայ Քիոննա քաղաքի հին քաղաքատեղին, ուր հնութիւններ պեղուած են:

Գ.Ա.Լ.Ա.ՅՃԵԱՆ Գրիգոր, փաստարան ծնած է քէրէ 1861ին, նախնական կրթութիւնը Պոլսոյ Փանոսեան վարժարանի և Հայկական կրթարանի մէջ ստանալէ ետք պետական իրաւարանական վարժարանը կը մտնէ և փաստարանութիւնը ընելու վկայական կը ստանայ: Պոլսոյ մէջ կը հաստատուի, ուր կարեւոր դիրք մը կը զբաւէ իրր եղեռնական դատերու մասնագէտ և Շէրիօրէնքներու հմուտ: Գուժ-դափուի ցոյցէն յետոյ Յարութիւն Ճանկիւլեանի, Գրիգոր Գլըճեանի և Վարդ-Պատրիկօֆի ու պանքայի ղէպքէն յետոյ Սկիւտարի մէջ ձերբակալուած շատերուն փաստարանը եղած է: 1906ին մեռած է տակաւին երիտասարդ: (Ալպոյանեան՝ «Հայ Կեսարիա» էջ 2308):

Գ.Ա.Լ.Ա.ՅՃԵԱՆ Ելիզ. դաշնակահարուհի, ծնած 1920-ին Պուքէշ, ղուստրը ուսուցչուհի հանդուցեալ Տիկին Փարիզ Գալայճեանի (Ատարազարցի), նախակրթութիւնը ստացած Պուքրէշի Ա.գղ. վարժարանը: 8 տարիէ ի վեր կ'աշակերտի Պուքրէշի քոնսէրվատիոնը դաշնակի ճիւղին, ամէն տարի առաջին հանդիսանալով: Նուազած է զանազան աղք. հանդէսներու մէջ՝ խլիով ծափեր: Այս տարի (1938—1939) կ'աւարտէ իր ուսման ընթացքը:



Օր. Գ.Ա.Լ.Ա.ՅՃԵԱՆ ԵԼ.Ի.Զ

Գ.Ա.Լ.Ա.ՅՃԵԱՆ Լուի. րօժիկ, 1937ին շրջանաւարտ կ'ըլլայ Պոսթընի համալսարանէն և կ'աշխատի Գթութեան հիւանդանոցին մէջ իր արիւնը կը




ներարկէ հիւանդի մը՝ զայն փրկելու համար. հիւանդը կ'առողջանայ, բայց ինք կը մեռնի 2 շաբաթ ետք 28 տարու: (1937ի թերթերը):

ԳԱԼԱՅՃՆԱՆ կամ Գալայնը օգլու Մարտիրոս, ծնած է Էֆքէրէ 1820ին, փոքր տարիքին պանդըխտած է Պոլիս, ուր գործաւորութենէ, առեւտրական ասպարէզէն եղած է ամէնէն նշանաւոր փաստարանը՝ առանց վկայականի, հակառակ անոր որ հազիւ նախնական ուսում մ'ունէր. իր երկու քնոտրդիներուն (Գալայճեան Գրիգորի եւ Պետրոսի) տուած է խնամեալ կրթութիւն (տե՛ս): 1890ական թուականներուն Էֆքէրէ կը հաստատուի: 1896ի Հայկական ջարդերու ժամանակ կառավարական շրջանակներու մէջ իր ունեցած ազդեցութեամբ յաջողեցաւ Էֆքէրէն փրկել կոտորածէ: Մեռած է 1905ին: (Ալպոյանեան՝ «Հայ Կեսարիա» էջ 2307):

ԳԱԼԱՅՃՆԱՆ Պետրոս, բժիշկ, ծնած է Էֆքէրէ 1876ին. պղտիկուց որբ մնացած: Նախնական կրթութիւնը Էֆքէրէի մէջ առնելէն ետք, մօրեղբոր Գալայճեան Մարտիրոսի քով կ'երթայ, 1884ին, Ֆրէրներու և Հայ դպրոցները յաճախելէ ետք կը մտնէ Կ. Պոլսոյ Ագսերայի Մէքթէպի Օսմանիյէն և զայն լրացնելէ ետք բժշկական վարժարանը կը մտնէ ու 1903ին բժիշկ կը վկայուի: Պրուոսայի և Պոլսոյ մէջ բժշկութիւն կ'ընէ ու 1910ին Կ. Պոլսոյ դատական իշխանութեան և ոստիկանութեան տնօրէնութեան մէջ բացուած մրցման մասնակցելով կը կոչուի Պոլսոյ դատական բժշկութեան: 13 տարի պաշտօնավարելէ յետոյ 1922 Նոյեմբերին պաշտօնը լքելով Պուրկարիա կ'ապաստանի, ժամանակ մը Պուրկարիոյ, յետոյ Ֆրանսայի և 5 տարի ալ Ատիս Ապպայի մէջ գործելէ ետք 1932ին Նիկոսիա (Կիպրոս) կը հաստատուի: Տոքթ. Գալայճեան հակառակ իր զբաղումներուն հեռի չէ մնացած ազգային պաշտօններէ: Սկիւտարի Աղքատախնամի Գործադիր Ժողովի անդամ, ինչպէս նաև բժիշկը եղած է: Նոյնպէս հողաբարձու եղած է Պէշկիթաշի Մաքրուհեան վարժարանին և բժիշկ նոյն թաղին մէջ հաստատուած աղջիկներու որբանոցին: Սոֆիայի մէջ եղած է Հ. Բ. Ը. Միութեան վարչական ժողովի անդամ, Ատիս Ապպայի մէջ Յառաջդիմաւէր Միութեան Ընդհ. Ժողովի նախագահ և յետոյ վարչական ժողովի ատենապետ, և Նիկոսիոյ մէջ՝ զարձեալ Հ. Բ. Ը. Միութեան վարչական ժողովի անդամ և ժամանակ մըն ալ փոխ-գանձապետ: Իր զաւակն է ՏիՐԱՆ ԳԱԼԱՅՃՆԱՆ, որ Գերմանիոյ մէջ իր արհեստը կատարե-

լադործած է, հիմա հաստատուած է Գահիրէ, ուր պ. Կ. Առաքելեանի հետ հաստատած է The Egyptian photo-Engroving Manfactory զինկօկրաֆի տունը: (Ալպոյանեան՝ «Հայ Կեսարիա» էջ 2304):

ԳԱԼԱՅՉՆԱՆ Ս. ԲԸԺԻՆԿ, աշխատակից Բարիդի «Հայ Բոյժ»ին: ԳԱԼԱՆՏԱՐ լեռ Մաղկոտան գու.ի մէջ, նպատ լերան մօտ:



ԳԱԼԱՅՃՆԱՆ Պետրոս

ԳԱԼԱՆՏԷՐՆԱՆ Նիկոլ, երաժշտագէտ, ծն. է Ակնի մէջ 1884ին.

միջնակարգ կրթութիւնը ստացած է Էջմիածնայ Կէորգեան ճեմարանին մէջ: Երաժշտական գործունէութիւնը սկսած է 1911ին: Ունի երաժշտական բաղմբերանդ 400էն աւելի ստեղծագործութիւններ, որոնք ըստ բովանդակութեան հետեւեալ պատկերը կը ցուցադրեն.— մանկական, ժողովրդական, քնարական, իդիլիա եւն, ինչպէս և ջութակի և թաւ-ջութակի համար սերենատներ:

Իր ստեղծագործութեանց մէջ առանձնապէս ուշադրութեան արժանի են Վ. Միրաքեանի «Լազարի որս», Յովհ. Թումանեանի «Փարուսեան» և Վ. Փափաղեանի «Լուր-սա-ուր օբերաները»:

Իր տիրապետող, հիմնական ոճը արեւելեան հայկականն է: Այդ հանդամանքը անով կարելի է բացատրել, որ նա սնած ու մեծցած է Ակնայ ժողովուրդին մէջ և խորապէս ազդուած է այդ տեղի ժողովրդական գրականութենէն:

Գալանտէրեանի գործունէութեան գլխաւոր կեդրոնն է Իրանի մայրաքաղաքը-Թէհրանը: Անոր լիրիք երգերէն շատերը կ'երգուին այսօր Իրանի գրեթէ բոլոր քաղաքներուն մէջ և մի քանի մանկական գործերը տպագրուած են Թէհրան հրատարակուող «Նոր Հասկեր»ի մէջ:

Ն. Գալէնտէրի հասարակական գործունէութեան գլխաւոր առանցքը կը կազմէ Թէհրանի մէջ կազմակերպած ղեղարուեստական համերգները, որոնց ընթացքին նա դաստիարակած է երաժշտասէր ամբողջ սերունդ մը: Անոր երգեցիկ խումբին մէջ բաղմամբիւ օրիորդներ և երիտասարդներ մշակած ու զարգացուցած են ի-



րենց երաժշտական ընդունակութիւնները: Գալանտէրեանի հասարակական գլխաւոր ծառայութիւնն էր էն մին՝ այդ եղած է: (Ա. Երեմ.):

Հասցեն է՝ Tscharrahe Aziz Khan Téheran (Iran):

ԳԱԼԱՉԱ, գղ. նիգրա. մէջ. 1900ին ունէր 500 հայ բնակիչ:

ԳԱԼԱՉԻ, գիւղակ Շիրակի արեւմտեան մասին մէջ. Պաշնա գիւղի արեւելակողմը:

ԳԱԼԲԱԳԵԱՆ Եղբարք,



ԳԱԼԱՆՏԷՐԵԱՆ ՆԻԿՈԼ

սերունդով Կեսարացի (Յակոբ ծնած է 1896ին իսկ Կարապետ՝ 1901ին), երկուքն ալ Պոլիս ծնած: Յակոբ Պէրպէրեանէն ու յետոյ Ակիւտարի Ֆրէրներու վարժարանէն շրջանաւարտ եղած. իսկ Կարապետ Պարտիզակի Բարձրագոյն վարժարանը ուսած ու յետոյ Պոլսոյ Ռոպէրթ Գոյէճը աւարտած: Այս Պուտարէշտ հաստատ-



ԳԱԼԲԱԳԵԱՆ ՅԱԿՈԲ երկու եղբարքը 1922ին ուսած են և Պարսկական ու արեւելեան գորգի վաճառականութեամբ կը պարապին:

Հասցեն է՝ Régi posta ut. 10 Budapest (Hongrie):

ԳԱԼԲԱԳԵԱՆ Կ. Տոքթ. Ատամնարոյժ, աշխատակից նիւ Եորթի Հ. Կոչնակի:

ԳԱԼԲԱԳԵԱՆ Նրւարդ, 1929ին Պեթովէնի վրայ երկար ուսումնասիրութիւն մը գրած է, որ հրատարակուած




ԳԱԼԲԱԳԵԱՆ ԿԱՐԱՊԵՏ

է 1929ի Տաթևին մէջ էջ 298—338. Բարիք կ'ապրի:

ԳԱԼԲԱԳԵԱՆ ԱԼԵՏԻԱ, բժիշկ, ծնած է Մարաշ 1872ին. նախնական ուսումը առած է պղզային վարժարանին, իսկ երկրորդականը «Պետական Իտատիէի» մէջ, աւարտելով 1890ին: 1892ին Պոլիս կ'անցնի և պետ. բժշկն. համալսարանը կը մտնէ, ուսկից կը ստանայ 1898ին բժշկական վկայականը. Զիլէ (Թոքաթ) կը զրկուի իբր թաղապետութեան բժիշկ, կառավարական գնահատութեանց արժանանալով՝ չորս տարի ետք կ'անցնի Կիւրին, ուր կը մնայ 3 տարի: 1905ին Մարաշ կը վերադառնայ, ուր Իտատիէի զպրոցին ընագիտութեան ուսուցիչ կը կարգուի:

Ընդհ. պատերազմին հարիւրապետի աստիճանով այլևայլ քաղաքներ պաշտօնավարելէ եւ իրաքսորեալ ազգակիցներուն օգտակար հանդիսանելէ ետք, ի վերջոյ անգլիական հարիւրապետի աստիճանով և Անգլիացի Գօմանտանի մասնաւոր հրամանով, գերիններուն իբր ակնարոյժ կը նշանակուի:

1919 Նոյեմբերին Մարաշ կը վերադառնայ: Քիչ ետք կը սկսին ֆրանքո-թուրք ընդհարու. մն երբ եւ դարձեալ բժ. Գալբազլեանը կ'առնուի թէ՛ N. E. R. և թէ՛ Բէմալական բանակը: 1922ին Այնթապի շրջաւայրէն յետոյ զին. հիւանդանոցին հետ կը



ԳԱԼԲԱԳԵԱՆ ԱԻԵՏԻՍ

փոխադրուի հոն նոյն պաշտօնով: 1923ին աղերսագիր կու տայ իր յառաջացեալ տարիքը պատրուակելով և Հալէպ կու գայ: Նոյն օրերուն N.E.R.ի կեդրոնը Պէյրութ փոխադրուելով և Մամլիթէնի մէջ կուրանոց մը բացուելուն՝ իբր ակնարոյժ կուրանոցի պաշտօնի կը կոչուի Տոքթ. Ա. Գալբազլեան իր գտնուած բոլոր վայրերուն մէջ չէ մոտցած վարել ազգային զանազան գործեր: 1906ին Հ. Բ. Ը. Միութեան հիմնադրութենէն անմիջապէս յետոյ Մարաշի մէջ հիմնուած Միութեան Ժողովին ամէնէն գործունեայ և տիրական զէմքերէն մէկը կը հանդիսանայ: Ն. Ս. Սահակ կթղ. ի կողմէ վարչական ժողովի անդամ կը նշանակուի: Յաջորդաբար ընտրուած, Գաւառական ժողովներու կը մասնակցի: Նոր Մա-



բաշի թաղին մէջ կը բանայ իր դարձանատունը: (Ե. Տօլպագեան, 1936ի Լիբանանայ պակ. Տարեցոյց):

ԳԱԼԲԱԳԼԵԱՆ Յակոբ, ծն. Կեսարիա 1884ին. նախնական ուսումը ծննդավայրին մէջ ստանալէ ետք Գամասկոսի դժլկական համալսարանին մէջ ղեղադործութեան կը հետեւի և ընթացաւարտ կ'ըլլայ 1909ին: Վերադառնալով Կեսարիա՝ հոն կը հիմնէ ղեղարան:

Պալքանեան պատերազմին իրրև սոյայ թըրքական բանակին մէջ կը ծառայէ: Ընդհ. պատերազմի ընթացքին Կեսարիա կը գտնուէր, ուր իրրև յայտնի դէմք 2 տարի կը բանտարկուի. իր բաղդակից ընկերները բոլորն ալ կը խողխողուին, ինքը հրաշքով կ'ազատի և հոն կը մնայ իրր ղեղադործ: Պատերազմէն յետոյ իր եղբօր Յարութիւնի հետ (ծն. 1888ին) Պէյրութ կը հաստատուի ուր կը հիմնեն իրենց հսկայ ղեղավաճառատունը քաղաքին ամենափայլուն հրապարակին վրայ: (Ե. Տօլպագեան՝ 1936ի «Լիբանանայ պակ. Տարեցոյց»):

ԳԱԼԲԱՔՃԵԱՆ Եզ. առաջնորդ Բալուի 1914ին:

ԳԱԼԲԱՔՃԵԱՆ Տ. Գալիպոլի:

ԳԱԼԳԱՆ (Kalekani), հայաբնակ գղ. Շամախի մօտերը, կը յիշուի Բէլլ (Bell)էն, էջ 292:

ԳԱԼԷԱՐԻՍ Տ. Գալայարիս:

ԳԱԼԷԼԷ, հայաբնակ գղ. Կոտայք գո.ի, Երևանէն 10 վերստ հեռու. 1900ին 400 բն. ունէր:

ԳԱԼԷԼԷ կամ Քեալալի, գղ. Շիրակի փոքրիկ ձորակի մը մէջ. 1900ին ունէր 40 տ. հայ, որոնք 1828ին Կարսէն գաղթած են:

ԳԱԼԷՃԻԿ կամ Գալայնրգ, աւան Անգարայի կուսակալութեան, բն. 7000, որոնց 400ը հայ էին Եկզ. Ս. Կարապետ, ուր երկաթագիր աւետարան մը կար: Լուսինեան վարժարանը 35 երկսեռ աշակերտ կը յաճախէին:

ԳԱԼԷՃԻԿ, հայաբնակ գղ. Վանգնդի Զարիշատ վիճակի մէջ, 80 բն. ունի: Տե՛ս Գարագիլիսէ:

ԳԱԼԷՄՔԵԱՐԵԱՆ Գեեղ Եզ. ծնած Պոլիս 1877-ին: Նախնական ուսումը ստացած է Պալաթու Ազգ. վարժարանը. յետոյ 1890ին Արմաշ գացած ու Դպրեվանքի շրջանը աւարտելէ ետք Օրմանեան սրբազանէն արեղայ ձեռնադրուած 1896ին վերջերը: Եղած է առաջնորդ Մուշի, Մամոնի, Սերաստիոյ: Հանդէսներու, Տարեցոյցներու մանաւանդ «Տաթև»ի մէջ բանասիրական յօդուածներ ունի. պերճախօս քարոզիչ եղած է. 1912ին և 1921ին Ռուսական այցելած է որբերու ի նպաստ հանդանակութիւն ընելու հա-


մար: Վերջին տարիները Գաաըգիւզի քարոզչին էր. ուր յետ երկար հիւանդութեան 1931 Յունվար 9ին վախճանեցաւ:

ԳԱԼԷՄՔԵԱՐԵԱՆ Տիկիմ Զարուհի, ծնած 18 Յունիս 1875 Գաաըգէօյ, աղջկնութեան մականուամբ՝ Սէֆէրեան: Նախնակոն կրթութիւնը ստացած ծննդավայրին Արամեան դպրոցը: Իր Ա. գրուածքը (ոտանաւոր) հրատարակած 17 տարեկանին՝ Ծաղիկի մէջ: Ծածկանունները Եսկրպէ՝ Ս. Զարուհի. (ամուսնութենէն առաջ), Գ Զարուհի (ամուսնութենէն վերջ): Երկար ատեն աշխատակցած «Բիւզանդիոն»ի, «Ա. Մամուլ»ի, «Մաղիկ»ի, «Լոյս»ի, «Շանթ»ի, «Ոստան»ի եւլին: Հայերէնի ուսուցիչներն եղած են Գուրգէն և Եղիա Երկերը 1. Նուազգ Եւտերպեայ, 2. Զարթօնք, «որոնց գոյութենէն այսօր դժգոհ եմ անշուշտ», — կը գրէ ինձ, — հրատարակելի ունիմ 2 վէպ եւ անտիպ բանաստեղծութիւններու հաւաքածոյ մը: Գրական սեւերու մէջ ամէնէն աւելի բանաստեղծութեան ու պատկերներու հակամէտ եղած է գրիչ»: Բացի քննիչ լանձնատողութիւնը մէջ ունեցած անդամակցութիւններէ, 6-7 տարի եղած է ատենադպիրը Բերայի աղքատախնամին, և ատենապետ Ազգանուէր Հայուհեաց Ընկ. թեան գործադիր ժողովի: (Թեոդիկ՝ «Ամ. Տար.» 1912 եջ 379): Ընդհ. պատերազմէն ետք Ամերիկա անցած է և Նիւ Եորք կը բնակի, աշխատակիցն է «Շ. Կոչնակ»ի:

ԳԱԼԷՄՔԵԱՐԵԱՆ Տիրուհի թէ Տիգրան, առամնարոյժ, ծնած է Պոլիս, եղբայրն է Գնէլ սրբազանին: Առամնարոյժն եղած էր Միջագետքի Ֆէյսալ թգին, յանկարծամահ կ'ըլլայ 1936 Հոկտեմբերին:

ԳԱԼԷՄՔԵԱՐԵԱՆ Հ. Գրիգորիս Ծ. վրգ. ծնած 13 Մարտ 1862ին Բերա:

1870ին յաճախած է Անտոնեան վարժարանը, 74ին Պրէրներուն, իսկ Վիեննայի վանքը 1875 Նոյեմբերին ուր քահանայ կը ձեռնադրուի 25 Մարտ 1885ին: Պոլսոյ մեծաւոր 1898—1909: Վարած է «Հանդէս Ամսօրեայ»ի խմբագրապետութիւնը: Վիեննայի Միաբանութեան պարծանք այս ներ- Գր. Ծ. Վ. Գալեմբեան հուն բանասէրին հրատարակած ուշագրաւ եր-





կերն եղած են 1. Գործնական մեկնութիւն առաւելական արժոյ Սահմանադրութեան (1890), 2. Յուլյակ հայերէն ձեռագրաց արժուքի մասեանդարանին, ի Միւնխէն (1892), Պասմութիւն Հայ լրագրութեան ի սկզբանէ մինչեւ մեր օրերը, (1794-1860) 1893, 3. Ոսկեղարեան եւ ոչ-Ոսկեղարեան Հայերէնի խնդիրը (1903), 1902ին Վիեննա հրատարակուած Հ. Կղեմէս Սիպիլեանի «Դասաւորութիւն Ռուբինեանց դրամոց» գործին մէջ ունի շահեկան ծանօթութիւններ եւ զրած է մեծանուն դրամագէտին կենսագրութիւնը: Թարգմանած է Հ. Գեղցերի Համառօտ Պասմութիւն Հայոցը, Փ. Լաշիգոսի Դաւեսիլիա վիպակը, Մոմագործութիւն անուն տետրակ մը եւն. եւն.: Դրովէ՞ ունեցած Տ. Արփիարի «Մասիս»ի մէջ Դուրեան Ա. ի հետ «Հանդէս Ամսօրեայ»ի մէջ հրատարակած Բերայի գերեզմանատան սեփականութեան խնդրոյն մասին յօդուածը դուռ բացած է քննադատութեանց զորս ստորագրած են Արշակ Ալպոյաճեան (Բիւզանդիոն) և Գ. Մարգարեան (Ժամաւնակ): Իր մասին կը պատմուի թէ բանասիրական շատ մը գործերու ձեռնարկած է, մեծամասնութիւնը սակայն անաւարտ թողուլ: (Թեոդիկ՝ «Ամ. Տար.» 1912 էջ 380): Տե՛ս նաև ՅԱԻԵԼՈՒԱՅԸ:

ԳԱԼԷՄՔԵԱՐԵԱՆ Արեակ, ճարտարապետ, ծնած է Արարկիր 1896ին, մանուկ հասակին ծնողքին հետ Հալէպ գաղթած, ուր նախնական կրթութիւնը կը ստանայ ազգ. վարժարանի մէջ, ուսկից շրջանաւարտ ըլլալով 1909ին՝ կը մտնէ տեղւոյն թուրք Սուլթանիէ լիսէն, որը ևս աւարտելէ ետք 1914ին Պոլիս կը մեկնի համալսարան մը տեսնելու համար:

Պոլիս, պետ. երկրաշափական վարժարանը մտած է նոյն տարին, և տարի մը ուսանելէ վերջ թուրք բանակին մէջ ծառայած իրրեւ պահեստի սպայ: Անգարա էրգրում գծին վրայ իրրեւ երկրաշափ պաշտօնավարած է 1915—1918 մինչև զինադադար՝ տեղակալի աստիճանով:



Զինադադարէն վերջ Պոլիս վերադարձած է շարունակելու համար ԳԱԼԷՄՔԵԱՐԵԱՆ ԱՐՇԱԿ ուսումը նախկին վարժարանին մէջ, զոր վերջացնելէ ետք կը մտնէ

Ռուլէրթ գոլէճի երկրաշափական ճիւղը պերոն արմէի մասնագիտութեան համար, ուսկից շրջանաւարտ ըլլալով 1924ին Քաղաքային ճարտարագէտի աստիճանով Հալէպ կը մեկնի և իրրև ճարտարապետական բաժնին պետ՝ կը պաշտօնավարէ քաղաքապետութեան մէջ մինչև 1932 և անկէ ետք իր անձնական պիւրօն կը բանայ: Մասնակցած է Հալէպի Ազգային վարչութեան իրրև Քաղաքական Ժողովի անդամ և Տնտեսական Պորթրոյ ատենապետ:

1934ին Եւրոպա մեկնած է գիտական և ճարտարապետական ուսումնասիրութեան համար, այցելելով Հռոմ, Վենետիկ, Լոդան, Ժընև, Բարիզ և Լոնտոն: Հասցէն է Rue Abbara 45, Alep (Syrie):

ԳԱԼԷՆՏԵՐ Օր. Տիրուհի, ս. Փէտիմալեան Տիրուհի:

ԳԱԼԷՆՏԵՐԵԱՆ Յ. Բժիշկ, ծնած է Սիւրիիսար 1894ին, նախնական ուսումը առած է տեղւոյն Ազգ. վարժարանը և յետոյ Պոլիս երթալով աւարտած է Կարապետեանը: Հետևած է Պոլսոյ բժշկ. համալսարանին, ուրկէ վկայական ստացած է 1917ին:



Տօքթ. Գալէնտէրեան ընդհ. պատերազմի ընթացքին գործած է Օսմանեան բանակին մէջ: Փոքր Ասիոյ աղէտէն ետք Սելանիկ Տոքթ. Յ. ԳԱԼԷՆՏԵՐԵԱՆ ապաստանելով նախ եղած է Ազգ. Խնամատարութեան յետոյ Կարմիր Խաչին բժիշկ:

Վարած է ազգային պաշտօններ, իրր Թրակիոյ և Մակեդոնիոյ Քաղաքական Ժողովի անդամ: Արհեստը կը կիրարկէ Սելանիկի մէջ: (Մակարեան «Յուլագիր» էջ 210):

ԳԱԼԷՊԱՇԻ, գղ. Ստորին Բասենի:

ԳԱԼԷՍՈՒ, այսպէս կը կոչուի Երասիս գետը Հասան-գալէի մօտէն անցած ժամանակ:

ԳԱԼԷՏԷՐԷՍԻ կամ Բերդաճոն, բաղամարդ գղ. Աղահէճք գո. ի, 1900ին 2700 բն. ունէր:

ԳԱԼԷՏԻՊԻ, այսպէս անուանուած գղ. Մարաշ գո. ի մէջ:

ԳԱԼԷՔԵՅՅ (Բերդաղիւղ), քանի մը գիւղեր կան այս անուամբ Կիլիկիոյ և մեր բնաշխարհի այլևայլ կողմերը:

ԳԱԼԷՊԵԱՆ Բժիշկ Երուսաղէմի մէջ, որ Նէկուսը խնամեց:



ԳԱԼԸՊՃԵԱՆ Օր. Արմենուհի, ջութակահար, Բարիզի մէջ, տե՛ս ՅԱԻԵԼՈՒԱՄԵՐ:

ԳԱԼԸՊՃԵԱՆ Իգնատիոս, Արքեպ. 1850ի առննները Ամասիոյ հայ կաթողիկէից Արքեպ. որ 1844ին Սեբաստիոյ կաթողիկոսական փոխանորդ կը կարգուի: (Ալպոյանեան՝ «Հայ Կեսարիա» էջ 1039):

ԳԱԼԸՊՃԵԱՆ Օր. Ի. նկարչուհի Բարիզի մէջ, տե՛ս ՅԱԻԵԼՈՒԱՄԵՐ:

ԳԱԼԸՊՃԵԱՆ Նեան. նախ Պոլսոյ ֆրանս. հիւպատոսարանի պաշտօնեայ. յետոյ 1915ի առննները Բարիզ Արտաքին գործոց պաշտօնատան: Երկար տարիներ իր պաշտօններով զնահատուած և օգտակարապէս ծառայած իր զգակիցներուն՝ անոնց հրախտազխուածեան արժանացած է, ըլլալով ժողովրդական համակրելի դէմք մը. նոյնպէս օտար շրջանակի մէջ: Իր զաւկին եղբրական կորուստէն ընկճուած Բարիզի մէջ կը վախճանի 1935ին, խոր ծերութեան մէջ: Իր գործակցութեամբ և խորհուրդներով օգտակար եղած է Ազգային և Հ. Հ. պատուիրակութեանց, Գաղթ. Կեդր. Յանձնաժողովին: (Զօպանեան «Անանիս 1935, էջ 70, Գաբալանեան՝ «Գրպանի Տարեցոյց» էջ 126):

ԳԱԼԸՊՃԵԱՆ Պողոս, հեղինակ թուրք լեզուի քերականութեանց և դասագրքերու, զորս հրատարակած է Կ. Պոլսոյ մէջ 1874—1892:

ԳԱԼԹԱԳՃԵԱՆ Սարգիս, բժիշկ, ծնած Կեսարիա 1881ին, վկայուած Պէյրութի համալսարանէն, ընդհ. պատերազմէն ետք Եգիպտոս ապաստանած, 1925ին Յէյուսի մէջ կը մեռնի:

ԳԱԼԻ ԳՈՒԼՈՒ, Քեթիպ Չէլէպի այս անունը կու տայ էրզրումի:

ԳԱԼԻԷ-ԳՈՉԱՆ, գլ. Տիգրանակերտի, խիվան գ.ի, բն. հայ, որոնք անուանի էին իրենց քաղութեամբ:

ԳԱԼԻԷ ՄՍՈՒՐ, գլ. Տիգրանակերտի, Սլիվան գ.ի, Խուրի գաւառակի, բն. 25 տուն:

ԳԱԼԻԼԻԱ, բարձր տեղի վարադայ լերան:

ԳԱԼԻԿԵԱՆ Հրանդ, իրաւագէտ, շրջանաւարտ 1912ին Պոլսոյ համալսարանէն. սա Ս. Դ. Հրնչակեան էր, 1920—2 Պոլսոյ մէջ «Երկիր» թերթը կը խմբագրէր Ծ. Չոփուրեանի հետ, որուն հետ Խ. Հայաստան կը մեկնի և հոն ընդհ. դատախազի պաշտօն կը վարէ. սա ևս շնորհազուրկ կ'ըլլայ իբրև Թրոցկիստ և պաշտօնանկ՝ 1937ին:

ԳԱԼԻՖՈՐՆԻԱ, նահանգ՝ Միացեալ Նահանգաց, ուր բաւական թիւով Հայեր կ'ապրին Յրէզնոյ, Լոս Անճըլըս, Սան Ֆրանչիսկոյ, Սիլմա և այլն քաղաքներու մէջ:

ԳԱԼԿՈՆՅ, կը յիշուի Բարձր Հայոց Սպեր գ.ի մէջ:

ԳԱԼՃԵԱՆ Կ. տե՛ս ՅԱԻԵԼՈՒԱՄԵՐ:

ԳԱԼՃԵԱՆ Հ. պատասխանատու տնօրէն Պոլիս հրատարակուած (1911—1914) Ս. Դ. Հնչակեան կուսակցութեան օրկան Կայմամասթերի:

ԳԱԼՈՊ ԱՆԱՊԱՍ կամ Գալլու վանք, հին վանք Հայոց, դաշտային Կիլիկիոյ մէջ, Սսոյ դիմաց, Կը յիշուի 1325ի և 1331ի յիշատակարանաց մէջ. եկեղեցին կը կոչուի Ս. Աստուածածին: Վանքիս շինողն եղած է Մեծն Լեւոն թգ.: Վանքս յետոյ կոչուած է Զեմալլիս (տե՛ս):

ԳԱԼՈՒՍ Կայմակն, պատրիարք Կ. Պոլսոյ, Ամասիացի կամ Զէյթունցի կոչուած, միաբան Երուսաղէմայ Ս. Յակոբ վանքին. Մինաս Ամդեցի պատրիարքին աթոռակից (1694—1701), Ս. Յակոբի մէջ կը պաշտօնավարէ Ղափանցի Եփրեմ պատրիարքի հրամանով (1694—1698): Ատեն մը Եւզոկիոյ առաջնորդութիւն ալ ըրած է, ուսկից հրաժարելով երկրորդ անգամ կը վարէ Ս. Յակոբի պատրիարքութիւնը՝ 1702ին: Գալուստ վրդ. 1703 Սեպտ. Տին Կ. Պոլսոյ պատրիարքական աթոռին վրայ կը բարձրանայ, յաջորդելով գահընկէց եղած Աւետիքին, վերջինիս կողմնակիցները սակայն Արքահամ վրդ. Արզումանեան և Պետրոս վրդ. ամէն ջանքի գործ կը դնեն Աւետիքը կրկին աթոռին վրայ բարձրացնելու: Նոյն միջոցին Երուսաղէմի նախկին պատրիարք Մինաս եպ. Ամդեցի որ Պոլիս եկած էր՝ կրկին իր աթոռին վրայ կը բարձրանայ: Գալուստ Կայմակ տասը ամիս միայն պատրիարքութիւն կ'ընէ և երբ իր տեղը կ'անցնի Ներսէս Պալաթցի՝ ինքը Ամասիա կ'երթայ: Գալուստ վրդ. թողած է քերթուածներ, որոնց տանց սկզբնատառերը իր անունը կը կապեն (Տե՛ս Բիւրակն 1898, էջ 521 Պալեան Տրդատ եպ.ի յօդուածը) 1700ին Պոլսոյ մէջ լոյս ընծայած է Լուսաւալիղ գիրքը:

ԳԱԼՈՒՍ արեղայ, գրիչ ձեռագրաց 1443, 1447ին՝ Աղջոց վանքին մէջ:

ԳԱԼՈՒՍ արեղայ և առաջնորդ Կեչառու վանքին 1491ին, գրիչ:

ԳԱԼՈՒՍ, ծերունի, գրիչ Հոռոմոսի վանքին մէջ 1494ին:

ԳԱԼՈՒՍ եպ. (Կապոսի) յիշատակագիր 1555ին:

ԳԱԼՈՒՍ Արքեպ. առաջնորդ Տանժիկ վանքի 1593ին:

ԳԱԼՈՒՍ վրդ. Շամբեցի (Գողթն), միաբան Ստեփանոս Նախավկայի վանքին, 1697ին Ս. Յակոբայ վանքը այցելած է (Աղաւնուհի՝ «Միաբան» էջ 59):



ԳԱԼՈՒՍՏ (ԵԱՆ) Գ. կամ Քարլ (խակական անունն է Զիլիկկիրեան Գալուս) զիմանկարիչ և ծովանկարիչ. ծնած Պոլիս 1872ին, աւարտած է մայրաքաղաքին թուրք զեղարուեստից վարժարանը և յետոյ նկարած է Պալքանեան մայրաքաղաքներուն, ինչպէս նաև Կեղրոնական Եւրոպայի մայրաքաղաքներուն մէջ: Իր նկարները ցուցադրուած են Վիեննայի, Սոֆիայի, Աթէնքի և Բարիզի պատկերասրահներուն մէջ: Երբ



ԳԱԼՈՒՍՏԵԱՆ Գ.

ընդհ. պատերազմը ծագեցաւ Գալուստ անդամ էր Բարիզի արուեստագէտներու գաղութին: Ամերիկա զնաց 1916ին՝ նախ Նիւ Եորքի մէջ հաստատեց իր արուեստանոցը (աթիւտիօ). ունէր շատ մը նկարներ, որոնց կարգին նաև զիմանկարը ձորձ Ուաշինկթընի՝ որ ներկայիս կը զարդարէ Աղեքսանդրիոյ (Վիլհելմի) Մէյլընիք Թէմփլի (տաճարի) պատը: Գալուստ յետոյ Ուաշինկթըն փոխադրուեցաւ, ուր վրձինեց Միսիս Ռոզվելթի նկարը և նուրիեց նախագահին: Նկարիչ Գալուստ կը վայելէր ո՛չ միայն իր հայրենակիցներու համակրութիւնը, այլև օտար զեղարուեստասէրներու համարումը: Ռուսմանական արքունիքը ատեն մը իր խնամակալութեան ներքև առաւ զայն: Գալուստ մեռաւ Ուաշինկթընի հիւանդանոցին մէջ 1936 Յունիս Տին:

Ուաշինկթընի «Իվնինկ Սթար» թերթը՝ մահուան առթիւ հրատարակելով արուեստագէտին նկարը՝ կը գրէ. Քարլ Գալուստ 64 տարեկան, ականաւոր նկարիչը զիմանկարներու և ծովային տեսարաններու, երէկ մեռաւ աղքատութեան մէջ... Գալուստ, որուն նկարները տեղիս և Եւրոպայի նշանաւոր պատկերասրահներու մէջ տեղ գրաւեցին, և որ ատեն մը Ռուսմանիոյ թագաւորին պաշտպանեալն էր՝ մեռաւ առանց փեննի մը ունենալու:»

ԳԱԼՈՒՍՏԵԱՆ Օր. Ալիս, (Զըլտիէն, Մ.Նահանգ) չրջանաւարտ Պոսթընի համալսարանէն՝ 1931ին՝ Գիտութեան պսակաւորի տիտղոսով:

ԳԱԼՈՒՍՏԵԱՆ Գ. Օ. բժիշկ (Գալուստ Օհանճան), որդի Գալուստեան Օհանճանի (տե՛ս), ծնած

Զմիւռնիա 1891ին. նախնական ուսումը առած է ծննդավայրի Մեսրոպեան վարժարանը. աւելի վերջը՝ Լազարիստներու մօտ: 1910ին յաճախած է Պէյրութի Ֆրանսական բժշկական համալսարանը: 1917ին չրջանաւարտ: Մեծ պատերազմի ընթացքին իբրև զինուորական բժիշկ գտնուած է Սուրիա, Պաղեստին, Հիճազ: Զմիւռնիոյ աղէտէն վերջ, 1922ին անցած է Աթէնք, ուր նախ հաստատած է զեղաչինութեան գործատեղի մը: Այժմ (1938) կը գործէ Աթէնքի Տուրկութի հայաշառ գաղթականայնին մէջ:

Հայ մամուլի աշխատակցութեան իր բաժինը բերած առաջին անգամ 1909ին Զմիւռնիոյ «Արձագանգ» թերթին մէջ:

Իր բժշկական ասուլիսները, որոնց թիւը հարիւրը կ'անցնի, զնահատուած են հանրութենէն: Հրապարակագրական հակում մը ունենալուն՝ 13 տարիէ ի վեր եռանդագին կ'աշխատակցի Աթէնքի «Նոր Օր» օրաթերթին, ուր բազմաթիւ քաղաքական յօդուածներ ստորագրած է:

Թարգմանած է 9 հատոր գիրք, ճամբորդական, երկրախուզական և պատմական բովանդակութեամբ, որոնք իբրև թերթօն լոյս տեսած են վերոյիշեալ լրագրին մէջ:

Ունի գրած Զմիւռնահայ գաղութին պատմութիւնը, որուն մէկ մասը հրատարակուած է Յունահայ Տարեգրքին մէջ:

Պատրաստ ունի «Ռուսաբնուօրիւն», ինչպէս նաև «Ջրաբուժութիւն» երկասիրութիւնները, որոնք պարբերաբար կը հրատարակուին «Նոր Օր»ի մէջ:

ԳԱԼՈՒՍՏԵԱՆ Օր. Գ. նկարչուհի ի Բարիզ, տե՛ս ՅԱՒԵԼՈՒՍԾՐ:

ԳԱԼՈՒՍՏԵԱՆ Գրիգոր Հ. խմբագիր, ազգային գործիչ, հեղինակ, ծնած է Մարաշ 1879ին Մարաշ 29ին: Ուսած է տեղւոյն Ս. Գէորգի Ծաղկոցին, Կեղրոնական և Մարաշ Ակադեմիա վարժարանաց մէջ: 1895ին հրաջքով կ'ազատի ջարդէն և ընտանեօք Ատանա գաղթելով՝ 1896էն սկսեալ կը հետևի Տարսոն-Գոլէճի դասընթացքին, զոր կ'աւարտէ 1901ին: Շրջանաւարտութենէն առաջ և ետքը մէկ տարի հայերէնի ուսուցիչ եղած է Ատանայի Աւետ. Բարձր. վարժարանին: Յետոյ 1902—1909 Ապրիլ՝ Հայ լեզուի, Գրականութեան և Ազգ. Պատմութեան ուսուցիչի պաշտօն վարած է Տարսոն-Գոլէճի մէջ և վերջին երկու տարին ցկեանս բրոֆէսոր կարգուեցաւ Գոլէճի Նիւ Եորքի Խնամակալութենէն: Ամուսնացաւ Նոյ. 2, 1908ին Օր. Լուսածին Սամուրգաչեանի հետ: 1909ի Կիլիկիոյ ջարդին Ատանա գտնուելով՝ հա-



զիւ կ'ազատին խուժանին մէջէն, որ զիրենք օտարականներ կարծեց՝ իրենց տաքազին պատ-

ճառաւ: Յետոյ ջարդին մէջէն ընտանեօք անցան Կիպրոս և 6 ամիս ետքը Աւեսաբերի խմբազրու թեան պաշտօնով մեկնեցաւ Պոլիս, ուր 1910—1913 նեակեցաւ Օսմ. Համալսարանի իրաւագիտական ճիւղին և վկայական ստացաւ 1914ին: Ընդհանուր պատերազմի շրջանին Կէտիկ փաշայի Ամերիկեան վարժարանին, և Զինա-



Տնփր Գ. Օ. ԳԱԼՈՒՍՏԵԱՆ (ՏԵՍ ԷՅ 440)

դարի առաջին տարին Դպրոցասէր Տիկնանց Վարժուհիներին մէջ ուսուցչութեան և յետոյ 3 տարի Հայ Բողոք. Ազգապետարանին քարտուղարութեան պաշտօններ վարեց: 1917—1918 տարի մը զինուոր եղաւ Օսմ. բանակին մէջ: 1919ին տարի մը զբաղեցաւ փաստաբանութեամբ, 1923 Օգոստոս 6ին ընտանեօք Ամերիկա գաղթեց և 1924 Փետր. 18էն ի վեր Հ. Բ. Ը. Միութեան նախ իրրե գործիչ և յետոյ իրրե Ընդհ. Բարտուղար՝ պաշտօն կը վարէ, Նիւ Եորք: Ունի երկու զաւակներ Ալիճ-Նուարդ և Վազգէն-Համբարձում:



ԳԱԼՈՒՍՏԵԱՆ ԳՐԻԳՈՐ ԴԵԿՏ. 31՝ Հայ Պատանի շարաթաթերթը: Իր երկերն են.

- 1. Գեքսեմալի (1905ին), 2. Սրբազան ներքին-Հայ Հանրագիտակ — 28\*

չումներ (1909), 3. Օսական Ընթերցարան Բ. (1914), 4. Յուսարանի Վեր. Հ. Մ. Ալեքի (1919), 5. Հայու Որբեր (1919), 6. Զուարթ Բառեակներ (1925), 7. Մարտե կամ Գերմանիկ և Հերոս Զէյրուն մօտ 1000 էջեան արժէքաւոր երկը (տպ. Նիւ Եորք 1934ին): 1910ին լոյս ընծայած է Հրասիայք Գարսեղի թրք. բանաստեղծութիւնները: Կը խմբագրէ Գերմանիկ թերթիկը. օրկան Մարաշի հայրենակցական Միութեան: Թարգմանութիւններն են. 1. Ոսկեգետի բազաւոր. 2. Կաղ Իսլամիկը, 3. Աւեսաբանի Պատմականութիւնը. 4. Կնոջ մը Հաւասքը. 5. Անեքստրնի Հեփաքները:

Գրչանուններն են Կիլիկեցի, Գրիգորիս, Գրիգֆնար, Հսկողը: (Քաղուած իր ինքնակենսագրութենէն «Մարտե» էջ 928):

ԳԱԼՈՒՍՏԵԱՆ ԼԱՅՈՒՆԷԼ ՏՈՔԹ. Փիլիսոփայու- և քիմադրատութեան. որդի Տէր և Տիկին Սամուէլ Գալուստեաններու և թոռը Տիկին Տիանա Աղարէկ Արզարի. ծնած 1914ին, իր նախնական կրթութիւնը կը ստանայ Ճարտնի մէջ և հոն կ'աւարտէ նաև Ճարտնի Ամերիկեան Հայ սնույր, հանդիսանալով առաջինը իր դասարանին մէջ: Ծնողքը նկատի առնելով իրենց զաւակաց կրթութեան հարցը Ճարտնէն Սան Ֆրանչիսկոյ կը փոխադրուին Պատանին Լայընէլ կ'ընդունուի Տէյթըն Օնյոյս համալսարանը և կը հետևի Քիմիքլ Ինճինիքիքիկի ճիւղին: 1936ին Մէսէչուսէթ Ինսիթուտ ավ քեֆնալանիէն շրջանաւարտ կ'ըլլայ, և հազուադիւտօրէն 22 տարու կը ստանայ Տոքթոր Փիլիսոփայութեան տիտղոսը, մասնագիտութիւնը ընտրելով քիմիագիտութիւնը:



ԳԱԼՈՒՍՏԵԱՆ ԼԱՅՈՒՆԷԼ

ԳԱԼՈՒՍՏԵԱՆ Կարապետ, բժիշկ, թոռն Զէննէ Պօղոսի, ԺԸ դարուն: (Այլազեան «Շար-Հայ Կենս» Ա. էջ 118:

ԳԱԼՈՒՍՏԵԱՆ Կարապետ աղա, ազգային բարերար, ծնած է Վան հաւանաբար 1790ին (ըստ իր ազգականներու վկայութեան, ըստ տապանաքարին 1802ին) իր ընտանեկան անունն էր Հանրմեան կամ Հանրմ օղլու:

Հայրը քահանայ էր Վանի մէջ, Տէր Գալուստ



և իր զաւակներն ալ խաչատուր և Կարապետ տեղ-  
ւոյն վարժարանը կը յաճախէին:

Նախ խաչատուր պանդխտութեան կ'ելլէ և կը  
հասնի Գահիրէ, ուր քիչ ետք կ'երթայ Կարապետ,  
որ արաբերէնը սորվելով Եղիազարեաններու քով  
կը մտնէ: Կարապետ հետզհետէ յառաջանալով իր  
կինն ալ վանէն բերել կու տայ, որ չկարենալով  
տո՛ղայ հայրենարարչութեան՝ 1833ին ապրիլ 1ին  
կը մեռնի, անկէ առաջ մեռած էր իր եղբայրը  
խաչատուր և թաղուած Մարմենայի դերեզմանը:

Ինք սեղանաւորական գործերու հմուտ և ճշ-  
դապահ էր. Արարը մեծ վստահութիւն ունէր իր  
վրայ:

1840ին Իպրահիմ փաշայի ժամանակ, Մէհմէտ  
Ալի փաշայի թոռ Ապպաս շիմի պէյ Անգլիական  
հիւպատոսարանը կ'երթայ և այցելութիւն մը  
կու տայ Իպրահիմ փաշա որ յաղթական էր և  
փայլուն վիճակի մը տէր, իմանալով և կասկա-  
ծելով որ իր եղբայրը Ապպաս շիմի պէյ օտա-  
րականներու կը դիմէ անոնցմէ պաշտպանութիւն  
գտնելու համար, կը հրամայէ որ երեք օրէն երկ-  
րէն դուրս ելլէ, և անոր զբաժական օգնութիւն  
ընողն ալ կախազան բարձրանայ: Իրերը այս վի-  
ճակին մէջ էին երբ շիմի պէյի հաւատարիմ ծա-  
ռան ծերուկ Արար մը կը դիմէ Ազնաւորեանին  
(Մալիկէ նազըրը) որ մեծ բարիքներ տեսած էր  
Մէհմէտ Ալի փաշայէն:

Ազնաւոր կը մերժէ օգնել պէյին, անշուշտ  
վախնալով կախազանէն:

Ապպաս պէյ ճարահատ և մտածկոտ էր. ծե-  
րուկը կը թելադրէ Գալուստեանին դիմել:

— Հալէն ի՞նչ կ'ելլէ, Ազնաւորեան ըսն մը  
չկրցաւ ընել, ան կարո՞ղ է:

Ծերուկը կը դիմէ Գալուստեանին, կը պատմէ  
ամէն ինչ, Գալուստեան իր ապագան հոն կը  
տեսնէ.

— Արշալոյսին պէյը թող ինձի գայ:

Առաուն կ'անուխ պէյը կու գայ և կը տեսնուի  
Գալուստեանի հետ:

— Հիւպատոսարան երթալու համար ստիպ-  
ուած եմ մեկնիլ. ինձի զբաժական օգնութիւն  
կրնա՞ս ընել. որովհետեւ Իպրահիմ փաշա չ'ուզեր  
որ նիւթական վիճակ ունենամ:

— Ո՞ւր պիտի աքսորուիք տէր իմ:

— Լիւքսոր (Փարաւոններու հին մայրաքաղա-  
քը, 14 ժամ երկաթուղիով):

— Փաշա, քանի որ պիտի երթաս, ես զբամը  
հոն կը հասցնեմ բայց պայմանով մը, մեր երե-  
քին մէջ մնայ գաղտնիքը, դուն գնա Լիւքսոր  
ես զբամը կը հասցնեմ:

Պէյը կը մեկնի Լիւքսոր — Բօրթ Սայիտի ճամ-  
բով:

Կարապետ Գալուստեան Սիւրբիանի վաճառա-  
կանի մը լուր կը զրկէ որ ինքն ինք սեվէսի մը առ-  
նելով իրեն գայ:

Գալուստեան իր առնելիքներէն 5500 ոսկի ժող-  
վելով 1000ական օսկինոց տոպրակներ կը շինէ և  
կը կնքէ, և 500 ոսկին ալ այդ մարդուն տալով  
կ'ըսէ. «Բեզի պաշտօն մը պիտի տամ, պէյը Լիւք-  
սոր աքսորուած է և դուն այս զբամները իրեն  
պիտի յանձնես, ստացադիրը պիտի առնես և ինձի  
բերես, մարդ չպիտի իմանայ»:

— Քանի որ տիրոջս բարիք կ'ընես պիտի կա-  
տարեմ փափաքդ և զբամական հատուցում ալ  
չեմ ուզելու Սիւրբիանին տասը օրէն կը հասնի հոն  
և յանձնելով զբամը կը ստանայ ստացադիրը:  
Ապպաս շատ կը զգացուի թէ ամէնէն լքուած,  
Հայ մըն էր միայն որ իրեն օգնութեան հասաւ:

Ոչ ոք կ'իմանայ և երկու տարի կ'անցնի՝ որ  
ատեն Իպրահիմ փաշա Բարիդ կ'երթայ. վերա-  
չարձին կը մեռնի, Սուլթան Մէհմետի ֆէրմանը  
կու գայ որով Ապպաս փաշա խտիվ կ'անուանուի:  
Լիւքսոր հրաման կ'երթայ և ամէն կողմէ շնոր-  
հաւորութիւնները կը տեղան. Ապպաս փաշա  
իր խտիվ 35000 զօրքով կու գայ Գահիրէի Միջ-  
նաբերդը, ուր ամբողջ աւագանին շնորհաւորու-  
թեան կու գան:

Գալուստեան երկար վարանումներ կ'ունենայ  
թէ նո՞յն օր երթայ թէ յաջորդ օրը, վերջապէս  
կ'երթայ կը ներկայանայ թէչրիֆաթէին, որ կը  
մերժէ քանի որ, կ'ըսէ, Ձեր անունը տետրակին  
մէջ չէ նշանակուած:

— Ըսէք փաշային թէ Կարապետ անունով վա-  
ճառական մը եկած է:

— Ձեռք համարձակիր որովհետեւ ժամանակը  
անցուկ է:

Գալուստեան կամաց կամաց բերդէն կ'իջնէ՝  
այդ միջոցին Ապպաս փաշա դուրս ելլելով կը  
հարցնէ թէ վաճառական մը եկա՞ծ է արդեօք:

— Այո՛ հիմա մէկը եկաւ, բայց որովհետեւ  
ցանկին մէջ նշանակուած չէր չընդունեցինք:

— Շուտ կանչեցէք զինքը, կ'ըսէ և ինքը քա-  
րի մը կրթնած կը կենայ ու կը սպասէ որ Գա-  
լուստեան գայ:

Ամէնն ալ կը զարմանան և կը կանչեն Գա-  
լուստեանը, փաշան կը դիմաւորէ զինքը և  
թեւը կը մտնէ այդ շալվար հագած և փաթթո-  
ցաւոր մարդուն:

— Բեզի յանձնեցի, կ'ըսէ, երկրին ցորենի, աղի  
և ծխախոտի հոգածութիւնը, բոլորը քու վար-  
չութեանդ տակ ըլլան: Եւ կը հրամայէ ֆէրմանը  
տալ իբր տնօրէն ընդ՛. մաքսերու Գալուստեան



իրը ուշիմ և հաշուապահ անձ, ամէն գործ կանոնաւորաբար կը կատարէ, և այս պատճառաւ հաշուոյն 1000 նաւ կ'ունենայ: միջոց մը Սուտան կ'երթայ եւ տուրքերը հաւաքելով սնտուկներով կը բերէ Եգիպտոս: Անգամ մը Չակագիկի մէջ սող կը պատահի, փաշան կը հրամայէ Գալուստեանի որպէսզի առաջք առնէ, Կարապետ իր դրամով ամբարները կը լեցնէ և յետոյ յիւստով 12 զրուշէն կը ծախէ փոխան 25 զրուշի, միւս վաճառականներն ալ վախնալով որ պիտի յիւստեն անոնք ալ կը սկսին նոյն գնով ծախել և ահա սովը կը վերջանայ:



Կառավարութենէն վարձած է Տամիյէթի ձըկնարանը:

Իր աղքեցութիւնը մեծ էր և զրոյցի մը նայելով Մուհամմէտ Ալի և Իպրահիմ փաշաներու իշխանութեան ատեն իր շոգենաւակին մէջ թընդանօթ կրելու արտօնութիւն ունէր:

Անսահման վարկ ունէր ելեւմտից պաշտօնէութենէն, վարած է փողերանոցի տեսչութիւնը Ապպաս փաշայի իշխանութեան բովանդակ չըջանին (1848—1854) թէ և քիչ էր մնացեր որ պատճառաւ մը աքսորուէր թիւրիմացութեամբ մը, սակայն փոխարքային բժշկապետին միջամտութեամբ կ'ազատի:

Ունէր առաջնակարգ աղամանդազարդ պատուանշան: Ինք քանի կը բարձրանար, այնքան ազդին կը մօտենար, առաջնորդ Գարրիէլ սրբազանի հետ կը տնօրինէր ազգ. խնդիրները և կը վարէր ազգ. հաստատութիւնները: 1854 Ապրիլ 1ին կանոնադիր մը պատրաստած է վարժարանի, եկեղեցական, գերեզմանատան և ժառանգական ուրիշ գործերու համար, որու տակ Գալուստ ստորագրած է Գարրիէլ եպ.ի հետ:

Տարպէլ-Կինէնտի մէջ Երուսաղէմի վանքին սեփական տուն մը կար որ հրդեհէ մը աւերակ դարձած էր: Գալուստեան 20000 ֆրանք տարով այդ տեղին վրայ կը շինէ վարժարան մը և կը կոչէ Մովսէս Խորենացիի անուամբ, 1854 սեպտ. 15ին շքեղ հանդէսով վարժարանը կը բացուի և

հին զպրատան աշակերտները կը փոխադրուին հոն: (1897ին Գալուստեան ժողովոյ որոշմամբ Խորէնեան անունը կը փոխուի Գալուստեանի): Կարապետ Գալուստեան չէնքը շինելէ ետք կը խորհի անոր բարոյական չէնքն ալ կառուցանել, քանի որ այն ատեն եկամուտը հազիւ 1200 ֆրանք էր և անհնարին էր մատակարարել այդ դրամով, ուստի իշխանավայել առատութեամբ կտակ կ'ընէ և իր շինած վարժարանին կարելորկայութեան կը նուիրէ, որոնք այսօր քանի մը պատիկ աւելի արժէք ունին:

Ահաւասիկ զպրոցին արձանագրութիւնը. —  
«Շնորհիւն Աստուծոյ ի հիմանց կառուցաւ վարժարանս յանուն Քերթոյահօրն մեռոյ Մովսէսի Խորէնացոյ աղեամբ եւ ծախիւ վանեցի ազգասէր Կարապետ աղայի Տէր Գալուստեան ի յաւերժական յիւսակ յուսանողի հօրն Տէր Գալուստին եւ մօրն Մարիամայ եւ եղբօրն Խաչատուրոյ եւ կենդանեաց ի վայելումն եւ ի բարեկարգութիւն մանկանց Արամեան տնիս յեգիպտոս ի բարոյական եւ ուսումնական վարժս գիտութեան:

Յամի Տեառն 1854 Սեպտ. 15:  
Կտակն ինքնագիր է և թուրքերէն լեզուաւ շարադրուած է, կը կրէ 1274 շապան 1 թուականը (1858 մարտ 5) վկան է Խաչեր պէյ Միքայէլեան և հաստատողը Գարրիէլ եպ.:

Մեծանուն բարերարը իր այս կտակով տրամադրած է իր ամբողջ ստացուածքն ինպատար ազգ. հաստատութեանց և անձերու, աղքատը, եկեղեցիին, զպրոցը, ժառանգորդները, ծառաները եւ 430900 արծաթ ֆրանքէն աւելի արժէք մը ունեցող շարժուն և անշարժ այդ կայուածները 1914 թուականին 800000 արծաթ ֆրանքէն աւելի կ'արժէին:

Իր կտակը կառավարութենէն վաւերացուած է 1887ին, չնորհիւ Իզմիրեան երջանկայիշատակ հայրապետին որ նոյն ատեն Եգիպտոսի առաջնորդն էր:

1864ին Գալուստեան նամակ կը գրէ Խրիմեան Հայրիկի թէ «ել եկուր, վարագո՛ղ՝ վիեննա և Ադթամարդ ալ վենետիկ պիտի ընեմ»: Խրիմեան Հայրիկ ճամբայ կ'ելլէ սակայն տակաւին Եգիպտոս չհասած Գալուստեան կը մեռնի. իր կտակին մէջ Հայրիկի մասին ոչինչ զրուած է: 1864 Ապրիլին Պոլսոյ պատրիարքարանէն Ազգ. Սահմանադրութեան հաստատման համար պաշտօնադիր եկած ըլլալով Գալուստեան Հէլուանի ազարակէն կ'իջնէ մասնակցելու համար խորհրդակցութեանց և երբ Գահիրէ կը հասնի 1864 Ապրիլ 8ին յանկարծամահ կ'ըլլայ:



Ահաւաստիկ իր դամբարանին արձանագրութիւնը որ կը գտնուի Մարմինացի մէջ:

«Գամբարան Ազն. Կարապետ Աղայի Տէր Գալուստեան վանեցոց պայծառավայլ իշխանի եւ բարեբարի որ հանգեաւ ի Տէր ամաց 62 յամի Փրկչին 1866 Ապրիլ 8 րոյեայ ի սուգ անմխիբար զսիրելի զագգ իւր համայն»:

(Վ. Զարդարեան՝ Յիւսկ. էջ 24-28 հսր. Գ.)

ԳԱԼՈՒՍՏԵԱՆ վարժարան Գահիրէի մէջ, ի սկզբան կոչուած է հիմնադրէն Խորհեան Մովսէս Խորհնացոյ անուամբ, հիմնուած 1848ին (Հիւ. Օրացոյց 1901 էջ 49) և վերջացած 1854ին 20000 Փր.ի ծախքով, որուն համար եկամուտ ալ կը հայթայթէ ինքը Կ. Գալուստեան. Խորհեան վարժարանը որ 1897ին կը կոչուի Գալուստեան. 1904ին Պողոս Նուպար Պուլաք թաղին մէջ հող գնելով հոն մանչերու և աղջկանց դաս դաս դպրոցներ շինել կու տայ իր ծախքով և կը ձօնէ Գալուստեանի յիշատակին. եղած է որ մինչև 700 երկսեռ աշակերտ ունեցած է:

Գալուստեան վարժարանի մէջ տնօրէններն եղած են Աբրահամ Մուրատեան 1863—6, Նազարէթ Աղազարմ 1883—92, Կ. Նաւասարդեան 1892—6, Յովհաննէս Աեթեան 1897—1903, Վահան Քիւրքեան 1905—7, Մինաս Մարեան 1911—3, Յովհ. Գայանեան 1914—8, Գր. Կիրակոսեան 1921—7, Լեւոն Թաշեան 1927—34, Յակոբ Նալպանտեան 1935էն ի վեր:

ԳԱԼՈՒՍՏԵԱՆ Օ. Գ. ծնած է Ամասիա: Նախնական կրթութիւնը կը ստանայ հոն ու Եւզոնիա, յետոյ կ'աւարտէ Իրրանոսեան վարժարանի դասընթացքը՝ յայտնի ուսուցիչ Յր. Իւթիւճեանի օրով: Երկու տարի գեղարուեստի դասեր կ'աւանդէ հոն: Տղայ հասակէն ցոյց կու տայ գծարուեստեան և լուսանկարչութեան խոր հակում և 16 տարեկանին՝ բոլոր Ամասիացիներուն ծանօթ կը դառնայ իբրև նկարիչ, մատիտով, չինական մելանով, ջրաներկով և իւզաներկով յաջողապէս



Օ. Գ. ԳԱԼՈՒՍՏԵԱՆ

պատրաստելուն համար ամէն ազգի երեւելիներու գիմանկարները: Կը պատրաստէ նաև մետաքսի վրայ ծաղիկներ հանրմներու ձեռագործ-

ներուն համար, թատրոնի վիժակներ ու վարագոյրներ՝ մինչև սահմանադրութիւն, որմէ տարի մը վերջը կու գայ Պոլիս ու կը զբաղի լուսանկարչութիւնով:

Արուեստագիտական ընդունակութիւնները զարգացնելու համար, Գալուստեան 1910 թուի գարնան կը մեկնի Պալ (Զուիցերիա), ուր կ'ուսանի տեսական և գործնական լուսաքիմիաբանութիւն. քիմիա-փորագրական և պատկերագրական արուեստները: 1914ի վերջերը կ'անցնի Յիւրիխ: Տարիներէ ի վեր հոն հաստատուած է մեր տաղանդաւոր հայրենակիցը, որ իր արուեստագէտի կարողութեան և համրաւին շնորհիւ ստացած է զուիցերիական հպատակութիւն եւ քաղաքացիական իրաւունք, այն հազուագիւտ հայերէն է որոնք պատիւ կը բերեն «հայ» անունին:

Ինչ հրաշալի ցեղ մը՝ մերինը, որուն զաւակները, անհատարար կը ներկայացնեն ուժ մը, համրաւ մը, առաջնորդ մը իրենց ձեռնարկած կամ կիրարկած աշխատութիւններուն մէջ:

Ու մեր ցեղը, անհատարար մեծ ու անբաղդատելի, որքան կը համրէ անոնցմէ:

Էթիկետիոյ զանազան գեղարուեստանոցներուն մէջ, — ուր կը տպուին ու կը փորագրուին ընտիր նկարներ և կառավարական թղթադրամներ, — Օ. Գալուստեան պաշտօն վարած է իբրև փորագրչապետ: 1923էն ի վեր ունի իր անձնական աշխատանոցը Յուրիխ լաւագոյն պոզոտային վրայ:

1926 Ապրիլին Հայաստանի կառավարութիւնը պաշտօնագրով մը կը հրաւիրէ զինքը Հայրենիքի վերաշինութեան աջակցելու համար մեկնել Հայաստան:

Տեսանք իր աշխատութիւններէն քանի մը հատ և հպարտութիւնով զինքը դասեցինք արդէն Եւրոպայի մէջ հաստատուած մեր լաւագոյն արուեստագէտներու կարգը:

Ողձամիտ, ամէնէն անթափանցելի կէտերը լոյսին բերող, իր ինքնութիւնը արուեստին պարտադրող յատկութիւններով օժտուած է մեր հայրենակիցը, որմէ պիտի գիտնանք օգտուել յառաջիկային:

Մեզի համար նորութիւն մը չեն ուսումնասիրելու իր ձգտումները: 1923 տարուան «Ամէնուն տարեցոյց»ին մէջ ստորագրած է Հայկական դրօշակի հարցը վերնագրով երկար և խղճամիտ ուսումնասիրութիւնը: Հոն ցոյց տուած է մեծ հմտութիւն և իր նիւթը շահեկան դարձնող գեղեցկագիտական հազուագիւտ կարողութիւն մը:



(Կեանք եւ Արուեստ 1934 էջ 53, տե՛ս նաեւ Թեոդիկ՝ «Ամ. Տար.»-ը 1923, էջ 293-4, 1928 էջ 527):

Հասցեն է՝ Bahnhofstrasse 89, Zürich (Suisse): ԳԱԼՍՏԵԱՆ Ալեք, ճարտարապետ, ծնած Թէհրան 1882ին, շրջանաւարտ Վիեննայի փոլիթէհնիքէն: 1913էն ի վեր գործած է Թէհրան իրրեւ ճարտարապետ, յեղաշրջելով սամրոզիովին մինչև այդ թուականը Պարսկաստանի մէջ ընդհանրացած և կիրարկուած շինարարական ոճը:

Գալստեան ազդուած է աւստրո-գերմանական արդիական դպրոցէն. անշուշտ նկատի առնելով Պարսկաստանի տեղական պայմանները, արեւելեան գոյնը պահած է միշտ իր ինքնատուութեանը մէջ: Իր գործերէն յիշենք Վալիապատի գաղութին վիլաները, և մէջի հանրային բաղնիքները, անգլիական դրամատան պաշտօնեաներու Սիթէն իր վիլաներով: Institut Pasteurի շէնքերը, Սովետական ներկայացուցչութեան Թէհրանի Ապարանքը:

1924ին Մէշտի քաղաքապետութեան կողմէ հրաւիրուեցաւ կազմելու Ռէշտ քաղաքի նոր յատակագիծը: Եւ այս առթիւ շինեց երկու հսկայական զօրանոցներ, արդիական հասկացողութիւնով և նոր գիծերով: Բայց իր կարծիքով իր լաւագոյն գործերը եղած են սովետական ղեսպանատան շէնքը, ներքին բաժանումներով, Եփրեմի գերեզմանին համար ծրագրած շիրիմը և Ռէշտի զօրանոցները: («Կեանք եւ Արուեստ» 1931 էջ 115):

ԳԱԼՍՏԵԱՆ Խաչատուր, Շիրակեցի, ազգային բարերար Հնդկաստանի Պինանկ քաղաքի մէջ: (Այվազեան «Շար. Հայ Կենս». Գ. 89):

ԳԱԼՍՏԵԱՆ Հրաչեայ Արեակ, Խ. Հայաստանի Կեդր. Գործ. Կոմիտէի քարտուղար կ'ընտրուի Արա Եսայեանէ հտք և քիչ հտք շնորհազուրկ կ'ըլլայ:

ԳԱԼՎԻՐԱՍ, ալլազգարնակ գիւղ Կամախ գո. ի:

ԳԱԼՏԸ կամ Ղալսի գղ. Սերաստիոյ, անունը լէնկթիմուրէն մնացած է, «պու գալաք» խօսքէն: Հայք 30 տուն էին 1900ին. եկղ. Ս. Յակոբ, ունէին դպրոց. ալլազգիները մեծամասնութիւն կը կազմէին:

ԳԱԼՓԱԳԵԱՆ Գառնիկ, Տօքթ. որդի հանգուցեալ ատամնաբոյժ Ճանիկի, 1935 Յունիսին շրջանաւարտ եղած է Պէյրութի Ամերիկեան համալսարանին Ատամնաբուժական ճիւղէն՝ D D. S. ատտիճանով՝ իրրեւ վիրաբոյժ-ատամնաբոյժ:

Տօքթ. Գալփագեան իր նախնական ուսումը ստացած է Նիւ Եորք, յետոյ յաճախած է նաեւ Մէնչէթըն Եւանջիլըսիթի Փրիփէէթըրի Սքուլը, որմէ հտքը մտած է Նիւ Եորք Եուանջիլըսիթի

Ուոշինկթըն Սքուէր Գոլէճը, ուր ուսած է երեք տարի և շրջանաւարտելով ստացած է Տէնիթըլ Սթիւտէնթս Սըրթիֆիքէյթ: 1931ին Պէյրութ մեկնելով՝ մտած է տեղւոյն Ամերիկեան համալսարանը: («Հ. Կոչնակ» 1935): Տե՛ս Գալփագեան:

ԳԱԼՓԱՔՃԵԱՆ Արսաւես, Պոլսոյ խմբագիր, 1906էն հտք խմբագիրն եղած է Բիւրակնի, 1908ին Պոլսոյ մէջ խմբագրած է Արեսուրը, 1925ին վարչական տնօրէնն եղած է Ժամանակի, 1911ին Լուսարձակի, 1922--1930 Վերջին Լուրը եւ 1922ին ելմտական շարաթաթերթ Վասակը: Կենսագրութիւնը տե՛ս ՅԱԻԵԼՈՒԱԾԻԿ մէջ: Տե՛ս և Գալփագեան:

ԳԱԼՓԱՔՃԵԱՆ Վաղարշակ, 1909ին Պոլսոյ մէջ լոյս տեսնող Գարուն շտաթաթերթը խմբագրած է, 1919—20ին տէր և խմբագրապետը եղած է նոր Այգին:

ԳԱԼՖԱՅԵԱՆ Ամբրոսիոս վրդ. տե՛ս Լուսինեան Ամբրոսիոս:

ԳԱԼՖԱՅԵԱՆ Անանիս, դուստր Կեսարացի Ղազար Գալփայեանի, ծնած է Պոլիս 1907ին, ուր հազիւ թէ նախակրթութեան մը տարերքը ստացած՝ 13 տարեկանին 1920ին Ամերիկա գաղաց է, ուր նախնական կրթութիւնը ստանալէ հտք Պոսթընի աղջկանց բարձրագոյն դպրոցին մէջ, ինչպէս նաև Վուաթըրթաունի երէց բարձր. վարժարանին մէջ ստացած է միջնակարգ ուսումը:

Յետոյ մտած է Պոսթընի Մասաչուսէթի Տեսաչափութեան Գոլէճը, ուրկէ ստացած է իր վկայականը 1928ին:

Ունի Մասաչուսէթի և Նիւ Եորքի նահանգներու արտօնագիրները: Թէ բարձրագոյն վարժարանի և թէ՛ Գոլէճի Cum Laud պատուանշանը ստացած է: (Այլօլյանեան՝ «Հայ Կեսարիա» 2101)

ԳԱԼՖԱՅԵԱՆ Արիս. գրած է «Զօմախուր» երկը և հրատարակած 1930ին:

ԳԱԼՖԱՅԵԱՆ Աւեսիս, Գալփա, ծնած Թալլաս և մեռած 1867ին, սա Կեսարիոյ և շրջակայից մէջ համբաւուած ճարտարապետ մըն էր, հաւանօրէն ինքնուսոյց: Հայրն էր Արսէն և Մատթէոս փաստարաններու և Յարութիւնի, Մաքր-գիւղի թաղապետութեան տնօրէնին, երեքն ալ 1915ին զոհուած:

ԳԱԼՖԱՅԵԱՆ Գ. Տօքթ. ատամնաբոյժ, 1935ին կը շահի «Էլ Մօսասաթ» Ս. պարգևը Աղեքսանդրիոյ մէջ: Տե՛ս ՅԱԻԵԼՈՒԱԾԻԿ:

ԳԱԼՖԱՅԵԱՆ Գրիգոր (Թահրա պէյ), նշանաւոր Զափր, ծնած 1900ին Թանթայի մէջ (Եգիպտոս): Հայրը Տօքթ. Թորոս Գալփայեան, ծանօթ է Թօրո յորջորջմամբ, իսկ մայրը Նիկոմիդիացի է:



Գրիգոր նախնական ուսումը կ'առնէ էօղայէքիի (Գահիրէ) արաբական դպրոցը. 9 տարու կը փոխադրուի Պոլիս, ուր քանի մը տարի իսաւսիի ուսմանց հետեւելէ վերջ՝ բժշկական ուսանող կ'արձանագրուի եւ 1918ին կը ստանայ վկայականը Աղէտայի տարիներուն Սուլթան Բէշատի աստղարաշխն էր: Գրիգոր շուտով կը լքէ բժշկութիւնը և կը զբաղի թաքուն գիտութիւններով, զորս կ'ուսուցնասիրէ անսովոր եռանդեամբ և քիչ ատենէն կը վայելէ միջազգային համբաւ:



ԳԱԼՖԱՅԵԱՆ ԳՐԻԳՈՐ (Թահրա պէյ)

1919ի սկիզբները, Գալֆայեան կայս. իշխան Մէճիտ էֆէնտի շնորհիւ կ'անցնի Գերմանիա և կը կատարէ Ֆախրիզմի փորձերի Պերլին, ի Տրէզտըն և ի Համպուրկ: Այդ փորձերէն ամէնէն հիաղարհուրն է՝ դիակնանայով՝ աւազաթաղ գերեզմանուելէ վերջ ողջ դուրս ելլելը, կանխորոշ ժամանակամիջոցով մը: Պերլինի մէջ է որ այսպէս թաղուեցաւ երկու ամիս, 12 օր և 8 ժամ, քննիչ յանձնախումբին հետ առաջուց պայմանաժամը ճշտելով:

Գալֆայեան Գերմանիայէն վիեննա կ'անցնի և շատ մը երկիրներ իրր Ֆախր գործելով: Ներկայիս Ֆրանսա կ'ապրի: (Թեոդիկ՝ «Ամ. Տար.» 1926 էջ 680):

ԳԱԼՖԱՅԵԱՆ Ե. ճարտարապետ, Թէոդիկի 1914ի Ամենուն Տարեցոյցին մէջ էջ 318 յօդուած ունի:



ԳԱԼՖԱՅԵԱՆ ԶԱՐԵՀ

ԳԱԼՖԱՅԵԱՆ Զարեհն, նկարիչ Բարիզի մէջ, Նախապէս յաճախած է Պոլսոյ Գեղարուեստից վարժարանը: Աշխատած է Բարիզի նկարչական ակադեմիաներուն մէջ: Հետեւած է École Nationale Supérieure des Arts Décoratifs դասընթացներուն և առաջին մրցանակ ստացած:

Բարիզի New York Heraldի գեղարուեստական քննադատը, հետեւեալ զրուատալից տողերը գրած է, իր վերջերս ցուցադրած նկարներուն մասին:

«Զարեհ Գալֆայեան կու տայ Բարիզի տեսարան մը՝ լաւ լոյսերով: Ան ըմբռներ է Բարիզեան մթնոլորտին հրապոյրը: Իր ծաղիկներու նկարը ի յայտ կը բերէ միեւնոյն յատկութիւնները փափկութեան, թէքնիքական հմտութեան և վրստահ ճաշակի» (Կեանք եւ Արուեստ» 1932 էջ 100):

ԳԱԼՖԱՅԵԱՆ ԽՈՐԷՆ Արք. (Նարպէյ), բանաստեղծ, ծնած է Պոլիս 1831ին, դեռ պատանի հասակին Ս. Ղազարու վանքը կը զրկուի իր եզրօր Ամբրոսիոս վրդ.ի հետ: 1854ին վարդապետ կը ձեռնադրուի և վանքի կողմէ Բարիզ կը զրկուի և երբ Գարրիէլ վ. Այվազովսքի և իր եղբայրը Ամբրոսիոս վրդ. Ս. Ղազարու Միաբանութենէն կը հրաժարին՝ ինքն ալ անոնց կը հետեւի: Բարիզի մէջ Հայկազնեան վարժարանին տեսչութիւն կ'ընէ 1857—9: Պոլիս երթալով հոն վարեց քարոզչական, վարչական և կրթական պաշտօններ: 1867ին իր պատուիրակը նկերացաւ Գէորգ Գ. կաթողիկոսին, Ս. էջմիածին երթալու և նոյն թուականին եպիսկոպոս ձեռնադրուեցաւ և կաթողիկոսին հետ ճամբորդեց Ռուսաստանի հայաբնակ քաղաքները և վերադարձաւ Պոլիս: 1878ին իր պատուիրակ Պերլինի վեհաժողովին՝ նոյն ատեն այցելեց Պեդերբուրկ և Մոսկուա: 1889ին Երուսաղէմի վեհապետեան Յարութիւն պատրիարքը Ազգ. Կեդր. վարչութեան կողմէն կ'առաջնորդէ Պոլսէն իր աթոռը, Ս. Յակոբի վանքը: Եղած է նաև Ռուսմանիա, և Ռուսմանիոյ արքունիքէն պատուուած է: Կը վախճանի 1893ին Պոլսոյ մէջ: (Տե՛ս կենսագր.ը «Արախ» 1887 էջ 33-4):

Նար պէյ ունի շատ մը գրական աշխատութիւններ, բացի կրօնական մէկ-երկու դասագիրքէ և 1869ին Հայոց Եկեղեցին և Անդրալեւնական գիրքէն, Մասեաց Աղաւնի հանդէսին խմբագիրներէն մին եղած է (1855—8՝ Բարիզ, 1860—5՝ Թէոդոսիա), «Բազմավէպ»ի մէջ քերթուածներ գրած է (1852—7), թարգմանած է Լամարթինի Դաւենակները (տպ. Բարիզ 1859), յօրինած է Արուսի. Ողբերգութիւնը 1861ին, Ալաֆրանկա կասակերգութիւնը՝ 1862ին, Վարդենիխ խորագրով գրարար բանաստեղծութիւնները՝ 1863ին, Քնար պանդիսից, որ Բարիզ և Պոլիս հրատարակուած քերթուածներուն հաւաքածոն ըլլալով՝ 1868ին զայն նուիրած է Գէորգ Գ. կաթողիկոսին, 1871ին ֆրանսերէնէ հայերէնի կը թարգմանէ Յովնանէս Տարսէլի Տարեգութիւնը կարսպեա Եղեանցի խնդրանքով, 1881ին Հոմերոսի



Իլիականին առաջին երգր յոյն բնագրէն հայաշխարհարարի կը վերածէ («Մասին» րազիր 1881 Նոյ. 28 Դեկտ. 2), հրատարակած է նաև Ասուհրֆ Հայկական բանաստեղծութիւնը, եւայլն: Նախապէս Լամարթիւնի և ապա Վիքթոր Հիւկոյի հետ տեսակցած ու բարեկամացած է. 1879ին վերջինէս ստացած է սրտաուռ Նամակ մը Բա-



Գալֆայեան Խորեն Արեւայ. (Նարայէ)

րիդի մէջ: Եր. Շահաղիզ գրական ընդարձակ տեսութիւն մ'ունի Նարայէի երկասիրութեանց մասին՝ Լուսալի 1902 - 3 տարիներու մէջ: (Աղաւնունի՝ «Միաբան» էջ 118—9, սե ս նաև Զարդարեանի «Յիշատակարան»ը Բ. 13:)

ԳԱԼՖԱՅԵԱՆ Կարապետ, եպիսկոպոս. Միաբան Երուսաղէմի Ս. Յակոբայ վանքին, ծնած է Էվէրէկ, արեղայ ձեռնադրուած 1830ին, Առաջնորդ Տրապիզոնի 1839—42: Իր պաշտօնավարութեան սկիզբը Տրապիզոնի մէջ իր կողմէ պատրաստուած կահուց և կարասեաց տետրակի մը ներքև կը գրէ հետեւեալը... Այցելու և վերատեսուէչ նուաստ ծառայ ծառայիցն Աստուծոյ Ս. Երուսաղէմի միաբան Կարապետ վրդ. Կեսարու Էվէրէկ գեղջէ Մ. Կարապետ Դալֆայեան քիւրքճի զատէ: Կր ձեռնադրուի եպիսկոպոս 1851ին. Առաջնորդ Սերասաիոյ 1851—69. կրկին ուխտաւորութեամբ կ'այցելէ Ս. Յակոբի վանքը (1857—9): 1869էն յետոյ կը մնայ Ս. Նշանի վանքին մէջ իրրև վանահայր: Կր վախճանի 1877ին: (Աղաւնունի՝ «Միաբան» էջ 153, անդրագոյն սեղեկութեանց համար «Ե՛ս Ալլոյանեանի «Հայ Կեսարիա»ն էջ 2027):

ԳԱԼՖԱՅԵԱՆ Կարապետ, հօրեղբայր Մկրտիչ Դալֆայեանի, նշանաւոր ոսկերիչ՝ Ի Կ. Պոլիս, ծնած է Կեսարիա 1837ին, թոռն է անուանի Մկրտիչ Դալֆայեան ոսկերիչին, սա ևս հրաշայի գործեր կ'արտադրէ և կը վախճանի 1908ին: (Թեոդիկ՝ «Ամ. Տար.» 1915 էջ 288):

ԳԱԼՖԱՅԵԱՆ Մամբէ եպ. տե՛ս ՅԱԻԵԼՈՒԱՅԵՐ: ԳԱԼՖԱՅԵԱՆ Միհրան Խան, պարսկական հիւպատոս, կը վախճանի 1913 Դեկտ. 3ին, Եզիպտահայ ծանօթ դէմք. մասնակցած է բարխսրական և ազգային մարմիններու: (Թեոդիկ՝ «Ամ. Տար.» 1915 էջ 391):

ԳԱԼՖԱՅԵԱՆ Մկրտիչ, քանդակագործ, ծնած Կեսարիա 1838ին ոսկերիչներու սերունդի մը զաւակը և որդին քանդակիչի մը՝ Հաճի Կարապետ Դալֆայեանի որ աստնօք Սուլթան Մահմուտի ծառայած էր և մեծ հռչակ ունէր իր ծննդավայրին մէջ: Իր հօրմէն կը սորվի արհեստը, որ հմտանալով անոր այնպիսի ընդունակութիւն մը ցոյց կու տայ որ 12 տարեկան, Էսնաօը զայն կը հռչակէ վարպետ: Յետոյ ծնողքին հետ Կեսարիայէն կ'երթայ Տրապիզոն, ուրկէ կ'անցնին Կ. Պոլիս (1848), ուրկէ կրկին կը դառնայ Տրապիզոն: Յետոյ կ'անցնի Էջմիածին (1851) ուր հրաւիրուած էր Ներսէս կթղ. Աշտարակեցիէն եկեղեցական անօթներու շինութեան համար: Շատ մը տեղեր պատելէ ետք 1871ին վերջնականապէս կը հաստատուի Կ. Պոլիս, ուր կը պնտահատուի իր շինած այն մեծ ժամացոյցին համար՝ որ տասը տարին անգամ մը լարուելով կը բանէր. 1873ին Վիեննա կ'երթայ տեղւոյն ցուցահանդէսին մասնակցելու. համար, ուրկէ կը փախչի Թրիեստի ճամբով դէպի Պոլիս, համաճարակի մը պատճառաւ: Յետոյ կ'երթայ Բարիդ, յետոյ Երուսաղէմ, կրկին Կովկաս (1894ին) ուր կը մնայ մինչև մահը 1908: (Ալլոյանեան՝ «Հայ Կեսարիա» էջ 1542):

ԳԱԼՖԱՅԵԱՆ Յարութիւն, Դաշնակցական կորովի գործիչ, ծնած Թալաս 1870ին: 1886ին Պոլիս կ'երթայ, կը հետևի իրաւագիտութեան և կ'ըլլայ փաստաբան: 1896ին Պուլկարիա կ'անցնի ուր կ'ըլլայ Դաշնակցական գործիչ, կը վտարուի կառավարութենէն: Եզիպտոս և Ժընեւ ապրելէ ետք 1908ի սահմանադրութենէն ետք Պոլիս կ'երթայ, ուր քաղաքապետական քննիչ կը կարգուի, ապա Մաքրիքէոյի թաղապետական նախագահ: 1915ին կը նահատակուի քսոսրին մէջ: (Թեոդիկ՝ «Յուշարձան» էջ 34):

ԳԱԼՖԱՅԵԱՆ Յարութիւն, բժիշկ, ծնած 1870ին Այնթապ. ուր ազգային վարժարանի շրջանը աւարտելէ ետք Ամերիկեան Կեդր. Թուրքիոյ Գո-



լէճը կ'անցնի, ուրկէ շրջանաւարտ 1890ին: Պէյ-րութ անցնելով՝ հոն Ամերիկեան բժշկական համալսարանի 5 տարիները լրացնելէ ետք Ամերիկա կ'երթայ Պալիթիմօրի բժշկ. համալսարանի դասընթացքին կը հետևի: 1899ին հայրենիք կը վերադառնայ և Թուրքիոյ այլևայլ քաղաքներու մէջ իր արհեստը կը կիրարկէ և 1922ին Հայէս կը հաստատուի ուր 1935 Յունիսին կը վախճանի: (Տոբ. Մեղպուրեան «Նոր Լուր» 1935 Օգ. 7, Տես նաև «Հ. Հոչնակ», 1935 էջ 104):

ԳԱԼ ՖԱՅԵԱՆ ՆՇԱՆ ԽԱՆ, հողագէտ, ծնած է Պոլիս 1865ին (ըստ այոց՝ 1868ին): Պէրպէրեան վարժարանի անդրանիկ ընթացաւարտներէն (1882) և ասոնց ալ առաջինը:

Մասնագիտութիւնը ձեռք բերած է Ֆրանսայի Մօնրէլիէ Երկր. Բարձրագոյն Վարժարանին մէջ: 1886ին Մօնրէլիէի և դարձեալ նոյն տարուան մէջ Մարսիլիոյ երկրագ. ցուցահանդէսներուն գօմիսէրի օգնական: Մասնագիտութիւնը աւարտելէ վերջը, ասորիւկէտի չափ stage ըրած, Saumarի մօտ ազարակի մը մէջ:

Պոլիս վերադարձին, անդամակցած այն Յանձնաժողովին որ իզմիր ղրկուեցաւ, որթալուիճի աւերումները գնահատելու, վարակեալ այգեստանաց քարտէսը պատրաստելու և բնաջնջումի գիտական միջոցները գործադրելու համար:

Պոլիս, Ալէմտաղի մօտ պալլրանիի և Պէօյիւք Տէրէի մօտ պլիլեչիֆնիի ազարակաց տեսութիւնը վարած, առաջնոյն մէջ իրմէ առաջ պաշտօնավարած են հողագէտ Երամ էֆ. և Յակոբ Զաքարեան, երկուքն ալ այժմ մեռած:

1890ին, պատկան նախարարութեան կողմանէ Ֆրանսա ղրկուած, կարգ մը գիտական գործիքներ և հաւաքածոներ գնելու համար:

1890ին վերջերը, Սելանիկի երկր. գործնական վարժարանին դեր-տնօրէն և սիպար-ազարակից տեսուչ անուանուած մինչև 1897:

1897ին, Պրուսայի Երկր. վարժարանին և Շերամարուժական կայանին տնօրէն անուանուած:

Պոլսոյ մէջ 2 տարի հրատարակուած Թրքերէն Բեսիլիի գրա՛ր կազեքասիին խմբագրապետութիւնը վարած հնգ. հողագէտ Հայկազուն Պէկեանի հետ:

1907ին, Կարին մեկնած, Սանասարեան վարժարանի իբր ներքին տեսուչ և գիւղատնտեսութեան ուսուցիչ:

1908ին, Երկր. նախարարութեան մէջ գիտական ճիւղին օգնական և պետ միեւնոյն առեն Հալալի Երկր. Բարձրագոյն վարժարանին մէջ, Երկրագործութեան և Շերամարուժութեան ուսուցիչ:

Օսմ. Սահմանադրութեան հռչակումէն վերջը՝ յաջողած է 12 պատանիներ մէկ անգամէն ընդունիլ տալ Հալալի Երկր. Բարձ. Վարժարանը (4 հոգի), Պրուսայի Երկր. Գործնական Վարժ. (4 հոգի), և Պոլսոյ Անասնարուժական Բարձր. Վարժարանը (4 հոգի), Գուրեան պատրիարքին օրովը. այդ պատանիներուն ընտրութիւնը կատարուած Ուսումնական Խորհուրդին կողմէ, իր ալ մասնակցութեամբ. յետոյ վարժարանաց կանոնադրութիւնը կը տրամադրէ որ, բոլորին համար ալ մտից մրցման քննութիւններ տեղի ունենան. այն ժամանակ վարչապետ Հիլմի փաշայի մօտ կատարած անձնական ղիմումներուն շնորհիւ, այդ պատանիները առանց մրցման քննութեան, ընդունուեցան վարչապետին մէկ հրամանագրովը, ուղղեալ առ Երկր. նախարարութեան. այդ դպրոցներուն հիմնարկութենէն ի վեր, հմանօրինակ դէպք մը չէր պատահած:

Ընդունուած հայ պատանիները յաջողութեամբ աւարտեցին իրենց մասնագիտութիւնը, բացի երկուքէն որոնք չյաջողեցան աւարտական քննութեանց մէջ:

1918ին, Երկրագ. ընդհ. քննիչ պահելով հանդերձ Հալալիի դասախօսութիւնը: 1924ին ընտանիքով Յունաստան անցած և տարի մը պաշտօնավարած հոն, իբր Շերամարուժական քննիչ: 1925ին, Լիրանանի և Սուրիոյ մէջ գիտական ճամբորդութիւններ կատարած: 1927ին Պարսկաստան հրա՛իրուած, Վեհ. Շահին Մազանտարանի կալուածներուն գիտական ճիւղին իբր պետ:

Այդ անգամ ալ Պարսկաստանի Շերամարուժութեան վարչութեան մէջ, գիտական խորհրդական (conseiller technique):

Պ. Ն. Գալֆեան բացի իր պետական պաշտօներէն ունեցած է նաև ազգ. կեանք: Այսպէս Պոլսոյ մէջ, Պէրպէրեան, Նիկողոսեան վարժարաններու և Ազգ. Որբանոցի մէջ գիւղատնտեսութեան ուսուցիչ եղած Տոքթ. Տաղաւարեանի հետ:



ԳԱԼ ՖԱՅԵԱՆ ՆՇԱՆ



«Պէտրպէրեան Սանուց» և «Գիւղատնտեսական Միութեան» հիմնադիր անդամ և վարչական ժողովի ատենապետ:

Պատրիարքարանի Ելեւմտից Հոգարարձութեան անգամ, Ս. Կարապետ եկեղեցւոյ թաղականութեան խնամատարութեան Սկիւտարի մասնաճիւղին և Անկախութեան Փոխառութեան Յանձնաժողովոյ Սկիւտարի բաժնի ատենապետ:

1915 Ապրիլին, աքսորուած՝ հայ մտաւորականութեանց հետ Չանդըրը, Կոմիտաս վարդապետի, Բիւզանդ Քէչեանի, Պալաքեանի և ուրիշներու հետ, իրր հիմնադիրը «Պէտրպէրեան Սանուց Միութեան» և քիչ չատ ազգ. գործերու խառնուած:

Պ. Գալֆանի գիտական ուսումնասիրութիւնները. — Պոսոյ Բեսիմի գրաւթ կազերասիին խրվ. բագրապետ, հայ և թուրք մամուլին մէջ գիւղատնտեսական յօդուածներ, թրքերէն պրակներ երկրագործ. և շերամար. մասին:

Գիւղատնտեսութեան վրայ երկնատոր դասընթացք պատկերազարդ (ձեռագիր):

Պ. Գալֆանի ճարտնի Շերամարուծական Միութեան պատուակայ և Ֆրանսայի Երկրագ. Ակադեմիի թղթակից անդամ է: Ան ունի Ֆրանսայէն՝ մէրիք ակրիֆոլի պատուանշան (սպայութեան աստիճան), «Պանուցութեան տիպոգրատացած է Իրանի Շահէն. (Մակարեան՝ «Յուշագիրք էջ 156):

Գալֆայեան որ Թէհրան գացած էր տեղւոյն երկրագործական պետական վարժարանի ուսուցչութեան պաշտօնով՝ 1933 Յունուար 18ին կը մեռնի: («Վեանի Էս Արուես» 1934 էջ 139, Տե՛ս Գալֆ. Թեոդիկ՝ «Ամ. Տար.» 1910 էջ 318):

ԳԱԼՖԱՅԵԱՆ ՊԵՏՐՈՍ, Հնչակեան գործիչ, ծն. 1868ին Խարբերդի Իլմէ գիւղը, որդեգիր Պալաթու Արիստակէս քհ. Գալֆայեանի:

ԳԱԼՖԱՅԵԱՆ ՍԱՂԻ, ծնած Պոլիս 1908ին Կեսարացի ծնողքէ, կանուխէն Ամերիկա գացած, ուր առած է իր նախնական կրթութիւնը Ամերիկեան վարժարաններուն մէջ, մասնաւորապէս Պոսթընի գործնական արուեստից վարժարանին մէջ, իր մասնագիտութիւնն է առեւտրական արուեստագիտութիւն որով կը զբաղի հիմա: (Ալպոյանեան՝ «Հայ Կեսարիա» էջ 2229):

ԳԱԼՖԱՅԵԱՆ ՄԵՐՈՒՏԻ, մայրապետ, Արրուհի մայրապետ Նշան Գալֆայեան ծնած է Գարթալի մէջ 1822 Փետր. 17ին:

Հայրն էր բնիկ Բալուցի՝ Զօրպաճի Նշան աղա Գալֆայեան որ նոյն գիւղին մէջ ամէնուհէրն ու համակրանքը կը վայելէր: Արրուհի որ Նշան աղայի վեց զաւակներուն անդրանիկն էր, իր

տասներկու տարեկան հասակին մէջ հայրը կորսնցնելու դժբախտութիւնը ունեցաւ: Արրուհիի մայրը կ'որոշէ ամուսնացնել իր աղջիկը, սակայն ինք կ'ընդիմանայ, ի վերջոյ ժանտախտէ կը բռնուի 1837ին որու վրայ մայրը կ'որոշէ իր աղջկան փափաքը իրադործելու Իրենց ունեցածը ծախելով Գարթալէն կու գան հաստատուիլ իրենց հօրեղորորդւոյն Ազաթոն Գրիգոր էֆ.ի տունը ուր 1840ին Արրուհի Գալֆայեան ստաջին անգամ հանգիստաւոր ուխտով կը հազնի մայրապետութեան սե վերարկուն և կուսական քողով կը ծածկէ իր տասնեութ տարեկան ծաղիկ երիտասարդութիւնը:



ՄԵՐՈՒՏԻ ՄԱՅՐԱՊԵՏ ԳԱԼՖԱՅԵԱՆ

Արրուհի մայրապետ օյալի, Տիվալի և սրմախ վարպետ ըլլալով ոչ միայն իր ընտանիքին նեցուկը կ'ըլլայ այլ Խազգիւղի մէջ աուն մըն ալ կը գնէ. հոն իր մայրը կը մեռնի առանց բախտն ունենալու տեսնել իր աղջկան մեծագործութիւնը: 1850ին Խազգիւղի մէջ արհեստանոց մը կը բանայ և կը ժողովէ երկսեռ աշակերտներ, որոնց ամենայն փափաքով կ'ուսուցանէ իր արհեստը: Իր հասուցած աշակերտներէն շատերը ողջ են տակային և նոյն իսկ Մեծ Շուկային մէջ ալ քանի մը ականաւոր վարպետներ կան որոնք հպարտ կը զգան ինքզինքնին «Գարթալցի մայրապետին աշակերտ կոչուելով»:

Արրուհի մայրապետ հանրածանօթ արուեստագիտուհի մըն էր Պոսոյ և նոյնիսկ Եւրոպացւոց առջև: 1868ին Անվերսի Արուեստահանդէսին. Մայրապետ՝ կը զրկէ մեծաքսեայ կերպասի վրայ արեւելեան ճաշակով բանուած ոսկեթել և նըրբարուեստ բարձ մը և վերմակ մը, որոնք գնահատուելով ձեռարուեստի առաջին կարգի պատուոյ վկայականով կը վարձատրուին:

Վեց անգամ Եգիպտոս հրաւիրուած է Իպրանիմ և Իսմայիլ փաշաներու խտրութեան ժամանակ՝ իր արհեստին սքանչելիքներով հարսանեկան հանդէսներու առթիւ՝ իշխանագուն տիկիներու նուրբ ճաշակը գոհացնելու համար: Հոնկէ Եու-



սուֆեան Գէորգ պէյի կնոջ հետ միասին կ'ուղեւորի Իտալիա 1859ին ու կ'այցելէ Նաբոլի. Հոտմ, Ֆիորէնցա և Միլան, յաջորդ տարին երկու անգամ Երուսաղէմ ուխտի կ'երթայ և վերադարձին կը հրաւիրուի Աթէնք, Յունաստանի թագուհւոյն և անոր պալատական տիկիններու յունական ճաշակով մագէ օյա և ձեռագործի զարդեր պատրաստելու համար, և անկէ կը վերադառնայ Պոլիս:

1865 Յունիսին Պոլիս սարսափի մէջ էր, քուլէրան Միջագետքի և Արարիոյ մէջ իր անթիւ և անուրի կոտորածներով յագեցած անդիմադրելի հոսանքով մը կ'արշաւէ դէպի Փոքր Ասիա ուր 35 օրուան մէջ ամէն կողմ մահ և աւեր սփռելէ ետք կը հասնի Պոլիս:

Ամբողջ երեք ամիս կը տեւէ մահուան արհաւիրքը և քուլէրան հազարաւոր կեանքեր խելի վերջ՝ Սեպտեմբրի վերջերը ալ կը դադրի Պոլսոյ մէջ, իր ետև ձգելով որբերու, անտէր այրիներու և որդեգուրկ ծնողներու երեմակ մը:

Պատուհասին զո՞ գացած աղքատիկ ծնողաց բազմաթիւ որբեր տուններու անկիւնները և Ս. Ստեփաննոս եկեղեցւոյ սանդուխներուն վրայ կը կենային, անպաշտպան մանկուհիներ՝ իրենց բազուկները անցորդին կարկառելով հաց կը մուրային, Խասգիւղի հարուստներուն շատերը պատուհասին սկզբնաւորութեան այլևայլ տեղեր փախած, մնացեալներն ալ անտարբեր կը գտնուէին:

Շահնազարեանց որ հիւանդ վիճակի մէջ Տ. Գէորգ Արծրունիի տունը կը գտնուէր, վարժապետեան Ներսէս եպիսկոպոսի և Տէր Գէորգի ներկայութեամբ խորհուրդ կու տայ մայրապետին որ Եւրոպայի մայրապետներուն նման աւելի գործնական և մարդասիրակն եղանակաւ ապացուցանէ իր նուիրական կոչումը:

Մայրապետը կը պատասխանէ թէ «ուսում չունիմ, որ տղայ դաստիարակեմ, հարստութիւն չունիմ որ նիւթական մեծ օգնութիւն մը ընեմ, բայց ինչ որ Աստուած պարզեւած է այն է—բարի կամք և առողջութիւն — սիրայօժար կը նուիրուիմ ազգիս անտէր որոնց, հոս հանդիսաւորապէս ուխտելով ձեր երեք հայրերուդ առջև մինչև մահս՝ խոստմանս հաւատարիմ մնալ»:

Այս տեսակցութենէն յետոյ Սրբուհի մայրապետ գործի կը ձեռնարկէ և 15 օրուան մէջ 2էն 12 տարեկան 17 անտէրունջ որբ աղջիկներ կը ժողուէ որոնց չորսը Չըքսալընի թաղը ախոռի մը մէջէն և եօթը Ս. Ստեփաննոս եկեղեցւոյ սան-

դուխներուն վրայէն և մնացեալները Պոլսոյ դասագան կողմերէն:

Այսպէսով 1866ին Գալֆայեան որբանոցը կը հաստատուի:

Սրբուհի մայրապետ գերմարդկային ճիգերով պահեց իր որբանոցը և 1871ին Խասգիւղի մէջ Տագէսեանց ընդարձակ տունը գնեց, 1870ին հաց և միս կապուեցաւ կառավարութենէն որը Օսմ. Սահմանադրութենէն ետք դադրած է:

Սոյն հաստատութիւնը ցարդ 200է աւելի որբեր պատասպարած և ամուսնացուցած է և մէկ մասն ալ վարժուհի նուիրած է ազգին, և անոնց իւրաքանչիւրը ճշմարիտ տանտիկիններ և պարկեշտ մայրեր ու ազգանուէր վարժուհիներ եղած են:

1871 Մայիս 1ին Սրբուհի մայրապետ կը մեկնի Էջմիածին ներկայ գտնուելու համար Միւսոնորհնութեան:

Սրբուհի մայրապետ մինչև վերջ նոյն անխնջ գործունէութիւնը ունեցած է և ամէն տարի կարողացած է հողայ տարեկան 7—800 ռակի ծախսը: 1889 Յուլիս 4ին վախճանած է ազգին կտակելով իր որբանոցը, անոր կալուածները եւ գոյքերը Մարմինը ամփոփուած է Գալֆայեան Որբանոցի մատուռին մէջ:

Հիմա կը յիշեմ վերջին վայրկեանները ողբացեալ Սրբուհի մայրապետին, երբ անկա սննեակի մը անկիւնը հոգի կու տար, վարը աղջիկները լալահառաջ կ'աղօթէին և զգայուն ձայնով և կը մաղթէին հանգիստը մեծանուն կնոջ որ այնքան բարի ու այնքան ներող եղած էր, և նոյն իսկ երբ իր կեանքին մէջ ապտակ մը կերած էր հայէ մը, ուրկէ ողորմութիւն ուղելու գացած էր, ըսած էր քաջարար:

— Այս ապտակը իմ բաժինս է, ո՞ւր է իմ ձագուկներուս բաժինը...

Ու այդ մարդը ստիպուած էր որբերու բաժինը մեծարել առատօրէն:

Քրիստինէ մայրապետին յաջորդը Աղաւնի մայրապետ Քէօսէեան որ իր քրոջ հետ կատարեալ ձեռնհասութեամբ կը կառավարէ Գալֆայեան Որբանոցը, անոնց վերջերս Եգիպտոս և Երուսաղէմ այցելութեան ատեն տեսանք թէ Գալֆայեան Սրբուհիի արժանաւոր յաջորդներն եղած են (Չարդարեան՝ «Յիւսակարան» Գ., սեսնէլ ցաւ «Արձագանգ» 1890 թիւ 20, Աղաւնուհի՝ «Միաբանք էջ 492»):

ԳԲԼՅԱՅԵԱՆ ՈՐԲԱՆՈՅ, հաստատուած Խասգիւղի մէջ 1866ին: Հիմնադիրն եղած է Սրբուհի Մայրապետ Գալֆայեան: 2—10 տարեկան 17



անտէր որբեր հաւաքելով հիմնեց այս որբանոցը։  
 Սրբուհի Գալֆայեանի յաջորդեց Երանուհի Յովհաննէսեան որ մինչև 1902 վարեց իր պաշտօնը, երբ յուզման մը հետեանքով կաթուածահար անկողին ինկաւ։ Ազգային իշխանութեան կարգադրութեամբ ասոր յաջորդեց Բրիտինէ մայրապետ Փափաղեան, որ 1919 նոյեմբեր 26ին մեռաւ, պաշտօնի կոչուեցաւ հանգուցելոյն փոխանորդուհին Աղաւնի Բէօսէեան։


Որբանոցը տուած է շրջանաւարտներ որոնց թիւը ցարդ (1935) կը հասնի 126ի 1933էն է վեր սոյն հաստատութեան մէջ կը պատասպարուին 25—100 սանուհիներ։ («Հ. Կոչնակ» 1935 թ. 36 էջ 734—5)։

ԳԱԼՖԱՅԵԱՆ նկարիչ, կը մեռնի նիւ Եորթի մէջ 1927ին, ընկի Սկիւտարցի, ծնած 1904ին, նիւ Եորթի Նէչընըլ ակադեմիէն վկայուած էր իրրէ նկարիչ։

ԳԱԼՖԱՅԵԱՆ (=Էրֆան) Ռոպէր, Պոլսեցի, շրջանաւարտ 1931ին Ղալաթիոյ Կեդրոնական վարժարանէն, 1934ին Պոլսոյ համալսարանի տարրարանական ճիւղը կ'աւարտէ, եւ մինչեւ 1937 Պոլսոյ քաղաքապետական տարրալուծարանը և Կուրապահ հիւանդանոցի լապօռաթուառը կը պաշտօնավարէ, այդ տարին Ժիւրիի մը առջեւ փալլուէ քննութիւն մը տալով՝ կենսարանական եւ առեւտր. քիմիագէտի առաջին կարգի մասնագէտի վկայականը կը ստանայ («ՆՈՐԱՐ» 3937)։

Եկեղեցին առաքելական եկեղեցիներու կարգը դասեց, հոս գումարուած են շատ ժողովներ, յորոց ոմանց կանոնները ևս հասած են մեղ։

Անգարա հեռուէն հիւանալի և նկարչական դիրք ունի, ամփիթէատրոնի ձևով տարածուած է, 120 մէթր զաշտէն և 920՝ ծովու մակերեւոյթէն բարձր բլրոյ մը՝ արեւելեան, հարաւային եւ արեւմտեան կողմերը, որուն զաղաթին վրայ հանդ-



Գ Ա Ղ Ա Տ Ի Ա

չած է մեծատարած եռապարիսպ բերդը։ Գաղաթիոյ հնութեանց մէջ առաջինը կը համարուի հռչակաւոր Օգոստոսի ամառը, որ ոչ միայն մասամբ կանգուն մնացած որմերու սրբատաշ եւ հաւասարաչափ արժարիտն քարերով, ճարտարապետական ձևովը և զարդերով, այլև ընդարդակ արձանագրութիւններովը, յոյժ հետաքրքրական և թանկագին մնացորդ մըն է հնութեանց յաչս հնախօսներու և պատմաբաններու։ Թուրքերը այս տաճարին Հանի Պէյրամ անուէնը կուտան, մերձակայ համանուն մզկիթի անուամբ, որուն մէջ է Հաճի Պէյրամի շիրիմը և զաղաղը։ Հին արձաններ, խոյակներ, սիւներ և ուրիշ հնութեանց մնացորդներ կը գտնուին քաղաքիս զանազան կողմերը։

ԺԹ. դարու սկիզբը Գաղաթիոյ բնակչութիւնը 40—50000 էր. իսկ 1900ին 30—35 հազար։ Մեծամասնութիւնը կը կազմէին թուրքեր, որոնք ընդհանրապէս պետական գործերով կը զբաղէին։ Բաղժութեան կողմանէ երկրորդ կու զային հայ կաթողիկեայք, որոնց թիւը 10000ի կը հասնէր, և 1850 թուականէն ի վեր ունեցած էին իրենց եպիսկոպոս առաջնորդներ, որոնց մէջ նշանաւոր եղած է Գեր. Անտոն եպ. Շիշմանեան (1850—1862), որուն դամբանը կը գտնուէր մայր եկեղեցւոյ աւազ խորանին կռնակը. այդ եպիսկոպոսին օրով բացուած է կղերանոց մը, որուն մա-

- ԳԱԼՖԱԼՈՒՍ. Ս. Ղալֆալու։
- ԳԱՀԱՐ. Ս. Գարհար։
- ԳԱՀԳԱՀԱ. գետ Գարաճա լեռան մօտ։
- ԳԱՀԻՐԷ. Ս. ՅԱԻԵԼՈՒԱԾՐ։
- ԳԱՂ. հին զղ. Երնջակի մէջ, ժողովուրդը Գեալ կամ Կեալ կը կոչէ. ատենօք մեծ զիւղ եղած է, որոնք Զմիւռնիոյ կողմերը գաղթած են. 1900ին 25 տ. հայ բնակիչ ունէր։
- ԳԱՂԱՏԱՅԿ կամ Գալաւար, հին զղ. Սիւնեաց վայոց-ձոր գաւ. ի։
- ԳԱՂԱՏԻԱ. Անգարա, Անկիւրիա կամ Էնկիւրի, հին երեւելի ու պատմական քաղաք, ներկայիս (1938) մայրաքաղաք Թուրքիոյ, ինչպէս ժամանակաւ մայրաքաղաք եղած է Գաղատիա գաւ. ին. Փոքր Ասիոյ մէջ։
- Գաղատիա նշանաւոր եղած է իրրև քրիստոնեայ քաղաք. Ս. Պողոս գնաց քարոզելու Աւետարանը անթիւ կուռքերով լի քաղաքիս մէջ, և քրիստոնէական ճշմարիտ կրօնքը հոն ունեցաւ իր աղանջաւորները։ Զորրորդ դարու առաջին կիսուն, Ս. Յուլիոս քահանայապետը Գաղատիոյ



սին Գէորգ Փէրոյ Կաղզրացի ուղեւորը գովեստով կը խօսի: Լին ատեն ըուր Հայերը թուրքերէն կը խօսէին. այս կղերանոցի աշակերտները կ'ըլլան ամբողջ քաղաքի հայ հասարակութեան մէջ հայերէն լեզուն մշակողն ու խօսողը: Կաթողիկէ Հայերը չորս եկեղեցի ունէին. Ս. Աստուածածին՝ որ էր մայր եկեղեցին, որուն մօտ կը գտնուէր վայելուչ առաջնորդարանը. միւս եկեղեցիներն էին Ս. Կղեմէս, Ս. Փրկիչ և Ս. Պետրոս Պօղոս: Այս եկեղեցիներու ոմանց մօտ կը գտնուէին տարրական դպրոցներ. կանխաւ կար նաև դաղղիացի Եզինէոս Պօրէէն հաստատուած լեզուաց զըպրոց մը: 1883—4 տարիներու մէջ Յակոբ Գըրմըզեան քահանայի ջանքով բացուեցաւ Որդից Յիսուսի կամ Քառասնից կոչուած վարժարան մը, որ յետոյ պարագաներու բերմամբ ժամանակ մը փակ մնաց:

Լուսաւորչական Հայք խառն կը բնակէին առանձին թաղի մէջ. Կաթողիկեայ Հայոց հետ միասին, որոնց թիւը 3000 էր: Ի հնումն աւելի բազմաթիւ եղած են, այդ պատճառաւ եօթը եկեղեցի ունէին, որոնց անուաններն էին՝ Ս. Նշան, Ս. Սարգիս, Ս. Ստեփանոս, Ս. Կղեմէս կամ Ս. Ուայ, Ս. Լուսաւորիչ, Քառասուն Մանկուէք և Ս. Հոգի: 1900ին 3 եկեղեցի միայն կային, չորսը հիմնայատակ եղած էին կամ կաթողիկէ Հայոց ձեռքը անցած: Այդ երեք եկեղեցիներէն միայն Ս. Նշան և Ս. Ուայ կը գործածուէին: Վերջինս բերդին մէջ կը գտնուէր և եկեղեցւոյս արեւմտեան կողմը գտնուելով Ս. Կղեմէս հայրապետի դերեղմանը՝ կաթողիկէ Հայերն ալ ուխտի կ'երթային:

Լուսաւորչական Հայոց սեփականութիւնն էր Գաղատիոյ հիւսիսակողմը գտնուող Ս. Աստուածածին վանքը (տե՛ս Հայ Հանր. էջ 233), քաղաքէն կէս ժամ հեռու, հոս կը նստէր քաղաքին առաջնորդը, երկու կամ երեք վարդապետներով: (Եփրեկեան՝ «Բնագիտութիւն» էջ 213):

Գաղատիա ընդհ. պատերազմէն հաք Աթաթիւրք Քէմալ փայալի, նոր թուրքիոյ մայրաքաղաքն եղաւ. 1926ի մարդահամարի մը համաձայն 122,700 բնակիչ ունէր, որոնց 239 հայ մեծ մասամբ կաթողիկէ, 6 հոգի միայն կրկօրիէն արձանագրուած:

ԳԱՂԱՏԻԱ. Փոքր Ասիոյ հին գաւառներէն մին, որուն գլխաւոր քաղաքն էր Գաղատիա կամ Անկիւրիա:

ԳԱՂԱՏՈՍԵԱՆ Հ. Գիոցիսիոս, վրդ. Մխիթարեան, ծնած 1870ին Վրաստանի Ուզուրշէթ գիւղը, մատաղ հասակին Ս. Ղազար (Վենետիկ)

գացած և 1892ին քանահայ ձեռնադրուած: Ի սկզբան վանքին մէջ ուսուցչութիւն ըրաւ, աշխատակցեցաւ «Բազմավէպ»ի խմբագրութեան ու յետոյ Ռուսաստան զրկուեցաւ առաքելական պաշտօնով, ուր ընդհանուր պատերազմի ատեն մեծ ծառայութիւն ըրաւ ազգայնոց: Վախճանեցաւ 1931 Յունիս 23ին:

ԳԱՂԱՓԱՐ, պարբերաթերթ s. ՅԱԻԵԼՈՒԱԾՐ.

ԳԱՂՁՄԱՆ s. Կաղզմուան:

ԳԱՂԹԻՔ s. Գեղարկ:

ԳԱՂՂԻԱ s. Ֆրանսա:

ԳԱՂՈՒԹ, «գրական, քաղաքական և հասարակական շարաթաթերթ», տպ. Նոր Նախիջևան, խմբագիր հրատարակիչ՝ Սահակ Մխանիկեան և Ա. Տոմրայեան:

ԳԱՂՈՒԹԻ ՁԱՅՆ, շարաթաթերթ, լոյս տեսաւ Պոքրէշի մէջ 1923ին (5 թիւ միայն) խմբ. Հ. Մ. Պատուրեանի:

ԳԱՂՏԱ, հին գղ. Շիրակի ըստ արձանագրութեանց Բագնայրի:

ԳԱՂՏԱՌԻՃ, կրկին գիւղեր Մեծ և Փոքր, Կարնոյ գո.ի մէջ, երկուքն ալ այլազգարնակ:

ԳԱՄԱԶԻԷԼԻ ՎԱՆՔ, հին վանք Աղձնեաց Գղեղ (Խրզան) գո.ի մէջ, ըստ կոնդակին թագէոս Առաքեալ Ս. Գամաղիէլի գրուելը իր հետ բերած էր և հոս թաղելով՝ վրան վանք շինած: 1900ին մէջը կրօնաւոր չկար:

1397ից գրուած ձեռագրի մը յիշատակարանին համաձայն վանքիս այդ քուականի առաջնորդն եղած է Սեփիանոս միաբան, Մխիթար «հեղահողի»:

ԳԱՄԱՌ ՔԱԹՈՒՊԱ (գրական անունն է Ռափայել Պակակեան) ծնած 1830ին Նոր Նախիջևան, մեռաւ 1892ին: 1854ին ինք Միւսա թիմուրեան և Գէորգ Քանանեան կը սկսին հրատարակել զանազան հայերէն գիրքեր: «Գամառ-Քաթիպա» անուամբ՝ կազմուած իրենց անուանց սկզբնատառերէն (Գ. Մ. Ք. և Ք. Թ. Պ.): Ա. հատորներն էին այրբնարան ու տաղտարան վերջինը կը պարունակէր Մայր Արախիս՝ որ Պատկանեանի ժողովրդականացած անդրանիկ երգն է: Այնուհետև Պատկանեան միւսներէն բաժնուելով՝ իր գրական ծածկանունով ստորագրեց իր գրչի բոլոր արտադրութիւնները: Ունի արձակ, չափաբերուած և երգիծական գրուածքներ. իր բանաստեղծ՝ արժանացած է «ազգային երգիչ» տիտղոսին, իր հայրենաշունչ քերթուածներով: Արձակներէն յիշենք Տիկից և Նաժից, Ես նեանաձ եի ևւայն: Ծննդավայրին բարբառով գրած է խիստ յաջող երգիծականներ, ինչպէս Փոքրուղին Աւար. Բարովագրե, Քաղկեդոն, Գրացից, Վարքեօր, Չախու. Բացաղբար ևւայն: Ռուսահայ







ճամբով Պուտարէշտ հաստատուած է: Իր հասցէն  
graf Tisza Istvan utca 12, Budapest (Hongrie):

ԳԱՄՊՈՒՐԵԱՆ Օր. Եւզիկե, աչկ. Փէշտիմայճեան  
Գրիգոր պատուելիի՝ Օրթագիւղի մէջ (Պոլիս),  
ԺՖ. զարու սկիզբները: քաջ հայկարան. իր ա-  
տենի քարոզիչներու խօսածները բառ առ բառ  
գրելով հասարակութեան կը ներկայացնէր: (Այ-  
վագեան Աբ.՝ Շար. Հայ. Կենսագ. Գ. 147):

ԳԱՄՊՈՒՐԵԱՆ Հայկ. դեղագործ, ծնած Երզնկա  
1888ին, նախնական ուսումը առած տեղւոյն  
ազգ. վարժարանը. 1906ին Իզմիր մեկ  
նած եւ քարափէն  
ուղղակի բանտ ա-  
ռաջնորդուած է. մէկ  
ամիս բանտարկուելէ  
վերջ Տրապիզոն աք-  
սորուած, 1907ին Պո-  
լիս մեկնած, ուր 1908-  
ին դեղագործական հա-  
մայտարանը մտնելով  
1911ին շրջանաւարտ  
կ'ըլլայ: Առաջին առ-  
թիւ Պրուսայի Միխա-  
լիճ գիւղին մէջ դեղա-



ԳԱՄՊՈՒՐԵԱՆ ՀԱՅԿ

բան մը կը բանայ:  
Խաչական և Պալքանեան պատերազմներուն  
թրքական բանակին մէջ առաջին տեղակալի  
պաշտօնով ծառայած է իբր զինուորական դեղա-  
գագործ:

1915ին ընդհանուր պատերազմին, կ'աքորուի,  
սակայն միջոցով մը Բէջօթահիա կ'ապաստանի  
և քանի մը ամիս հոն հիւանդանոցը ձրի կ'աշ-  
խատի: Գործօն բանակի մէջ ծառայելու համար  
Պոլիս կը մեկնի. այնտեղ Կիւլիսանէի հիւանդա-  
նոցը 3 ամիս սթամ տեսնելէ վերջ՝ իբր թնդա-  
նօթածիղի բժիշկ՝ բանակին հետ Պաղատաի ճա-  
կատը կը մեկնի: 1918ի վերջերը Մուսուլի զին-  
ուորական հիւանդանոցը կը ծառայէ, այնտեղի  
հայ դաղթականներու նիւթապէս և բարոյապէս  
կ'օգնէ. վերջը Պաղատա ապաստանելով անդլիա-  
կան քաղաքային հիւանդանոցին մէջ (civil Hos-  
pital) կ'աշխատի իբր դեղագործ, յետոյ Պոլիս կը  
վերադառնայ, անկէ ալ Բարիզ, 1921ին Պրուսայի  
Քիրմասլը դեղարանը կը բանայ և 1922ին Յու-  
նաստան ապաստանելով Տրամա կը հաստատուի  
ուսնենայով սեփական դեղարան Հացեֆ՝ Phar-  
macie H. Kambourian, Mecas Alexandros, Drama  
(Grèce):

ԳԱՄՐԱԿ s. Կեմերեկ:  
ԳԱՄՐԻՍ կամ Գեամրիս, հայարնակ գիւղ Կո-  
տայքի մէջ, Երեանէն 10 վերստ հեռի. բն. 1200,  
եկղ. Ս. Յովհաննէս, 1679ի երկրաշարժէն ետք  
նորոգուած: Մօտը կայ Ս. Աստուածածին մա-  
տուռ մը 1258ին նորոգուած Լիանոս իշխանէն:  
ԳԱՅԱ-ԱՌՏԸ, հայարնակ գղ. Տիգրանակերտի  
1900ին 50 տուն հայ կար, եկղ. Ս. Կարապետ:

ԳԱՅԵԱՆԱՆ Յովհաննէս, բրոֆ. ծնած է 1868-  
ին Մարզուանի Հաճի Բէջօյ աւանը: Ուսած է  
Մարզուանի Անաթոլիա գոյէճը, յետոյ Անգղիոյ  
համալսարաններուն մէջ կատարելագործած բրո-  
ֆէտորի օխտոսով: Գայեանի անունը սերտօրէն  
կապուած է Մարզուանի Անաթոլիա գոյէճին ուր  
պաշտօնավարած է բրոֆ. Կ. Թումայեանի հետ:  
Ինքն ալ մէկն եղած է այն յեղափոխականնե-  
րէն որոնք մահուան դատապարտուեցան Էնկիւ-  
րիի ծանօթ գատավարութեան հետեանքով. սա-  
կայն անգլիական դեսպանատան միջամտութ-  
եամբ կրցաւ ազատ արձակուիլ և արտասահման  
անցնիլ: Բրոֆ. Գայեան եղած է արդիւնաւոր  
ուսուցիչ և հեղինակ դասագրքերու: Հանրային  
կեանքի մէջ ալ համարում կը վայելէր իբրև  
պարկեշտ մարդ: Իր կեանքին մեծ մասը ան-  
ցուցած էր ազգային շրջանակներու մէջ: Եւրո-  
պայի մէջ նախ հետեւեցաւ Էտիմպուրիի անգլ.  
համալսարանին: Իրն է հայ լեզուի դասագրքե-  
րու այն զեղեցիկ շարքը՝ որ լոյս տեսաւ Պոլսոյ  
մէջ Մխիթար Պոնսաղի ծածկանունով: Իր կեան-  
քին վերջին քսան տարիները անցուց Եգիպտոս:  
Բրոֆ. Գայեան 1889ին լոյս կ'ընծայէ Առաջին  
Մրմուռջ բանաստեղծական հատորը: Հոն աչքի  
կը զարնեն Եղիա Տէմիրճիպաշեպի ձօնուած Ի  
զալկահարց, օրկին Տ.



Յ. Պէրպէրեանի նուիր-  
ուած Ի վաղամեռիկ  
Գեղանոյ-Աննիկ ոտա-  
նաւորները, ինչպէս  
նաև Տասնաբանեայն:  
1912ին կը հրատա-  
րակէ Մի՛մուռար գիս  
քառեակներու սիրուն  
հատորը, տարուան  
ամէն մէկ օրուան  
ձօնուած: Գայեան  
կը յայտնուի այս քառ-  
եակներուն մէջ իբրև  
վարպետ տաղաչափ,  
Բրոֆ. ՅՈՎ. Հ. ԳԱՅԵԱՆԱՆ  
ինչպէս նաև զեղեց-  
կին, բարիին, բնութեան ու աշխատանքին սիր



բահար հոգի մը: 1918ին Գահիրէի մէջ, ուսուցչապետ-բանաստեղծ Յովհ. Սէթեանի հետ պատրաստեց հայերէն լեզուի և քերականութեան դասագիրք մը: Հայերէնի թարգմանեց Հէրի Էմբրօսըն Ֆոսթրի Աղոբի նշանակութիւնը. 306 էջ Պոլիս տպուած: Ունի նաև Բաղարան-Գանձարան մը, որուն վրայ աշխատած է 18 տարին ինչպէս նաև ի խաջ հան զնա գրքոյնը, «Կիսանգ և Արուեստ» 1935 էջ 123, Գաբալանեանի «Գրականի Տարեցոյց 1935 էջ 209):

Բրոֆ. Գայտան մեռաւ 1934 Յունիս 17ին: Բրոֆ. Յ. Թ. Գայտանի մանկէն սարի մը ետք, Գանիրէի մէջ յանձնախումբ մը կազմուեցաւ անդամակցութեամբ Հ. Վարդան Խաչերեանի, Վ. Ե. Հ. Համբարձումեանի, Ոսկան պէյ Մարտիկեանի եւն. բրոֆեսորին Գահնարան Բաղարանը յոյս քննադատու համար. նախապէս 32 էջոց նմոյշ մը հրատարակուեցաւ. «Այդ նմոյշները կը գրէ Յ. Աւագեան, ցոյց կու տան թէ բրոֆ. Գայտան գլուխ հանած է աշխատուած գործ մը: Իւրաքանչիւր բառի դէմ գրուած է ոչ միայն նոյնին անմիջական նշանակութիւնը, այլև ուրիշ ինչ առումներով որ գործածուած է: Նոյնիսկ ժողովրդական առումները նշանակուած են հոն: Բաղարանը միանգամայն կարելի է նկատել ամիսփառանք հոմանիւթներու»: «Հ. Կոչնակ» 1935 էջ 948):

ԳԱՅԱՆՈՒ (Ապառաժուտ), Այլազգարնակ գղ. Զանգեզուրի, զետակի մօտ, որուն աջ կողմը կը տեսնուին քարաշէն կամուրջի մը մնացորդները:

ԳԱՅԱՅԵԱՆ Հ. Թ. խմբագիր եղած է (1919—20) «Հայաստանի Կոչնակ»:

ԳԱՅԱ-ԽԱՐԱՊԱ, այլազգարնակ գիւղ ձակատք գո.:

ԳԱՅԱՃՐԳԻԸ, գղ. Լեռնային Կիլիկիոյ:

ԳԱՅԱՊԱՇԻ կամ Ղայաբաթի, հայարնակ գղ. Աղուանից Հսեյի գո. մէջ, շինուած է Արշկան զետակի ձախակողմը. ունի 1600 բն. որոնց նախնիք Խոյ գիւղէն գաղթած են, եկղ. Ս. Ստեփանոս՝ քարաշէն է, ընդարձակ. ունի ներսիսեան ուսումնարան մը. կան հին տապանաքարեր եւ Շինարար անուամբ գղ. մը և եկեղեցոյ աւերակները:

ԳԱՅԱ-ՊԷԿ կամ Ղայաբէկ, հայարնակ գղ. Բագրեւանդի. 1900ին 90 տ. բն. ունէր, խարխուլ եկեղեցիով մը. գերեզմանատունը ունի 10.0ի մօտ տապանաքարեր: Բնակչաց մէկ մասը քուրաքիչն Գորոնե (գայլեր) կ'անուանուին, իբրև թէ Գայլ Վահանէն սերած ըլլան Հոս կայ

ընտիր ձեռնարկը Աւետարան մը ձեռանկարներով զարդարուած:

ԳԱՅԱՊՈՒՌՈՒՆ, լեռնային գո. մէջ. Պայաղի մօտ:

ԳԱՅԱ ՏԷՐԷ, լեռնային վայրց ձորի մէջ:

ԳԱՅԱՂՈՒՆԷՆ, գղ. Տիգրանակերտի Խուլք զաւառակի մէջ. 6 տ. ն Հայեր կ'ապրէին:

ԳԱՅԱՍԻ ԶԻՅՏԱՍԻ կամ Զիւնթիկ, հայարնակ գղ. Շիրակ գո., Գարախաչ լեռան ստորոտը. բն. 400:

ԳԱՅՂՈՒԼԻ ՏԻԻԶՔԷՆՏ հայարնակ գղ. Շիրակայ, ունի 500 բն. մօտը կայ Գաթխարապա աւերակը: Տե՛ս Գազանի:

ԳԱՅԱՆ Սարգիս, բժիշկ, ծնած է Հաճըն 1911ին. որդին է Տէր և Տիկին Վարդելառ Գայտանի, որ 1912ին Պուէնոս Այրէս կը հաստատուի:

1932ին կ'աւարտէ Բիլատալիա երկրորդական վարժարանը, առաջնութիւնը շահելով իր դասարանին մէջ: Այդ տարին յաճախելով Պուէնոս Այրէսի Ատամնարուժական համալսարանը, առաջին տարին յաջող քննութիւն կու տայ գիտական ճիւղին, 1937 մարտին կը ստանայ վկայականը և Բալտոն հիւանդանոցին մէջ պաշտօնավարելով՝ իր բուժարանը կը հաստատէ սեփական բնակարանը



Տնփ. ԳԱՅԱՆ ՍԱՐԳՍԻՍ calle Tuyuti 2391 Val. Alsina, («Արմէնիա» 1937):

ԳԱՅՂԳՃԵԱՆ Մասթոս եպ. միաբան Երուսաղէմայ Ս. Յակոբ վանքին, ծն. Սկիւտար (Կ. Պոլիս) 1861ին. 1873ին Արմաշու վանքը կ'ընդունուի, իսկ 1876ին Երուսաղէմ և մինչև 1880 Ժառանգաւորաց վարժարանին կ'աշակերտի: 1886ին վարդապետ կը ձեռնադրուի, 1895 1901 Պէյրութի տեսուչ, 1905ին Յոպպէ, յետոյ Երուսաղէմ: 1924ին Երուսաղէմի մէջ եպ. կը ձեռնադրուի և 1935 Ապրիլ 11ին կը վախճանի (Սիոն 1935 p. 5):

ԳԱՅՂԳՃԵԱՆ Սիմոն, ազգային բարերար ծնած է 1869ին Սկիւտար. եղբայր Գայրջճեան Մատթէոս եպ.ի, կանուխէն Եգիպտոս հաստատուած: Սիմոն նախնական կրթութիւնը առած է Սկիւտարի Ս. Խաչ ազգ. վարժարանին մէջ, յետոյ պահ մը աշակերտած Պէրպլէրեանի և ժամանակ



մ'ալ հետեւած է Թուրքիոյ պետական Անտառա-  
բանական վարժարանի դասընթացքին 1894ին



ՍԻՄՈՆ ԵՒ ՄԱԹԻՆՏ ԳԱՅԳՃԵԱՆ

Օր. Մաթիլտի հետ (ծն. Արմէնեան) ամուսնանալէ  
եաք եղիպոսու անցնելով Աղեքսանդրիոյ մէջ կը  
հաստատուի և հմուտ ըլլալով եւրոպական լե-  
զուներու և ամբարակալութեան՝ Կիւտիակեանի  
ծխախոտի հաստատութեան մէջ պաշտօն կը  
ստանայ յետոյ Գահիրէ կ'անցնի, ուր զրկանք-  
ներով յի կեանք մը վարած է: Քիչ վերջ սա-  
կայն բախտը կը ժպտի իրեն, իր հաշտոյն առեւ-  
տրական դործ մը կը բանայ և մօտ 30 տարի  
խնայողութեամբ դրամագլուխ մը կը շինէ, ո-  
րուն մեծ մասը 4000 անգլիական ոսկի, 1937ի  
սկիզբները կը նուիրէ Սոսյ կաթողիկոսական Ա-  
թոռին, անով զնելու համար Անթիլիասի կալ-  
ուածները ն. Ս. Սահակ կթղ. 1937 Մայիսին  
օրհնութեան կոնդակ մը կը զրէ Աղգալին բա-  
րերար Ս. Գայրգճեանի որ 1938 Փետր. 21ին յան-  
կարձամահ կ'ըլլայ Հելիոպոլսոյ իր անձնակալ,  
բնակարանին մէջ:

ԳԱՅԵԱՆԷ, Սրբուհի, խնամակալ Ս. Հռիփսի-  
մէի որ Տրդատ Թգ. ի օրով Վաղարշապատի մէջ  
նահատակուեցաւ. Հայ եկեղեցին կը տօնէ կամենա-  
սուրբ Երրորդութեան յաջորդ երեքշաբթի օրը:

ԳԱՅԵԱՆԷ (ս.) վանք Այրարատայ Արագածոտն  
գաւ. մէջ, հիմնուած Ս. Գրիգոր Լուսաւորչի օ-  
րով: Վերջին երկու դարերու ընթացքին վանքս  
էջմիածնայ կաթողիկոսներու գերեզմանն եղած  
է: Բարամեան Վահան վրդ. ի (տե՛ս) օրով վանքս  
վերանորոգուեցաւ և պայծառացաւ, հոս տպուի  
սկսաւ «Դպրոց» ամսաթերթը: Տե՛ս ՅԱԻԵՆՈՒԱՍԻՐ:

ԳԱՅԻԱՆԵԱՆՅ աղջկանց վարժարան, 1869ին  
Թիֆլիսի մէջ կը բացուի:

ԳԱՅԻՆԼԻ կամ Գայրնլար, գղ. Ստորին Բասենի,  
համանուն գետակին մօտ, ուր 1829ին տեղի ու-  
նեցած է Ռուս-թուրք պատերազմը:

ԳԱՅԻ, գետ, որ սկիզբ կ'առնու Փոքր Հայոց  
մէջ, որուն Յոյները Լիգոս կ'ըսեն, որ Գայլ կը  
նշանակէ. գետս կ'անցնի Եկեղեցաց գո. և կը  
միանայ Եփրատի հետ: Աղ-թանգեղոս կը յի-  
շատակէ Գայլ գետը: Այլագգիք Չարսազ սու կը  
կոչեն համանուն լեռան ստորտուն ըրկտիլուն հա-  
մար: Տե՛ս Չապ-սու:

ԳԱՅԻ Վահան, մեր երեւելի քաջ Մամիկոն-  
եան իշխաններէն մին որ Տարօնի մէջ նշանա-  
ւոր եղած է իր պարսից դէմ տարած յաղթու-  
թիւններով՝ եօթերորդ դարու սկիզբը: Մուշեղ  
Մամիկոնեան 604ին իրեն կանչելով Գայլ Վա-  
հանը՝ անոր յանձնեց Տարօնի իշխանութիւնը և  
կալուածները: Գայլ Վահան իր ճարպիկութեամբ  
Պարսից Խոսրով Բ. Թէ. ին քեռորդոյն Միհրա-  
նայ բանակը կոտորեց. յետոյ սպաննեց նաև Միհ-  
րանը և անոր զօրաց զգեստները իր զինուորնե-  
րուն հազցուց և ինքն այ Միհրանը ձեռնալով՝  
նամակաւ իրեն կանչեց Պարսից միւս զօրավարը  
Վարչիր, սա երբ Վահանայ վրանը մտաւ Վա-  
հան հրամայեց որ զինքը կապեն և ձեռնով  
սպաննեն: Վարչիր աղաչեց որ կեանքին խնայէ,  
— պիտի խնայեմ, ըսաւ Վահան, եթէ զօրապե-  
տիդ նամակ մը գրես որ հաղար զօրքով քեզի  
օգնութեան հասնի: Վարչիր ստիպուած ստո-  
րագրեց այդ թուղթը: Եւ երբ Պարսից զօրապե-  
տը հազար զինուորով եկաւ ու Վահանի վրանը  
մտաւ իբրև Վարչիրի՝ Վահան խկոյն սպաննեց  
զինքը և յետոյ Վարչիրը Խոսրով Բ. զայրացած  
605ին շատ մը զօրքով Վախտանկը զրկեց Վա-  
հանի վրայ, նոյնպէս պարտուեցաւ, սակայն այդ  
տարին (606) Գայլ Վահան հիւանդանալով մե-  
ռաւ և թաղուեցաւ Գլակայ վանքին մէջ: Իրեն  
յաջորդեց որդին Սմբատ:

ԳԱՅԻԱԳՈՄ, կը յիշուի Վասպուրականի մէջ,  
Պաշգայէի հարաւակողմը:

ԳԱՅԻԱԶՕՐ s. Գայլասար:  
ԳԱՅԻԱՎԱԼ, հին գղ. Ճահուկ գո. ի մէջ. կը  
յիշուի նաև Գայլակալի ջուր, որ անշուշտ գիւ-  
ղիս քով գտնուող վտակ մը էր:

ԳԱՅԻԱԿԵՐԵԱՆ Թէ Գառնակերեան Յովնանէս  
Արքեպ. միաբան էջմիածնայ, կը յիշուի 1814ին:  
(Այլագեան՝ «Շար. Հայ Կեան.» Ա. էջ 131):

ԳԱՅԻԱՀՈՎԻՏ s. Քեղիվիւտ:  
ԳԱՅԻԱՌԻՃ. կը յիշուի Երզնկայի մէջ:  
ԳԱՅԻԱՏՈՒ կամ Գայլասուայ ձովակ, ի՞ճ՝ որ կը  
գտնուի Կոզովիտ գո. ին մէջ. բաւական մեծ է,



մեր բնիկ աշխարհի շարժող լիճն է. ծովէն 2237 մէթր բարձր, շրջապատն է 20 մղոն: Զուրբ անուշ է և մէջի ձուկը առատ է, այդ պատճառաւ Պալըզ-կիօլ (Զկալիճ) կը կոչուի. ունի կղզեակ մը որ մենաստան մը եղած կը կտրծուի:

ԳԱՅԼԱՏՈՒՍ. քղ. յիշուած Սերէոսէն վերոյիշեալ ծովակին մօտ: Խոսրով Ապրուէղ պարսիկը Բիւզանդացւոց դէմ մղած պատերազմի ատեն նուաճեր է քաղաքս:

ԳԱՅԼԳԵՏ կամ Բեյլիք, դիւղաքաղաք կիւմիւլիսանէ գա.ի մէջ. բն. թուրք. հայ, յսյն: Հայերը 1900ին 50 տուն էին, եկղ. Ս. Սարգիս. նշանաւոր է բլուրին վրայի Ս. Գրիգոր Լուսաւորչի կոթողը:

ԳԱՅԼԳՈՄ, գղ. Տայոց Օլթի գա.ի մէջ:

ԳԱՅԼԵՁՈՐ, Գայլիձոր կամ Գլաձոր, հոչակաւոր վանք Սիւնեաց Վայոց-ձոր գա.ի մէջ, 1291ի յիշատակագիր մը Աղբիւրց վանք ևս կը կոչէ: Վանքիս նշանաւոր առաջնորդն եղած է Եսայի վրդ. Նշեցի (1284—1338), յաջորդը՝ Ներսէս վ. Մշեցի. Եկեղեցին կը կոչուէր Ս. Ստեփանոս: 1318ի յիշատակագիր մը Յակոբ Թագորցի՝ երկրորդ Աթէնք կը կոչէ վանքս, ուր կայ կ'ըսէ դամբարան Ս. վարդապետին Ներսէսի: Տե՛ս ՅԱԻԵԼՈՒԱՅՐ ևս:

ԳԱՅԼԵՁՈՐ կամ Գլեձոր, այսպէս կոչուած է Շիրակի մէջ ձորակը: Այս ձորակը տանող դուռնալ կը կոչուէր Գուռն Գայլեձորոյ:

ԳԱՅԼԻ կամ Բեյլի, հայաբնակ գղ. Խարբերդի, 1900ին ունէր 32 տուն հայ բնակիչ, եկղ. Ս. Կիրակոս:

ԳԱՅԼՈՅ ՎԱՆՔ, Սիւնեաց Ծղուկ գա.ի մէջ:

ԳԱՅԼՈՒ ՎԱՆՔ, s. Գալու անապատ:

ԳԱՅՊՈՅ կամ Կայպոյ, Կիլիկիոյ լեռներէն մին:

ԳԱՅՍԷՐԵԱՆ Յովնանէս Գեղիս. կրտսեր եզրայր Կեսարացի Գասպարի և Գրիգորի որոնք Պոլսոյ մէջ ժթ. դարու վերջերը տպարան և գրատուն հիմնած էին: Յովնանէս ծնած է Կեսարիա 1868ին և 1879ին Պոլիս երթալով՝ եղած է լրագրի ցրուիչ, ապա գրավաճառ և հրատարակիչ շատ մը թուրքերէն թերթերու:

Յովնանէս Գասպարեան յաջորդարար Գասիմի, Եր. Տէր Անդրէասեանի և Յակոբ Տէր Յակոբեանի խմբագրութեամբ ծաղկեցուցած է Մանգուսէն իբր յողովրդական օրաթերթ: Գասպարեանի տպարանէն լոյս տեսած են նաև քանի մը գրքեր: Մեռաւ 1924 Նոյ. 9ին: (Ալպոյանեան՝ «Հայ Կեսարիա» 2239):

ԳԱՅՍԷՐԻ, Գայսերիէ տե՛ս Կեսարիա:

ԳԱՅՍԷՐԼԵԱՆ Գեորգ, իրաւագէտ, շրջանաւարտ Կ. Պոլսոյ համալսարանէն 1912ին:

ԳԱՅՎԷՃԵԱՆ Վահրամ, նկարիչ, ծնած է Ախալցխա 1884ին. նախ ծննդավայրի քաղաքային դպրոցը, յետոյ Մոսկուայի Լազարեան ճեմարանը կ'ուսանի ու կ'աւարտէ 1901ին, անկից կ'անցնի Մոսկուայի համալսարանը բժշկութիւն և իրաւաբանութիւն սորվելու: Կը մասնակցի նաև Գեղարուեստական դպրոցի կոնկուրսային քննութեան և յայտնի նկարիչ Սերովի ուշադրութեան պռարկայ կ'ըլլայ և կ'ընդունուի Գեղարուեստական դպրոցը, որը աւարտելէ ետք կ'անցնի Երեւան, ուր Գեղարուեստական սեկսիֆական դպրոցին վարիչ կը կարգուի և ուսուցչութիւն կ'ընէ: Յաջող նկարներն են Մոսկուայի փողոցը, Ախալցխայի Հրեաներու բաղը, Իսպանուհին բեմի վրայ: Գայվէճեան իր նիւթերը հիմա կը վերցնէ Հայաստանի կեանքէն: (Արամ Երեմեան՝ «Անահիտ 1932 1-2, էջ 27, «Կոչնակ» 1937 p. 22 էջ 534):

ԳԱՅՔՈՒԼԻ s. Ապոց:

ԳԱՆԱՄԵԼԼԱ s. Գարամելլա:

ԳԱՆԱՏԱ, Հիւսիսային Ամերիկայի ընդարձակ և սակաւարնակ պետութիւններէն մին. ուր Հարլեր գաղթած են աւելի ընդհ. պատերազմէն ետք և Բնիկներու վրայ լաւ տպաւորութիւն ձգած:

Այս 9 միլիոն բնակիչ ունեցող փոքրիկ Գանատան հայանպատ գործունէութեանց երկայն շարք մը ունեցած է: Անոր հայանպատ նուիրատուութիւններու քանակը 2 միլիոն տոլարի կը հասնի: Անոր հայասիրութեան կոթողներէն մին ալ այն է որ 120 որբեր ընդունած ու որդեկրած է և 8 տարի զանոնք խնամած:

Հայերը Գանատա գաղթած են 1896էն ետք, առաջին եկուորները եղած են պ. Լեւոն Պապան և իր փեսան Պօղոս Գուրեան — Պրուսացիներ — որոնք Թօրօնթոյ քաղաքին մէջ հաստատուած են:

Գանատայի ամբողջ հայութեան թիւը 2500էն անդին չ'անցնիր, որոնք Բղեղիներ, Մշեցիներ, Կարնեցիներ, Վանեցիներ ևւն են: Այս գաղթականներուն մեծագոյն մասը, իբր 1700 հոգիներ կը բնակին Անթէրիօ նահանգին Թօրանթօ, Հէմիլթըն, Կօլթ, Կուէլթ, Պրէնթֆըրտ, Սէնթ Քէթըրին եւայլն քաղաքներու մէջ:

Ընդհ. պատերազմէն ետք Գանատական Հայանպատ Ընկերութիւն մը կազմուեցաւ, որուն վերին հսկողութեան ներքե էր ձորճ. Թառնի Հայ տղայոց ազարակատունը, հիմնուած 1916ին, Գանատայի Հայաստաններու կողմէ, որուն միակ հայ անդամն էր Թօրօնթոյաբնակ Լեւոն Պապան, որը ընկերութեան հիմնադիրներէն մին եղած է



և իր տիկնոջ հետ գործօն դեր ունեցած՝ նպաստամատոյցի գործունէութեանց մէջ:

ԳԱՆԹԱՐԵԱՆ Հ. Սամուէլ, Վենետիկոյ Մխիթարեան, ծնած է Կ. Պոլիս 1838ին, ուսած է Վենետիկոյ Ս. Ղազար վանքին մէջ. ուր 1859ին քահանայ ձեռնադրուած է: Վարած է ուսուցչական և վարչական պաշտօններ Վենետիկ և Պոլիս. հրատարակած է Ճարտասանութիւն, թարգմանած է Լամարթինի «Առաջին քերթողական մտածութիւնք»ը, ֆրանսերէնի թարգմանած է Ղազար Փարպեցեոյ պատմութիւնը, երկասիրած է «Բառգիրք դաղդհայ-տաճկ» և «Բառարան իտալերէնէ ի հայերէն»: Վախճանեցաւ Ս. Ղազարու մէջ 1909ին:

ԳԱՆԹԱՐՃԵԱՆ Մեռոպէ, Սիրանոյժ (գերասանուհի):

ԳԱՆԹԱՐՃԵԱՆ Յովհաննէս, բժիշկ, ծնած է Խարբերդ. Մեղրկէ (Մամուրէթիւր-ազիզ) 1890ին, ուսած է տեղւոյն Բարիւսէններու (Capucin) գոլէճը՝ ուսկից ստանալով վկայականը գացած է Պէյրութ բժշկութիւն ուսանելու ֆրանսական բժշկական համալսարանին մէջ, որը աւարտած է 1914ին՝ վրայ հասնելով ընդհ. պատերազմը՝ մինչև 1918 կը ծառայէ թուրք բանակին մէջ իբրև բժիշկ:

Ձինաղաղարէն ետք կը հաստատուի Հալէպ, ուր իր արհեստը կը կիրարկէ իբրև ներքին հիւանդութեանց բժիշկ:

ԳԱՆԹՈՒ Կեսար, Խալապի նշանաւոր գրող, ապրած ԺԹ. դարու մէջ, որուն շատ մը գործերը հայերէնի թարգմանուած են:

ԳԱՆԼԸ, գղ. Վա- Տոքր. Յովն. Գանբարեան նանգ գո.ի, 35 տուն հայ բն. ունէր. եկղ. Ս. Յակոբ: Գիւղիս հիւսիսային կողմը երկրին տակէն գտնուեցան անօթներ և անզիր գերեզմաններ:

ԳԱՆԼԸԳ Տ. Բանլըգ:

ԳԱՆԼԸՃԱ Տ. Ղանլիմա:

ԳԱՆԼՈՒ ՏԷՐԷ, ձորակ մը կարնոյ և Բարբրդի մէջտեղ:

ԳԱՆԿԱԼ, վիճակ Սեբաստիոյ, 1900ին ունէր 8000էն աւելի հայ, այլազգիք հազիւ 2000:

ԳԱՆԿԱԼ, բերդաքաղաք Սեբաստիոյ համանուն

վիճակին, բն. մեծ մասով Հայեր էին: 1928ին 650 Հայեր եկած հաստատուած են:

ԳԱՆԿԱՄԻՆ գղ. Տ. Թափաղոյալ:

ԳԱՆԶ, շարաթաթերթ, տպ. Կ. Պոլիս 1885 (1-14 թիւ) խմբագիր տնօրէն Դ. Կ. Ճեռահանան:

ԳԱՆԶԱ, գղ. Գուգարաց Պորչալու գո.ի մէջ, 1900ին ունէր 1200 հայ, զիրքը լեռնային է:

ԳԱՆԶԱՉԱՆՏԱՆ Ին գիւղ Գեղարքունի գաւառի:

ԳԱՆԶԱԿ, գաւառ Աղուանից երկրին մէջ, այժմ Խ. Ռուսաստանի մէջ: 1900ին 890000 բն. ունէր հայ, ռուս, թուրք եւ այլն: Եր. Լալայեան ունի երկ մը Գանձակի գաւառ, որ տեղագրական ուսումնասիրութիւն մըն է:

ԳԱՆԶԱԿ, Գանջա, Գյանջա կամ Ելիսաբեթուպոլիս, քղ. Աղուանից համանուն գո.ի: 1900ին 33500 բնակիչ ունէր, որուն 11000ը Հայեր էին, մնացածը ռուս. վրացի, թուրք եւ այլն: Եկղ. Ս. Յովն. Մկրտիչ 1633ին շինուած, Ս. Լուսաւորիչ, Ս. Գէորգ, Ս. Աստուածածին: Գանձակի մէջ լոյս տեսած են հետեւեալ թերթերը. Քայլեր՝ 1917ին, Մեր ձայնը՝ 1918ին, Խորհրդային Գյանջա՝ 1931ին. Հարված՝ 1931ին: Տես նաև ՅԱԻԵԼՈՒԱՍԵՐ:

ԳԱՆԶԱԿ կամ Բեօսե-Մեհմեթ. գղ. Գեղարքունի գո.ի մէջ, կը կարծուի հին Գանձաղանտառ գիւղը, 1900ին 1700 բն. ունէր. եկղ. Ս. Գէորգ, բոլորովին նման Նորատուսի եկեղեցոյն, եղած արձանագրութեանց հնագոյնը 1513ին է: Արսէն Ջարարեան 1889ին իր ծախքով պարիսպ քաչեց եկեղեցոյն շուրջը:

ԳԱՆԶԱԿ. աւերակ գղ. Վայոց ձորոյ:

ԳԱՆԶԱԿ կամ Գանձի, գղ. Գողթն գո.ի, այլազգիք Գանսայ կամ Գեմանու կը կոչեն. Միաբանողաց գիւղերուն ամէնէն հեռի եղողն է. 1512ին կը յիշուի Սիլուան անուամբ գիւղապետ մը: 1603ին ունէր 70 տուն հայ, 20 տուն մահմետական: 1900ին բնակիչք բոլորովին այլազգիք էին: Մօտը կայ փոքր վանատուն մը Ս. Առաքելոց Անտրէի և Յակոբայ:

ԳԱՆԶԱԿ, հայաբնակ գղ. Ռչտունեաց գո.ի մէջ, եկղ. Ս. Աստուածածին, 1900ին 60 տուն բնակիչ ունէր: Կան նաև Ս. Ստեփանոս և Ս. Գէորգ եկեղեցիները: Քառորդ ժամ հեռի է Երէրնայ Ս. Սահակ փոքրիկ և անշուք մենաստանը:

ԳԱՆԶԱԿ, հայաբնակ գղ. Վասպուրականի Ականց գո.ի, եկղ. Ս. Աստուածածին: Մօտն է Կենափորի կամ Գինարբոյ վանքը:

ԳԱՆԶԱԿ, գղ. Աղուանից Կոկիսոն գո.ի, 1900ին ունէր 2000 բնակիչ, գաղթած Դիզակի եւ





Վարանդայի Հազրութ, Թաղար, Հենկի, Կիւնի և ուրիշ գիւղերէն Եկզ. Ս. Աստուածածին կառուցուած 1842ին, ունի ուսումնարան մը: Տապանաքարի մը վրայ ՄԹ (=760) թուականը կայ: Մօտը կայ Ս. Գանձակ ուխտատեղի մը:

ԳԱՆՁԱԿ, կրկին գիւղեր ձակաաք գու.ի մէջ Վերին և Ներին, երկուքն ալ այլազգարնակ:

ԳԱՆՁԱՀԱՆՔ, կը յիշուի Շիրակայ Հոռոմոսի վանքի արձանագրութեան մէջ:

ԳԱՆՁԱՉՈՐ, հայարնակ գղ. Կարնոյ, 1900ին 300 բնակիչ ունէր, եկզ. Ս. Կարապետ:

ԳԱՆՁԱՉՈՐ, գղ. Օլթի գու.ի մէջ, այժմ տաճկարնակ:

ԳԱՆՁԱՉՈՐ կամ Քանասուր, հայարնակ գիւղ, 1900ին 270 բն. ունէր:

ԳԱՆՁԱՍԱՐ, նշանաւոր վանք Արցախի Սաչէն գու.ի մէջ, եկզ. Ս. Յովհաննէս Մկրտիչ, կառուցուած 1236—38 թուականին: 1555էն մինչև 1835 հոս նստան Աղուանից կաթողիկոսները, 1815ին Ս. Էջմիածնայ Աթոռոյն ձեռքով Աղուանից կաթողիկոսութիւնը մետրապոլիտեան փոխուեցաւ և 1836ին այս մետրապոլիտութիւնը Շուշի փոխադրուեցաւ: Ըստ Վարդան Աշխարհազարի վանքիս մէջ է Ս. Յովհաննէս Կարապետի գլուխը: 1456ի յիշատակագրէ մը կը յիշուի վանքիս առաջնորդը Եղիա եպ. իսկ կաթողիկոսը՝ Յովհաննէս որդի Զալայի (Անգրագոյն սեղեկութեանց համար տես՝ ՅԱԻԵԼՈՒՍԾՐ):

ԳԱՆՁԱՊԵՏԵԱՆ Սամուէլ, բժիշկ. ծնած Մարաշ, հաստատուած Մոսկու (Իրագ):

ԳԱՆՁԱՎԱՆՔ. Սիւնեաց Գեղարքունի գու.ի մէջ. Տեղացիք Անգիր վանք կը կոչեն որովհետև մէջը ո՛չ մէկ գրի նշան չի գտնուիր: Տաճարին շինութիւնը խաչաձև է, միջակ դրութեամբ, կառուցուած ծովուն մօտ, հաստ ու կարծր քարուկիր որմերով:

ԳԱՆՁԱՓԱՐՍԽ, անապատ Սիւնեաց մէջ, ըստ Հ. Ալիշանի և Հ. Ինժիճեանի: Անշուշտ սխալ գրուած է և պիտի ըլլայ Տանձափարախ, որ կը գտնուի Բաղք գու.ի մէջ:

ԳԱՆՁԱՐԱՆ, այսպէս կը կոչեն նախնիք այն եկեղեցական գիրքը, որ եկեղեցոյ մէջ ըստ պատշաճի տօներու՝ սաղեք կամ զանձեք կը պարուենակէ: Այս կոչմամբ շատ մը ձեռագիրներ ունին քրատուններու մէջ: 1739ին Կ. Պոլսոյ մէջ տպագրուած է փոքր զանձարան մը:

ԳԱՆՁԷ, հին բերդ մը՝ Տաւրոսի ստորոտը: Միմէն գրիչ հոս գրած է 1335ին շաշոցի մը մէկ մասը, և միւս մասն ալ Մաւշրէֆի գիւղը:

ԳԱՆՁԻ, հայ իշխան, որ 1038ին իր Տաճատ որդւոյն հետ Բերկրի մէջ, Ստրիկ ամիրայի վրայ կը յարձակի, կը տիրէ քաղաքին, բայց այլազգիք ետ առին իրմէ:

ԳԱՆՁԻ s. Գանձակ:

ԳԱՆՆԻՏԷԼԻ, նշանաւոր աւերեալ տեղի Մովսիս Կիլիկիոյ մէջ, զոր Լանկուա Իսաւրիոյ նէպոլիսը համարեց: Կան ոչ-հայկական հնութիւններ, ինչպէս Հոռոմէական տարազով 6 բարձրաքանդակ պատկերներով և յունաստան արձանագրութեամբ մահարձան մը:

ԳԱՆՁԱՅ s. Գանձակ:

ԳԱՆՁԵՅԵԱՆ Կարապետ, պզգային բարերար, 10000 բուլլի կտակաօ է Աղ-Տաշի մէջ (յԱղուանս) եկեղեցի շինելու համար:

ԳԱՆՁՈՒՄԵԱՆ Նիքա Լենինականի երաժշտ. ստուտիոյ ուսուցչուհի: (Երեմեան «Սեւան» 65):

ԳԱՆՏԻԱ, քղ. Յունաստանի Կրետէ կղզիին մէջ ուր ԺԷ դարէն հայ գաղութ մը հաստատուած է ուր Ապրօ անուամբ ազնուական հայազգին իրր վարձք իր բարեոք ծառայութեան յաղթական բանակին հրամանատարէն 1646ին եկեղեցի մը նուէր կ'ընդունի զոր վերանորոգել տալով և շուրջը գտնուած տուներն ալ գնելով՝ իրր կալուած եկեղեցոյն յատկացուցած է: Տես՝ Կրետէ կղզին:

ԳԱՆՏԻԼԼԻ, գղ. Կ. Պոլսոյ մօտ, ուր 1700ին հայ գաղութ մը ապրած է, ինչպէս կ'ապացուցուի Ազգ. գերեզմանատան մէջ գտնուած տապանաքարերու արձանագրութիւններէն. զի ամենահինը 1711 թուականը կը կրէ: Գաղութին առաջին անգամը եղած է Տէր Սահակ քհ. որ 1761ին վախճանած է և թաղուած եկեղեցոյն բակը:

1931ին գիւղիս մէջ 15 բնտանիք հայ կայ միայն, առանց քահանայի (Յակոբ Վարժապետեան՝ «Գր. Տարեցոյց» 1931 էջ 173):

ԳԱՊԱԳ. ԹԷՓԷ, լեռ Վանանդ գու.ի մէջ:

ԳԱՊԱԳ. ԹԷՓԷ, թրքարնակ գիւղ Կիլիկիոյ:

ԳԱՊԱԳՃԵԱՆ Տիգրան, բրոֆ. ծնած է 1885ին-Եոզղատի մէջ. ուսած է Մարգուանի Անաթոլիա գոյէճը: 1905ին Ամերիկայի Իենսիվանիոյ համալսարանի տարբարանութեան ճիւղին հետևած է և 1907ին ստացած է Ուսուցչի զիտութեան (M.S.) աստիճանը: Հետո՛հետէ հետևած է բնագիտութեան ճիւղին ալ և 1910ին ստացած է ph. D. տիտղոսը և անմիջապէս բնագիտութեան ուսուցչի կարգուած է նոյն համալսարանին մէջ: (Սահակ Մեսրոպ՝ «Հայուն Տարեցոյցը», 1912 էջ 227):

ԳԱՊԱԼԱԳ, գղ. Շապին Գարահիսարի, որուն Ս. Էջմիածին զպրոցին մէջ 18 մանչ կ'ուսանէին 1900ին:

ԳԱՊԱԽԼՈՒ s. Ղափախլու:

ԳԱՊԱՃԷՎԻԼ, գղ. Շապին Գարահիսարի, որուն Կարապետեան զպրոցին մէջ, 1900ին 50 մանչ կ'ուսանէին:

ԳԱՊԱՍԱԳԱԼԵԱՆ s. Գապասափախան:



Գ Ա Պ

Գ.Ա.ՊԱՍԱՔԱԼ, գղ. Սերաստիոյ:

Գ.Ա.ՊԱՍԱՔԱԼ, գղ. Տիգրանակերտի:

Գ.Ա.ՊԱՍԱՔԱԼԵԱՆ Գրիգոր զպիր, հայ երգիչ կամ տաղասաց մը, բնիկ Կեսարացի, Գաղասագալեան ընտանիքէն Սարգիսի որդի Գասպարի երկրորդ զաւակը, որ իր երիտասարդութեան հասակին մէջ իր մեծ եղբորը հետ Կեսարիոյ Ս. Կարապետի վանքը կը մտնէ իբր աշակերտ, այն ամենները երբ միարանութեան մէջ կը գտնուէին բաւական ուսումնական և ուսումնասէր վարդապետներ, որոնցմէ մին է Մատթէոս եպ. Գարամանեան, Կեսարիոյ առաջնորդը (1776—1798), Գաղասագալեան երկու եղբայրները, Ս. Կարապետի վանքը կը մնան 8—10 տարիներ և կը ստանան զպրութեան աստիճան: Մեծ եղբայրը ամուսնանալով քահանայ կը ձեռնադրուի Սարգիս անունով, իսկ Գրիգոր Պոլիս կ'անցնի և կը շարունակէ ուսմունքը աշակերտելով հոշակաւոր Կարնեցի Յարութիւն վարժապետին: Գրիգոր զպիր շատ նշանաւոր եղած է երաժշտական արհեստին մէջ և գրած է երաժշտութեան վրայ երեք հատոր գրքեր: Առաջինը՝ Գրիգիլ որ կոչի նուագարան, տպ. Կ. Պոլիս 1794ին ձեռնառութեամբ Ակնցի Չերազ Մինաս Ամիրայի, երկրորդը Գրիգիլ կոչեցեալ երգարան, տպ. 1803 Փեք. Քին, եւ երրորդը՝ Գիրք երաժշտական յորում պարունակիլն հայերէն եւ պարսկերէն հարցումնք՝ եւ պատասխանատուութիւնն համառօտար, տպ. 1803 Յուլիս 20ին, այս անգամ իր իսկ ծախքով: Այս երեք հատորները՝ որոնք երաժշտական արուեստին նուիրուած գործեր են, կը պարունակեն բազմաթիւ իրմէն յորինուած երգեր հայերէն (սեւնիլ այդ հատորները եւ չորս նմուշներ անոնցմէ Տրդատ եպ. Պալեան՝ «Հայ աւուրներ» Բ էջ էջ 184—190), բաղուած «Հայ Կեսարիայ»-էն էջ 1555):

Գ.Ա.ՊԱՍԱՔԱԼԵԱՆ Թարուլ, բժիշկ, Աղեքսանդրիացի (Եգիպտոս), 1937ին Լոզանի համալսարանէն շրջանաւարտ կ'ելլէ:

Գ.Ա.ՊԱՐԱՃԵԱՆ Գրիգոր վրդ. Մխիթարեան, ծն. Պոլիս 1779ին, փոքր տարիքէն Վենետիոյ Ս. Ղազարու վանքը կը զրկուի, ուր ուսման շրջանը աւարտելէ ետք՝ 1804ին քահանայ կը ձեռնադրուի Յետոյ Միարանութեանէն կը հրամարի, կը ձգէ սքեմը և Կարապետ Ոսպառածի անունով, այլև այլ կրօնական գրքեր կը հրատարակէ իր գործն է նաև Իսաւորի գիրքը: 1844ին Բարեղի մէջ լոյս կ'ընծայէ Եղիեկի Վարդանանց պատերազմի պատմութեան ֆրանսերէն թարգմանութիւնը:

1812—6 թուին Վենետիոյ մէջ լոյս տեսած

Գիտակ Բիւզանդեան շարաթաթերթին խմբագիրն եղած է:

Գ.Ա.ՊԵՆՃԱՆԵԱՆ կամ Գապեկեան Յարութիւն, եպիսկոպոս, միարան երուսաղէմայ Ս. Յակոբայ վանքին, ծնած է Եգիպտոս 1785ին, աշակերտած Մարկոս եպ.ին. Կ. Պոլսոյ երուսաղէմատան փոխանորդ՝ 1821—4, Առաջնորդ Զմիւռնիոյ՝ 1825—9 Պրուսայի և Կուտինայի՝ 1829—36. Մշոյ և Կարնոյ միացեալ վիճակաց 1836—8, յետոյ Ս. Կարապետ վանքին վանահայրութիւն ըրած է, 1938ին շինած է վանքին հարաւային պարիսպը. 1840—41 և 1842—47 վարած է Եգիպտոյ առաջնորդութիւնը, իր առողջական վիճակը դարմանելու համար Եգիպտոսէն Հալէպ գացած ու հոն մեռած է 1848ին: Թաղուած է Ս.Քառասնից եկեղեցոյ գաւիթը, հետեւեալ տապանադրով. «Ի թվին 1848ին — Հանգչի յայտ տապան — Փրկչի պաշտօնեայն — Յարութիւն եպիսկոպոս — Առաջնորդ Եգիպտոյ»:

Յար. եպ. Նարեկը ծայրէ ծայր տաղաչափութեան վերածած է: Զեռագիրներուն մէջ կը յիշատակուի գրուածք մը Ներքոյ Որդւոյն Որոսման Ս. Առաքելոց Յակոբայ եւ Յովհաննու (տպ. Կ. Պոլիս 1823), ունի նաև Սաղմոսի և Երգ Երգոցի Մեկնութիւնները (Կիսկատար), գրած է նաև Ներքոյ մը Յովհաննու Կարապետի եւ Մկրչի, ինչպէս կը յիշէ իր Նարեկի տաղաչափութեան յառաջարանին մէջ: (Սղաւնուցի՝ «Միաբանք», 333): Սա վերաշինած է 1845ին Եգիպտոյ Ս. Աստուածածին հոյակապ եկեղեցին:

Գ.Ա.ՊԵՆՃԵԱՆ Գրիգոր, 1926ին Հալէպի մէջ կը վախճանի. եղած է բազմամեայ ուսուցիչ, ստորագրած է բանասիրական և հրատարակչական յօդուածներ այլևայլ թերթերու մէջ:

Գ.Ա.ՊՈՒՐԿԱԼԸ, գղ. Կիլիկիոյ մէջ, բն. հայ եւթուրք:

Գ.Ա.ՊՈՒԼԵԱՆ Օր. Էլիգ, երգչուհի Ամերիկայի մէջ:

Գ.Ա.ՌԸՆԿԵՐՏ Տ. Գառնակերս:

Գ.Ա.ՌԿԱԳՕՆՄԱԶ գղ. Արագածոտն գ.ա.ի

Գ.Ա.ՌԿԱԼԸ, կրկին գիւղեր Վերին Կեղի:

Գ.Ա.ՌԿԱՊԱԶԱՐ, լեռ Այրարատայ Բագրեւանդ գ.ա.ին մէջ: — Այս անուամբ կրկին թաթարաբնակ գիւղեր ալ կան:

Գ.Ա.ՌԿԱ ՏԵՐԷՍԻ, կիրճ Կեսարիոյ նահանգին մէջ, Մակա-օլասի կոչուած դաշտավայրին մօտ:

Գ.Ա.ՌՄԷՆ (= Նախկին Մելքոնեան Տաճատ վրդ), ծնած է 1880ին: Աշակերտ Ս. Էջմիածնայ Գէորգեան ձեմարանին: Վարդապետ կը ձեռնադրուի 1904ին: Իբր դաշնակցական գործիչ կը



թողու սքեմը: 1908էն յետոյ Թուրքիա կ'երթայ և ուսուցչական պաշտօն կը վարէ Վան և Մուշ: Մուշ գտնուած ատեն, Խորհրդակ Մուսա քէկի զրդումով կը հայածուի կառավարութենէն եւ կ'ապաստանի Վան, ուր կ'ամուսնանայ Կ. Պոլսեցի ուսուցչուհի-գրագիտուհի Օր. Իսկուհի Չիթճեանի հետ (Օր. Նինի) և միասին կը պաշտօնավարեն նաև Թալաս իրր ուսուցիչ: 1915ին կ'աքսորուի Հայէպ, ուրկէ Տիկին Գառմէն կը յաջողի երթալ Կ. Պոլիս, իսկ Գառմէն կը քուտի անապատ, ուր կը կորսուի: Տիկին Գառմէն հիմա (1937) կը գտնուի Զուիցերիա, իր միակ զուգին հետ, որ բարձրագոյն ուսում կը ստանայ: (Այլոյանեան «Հայ Կեսարիա» 1190—1):

ԳԱՌՆԱԿԵՐ, հին գղ. Սիւնեաց Գեղարքունի գո.ի մէջ:

ԳԱՌՆԱԿԵՐ, գղ. Արցախի Փառխոս գո.ի մէջ, 1900ին ունէր 1200 բնակիչ, եկղ. Ս. Աստուածածին, կառուցուած 1838ին. մօտերը կան Ծաղկոց ու Գարրիէ-Միքայէլ Հրեշտակապետաց վանքերը, Կաղնի խաչ ուխտատեղին, եւ այլն:

ԳԱՌՆԱԿԵՐԵԱՆՅ Գրիգոր, Արքեպ. ծնած Վաղարշապատ 1836ին, եպ. կը ձեռնադրուի 1890ին. վարած է առաջնորդական պաշտօններ Ռուսաստանի մէջ. 1900ին երուսաղէմ, Հոսմ եւ Եգիպտոս կ'այցելէ, կը վախճանի 1910ին:

ԳԱՌՆԱԿԵՐՏ կամ Գառնկերտ, հայաբնակ գղ. Խարբերդի. եկղ. Ս. Թովմաս:

ԳԱՌՆ-ԲԵՐԳԱԿ. գղ. Դերջանի, 32 տուն հայ բն. ունէր, եկղ. Գէորգ, ունէր և զպրոց:

ԳԱՌՆԵԿԻՆ Տ. Գառն-Եարդ:

ԳԱՌՆԵՅԻ Յովհաննէս Տ. Յովհաննէս Գառնեցի վարդապետ:

ԳԱՌՆԵ, գղ. Մշոյ, եկղ. Ս. Աստուածածին, 1900ին ազգ. վարժարանին մէջ 24 մանչ և 5 աղջիկ կ'ուսանէին:

ԳԱՌՆԸ-ԵԱՐԸԳ, Գառնեկին կամ Քերվանաբայ գիւղ. (Կարաւանի գիւղ), Վարածնունեաց գո.ի մէջ, 1900ին ունէր 1600 հայ բնիկներ. եկղ. Ս. Աստուածածին: Տիւպուս ուղեւորը Գառնեկին կը կոչէ գիւղա՝ Տե՛ս Արայի լեռ:

ԳԱՌՆԻ կամ Գեղամի, հին պատմական բերդ և քաղաքաւան, որուն աւերակները Այրարատի Մազազ գո.ին մէջ կը գտնուին: Տե՛ս ՅԱԻԵԼՈՒՍԹը:

ԳԱՌՆԻ կամ Գառնի, սակաւարնակ գիւղակ կամախ գո.ի մէջ, ունէր 300 հայ բնակիչ: Աւագ վանք մը կը գտնուի: Վարժարանը կը կոչուէր Թորոսեան, ուր 1900ին 20 մանչ կ'ուսանէին:

ԳԱՌՆԻ (Բաշղառնի), Ռ. Հայաստանի Կոտայքի շրջանին մէջ:

ԳԱՌՆԻԿ Տ. Ղազարեան Գառնիկ:

ԳԱՌՆԻԿ, Թոսն Գեղամ Հայկազնոյ:

ԳԱՌՆԻԿ, ճգնաւոր որ Ս. Գրիգոր Լուսաւորչի մարմինը գտնելով՝ թաղեց:

ԳԱՌՆԻԿ-ԱՂԲԻԻԲ, ուխտատեղի Կողովի գո.ի մէջ, Պայազիտի մօտ:

ԳԱՌՆԻ-ՊԱՍՅԱՐ, այսպէս կը կոչուէր Այրարատայ Մազազ գո.ը:

ԳԱՌՆԿՈՅ, գղ. Թորթուտի վիճակին մէջ:

ԳԱՌՆՈՅ ԳԱԻԱՌ, Գառնի քաղաքի անուամբ այսպէս կը կոչուէր Այրարատայ Մազազ գո.ը:

ԳԱՄՆՈՅ ԳԵՏ կամ Գարնոյ ջուր, հին Աղատ գետն է, որ Գառնիի զիմացէն անցած ատեն անունը առած է:

ԳԱՌՆՈՅ ՉՈՐ, Մազազ գո.ի մէջ, ժամանակաւ լեռնային յատուկ վիճակ մը կը ձեացնէր: Այստեղ, ըստ Վարդան աշխարհազրի Գոսոյ անուամբ վանք մը կար, զոր Ժ. դարուն սկիզբը Սմբատ Ա. թագաւոր Տաթևի եկեղեցւոյն նուիրեց իրր կայուած:

ԳԱՌՆՈՅ ՉՈՒՐ Տ. Ա. Պատմ. գետ:

ԳԱՌՆՈՎԻՏ, կը յիշուի Այրարատի Արշարունեաց գո.ի Բագարանու եկեղեցիներէն միոյն արձանագրութեան մէջ:

ԳԱՌՊՕՆԵԼ Տ. ՅԱԻԵԼՈՒՍԹը:

ԳԱՍՍՊԱ կամ Ղասապա, քղ. Զմիւռնիոյ հիւսիսկողմը, ըստ Հ. Յակոբ Քօսեանի (Բ. էջ 155) Գասապայի Հայերը անցեալին մէջ նշանաւոր դիրք մ'ունեցած են, բայց այժմ (1899) ինկած են: Թուով 100 տուն կը համրուին՝ չունին և չեն կազմած կանոնաւոր թաղ մը, բայց մեծամասնութիւնը եկեղեցւոյ մօտերը կը գտնուի: Եկեղեցին նուիրուած է Ս. Աստուածածնայ, հետեւեալ արձանագրութեամբ:

«1840. Չինոյ Կառուցաւ Ս. Եկեղեցիս Տեառնագրեալ յանուն ամեօրհնեալ սուրբ Ասուածածնի ի հայրապետութեան սուրբ Էջմիածնի Տեառն Յովհաննու սրբազան Կարողիկոսի Ամենայն Հայոց յառաջնորդութեան Զմիւռնիոյ Տճ. Պօղոսի ասուածիմաստ աւետիսկոպոսի... վերակացութեամբ յարգոյ մահեսի Աւետիս աղայի Զմիւռնացոյ Էփրեանց արղեամբ եւ աւետիսաւոյ բարեպաւտօս ի խաւանաց եւ առհասարակ օրհնեալ ժողովրդոց սեղոյս. Օգոստոսի 18»:

Գասապացիք աւելի հնագոյն եկղ. մը ունեցած են, որուն մէկ քարը զպրոցի պատին մէջ դրուած է, որուն արձանագրութեան հետեւեալ տողերը միայն կը կարդացուին... Չեղցուութեամբ Պայրազարի պարոն Ասուածասուրի ի հայրա... Տեառն Ղուկասի Սրբազան Կարողիկոսին



Ամենայն Հայոց եւ յառաջնորդութեան... (Գա)լուս Արքեպիսկոպոսին աղետամբ եւ ծախիւք մեծանաւաս Մեհեբեգասե (Յով)հաննէսին եւ եղբօրն իւրոյ մահեստի Պօղոսին եւ համայն ննջեցելոց...»:

Եկեղեցւոյ պարտէզին մէջ է երկսեռ վարժարանը, քարուկիր և կրկնայարկ, ձէվահիրեան անուամբ, որուն կառուցանողն եղած է Յովսէփ Էֆ. ձէվահիրճեան Զմիւռնիացի, 1893ին, Մկրտիչ Որթմեան կթղ.ի և Ներսէս ծ. վ. Արսլանեանի առաջնորդութեան օրով: Նոյն տարին կը կառուցուի նաև Աղջկանց դպրոցը յանուն աիկին Տիգրանուհի ձէվահիրճեանի: 1900ին 72 աշակերտ կը յաճախէին: Գերեզմանատան մէջ կը գտնուին 1847, 1848—1863 թուականով տապանաքարեր: (Հ. Յ. Քօսեան՝ «Հայի ի Զմիւռնիա եւ ի Երզնկայս» Բ. էջ 155—161):

ԳԱՍԱՊԱ, գղ. Քարային կիլիկիոյ Քարաթաղ և Հաճի-պապա լեռանց մէջտեղ, այժմ աւերակ:

ԳԱՍԱՊԱ, կեդրոնավայր Կեղք գաւառակի, 1900ին ունէր 380 տ. հայ, 168 տ. մահմետական: Եկղ. Ս. Սարգիս և Ս. Յակոբ: Կային բողոքական Հայեր որոնք ունէին ժողովարան եւ երկսեռ դպրոց:

ԳԱՍԱՊԵԱՆ ԼԵՒՈՆ, Տոքթ. Միհրան Գասապեանի ազգական և նոյն ընտանիքէն, որ տասներկու երկար տարիներու տաժանակիր և համբերատար աշխատանքով յաջողեցաւ այս տարի կատարել հրաշալի գիւտ մը որուն մենաշնորհը Ամերիկեան կառավարութիւնը տուած է իրեն, հիացում յայտնելով եւ իմացնելով թէ այդ գիւտը անցած է գիտական մանրակրկիտ խուզարկութենէ և ընդունուած է որպէս դարերու ամէնէն մեծ գիւտը: Այս դարձանայի գիւտը համաշխարհային հետաքրքրութեան առարկայ է հիմարտոր Ամերիկայի, Եւրոպայի և Ասիոյ մէջ: Տոքթ. Լեւոն Գասապեան գտած է քիմիական շիճուկ մը որ մեռած մարմիններուն կը ներարկէ ու դիակը կը քարանայ ամբողջութեամբ, կենդանի արձան մը դառնալով: Մեռելին դէմքը և մարմինը կը մնան անփոփոխ՝ պահելով դիմագծին



Տոքթ. Լեւոն Գասապեան

նոյնութիւնը: Որքան որ ժամանակ անցնի այնքան աւելի կը քարանայ մարմինը: Անսահման դարեր կրնայ պահուիլ մարմինը: Քիմիաբաններու դատումով այս գիւտը կը գերազանցէ հին եգիպտական մուսիաներու զմուտմը: (Ալպօյանեան՝ «Հայ կեսարիա» 2012):

ԳԱՍԱՊԵԱՆ ԽՈՐԷՆ քհ. ծնած է Ատանա 1893ին, աշակերտած է տեղւոյն Մուշեղեան-Արգարեան և Կ. Պոլսոյ Պէզնեան վարժարաններուն: Երաժշտութեան ու երգի սիրահար եղած է, իրեն ուսուցիչ ունեցած է երաժշտագէտ Գրիգոր Մէհտէրեան և Համբարձում Սարաճեան ուսանելով եւրոպական և հայկական ձայնադրութիւն 1913ին Պոլսոյ Երաժշտական Քննիչ Յանձնախումբի որոշումով՝ երաժիշտ-ուսուցչի ձեռնհասութեան Բ. կարգի վկայական կը ստանայ Աղգ. Կեղք. Վարչութեան Ուսումնական Խորհուրդէն և յետոյ աւելի զարգանալով 1924ին կը ստանայ



Խորհեն ֆն. Գասապեան

Առաջնակարգ վկայական Պոլսոյ Կրօն. Ժողովէն: Ունի քնարական լիրիկ-քենոս ձայն մը և որպէս քաջ ձայնագրագէտ երաժիշտ և մանկավարժ-դաստիարակ մինչև իր քահանայական ձեռնադրութիւնը պաշտօնավարած է Ատանա, Երուսաղէմ, Սիւ, Բօր-Սայիտ, Մերսին, Զուլաքնիա, Կիպրոս և Պաղտատ: Երաժշտական շատ մը յօգուածներ գրած է դանազան թերթերու մէջ. կազմակերպած և ղեկավարած է շատ մը եկեղեցական և ժողովրդական երգչախումբեր: Ունի շարք մը հեղինակութիւններ եկեղեցական եւ զանազան եղանակներու, 1926ին լոյս ընծայած է «Ձայնագրեալ Մանկական և Դպրոցական նոր երգարան» մը: 1932ին Պասրայի վրայ քահանայ ձեռնադրուած է Պաղտատի մէջ Գեր. Ռուբէն Մանասեան եպ.էն: 1934ին վարձատրուած է ծաղկեայ փիլոնով, իսկ 1936ին էջմիածնայ Ս. կաթողիկոսէն՝ լանջախաչով: 1932էն ի վեր կը պաշտօնավարէ Պասրայի մէջ իբր հոգևոր հովիւ: Հասցեն է՝ Rev. Kh. Kasaabian Armenian Church Basra (Iraq)

ԳԱՍԱՊԵԱՆ Հրաչ, Լոնտոնի երաժշտական թրի-



նիթի գոլէճի մէջ, խոստմնալից: («Հ. Կոչնակ» էջ 1072):


ԳԱՍՍՊԵԱՆ Մինրան, Տոքթ. ծնած է 15 Յունուար 1870ին Կեսարիա ուր ստացած է իր նախնական և միջնակարգ կրթութիւնը Արգէնոս բարձրագոյն վարժարանին մէջ: 1887ին անկէ շրջանաւարտ ելլելէն յետոյ, հոն մի քանի տարի դասատուութիւն ըրած և ապա զաղթած է 1894ին Ամերիկա: Հոն յաճախած է Ֆիլատելֆիոյ Medico Chirurgical բժշկական գոլէճը որմէ ընթացաւարտ եղած է 21 Մայիս 1899ին երբ սպանեամերիկեան պատերազմը ծագեցաւ կոչուեցաւ բանակին մէջ ծառայելու՝ իբր բժիիկ: Եւ 1903ին տնօրէն կարգուեցաւ Ֆիլատելֆիոյ ընդհանուր հիւանդանոցին Ռէօթկէնեան ճառագայթներու աշխատանոցին: Այս պաշտօնը վարեց մինչեւ իր մահը: Անիկա կը սիրէր արտակարգ տարփանքով մը իր մասնագիտութիւնը՝ ըմբռնելի միայն բարձր հակում մը ունեցող հազուադիւր հոգիներու համար: Ան իր բոլոր ջանքը չխնայեց այս նոր մոզութիւնը օգտագործելու ի նըպաստ մարդկային ազգին, ամոքելու համար մարմնական հիւանդութիւնները, փրկելու համար կեանքերը, և առով պակսեցնելու համար խոր և ծանր անձկութիւնները: Սակայն ուրիշներու կեանքը փրկելու համար իր կեանքը զոհեց: Ինչպէս «Նոր Ամերիկն կը գրէր «իր գործին պատուաբեր մեկն է յարատեւ վսանգներու, յարատեւ յաղթութիւններու եւ յարատեւ ինքնամոռացութեան պատուաբերութեան: Ակներեւ վրասնգը աւելցուց իր եռանդը: Այդ վսանգը պէտք էր որ յաղթահարուէր: Մահացու ուժը պէտք էր որ փոխուէր ապահով եւ փրկարար դարմանի: Եւ եղաւ այդպէս: Այսօր Ք. նառագայթը կրնայ գործածուիլ նոյնքան ապահով կերպով՝ որքան որեւէ գորաւոր ազդակ՝ բժշկութեան մէջ: Եւ անոր գործածութեան մեթոտը այնքան կատարելագործուած է որ շատ նուազած են վսանգները զայն գործածողներուն համար... Եւ ո՛չ ոք այնքան նպաստեց այդ ապահով գործածութեան՝ որքան Տոքթ. Գասապեան»:

Տոքթ. Գասապեան հեղինակած է մի քանի գիրքեր ստուերանկարի (Skiagraphy) վրայ, որոնցմէ մէկը «Ելեֆտաբուժութիւնը եւ Ռեօթկէնեան նառագայթները» — 800 էջնոց հատոր մը — առաջին անգամ հրատարակուած է 1907ին. Անոր երրորդ տպագրութեան փորձերը Տոքթ. Գասապեան իր մահուան անկողնին մէջ նայած է:

Այս գործը նկատուած է նոյն նիւթին վրայ Ամերիկեան մեծագոյն հեղինակութիւններէն մին

և կը գործածուի իբր դասագիրք: և թարգմանուած է գերմաներէնի:

1903ին անիկա ուսուցչական եղաւ Ելեքտրաբուժութեան այն հաստատութեան ուր ինքնուսած էր բժշկութիւնը և նոյնպէս այս պաշտօնը վարեց մինչեւ իր մահը:



Եղած է անդամ Ֆիլատելֆիոյ և Փենսիլվանիոյ նահանգներու բժշկական կաճառներուն, ինչպէս նաև ընդհանուր Ամերիկայի «Ելեքտրաբուժութեան» Ընկերութեան փոխ նախագահը և New York Տոքթ. Մինրան Գասապեան Medico Legal Societyի նախագահը մինչև իր մահը:

Տոքթ. Գասապեան պատուերակ եղած է շատ երկիրներու մէջ Ք. ճառագայթներու միջազգային համաժողովներու: Իր մահէն առաջ ինքը կը յորջորջուէր ընդհանուր Ամերիկայի Միակ Ք. նառագայթներու մասնագէտ և ամէն կողմերէն իրեն զիմուսներ կ'ըլլային իր տեսութիւններուն և հետազօտութիւններուն տեղեկանալու համար:

Երբ Buffalo քաղաքին մէջ ցուցահանդէսի պահուն Ամերիկայի Մ. Նահանգաց նախագահը Մաքիլի մահափորձի ենթարկուեցաւ անիշխանականի մը գնդակով և Ամերիկեան բժիշկներ անկարող գտնուեցան, կառավարութիւնը մասնաւոր շոգեկառքով Տոքթ. Մինրան Գասապեանը Ֆիլատելֆիայէն Buffalo տարաւ:

Հակառակ Ք. ճառագայթներէն իր ստացած այրուցքներուն և վտանգներուն Կեսարիոյ այս զաւակը սիրով փարեցաւ գործին և հետզհետէ իր համբաւը տարածուեցաւ: Մասնաւոր ուսուցնասիրութեան առարկայ դարձուց ուսուցչներու և քաղցկեղներու դարմանումը ստուերանկարի միջոցաւ, և ամէնէն յաջող դարմանիչներէն մէկը եղաւ՝ զիտութեան այս ճիւղին մէջ, որուն զոհ եղաւ ինքն ալ, վասնզի 1902ին այդ այրուցքը առաջին անգամ իր ձեռքերուն վրայ երեւան ելաւ, և հետզհետէ աւելի առաջացաւ: 1908ին հարկ եղաւ անդամահատել իր ձախ ձեռքին մատները: Յետոյ տարածուեցաւ թեւին մէջ և հարկ եղաւ գործողութեան: Փոխադրուե-



ցաւ Ֆիլադելֆիոյ ձէֆըրսըն հաւանդանոցը, ուր մեռաւ 1910 Յուլիս 12ին:

Տոքթ. Միհրան Գասապեան պահած է իր հայկական նկարագիրը: Իր մահէն տարի մը առաջ 1909ին այցելած էր իր ծննդավայրը և Կ. Պոլսոյ մէջ ամուսնանալով հայ ազգիկան մը հետ, գացած էր Ամերիկա:

Ամերիկեան լրագիրներ, ինչպէս Պոսթընը Իվինկ Պուլպրին և Նորթ Ամերիքըն թերթերը իր մահուան անթիւ մեծ գովեստով խօսած են իր վրայ:

Իր վրայ խօսած է նաև Pennsylvania University կողմէ հրատարակուած Ամերիկայի նշանաւոր մարդոց համառօտ կենսագրական նոթերու հաւաքածոյին մէջ, ուր իր կենսագրութիւնը կը վերջնայ սա տողերով «Իր անուր մեծ էր. սակայն իր գործը ա՛յլ աւելի մեծ»: (Ալպոյանեան՝ «Հայ Կեսարիա» էջ 2006—8, Տես նաև Թեոդիկի «Ամ. Տարեցոյց»ը 1911 էջ 375):

ԳԱՍԱՊԵԱՆ Մինաս, ս. վերածին:

ԳԱՍԱՊԵԱՆ Յակոբ, ծնած է Էփէրէկ 1877ին, ուսած ծննդավայրի Մեսրոպեան դպրոցը: Նախապէս առեւտուրով զբաղած, 1910—13 եղած է մալիյէի (Ելեւմտական) պաշտօնեայ: 1913ին Ամերիկա գացած և դարձեալ առեւտուրով զբաղած: Անդամ է Էփէրէկի Մեսրոպեան վարժարանի խնամակալութեան վարչութեան: Ունի ձեռագիր աշխատասիրութիւն մը Էվերէկի Է. Ֆենեսէի Է. Երզակայից Հայոց ծագումը անուն գործ մը:

ԳԱՍԱՊԵԱՆ Ներսէս, աշխատակից «Հայ Հանրագրտակ»ի, կենսագրութիւնը տեսնել ՅԱԻԵԼՈՒԱԾը:



Գասապեան Ներսէս

առած է իր Permis de proficien Dentistը: Աշխատելով հանդերձ յաճախած է Ֆրանս. Փաքիւլէի վիրաբուժական ճիւղը, 1927ին կը ստանայ իր

վկայականը: 1927էն ի վեր հաստատուած է Բիւվէյկան, Պասպ Իտրիս, ի գործ կը դնէ իր մասնագիտութիւնը: (Տօլպազեան՝ «Լիբանանահայ Օրացոյց» 1936):

ԳԱՍԱՊԵԱՆ Սարգիս, ծնած է Կեսարիա 1897ին: Նախնական և երկրորդական կրթութիւնը ստացած է իր ծննդավայրին Յիսուսեան Հայրերու վարժարանը: Պատերազմին պատճառաւ կը ստիպուի կիսատ ձգել իր ուսման շրջանը: Այդ ահաւոր օրերուն պ.




Տոքթ. Ս. Գասապեան

Գասապեան կը մտնէ թրքական բանակի ճառագութեան մէջ իրր գեղազործ:

Կեսարիա թէ այլուր զբաղած է ղեղավաճառութեամբ: 1922էն ի վեր Պէյրութի մէջ կը զբաղի նոյն գործով:

1934ին Պուրճ Համուտի շրջանի հայուութեան կողմէ կ'ընտրուի թաղապետութեան անդամ, և մէկն է նոյն մարմնի 4 հայ անդամներէն: (Տօլպազեան Լիբանանահայ Օրացոյց» 1936):



Գասապեան Սարգիս

ԳԱՍԱՊԵԱՆ Սարգիս Մ. ծնած է Խարբերդի մէջ, պատենեկութիւնը անցուցած է Ակնայ և շրջակայից մէջ. նախ՝ ուսանող Ակնայ Նարեկեան վարժարանին մէջ յետոյ ուսուցիչ, գիտէր բացի հայերէնէ, թուրքերէնէ՝ յունարէն, իտալերէն. 43 տարի ուսուցչութիւն ըրած է խղճմտօրէն՝ Ակնայ, Մուշեղկայի, Պոլսոյ, Պանտրմալի, Պալլէքէրի, Ռոսոսթոյի, Պրուսայի, Էրզրումի և վերջապէս Պարտիզակի բարձրագոյն վարժարանին մէջ, ուր 17 տարի կը պաշտօնավարէ մինչև մահը 1907:

Գասապեան զրած և հրատարակած է «Տաղաչափութիւնն ու Դպրոցավարութիւնը»: Ունի և անտիպ երկեր: («Համագայիկ Օրացոյց» 1912 էջ 299):



Նոյն անձը կը կարծեմ Գասապեան Ա. Մ. ր. «Ակնցի» ուր 1834-1903 հրատարակած է Տանկերեկի դասագրքեր եւ բառագիրք:

ԳԱՍՍՊՊԵԱՆ Սեռեմա, դերասանական ընթացքի կը հեռեի Նիւ Եորքի մէջ՝ 1937ին Լոս Անճէլըսի մէջ կը շարունակէ իր ընթացքը: Տե՛ս ՅԱԻԵԼ՝ ՈՒԱԾը:

ԳԱՍՍՊՊԵԱՆ Վեցսան, բժիշկ, տե՛ս ՅԱԻԵԼ՝ ՈՒԱԾը:

ԳԱՍՍՐՃԵԱՆ Պր. Լի, Նիւ Եորքի The New History Society ընկերութեան կազմակերպած համաշխարհային մրցումին կը մասնակցի (50 ազգէ 3208 մրցակիցներ), Հայ ազգին յատկացուած մրցանակը կը շահի 1937ին. 1936ին ալ ինք շահած էր:

ԳԱՍԻՄԵԱՆ Ազնիւ, բժիշկ, ծնած է Պրուսայի Մեծ Նոր-գիւղը: Տեղւոյն Ազգային վարժարանը յաճախելէ ետք Պոլսոյ Կեդրոնականը անցած է, յետոյ հետեւած է Պոլսոյ Հայտար փաշայի թուրք Զինուորական վարժարանին, ուրկէ շրջանաւարտ եղած՝ 1917ին:



Երեք տարի թուրք բանակին մէջ ծառայելէ վերջ, կը նախընտարէ Եւրոպա անցնիլ, որով կը հեռանայ Թուրքիայէն, րայց վերջը Հելլէն բանակին հետ կը վերադառնայ Թուրքիա և 1922-ին վերջնականապէս

Յունաստան կ'երթայ Տոք. Ազնիւ Գասիմեան և կը հաստատուի Վօտինա: Տոքթ. Գասիմեան մասնակցած է ազգային գործերու (Մակարեան՝ «Յուլագիրք» էջ 314: Իր հասցէն է՝ Dr. Azniv Kassemian, Vodina (Grèce):

ԳԹՍԹԱՄՈՒՆԻ կամ Գասրամպոլ, գլխաւոր քղ. համանուն կուսակալութեան և գաւառին: Ինէպօլի նաւահանգիստէն 90 հզրմ. հեռի՝ հարաւակողմը: 1900ին 16000 բն. ունէր, որոնց 600ը հայ էին, որոնք ունէին Ս. Աստուածածին եկղ. մը և դպրոց մը: Գասթամունիի կուսակալութեան մէջ 900 տուն հայ կար: Ընդհ. պատերազմէն ետք քաղաքիս և յրջակայից մէջ 1926ին 3600 Հայեր հաւաքուած են, առանց դպրոցի, եկեղեցիին բաց է:

ԳԱՍՄԱ կամ Կասմա, գղ. Տիւրիկի, բն. հայ և թուրք էին. Հայերը 500, եկղ. Ս. Աստուածա-

ծին, դպրոցը Մեսրոպեան Գիւղիս շուրջը 20ի չափ ուխատատեղիներ կը գտնուին. նշանաւորներն էին Խնդրակատար և Ս. Լուսաւորիչ:

ԳԱՍՊԱՐ, իշխան Մոլաովայի, 1619ին կը յիշուի, որուն կինը վերաշինած է Ս. Աստուածածին եկեղեցին: (Ինքնեան՝ «Աւս.» Զ. էջ 192):

ԳԱՍՊԱՐ. Դըւնիկցի, նահատակ Կարնոյ մէջ 1810ին:

ԳԱՍՊԱՐ կպ. միաբան Զնքուչի Ս. Աստուածածին վանքին, ձեռն. 1737ին, Երուսաղէմ կ'այցելէ 1749ին, 1756ին՝ Զնքուչի առաջնորդ կ'ընտրուի ու 1764ին եպիսկոպոս կը ձեռնադրուի, կը վախճանի 1788ին: (Մուսնճեանց՝ «Թորոս Աղբար» Բ. էջ 400 եւ 466):

ԳԱՍՊԱՐ, գրիչ, ձեռագրաց, Գասպար Ամդեցի երէց գրիչ Ուրնայ քաղաքին մէջ 1426ին 1580ին Գասպար դպիր գրիչ ի Շէնգուս (Զնքուչ),— 1593ին՝ Գասպար գրիչ, առ ոսո Պեարոս րաբունապետ վրդի:

ԳԱՍՊԱՐ, ամուսնա Սեբաստացի, Յովհաննէս Կոլոս Կ. Պոլսոյ պատրիարքի բացած դպրոցին վերակացու եղած է, դրուատուած թէ՛ Յովհ. Կոլոսէն և թէ՛ Յակոբ Նալեան պատրիարքէն: Երուսաղէմ ուխտի կ'երթայ և հոն կը վախճանի 1751ին, ու կը թաղուի Ս. Փրկչի վանքին մէջ վաստակաւորաց շարքին (սալամագիրք տե՛ս Աղաւնուցի՝ «Միաբան» էջ 61):

ԳԱՍՊԱՐԵԱՆ Գրիգոր, օրէնսգէտ, ծն. Զէյթուն 1877ին: Եղած է կառավարական պաշտօնեայ, աշխատակցած է «Բիւզանդիստ»ի և ուրիշ թերթերու, ունի անտիպ գործեր, կը մեռնի տարագրութեան մէջ 1916ին:

ԳԱՍՊԱՐԵԱՆ Երուանդ ս.Արեան Երուանդ:

ԳԱՍՊԱՐԵԱՆ Եղաբեանց Լեւոն, 1862ին կը նորոգէ Շամախու Բլովնա գղ.ի մօտի հին ուխատատեղին:

ԳԱՍՊԱՐԵԱՆ Հրաչ, 1937ին Լոնտոնի Թրինթի Երաժշտութեան գոյէճին մէջ ջութակի նուագահանդէս մը կու տայ շատ յաջող կերպով:

Հրաչ Կիպրոսցի խոստմնայից երիտասարդ մըն է. վերոյիշեալ գոյէճէն դրամակայն պարզ և սաացած է կատարելագործելու իր արուեստը: Տե՛ս ՅԱԻԵԼ՝ ՈՒԱԾը:

ԳԱՍՊԱՐԵԱՆ Հրանդ, նահագային նախագահ Հայ Ամերիկ. Քաղաքացիներու Լիկին Յառուլը քաղաքին մէջ («Նոր Օր» 1937):

ԳԱՍՊԱՐԵԱՆ Միքայէլ Պեարոս Գ. Կաթողիկոս Զմմառի կաթողիկէից, 1852—8. Սա Զմմառի վանքը կը շէնցնէ և կը բարեկարգէ: Տե՛ս Միքայէլ Պեարոս Գ. կրթ.:



ԳԱՍՊԱՐԵԱՆ ՅԱՐՈՒՔԻՆԸ, ղեղազործ ծնած է՝ վերջի, ուր Մեսրոպեան դպրոցին մէջ կատարած է նախնական կրթութիւնը և յետոյ յաճախած Տարսուսի Ամերիկեան Գոյէճը: Սամանաղբուհեան հռչակումէն ետք անցած է Պոլիս և աւարտած տեղւոյն Օսմ. համալսարանի ղեղազործական ճիւղը: Պալքանեան և ընդհ. պատերազմի լինթացքին՝ ծառայած է թուրք բանակին որպէս ղեղազործ-սպայ: 1923ին Ամերիկա գացած և 1931ին Տիթոյի մէջ մեռած է: («Հ. Կոչնակ» 1931 էջ 280):

ԳԱՍՊԱՐԵԱՆ ՅԱՐՈՒՔԻՆԸ, պատասխանատու խմբագիր Ասիացեան շաբաթաթերթի, հրատ. Երևան 1922—1929:

ԳԱՍՊԱՐԵԱՆ ՅԱՐՈՒՔԻՆԸ, պատ. տնօրէն խմբագիր 1922—3 Աթէնքի Երկունգ օրաթերթի:

ԳԱՍՊԱՐԵԱՆ ՅՈՒՅԻՆ, Ս. Գ. Հնչակեան գործիչ, ծնած է 1867ին Բալուի Հավալ գիւղը, ուր ստացած է նախնական կրթութիւնը: Իբրև վարպետ հիւսն Պոլիս երթալով Համիտի պալատէն ներս կը մտնէ: Հոն արդէն եռանդուն յեղափոխական մը կը դառնայ:

1884 Ապրիլին Չմիւսնիս կ'անցնի, անկէ Ամերիկա երթալու համար, հայրենիքի կարօտը զինքը կրկին Պոլիս կը դարձնէ ուր Հնչակեանութիւնը մեծ ծաւալ ստացած էր: Իրեն կը վիճակի Երուսաղէմ և Եգիպտոս երթալ կուսակցական միախառնով: 1891ի սկիզբը միայն Ամերիկա կը հասնի, կը հաստատուի Նիւ Եորք և Հնչակեան մասնաճիւղի մը հիմը դնելու ետէն կ'ըլլայ եւ կը յաջողի: 1894ին հայրենիք կը մեկնի և կ'ամուսնանայ: 1897ին ոտքը կը դնէ Հնչ. կուս. կեդրոնէն ներս, Լոնտոն, ուր ամիսներ վերջ կարգ մը գործերու ծանօթանալէ ետք կը մեկնի Պէյրուս տէրորիստական գործով հայակեր նազըմ փաշայի որպէս հոգեատ հրեշտակը: Անկարելի ըլլալով Պէյրուս մըտնել՝ կ'անցնի Կիպրոս, կը վարէ կուսակցական գործերը մինչեւ 1899 և յետոյ կրկին կ'երթայ Ամերիկա:



Գասպարեան Յոսիպ

Հոն չորս տարի կ'աշխատի նաւերու մէջ իբրև հիւսն. անկէ ետև կրկին կուսակցական գործին կ'անցնի: 1909ին Պոլիս կ'երթայ Ամերի-

կայի Հնչակեան պատգամաւորի պաշտօնով: 1912ին դարձեալ Ամերիկայ է. մէկը կ'ըլլայ անոնցմէ որոնք «Երիտասարդ Հայաստան» շաբաթաթերթը կը հիմնեն: 1916ին ամէն գնով կովկաս կ'երթայ իբրև պարտաճանաչ զինուոր: Ս. Գ. Հնչակեան կամաւորական շարժման գործերու յաջող դասաւորումէն վերջ կրկին Ամերիկա կը վերադառնայ և կը հաստատուի Փրավիտէնսի մէջ և կը նուիրուի կուսակցայէն աշխատանքի միշտ առաջին գծի վրայ պահելով ինքզինքը: («Ս. Գ. Հնչակեան Յուսարձան» էջ 163):

ԳԱՍՊԱՐԵԱՆ ՇԱՌԷ ԵՎ. ծնած է Այնթապ 1882ին: Աշխարհական անունով Հմայակ Փլաւճեան, յետոյ եկեղեցական սքեմը առնելով կը կոչուի Տ. Շառէ Գասպարեան, հետեւեցաւ տեղւոյն լաւածանօթ վարդանեան կրթարանին ուսմանց ընթացքին, այդ կրթարանի գրասեղաններուն վրայ զգացիր կոչումը եկեղեցական ծառայութեան մարդին մէջ մտնելու: Հաջիւ աւարտած զայն՝ մտաւ տեղւոյն



Շառէ Եւ. Գասպարեան

Ամերիկեան գոյէճը, ուսկից թերաւարտ՝ անցաւ Արմաշու դպրեմանքը ուր կրեց Օրմանեանի, Գուրեանի և Գուշակեանի ազդեցութիւնը: Զեռնադրուելէ ետքը գրեց իր աւարտական քեզը Սողոմոնի Առակաց իմաստասիրութեան վրայ եւ ստացաւ վարդապետական աստիճան:

Ամէնէն առաջ իր առաջնորդական փոխանորդ պաշտօնի կոչուեցաւ Մերսին Ատանայի թեմին կողմէ: Յետոյ վարեց Ատանայի առաջնորդութիւնը: Ժամանակ մը պաշտօնավարեց Հայէպի մէջ: 1913ին Շառէ Մ. վրդ. գոհացնելու համար իր ուսման ծարաւը Ամերիկա կը մեկնի և իբր ուսանող Բէյմպրիճի Եպիսկոպոսականաց Սատուածարանական ճեմարանը կը մտնէ, որուն ընթացքը կ'աւարտէ և կը ստանայ Պսակաւոր Աստուածաբանութեան տիտղոսը: Այնուհետև կոչուեցաւ Պոսթընի հովուութեան պաշտօնին. 1930ին Անթիլիասի Դպրեմանքի վերատեսուչ կարգուելով՝ հոն մեկնեցաւ, ուր յոյժ օգտակար եղաւ իր ներկայութիւնը: Դպրոցը ծաղկեցաւ և բարգաւաճեցաւ: Ի նշան գնահատութեան զոյգ



կաթողիկոսները զինքը բարձրացուցին եպիսկոպոսությունների և յետոյ պատուեցին Արքուքեամբ: Հինգ տարուան անխոնջ ծառայութենէ յետոյ, երբ Սրբազանը զգաց որ առողջական վիճակը չի ներեր իրեն մնալ Անթիլիասի մէջ, որոչեց Պոսթոն դառնալ իր ծերունազարդ ծնողաց մօտ: Սակայն վերադառնալէ առաջ փափագեցաւ ուխտի երթալ Խ. Հայաստան, ուր յանկարծամահ եղաւ 1935ի աշնան և թաղուեցաւ մեծ շքով: («Հ. Կոչնակ» 1935 էջ 1181, տե՛ս Էւ «Սինո» 1935 էջ 392 Էւն.):

ԳԱՍՊԱՐԵԱՆ Պաղտատր s. Չաբաղեցի Պաղտատր ամիրա:

ԳԱՍՊԱՐԵԱՆՅ Զօրավար, Պազրկանեանի հետ թէհրանի մէջ դպրոց մը կը բանայ:

ԳԱՍՊԱՐԵԱՆ Սարգիս, եպ. Եւզոկիացի ժէ դարու կիսուն ծնած, 1690ին Կաթողիկ Հայեր կոչուած հասարակութիւն մը կազմած էր:

ԳԱՍՊԱՆՏԻԼԵԱՆ Յովսէփ. ծնած Տրապիզոն, աշկ. Վենետիկոյ Մ. Ռափայէլեան վարժարանի. 1928—32 կը մտնէ Փաւլայի (Իտալիա) համալսարանը: ուսկից ղեղազործի վկայական կը ստանայ 1932ին և յետ պետական քննութեան մ'ալ կը մտնէ գործնական ասպարէզին մէջ: Տե՛ս Քասաբանիսիւեան Հ. Արխասկէս:

ԳԱՎԱԳ, գղ. Կիւրինի, Հայերը 15 տուն էին, ունէին վարժարան: Տե՛ս Աարք գավազ:

ԳԱՎԱԼԱ քղ. Յունաստանի, ուր հին հայ գաղութ մը գոյութիւն ունեցած է 1737էն ի վեր, առանց եկեղեցիի և դպրոցի, Սելանիկէն ու Տէտէ Աղաճէն Գավալա կ'երթային քահանայք մկրտութիւն և պսակ կատարելու: 1912ին երբ Գավալան Պուլկարներէն զրաւուեցաւ՝ Հայերը 1912ին եկղ. մը շինեցին զոր յետոյ Յոյները առին Հայոց ձեռքէն:

Երբ Բիւթանիոյ Հայերը 1921ին Գավալա կը գաղթեն 30—40 հայ ընտանիքներ կը հաստատուին քաղաքին մէջ: Իզմիրի աղէտէն ետք 1922ին, գաղութը կը բաղմանայ 400 ամուրիներով: Ունին թաղականութիւն և ազգային կազմակերպութիւններ, քահանայ դպրոց և եկեղեցի: Հայերը ընդհանրապէս ծխախոտի գործով կը զբաղին: Կան 45 բողոքական և 25 կաթողիկ Հայեր իրենց պատուելիով և վարդապետով:

ԳԱՎԱԼԵԱՆ Օր. Կիւլայ, Իզմիրցի, յայտնի դաշնականաբուհի, ուսած է Մանչեսթրի Գոլէն ակ Միւլգիէի մէջ: Անդրանիկ նուագահանդէսը տըւած է 1926ին:

ԳԱՎԱԼՃԵԱՆ Տոք. Զարուհի. ծնած Առաքազար, բժշկութիւնը ուսած Ամերիկա: Առաջին հայ

բժշկուհին եղած է Տօքթ. Օրֆէլիա Գասապեանի հետ (տես) Թուրքիոյ մէջ: Կը գործէ Պոլսոյ մէջ: ԳԱՎԱԼՃԵԱՆ Տոք. Սերոբէ. ծն. Առաքազար, հայր Տօքթ. Զարուհի, բժշկութիւնը ուսած Ամերիկա երկար տարիներ բժիշկ Առաքազարի մէջ: Խնամակալութեան ատենապետ և պատ. Տնօրէն Հայուհեաց վարժարանի, դասախօսած է երկար տարիներնոյն վարժարանին մէջ ընագիտութիւն: Տե՛ս ՅԱԻԵԼՈՒԱՍԻՐ:

ԳԱՎԱԼՃԵԱՆ Վահան, ղեղազործ, ծնած է Առաքազար 1874ին. երիտասարդ հասակին Ամերիկա կ'երթայ և 1903ին ղեղազորութեան ընթացքը կ'աւարտէ. ունեցած է իր սեփական ղեղարանը և կիրակնօրեայ դպրոցի Զափահասներու կարգին ուսուցչութիւն ըրած է: Արկածով կը վախճանի 1937 Մարտ 28ին:

ԳԱՎԱՅԵԱՆ Արամ, երաժշտագէտ, 1937ին իր տիկնոջ հետ կը սկսի նուագահանդէսներ տալ:

ԳԱՎԱՅԵԱՆ Գարեգին, թուարանագէտ, երկար տարիներ ուսուցիչ և տեսուչ եղած է Պոլսոյ Ազգային վարժարաններու մէջ. հեղինակ դասագրքերու: Վախճանած է 1923 Նոյ. 29ին: Իր տիկինը Աղաւնի մեռած է յաջորդ տարին:

ԳԱՎԱՅԵԱՆ Գեղամ, ծն. Պոլիս, որդի Գարեգինի, տնօրէն եղած է Ղայաթիոյ Կեդրոնական վարժարանին 1917—22, 1923: Վկայեալ երկրաչափ Բարիդի Ponts et Chausséesին:

ԳԱՎԱՅԵԱՆ Նասիպ, նշանաւոր ճարտարագէտ, 1910ին Թարապիայի (Կ. Պոլիս) մէջ կը մեռնի:

ԳԱՎՈՒԳՃԵԱՆ Անտոն, ծն. Բերա, մասնակցած է ֆրանսական օբեքայի խումբին, յետոյ Մարսիլիոյ օբեքային:

ԳԱՎՈՒԳՃԵԱՆ Օր. Ասդիկ, s. ՅԱԻԵԼՈՒԱՍԻՐ:

ԳԱՎՈՒԳՃԵԱՆ Օր. Ալիս, ղեռատի նշանաւոր պարուհի, Փորթուգալի և Սպանիոյ մէջ կատարած պարական թուռնէի առթիւ գնահատուած է 1932ին: 1933ին Լոնտոնի «Ափօլլօ-Թիէթր» մեծ թատրոնին ներկայացուցներուն հրաւիրուած էր մասնակցել ըրլոնիական և սպանիական պարերով և փայլուն յաջողութիւն մը գտած: Անգլիական թերթերը մեծ գովեստով զրուստած են («Անալիս» 1932 p. 1-2, «Կեսնի Էւ Արուես» 1934 էջ 66-7):

ԳԱՏԱՎԵԱՆ գղ. Դմանիքի՝ Վրահայաստանի մէջ յիշուած Վախուշտէն:

ԳԱՏԸ ՔէՕՅ տե՛ս Իսքանպուլ:

ԳԱՏԻԼԷ, այլազգարնակ գղ. Այրարատայ Ուրծ և Առած գուր մէջ:

ԳԱՐԱՍՄԻԿ s. Տիգրանակերտ:

ԳԱՐԱՍՐԵԱՍԶ, լեռ Սիւնեաց Գեղարքունի գուր Արեգունի վիճակին մէջ:



ԳԱՐԱԲԱՋԱՐ, գղ. Այրարատայ Բաղրեւանդ գո.ի մէջ, 1877ին 30 և 1882ին 10 տուն հայ բն. ունէր:

ԳԱՐԱԳԱԲՈՒ (Սեւ Դուռն), լեռ և նեղ անցք Կիլիկիոյ մէջ:

ԳԱՐԱԳԱԼԷ, կամ Չոլկեթ, գղ. և բերդափակ ձակատք գո.ի, աւերակ և անրնակ: Տես Ղարաղալի:

ԳԱՐԱԳԱՆՈՒ կամ Գարահանիլի գղ. Զանգեզուրի, ունի 1600 հայ և 300 այլազգի բնակիչ:

ԳԱՐԱԳԱՅԱ (Սեւ սար), այլազգարնակ գղ. Վայոց-ձոր գո.ի Մօտերը կան հայկական եկեղեցիներու մնացորդներ:

ԳԱՐԱԳԱՅԱ, սար Սիւնեաց Երզնկ գո.ի մէջ:

ԳԱՐԱԳԱՅԱՆ, հայարնակ երկու գիւղեր Վարի Կեղիի մէջ, ուր սեւագոյն քարեր կան:

ԳԱՐԱԳԱՇ կամ ԳԱՐԱԳԱՇԵԱՆ:

ԳԱՐԱԳԱՇԵԱՆ Գրիգոր, գործարանատէր, ծնած է Թրիբոլի (Տրապիզոն) 1878ին: Իր ծննդավայրին մէջ եղած է Թաղ. Խորհուրդի անդամ եւ ունեցած է ազգ. գործունէութիւն: 1923էն ի վեր հաստատուած է Պուքրէշ և անդամակցած ազգ. ղանադան մարմիններու՝ գործօն դեր ստանձնելով: Պուքրէշի մէջ ունի թէքսթիլի գործարան մը և մանիֆաթիլի վաճառատուն:

ԳԱՐԱԳԱՇ Երանուհի, դերասանուհի, ծն. Պոլիս 1848-ին, եղած է Տաճկահայ բեմի ամենափայլուն աստղերէն մին: 1864—5ին երբ Արեւելեան թատրոնը Սրապիոն Հէքիմեանի վարչութեան ներքե էր. Երանուհի հազիւ 16 տարեկան իր սեպիլն կը կատարէ Մեծ Տրապիզոնի սրբերգութեան մէջ Աշխէն տիկինի դերով:

Յակոբ Վարդովեանի թելադրութեամբ էր որ Երանուհի, ինչպէս և իր կրտսեր քոյրը Վերգինէ բեմին կը նուիրուին հաւանութեամբ իրենց ծրնողքին:

Երբ Վարդովեան կը վարէր թատերախումբ մը որ կը գործէր Կէտիկ Փաշայի և Սկիւտարի թատրոններու մէջ, Գարագաշ քոյրերը կը մասնակցին և կրկար ատեն կը շարունակեն իբրև յաջողակ երկու տարրերը այդ խումբին: Երանուհի բացի իր արտակարգ գեղեցկութենէն ունէր եւ քնքոյշ ձայն մը, որուն շնորհիւ մասնակցած է նաև Ս. Պէնյեանի գուսաներգութեանց: Այլև այլ քաղաքներ այցելած է, ինչպէս Էտիրնէ (1878), Թիֆլիս (1880), Գահիրէ (1885 եւ 1888), թէ՛ գուսաներգութեանց և թէ՛ արամաներու մասնակցելով և ամենուրեք գտնելով խանդավառ ընդունելութիւն:

Այդ թուականէն ետք տասնեակ մը տարի ասպարէզէն կը քաշուի՝ առանձնութեան մէջ

վայելելով իր շահած դափնիներուն և բեմական յաջողութեանց սրտահաճոյ յուշքը, որ գերազոյն վայելքն է արուեստագէտին:


Վերադառնալով Թիֆլիս՝ կ'ամուսնանայ Արդութեան Երկայնարազուկ Աղեքսանդր իշխանին հետ, որ անոր տաղանդին գնահատող մըն էր իր հասուն տարիքին մէջ՝ և հիացող մը արեւելեան գեղեցկութեան, որով օժտուած էր Պոլսահայ արուեստագիտուհին: (Ս. Գալեթեան՝ «Նաւարդ» Գ. արթի, էջ 381, սես եւ Թեոդիկ՝ «Ամ. Տար.», էջ 181):

ԳԱՐԱԳԱՇԵԱՆ Թովմաս, ս. Սեյօնեան:

ԳԱՐԱԳԱՇԵԱՆ Կարապետ, ծն. Արնաուտքէօյ (Վոսիօր) 1840 Հոկտ.ին: Հայրը՝ Բերդէ՛ Կարնեցի էր, և ամուսնացած՝ Օր. Թագուհի Էքիլի հետ, յետոյ Պոլիս անցնելով՝ քառօրէ դար իբր գործակատար ծառայած է փողերանոցի վերատեսուչ Յակոբ Չէլէպի Տիւզի, ջերմ ուսումնասէր՝ խնամելով կրթութիւն կու տայ իր զաւակաց, որոնցմէ Կարապետ մինչև 13 տարու՝ հայ և օտար լեզուներ կ'ուսանի համադաւան Չամիչ աղնուատոհմ ընտանեաց մօտ, և 1853ին՝ ասոնց և Միհրան պէյ Տիւզի պաշտպանութեամբ կը զրկուի Բարիզ Մուրատեան վարժարան ուր արտակարգ ընդունակութիւն ցոյց կու տայ Ֆրնս, և անդլ. լեզուաց, դասընկեր ունենալով Միք. Փորթուգալը, Յովհ. Սաբըզն ու Պետր. Բէրէստէճեանը, որոնք իրեն պէս երկար ատեն Օսմ. ելմտ. նախարարութեան մէջ բարձր պաշտօններ պիտի վարէին ապա, և Թուրքիոյ քայքայուն վարկը բարձրացնելու պիտի նկրտէին: Գարագաշ դպրոցին մէջ կը խառնուի վարիչներու միջև ծագած անհամաձայնութեան, կողմնակցելով Հ. Գարբիէլ Այվազովսքիի՝ ընդդէմ նոր անօրէն Հ. Ռ. Թրեանցի: Խթման իրկուուն մը արտասանած կրակոտ ճառովը կը կազմակերպէ դասադուլ և 1855ին կը ճամբուի: Կը դառնայ ծննդավայր, մինչ խաղմարար երեք վարդապետք յուզի կ'իյնային ղէպի Ռուսիա. այդ աթիւ ինքը դասալիք Այվազովսքիի կ'ուղղէ բուն յանդիմանագիր մը: Պոլիս՝ իր անյադ ուսումնասիրութեան ապացոյցը կու տայ՝ անձանձիր խնդրանքներով ապանովելով իրեն լեզուաղէտ սուսուցիչներ, և մեծ գոհունակութիւն իր պաշտպաններուն, այնուհետև մասնաւոր դասերու կը սկսի կաթողիկ բարեկեցիկներու տունները, վաստակն ալ յատկացնելով ինքնադարգացման կը շահագրգռուի բանաստեղծութեամբ, միաժամանակ քղ. տնտեսագիտութեամբ, և այս անհաշտ երկու ճիւղերու մէջ հաւասար ձիւքերով ի յայտ կու գայ Տակաւին 16 տարու՝



կը կարգուի Բ. հաշուակալ ելմտ. նախարարութեան պարտուց հատուցման Արկղին 61ին իբր անձ. քարտուղար՝ կը մտնէ նոյն նախարարութեան պարտուց հատուցման Արկղին 61ին իբր անձն. քարտուղար՝ կը մտնէ նոյն նախարարութեան ընդհ. քննիչ ֆրնս. Բլէօք մարզիչին քով որ կրկին եկած էր Պոլիս՝ դառաջինն օսմ. կառավարութեան կանոնաւոր պիւտճէ կազմելու (հրատարակուած Մեծ-Եպարգոս ֆուլաւ փաշայէ): Այդ դժուար աշխատութեան մէջ երիտասարդ հայ օգնականը կարեւոր րաժին մը կ'ուենայ, և գործօն դեր մը կը կատարէ ելմտ. այն երկարատե րանակցութեանց մէջ...



Գարագաւեան Կարապէս

Կ. Գարագաշ, յաջողութիւն ձեռք բերելէ և չորս տարի արդիւնաւորապէս պաշտօնավարելէ վերջ՝ նորէն կ'անցնի ելմտ. նախարարութիւն կարգուելով պետ ներքին փոխառութեանց միացման առթիւ կազմուած 100ին 5 ընդհ. պարտուց հաշուակալութեան ղիւանիս 69ին, յանձնարարութեամբ Եպարգոս Ալի փաշայի, ելմտ. նիւր. Սաաղգ փաշա կ'անուանէ զինք այդ նախարարութեան ֆրնս. ի ընդհ. քարտուղար. և պետ ելմտ. րանակցութեանց ղիւանի: Գարագաշ անպաշտօն էր 1871ին, և այդ վիճակին մէջ էր, երբ 2 տարի վերջ՝ Եպարգոս Նէտիմ Փաշայի նոյն տարին կնքած և Բարիզ հրապարակ հանուած փոխառութեան ձախողանքին և զանձային մուրհակաց (Bons de Trésor) անվճար մնալուն հետեւանօք՝ երկիրը կ'ենթարկուի ծանր տագնապի Ատոր ի դարման, Գարագաշ կը ներկայացնէ ելմտ. բարենորոգման ծրագիր-յուշագիր մը՝ Պանք Օթօմանը վերածելու պետական զրամասան մը:

Գարագաշ ելմտական նախարարութեան մէջ միշտ գնահատուած պաշտօնատար մը կ'ըլլայ: 96ին կը բարձրանայ Հաշուակալութեան Ատենի անդամակցութեան: Ունէր «Ուլա Սանիսի» աստիճան: 1900ին կաթուածահար՝ հանգստեան կը կոչուի Մեռաւ 21 նոյ. 1902, իր փայլուն գրիչով պահեց ուրոյն տեղ մը գրական աշխարհին մէջ: Գերագանց էր մանաւանդ ֆրնս. լեզուաւ

բուն այլ բարեկիրթ վիճարանութեանց մէջ: Իբր քաջ ելմտագէտ ու ֆրանսագէտ՝ իր կարողութիւնները լրագրութեամբ այ ի յայտ բերած է, 17 Ապրիլ 1887-5 Մայիս 1888 մինակը խմբագրելով «Gazette Économique et Financière» շաբաթաթերթը 51 թիւ, ուր կ'ըստորագրէր R.—10 դար առջ ապրող Romuald Բենեդիկտեան սուրբին սկզբնատառը, որով երեւցած է նաեւ ուրիշ թերթերու մէջ: Ինքնաշխատութեամբ սսած էր գերմաներէն այ՝ սիրած բանաստեղծներուն քերթուածները հայացնելու համար: Ինքնագիր քերթուածներէն զատ՝ կառարած է օտար հեղինակներէ թաղմամբիւ թարգմանութիւններ ուր զգացում, ճաշակ, հարազատութիւն և լեզուական նրբութիւն հաւասարապէս կը փայլին և զորս ապա հրատարակած է առանձին գրքոյնիներով, յաճախ բնագրաց դէմ-յանդիմանութեամբ.— «Բանի մը թարգմանութիւնք ի գաղղիականէ» 1879, «Մաղկաքաղ օտարաղղի քերթողաց» Ա. և Բ. 1870-80, «Հատընտիր թարգմանութիւնք յօտարաղղի քերթողաց» 1886, «Հատընտիր թարգմ. ի գաղղիացի քերթողաց» 1887: Նախասիրած հեղինակներն էին Տանդէ, Լուիճի Գարրէր, Լէոնարտի, Ուշլանտ, Լամարթին, Հիւկօ, Օ. Պարպիէ, Ս. Բրիւտօմ եւ այլն: Կ'անդամակցէր յաճախ Ուսումնական Ուորնուրդին, զի մեծ բարեկամ էր կրթութեան՝ որուն մասին հրապարակուեալ արտայայտուած է, 1885ին ատենաբանելով Բանկայթիի Ս. Յակոբայ վարժարանի պարզ. հանդէսին: Այդ ձառը տպուած է նոյն տարին զատ տեարով, իր կարեւոր գործը պիտի մնայ հիմնարկութիւնը Բերայի Կաթիլիկ Հայոց Ս. Գր. Լուսաւորիչ վարժարանի՝ զոր լիսէի ալ վերածեց ու ցմահ՝ զուրգուրաց վրան, (հերու 1925 ամրան փակուած՝ Միլլի կառավարութեան հրամանաւ): Նկարագրով խիզախ ու նախաձեռնարկ, յղացող, կազմակերպող ու միւր, այլ չուայ յուր մատակարար և մամոնատեաց, ինչպէս կ'ըլլան արդէն իրեն պէս տեսլապաշտներէն շատեր: «Բազմալէպ» 1936 էջ 301. սես նաեւ «Մաղիկ» 1903 էջ 460, «Եողիկ» 1926, էջ 673):

ԳԱՐԱԳԱՇ ՀԱՅԿ, խմբագիր, հեղինակ, դերասան, ծնած է Թէհրան 1893ին, ուր Լուի զօլէճին մէջ ստացած է իր կրթութիւնը և յետոյ ինքնօգնութեամբ և ինքնաշխատութեամբ զարգացած է: Բացի մայրենի լեզուէն զիտ պարսկերէն, ֆրանսերէն, անգլիերէն և որոշ չափով ռուսերէն եւ թուրքերէն:

Շուրջ 8 տարի Պարսից պետական պաշտօնեայ եղած է ղինուորական հիմնարկութիւններու մէջ:



Երկար տարիներ ծառայած է նոյնպէս Անկլո-  
 Բերժէն ընկերութեան, Իմրէրիալ, Օթթօման դրա-  
 մատանց և ուրիշ եւրոպական հաստատութեանց  
 մէջ: Տիրապետելով  
 ֆրանսերէնի՝ այդ լե-  
 զուն զասաւանդած է  
 բազմաթիւ հայ և  
 այլազգի աշակերտնե-  
 րու նոյնպէս Թէհրանի  
 Հայկազեան սանե-  
 րուն:



Հայկ Գարագաւ

Մանուկ հասակէն  
 սիրահար եղած է բե-  
 մին և գրականութե-  
 ան, 1910էն սկսած  
 միշտ խաղացած է  
 Թէհրանի հայ բեմին  
 վրայ, իրեն վարպետ  
 ունենալով Մանուէլ-  
 եան, Արեւեան, Տիկին Սիրանոյշ, Արմէնեան, Ի-  
 փէկեան բեմի վարպետները, որոնք յաճախակի և  
 երկարատեւ այցելած են Իրանի մայրաքաղաքը:

Թէհրանի մէջ հիմնած է Թատերական Միու-  
 թիւն մը, որը շուրջ երկու սէզոն պահած է իր  
 գոյութիւնը:

Հ. Գարագաւ գրական յօդուածներով և թարգ-  
 մանութիւններով յաճախ երևցած է տեղական  
 թերթերու մէջ: Շատ մը թատերգութիւններ  
 թարգմանած է, որոնք խաղացուած են Թէհրանի  
 մէջ և շրջակայքը:

Խմբագրած է «Բորոխ» զաւեշտաթերթը 1920-  
 Էն սկսած և դադարէ մը ետքը կրկին սկսած է  
 վերահրատարակել: 1927—1930 հրատարակած է  
 Պարսկահայ Տարեցոյցը, և 1930էն սկսած՝ խմբ-  
 րագրած է «Վերածնունդ» շաբաթաթերթը, «Բոր-  
 րոխ» յաւելուածով:

Հ. Գարագաւ իր որոշ դերը ունեցած է պարս-  
 կական թատրոնի զարթոնքին մէջ: Մերթ մի-  
 նակ, մերթ ո՛րէ պարսիկ բարեկամի ընկերակցու-  
 թեամբ թարգմանած է ու խաղացած է պարս-  
 կերէն բիւսներ, ինչպէս նաև Բաղսասար Աղբարը,  
 Կեցողանի Մեռեալները և այլն:

Հայկ Գարագաւ գրեթէ միշտ եղած է հասար-  
 ակական մարմիններու, ինչպէս և նախկին ըն-  
 կերութիւններու մէջ: Անցեալին մէջ Թէհրանի  
 Հայոց Համայնական Խորհուրդի նախագահ եղած  
 է և այդ պաշտօնը շատ ատեն վարած է:

Գեղարուեստական շարժումներու և մշակնե-  
 րուն քաջալերիչը եղած է ինք անձամբ և իր  
 մամուլով: Իր հասցէն է՝ Häig Karakach Teh'ran  
 (Iran):

ԳԱՐԱԳԱՇ Օր. Մարի Լուիզ, երգչուհի, ծնած  
 Աննաուուաթէոյ (Պոլիս) ու աւարտած Ամերիկ-  
 եան Աղջկանց Քօլէժի ուսումնական շրջանը, Օր.  
 Մառի Լուիզ Գարագաւ երգի դասեր առած է  
 Սուքանօֆէն, Սքարաէլէն և Դալարիքոյէն: Այս  
 վերջնոյն կ'ազմակերպած երգչախումբին քանի  
 մը տարի առաջ, իբրև մենբրոզ մասնակցելով,  
 յաջողութեամբ երգած է այն ատենուայ անդ-  
 լիական դեսպանուհիին, Լոյսի Քլարքի յօրինած  
 երգերը, մեծապէս դնահատուելով:

Անցեալ տարի Մաէսթրօ Քարուէլլիի և տե-  
 զական օտար ուժերու կողմէ բեմադրուած Թրա-  
 վիաքա օրերային մէջ, Օր. Մառի Լուիզ Գարա-  
 գաւ յայտնութիւն մը եղաւ Գամելիադարդ տիկ-  
 նոջ դժուարին դերին մէջ, երևան բերելով sop-  
 rano liriqueի քաղցր

ձայն մը և բեմական  
 արուեստի գնահատե-  
 լի յատկութիւններ:  
 Հայ շրջանակները  
 դայն ձանչցան Կեղ-  
 րոնական Երգչախում-  
 բի 1934 Մայիս 18ի  
 երգահանդէսին: Անկէ  
 վերջ անցաւ Սոֆիա  
 ուր երգահանդէս մը  
 տուաւ: Անկէ վերջ  
 մեկնեցաւ Միլանօ,  
 ուր երգի անուանի  
 ուսուցչի մը Փիքօլիի Օր. Մարի Լուիզ Գարագաւ  
 ձեռքին տակ կատա-



րելագործեց իր արուեստը, բեմի արուեստագի-  
 տուհի դառնալու համար: 1935ին երգած է Մի-  
 լանոյի մէջ: («Հիւ. Տար». էջ 351):

ԳԱՐԱԳԱՇԵԱՆ Օր. Մայլա, գուսար պ. և Տիկ.  
 Համազազսպ Յ. Գարագաւեանի, Սթօէնհէմի Հայ  
 Սքուլէն շրջանաւարտ եղաւ յաջողութեամբ:  
 Օր. Գարագաւեան Միացեալ Նահանգաց պատ-  
 մութեան մասին իր ունեցած հմտութեանը հա-  
 մար «Մաքտօնայտ» մետալիոնին արժանացաւ:  
 Օր. Գարագաւեան իր դպրոցի թերթին խմբ-  
 րագրապետը եղած է, և յաջողած է թերթը իր  
 բարձր մակարդակին վրայ պահել «Հ. Կոչնակ»  
 1931 էջ 921):

ԳԱՐԱԳԱՇԵԱՆ Հ. Մասաթիա (Ալիսն), հայկա-  
 րան. պատմագէտ, բանասէր, Վիեննայի Մխի-  
 թարեան Միարան, ծնած է 1818 Փետր. 11ին ի  
 Կ. Պոլիս՝ Գաղատիացի ծնողքէ: 1832ին Վիեննա  
 կը գրկուի, ուր ուսման շրջանը կատարելէ ետք  
 1840ին քահանայ կը ձեռնադրուի Վանքին մէջ:



Իզմիր պաշտօններ վարելէ ետք՝ 1856ին Պոլիս կ'երթայ և կը հրատարակէ կեանքը իր 1883էն Պայպլ Հատուկ մէջ թարգմանութեանց հսկելու պաշտօն կը ստանձնէ, կը դասախօսէ Պէշիկթաշի և ուրիշ վարժարաններու մէջ: Կ'աշխատակցի շատ մը թերթերու: Վիեննա գտնուած ատեն կը հրատարակուի իր անդրանիկ գործը «Բոսուլեայի խօսք վասն պատմութեան ազգաց» (1881) իր գլուխ գործոցն է «Քննական պատմութիւն Հայոց» 4 հատոր գործը, 1903 Նոյեմբեր 26ին կը մեռնի Պոլսոյ մէջ:

Գարագաշեան Մատաթիա վրդ. սքեմը թողնելէ վերջ իր մկրտութեան անունը առաւ վերըստին, ու գործերը հրատարակեց Անտոն Մատաթիան Գարագաշ անունով:

- Իր գործերն են.
- 1. «Արուեստ ճարտասանութեան» տպ. Վիեննա, էջ ԺԴ+308:
- 2. «Նկարագիր Ուսմանց» տպ. Վիեննա 1845, էջ 360:
- 3. «Սկզբունք Տրամարանութեան», տպ. Պոլիս, 1864, էջ ԺԴ+304:
- 4. «Համառօտ պատմութիւն փիլիսոփայութեան», տպ. Պոլիս 1868 էջ 76:
- 5. «Համառօտ փիլիսոփայութիւն», տպ. Պոլիս 1868, էջ 104:
- 6. «Կանոնք քաղաքավարութեան», տպ. Պոլիս 1868, էջ 128:
- 7. «Քերականական լուծում», տպ. 1861, էջ 35:
- 8. «Կրթութիւն հայերէն քերականութեան», տպ. 1864, էջ 114:
- 9. «Դպրութիւն կամ Նոր քերականութիւն հայերէն», տպ. 1862, էջ 13+ԻԴ+228 (ինը արպագրութեան արժանացած):
- 10. «Դործնական Քերականութիւն Հայ լեզուի», տպ. 1870, էջ 256 (տասն անգամ տպուած):
- 11. «Բանալի Գործ. Քերականութեան Հայկ. լեզուի», տպ. 1870, էջ 104 (երեք անգամ արպուած):
- 12. «Համառօտ նոր Քերականութիւն» տպ. 1865, էջ 90 (14 անգամ տպուած):
- 13. «Սկզբունք հայերէն քերականութեան», տպ. 1878, էջ 79 (երկու անգամ տպուած):
- 14. «Աշխարհաբար քերականութիւն», տպ. 1885, էջ 182 (երեք անգամ տպուած):
- 15. «Աշխարհագրութիւն համառօտ քաղաքական» տպ. 1866, էջ 123:
- 16. «Աշխարհագրութիւն քաղաքական», տպ. 1873, էջ 131:

17. «Աշխարհագրութիւն ուսումնական» տպ. 1872, էջ 120 (երեք անգամ տպուած):

18. «Աշխարհագրութիւն քաղաքական», վերջին փոփոխութեանց համեմատ, տպ. 1880, էջ 142:

19. «Աշխարհագրութիւն բնական», էջ 100:

20. «Համառօտ պատմ. Ս. Գրոց», տպուած 1873, էջ 151 (7 անգամ տպուած):

21. «Փոքրիկ քարտուղար» տպ. 1873, էջ 312 (3 անգամ տպուած):

22. «Գաղղիերէն քերականութիւն ըստ Օրէնտորֆի», տպ. 1871, 615 էջ (3 անգամ արպուած):

23. «Բանալի հրահանգաց» (վերնոյն) տպ. 1883, էջ 186:

24. «Արձագանգ Բարիդի», ժողովուրդազգայն տպ. 1893, էջ 283:

25. «Մատենադարան Նախնեաց», տպ. 1866, էջ ԺԳ+400 (5 անգամ տպուած):

26. «Արմենակ կամ Նոր ընթերցարան», Ա. մասն, տպուած 1888, էջ 128 (երկու անգամ արպուած):

27. «Արմենակ», Բ. մասն տպ. 1892, էջ 119 (երկու անգամ տպուած):

28. «Սորէն կամ Առաջին ընթերցարան», տպ. 1893 էջ 80:

29. «Պատմութիւն Հայոց», տպ. 1886 էջ 142, (երկու անգամ տպուած):

30. «Քննական Պատմութիւն Հայոց», Ա. մասն, տպ. Պոլիս 1880 էջ 281:

Բ. մասն՝ տպ. Թիֆլիս 1895, էջ 279:

Գ. մասն տպ. Թիֆլիս 1895 էջ 381:

Դ. մասն՝ տպ. Թիֆլիս 1895 էջ 293:

Գարագաշ թարգմանած է Լաֆօնդէնի, է. Մարթէնի, Ռասինի, գործերէն և խմբագրած է ձառակ ոսկեղէն դպրութեան բանասիրական թերթը: Մահուան առթիւ ժամանակակից բոլոր թերթերը գրած են: (Տե՛ս Հ. Ղազիկեանի «Նոր Մասեմագրութիւն»):

ԳԱՐԱԳԱՆԵԱՆ Մինրան, ղերասան 1850—1877 Վարդովեանի օրէրէթի խումբին մէջ թէնօր, մեռած 1900ին Ազգ. Հիւանդանոցին մէջ: (Սմբատ Դաւիթեան՝ «Նաւասարդ Բ. 22»):



Մասաթիա Գարագաշ



ԳԱՐԱԳԱՇԵԱՆ Մ. Ռուս, տաղանդաւոր դերասան, հօրը կողմանէ թոռն է Ռաֆ. Պատկանեսունի, ծնած է Սիմֆերոպոլ 1887ին. կը մեռնի Պուքրէշի մէջ 1937ին: Կեանքին վերջին տարիները սկսած էր հայերէն սորվիր:

ԳԱՐԱԹԱՇ ՆԵԱՆ, խմբագիր անօրէն 1877ին Պոլիս հրատարակուող Կեփա Արդարութեան շաբաթաթերթին:

ԳԱՐԱԳԱՇԵԱՆ Օր. Շաֆե, դաշնակահարուի, ծն. Պէյրուսի և յաճախած է Հայ Կաթողիկ Քոյրերու Հոփիսիմեան բարձրագոյն վարժարանը: մինչև Brevetի շրջանը:

Պէյրուսի մէջ դաշնակի դասեր առած է նախ Օր. Basilioէն և տաղանդաւոր դաշնակահար Arkadie Kouqueէն, և ապա մտած է Ամերիկեան համալսարանի Institut de Musique (երաժշտանոց) և 1932ին մեծ յաջողութեամբ աւարտած է յիշեալ հաստատութիւնը՝ անվերապահ գնահատանքի արժանանալով, և ուր կը պաշտօնավարէ ներկայիս (1934), իրբեւ Պուքրէշի մէջ զաշնակահարու հի: Օր. Շաֆե Գարագաւեան դաշնակահարու հի:



Օր. Շաֆե Գարագաւեան

Վկայուած է նաև Բարիդի École Normal de Musique էն, Etude d'Enseignementի վկայականով: (Հ. Ա.՝ «Կեանքի և Արուեստի 1935 էջ 43):

ԳԱՐԱԳԱՇ ՇԱԼԱՐԵ, խմբագիր 1922—9ին Երզնանի մէջ լոյս տեսնող «Աշխատանք շաբաթաթերթին:

ԳԱՐԱԳԱՇԵԱՆ ՊՕՂՈՍ-ՇԱԼԱՐԵ, գերասան 1878-1894, սիրահարի դերեր խաղացած է ընդհանրապէս, նախ Ալիքսանեան խումբին մէջ, յետոյ Պուլկարիոյ մէջ աշխատած, ուրկէ անցած է Երզրատոս, 1924ին Պոլիս կը գտնուէր և կ'երևէր բեմերու վրայ: Այս Գարագաւեանին 45 ամեայ յորելեանն է որ 1937ին տօնուած է Կէտիկ-Փաշայի մէջ:

ԳԱՐԱԳԱՇ ՍԱՔԱՍ Մ. 1898—1900 Բագուի եւ Մոսկուայի մէջ հրատարակած է երկու վիպական գրքոյկներ:

ԳԱՐԱԳԱՇ ՎԵՐԳԻՆԵ, գերասանուհի, ծնած Սկիւտար 1856ին, առաջին անգամ բեմ կ'ելլէ 1871ին և կ'երգէ միանգամայն ու Պոլսոյ մէջ կը դառնայ լաւագոյն աստղերէն մէկը, առանց եր-

բեք իր հաւասարը ունենալու: Առաջին ներկայացուցած օրերէթը կ'ըլլայ Լա պիլ Էլիենը Ֆրանսերէնէ թարգմանուած:

1874ին երբ Կէտիկ Փաշայի թատրոնին մէջ Վարդուիան իր ամէնէն փայլուն թատերական գործունէութեան կը սկսի, իր շուրջը կը համախմբուի ժամանակին լաւագոյն արուեստագէտներէն Պէնյեան, Մաղաքեան, Ռշտունի, Թոսպաթեան, Նարիան, Մառի-Նուարդ, Բիստոս, Արաքսիա և Գարագաւեան քոյրերը:

Բայց միայն Պոլսոյ կամ Թուրքիոյ քաղաքներուն մէջ չէ որ Գարագաւեան քոյրերուն համբաւը կ'արձագանգուի: Նոյնքան և աւելի կովկասի մէջ: Երբ հայ թատերախումբը Թիֆլիս կը փոխադրուի, Գարագաւեան քոյրերը հիացում կը պատճառեն: Օր. Վերգինէ այնպիսի մեծ ազդեցութիւն կը գործէ իր խաղարկութեամբ որ ներկայացումէն վերջ երբ կը պատրաստուի տուն վերադառնալ կառքով, Թիֆլիսի հայ ուսանողները կ'արձակեն ձիերը և իրենք լծուելով մինչև իր բնակարանը կը տանին զինքը:

Ութսունական թուականներուն Օր. Վերգինէ Իզմիրի մէջ Պէնյեանի հետ միջոց մը խաղարկութիւններ կը կատարէ ամառնային թատերաբեմի վրայ և քիչ մը ատեն ալ Քամարոնի թատրոնին մէջ, իր սովորաց ձայնով ու բնական խաղարկութեամբ հիացում կ'ազդէ: Իր խաղացած օրերէթներն էին Ժիրոնի-Ժիրոնի, Լեպլեպլեի, Մասալ Անկո:

Թէ՛ հայ և թէ՛ օտար թերթեր գովեստով կը խօսէին իր մասին: Աթէնքի Ֆրանսական հնագիտական դպրոցին հեռուողներէն Կասթոն Տէշան, որ այդ միջոցին տեսեր է Օր. Վ. Գարագաւեան, միեւնոյն ամառնային թատերաբեմին վրայ, մեծ գովեստով կը խօսի իր մէկ նշանաւոր և գեղեցիկ երկին մէջ:

Այս Ֆրանսացի դրողին գնահատումը շատ մը գնահատանքներէ աւելի արժէք ունի, քանի որ այդ միջոցին Իզմիրի մէջ Ֆրանսական խումբ մըն ալ Մասալ Անկոն կը ներկայացնէր, ու Ֆրանսացին այդ խումբի մասին բան մը չ'ըսեր:

Ասկէ զատ, քիչ վերջ Բարիդ վերագառնալով, Կասթոն Տէշան Թանի թատերական քննադատը եղաւ երկար առեւ, ինչ որ ցոյց կու տայ թէ թատրոնի մասին հասարակ գրող մը չէ, այլ մասնագէտ մը:

Օր. Վերգինէ Գարագաւեանի վերջին ներկայացումը եղած է Իզմիրի մէջ Կրան Մոնկոյը: Առաջին անգամն է որ այս դժուարին և կենսոտ խաղը բեմին վրայ պիտի բեմադրուէր:



Օր. Վ. Գարազաչ ոչ միայն դերասանուհի մըն էր այլ և լայն զարգացում ունէր, լաւ խօսող էր և երգչուհի: Բեմը իր համալսարանը եղած էր, եւ գլխավորաբար իմաստասիրութեան և հոգեբանութեան համալսարանը: Մարդ կրնար ժամերով խօսիլ անոր հետ, առանց ձանձրանալու եւ միշտ ալ հրահանգուելով: Մեռաւ 1933 Յունիսին Աթէնքի մէջ: («Կեանք եւ Արուեստ» 1934 էջ 144, ՏԵՍԱ Ճառ Թեոդիկի «Ա.Մ. Տար.» 1915 էջ 264, 1924 էջ 266):

ԳԱՐԱԳԱՇԵԱՆ Տիգրան, խմբագիր «Գարուն Հայաստանի» կիսամսեայ հանդէսի, տպ. Զմիւռնիա 1862—3:

ԳԱՐԱԳԱՓՈՒԼՈՒ, լեռնակ Շիրակ գո.ի մէջ, ուր աւերակ բերդ մը կայ:

ԳԱՐԱԳԱԶ, գղ. Ուրմիրոյ, 150 տուն հայ բնակիչ ունի:

ԳԱՐԱԳԻԼԻՍԷ կամ Ղարափիլիսէ, վիճակ և աւան Բագրեւանդայ, 1900ին 250 տուն հայ եւ 100 տուն թուրք ու քուրտ բնակիչ ունէր: Տնւնակ ՅԱԵԼՈՒԱՅՐ:

ԳԱՐԱԳԻԼԻՍԷ, գղ. Տիգրանակերտի:

ԳԱՐԱԳԻԼԻՍԷ կամ Ղարափիլիսէ, գղ. Վանանդ (Կարս) գո.ի. 72 տուն բնակիչ ունէր 1900ին:

ԳԱՐԱԳԻԼԻՍԷ, Մեծ ու Փոքր գիւղեր Պոտլայու գո.ի մէջ: Երկուքն ալ հայաբնակ: Առաջինը ունէր (1900ին) 700, իսկ երկրորդը 600 բնակիչ:

ԳԱՐԱԳԻԼԻՍԷ, գղ. Ատրպատականի Մակու գո.ի մէջ, 250 տուն հայ բնակիչ ունի:

ԳԱՐԳԻԼԻՍԷ, մեծ գիւղ Թղուկ գո.ի մէջ: Գիւղս կը յիշուի ժԳ դարու մէջ, Բնակիչք 1829-ին գաղթած են Սոյնէն և Սալմաստէն. կան եւ բնիկներ: Գիւղս ունի 750 հայ, 300 թուրք բնակիչ. եկղ. Ս. Յովհաննէս ՆԿԶ (=1017) թուական կրող արձանագրութեամբ:

ԳԱՐԱԳԻԼԻՍԷ, գղ. Ատրպատականի Մակու գո.ի մէջ, 250 հայ բնակիչ ունի:

ԳԱՐԱԳԻԼԻՍԷ, գղ. Նիզ գո.ի մէջ, ունի 900 հայ բն. եկղ. Ս. Աստուածածին. կը տեսնուին հին եկեղեցւոյն մնացորդները, որ կառուցուած է եղեր սև քարերով:

ԳԱՐԱԳԻԼԻՍԷ ԻԼԼԻ կամ Իլլու, հայաբնակ գղ. Շիրակի, Լենինականէն 14 վերստ հեռի. բնակիչք՝ մօտ 1000, գաղթած զանազան տեղերէ: Հին եկեղեցւոյն տեղը 1850ին կառուցուած է նորը, ունի 1661ին գրուած Ալեուր Աւետարան մը:

ԳԱՐԱԳԻԼԻՍԷ ԽԸԼԻ կամ Ղըլի Ղարափիլիսէ Փոքր, Շիրակի մէջ, Լենինականէն 6 վերստ հեռի. բն. 3600, որոնց 900ը կաթողիկէ. հոս ծնած է Անին երգող Արարատեան վրդ.ը. կաթողիկէ

Հայերը եկած են հոս Արաչկերտէն, ու Մշոյ կողմերէն, ունին Ս. Աստուածածին եկղ. մը 1859ին կառուցուած: Լուսաւորականաց եկեղեցին 1860ին կառուցուած է. մօտն է ռուսաբանը:

ԳԱՐԱԳԻԼԻՍԷ, հայաբնակ գղ. Գուգարաց Տաշիր գո.ի մէջ, Բամբակի-ձորի մէջ, բն. 2800, եկեղեցին շինուած է 1831ին, ունի Ս. Կիրակի Ս. Սարգիս ուխտատեղիներ:

ԳԱՐԱԳԻԼԻՍԷ ՆՈՐ, գղ. Ալեքսանդրապոլի գո.ի մէջ, ունի 350 հայ:

ԳԱՐԱԳԻԼԻՍԷ ՆՈՐ կամ Գալեկիլ, հայաբնակ գղ. Զանգզուրի, ունի 400 հայ բնակիչ:

ԳԱՐԱԳՇԼԱ, Կիլիկիոյ մէջ, Ատանայի վիճակներէն մին:

ԳԱՐԱԳՇԼԱԳԻ կամ Ղարաղլայ, հայաբնակ գղ. Ազաճէճքի, ունի 450ի չափ տուն և քարաշէն եկեղեցի մը:

ԳԱՐԱԳՇԼԱԳԻ, այլազգարնակ գիւղեր Սիւնեաց և Այրարատ երկիրներու մէջ:

ԳԱՐԱԳՈՉ Յովսէփ, 1878ին Պոլսոյ Ատամաբուժական վարժարանէն շրջանաւարտ եղած է:

ԳԱՐԱԳՈՉ կամ Ղարախոչեան Պողոս, Արքեպ. ծնած է շուրջ 1750—60 թուականներուն. 1800ի տեսնները Պրուսայի առաջնորդութիւնը կը վարէր. 1810ին Արմաշի վանահայրութեան պաշտօնը կը փոխանակէ Կարապետ եպ. Եւզոկիացիի հետ, որ Պրուսա առաջնորդ կ'ըլլայ և երբ տարի մը վերջ կը հարկադրուի մեկնիլ Պրուսայէն՝ Պողոսի կը յանձնուի Արմաշ-Նիկամիդիոյ և Պրուսայի միացեալ վիճակը:

«Պատկառանքովը իր սրբակրօն կենցաղին, որուն հրաշապատում յիշատակները կը պահուին ցարդ ժողովրդական աւանդութեանց մէջ, պաշտպանեց վանքը շրջակայ ցեղապետներու մոլեռանդութեան դէմ: Գիտակից հոգածութեամբ հսկեց վիճակին Հայոց ազգային կեանքին վրայ, առիթ և ժամանակ ընծայելով անոնց ներքին բարգաւաճումի իր օրով էր նաև որ շինուեցան վիճակին մէջ եօթը մեծ եկեղեցիներ, ինչ որ կը նշանակէ իր ազդեցութեան մեծութիւնը՝ պետական իշխանութեան առջև, որ քրիստոնեայ հասարակութեան հանդէպ կրօնական աններդամութեամբ բնաւորուած էր շարժիլ:

«Վիճակին ազգային և եկեղեցական կարգն ըստ կարելոյն կանոնաւորել վերջ Ղարախոչեան ձեռնարկեց Արմաշու վանքին բարեկարգութեան:

«Պրուսայի առաջնորդ եղած տեսնէն՝ այդ քաղաքին մէջ հաւաքած էր արդէն աշակերտներու խումբ մը, որոնց մէջ էր նաև Յովհաննէս Չա-



մուրճեան Տէրոյնցը: Անոնցմէ եկեղեցական կեանքի յօժարութիւն յայտնողները Պօղոս փոխադրեց Արմաշ, վերահաստատեց վանական դպրոցը, ու Բարթոլոմէոսը Կապուտիկեանի ծրագրած և իրագործուած վանական կազմը վերանորոգեց աւելի որոշ ու տէական ուղղութեամբ: 1820ին ի հիմանէ շինեց Չարխափանի տաճարը, ընդարձակեց վանքին շէնքը, և դպրոցը վերածեց ուսումնարանի, անոր տեսչութիւնը յանձնելով իր ձեռնասուեններէն Պօղոս վրդ. Թաքթաքեանի: Իր այդ ձեռնասուենները՝ որոնց մէջ պէտք է յիշել նաև Ստեփանոս եպ. Աղաւնունի, Պետրոս եպ. Մերոնեան, Չաքարիա եպ. Թիֆլիսցի (յետոյ առաջնորդ Սեւանայ), և այլն:

Գարազոյ եպ. մեռաւ 1825ին, («Արմաշու վանքին Յոբելեանը» էջ 9, Տես նաև Բաբգին վ. Պարագոջ Պօղոս Արեւայի կեանքէն» յօդուածը, «Արեւելեան մամուլ» 1904, էջ 289, 316):

ԳԱՐԱԳՈՉ Սարգիս, ծնած Հասքէոյ 1 սեպտ. 1865ին: Նախնական կրթութիւնը ստացած ներնէսեան վարժարանը: 1889ին Օսմ. իրաւարանական վարժարանէն շրջանաւարտ՝ կ'ընդգրկէ փաստարանական ասպարէզը: 1897ին կ'անուանուի Պէյրութի առեւտրական դատարանի մնայուն խորհրդական, յետոյ Սելանիկի Կեդր. Ա. հարցաքննիչ մինչև 1901, որմէ յետոյ Բրէվէզայի առեւտր. դատարանի նախագահ, ուր կը մնայ 5 տարի, հոնկէ անցնելով Հոտոս նոյն պաշտօնով: Իր ուղղամտութիւնն ու օրէնսգիտական կարողութիւնը նկատի առնուելով, 1907ին կը կարգուի խորհրդական Գօսովայի քղք. արտասովոր դատարանի, մինչև սահմանադրութեան հռչակում: 1909ին Բերայի նօտարութեան կը կոչուի, քանի մը ամիս վերջ, Պոլսոյ և Բերայի հարցաքննիչ դատաւարութեան. իսկ 1910ին Դատ. նախարարութեան գիււանապետ կ'ընտրուի և անկէ յետոյ թէ վիճակագրութեան և թէ օրինաց դատաւարութեան տնօրէն՝ նոյն նախարարութեան մէջ: ունի Օսմ. Օրինաց և Միջազգ. դաշնագիր-

և զոր նախարարաց խորհուրդը գնահատելով, շնորհաւորած է հեղինակը, ներկայութեան ընդունելով զինք, և ի նշան բարձր համարման՝ վարձատրելով Օսմ. շքանշանով: Սահմանադրութեան հռչակումէն վերջ, Ա. Հայն է որ այս պատիւին կ'արժանանայ: Տես նաև պատրաստութեան համար նախագահութիւն ունենայով, իր ձեռնհասութեամբ Օսմ. տպարանին մէջ զայն ի նորոյ պարագրել կու տայ (ի հաշիւ կառավարութեան): «Ճէրիտէի Ատիէ»ն, և դատ. նախարարութեան գրատան կաղմակերպութիւնն ալ իրեն յանձնուած են: Ատենապետ եղած է Դատարանական Խորհուրդին: Լոյս ընծայած է նաև ձեզա Քանօնը, 150 մեծադիր էջերէ բաղկացեալ կարեւոր հատոր մը: (Թեոդիկ՝ «Ամ. Տար.» 1912 էջ 338):

ԳԱՐԱԳՈՒԶՈՒԻ, լեռնակ Շիրակի մէջ, 1820 մէջը բարձր:

ԳԱՐԱԳԱԻԼԱԳ, մեծ հայարնակ գղ. կամ աւան Կերջան գ. ի մէջ, գիրքը դաշտային. ունի Ս. Վարդանանց նուիրուած եկղ. մը և վարժարան մը:

ԳԱՐԱԳՈՒԼԷ, կրկին այլազգարնակ գիւղեր էջմիածնի գ. ի մէջ:

ԳԱՐԱԳՈՒԼԷ, հանգրուան Անիի հարաւակողմը:

ԳԱՐԱԳՈՒՇ կամ Ղարաղու, գղ. Սիւնեաց ձահուկ գ. ի մէջ. համանուն լեռանց արեւելակողմը ժէ դարուն 50 տուն բն. ունէր. այժմ բնակիչ չունի. եկղ. Ս. Աստուածածին: Սա էր Միաբանողաց ամենափոքր գիւղը:

ԳԱՐԱԳՈՒՇ, գղ. Խոք վիճակին մէջ:

ԳԱՐԱԳՈՒՐՏ (Սեւ գայլ). գղ. Ստորին Բասենի մէջ:

ԳԱՐԱԳՕՅՈՒՆԼՈՒ (Սեւախոյ), կրկին թրքարնակ գիւղեր Ճակատք գ. ի մէջ:

ԳԱՐԱԳՕՅՈՒՆԼՈՒ, շատ մը գիւղեր Այրարատայ, Սիւնեաց և այլ երկիրներու մէջ. ամէնքն ալ այլազգարնակ:

ԳԱՐԱԳՕՉ s. Գարագոյ:

ԳԱՐԱԳԱՇ կամ Սեւաբ, հայարնակ գղ. Ղազախ գ. ի, բն. 2800, գաղթած Կիւլստանէ եւ Ջրաբերդ գաւառներէն. եկղ. Ս. Պետրոս: Տես Գարաբաւ:

ԳԱՐԱԳԱՇ, գղ. Ծովային Կիլիկիոյ, ուր 30 տուն Անսարի Ասորիներ կ'ապրին:

ԳԱՐԱԳԱՇ, լեռ և գղ. Այրարատայ ձակատք գ. ի մէջ:

ԳԱՐԱԳԱԳՈՒՊ կամ Գարա-Նաղուպ, գղ. Եողղատի որուն Վահանեան դպրոցը՝ 1900ին 40 մանչ եւ 20 աղջիկ կը յաճախէին: Գիւղս ունէր 60 տուն:



Գարագոջ Սարգիս

ներու վերաբերեալ 30 հատորէ բաղկացեալ հոյակապ երկ մը որուն համար 20 տարի տքնած է



հայ և 30 տուն մահմետական: Հայոց եկեղեցին էր Ս. Յակոբ:

ԳԱՐԱՆԱՆ Գեորգ, դերասան, մեռած 1912ին: ԳԱՐԱՆԱՆ Պետրոս, դատաւոր. ծնած Կ. Պոլիս 1870ին. ուր օրէնսգիտութիւն սորվելէ ետք Բարիզ գացած է կատարելագործուելու համար. և Պոլիս դառնալով՝ մտած է դատաւորական ասպարէզի մէջ: Գիտական յօդուածներ ստորագրած է և անդամ եղած Պոլսոյ Ուսումնական Խորհուրդին: Մեռած է Պոլիս 1914ին:

ԳԱՐԱՆԱՆ Սեփան, օրէնսգէտ, ծնած է Պոլիս 1855ին, նախնական ուսումը առած է Պալատի Խորէնեան վարժարանը ուրկէ անցած է Կալաթասէրայի լիսէն. հմուտ օրէնքներու և ֆրանսական լեզուին. ուսումնասիրած է ֆրանսական օրէնսդրութիւնը, մտած է դատաւորական ասպարէզը և կոչուած է վճռարեկ ատենի անդամակցութեան: Օսմանեան Սահմանադրութենէն ետք վարած է ազգային պաշտօններ, ըլլալով Բաղաքական Ժողովի ատենապետ: Միւր իշխանութեան օրով ուսուցիչ անուանուած է Պոլսոյ համալսարանի իրաւագիտական ճիւղին: Մեռած է Բարիզի մէջ 1933ին:

ԳԱՐԱԹԱՆ, գղ. Զմիւռնիոյ, բնակչաց մեծ մասը հայ և հրեայ. Հայերը ունէին Պայժառակեպոլսի քիւն եկղ. մը և երկսեռ դպրոց: Հայերը 250 տուն էին:

ԳԱՐԱԹԱՆ, հրուանդան կիլիկիոյ Հայոց ծոցի մօտ:

ԳԱՐԱԹԷՓԷ, այս անուամբ մի քանի այլազգեաց դիւղեր կան Այրարատի մէջ:

ԳԱՐԱԹՈՒԹ, թուրքարնակ գղ. Զէյթունի հիւսիս արեւելակողմը. 16 հայ, 790 իսլամ կը բնակէին:

ԳԱՐԱ ԻՍԱԼՈՒ, գաւառակ Ատանա գո.ի:

ԳԱՐԱԻԻԼԻՍԱՆԷ, լեռ Սիւնեաց Գեղարքունի դո.ի մէջ:

ԳԱՐԱԼ, աւերակ գղ. Գեղարքունի դո.ի մէջ:

ԳԱՐԱԼԱՅ, Թաթարարնակ գղ. Վայոց ձոր գո.ի:

ԳԱՐԱԼԱՐ, այլազգարնակ գիւղեր կան զանազան կողմեր:

ԳԱՐԱԽԱՆ ԼԵՆԸ Միխայիլովիչ, դիւանադէտ, ծնած է Թիֆլիս 1890ին, զաւակն է Կովկասեան շատ ծանօթ փաստարանի մը: Իր ուսումը կ'առնէ Թիֆլիսի Ա. լիսէին մէջ եւ 1904ին կը մասնակցի տեղական Սոցիալ-դեմոկրատ կուսակցութեան: Լուր առնելով որ պիտի ձերբակալուի՝ կ'երթայ Մայրաքոյն Արեւելք եւ 1906ին իր ուսումը կ'աւարտէ Վլատիվոսթոքի մէջ, ուր 1906ին յեղափոխական աշխատանքներ կը կատարէ: 1907ին Փեթրոկրատ կ'երթայ և շարունակելով

մէկտեղ յեղափոխական գործունէութիւնը. կ'աւարտէ իրաւարանական համալսարանի ընթացքը 1912ին կը ձերբակալուի բայց յետոյ ազատ կ'արձակուի: 1914ին Փեթրոկրատի մէջ գաղտնի հրատարակութիւններ կ'ընէ պատերազմին դէմ: 1915ին կրկին կը ձերբակալուի և կը զրկուի Իրկուցք, ուր կը մնայ մինչև Փետրուարեան յեղափոխութիւնը: Գործօն մասնակցութիւն մը կ'ունենայ Սիպերիոյ Յարական իշխանութեան տա-



Գ. Ա. Թ. Ա. Ն.

պալումին մէջ: 1917 Մարտին Գարախան կը հասնի Փեթրոկրատ և կ'աշխատի Պոլշեւիկեան վարիչ մարմիններու մէջ, մինչև Հոկտեմբերեան յեղափոխութիւնը: Գործօն դեր մը կ'ունենայ պետական հարուածին մէջ: Յեղափոխութենէն յետոյ անդամ կ'ընտրուի Փեթրոկրատի Սովիէթներու Գործադիր Կոմիտէին, և 1918ին կը մասնակցի Պրէսթ-Լիթովսկի հաշտութեան բանակցութիւններուն, իրրե քարտուղար ուսւ պատուիրակութեան: Նոյն տարին կ'անդամակցի արտաքին գործավարութեան խորհուրդին և միեւնոյն ատեն փոխ արտաքին գործավար կ'ըլլայ:

1921ին, Լեհաստանի մօտ Սովիէթական ղեկպան կը կարգուի, և տարի մը յետոյ կը վերադառնայ Մոսկուա, շարունակելու համար իր աշխատանքը արտաքին գործավարութեան մէջ: 1923ին Զինաստանի մօտ ղեկպան կ'անուանուի և չորս տարի կը վարէ այդ պաշտօնը. միաժամանակ մնալով անդամ Մոսկուայի արտաքին գործավարութեան խորհուրդին. 1926—34 կը վարէ արտաքին փոխ գործավարի պաշտօնը: 1931էն ի վեր անդամ է Խորհրդային Միութեան Կեդրոնական Գործադիր Կոմիտէին:

Լեւոն Գարախան 1935ին Թուրքիոյ մօտ ղեկպան անուանուեցաւ, և իրրե թուրք և խորհրդային յարաբերութեան ցրտացման զատճառ՝ Ռուսաստան կ'անուանուեցաւ և 1938ին զնդակահարուեցաւ: «Յրտացման պատճառը Գարախանի հայ ըլլալն եղած է» զրեց Լոնտոնէն տրուած հեռագիր մը:

ԳԱՐԱԽԱՆ ՊԷԿԼՈՒ, հայարնակ գղ. Նախճաւան գո.ի մէջ, բնակիչ 130 տուն, ունին մէկ



եկեղեցի: Թագեռնիէ ճանապարհորդը կը համարի որ նոյնն է Եգլիսիա գղ.ին հետ:

ԳԱՐԱԽԱՉ, լեռ Շիրակայ մէջ:

ԳԱՐԱԽԱՉ, աւերատեղի կիւրծի-եօլ գղ.ի արեւելակողմը, կը կոչուի նաև Խարապա (աւերակ) Գարախաչի:

ԳԱՐԱԽԱՉ, գղ. Երեւանու, բն. 800. կէտրհայ կէտը թաթար:

ԳԱՐԱԽԱՉ, գղ. Կարսի վիճակին մէջ բն. 200, ամբողջ հայ:

ԳԱՐԱԿԷՕՁ, գղ. Ուրմիոյ, ունի 50 տուն հայ բնակիչ:

ԳԱՐԱԿԷՕՁ, գղ. Բասենի:

ԳԱՐԱԿԷՕՁԵԱՆ Արեակ, և Մինրան, «Գարակէօզեան Եղբարք» զաւակներն են վաճառական Կարապետ աղա Գարակէօզեանի, որ մեռած է շատ կանուխէն (չուրջ 1880ին): Արշակ ծնած է 1872-ին, իսկ Միհրան 1874ին: Մայրերնին Տիկին Աբրուհի՝ որ մասնաւորօք տարած է զաւակներուն կրթութեանը՝ Մ. էֆ. Փափագեանի աղջիկն է:

Արշակ և Միհրան ուսած են Ընդերթ Գոյէճ, զոր աւարտած են յաջողութեամբ: Յետոյ մը տած են իրենց հօրեղբոր՝ Տիգրան աղա Գարակէօզեանի վաճառատունը որ իրենց հանգուցեայ հօրն այ էր միանգամայն 1896ի դէպքին երկու եղբայրները Եւրոպա կը մեկնին, Միհրան կ'անցնի Ամերիկա, մինչ երէց եղբայրը Պոլիս դառնալով կը շարունակէ Պոլսոյ և Մանչեսթրի մանիֆաքթուրայի գործը, միանգամայն զբաղելով գորգի գնումով, զոր կ'ուղարկէր Ամերիկա իր եղբորը: Ընդհ. պատերազմին սկիզբները պ. Արշակ հաւաքելով ընտանիքը մեկնեցաւ Պոլսէն եւ զինապաղարէն յետոյ պահ մը դառնալով ամբողջովին իլիսե ըրաւ Պոլսոյ գործը և քաշուեցաւ Ամերիկա, ուր երկու եղբայրները ո՛չ միայն քսակով, այլ սրտով ալ մեծահարուստ եղան հանդէպ իրենց աղջիկն, միլիոններով նպաստեցին շ. Բ. Ը. Միլոթեան, Որբախնամին գործին, 150 որբ որդեգրեցին նպաստեցին այն ազգատ ուսանողներուն՝ որոնք բարձրագոյն ուսման հետեւեցան:



Գարակէօզեան Արակ

նպաստեցին այն ազգատ ուսանողներուն՝ որոնք բարձրագոյն ուսման հետեւեցան:

Գարակէօզեան երկու եղբայրներն ալ ամուս-

նացած են. Արշակ ունի մանչ մը և երկու աղջիկ, իսկ Միհրան աղջիկ մը և մանչ մը ՀԱՌԻՐՔՏ, որ 14 տարու, ծաղիկ հասակին մէջ մեռաւ: Այս սիրասուն զաւակին յիշատակին որրանոց մը բացաւ Պոլսոյ Գուղկուն՝ ճուք արուարձանին մէջ:



Արշակ Գարակէօզեան ունեցած է նաև ազգ. կեանք, անդամակցած է ժողովներու, ինչպէս եղած է Քաղ. ժողովի անդամ Օրմանեանի օրով: Ամերիկայի մէջ գրեթէ միշտ գլուխը գտնուած է ազգային շատ մը ձեռնարկներու:

(Թեոդիկ՝ «Ամ. Տար», Գարակէօզեան Հաւուրք 1923 էջ 221):

ԳԱՐԱԿԷՕՁԵԱՆ Հաւուրք Մ., վաղամեռիկ որդի պ. Միհրան Գարակէօզեանի, որուն յիշատակին ազգասէր հայրը Պոլսոյ Գուղկունճուք արուարձանին մէջ բացաւ Հաւուրք Գարակէօզեան Հօմ որրանոցը:

ԳԱՐԱԿԷՕՁԵԱՆ Հրանդ, ճարտարագէտ, դաշնակցական, կը վախճանի 1922 Փետր. 9ին:

ԳԱՐԱԿԷՕՁԵԱՆ Մինրան, կենսագրականը տե՛ս Գարակէօզեան Արակ:

ԳԱՐԱԿԷՕՁԵԱՆ Մ. ակնարոյժ նիւ Եօրքի մէջ:

ԳԱՐԱԿԷՕՁԵԱՆ Չարլս (տիկին), ներկայ ամուսնան առաջին օրէն սկսեալ՝ Ուէլսի գոյէճի գեղարուեստից թանգարանին մէջ ի ցոյց գրուած են տաղանդաւոր ծանօթ երգչուհի Տիկին Չարլս Գարակէօզեանի մանրանկարչային երկերը (miniatures): Մայիս 1ին սոյն գոյէճի թանգարանին կողմէ սարքուեցաւ մասնաւոր ընդունելութիւն մը, և այս առթիւ պաշտօնապէս պատէն կախուեցաւ նոյն գոյէճի արուեստից զպրոցի՝ հիմնադիր՝ ու ներկայիս պաշտօնէ քաշուած Միս Ալիս Վան Վէլթէն Պրատենի մանրանկարը՝ զոր նկարած է Տիկին Չարլս Գարակէօզեան՝ դուստրը տիկին Արաքսի Թաւշանճեանի:

Մանրանկարչուհի Տիկին Գարակէօզեան իւղաներկ նկարներ կը գծէր՝ երբ դեռատի էր, այս ճիւղին մէջ մէկ քանի տարի շարունակելէ յետոյ ձեռնարկեց արձանագործութեան և 1926ին կին նկարիչներու և Արձանագործներու Ազգային Ընկերակցութեան (National Association of Women Painters and Sculptures) տարեկան ցուցա-



հանդէսին մասնակցեցաւ իր Թիքեռնիկը խորագրով պղնձածոյ մէկ արձանով:

Յետոյ իր մէջ մասնաւոր շահագրգռութիւն ծագեցաւ մանրանկարներ նկարելու փզոսկրի վրայ, և առկէ քիչ վերջ որոշեց նկարչական այդ ճիւղը ընել իր մասնագիտութիւնը:

Տիկին Գարակէօզեան 1929ին անդամ ընտրուեցաւ Մանրանկարիչներու Սմերիկեան Ընկերութեան (Americau Society of Miniature Painters), և այդ տարիէն ի վեր շարունակ իր գործերը ի ցոյց դրած է նոյն Ընկերութեան տարեկան ցուցահանդէսին մէջ, որ տեղի կ'ունենայ Grand Central Art Galleriesի մէջ: 1933ին սոյն ընկերութեան բարձրագոյն պատիւը շահեցաւ իր մէկ մանրանկարին համար՝ որուն խորագիրն էր Miss Mary Edmonds, այդ մրցանակն էր Levantia White Foardman Prize, որ շահողը պէտք է հինգ տարի սպասէ, մինչև որ իրաւունք ունենայ դարձեալ մասնակցելու մրցման:

1933ին ևս իր մանրանկարներէն մին ի ցոյց դրուեցաւ Շիքագոյի ցուցահանդէսին մէջ (Chicago Century of Progress Fair) նոյն տարին դարձեալ իր նկարներէն ոմանք ցուցադրուեցան Պրուքլինի Գեղարուեստից Թանգարանին մէջ:

1935ին իր մէկ քանի մանրանկարները ցուցադրուեցան Պրուքլինի մանրանկարիչներու ընկերակցութեան տարեկան ցուցահանդէսին մէջ: 1934 Ապրիլին Ուէլսլի գոյէճէն հրաւէր ստացաւ մանրանկարներու մէկ ցուցահանդէսը սարքելու նոյնին Արուեստից Թանգարանին մէջ:

Այս իրողութիւնները ինքնին բաւական են ցոյց տալու թէ իրօք որպիսի տաղանդաւոր մանրանկարչուհի մըն է Տիկին Չարլս Գարակէօզեան, որուն երկերը խորապէս կը գնահատուին թանգարաններէ, մասնագէտներէ և բանիմաց գեղարուեստասէրներէ:

Ահա՛ ուրեմն նկարչուհի մըն ալ Տիկին Չարլս Գարակէօզեան, որով իրաւամբ կրնայ պարծիլ Ամերիկայի հայութիւնը: («Հ. Կոչնակ» 1926 էջ 472):

ԳԱՐԱԿԷՕԶԵԱՆ Սիմոն (Օսէր), դուստր Պէյրութարնակ Տոք- Գարակէօզեան Սիմոն (Օսէր) թորուհի Մ. Գարակէօզեանի, որ իրրև պարուհի, մրցումի մը մէջ



կը շահի 10000 ֆրանք: Տիլմերու մէջ գերեր կը ստանայ, մեծ ապագայ կը խոստանայ:

ԳԱՐԱԿՕԶԵԱՆ Սերուհի, ծն. Փափազեան. մայր Ազգ. բարերար Արշակ և Միհրան Գարակէօզեաններու. ծն. Պոլիս 1854, վախճանեցաւ Նիւ Եորք 1927ին:

ԳԱՐԱԿԷՕԼ, լծակ Այրարատայ Ուերծ և Ուերզուի մէջ:

ԳԱՐԱԿԷՕԼ, լիճ Արագած լեռան գագաթը  
ԳԱՐԱԿԷՕԼԼԷՐ, լծակներ Սիւնեաց Վայոց ձոր գու.ի մէջ:

ԳԱՐԱԿԻՒԼԵԱՆ Կ. Յ. ծնած է Արաբկիր 1866 Յունիս 28ին, ուր նախնական կրթութիւնը ստացած է տեղւոյն վարժարանը: 10 տարեկանին Պոլիս փոխադրուելով յաճախած է Սկիւտարի Ս. Սաշ վարժարանը, յետոյ Պէրպէրեան մտաւ և անկից Բերայի գերմանական ուսումնարանը: 1896ի Պանքայի դէպքէն ետք Մարսիլիա անցաւ ուսկից Պոսթըն, ուր կը ծառայէ Նիւ Եորք Լայ-



Կ. Յ. Գարակիւեան

ֆի ապահովագրական ընկերութեան մէջ:

Կ. Յ. Գարակիւեան զրական մարդին մէջ սիրելի անուն մ'ունի 80ական թուականներուն թարգմանած է Բուրասան Մանկանցի մէջ Կաստոն Թիսանտիէի Իւլցազուճ Աւստրիականը որ յետոյ առանձին լոյս տեսաւ 1925ին հրատարակեց Մահաթմա Կանտիի գեղեցիկ հատորը, տպ. Պոստոն: (Ս. Գափամանեան՝ «Գր. Տար.» 1926 էջ 123):

ԳԱՐԱԿԻՒՆԷՆԷՆԷ իս Բասնն դ. խարեւելակողմը: ԳԱՐԱԿԻՒՆԷՆԷՆԷ, երկու զիւղեր կը յիշուին:

ԳԱՐԱԶԱԼԼԻ, հայարնակ գղ. Յոգզատի, բն. 200. եկղ. Ս. Յակոբ, վարժարանը՝ Մամիկոնեան:

ԳԱՐԱԶԱՃԻԼԷՐ, գղ. և բերդ Կիլիկիոյ Ատանայի պրեկելակողմը:

ԳԱՐԱԶԱՃԻԼԻ, այլագգարնակ քանի մը գիւղեր Սիւնեաց երկրին ու Այրարատի մէջ:

ԳԱՐԱԶԱՍԱՆ կամ Ղարահասան, գղ. Կարնոյ, 1900ին 80 տուն բնակիչ ունէր, կէսը հայ, որոնք Ս. Աստուածածին եկղ. մը ունէին:

ԳԱՐԱԶԻՍԱՐ, գղ. Կիւրինի, 1900ին 70 տուն բնակիչ ունէր. եկղ. Ս. Սարգիս, Ազգ. դպրոցը 45



մանչ կ'ուսանէին: Մօռը 500 մեղր բարձրութեան վրայ սե գոյնով բերդ մը կայ:

ԳԱՐԱՀԻՍԱՐ տե՛ս ԱՅԻՈՆ Գարահիսար:

ԳԱՐԱՀԻՍԱՐ ԹԷՒԲԵԼԷ, Ծովային Կիլիկիոյ վիճակներէն մին:

ԳԱՐԱՀԻՍԱՐ ՇԱՊԻՆ, Գարահիսար Շարֆի, գըլխաւոր քաղաք Սերաստիոյ կուսակալութեան համանուն գո.ի: Կ'իյնայ Կարնոյ և Եւգոկիոյ մէջ տեղ, Ագչար դաշտի հիւսիսային կողմը, Կիրասոնէն 82 հզմ. հեռու, կառուցուած է բարձրագագաթ քարալեւան մը ստորտը և շատ նմանութիւն ունի Անկիւրիոյ: Սեաւ քարալեւան գաղաթը ունի փոքրիկ բերդ մը՝ Կոմնենեանց ժամանակներէն մնացած: Տները և շուկաները շինուած են լեւան ստորտքը: Քաղաքիս բնակիչք, ըստ Վ. Քինէի, 11700 հոգի են, բաժնուած հետեւեալ կերպով:

Մահմետականք	7300	հոգի
Հայք կուսաւորչական	1700	»
» կաթողիկէ	750	»
» Բողոքական	300	»
Յոյնք	1650	»
Գուժարն	11700	հոգի

Շապին Գարահիսարու հայաբնակ գիւղերը հետեւեալք են, որոնց բնակչաց նոր թուահամարը շուենալով չկարողացանք հոս դնել, Այս գիւղերէն գրեթէ ամէնքն ալ ունին մէկ մէկ վարժարան:

Անդրեսա	Ֆելմունն աֆունցու
Բիւրֆ	Սեվիցիֆ
Սիս	Քեչէլիւրս
Էսկի Շեհիր	Կեւան Ղւան
Եեհիֆեոյ	Ագարակ
Մեսայոց (Մեակնոց)	Մահմուս
Քերքանոս (Կրանոց)	Կոլլա հիսար
Գուֆեսուն	Պուսէյիս
Վարի Աձպսեր	Անեղի
Վերի Աձպսեր	Չրսալիս
Արղավիս(Աղրավիս)	Ծիպերի
Աղուանիս	Թավգարա
Ապանա	Համամ
	Լէքարիս
	Տեմիրհիլիֆ

Հայք ունին երկու եկեղեցի, Ս. Ստեփաննոս և Ս. Աստուածածին, ունին նաև երկու ուսումնարան Մուշեղեան և Ս. Փրկչեան, միահամուռ մօտ 500 աշակերտներով, ժողովուրդը աշալուրջ լինելով, աակաւին լաւ վիճակի մէջ է տեղւոյս վաճառականութիւնը:

Քաղաքս նախ կառուցած է Պոմպէոս, և հին անունը կը կարծուի Նիկոպոլիս: 879 հիճրէթի

թուականին Յաթի՛ Մէհէմէտը գրաս. եր Քաղաքիս մօտ կայ պաղլեղի առատ հանք: (Էփրիկեան՝ «Բնագիտարհիկ» 1902):



ՇԱՊԻՆ ԳԱՐԱՀԻՍԱՐ

ԳԱՐԱՀԻՍԱՐ ՇԱՊԻՆ, գաւառ, որուն տարածութիւնն է 9300 քառ. հզմ. և կը պարունակէ 1100 գիւղեր: Գաւառիս ընդհանուր բնակչաց թիւն է 77000: (Էփրիկեան՝ «Բնագիտարհիկ» քաղաք Վ. Քինէի գործէն, Ա. 774—789):

Շապին Գարահիսարը ծանօթ է ինծի ձեռագիրներու յիշատակարաններու մէջ 1500էն ետք՝ ԿՈՂՈՆԻԱ անուամբ, որովհետև Մանուէլ գրիչ մը 1642ին այս Ղարահիսարի համար կ'ըսէ «Ղարահիսար երբեմն կողոնիա քաղաք»:

«Կողոնիա»ն ո՛չ միայն քաղաքին՝ այլ և գաւառին անունն էր Վրթանէս երէց որ գաղթած էր Երզնկայէն՝ իր հայրենիքը աւերելէն ետք՝ 1502ին Շարական մը կ'ընդօրինակէ «ի գաւառին կողոնիոյ»: 1506ին Աւետարան մը կ'ընդօրինակուի «Կողոնիոյ Աձպտեր գիւղին մէջ: Լազարեան ձեմարանի թիւ 150 աւետարանը (որ ներկայիս Ս. Էջմիածին փոխադրուած է) Աձպտեր ընդօրինակուած է Համաշէնցի Հայրապետ արեղայէն, 1579ին քաղաքս «Ղարահիսար» կը կոչուի Սարգիս արեղայ գրչէն, որ որդին էր խօժա Դաւթին, և եղբորորդին Ծերոն եպիսկոպոսին (1596ին ծանօթ է ինծի Զէյթունի Ծերոն Արքեպ.ը): Սարգիս արեղայ կը յիշէ քաղաքին եկեղեցիները Ս. Ստեփաննոս և Ս. Աստուածածին և «Կարկամեալ» Ս. Նշանս»: 1589ին Մարտիոս քհ. Ղարահիսարցի՝ աւետարան մը կը գրէ, 1642ին Մանուէլ գրիչ կը յիշէ քաղաքին առաջնորդ Կարապետ եպիսկոպոսը: 1688ին Ղարահիսարցի Ղուկաս եպ. Աւետարան մը կը ստանայ և Ս. Գայիանէ եկեղեցւոյն կը նուիրէ: Ռամէլի (Պաղեստին) Ս. Գէորդ վանքի լուսարարն եղած է 1680ին Ղարահիսարցի Մինաս վրչ.:

Շապին Գարահիսարը նշանաւոր դարձաւ խանձարուրն ըլլալով Անդրանիկ Զօրավարին և մանաւանդ իկ բարիճ մարտիկներով:



ԳԱՐԱՃԱ. գղ. Տրապիզոնի, որուն թաղային վարժարանը 12 մանչ կ'ուսանէին:

ԳԱՐԱՃԱ, ամայի գիւղ Կոտայքի:

ԳԱՐԱՃԱԵԱՆ. Տ. Վեհուկի Յովսէփ:

ԳԱՐԱՃԱԼԱՐ, Կիլիկիոյ (Ստանա) վիճակներէն մին:

ԳԱՐԱՃԱԼԸ ՏԵՐԷ, ձորակ լեռնային Կիլիկիոյ մէջ:

ԳԱՐԱՃԱՎԵՐԱՆ, Գարանավերէն Տ. Գարանեօրէն:

ԳԱՐԱՃԱՏԱՎ. (Սեաւ լեռն), Տաւրոսի շղթային այն մասը՝ որ կ'իյնայ Տիգրիսի և Եփրատի մէջտեղ:

ԳԱՐԱՃԱՕԴԼԱՆ, աշուղ, ծնած Մարաշ, ԺԸ. դարուն, Մշոյ Ս. Կարապետ վանքը գացած է աշուղութեան արհեստին տիրանալու համար: (Գալուստեան՝ «Մարաշ» էջ 537):

ԳԱՐԱՃԷՎԻՁ կամ Գապանեվիզ, գղ. Ծանիկի առաջնորդական վիճակի:

ԳԱՐԱՃԷՕՐԷՆ, Գարանա վիրան Գարանա Եօրէն. գղ. Կեսարիոյ, Էվէրէկէն 3 ժամ հեռու, յոյն եւ հայ բնակչութեամբ, հաւանական յունական գիւղ մը, ուր Հայերը յետոյ հաստատուած են: 1914ին 200 տուն բնակիչ ունէր, կէս առ կէս հայ և յոյն: Հայերը 1800ին սկիզբը եկած պիտի ըլլան, որոնք նախապէս հայախօս էին: Եկեղեցին կը կոչուէր Ս. Աստուածածին, դպրոցը Սմբատեան, ուր 1900-ին 30 մանչ կ'ուսանէին: Բնակիչք կը զբաղէին երկրագործութեամբ, փոքր մաս մ'ալ խաշնարածութեամբ: (Ալպոյանեան՝ «Հայ Կեսարիա» էջ 849):

ԳԱՐԱՃԷՕՐԷՆ կամ Գարանավերան (Սեւաւեր), գղ. Նիզ գ. ի, ունի 10 տ. հայ, 30 տ. ալլազգի, եկղ. Ս. Աստուածածին: (Վերի Գարանեօրին Հայերը ասկից գաղթած չե՞ն արդեօք):

ԳԱՐԱՃՈՐԱՆ, գղ. Բարձր Հայոց Մանանաղի գ. ի:

ԳԱՐԱՄԱՆ կամ Լարանա, գլխաւոր քղ. Նոյն անուն գ. ի կեդրոնը, Իկոնինոնէն 75 հզրմ. հեռի: Մեծն Լեւոն տիրած է քաղաքի: Բն. 22000 էր (1900ին) թուրք, հայ, յոյն եւն.: Հայերը գեղեցկաչէն եկղ. մը ունէին: Չիհաչէֆ ուղեւորը հոս գինեկանառ շատ մը Հայեր դրած է:

ԳԱՐԱՄԱՆ Օր. Ագապի, 1937ին Գոյումպիա համալսարանէն կը ստանայ վարդապետ գեղարուեսից եւ կրօնից տիտղոսը: («Հ. Կոչնակ» 1937 էջ 566):

ԳԱՐԱՄԱՆԵԱՆ կամ Յովհաննէսեան Մասթնու եպ. Առաջնորդ Կեսարիոյ, ծնած Թալաս: Միաբան Ս. Կարապետ վանքին, նախապէս գործակից եղած է Դաւիթ եպ. Երեանցիին (1746-1776), 1774 Յունիս Իին Սիմէոն կթղ. էն, եպ. կը ձեռ-

նադրուէր, «... Ի միաբանութիւն և ի սպասաւորութիւն սրբոյ Դանիէլի վանից» (սեւ «Իլլաւն Հայոց Պատմութեան» Գիւլս Բն. Աղանեանի Գիւլֆ ԺԱ էջ 459): Ասկից կը հասկցուի թէ տակաւին միաբան եպ. ձեռնադրուած է և Ս. Դանիէլ վանքին վանահայր եղած, սակայն հաղիւ երկու տարի վարած է այդ պաշտօնը, որովհետեւ 1776ին Դաւիթ եպ. Երեանցիի յաջորդած է Չաքարիա պատրիարք Կաղզուանցիի և Սիմէոն կթղ.ի համահաճութեամբ:

Իր պաշտօնավարութեան սկիզբը դժուարութեանց հանդիպած է նախկին առաջնորդին Դաւիթ եպ.ի կողմէ, որ վերստին առաջնորդութիւնը ձեռք բերել կը ձգտի. Էջմիածնայ նուիրակ Սահակ վրդ.ի գործակցութեամբ: Քիչ վերջ Դաւիթ եպ.ի մահը վրայ հասնելով Մատթէոս եպ. անարգել կը շարունակէ իր պաշտօնը արդիւնարեւութեամբ: Իր աշխատութեամբ և ջանքերով կը շինուի ի հիմանէ, վանքին եկեղեցին որ յանուն Ս. Հրեշտակապետին է: Կը կատարէ նաև այլևս այլ շինութիւններ, իրեն միշտ գործակից ունենալով Մուսնճուսուկի Ստեփան վրդ.ը:

Մատթէոս Արքեպ. Ս. Կարապետի վանքին մէջ փոքրիկ վարժարան մ'ալ բացած է 8—10 աշակերտներ հաւաքելով: 1798ին Ստեփան և Կարապետ վարդապետները Էջմիածին կը զրկէ եպիսկոպոս ձեռնադրուելու համար, սակայն ասոնք դեռ չվերադարձած՝ ինքը կը վախճանի այդ տարին, կտակ ընելով որ Ստեփանոս եպ. Օֆլազան Կեսարիոյ առաջնորդ ըլլայ և Ս. Կարապետ վանքը նստի, ու Կարապետ եպ.ի յանձնուէր Ս. Դանիէլի վանքը:

Մատթէոս եպ. կը թաղուի եկեղեցւոյ ներքին գաւիթին մէջ. իր տապանաքարն է.

«Եղեալից ի յայսմ շիրմիս  
Մասթնուի արհի պետիս  
Նոր ի նորոյ Սուրբ սանարիս  
Ի հիմանէ կառուցողիս  
Որք հանգիպիք սոյնոյ սառիս  
Մի հայր մերիւ սուք ողորմիս  
Հանգչիլ հանգիսն յաւիտեանիս  
Լուսեղինաց սրբոյ գնդիս  
Թուին ՌՄԵԷԷ՝ին»

Մատթէոս եպ. կ'երևայ թէ իր կտակով Էջմիածնայ թողած է բան մը, վասնորի 1799ին, իր յաջորդին Ղուկաս կթղ. Կարնեցիին նամակ մը գրելով շնորհակալութիւն կը յայտնէ: (Ալպոյանեան՝ Հայ Կեսարիա» 929—931):

ԳԱՐԱՄԱՆԵԱՆ Յակոբ, Կեսարացի Գարաման-



եան ընտանիքի սերունդէն. ծնած Կեսարիա 1854ին, նախակրթութիւնը ծննդավայրին մէջ ստանալէ ետք Պոլիս գացած է իր եղբոր քով և մինչև 1895 վաճառականութեամբ զբաղած: Ազգ. հիւանդանոցին 650 ոսկի նուիրած է հակա-նեխական ջերոց (էթիւվ) մը գնելու համար: Մե-ռած է Բարիզի մէջ 1905 Մայիսին:

ԳՍՐԱՄԱՆԵԱՆ Յարութիւն, երէց եղբայրը վեր-նոյն, ծնած Կեսարիա 1850ին, ուր նախակրթու-թիւնը ստանալէ ետք 13 տարու Պոլիս կ'երթայ ու կը հասնի բարձրագոյն դիրքերու: Ան յաջո-ղած է տէր դաւանայ թուրքիոյ մէջ, մասնաւո-րապէս էրէյիի և Զոնկուլտաքի հանքածուխի բաղմամբիւ հանքերու, և եղած է հիմնադիրնե-րէն մին Օսմ. Ընկերութեան որ կը շահագործէր էրէյիի հանքածուխի հանքերը: Նոյնպէս ինքն է որ նախաձեռնարկ եղած է կաղմելու շոգենա-ւային ընկերութիւն մը, որուն նաւերը կը սպար-կէին Կ. Պոլսոյ և Ս. Ծովու և Կարմիր Ծովու նաւահանգիստներուն միջև, մինչև Լնդկաստան: Յարութիւն Գարամանեան Ազգային շրջանակի մէջ գործօն ծառայութիւն մը չէ ունեցած, սա-կայն բոլորովին ալ չէ մոռցած ազգը, նիւթա-պէս նպաստելով:

1503ին Երուսաղէմ կ'երթայ իբր հրաւիրակ Սոսյ նորընտիր կթ. Սահակ Բ.ը Սիս առաջնոր-դելու, ուր Ապրիլ 20ին ներկայ կ'ըլլայ Հայրա-պետական օժումին: Կը մեռնի Պոլսոյ մէջ 1909-ին: (Արլոյանեան՝ «Հայ Կեսարիա» էջ 2196—8):

ԳՍՐԱՄԱՆԻԱ, այսպէս կոչուած է անցեալ դա-րուց մէջ հարաւային Անատոլիոյ երկիր մը, Գարա-ման քղ. անուամբ: Կը կարծուիթէ Գարամանցիք Հայերէին, սերած Նուրէ-Սուֆիէն, զոր Ալայէտտին Սուլտան ուրիշներու հետ իբր պահապան դրած էր Էմէրէկի մէջ՝ զայն զբաւելէ յետոյ: Այդ հայը ամխագործ ըլլալուն՝ երկիրը Գարամանիա կոչ-ուած է: (Էփրիկեան՝ «Յնագլխարհիկ» 488):

ԳՍՐԱՄԱՆԻԼ, այլազգարնակ գղ. Լեռնային Կիլիկիոյ Զէյթունէն 9 ժամ հեռի:

ԳՍՐԱՄԱՆԻՈՒ կամ Ղարամանլու գղ. Ուտի Առանձնակ գու. մէջ, Ղահրիատի հիւսիսակողմը. ատենօք բոլոր բնակիչը հայ եղած է. յետոյ քանի մը ընտանիք մնացած է առանց եկեղեցիի. մնա-ցած բնակիչը մահմետական է:

ԳՍՐԱՄԵԼԼԱ, Գալլամելլա կամ Գանամելլա, հին նաւահանգիստ Կիլիկիոյ Լեռն թղ. 1214ին կը յիշէ և զբաւ կուտայ հիւրընկալ ասպետաց՝ անոնցմէ փոխ առած դրամին փոխարէն:

ԳՍՐԱՅԱԼ, լեռնաբլուր Շիրակի մէջ:

ԳՍՐԱՅՈՒ եաղուպ, գղ. Եոզղատի 500 տուն

հայ բն. ունէր 1905ին, կար եկր. և զգրոց: Նոյն է Գարա եաղուպ:

ԳՍՐԱՆԻԼԳ կամ Ղարանլու, հայարնակ գղ. նիգ գու. բն. 500, եկր. Ս. Աստուածածին: Մօտն է ձաճնիկ ամայի գիւղափեղին:

ԳՍՐԱՆԻԼԳ կամ Ղարանլու (Հն. Կղնուա), երկու գիւղ Սիւնեաց Գեղարքունի գու. մէջ. Վերին Ղարանլու որ 1900ին 1800 բն. ունէր, Ս. Գէորգ հին և անշուք եկեղեցիով, որուն մօտ հին գերեզմանաքարեր կան, խաչարձաններու արձանագրութիւնք հին չեն: Ստրին կամ Ներ-ֆին Ղարանլուը կառուցուած է ծովակին մօտ, ունէր 250 տուն հայ, եկր. Ս. Աստուածածին: Ժամանակաւ կայ եղեր Միշին Կղնուս գիւղ մը, որ ի վերջոյ ամայացած է:

ԳՍՐԱՆԻԼԳ կամ Ղարանլու թեփե. լեռ Սիւնե-աց Վայոց ձոր գու. մէջ:

ԳՍՐԱՆԿԱ s. Կարկաչ:

ԳՍՐԱՆՖԻԼԵԱՆ Գեորգ, վրշ. Վիեննայի Միթի, աշխատակից Հանդես Ամստերդամ, թարգմանած է Հ. Գեյցերի Սկզբնաւորութիւնք Բիւզանդեան բա-նակարեմերու դուրեան» տպ. 1903ին էջ է: +83:

ԳՍՐԱՆՖԻԼԵԱՆ Դովլար, գորգագործ-նկարիչ Խ. Հայաստանի մէջ:

ԳՍՐԱՆՖԻԼԵԱՆ Վարդավառ, ուսուցիչ. ազգա-յին գործիչ, խմբ. Սուրիական Մամուլի (1922—1926), հեղինակ Զեյթունի Նահանգը գրքին, ծն. է Զէյթուն և մեռած 1925ին՝ Հալէպի մէջ:

ԳՍՐԱԶԱՄ կամ Գարաչանքա, գղ. Կարս գու. ի, 1900ին 50 տ. բնակիչ ունէր զանազան ազգերէ:

ԳՍՐԱԶԱՅԼՐ հայարնակ գղ. Եոզղատի, 1900ին Արժրունեան վարժարանը 20 մանչ և 10 աղջիկ կ'ուսանէին:

ԳՍՐԱ-ՉԻՆԱ (Hara-china), մեծ գիւղ, բնա-կիչք՝ հայ և պարսիկ, ուր Ուղեգիրը Բէլ (Bell) հայերէն սիրալիր ընդունելութիւն կը գտնէ (Bell էջ 296):

ԳՍՐԱ-ՉԻՆԱՐ կամ Ղարա-չինար գղ. Արցախի Կիւլստան գու. մէջ: Սեւ գետակի աջ կողմը, ու-նի նորակառոյց Ս. Յովհաննէս եկր. մը, բն. 900:

ԳՍՐԱԶԼԸ. լեռնանցք Տայոց աշխարհի:

ԳՍՐԱԶՈՒԵԱ. ազարակ մը Ստորին Բասենի մէջ, Քէօփրիւ քէօյի մօտ:

ԳՍՐԱԶՈՒԵԱ, գղ. մը, կը յիշուի Սիւնեաց Նախ-ճաւան գու. մէջ:

ԳՍՐԱԶՈՒՄԱԿ. լեռ Ճակատք գու. մէջ:

ԳՍՐԱԶՈՊԱՆ կամ Բարաչօպան, մեծ գղ. Տու-րուբերանի Հարք (Խնուս) գու. մէջ, որ 160 տ. բն. ունի, քարաչէն Ս. Յակոբ եկեղեցիով:

ԳՍՐԱՊԱՂ s. Ղարաբաղ եւ Մրին:



ԳԱՐԱՊԱՂԱՍՐ, այլազգարնակ գղ. Սիւնեաց նախճաւան գ.ի Խորք վիճակի մէջ. բն. 200 տուն: Ճէմբլի ուղեւորը Գարապա կ'անուանէ:

ԳԱՐԱՊԱՂԱՍՐ, երեք գիւղ Ուրծ և Արած գ.ի մէջ, մին այժմ ամայի: Միւս երկուքը վերին և Ասորից այլազգարնակ. կան հին աւերակներ:

ԳԱՐԱՊԱՃԱԳ կամ Ղարա-Պանախ, քրտարնակ գղ. Բագրևանդ գ.ի մէջ:

ԳԱՐԱՊԱՃԱԳԵԱՆ Խոսրով s. Արսնց:

ԳԱՐԱՊԱՇ, գղ. Տիգրանակերտի, 8 տուն հայ ունէր. եկղ. Ս. Սիմէոն Սիւնակեաց:

ԳԱՐԱՊԱՊԱ, գղ. Շահապօնք գ.ի մէջ. ունէր 25 տ. հայ, հին եկղ. մը:

ԳԱՐԱՊԷԿ, գղ. Բարձր Հայոց Սոխում գ.ի մէջ:

ԳԱՐԱՊԷԿ, Մեծ և Փոքր, կրկին հայարնակ գիւղեր գանձակի Ջուանչիբ գ.ի մէջ. առաջինը 1900ին ունէր 65 տ. երկրորդը 80 տ. բնակիչ:

ԳԱՐԱ-ՊԸՅԸԳ, հայարնակ գղ. Եոզղատի, 40 տ. բն. ունէր, եկղ. Ս. Լուսաւորիչ:

ԳԱՐԱՊԸՐՃԻԿ, գղ. Սեւերեկ գաւառակի (Տիգրանակերտ), ուր քանի մը տուն հայ կ'ապրէր:

ԳԱՐԱՊՈՒԼԱԳ (Սեւ աղբիւր). հայարնակ գղ. Նիգ գ.ի, Արայք լեռան հիւսիսային ստորոտը, 1900ին 80 տ. բն. ունէր, եկղ. Ս. Աստուածածին:

ԳԱՐԱՊՈՒԼԱԳ, ամայի գղ. Շիրակի. Ղազարապտէն կէս ժամ հեռի:

ԳԱՐԱՊՈՒԼԱԳ կամ Ղարաբուլաղ, հայարնակ գղ. Գանձակի էրքէջի հասարակութեան մէջ. եկղ. Ս. Աստուածածին, բաւական հոյակապ, ըստ արձանագրութեան կառուցուած 1716ին: Գիւղիս մէջ կան 2 աւերակ եկեղեցիներ. իսկ չուրջը աւերեալ գիւղեր և եկեղեցիներ. խաչ քար մը ՌՂԹ (1230) թուականը կը կրէ. 1900ին ունէր 350 բնակիչ:

ԳԱՐԱՊՈՒԼԱԳ կամ Ղարաբուլաղ, գղ. Գանձակի Մեսկինյու հասարակութեան մէջ. կայ հինաւորց եկղ. մը՝ քանդուած տանիքով: Այժմ ու բնակիչ թուրք 70 տուն:

ԳԱՐԱՊՈՒԼԱԳ, երեք այլազգարնակ գիւղեր Գուգարաց Պոռչալու գ.ի մէջ:

ԳԱՐԱՊՈՒԼԱԳ, գղ. Արցախի Վարանդի գ.ի մէջ. բն. 556 հայ, եկղ. Ս. Եստուածածին:

ԳԱՐԱ-ՊՈՒՌՈՒՆ (Սեւ քիթ), այսպէս կը կոչուին Արագածոտն գ.ի շարք մը բլուրները:

ԳԱՐԱՊՈՒՐՃ, այլազգարնակ գղ. Շարուր գ.ի մէջ:

ԳԱՐԱՒՕՂԱԶ, գղ. Սերաստիոյ, որուն ազգային նախակրթարանը 40 մանչ կը յաճախէին:

ԳԱՐԱՍԻՎՐԻ, լեռ Կիլիկիոյ 4800 ոտք բարձր: ԳԱՐԱՍՈՒ (Սեւ ջուր), աղբիւր մը Սիւնեաց Վայոց ձոր գ.ի մէջ, Արփա գիւղի մօտ: Աղբիւրիս մօտ, քարարլոյ ստորոտը կան երկու նահատակաց Գրիգոր և Մարիամ եղբօր ու քրոջ հանգստարանները, ուր բազմաթիւ ուխտաւորներ կը յաճախեն:

ԳԱՐԱՍՈՒ, գլխաւոր գետ Մասեաց-սոն գ.ի, որ Երասխայ գուգահեռական կը վազէ և անոր կը միանայ Խալիսա և Տէվէլի գիւղերուն զիմաց: Գետիս անուամբ ամբողջ մը կայ Այրարատայ Շարուր գ.ի մէջ, Նոյն գ.ի մէջ կայ նաև Գարասու անուամբ քրտարնակ գիւղ մը: Տե՛ս Մեծարմօթի գետ:

ԳԱՐԱՍՈՒ, գետ Կարնոյ գ.ի մէջ, որ կը կոչուի նաև Կարնոյ գետ. կը բղխի Թորթումի եւ Բասենի մէջտեղ եղած լեռներէն: Նախնիք Շամբ Կարնոյ անունը կու տան: Այս գետէն կը ձևանայ Սաղլըգ կոչուած լճակը, որ Կարնոյ հարաւակողմը կը գտնուի:

ԳԱՐԱՍՈՒ կամ Ղարասու. գղ. Բագրևանդայ 15 տուն հայ կաթողիկէ և 15 տուն քուրտ բնակիչ ունէր:

ԳԱՐԱՍՈՒ, գետեր Կիլիկիոյ մէջ, նաև ուրիշ կողմեր:

ԳԱՐԱՍՈՒ ՊԱՇԻ, լեռ Սիւնեաց Աղահէճք գ.ի մէջ. բարձր 6607 ոտք:

ԳԱՐԱՎԱՆԻԿ կամ Ղարաւանք, հայարնակ գղ. Այրարատայ Գարեղենք գ.ի մէջ, Կաղզուանի հարաւարեւմտակողմը, բարձր դիրքով: 1900ին ունէր 70—80 տուն բնակիչ, երկու եկղ. որոնց մին հինաւորց վանք: Գիւղիս չուրջը պարիսպներու և հին գերեզմաններու բեկորներ կը տեսնուին: ԳԱՐԱՎԱՆԻԿ, վանք կամ գիւղ. կը յիշուի Սիւնեաց Վայոց-ձոր գ.ի մէջ:

ԳԱՐԱՎԵՐԱՆ, սակաւարնակ Հայոց գիւղ Ատրպայտականի Միանդուար գաւառակի:

ԳԱՐԱՏԱՂ կամ Ղարասաղ, հին Հայաստանի Փայտակարան նահանգի հարաւային մասն է, որ ըստ Պարսից պաշտօնական կոչման Ղարասաղ կը գրուի. կը գտնուի Դավրէթի հիւսիսային արեւելակողմը, երեք օր հեռաւորութեամբ. առամաններն են հիւսիսէն՝ Երասխ գետը, արեւելքէն՝ Մուղանի անապատը, հարաւէն՝ Հասանօվայի և Ահարի գաւառները և արեւմուտքէն՝ Մարանդի գ.ը: Գարատաղ ամբողջապէս լեռնապատ է, թէև շատ բարձր գագաթներ չունի, բայց անհամար լեռնաշղթաներ տարբեր ուղղութեամբ զիրար կտրատելով և միանալով կը կաղմեն բարձրաւանդակմը, որ ծովէն



6500 օտնաչափէն աւելի քարձրութիւն ունի Այս լեռները ծածկուած են անտառներով: Ամբողջ Ատրպատականի մէջ միայն այստեղ կան անտառներ:

Լեռներէն կը ըղխին բազմաթիւ վտակներ որ կը թափին Երասխի մէջ: Հանքային ջերմուկներով հարուստ է Քէյվանի գաւառակը: Գարատաղ հարուստ է երկաթի և պղնձի հանքերով կայ նաև արծաթ:

Գարատաղի բնակիչներն են Հայեր, Թուրքեր, Ալալլահիներ, Գաբափափախներ և Շահսէլաններ: Հայերը կը բնակին քարձրավանդակներու և անմատչելի դառնվայրերու վրայ, իսկ Թուրքերը բռնած էին ձորերը և հովիտները: Հայերը երկրագործութեամբ և մեղուարուծութեամբ կը զբաղին: Հայերը իրենց զրացւոց հետ լաւ դրութեան մէջ չեն, և ստիպուած են միշտ արթուն մնալ և հրացանով պաշտպանուիլ: Հայոց առաջնորդարանը Գիլմարի մէջ գնած է հետևեալ Նորաչէն, Օզա հայարնակ և Խոթու Ռաշու թրքարնակ գիւղերը, որոնց հասոյթը կը ստանայ Արամեան ուսումնարանը: Պարսկաստանի նշանաւոր Թուճանեանցները, որոնց հայրենիքն է Գարատաղ, գներ են բաւական թիւով գիւղեր եւ գաւառիս ամենամեծ կալուածատէրերը կը համարուին:

Գաւառիս մէջ կայ միայն մէկ վանք: Նորաչէն գիւղի սահմանաց մէջ, Ս. Գեորգ անուամբ: Սա Հայաստանի ուրիշ վանքերու նմանութիւն ունի, աւելի մատուռ կարելի է համարել: Լրացագործի համբաւ կը վայելէ և բոլոր գաւառէն ու մինչև անգամ Գաւառէն Հայեր ուխտի կու գան: Գաւառս թէև հին Հայաստանի մէկ մասը կը համարուի, սակայն իր մէջ չի գտնուիր նախնի Հայոց և ոչ մի հեաք, ոչ բերդի կամ վանքի աւերակներ և ոչ հոյակապ եկեղեցիներ: Գարատաղ ի հնուին աւելի բազմաթիւ հայ բնակիչներ ունէր, որոնք զանազան ժամանակաց մէջ գաղթած են ի Դաւրէժ և մանաւանդ Ռուսահայաստան: Բնակիչներէն շատերն ալ Ռուսաստան կը պանդխտին, աւելի Շուշի և մօտաւոր գաւառաց մէջ: Գաւառիս մէջ գիտութեանց եւ ուսմանց լոյսը տակաւին մուտ գործած չէ, սակայն վերջին տարիներս՝ առ այս մեծ ջանքեր պակաս չեն: Գարատաղիք խիստ դժուարականայի բարբառ մ'ունին որ քիչ մը նման է Ղարաբաղի լեզուին: (Էփրիկեան՝ «Բնագիտութիւն» 494, «Արարտ» ամսաթերթ 1, Ա. էջ 500—503):

ԳԱՐԱՍԱՂ կամ Ղարաւաղ Սիւնեաց վայոց ձոր գ.ի մէջ:

ԳԱՐԱՍԱՂ (= Սեաւ լեռ) կը կոչուին ի Թրքաց Կիլիկիոյ Սեաւ Լեռիցք:

ԳԱՐԱՍԱՂԼԸ, Ղարաղաղու կամ Խանգեանոյ հայաբնակ գղ. Գանձակ գ.ի. բնակիչք գաղթած են 1828ին Ատրպատականի Գարատաղ գ.էն, մօտաւորապէս 200 հոգի, եկղ. Ս. Գէորգ՝ 1855ին կառուցուած: Մօտը ունի Նահասակ ուխտատեղի մը:

ԳԱՐԱՍՂԼԸ, Թրքարնակ գիւղակ վերի հայարնակ գիւղին մօտ:

ԳԱՐԱՍԱՂԼԸ, կան մէկէ աւելի այլազգարնակ գիւղեր մեր երկրին զանազան կողմերը:

ԳԱՐԱՍԷՐՊԷՆՍ կամ Կեփի-սաղ, լեռ Բասեն և Բագրևանոյ գաւառներու մէջտեղ, որ կը կոչուի նաև Տաղար գիւղի անուամբ:

ԳԱՐԱՍԻԿԻՆ, կրկին այլազգարնակ գիւղեր Գանձակ գ.ի մէջ:

ԳԱՐԱՍՈՒՐԱՆ, հայարնակ գղ. Անտիոքի Առաջնորդական վիճակին, 1900ին Ազգ. վարժարանը 25 մանչ կը յաճախէին:

ԳԱՐԱՐԸ կամ Խարարգ, գղ. Կարնոյ Գաշաի մէջ, 1900ին ունէր 90 տուն բնակիչ, 60ը հայ, 30ը թուրք: Եկղ. Ս. Աստուածածին: Կը կարծուի թէ այս է հին Արճն քաղաքը:

ԳԱՐԱԻՆԷԿ, լեռ Գեղարքունի գ.ի մէջ:

ԳԱՐԱՅՈՒՆՂԱՐ, աղբիւր Կիլիկիոյ մէջ, Անաւարգայէն 3 ժամ հեռի:

ԳԱՐԱՔԷՆՍ կամ Ղղալա, հայաբնակ գղ. Արցախի Վարանդա գ.ի մէջ, բն. 800էն աւելի, եկղ. Ս. Աստուածածին, քարուկիր ու կամարակապ մօտը բլուրի մը վրայ Փոք Նահասակ կիսաւարտ մատուռ մը կայ, ուրիշ տեղ՝ Մեծ Նահասակ: Տե՛ս Աղջկայ բերդ:

ԳԱՐԱՔԷՆ կամ Գարափոյ ջգիւղակ Կոզովիտ գ.ի մէջ, կը տեսնուին գիւղիս մէջ հնութեանց մնացորդներ, որոնք կը վկայեն թէ ատենօք բարգաւաճ գիւղ մ'եղած է:

ԳԱՐԱՃԷՁԻԼ, հայարնակ գղ. Արճկէի (Վան), եկղ. Գոզգոթայ:

ԳԱՐՔԷՕՅ Ս. Գարափեց

ԳԱՐԱՔԷՕՓՐԻԻ, հայարնակ գղ. Տուրուբերանի Հարք գ.ի մէջ:

ԳԱՐԳԱՐԱՅԻՔ, Առանայ գաւակներէն սերած հայկական ցեղ մը: Մեծ Հայոց արեւելեան հիւսիսային կողմը: Ասոնց բնակութեան տեղն էր Ուտի աշխարհին մէջ, ուր է Գուգարացւոց կոչուած գաշարը:

ԳԱՐԳՄԱՆ Ս. Կարգման:

ԳԱՐԳՄԱՆ կամ Գարգամ, նշանաւոր և հին գաւառ Ուտի աշխարհի, նոյն կը թուի ըլլալ



Գարգամանայ-ձոր անուան հետ: Գաւառիս անուանը գրուած է նաև Գարգամանաձոր կամ Գարգամանա-նոր, Գարգամանակոր, Գարգամանիկ եւայլն:

Գաւառս ինկած է Կուրակ և Շամքոր գետե-րու մէջ: Մովսէս Աորենացին կը յիշէ գաւառիս իյուրս իշխանը, և Յովհաննէս պատմաբան կթղ. Կտրին իշխանը գաւառիս: Գաւառս ունէր նաև յատուկ եպիսկոպոս որոնցմէ ոմանք յանուանէ ծանօթ են, ինչպէս, Յովհաննէս, Ներսէս, Սարգիս եւայլն: Քրիստոնէութիւնը Ս. Մեսրոպայ ձեռամբ մտած է հոս: Ի հնումն Գարգաման անուամբ ամ-րոց մը կար, որ այժմ Մլղնաբերդ անուամբ ծա-նօթ է. միւս բերդերն են Ղալա և Կեռսաավանք (Բարխուդարեանց՝ «Արցախ» 258—305):

ԳԱՐԳՄԱՆ կամ Գարգաման աւան համանուն զո.ի համանուն գետակի ձախակողմը: Այժմ ա-ւերակ և թրքաբնակ և կը կոչուի Գրգամանիկ: 1699ի յիշատակարանի մը մէջ կը յիշուի գիւղս Գարգաման, ուր Յայսմաւուրք մը կընդօրինակու-ուի ընդ հովանեաւ Ս. Սիմէոնիս և Ս. Գրի-գորիս, զորին է Արխատակէս: Գիւղս ունի Մրբլոն անուն ուխտատեղի մը՝ մատուռով, որ ուն մօտ կայ մահարձան մը 1331 թուակնով արձանագրու թեամբ: Մօտն է Դղում գլուխ (Ղաբաղ թէփէ) ընդարձակ գիւղատեղին, հանգստարան և եկեղե-ցի, որ տակաւին կանգուն է: Այս տեղ կը բնա-կին այժմ թուրքեր: (Բարխուդարեանց՝ «Արցախ» էջ 301 2):

ԳԱՐԳՄԱՆ, վերը նկարագրուած գաւառէն զատ կայ նոյնանուն գաւառ մը որ ծանօթ է Շամա-խու Գարգաման անունով. կը ձևացնէ Աղուանից վերին գաւառներէն մին: Կոչուած է նաև Մարգ-պանեան, Մարձպանեան, Գասան, Գերդիման, եւ Լանին: Նշանաւոր է գաւառիս բերդը որ բարձր է 900 ոտք, անջրպետուած է Պապա-տաղէն և Գարգաման գետակին խորանդունդ ձորով և հրս-կայաձև երկնցած է ղէպի արևելք: Ունի մօտ 15 վերստ երկարութիւն և 6-7 լայնութիւն: Այժմ հիմնադասակեղած է Գարգաման բերդը: Իսկ Ջուան-չիր իշխանին կառուցած Ս. Նշան տաճարը քան-դած և Լահճեցիք շինած են գմբէթ մը՝ մահմե-տականի մը գերեզմանին վրայ (Էփրիկեան՝ «Բնագիտարհիկ»), քաղուած «Աղուանգ» գրեկն):

ԳԱՐԳՄԱՆ, գետակ Արցախի համանուն զո.ին մէջ, կը ըզխէ Արիւթունայ սարի ստորոտներէն և կը թափի Շամքուր գետին մէջ:

ԳԱՐԳՄԱՆ, ա՛յլ գետակ Շամախու Գարգաման զո.ի մէջ:

ԳԱՐԳՄԱՆՅԱՉՈՐ և ԳԱՐԳՄԱՆԻԿ՝ s. Գարգաման (Արցախի):

ԳԱՐԵՎԻՆ Սրուանձեան, նահապետ ընկեր. Կար-դանանց (450): Աղբէկեան Մ. եւ Մուրաշեանց Գ. Մ. այս անուամբ ողբերգութիւն մը գրած են:

ԳԱՐԵՋՎԱՐ, կրկին գիւղեր Տփղիսու Գորգի զո.ի մէջ, 1900ին 850 հայ բնակիչ ունէր. կան ևւ վրացիներ:

ԳԱՐԷՆՅԻԼ, ՏԱՂ, լեռ Կիլիկիոյ մէջ:

ԳԱՐԹԱԼ, թաղ Պոլսոյ, s. Բարբալ:

ԳԱՐԹԱԼ, շարաթաթերթ, տպ. Պոլիս 1909, խմբագիր տնօրէն Վ. Յ. Փափագեան:

ԳԱՐԹԱԼԼԸՄԱՆ կամ Գարբալեան երուանց, հե-ղինակ և ուսուցիչ, ծնած մօտաւորապէս 1850ին ի Կ. Պոլիս, ուսած է Օրթաքէոյ մասնագէտ ու-սողական դիտութեանց և հեղինակ Գասաղիբ Թուրքանուրեան (տպ. Պոլիս 1887), Առաջնորդ Թուրքանուրեան (տպ. 1888 և 1892) զրքերու, ուսուցիչ Պոլսոյ Հայկական կրթարանի, Արմա-շու դպրեկանքին (1911—14), յետոյ Պրուսայի վարժարանին: Գաջ լուղորդ եղած է. Գուզկուե-նուքէն Օրթաքէոյ, Բրինքիրոյէն Գարթայ ան-ցած է լողալով: 1896ին խմբագիր եղած է Մաղիկ թերթին: Վախճանած է Պոլիս 1922ին (Տե՛ս նաև Թեոդիկ՝ «Ամ. Տար.» 1923 էջ 413):

ԳԱՐԻԷՐ s. Կարիեր:

ԳԱՐԻՊԵԱՆ Արսաբէս, նկարիչ, ծնած Կէյփէի Գուրտ պէշէն գիւղը 1906ին, 1915ին տարագիր և որր՝ Գորֆուի որբանոցէն Իտալիա կ'անցնի նախ Ֆիէսսոյ տ'Արթիքօ, յետոյ Միլանոյ որբա-նոցը, ուր է ներկայիս իր աշխատանոցը (Արուսեան):

ԳԱՐԻՊԵԱՆ Օր. Գոնարիկ, մէկը Պոլսոյ ամէնէն ուշադրաւ երգչուհիներէն, Լիրիֆօ-սրամաթիֆ խառնուածքով սօփրանօ:

Աշակերտած է նախ Օր. Ռոլլայի, յետոյ Բա-րիզ անցնելով հետե-ւած է Ֆրանսական ե-րաժշտակտն դպրոց-ներուն և Օր. Մ. Պա-պաեանի դասընթացը-ներուն: Փորձառական արդիւնքներ քաղած է յայտնի երգիչ Ժան Ռօտէրէն: Իրրև սոլիսթ երգած է Chorale Uni-versitaireին մէջ և այս առթիւ մասնակցած է Սալ Շօրէնի և Սօր-պօնի դասական քօն-սէրներուն:



Օր. Գոնարիկ Գարիպեան

Երեք տարի Բարիզ մնալէ վերջ, վերադարձած է Պոլիս և աուած է առաջին Ռէսիթալը Թեաթօնիայի սրահին մէջ:



Վերսալին Բարիզ մեկնելով՝ Օր. Գ. Գարիպեան Սալ Կալոյի մէջ տուած է իր երկրորդ երգահանդէսը, Զեբմ գնահատանքի արժանանալով: Մինչ այդ աչակերտած է պարիթօն Բանդէրայի: Ապա զինքը կրկին Պոլիս կը դտնենք, ուր կու տայ երկրորդ երգահանդէսը, փայլուն յայտագրով մը, և արժանաւորապէս երգելով դասական և քնարական գործեր, հայ երգերուն հետ:

Զօրաւոր և երանգաւոր ձայն ունի, ընդունակ՝ բարձր և դժուարին թօներու: Ներկայիս այստեղ (Պոլիս) կ'աւանդէ ձայնամարզութեան դասեր: («Ազգ. Հիւանդանոցի Տարեցոյց» 1925, էջ 344—5):

Օր. Գարիպեան Պոլսոյ մէջ մեռաւ 1938 Յուլիս 8ին:

ԳԱՐԻՊԵԱՆ Գրիգոր. փաստարան և հմուտ օրէնսգէտ, ծնած է Պոլիս, ուր կը վախճանի 1934-ին: Եռանդուն գործունէութիւն ցոյց տուած է իրրե Բաղաք. Ժողովոյ անդամ:

ԳԱՐԻՊԵԱՆ Յովհաննէս, Հասքէօյցի, շրջանաւարտ Պոլսոյ Կեդրոնականէն, աշխատակից «Հայրենիք»-ի. գրասէր և գեղարուեստասէր:

ԳԱՐԻՊԵԱՆ Յովհ. ֆն. ծնած Ատարազար 1881-ին, նախակրթութիւնը ստացած Ատարազարի Արամեան վարժարանը, իսկ երկրորդական ուսումը՝ Պոլսոյ Կեդր. վարժարանը: Երկար տարիներ ուսուցչական և տնօրէնի պաշտօն վարած Պոլիս և գաւառները, յոյնապէս Բոստանցա և Պուքրէշ, 1935-ին քահանայ ձեռնադրուած Պրայլայի՝ պահելով իր մկրտութեան անունը:

Աշխատակցած է Պոլսոյ հայերէն թերթերուն ԳԱՐԿԱԼԸ ՍՈՒ, գեաակ Վանանդ գո. ի:

ԳԱՐԿԱՊԱԶԱՐ, լեռ Բագրեանդ գո. ի մէջ, որուն մօտ 1554ին բանակեցան Օսմանցիք, երբ պարսից վրայ պատերազմելու գացին:

ԳԱՐԿՈՒ ձԱՂ. կը յիշուի Ուտի Առանձնակի մէջ:

ԳԱՐՀԱՐ կամ Գահար, հին ամրոց մը Տուրուբերանի Տարօն գո. ի մէջ, Տորոս լեռան վրայ, զոր շինեց Պարսից Վախթանկ սպարապետը:

ԳԱՐՄԷՆ, նահատակ Դաշնակցական գործիչ, զաւակ նախկին Տաճատ վրդ. ի:

ԳԱՐՄԷՆ Վիգէն, Ժընեւի համալսարանին մէջ կ'ուսանի, 1937ին փիլիսոփայութեան առաջին մրցանակը շահած է և նուէր ստացած է 400 դուիցերիական ֆրանք: Մրցումին մասնակցած են բրոֆէսորներ, բժիշկներ եւայլն:

ԳԱՐՄԷՆ Սիլվա s. Կարմէն Սիլվա:

ԳԱՐՈՒԱՅ ԼԵԱՌՆ, s. Գարու:

ԳԱՐՈՒԼ կամ Գարաթօյ, գղ. Ծովային Կիլիկիոյ մէջ, 500 մէթր բարձր դիրքով:

ԳԱՐՈՒՆ, «ամսագիր՝ ազգային լուսաւորութեան և դաստիարակութեան» տպ. Թիֆլիս 1866, հրատարակիչ Ստ. Աւագ քհ. Մանդինեանց:

ԳԱՐՈՒՆ «ազատ լրագիր՝ ազգային, քաղաքական և գրական» (շաբաթօրեայ), տպ. Կ. Պոլիս, 1909ին լոյս տեսած է 1—24 թիւ, արտօնպատէր՝ Յովնան Փայազաշեան, խմբագիր՝ Ենովք Արմէն, ապա Վաղարշակ Գալաքճեան:

ԳԱՐՈՒՆ «գրական, քննադական այմանախ» (տարեգիր), Տպ. Մոսկվա 1910—1912, խմբագրութեամբ՝ Պ. Մակինցեան, Յուլակ Խանզատեանի և Վ. Տէրեանի:

ԳԱՐՈՒՆ, մանկական և պատանեկան պատկերազարդ ամսագիր, տպ. Պուքրէշ 1925, (լոյս տեսաւ 3 թիւ), խմբագիր Յ. Գ. Աթանասեան:

ԳԱՐՈՒՆ ՀԱՄԱՍՓԻԻՌ պարբերաթերթ մը լոյս տեսած է Գահիրէի մէջ, խմբագիրը և հրատարակութեան թուականը Գ. Լեւոնեանին անծանօթ:

ԳԱՐՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ, «հանդէս բարոյական, բնական, բանասիրական և առեւտրական գիտելեաց» (Կիսամսեայ). տպ. Չմիւռնիա 1862-3, շաբաղիրք՝ Գր. Պարտիզպանեան Տ. Գարազաշեան:

ԳԱՐՁԸՔԱ, հայաբնակ գղ. Պօնթանի Շիրօյի (Մալաթիոյ շուրջ), զպրոց և եկեղեցի ունէր: ԳԱՐՊՈՆԵԱՆՈՅ s. Քեօմիւրնեան:

ԳԱՐՍԱՆ կամ Կարսան, գղ. Բագրեւանդ գո. ի մէջ, 1822ին բազմամարդ գիւղ մըն էր, մեծ մասամբ կաթողիկեայք, որոնք Մօլլա-Սիւլէյման գաղթեցին, 1900ին 15 քուրտ կը բնակէր:

ԳԱՐՍ-ՁԻԻԼ ԳԱՏՐԻԷ կամ Կարս, աւան Կիլիկիոյ դաշտին մէջ: Ստէն 30 վերստ հեռի Ունի 1800 բն. մեծ մասը հայ: Հմուտ արուեստով կառուցուած չորս ամրոցները ցոյց կու տան որ հայկական իշխանութեան ամուր պատուարներէն մին եղած պիտի լինի Քիլիմ գորգերը հոս կը գործեն: (Ալիեան՝ «Սիսուան» 199, Բակ՝ «Կիլիկիա» 200): Տե՛ս Գարս պագար:

ԳԱՐՍԱՔ, հայաբնակ գիւղ մը Պրուսայի շրջանին մէջ, ունէր երկու դպրոց Ս. Լեւոնդեան՝ ուր 140 մանչ և Ս. Սանդուխեան՝ ուր 50 աղջիկ կ'ուսանէին:

ԳԱՐՍՊԱԶԱՐ, Սիսի գիւղերէն մին, որուն Ազգային վարժարանին մէջ 1900ին 85 մանչ կ'ուսանէին: Բողոքականներն ալ ունէին իրենց դպրոցը: (Նոյնը պիտի ըլլայ վերեւ նշանակուած Գարս-Չիւլգատրիէի նէս):

ԳԱՐՏԱՇԵԱՆ Վահան, փաստարան մտաւորական, ծնած է Կեսարիա 1883 Դեկտեմբեր 1ին և կը պատկանի Երեւանի քաղաքացիականներու ընտանիքին, որոնց մէկ ճիւղը կը գտնուի Ռուսական և միւսը՝ Եգիպտոս: Իր նախակրթութիւնը ստացած է իր ծննդավայրին վարժարանը և յետոյ յաճախած՝ Սէնթ Պաղի Յիսուս-



եանց վարժարանը (1890—1900): 1902 Յուլիս 2-ին կ'երթայ Մ. Նահանգները և կը մտնէ Եէյլի համալսարանը և կը հետևի օրէնսգիտութեան (1905—1908): Համալսարանը աւարտելէ յետոյ կ'ընդունուի օրէնսգէտներու կաճառին մէջ և 1909ին կը կազմէ ընկերակցութիւն մը ուրիշ փաստաբանի մը հետ: 1911ին կ'ըլլայ անօրէն, խորհրդական և վիճակագիր Ամերիկայի Օսմ. Առեւտրական Սենեակին և խորհրդական Ուաշինկթընի Թրքական Դեսպանատան և Նիւ Եորքի Թրքական Ընդհ. Հիւպատոսարանին (1910-1914): 1913ին Եւրոպական գործակալ Թուրքիոյ Միացեալ Նահանգաց մէջ, և 1914ին օգնական բարձր յանձնակատար Թուրքիոյ Սան Ֆրանչիսքօի Միջազգային արեւեստահանդէսին:



Գահարաբեկեան Վահան

Ընդհ. պատերազմէն յետոյ Թրքական ծառայութիւնը կը թօթափէ և կը գտնուի ազգային կեանքի մէջ, և կ'աշխատի հայկական անկախութեան դատին համար և կը վարէ Հոկտ. 1918էն 1923 պատուակալ տնօրէնութիւնը Փրէս Պիւրոյի և James W. Gerardի ատենապետութեան տակ գործող Հայաստանի Անկախութեան Ամերիկեան Յանձնախումբին:

Հեղինակած է այլևայլ գիրքեր, ինչպէս Օսմ. Կայսրութիւնը Ի. դարուն (1908), Արեւելեան խնդրոյ վրայ կարճ բացատրութիւն մը (1908), Խորհրդարանական օրինաց սկզբունքները (1909), Արդի կեանքը քրական հարեմին մեջ (1912), Հայաստան եւ Հայք (1916):

Ունի բազմաթիւ յօդուածներ և տետրակներ Արեւելեան խնդրոյն մասին (1916—1923). Հայկ և Աւման անուններով աշխատակցած է Հայրենիքի: 1907—1923 շրջանին կատարած է գիտական կաճառներու և Համալսարաններու մէջ բազմաթիւ բանախօսութիւններ Արեւելեան խնդրոյն և անոր յարակից նիւթերու մասին:

Վահան Գարտաշեան թերևս տաղանդ ունէր սակայն գծրախտութիւն մըն է որ նկարագրով բախտախնդիր մը եղած է: 1908ին ամուսնանալով տարէց այրի Ամերիկուէի մը հետ, անոր նիւթական միջոցները ուղած է իրեն բարձրացման

պատուանդան գարձնել, և ասոր համար է որ իր ծառայութիւնը տրամադրած է նախ Թուրքերուն: Կարծելով թէ կրնայ օգտագործել Թուրք կառավարութիւնը 1913ին կ'երթայ Կ. Պոլիս, իրր թէ լուսաւորելու համար Թուրք ժողովուրդը եւ Թուրք կառավարութիւնը թէ Օսմ. կայսրութիւնը կազմող զանազան ցեղերը պարտ էին սովորիլ բարեկամ ըլլալ իրարու հետ և մշակել եղբայրութեան ոգին: Միւս կողմէն Ամերիկացիներուն կը ներկայանար իրր պետը կազմակերպութեան մը, որուն նպատակն էր «յառաջացնել Թուրքիոյ մէջ բարոյական վիճակներ, որոնք հարկաւոր էին նոր բէժիմին յաջողութեան»: Արդարև Թուրքիայէն կը դառնար ձեռք բերած վերը նշանակուած շահարկ պաշտօնները, (Եւրոպական գործակալ, օգնական բարձր յանձնակատարի և փաստաբան Նիւ Եորքի Թուրք հիւպատոսարանին) որոնք պահեց մինչև 1918 գէթ իրր ախղոս, և գործակցեցաւ այն մարդոց որոնք Թուրքիոյ ամբողջութիւնը պաշտպանելու նպատակով ծրագիրներ կը յղանային և կը պատրաստէին «Reconstruction Work in Turkey» գիրքը որ հազարաւոր օրինակներով ձրի ցրուուեցաւ. և խոշոր զեր կատարեց ամերիկացիներու միտքերը յեղաշրջելուն մէջ:

Սակայն իր արկածախնդրական բազմաթիւ արարքներուն մէջ զլուխ-դործոցը պիտի մնայ 1921ին հրատարակած տետրակը «Ուիլսոն Հայաստանի կոռւակիչ» խորագրով որով կը յարձակէր նախագահ Ուիլսոնին, Մերձաւոր Արեւելքի նպատամատոյցին և Ամերիկեան Միախոնարներուն վրայ զանոնք մատնանշելով իրր Հայաստանի դժբախտութեան երկարաձգման պատասխանատու, ինչ որ պատճառ եղաւ որ Կ. Պոլսոյ հայ երեք հոգեւոր պետերը 20 Մայիս 1921ին պաշտօնական յայտարարութեամբ դատապարտեն զինքը: Վահան Գարտաշեան, երբեմն հակառակորդ յետոյ անձնուէր գործիչ Դաշնակցութեան, մեռաւ 12 Յունիս 1934ին ի Նիւ Եորք: (Ալպօյանեան՝ «Հայ Կեսարիա» էջ 2043):

«Գարտաշեան որդին էր նազար Գարտաշեանի: 1920էն ի վեր, երբ Սովիէթ Ռուսիոյ կողմէ գըրաւուեցաւ կարճատե Հայկական Հանրապետութիւնը, Գարտաշեան փաստաբանն էր Հայկ. Հանրապետութեան պատուիրակութեան, որ ստորագրեց Սեվրի դաճագիրը եւ օրինաւոր յաջողն է Հայկական Հանրապետութեան կառավարութեան որուն կեդրոնը կը գտնուի Բարիլ:

Գարտաշեան խիստ քննադատ մըն էր Մ. Նահանգներու արտաքին քաղաքականութեան՝



Թուրքիոյ վերաբերմամբ, և 1923ի Ապրիլին, ձեռակուտարիան Պորահի գրած նամակով մը ամբաստանեց թէ՛ նախագահին դանիլինին երկու անգամները Լօզանի ֆոնեիեալսին մէջ ծախսեցին հայկական դասք... Կարճ ժամանակ մը յետոյ, Գարաշեան իր փաստարանը Հայկ. Հանրապետութեան պատերազմութեան նամակ մը ուղղեց նախագահ Գուրիին, հրաւիրելով Միացեալ Նահանգները որ պատուիրակութեան հետ միասին Լահէի իրաւաբանական միայուն Ատեանին երթարկեն Ս. Նահանգներու եւ Հայաստանի միջեւ գոյութիւն ունեցող խնդիրները...

Գարաշեան զսաստուսեց Եէյլ համալսարանի և այլ հաստատութեաւց մէջ ( «Հայրենիք» 1924, Տե՛ս նաեւ «Կեանք եւ Արուեստ» 1935 էջ 124):

Գ.Ա.ՐԻՒԷՐ Տ. Կարիեր:

Գ.Ա.ՐԻՒՆԻՔ, գղ. կը յիշուի Վրահայաստանի թուղք գու.ի մէջ:

Գ.Ա.ԻԱՆ, նոր վիճակ Ռչտունեաց գու.ի, ունի 59 գիւղեր: Ընդհանուր բնակչաց թիւն է 14000: Հայք (Լուսաւորչական և կաթողիկ) 5000, մահմետականք՝ 9000: Վիճակս իր անունը առած է հին և երեկի Գաւառ գիւղէ մը, որուն աւերակները ցարդ կը տեսնուին:

Գ.Ա.ԻԱՌ, Կեալար կամ Կեվեռ, վիճակ Վանայ կուսակալութեան, Հաքեարի գու.ի մէջ. 1900ին 26000 բն. ունէր որոնց 1900ը Հայեր էին:

Գ.Ա.ԻԱՌ Տ. Բայազիտ Նոր:

Գ.Ա.ԻԱՌ, «քաղաքական, հասարակական, տընտեսական և զրական լրագիր» (չարաթը մի անգամ). տպ. Գորիս 1910. (1—35 թիւ) խմբ. հղրմ. Սիմ Տէր-Մինասեան:

Գ.Ա.ԻԱՌ.ԱՅԻԻՆ ՏԱՐԵՅՈՅՅԸ, տպ. Կ. Պոլիս 1911-1914. խմբագիր՝ Սահակ Մեարոպ:

Գ.Ա.ԻԱՌ.Ի ՉԱՅՆ, «զրական, հասարակական, քաղաքական, գիւղապետական և կօօպերատիւ լրագիր» (եօրեայ), տպ. Ալեքսանդրապօլ 1913—1916. խմբ. հրաբ. Յ(ովսէփ) Միրզոեան:

Գ.Ա.ԻԱՌ.ՆԻ, հին գղ. Սիւնեաց Սողք գու.ի:

Գ.Ա.ԻԱՌ.ՉԻՆ կամ Գաւազին քարայեռ Արցախի սահմանակից Գուգարաց Կողբոփոր գու.ի մէջ կը գտնուի Ի հնունն նշանաւոր եղած է Գաւազնի բերդը, յիշուած Վարդան պատմիչէն:

Գ.Ա.ԻՉԱ Տ. Խաւզա:

Գ.Ա.ԻԻԱՌ.Ի ՎԱՆՔ, այս անուամբ մեծ վանք մը կար Սիսի մէջ:

Գ.Ա.ՓԱ.Գ.Լ. Լեռ Կիրիկիոյ մէջ:

Գ.Ա.ՓԱ.ՄԱՃԵԱՆ Միմրան, շրջանաւորտ Պոլսոյ Անտառարանական վարժարանէն 1870ին:

Գ.Ա.ՓԱ.ՄԱՃԵԱՆ Միմաս, խմբագիր Չեփիւռ

Հայնեցեացի տպ. Կ. Պոլիս 1863, տնօրէն խմբագիր Հայրենիքի 1870ին և Ապագայ օրաթերթի 1877ին, նոյնպէս տնօրէն Հայրենիք Կիւակօրեայի տպ. 1887ին: Տե՛ս նաեւ Գաբառանեան Միմաս:

Գ.Ա.ՓԱ.ՄԱՃԵԱՆ Մ. խմբագիր 1913—4 Բարիզի մէջ լոյս տեսած Հայ Կեանքի:

Գ.Ա.ՓԱ.ՄԱՃԵԱՆ Պեհրու պէյ, ծնած 1840ին Վան:

Երիտասարդ հասակէն առեւտրական ասպարէզն ընդգրկելով, օրքան զօր դարկ տուած է իր գործառնութեանց և ընդարձակ յարաբերութիւններ հաստատած Այնթապի, Հալէպի և գլխաւորաբար Մանչէսթըրի հետ: Մօտաւորապէս քառօրդ դարու իր առեւտրական գրադումներով (մանիֆաքթ ուրա), շահած է առաջնակարգ վաճառականի համբաւ մը: Ազատութեան հռչակումէն ետք քաղաքապետ ընտրուած է Վանայ, կատարեալ ձեռնհասութեամբ վարելով այդ փափուկ պաշտօնը: Գալիամաճեան Պեհրու պէյի ջանքերուն շնորհիւ է որ Վանայ Մովը հուսկ ուրեմն ունեցաւ իր շոգենաւային երթիւնեկութիւնները:



Գալիամաճեան Պեհրու պէյ

1870ին Պոլսոյ մէջ կը հիմնէ Ս. Սանդխտեան Ընկերութիւնը որուն արդեամբ կը բացուի Վանի համանուն աղջկանց անդրանիկ դպրոցը: 1872ին Վանի մէջ կը կազմէ «Հայկազեան Ընկ» (ընդգէմ տաղիմական Բոլոզ վրձպի), որուն արդեամբ կը բացուի Գէնտրիզի վրայ համանուն դպրոց մը մանչերու: Գարձեալ 1875ին «Կրթասէր» Ընկ.ն. Այրյարոյց եկեղեցւոյ քհ. Տ. Դիոնեսիոսի նախագահութեամբ: 1879ին Բէյքսիզեան կթղ.ի և Յովհաննէս Նուրեանի նախաձեռնութեամբ գումարուած ընդհ. ժողովի կողմէ կ'ընտրուի առեւտրապետ Հայէպի աղք. գործոց վարիչ մարմինի և կաթ. ներկայացուցիչ կառավարութեան առջեւ: 1880ին Վանի «խնամատար» ընկեան, 1882ին քղք. և ուսումն. խորհրդոյ առեւտրապետ 1887ին առեւտրական գործով երբ Բեթերապուրկ կ'անցնի, կը տեսակցի Ազա Մկր Սանասարեանի հետ, յաջողելով ապահովել 60 ոսկիի տարեկան կտակ մը Վանի Սանդխտեան օրիորդաց վարժարանէն համար: 96ի Վանի ջարդին շատ մը ըն-



տանիքներ ապաստանած և խնամուած են իր ամուր նկատուած բնակարանը: 1900ին Պատրիարքարանէ կ'ընտրուի հոգարարձու Վարագայ վանուց, որուն չէնքերը դէպքին այրացաւեր դարձած էին: Իր օրով կը վերաշինուին անոնք, նախկինէն աւելի հասութարեր զառնայով: Իր աղօթուած ձեռնարկներուն ի վարձ ստացած է Արմեան կթղ. է և օրուան պատրիարքէն օրհնութեան կոնդակներ: 1900—4 Վանայ կուսակալութեան ժողովին անդամ: Երբ 1900ի գարնան Վանի մէջ խուզարկութիւններ յաճախադէպ դարձան և շատ մը Հայեր սկսան ձերբակալուիլ՝ չարաչան պաշտօնեաներու զրպարտութիւններով, Գափամաձեան ամէն ճիգ թափած է այդ հեռապնդումները չէզոքացնելու համար՝ կառավարութեան մօտ իր անվերջ ու անվախ դիմումներով և հիւպատոսներէ օգնութեան խնդրանքով: Կաթ. պատգամաւոր իր ծննդավայրէն, Իզմիրիեանի ընտրութեան առթիւ: Երկրագործական Սենեակի ժողովի նախագահ ընտրուելուն, Վանեցի հոգաբարձ զասուն մեծ ծառայութիւն մատուցած է՝ երկրագործական գրամատուցէն սերմնցուի համար գրամ տրուելու գործին մէջ: 1900ին անդամ քաղաքապետական ժողովի, յետոյ նախագահ: 1910ին կ'ընտրուի Օսմ. գա. ընդհ. ժողովի անդամ, նոյն տարին իր նախաձեռնութեամբ կը կազմուի Հայկ. Բարեգործ. Ընդհ. Միութեան Վանի մասնաճիւղը: (Թեոդիկ՝ «Ամ. Տար.» 1911 էջ 352, 1912 էջ 382):

ԳԱՓԱՄԱՃԵԱՆ Տիգրան, 1861— 1876 ալիււայլ գրքեր հրատարակած է Կ. Պոլսոյ մէջ, 1861ին՝ Արհամարհութիւնը, 1864ին 112 էջոց Համառօտ բառարան գործնական բառից սանկերէնէ հայերէն, 1875ին՝ Դիւցազնութիւնի եւ Մեծիկ Վարդանայ եւ Վահանայ Մամիկոնեից եւ Նկարագրութիւն Անի Բի. եւ առումն Անուոյ, 1875ին՝ Լսարան Հայաստանեայց՝ կարողիկէ եկեղեցւոյ ուղղափառ վարդապետութեան ընդդէմ Լուսեակական Հայոց եւայլն: Տե՛ս Գաբամանեան:

ԳԱՓԼՈՒ կամ Գափու Գայա, լեռ Բասեն գա. ի մէջ:

ԳԱՓՈՒ-ԱՂՁԸ, հայարնակ գղ. Եւզոկիոյ գա. ի Նիքոսար գաւառակի. 1900ին ունէր 100 տ. հայ. 1896ի դէպքերուն ատեն առ անի մահմետական եղան, բայց յաջորդ տարին կրկին մայրենի եկեղեցւոյ գիրկը դարձան:

ԳԱՓՈՒ-ԳԱՅԱ, գղ. Չարչամպայի հարաւային արեւմտակողմը. 1900ին ունէր 90 տուն հայ, 38ը բողոքական էին, ունէին իրենց հոյակապ ժողովարանը

ԳԱՓՈՒ ԳԻԼԻՍԷ, գիւղ կը յիշուի Այրարատայ Բասեն գա. ի մէջ:


ԳԱՓՈՒԼՈՒ կամ Ղափուլու, հայարնակ գղ. Շիրակի արեւելակողմը, 1900ին 1300 բն. ունէր:

ԳԱՓՈՒՃՈՒԽ, երկգագաթ բարձր որձաքար լեռ Սիւնեաց Չորք գա. ի մէջ. 26060 ոտք բարձր:

ԳԱՅԱՅԵԱՆ Միհրան, ս. Թովարն Միհրան և Գափանեան:

ԳԱՅԹԱՆԱՆ Հ. Պօլոս, նախկին Մխիթարեան Վենետկոյ. ծնած է Պոլիս 1862-3ին, ուսած Ս. Ղազարու վանքին մէջ, ուր 1882 Գեկտին քահանայ կը ձեռնադրուի. կը վարէ ուսուցչական և առաքելական պաշտօններ ի Կ. Պոլիս և ի Պարտիզակ: 1887ին կը հրատարակէ Կենդանաբանութիւն և ազօթագիրք մը. 1891ին՝ Նոր սարբանութիւն, 1895—6ին՝ Նոր իրազիսութիւն, Ա. և Բ. շրջան: Միարանութեանէն ելլելով Միացեալ Նահանգները գնաց ուր հովիւ կարգուեցաւ և մեռաւ 1920ական թուականին:

ԳԱՅԹԱՆՆԱՆ (կամ Գաֆրանեան) Հ. Եղիշե, «թագակիր», ծնած է 1823ին ի Կ. Պոլիս, անդամ Վիեննայի Մխիթարեան Միարանութեան. ուր ուսանելէ ետք 1853-



ին քահանայ կը ձեռնադրուի և 1903ին կը տօնուի յիսնամեայ յորեկանը և կը վախճանի Պոլսոյ մէջ 1913 Գեկտ. 17ին: Գրած է և հրատարակած 1860-ին Պատմ. Հին եւ Նոր Կսակարանաց, (3 անգամ տպուած), Բովանդակութիւն գիտութեանց եւ արուեստից, Սկզբնական ընթերցուածք տպ. 1882ին: Հ. Գաֆրանեան սիրահար թղթ տպուած գրքերուն՝ անոնցմով ճոխացուցած է վանքին մատենադարանը:

ԳԻԵՂՈՒ Սիւնի, ուրացող, թշնամի Վահանեանց (481) 483ին կը սպաննուի:

ԳԵԱԼ, ս. Գեաղ:

ԳԵԱՂԹԱ, գաւառակ Մալաթիոյ:

ԳԵԱՄՐԻՍ, ս. Գամրիս:

ԳԵԱՆՁԵՑԵԱՆ Եղնիկ, 1903ին կ'երեւայ Հանդես Հայազիսութեան պարբերականին մէջ (Ա. հատոր էջ 37—63) Reiträge zur altarmenischen nomigalen Stammbildungslehre յօդուածով:

ԳԵԱՆՁԵՑԵԱՆ (տիկին Եղնիկին), քոյր հայագէտ բրոֆ. Ն. Ֆինկի, որ հայ լեզուն սորված է



իր եղբորմէ, որուն հետ 1901ին Կովկաս անցած տմուծնացած է:

ԳԵԱՌՆԱՔԱՐ, փոքրիկ շէն՝ Սաչեն գ.ի մէջ. կառուցուած Հաւապտուկ աւերակ վանքի արեւելակողմը. քնակիչները եւն Առաջածոր և Վանք գիւղերէն:

ԳԵԱՓԼԱ, գաւառ Իրանի, ունի 12 հայաբնակ գիւղ, 10 եկղ. և 2632 հայ բնակիչ:

ԳԵՒԵՅՈՒ, հայ աշուղ, յիշուած Պալեան եպ.է («Քիւրակն» 1898, էջ 521):

ԳԵՒՈՒՆԷՂՈՆ, թգ. Հոնաց, որուն դէմ պատերազմելով Տրդատ սպաննեց զինքը (320):

ԳԵԼԻԵԳԵՆՄԱՆ, գղ. Շատախու, 1900ին 40 աււն բն. ունէր:

ԳԵԼԻԶՕՐ կամ Կոլսուր, գղ. Բագրեւանդայ, այժմ պարսկաբնակ. Հայք 1820ին Կիւղէլ տէրէ գաղթած են:

ԳԵԼՈՒՔ, գղ. Սոյթի, բն. հայ և քուրտ:

ԳԵԼՅԵՐ Հ. (H. Gelzer) գերմանացի հայագէտ-բանասէր-պատմագէտ, որուն հետեւեալ գործերը հայերէնի թարգմանուած են:

Փաւսոս Բուզանդ կամ Հայկական եկեղեցւոյ սկզբնաւորութիւնը: Թարգմանեց Հ. Յովհ. Թորոսեան: Տպ. Վենետիկ 1896, էջ 165:

Հէսագոսութիւն Հայ դիցաբանութեան: Թարգմանեց Հ. Յովհ. Թորոսեան: Տպ. Վենետիկ 1897, էջ 136:

Համառոտ պատմութիւն Հայոց յաւելուածովք թարգմանչին: 1. Յանկ 1895էն 1897 Հայոց կոտորածներու առթիւ յոյս տեսած գրքերու: Գաւազանագիրք կաթողիկոսաց և պատրիարքաց: Թարգմանեց Հ. Գր. Գալէմքեարեան: Տպ. Վիեննա 1897, էջ 130:

Bibliotheca Scriptorum, graecorum et romanorum Ten bneriana. Patrum Nicaeorum nomina, latine, graece, coptice, syriace, arabice, armeniace. Lipsiae, 1898, LXVIII+266 pp. Adecta est tabula geographica:

«Բրսֆ. Հ. Գեղցեր ուրիշ երկու բրոքէսորներու (H. Hilgenfeld; O. Cuntz) հետ հրատարակած է այս գիրքը լատիներէն ներածութեամբ: Գիրքը ցուցակ մըն է Նիկիոյ Ա. ժողովին ներկայ գտնուող և ստորագրող Ս. Հարց անուններուն, ինչպէս լատիներէն, յունարէն խափերէն, ասորերէն, արաբերէն և հայերէն, հին ձեռագիրներու մէջ կը գտնուին: Իւրաքանչիւր լեզուի ցուցակն յատուկ աղգային տառերով տպուած է, զիմացն ալ ընթերցուածոյն տառադարձութիւնը և լատիներէն թարգմանութիւնը դրուած է. իսկ տակը ձեռագիրներու ընթերցուածներուն տար-

բերութիւնը: Այս կերպով գեղցիկ տպուած է նաև հայերէն բնագիրը (էջ 185—215)», եւ այլն: (Տե՛ս «Հանդէս Ամսօրեայ» 1888 թ. 7 էջ 217, Ղազիկեան՝ «Նոր Մասեմագրութիւն» 428): Գեղցեր մեռաւ 1907ին, կենսագրականը տե՛ս ՅԱԻԵԼՈՒԱՄԻՆ մէջ:

ԳԵԼՕՅԵԱՆՅ Սոկրատ Խան, Համատանցի, ծն. 1868ին: Կ'աւարտէ Թեհրանի արքայական բարձր դպրոցը՝ ոսկի նշան ստանալով, 1887ին կ'անցնի Եւրոպա՝ ուսումը շարունակելու, 1889ին Նասրէտտին Շահ կ'առնու զինք իր շքախումբին մէջ, երբ կ'այցելէ Եւրոպայի արքունիքները: 1890ին Դալթոն կ'անցնի և կը կազմակերպէ Հնչ շարքերը: 1891ին մատնութեան հետեւանքով խոյս կու տայ երկրին խորերը: 1896ին կը հրաւիրուի Թեհրան՝ խմբագրելու Ասդ Արեւելեանը. մաքառելով դրամատիրաց և Ռուսիոյ դէմ՝ իբր ընկերվարական, ինչ որ կը փութացնէ թերթին խափանումը՝ ուսու դեպանին պահանջմամբ: 1897ին Մուղաֆէրէտտին Շահ՝ իր որդւոյն իշխան Սալարէ Տէօլլէի գասախարակումը կը վստահի Սոկրատ խանի՝ որ առթիւ կը ստանայ «Չօր. Համարդի(եամէր)պաշտօնը: 1898-1903ին իբր մեհտոր և թիկնապահ իշխանին միջամուխ կ'ըլլայ Սամսայի, արապիստանի, Լօսիստանի (Սոլում) և Պախախարիի գործերուն. մեծապէս զնահատուելով: 1900ին կ'ամբաստանուի իբր «բնութեամբ անհանգիստ՝ իշխանը գահ բարձրացնելու համար Հայ Յեղ. խումբեր պատրաստող». և երբ իրօք իշխանը հօրը դէմ կ'ապստամբի, Սոկրատ Խան 1906ին Ամերիկա կ'անցնի գորգի վաճառատան մը մէջ պաշտօն վարելով և խառնուելով Հընչակեան գործերու: Հիմա (1925) հոն է նորէն բայց հեռացած կուսակցական շարքերէ: (Ալպոյանեան՝ Թեոդիկի «Ամ. Տար»ը 1926 էջ 629):

ԳԵՀԵՆԻՔ, հին գիւղ Սիւնեաց Ճահուկ գ.ի:

ԳԵՂ. Գեղայ կամ Գեղամայ լեռնից, լեռնաշղթայ Սիւնեաց Գեղարքունի գ.ի արեւմտակողմը: Անունը Գեղամ նահապետէն առած է. լեռնաշղթայս բուսականութենէ զուրկ է և հրաբլխային մնացորդներով ծածկուած. բարձրագոյն գագաթն է Իւլ քեփեկե (երեք գագաթներ) կոչուածը, որ բարձր է 10054 ոտք: Այս լեռներուն վրայ են Այրի կամ Գեղարդայ վանքը, Գառնի, Հաւուցթառ վանքերը. արեւելեան լանջքին վրայ են Շոդազայի, Վոնավանու, Մաքինոցաց, Կոթավանք, եւ այլն մենաստանները: (Եփրիկեան՝ «Բնագլխարհիկ» էջ 502):

ԳԵՂ կամ ԳԵԼ, գղ. Այրարատայ Ուրծ և Արած գ.ի մէջ. անունը կը թուի թէ Գեղամէն առած է:



ԳԵՂԱԳԻՐ, այսպէս կը կոչուէի Ս. Հայաստանի ձարգուանը:

ԳԵՂԱՆՈՒՒ, գղ. Բարձր Հայոց Կարնոյ գ.ի մէջ, 1900ին ունէր 35 ա. հայ, 10 ա. թուրք. եկղ. Ս. Սարգիս քարուկի:

ԳԵՂԱՄ, որգի Ամասեայ Հայկաղն նահապետի (1908—1858 ն. ք. Բ.), իր անուէնով կոչուեցան, Գեղամայ լեռին, Գեղարբունի, եւայն: Տե՛ս Գեղարբունի:

ԳԵՂԱՄ, տե՛ս Տեր Կարապետեան Գեղամ:  
ԳԵՂԱՄԱՅ ԳԱՒԱՌ ԿԱՄ ԵՐԿԻՐ Տ. Գեղարբունի:

ԳԵՂԱՄԱՅ ԼԵՐԻՆՔ Տ. Գեղ:

ԳԵՂԱՄԱՅ ԾՈՎԱԿ ԿԱՄ ՍԵՒԱՆԱՅ լին: Գեղարքունի գ.ի մէջ կը գտնուի Գեղամ նահապետի անուէնով կոչուած լիճս. պատմութեան մէջ ծանօթ է Գեղարբունի լին, այժմ օտարներէն Կեօֆ չայ (Կապոյտ ջուր), ինչպէս նաև Սեւանայ լին կը կոչուէի նոյն անուէն կղզւոյն անուամբ: Տե՛ս Սեւանայ լին:

ԳԵՂԱՄՇԷՆ, այս անուամբ ևս կը յիշուէ Այրարատայ Մազազ գ.ը:

ԳԵՂԱՄԲԱԿ, հին գղ. Սիւնեաց Սողք գ.ի:  
ԳԵՂԱՄԻ Տ. Գառնի:

ԳԵՂԱՅ ԼԵՐԻՆՔ Տ. Գեղ:

ԳԵՂԱՆԻ, հայանուն բայց այլազգարնակ գղ. Տայոց Օլթի գաւառակի:

ԳԵՂԱՍԷՐ, «զրական, գեղարուեստական, աշակերտական արմանախ», տպ. Թաւրիզ 1919. (Խմբագրական մարմին):

ԳԵՂ ԱՍՈՐԻ ԿԱՄ ՔԵՂ Այսորի, ասորաբնակ գղ. Մազազ գ.ի մէջ: Տես Քեղ:

ԳԵՂԱՐԳԱՅ ՎԱՆՔ, տե՛ս Այրի վանք:

ԳԵՂԱՐԳԱՉՈՐ, Այրարատայ Մազազ գ.ի մէջի այն ձորը՝ որուն մէջ Գեղարգայ կամ Այրի վանքը կառուցուած է:

ԳԵՂԱՐԳԱՍԱՐ, Գեղայ լեռան մէկ սարը Մազազ գ.ի մէջ երկնցած: Այսպէս կոչուած է Գեղարգայ վանքին անուամբ:

ԳԵՂԱՐՈՒԵՍ, «զրական, արուեստագիտական, երաժշտական պատկերազարդ հանդէս», տպ. Թիֆլիս 1908—1921. 1—7 գիրք. 5րդը վեհտիկ տպուած: Խմբագիր հրատարակիչ՝ Գարեգին Լեւոնեան:

ԳԵՂԱՐՔՈՒՆԻ ԿԱՄ ԳԵՂԱՐԲՈՒՆԻ, Սիւնեաց գաւառներէն մին, որ կ'իյնայ նոյն աշխարհի հիւսիսկողմը, և Հայաստանի ամէնէն գեղատեսիլ մասը կը համարուի Շրջապատուած է սահմանակից Այրարատ, Գուգարք Ուտիարցախ, աշ-

խարհներէն և Սիւնեաց Վայոց ձոր և Սողք գաւառներէն Գաւառս իր անուէնը առաջ է մեր Գեղամ նահապետէն որ ըստ Մովսէս Խորենացւոյ՝ իր հայրենի Արմաւրայ տունը Հարմա անդրանիկ որդւոյն թողով՝ կ'երթայ արեւելեան-հիւսիսային կողմը, ծովակի մը եզրը՝ հոն կը բնակի և իր անուամբ լեռը Գեղ կ'անուանէ և չէնքը՝ Գեղարբունի, ինչպէս կը կոչուէի նաև ծովը: Գաւառս Գեղ-Արբունի, Գեղարբունի, Գաւառ Գեղամայ, Գեղամ, Աբխաթի Գեղամայ այ կոչուած է:

Գաւառս միայն երկրորդ դարուն կը յիշուի երբ Արքայաքաջն Սմբատ բնակեցաւ: Հայկական դպրութեան ծագման ժամանակ, ինչպէս Մեծն Սիւնիք, նոյնպէս և անոր այս մասը՝ մտաւորական հրահանգներով և բարեպաշտութեան կարգերով զարգացաւ: Սասանեանց տէրութեան վերջին տարիները (629) Խաղրաց կամ Հոնաց արշաւանաց միջոցին, անոնց հրոսակները և Պարսիցը՝ Շահր-Վարազայ զօրավարին առաջնորդութեամբ, իրարու հետ զարնուեցան բուռն զօրութեամբ Գեղամայ ծովակին եզրերը: Ութերորդ դարու սկիզբը (703) Մանուէ ստիկանը արշաւելով գաւառիս վրայ, երկար ժամանակ պաշարեց և տիրեց Սեւան կղզւոյն: Տարիներ վերջը, Բաբան պարսիկը բռնացաւ Սիւնեաց աշխարհին վրայ, Վասակ դուստրը առաւ և դաւառիս վրայ յարձակելով, բնակիչները սրէ անցուց: Ութերորդ դարու վերջերը Սիւնեաց կը պայազատէր Վասակ, որ Գեղարքունի գաւառը իր Սահակ որդւոյն ժառանգութիւն տուաւ:

Երկոտասաներորդ դարու կէսէն վերջ, վրաց զօրացած ժամանակ, Զաքարեան քաջ զօրավարները այլազգիներու ձեռքէն կորցած առաջին գաւառաց հետ, առին նաև «զգաւառս որ շուրջ ծովով Գեղարքունւոյ» (Կիրակոս պատմիչ): Թաթարաց աշխարհակալութեան միջոց, անոնց Չարմազան զօրավարը, Անին առնելէն առաջ, Գեղամի ծովակի ափունքը դրած էր իր խորանը: Ո՛չ միայն այս անգամ, այլ և ի հնուէն և յետոյ շատ անգամներ Գեղամայ գեղեցիկ հովիտները եղած են կռուատեղի և դաղար բանակաց Հայոց և օտարաց: 1319ի երկրաշարժին շատ մը գիւղեր կործանեցան և 1387ին աշխարհաւեր Լէնկ թիմուր գաւառիս մէջ բանակեցաւ:

Կը թուի թէ ԺՉ. դարուն մէջ անդորրացիք է Գեղամայ երկիրը, ուր սկսեցին պայազատուիլ տիրել Հայոց մելիքները: Այս մելիքներու իշխանութեան ժամանակ ևս հանգիստ չէ մնացած այլաշխարհը այլազգիներու արշաւանքներէ: Մինչև Ռուսաց տիրելը, թէև Երևանի կողմնակալն կամ







նատուներ: Բլրակի մը վրայ կայ Ս. Գէորգ հին եկեղեցին:

ԳԵՏԱԲԷԿ ՀԱՅՈՒ կամ Ղազախ. գղ. համա- նուն վերի պղնձահանք գիւղէն երեք վերստ հեռի: 1900ին բնակչաց թիւն էր 2500, որոնք ե- կած էին Հին Գետարէկէն և ասոնց նախնիք ալ՝ Ղազախի կոթ, Ոսկեպարիսպ, և Ղալազագիւ- ղերէն:

ԳԵՏԱԹԱՂ, հայարնակ գղ. Սիւնեաց Ծղուկ գ.ա.ի, Շատախ գետի ձախակողմը, ունի չորս սիւներով կամարակապ եկղ. մը, շինուած ՌՃԾԱ (1702)ին. բնակիչները 400 հոգի մեծ մասով գաղթած են Հին Նախիջևանէն: Այս գիւղէն է Փիրդատէ Բաս- տամեանց. որ 1886—7 թուին ճամբորդած է Մեծ ու Փոքր Հայաստան, Փոքր Ասիա:

ԳԵՏԱԿԻՑ, գղ. Սասունի, բն. հայ և քուրտ էին:

ԳԵՏԱԿԻՑ, հին գղ. Սիւնեաց Ծղուկ գ.ա.ի:

ԳԵՏԱԿԻՑՔ, վանք մը, որ կը յիշուի կիրակոս պատմիչէն (Գլ ժէ.): Արդեօք նո՞յնն է Գետկայ վանքին հետ, որ կից էր Աղսաեւ գետին:

ԳԵՏԱԿՆ, կը յիշուի տեղս Սեւանայ կղզիին մօտ, ուր Զոյքարէ Սպասալարի և Իւանէի Աթարէկի օրով, եկեղեցականք ժողով մը գումարեցին:

ԳԵՏԱՀԱՅԵԱՅ ԱՍՏՈՒԱԾԱԾԻՆ կամ Բարձր Ասուածածին, հինաւուրց վանք վերին Կեղիի, Օսնակ գղ.ի մօտ կառուցուած ժԸ դարուն. ամ- րապինդ և հսկայագործ շէնք մը, օրինակելի յա- տակագծով: 1888ին հեղեղները վանքիս յարա- կից սենեակները և պահարանները լերան զա- ոթիթափէն վար գլորած են ու ներկայիս միայն եկեղեցին կանգուն կը մնայ:

ԳԵՏԱՀԱՐԱՆ, հին գղ. Սիւնեաց:

ԳԵՏԱՄ, գղ. Գողթն գ.ա.ի համանուն վտակի մօտ, թաթարաբնակ:

ԳԵՏԱՄԷՋ, հին գղ. Սիւնեաց Գեղարքունի գ.ա.ի մէջ:

ԳԵՏԱՇԷՆ կամ Չայ-Բենդ, հայաբնակ մեծ գղ. Գանձակի Միխայիլովու հասարակութեան մէջ, գեղին կեդրոնն է Ս. Առաքուածածին եկեղեցին՝ վերջերս (1890) նորոգուած: Ժամանակաւ 700 տուն բնակիչ ունեցած է որոնք Գարապաղէն գաղթած են: 1800—1828ին Հայերը գերի տար- ուած են Պարսկաստան, չափերն ալ Գարապաղ գաղթեր են: Այժմեան (1900ին) բնակիչք 2800, գաղթած են Բոլնիսէն, Ջրաբերդէն և Ընստակէն: 1850էն ի վեր զպրոց ունեցած են Գետաշէնի վարի ծայրը կայ Աւագ Ս. Նեան մատուռ մը, նահատակի մը հանգստարանն է և ուխտատեղի:

ունի ՌՃԻԶ (1677) թուականով արձանագրու- թիւն կան գրչագրեր:

ԳԵՏԱՇԷՆ, այսպէս կոչուած է Ո. Հայաստանի Կունէն աւանը:

ԳԵՒԱՇԷՆ, գղ. Աղուանից Հողի գ.ա.ի, Արջկան գետակի ձախակողմեան բարձրութեան վրայ: 1900ին 600 բն. ունէր, բոլորը հայ նախնիք գաղթած են իրան և Ջրաբերդ գաւառներէն: Եկղ. Ս. Առաքուածածին:

ԳԵՏԱՌ, վտակ Երևանի սահմանաց մօտ, օ- ժանդակ Հրազդանի:

ԳԵՏԱՎԱՆ, կը յիշուի Գուգարաց Տաշիրք գ.ա.ի մէջ: Տեղեկութիւնք կը պակսին:

ԳԵՏԱՎԱՆԱՅ ԾՈՎԱԿ, կը յիշուի Սիւնեաց Վա- նիվանի (Գեղարքունի) արձանագրութեան մը մէջ:

ԳԵՏԱՎԱՅԲ, հին գղ. Սիւնեաց մէջ, կը յիշուի Իրրե կայուած Զորք գ.ա.ի Սահանայ վանքին:

ԳԵՏԱՐԳԵԼ, s. Չագալանց:

ԳԵՏԵԶՐ կամ Գեթեղեր, հայարնակ գղ. Մոկաց աշխարհի, Առուանից ձորին դիմացը, եկեղեցի Ս. Ստեփանոս:

ԳԵՏԻԿ կամ ԳՈՇ ՄԵՒԹԱՐԱՅ ՎԱՆՔ, երբեմն հռչակաւոր և այժմ իւր աւերակներով անդամ նշանաւոր վանքս կը գտնուի Արցախի Դուսաի գաւառի մէջ, Գետիկ կամ Տախանտ կոչուած գե- ղատեսիլ հարթակի մը վրայ: Բարձր և անաս- ուապատ լեռներ կը պատեն վանքիս հարաւային, արեւմտեան և հիւսիսային կողմերը, բաց է միայն արեւելեան կողմը: Երկոտասաներորդ դարու վեր- ջերը, երբ բարբարոս Մոնղոլները իրենց ասպա- տակութեան ասպարէզ դարձուցին Սիւնեաց քա- ջարի իշխաններու օրոհներ, երբ այդ արիւնար- բուցեցիկ հրոսակները անգլթօրէն սրէ անցուցին նաև Գանձակու բոլոր բնակիչները, ճիշդ այդ ժա- մանակ 1191ին, իւր հայրենեաց աւերմանց ա- կանատես անուանի Միթիթար Գոշ վարդապետը կը հիմնարկէ հռչակաւոր մենաստանս, փոխանակ հին Գետիկ վանաց, որ երկրաշարժէն մեծապէս լիասուած էր, աջակցութեամբ Վախտանկ իշ- խանի և նորա ամուսնի Արդու Ութունի: Վանքս որ կը բաղկանայ քանի մը եկեղեցիներէ, իւր գեղեցիկ շէնքովը ունի բնութեան հրապու- ըրիչ և վերին աստիճանի կենդանի տեսարան մը:

Առաջին եկեղեցին Ս. Առաքուածածին կառուց- ուած է մեծ ճարտարութեամբ. ընտիր սրբատաշ քարերով, Գանձասարի եկեղեցւոյ իսկական ձևով, չորս բարձրաշէն կամարներով: Ունի չորս փոքր ու մի աւագ խորան, երկու խորհրդարան, տաս- ներեք լուսամուտ, վեղարած և կաթողիկէ մը, եր-



կու զուռն՝ արեւմտեան և հիւսիսային կողմերէն: Եկեղեցւոյ լայնութիւնն է 11,50 մետր և երկայնութիւնն 15,75 մետր: Երկրաչարժէ վնասուած են կաթողիկէն և արաքուստ արեւելեան որմն, իսկ ներքուստ արեւմտեան և հարաւային կողմերը: Աջակողմեան դասի երկրորդ խորանի ճակատին վրայ կը կարդացուի ՈՈ ( = 1191) թուականաւ վանաց շինութեան արձանագրութիւնն, Աւագ խորանին վրայ ևս կայ ուրիշ ընդարձակ արձանագրութիւն մը: Ս. Աստուածածնի արեւմտեան կողմը կից կայ ընդարձակ դաւիթ մը, կառուցուած չորս հրաշակերտ միապաղաղ և բոլորակ սիւներու և ութ կիսասիւններու վրայ: Գաւիթս ունի չորս խորան, 11 լուսամուտ և երկու դուռն. երկայնութիւնն է 15,79 մետր և լայնութիւնը 13,40 մ.: Արեւմտեան զրան վրան կայ ՉՈԳ ( = 1294) թուականաւ արձանագրութիւն:


Երրորդ եկեղեցին որ կը կոչուի Ս. Գրիգոր Լուսաւորիչ, պատկից է գրեթէ Ս. Աստուածածնի հարաւային կողմին, համակ քարաշէն և չքնաղ կերտուածներով: Չնով յար և նման է վերնոյն, բայց առանց գաւթի: Ունի 11,90 մ. երկայնութիւն և 9,12 մ. լայնութիւն, ափսո՛ս որ քանդուած են ամբողջ կաթողիկէն, խորանակամարի մէկ քանի քարերը և այլ մասեր: Այս եկեղեցւոյ կից են զանազան հայ պալատաներու դամբարաններ: Տաճարս ունի զանազան արձանագրութիւններ, որոնք կը վերաբերին շինութեանց և նուիրատուութեանց: Երրորդ եկեղեցին Ս. Կարապետ, համարեայ թէ կից է Ս. Աստուածածնի եկեղեցւոյ գաւթի հարաւային որմին: Շինուած է համակ սրբատաշ քարով եւ նուրբ քանդակներով, որուն սեղանի գոգը շինած է Գրիգոր՝ Տղայ անուանեալ, կաթողիկոսը: Այս եկեղեցին հիմնարկած է Մարտիրոս անուամբ առաջնորդը, բայց Լուզիմ Սալահագինի արչաւանքներու պատճառաւ չէ կարողացեր աւարտել սակայն վերջացուցեր է Կապալեցի Գրիգոր իշխանը ՈՂ ( = 1241) թուականին: Տաճարս ունի երկու փոքր և մէկ մեծ խորան, հինգ լուսամուտ և մէկ դուռն. երկայնութիւնն է 6,90 մ. եւ լայնութիւնն է 5,83 մ.: Հարաւային որմի վրայ արտաքուստ կայ ՈՁԶ ( = 1237) թուականաւ արձանագրութիւն. նոյն որմի քարերն սկսեր են թափթփիլ: Դրան երկու կողմերը կան, երկու հրաշակերտ խաչքարեր, որոնք իրենց ճարտար և նուրբ փորագրութեամբ, Հայոց հռչակուած խաչարձաններէն գլխաւորները կրնան համարուիլ: Ս. Աստուածածնի աջակողմը կը բարձրանայ

զանգակատան բարձր և եռայարկ շէնքը, որու կաթողիկէն այժմ բոլորովին քանդուած է: Գեանայարկ մառանապուռն է, որուն յատակի վրայ կան քարուկիր հորեր, ունի մէկ դուռն և չորս լուսամուտ: Միջնայարկն զաղտնի պահարան է, ուր կը մտցուի վերնայարկի մտից առջև գրանուած ծակէ մը: Վերնայարկն շինուած է խաչածեւ և ունի դուռ մը հարաւային կողմէն եւ երկու սեղաններ Գարբիէլ և Միքայէլ հրեշտակապետաց անուամբ: Չանգակատան շինողք են երկու եղբայրք Դասապետ վարդապետ և Կարապետ, ինչպէս կը յայտնէ ՉՈ ( = 1291) թուականաւ արձանագրութիւնը: Չանգակատան պատկից է սեղանատունը, որ ընդարձակ շէնք մ'է, տանիքը ամբողջապէս խոնարհուած: Չորս պատերն շինուած են անտաշ մեծամեծ քարերով. երկայնութիւնն է 17 մ. և լայնութիւնը 10 մ.: Այս ընդարձակութենէն ղիւրաւ կարելի է մակարեւել, թէ որքան բաղմամբիւ եղած են ուսանողները եւ միաբանները:

Այժմ քայքայուած են բոլոր միաբանից սենեակներն և վանաց շրջապարիսպն. թողով միայն իրենց տխուր հեռքերն և աւեր հիմքերը: Վերոյնշեալ եկեղեցիներու արեւմտեան կողմերը կան բաղմամբիւ տապանաքարեր, իսկ արեւելեան կողմերը աւելի սակաւաթիւ: Մեծ՝ Ս. Աստուածածնի եկեղեցւոյ արեւելեան կողմը կայ փոքրիկ մատուռ մը սրբատաշ քարով շինուած, որոյ համար ոմանք կը կարծեն, թէ գրաղարան եղած լինի: Վանացս մօտ Քարսաւայ գետակի ձախ կողմը, Չոպան տաղի (8435) ստորոտը կը գտնուի համանուն Գեթիկ կամ Գոռա-վանիք-եհն կոչուած գիւղը, որուն քանակիները 1855 թուին տեղափոխուած են այստեղ Չաւէ գու.ի կոթ, Դոսալու, Գվեղ և Սուի գիւղերէն: Օղն, կլիման և ջուրն պատուական են: Ընդամէնը կը հաշուին 270 հոգի, բաժնուած 25 տուն: Ս. Հովիփսիմե, այսպէս կը կոչուի գիւղի մէջ համակ սրբատաշ քարերով շինուած մատուռ մը, որ ունի 5,70 մ. երկայնութիւն և նոյնչափ լայնութիւն: Հարաւային որմին և կաթողիկէին վրայ կան արձանագրութիւններ: — ՀոգիՍուրբ՝ ուրիշ մատուռ մի է, Ս. Հովիփսիմէին վեր, գիւղի ձայրը, որ ունի նաև գաւիթ: Մատուռ և գաւիթս նորոգած է Պ. Սմբատ Փարսատանեան: Գաւթի մէջ կան երկու տապանաքարեր, որոց միոյն վրայ գրուած է Միսիբաւ: Այս է Միսիթար Կոչի գերեզման, որոյ գլխատակի հողը, բժշկութեան համար հաւատացեալները այնքան տարած են որ մեծ փոս ձեացած է: Մատրանս հարաւային



կողմը կայ պատուական խաչարձանով տապա-  
նաքար մը, հանդերձ արձանագրութեամբ: Յոյժ  
ցաւալի և ողբալի վիճակի մէջ կը գտնուի Մխի-  
թար Գոշի հրաշակերտ վանքը, հետզհետէ բոյր-  
բոյլին կ'ոչնչանան եկեղեցիները, որոնք ուշադրու-  
թեան և նորոգութեան կը կարօտին: Այժմ վա-  
նականներէ զուրկ է, և կիսակործան տաճար-



Գեօրգի կամ Գոց Մխիթարայ վանքի բնօր. տեղը  
ներն յանձնուած են քահանայի մը ջանքեր:  
Վանքս, ինչպէս կ'երևի արձանագրութիւններէն,  
ժամանակաւ ունեցած է սեպական շատ անշարժ  
կալուածներ, այգիներ, ջրաղացներ, զիւղեր, եր-  
կիրներ, անտառներ և ամարանոցներ: Այժմ ան-  
տիրութեան պատճառաւ յափշտակուած են այդ  
բոլոր կալուածները, որոնցմով 700 տարի պայ-  
ծառ կեանք և կենդանութիւն ունեցեր է վանքս:  
Այժմ աստուածային պաշտամունք կը կատարէ  
զիւղի քահանան Ս. Աստուածածնի եկեղեցւոյ  
մէջ: Ժամանակին մեծ հոշակ ունենալով վանքս,  
հայ մեծատունները միշտ մեծամեծ նուէրները  
բաժն են անոր ապահովութեան համար, ինչպէս  
1289 թուին, Մանազկերտցի ձոր իշխանը, ըն-  
դարձակ հող զնելով նուիրեր է, որուն արձա-  
նագրութիւնը գրուած է ներկով: Ուրիշ նուիրա-  
տուններէն յիշենք միայն Գայլ իշխանը 1186ին,  
իւր որդին Գայլաձագը, Սմբատ իշխանի որդին  
Գրիգոր Հէջուրը, Իգնատիոս անունով վարդա-  
պետը, Կիրակոս պատմագիր վարդապետը՝ որ տը-  
լած է քսան կտոր զիրք, քառասուն դահեկան  
և մէկ շուրջառ:

Վանքէս քիչ մը վար կը գտնուի աւերակ Ու-  
ռեյանէ զիւղը, հանգստարանով և կիսաւեր եկե-  
ղեցիով: Իսկ քիչ հեռու, հարաւային կողմն է  
Տգրկածով անուամբ զիւղը, որ այժմ թրքաբնակ  
է: Դարձեալ վանքիս հիւսիս արեւմտեան կողմը,

սարի հիւսիսային լանջի վրայ կայ աւերակ զիւղ  
մը և հանգստարան, Հին Շար Խաչ անուամբ:  
Այս աւերակի և հանգստարանի մէջտեղ կայ  
բարձր ժայռ մը, որուն հարաւային եւ արեւմը-  
եան երեսներուն վրայ շարքով շինուած են  
քսանեկեց հատ մեծ ու փոքր խաչեր, և այս  
հանգամանքէն զիւղս առած է իւր անունն,  
որոյ անուամբ կը կոչուի նաև այժմեան Նոր  
Խաչ զիւղն: Նոյն սարի ստորոտը կը գտնուի Ա-  
ռուղի զիւղատեղին, առուակի մը ձախ կողմը,  
ուր կայ նաև հանգստարան: Ասկէջ քիչ մը վե-  
րեւ է Եղցու-Թալա կոչուած տեղը որ ժամանա-  
կաւ զիւղ է եղեր և ունի հանգստարան ու եկե-  
ղեցի: Այս տեղէն ոչ այնչափ հեռու կը գտնուի  
Գեորգ ձգնաւորի քարայրը և գերեզմանը: Իսկ  
ասկէ քիչ մը վարով Աղստեւ գետակի աջ ափի  
վրայ կայ կիսաւեր եկեղեցի մը, որ հաւանական-  
օրէն լինելու է Հին-Գեօրգի վանքի աւերակն:  
(Եփիիկեան «Բնախարհիկ» էջ 487—8):

ԳԵՏԻԿ կամ Քեօրգի, երեք հայարնակ զիւղեր  
Շիրակ գո. ի մէջ, Վերին Գեօրգի 1900ին ունէր  
700 րն, Միջին Գեօրգի՝ 350, Ասորին Գեօրգի՝ 400:

ԳԵՏԻԿ կամ Արսաւ-չայ, ձորակ Սիւնեաց Արե-  
գունի վիճակին մէջ:

ԳԵՏԻԿ, այսպէս կը կոչուի ներկայիս Ալիխան  
զիւղը:

ԳԵՏԻԿ, հին զիւղ Սիւնեաց Վայոց-ձոր գո. ի,  
որ կը կարծուի թէ Թաթարաբնակ Չալֆեկոյ զիւ-  
ղին կը համապատասխանէ: Հայկական հին մնա-  
ցորդներ կ'երեւին:

ԳԵՏԻԿՈՒՏ, կը յիշուի Այրարատի Չէկի-Պաղարի  
մէջ:

ԳԵՏԱԹԱՂՅԻ Կոստանդին, մեռած 1726ին և  
թաղուած ի Թոնովա (Պուլկարիա): Տե՛ս Սիոն  
1935, էջ 29:

ԳԵՏԱ Ա.Ի.Ա.Ե, կը գտնուէր աւանս Վասպու-  
րականի ձուլառոտ կամ Թոնաւան գո. ի մէջ:  
Հոս Գաղիկ Ա. Թագաւոր իրեն ամարանոց մը  
շինեց, ինչպէս կը գրէ Թովմա-Արծրունի (Վ. ժա):

ԳԵՂՈՒՆ կամ Քիլորոն, զիւղակ Կոտայք գո. ի  
Արդնի գլխէն կէս փարսախս հեռու. մօտը կայ Հրազ-  
դան գետին վրայ ձգուած կամուրջ մը:

ԳԵՏՏԻԿ, կը յիշուի Ագուլիսի Ս. Թովմայի  
վանքի արձանագրութեան մէջ:

ԳԵՐԱԿԵԱՆ Յակոբ, աղալային բարերար, Սու-  
րաթարնակ (Հնդկաստան). կը յիշուի Այվազեա-  
նէն («Շար. Հայ Կենս» Գ. էջ 87):

ԳԵՐԱՆ, գլ. Արտաղ գո. ի որ կը թուի ըլլալ  
Ագուս Գեբան բուսածը:

ԳԵՐԱՆԱՅ ԳԱՇՏ Տ. Քեբան:



ԳԵՐԱՏԱՅ կամ ԳԵՐԱՏԵՅայ գաշտ, Ազատ գո.ի մօտերը ըլլալ կը թուի: Կը յիշուի Թովմա Արծրունիէն երբ Գաղիկ Բ.ի մասին կը գրէ: Հացիւնեաց խաչի պատմութեան յաւելուածին մէջ կը յիշուի դաշտս, «(Հերակլ կայսր) եկեալ բնակեցաւ ի դաշտին Գետակայ, մերձ ի քաղաքն Սանատրուկ Շաւարշայ»: Կը հետեցուի որ Ազատ կամ Շաւարշան գո.ի հետ նոյնն է:

ԳԵՐԱՓՈՒ, հին գղ. Գեղարքունի գո.ի մէջ, որ 15 բեռն հարկ կու տար Միւնեաց եկեղեցւոյն: ԳԵՐԵՁԱՄՆՔ, Վասպուրականի Երուանդունիք գո.ի Հայոց ձորի մէջ գտնուող այն ըլլորը՝ ուր իր քաջերովը ինկաւ Բէլ, և որուն անունը Հայկ դրած էր ԳԵՐԵՂԱՆ:

ԳԵՐԵՇԱՏ s. ԵՐԵՍ:

ԳԵՐԵՎԱՆՔ, գղ. Մշոյ:

ԳԵՐՄ s. ՔԵՐԾ:

ԳԵՐՄԱՂՔԻԻՐ s. ԶԵՐԱՊԵՐԻ:

ԳԵՐՄԱՆԻԱ, Եւրոպայի զօրաւոր պետութիւններէն մին, որուն մայրաքաղաքն է Պերլին: Մեծն Լեւոնի Իտալացոց հետ ըրած դաշնակցութենէն աւելի առաջ սկսած են Հայք ծանօթանալ և գործել այս տէրութեան հետ: Երկրորդ խաչակրութեան ժամանակ, Գերմանիոյ Փրեդերիկոս կայսրը թուղթ գրեց Լեւոնի և խնդրեց որ իրենց օգնէ: Լեւոն ո՛չ միայն առատ պաշար զրկեց իրենց, այլ նաև ազնիւ ընծաներ, ու առանձին թղթով մ'ալ կ'իմացնէր իր պատրաստակամութիւնը ամէն տեսակ օգնութիւններ ընելու, նաև զիրենք ընդունելու յօժարութիւնը: Փրեդերիկոս շատ հաճեցաւ Հայոց այս աստիճանի հիւրասիրութեանը վրայ և խստացաւ, որ Լեւոնը թագաւորեցընէ երբոր ինքը Եւրոպա դառնայ: Բայց դժբախտաբար Սելեկիոյ պող ջուրերուն մէջ լուացուելով՝ հիւանդացաւ ու մեռաւ, որուն մահուան վրայ շատ ցաւեցաւ Լեւոն իշխանը, Գրիգոր Տղայ կաթողիկոսը, Ներսէս Լամբրոնացին, և ամբողջ ազգը: Յետոյ Փրեդերիկոսի որդին Հենրիկոս Զ. իր հօրը խոստումը կատարեց. Հռոմայ քահանայապետը Կեղեթսինոս փառաւոր թագ մը զրկեց Մոզուլտիոյ Կոնրադոս արքեպիսկոպոսին ձեռքով. Հենրիկոս ալ փառաւոր դրօշ մը վրան առիւծ նկարած: Այս միջոցին հաւանական է որ սկսած ըլլան հայ վաճառականներ երթեկեկել Գերմանիոյ դանաղան քաղաքները. ասոր վրայ թէև հաւաստի տեղեկութիւններ եւ փաստեր կը պակսին, սակայն Պալմիրի ծովեզերեայ քաղաքաց մէջ գտնուած բազմաթիւ արեւելեան դրամները, արեւելեան վաճառականաց նոյն կողմերը գալուն արգասիք

կը համարեն գիտունք: Իսկ ԺԷ. կէսէն վերջ եւ ԺԸ.ի մէջ, շատեր կը յիշեն հայ վաճառականաց քաղաքները, որոնցմէ յիշենք Համպուրկ, Ֆրանքֆորթ, Պրեզլաւ, Տրեզտա, Լայպցիկ, Եւայն: Թավէռնիէի ըսածին համեմատ, Հայք Նուրեմպերկէն կ'առնէին զարդեղէններ եւ ծովեզերեայ քաղաքներէն սաթ, եւ շատ ձեռագործներ Լայպցիկէն:

Անցեալ դարու մէջ (1824), վեց Հայեր Լայպցիկէն գնբր են 6000 ֆրանքի ապրանք եւ դարձեր են Տփղիս եւ Օտեսա. յաջորդ տարին 1,200,000 ֆրանքի եւ երրորդ տարին 2,800,000 ֆր.ի ապրանք. այս թիւերը հանուած են նոյն քաղաքի վաճառահամար ցուցակներէն: Հայ վաճառականութիւնը տարուէ տարի շարունակած է եւ հասած է նաեւ մեր օրերը:

Այժմ (1900ին) ևս Գերմանիոյ մի քանի վաճառաշահ քաղաքաց մէջ կը գտնուին հայ վաճառականներ. սակայն ուրիշ տէրութեանց նման, այս երկրի մէջ Հայք մեծ թիւով կամ գաղթականօրէն եկած հաստատուած չեն: Այժմ (1900-ին) Գերմանիոյ մէջ ունինք բաւական թիւով հայ ուսանողներ:

Վերջին տեղեկագրի համեմատ Պերլինի մէջ կան 26 ուսանող, որոնք կազմած են Հայ Ուսանողական գրական Միութիւն մը: Պրեզլաւի մէջ կան 7 ուսանող, Տրեզտայի մէջ 2, Լայպցիկի մէջ 11, Հալլէի մէջ 3, Միւնխէնի մէջ 11, եւ Ենայի մէջ 1: Այս ուսանողները եկած են գլխաւորաբար Շուլչէն, Բագուէն, Տփղիսէն, Շամախէն եւայլ հայաբնակ քաղաքներէ: (Էփրիկեան «Բնագիտութիւն» 515):

Եթէ չհաշուենք հայ ուսանողութիւնը, որ Եօթնասունական բուականներուն կը յանախէր Լայպցիկի, Եեմայի, եւ Պերլինի համալսարանները, Գերմանիոյ մէջ առեւտուրի համար եկած հաստատուած են Հայեր, 1890ի աւեները: Այսպէս բնիկ Ակնցի Խ. Նազարեան Տրեզտէն հաստատուած է 1894էն ի վեր. մինչեւ հիմա զբաղելով ծխախոտի ներածմամբ եւ առեւտուրով. նաեւ Տիլսիգեան եւ Էվրեկեան անձնաւորութիւնները Համպուրկ հաստատուած են այս բուականներուն:

Այսպէս անհաս առեւտրականներ, մանաւանդ ներածողներ եւ առեւտուորներ, հազիւ քանի մը քանակ հոգի գտնուած են Գերմանիոյ զանազան քաղաքներուն մէջ:

1928էն ի վեր Գերմանիոյ Հայերը ունին իրենց հոգեւոր հովիւր որ Պերլին կը նստի: (Պ. Յուրուսեան «Հայ Մամուլ» 1935 թիւ 9—10, տե՛ս և «Հ. Կոչնակ» 1935, էջ 1052):



ԳԵՐՄԱՆԻԿ Ս. Մարաւ:

ԳԵՐՄԱՆԻԿ, եռամսեայ հրատարակութիւն «Մարաշի Հայրենակցական Միութեան Ամերիկայի Շրջանի»: Տպ. Նիւ Եորք 1930էն ի վեր. Խմբ. Գր. Գալուստեան:

ԳԵՐՄԱՆԻԿԻԱ (Մարաշ) արքեպիսկոպոսական վիճակ, Մարաշ, Ալպատան և Բազարճըզ գազաներով. ունի 35 թաղ, 24 եկղ. 30000 հայ. Հայ կաթողիկէից թիւն էր 4000, բողոքականացը 3500, (Օրմանեան «Հայ եկղ»):

ԳԵՐՄԱՆԻԿՈՒՊՈՒԽ Ս. Էրմեկեկ:

ԳԵՐՄԱՆՈՍ Ա. պատրիարք Յունաց 714—724 որ Ստեփանոս Սիւնեցւոյ ձեռամբ թուղթ գրեց առ Հայս՝ վասն միաբանութեան, բացատրելով Քաղկեդոնի ժողովոյն վարդապետութիւնը:

ԳԵՐՈՆ. փոքր քաղաք, որ կը յիշուի Բիւզանդական պատմութեան մէջ: Կը գտնուէր Յուանայի սահմանաց մէջ:

ԳԵՐՍ Ս. ՔԵՈՍ:

ԳԵՐՔ, ազգ մը, որ Դ. դարուն մէջ Պարսից Շապուհ թգ.ին հետ միացած՝ Հայաստանի վրայ կը յարձակին:

ԳԵՑ Ս. Կիցի:

ԳԵՒՈՆԵԱՆ ԼԵՆՈՆ ԵՒ ՅԱՐՈՒՔԻՆ, Քարհարցիք (Սերաստիա), մարտական և մտաւոր ուժեր, ուսած Կեդրոնակայնի մէջ: Եղած են միշտ Պոլիս ու արտասահման և մասնակցեր են Հ. Յ. Դաշնակցութեան յեղափոխական բոլոր խմբումներուն: Յարութ. 49 տարու կը մեռնի Պոլսոյ մէջ 1927ին:

ԳԵՕԳ. ԲՈՒԼԱՂ, գղ. Աղուանից Խենի (Նուխի) գու.ի մէջ: Բնակիչք զաղթած են Խաչեն և Ջրաբերդ գաւառներէն: 1900ին 1300 բնակիչ ունէր. եկղ. Ս. Աստուածածին հին և անշուք. ուր կայ 1232ին գրուած ձեռագիր Աւետարան մը: Մօտն է Եղիեհ Առաքել մատուռը:

ԿԷՕԳ-ՉԱՅ, գղ. Աղուանից Լահիճ գու.ի, որուն արեւելեան կողմէն կ'անցնի համանուն գետը: 1900ին 300 տուն բնակիչ ունէր, 70ը հայ, կան նաև բողոքականք: Հայերը կը պարապին ցորենի և բամպակի առևտուրով: Գաղթած են Նուխիի և Շամախի վիճակներէն:

ԿԷՕԳ-ՉԱՅ, կը կոչուի այլազգիներէն Գեղամայ վիճակը: Տե՛ս Կեօֆ-չայ:

ԳԵՕԳ. ԲԻԼԻՍԱՅ (Կապոյտ եկեղեցի), գղ. Կոտայք գու.ի մէջ, 1900ին 55 տուն հայ բնակիչ ունէր, և 46 տ. այլազգի: Եկղ. Ս. Յովնանէս: Մօտը ըլրակի մը վրայ կապոյտ քարերով եկղ. մը:

ԳԵՕԳ.Ա.ԿԲՈՒԼԱՂ (Կարճ աղբուր), դիւղ Սիւնեաց Գեղարքունի գու.ի, որուն մօտ է յորդաուստ աղբուր մը, որ 10—15 քայլ առաջ երթա-

լով ծովը կը թափի: 1900ին 700 հայ բնակիչ ունէր. եկղ Ս. Աստուածածին: Մօտերը կան Ս. Սարգիս և Ս. Աստուածածին անուամբ մատուռներ, ուր ուխտի կ'երթան վարդապետի և Աստուածածնի տօներուն:

ԳԵՕՁԱԼ ՏԱՐԱՅ, Ս. Կիւզէլ-ՏԵՐԷ:

ԳԵՕՈԼ, Կեօլ, Լեւանդ կամ Եղեգնագիւղ: Հայարնակ գղ. Սիւնեաց Գեղարքունի գու.ի, որուն բնակիչները Այալկերտէն եկած են 40 տնով. 1900ին 1500 հոգի եղած են: Եկղ. Ս. Աստուածածին, հին և անշուք: Մօտի մատրան մէջ խաչքարեր կան. մին 21Գ (=1284) թուականով. կ'երեւի թէ տեղւոյս հայ բնակիչք ստիպուել են ամայի թողուլ և հեռանալ գիւղէս, և կամ աւերիչ ասպատակաց զո՛հ գացեր են:

Գիւղիս արևմտակողմը կայ հին եկղ. մը եւ մօտը հին վանք մը՝ Ծաղկեվան. այսպէս կոչուած է ծաղիկ հիւանդութեան փարսառիչ լինելուն համար: Գեօլի սահմանաձայրը գիւղ մը կայ Պօղոս իշխանէ մը կառուցուած:

ԳԵՕՂ ՈՒԹԻՅ ԿԱՄ ԳԱՐԻԷԻ ԹՄԱՆԻՆ. աւան Կորճայք նահանգի Կորդուաց գու.ի մէջ: Մէջը կան մզկիթ, դպրոց մը և այլ շէնքեր: Կ'ըսեն թէ Նոյ Նահապետ իր հետ եղողներով հոս իջեր է, և այդ պատճառաւ Գեօղ ուրից կոչուած է:

ԳԵՕՅ-ԲԷԿԼՈՒ, հայարնակ գիւղ Աղուանից Շաքէ (Նուխի) գու.ի, բնակիչք 300, որոնց նախնիք զաղթած են Խաչենէն և Ջրաբերդէն: Եկղ. Ս. Աստուածածին: Մօտն է Ղալա-Քունգիւա գիւղը, որ 300էն աւելի մահմեականացած հայ բնակիչ ունի:

ԳԶԵՂ, կամ Գզելա, Աղձնեաց գաւառներէն մին, որ ունէր Գազիկ քղ.ը Տիգրիս գետին մօտ:

ԳԶԵՂ, գղ. Մօրկան գու.ի, որ 1900ին 15 տուն հայ բն. ունէր:

ԳԶԸԼ-ԱՂԱՃ ՕՏՈՒՍՈՒ, Հայոց գղ. Դաշտային Կիլիկիոյ մէջ: Այս անուամբ լեռ մը կայ Արշարունիք գու.ի մէջ:

ԳԶԸԼ-ԳԱԼԷ, գիւղակ Շիրակ գու.ի մէջ:

ԳԶԸԼ-ԳԱԼԷ, ամայի շէն մը և բերդ ձակատք գու.ի մէջ:

ԳԶԸԼ-ԳԱԼԷ, այլազգաբնակ գղ.եր Հայաստանի այլևայլ կողմերը:

ԳԶԸԼ-ԳԱՅԱ, հայարնակ գղ. Բագրեւանդ գու.ի մէջ, 1882ին 22 տուն հայ բն. ունէր:

ԳԶԸԼ-ԳԱՅԱ, գղ. ձակատք գու.ի մէջ:

ԳԶԸԼ-ԳԱՅԱ, Ծովային Կիլիկիոյ (Պամփիւլիա) վիճակներէն մին:

ԳԶԸԼ-ԳԻԼԻՍԷ (Կարմիր եկեղեցի), գղ. Կարնոյ, գեղեցկադիր գառովայրի վրայ Երկու թաղ ունի,



Վերին եւ ներքին: Բն. 65 տուն, 30 մահմե-  
տական, 35 տ. հայ էին: Եկղ. Ս. Նշան, 1865-  
ին կառուցուած, ունէր նաև վարժարան մը:

ԳՁԸԼ-ԳԻԼԻՍԷ: կամ Ղզըլ-Բիլիսէ, հայարնակ  
գղ. Շիրակի, սրուն բն. Սոչափանքէն եկած են:  
Նշանաւոր է Ս. Գրիգոր եկեղեցին. կարմիր քա-  
րերով, որ 985ին կառուցուած է ըստ արձանագ-



Գզըլ-Բիլիսէի Ս. Գրիգոր եկեղեցին

րութեան Հոռոմոսի կամ Սոչափանաց Սարգիս եւ  
Սողոմոն վանահայրերէն եւ Սամեհանի անուն ա-  
րեղայ ճարտարապետի ձեռքով: Սորանին աջ ու  
ձախ կողմերը կան փոքրիկ աւանդատուններ, ա-  
րեւմտեան աւանդատան դրան վրայ կայ բոլո-  
րաձև մեծ խաչ, նոյնպէս անոր վրայի լուսամտին  
երկու կողմերը կան խաչվէժեր: Հին շինութեան  
արձանագրութեան մօտ կայ նաև համառօտ ար-  
ձանագրութիւն մը նուիրատուութեան՝ Զաքա-  
րիա սպասարարի Եկեղեցւոյ արեւելեան որմի  
վրայ եւ կայ նուիրատուութեան արձանագրու-  
թիւն մը Ուքան Գարիմատին անուն անձի, 1271  
թուականաւ: Գիւղիս բնակիչք 1900ին 837  
հոգի էին: Այս գիւղէն գաղթած են Պուղտա-  
չէնցիք եւ Հաճի-Ղալիցիք: (Էփրիկեան՝ «Բնագ»):

ԳՁԸԼ-ԳԻԼԻՍԷ, հայարնակ գղ. Պոնչալու (Գու-  
գարք) գո.ի մէջ: Բն. 1900ին՝ 650:

ԳՁԸԼ-ԳԻԼԻՍԷ, գղ. Բասեն գո.ի Քէօրոզլու  
բերդի աւերակաց հարաւակողմը:

ԳՁԸԼ-ԳԻԼԻՍԷ, գղ. Ծովային Կիլիկիոյ մէջ:

ԳՁԸԼ-ԳԻԼԻՍԷ, այլաղգարնակ գիւղեր Կարսի,  
Արտահանի, Կաղզուանի վիճակաց մէջ:

ԳՁԸԼ-ԳՈՒԼԷ, ս. Երեւոյ:

ԳՁԸԼ-ԳԱՇ, ս. Գզըլ-Թաւ:

ԳՁԸԼ-ԳԻՁԷ, կը յիշուի Կոչոյլիս գո.ի մէջ:

ԳՁԸԼԵՍԸ, արեւմտեան հիւսիսային ոստ Արա-  
գած լերան:

ԳՁԸԼ-ԶԱՔԻԻԿ կամ Զաքիւրլու, գղ. Ճակատք գո.ի,  
1900ին 77 տուն բն. ունէր, կէսը հայ, կէսը թա-  
թար:

ԳՁԸԼ-ԶԻՅԱՐԷԹ, Այրարատայ լեռներէն մին,  
Արագածի արեւմտակողմը:

ԳՁԸԼ-ԹԱՄԻԻ կամ Ղզըլ-Թամիր, հայարնակ գղ.  
Արագածոտն գո.ի մէջ, Օշականի մօտ: Եկղ. Ս.  
Յովհաննէս. բն. 1300:

ԳՁԸԼ-ԹԱՇ կամ Գզըլ-Դաւ (կարմիր քար), գղ.  
Վասպուրականի Հայոց ձոր գո.ի մէջ, կարմրա-  
գոյն լեռնակի մը ստորոտը. բն. 20 տուն, եկղ.  
Ս. Երրորդութիւն:

ԳՁԸԼ-ԹԱՇ, աւերակ գղ. Սիւնեաց Սողք գո.ի  
մէջ:

ԳՁԸԼ-ԹԷՓԷ (կարմիր սար), բլուր Արշարուն-  
եաց գո.ի մէջ:

ԳՁԸԼ-ԹԷՓԷ, բարձր լեռ Ծղուկ գո.ի մէջ 10370՝  
բարձր:

ԳՁԸԼ-ԹԷՓԷ, լեռ Կիլիկիոյ մէջ, 8500՝ բարձր:

ԳՁԸԼԼԱՍ, լեռնակ 3990՝ բարձր, կը գտնուի Այ-  
րարատայ Արագածոտն գո.ի մէջ:

ԳՁԸԼ-ԽԱՉ կամ Ղօչ, հայարնակ գիւղ Շիրակ  
գո.ի մէջ, ունի հին եկեղեցի մը եւ արձանագրու-  
թիւնք: Այժմու եկղ. Ս. Աստուածածին. բնակիչ  
600էն աւելի:

ԳՁԸԼ-ԿԷՏԻԿ, լեռ Արշարունեաց գո.ի մէջ:

ԳՁԸԼ-ԿԷՕԼ (կարմիր լիճ), լճակ Կոզոլիղ գո.ի  
մէջ:

ԳՁԸԼ-ԿԷՕԼ, մեծագոյն լճակը Արագած լերան:

ԳՁԸԼ-ՂՕՁ s. Գզըլ-Խաչ:

ԳՁԸԼՃԱ, լեռ եւ գիւղ Բասեն գո.ի մէջ:

ԳՁԸԼՃԱ, գղ. Երնջակ գո.ի մէջ:

ԳՁԸԼՃԱ, բերդիկ Ալաչէչք գո.ի մէջ:

ԳՁԸԼՉԱԳՉԱԳ կամ Զախըախ, գղ. Շիրակի  
մէջ: 1900ին 1300 հայ բն. ունէր, ամբողջը հայ,  
գաղթած Բամպակէ, Ալաչկերտէ: 1798ին հոս տե-  
ղի ունեցաւ Վրաց եւ Թուրքերու միջև ձակա-  
տամարտ մը:

ԳՁԸԼՉԸՊՈՒԳ, հայարնակ գղ. Կեղի, եկղ. Ս.  
Յակոբ, 1900ին զպրօցը 20 աշակերտ կը յաճա-  
խէին:

ԳՁԸԼՉԸՊԱԳ, գղ. Վանանդ գո.ի մէջ:

ԳՁԸԼՊԱՇ, լեռ Շիրակ գո.ի մէջ, 2284 մէթր  
բարձր:

ԳՁԸԼՊՈՒԼԱԳ, (կարմիր աղբիւր), գղ. Տոսպ  
գո.ի երբեմն հայարնակ:

ԳՁԸԼՊՈՒԼԱԳ, կամ Զախըրլու, գղ. Սողք գո.ի  
բն. այժմ այլաղգիք: Ունի հին եկղ. մը Ս. Բեթ-



դեհեմ, որուն խորանին տակէն յորդ ազրիւր մը կը բղխէ:

ԳԶԻՐԱ. s. ձեզիրէ:

ԳԶԼԼՊՈՒԼԱԳ. գետակ Սլւնեաց Վայոց-ձոր գո.ի մէջ, կը հոսէ Սպիտակաւոր Ս. Աստուածածնի վանքին արեւելյակողմէն:

ԳԶԼԼՊՈՒԶԱԳ. հանգրուան Այրարատայ ձա-կատք գո.ի մէջ:

ԳԶԼԼ-ՊՈՒՌՈՒՆ (Կարմիր քիթ). Արագած լե-րան արեւմտեան սարերէն մին:

ԳԶԼԼ-ՊՕՂԱԶ, լեռ Ծղուկ գո.ի. 10370' բարձր: ԳԶԼԼ-ՎԱՆՔ, գղ. Սոդք գո.ի, բնակիչք՝ այ-լազդիք:

ԳԶԼԼ-ՎԵՐԱՆ լեռ Ուրծ և Արած գո.ի մէջ: Ուրբշ մը՝ Գարիդենից մէջ:

ԳԶԼԼ-ՏԱՂ, լեռ Մազազ գո.ի մէջ:

ԳԶԼԼ-ՏԱՂ, լեռ Շիրակի 5550' բարձր Այս ան-ուան լեռ մը Սլւնեաց և ուրբշ մը ամարանոց՝ Ատանայի մէջ:

ԳԶԼԼ-ՔԷՕՅ, գղ. Էդիննէի (Տարտանէյ) մօտ. 1900ին 15 տուն հայ կը բնակէր: Տե՛ս նաև ԳԼԶԼԼ:

ԳԷԹԻ ԳԱՇՏ, Սլւնեաց Վայոց ձոր գո.ի մէջ:

ԳԷԼԱԶՕՐ կամ Կեօյխուր տե՛ս ԳԵԼԻՊՈՐ:

ԳԷԼՀՕՆՔ, Կեալիօֆ, Գլինուկ Կալիօկ, հայարնակ գղ. Աղձնեաց (Բաղէշի), 1900ին 184 բն. ունէր. եկղ. Ս. Պետրոս:

ԳԷՂԸՄ, գղ. Մօտկան գաւառակի:

ԳԷԶԸՐՎԱՆ, գղ. Ուորի գաւառակի, բն. 60 տ. եկղ. Ս. Ստեփանոս:

ԳԷՆ, որսատեղի Արշարունեաց գո.ի մէջ՝ ըստ Անանիա Շիրակացուց:

ԳԷՈԳԱԿԼՈՒ s. Մարտիկեան:

ԳԷՈՅՔԻԼԻՍԱ. s. Կապուսան:

ԳԷՈՐԳ. Ա. կթղ. «Հոյրորուկ» կամ «Ուուրոր-բուկ» անուանեալ, ծնած Արագածոտն գո.ի մէջ, ըստ Ստեփանոս Ասողկայ՝ Աշտարակեցի, իսկ ըստ այլոց Օշականցի կամ Բիւրականցի, 792ին Սողոմոն կթղ.ին կը յաջորդէ և երեք տարի ետք 795ին կը վախճանի, որուն կը յաջորդէ Յովսէփ Բ.:

ԳԷՈՐԳ. Բ. կթղ. Գառնեցի, 876ին կաթողիկոսական աթոռին վրայ կը բարձրանայ, յաջորդե-լով Զաքարիայի, ժամանակակից պատմիչք (Յովն. կթղ. Սեւփ. Ասողիկ) գովեստով կը յիշեն զինքը Գէորգ Ասորուց Յովհաննէս պատրիար-քին թուղթ մը գրած է, զիտողութիւնը ընելով պատարագի մէջ խմորեալ հացով պատարա-գելնուն համար: 885ին Գէորգ Աշոտ Ա.ը թա-գաւոր օծեց, ու 4 տարի ետք Աշոտ երբ հիւան-դացաւ Շիրակ գո.ի մօտերը՝ զգալով որ պիտի մեռնի՝ իրեն կանչեց Գէորգ կթղ. և խոստովա-նելով՝ իրմէ ընդունեց յետին թոշակը: Գէորգ Բ.ի վիճակեցաւ 890ին Կարսի թգ. Արասը խաղա-

ղեցնելու և հաշակեցնելու Աշոտի որդի Սմբատ թգ.ի հետ Յաջորդ տարին սակայն երբ Սմբատ իր հօրեղբոր Արասի վրայ պատերազմի գնաց և յաղթող հանդիսացաւ, վերջինս այս եղած յար-ձակումը Գէորգ կթղ.ի գրղմամբ եղած համարե-լով՝ զրպարտութիւններով ամբաստանեց կթղ.ը և փորձեց զինքը գահընկեց ընել և Մաշտոց Ե-զիվարդեցին կաթողիկոս նստեցնել: Սրբակեաց Մաշտոց վրդ. նամակով մը յանդիմանեց Արասը, որ տեսնելով պիտի չյաջողի իր նպատակին հաս-նելի՝ Գէորգայ ոտքն իյնալով թողութիւն խնդ-րեց և հաշտուեցաւ: 892ին Գէորգ կաթողիկոս Երազգաւորի Ս. Փրկիչ եկեղեցիին մէջ թագաւոր օծեց զինքը: 895ին երբ Ափշին ոստիկանը Հա-յոյ վրայ յարձակեցաւ՝ Գէորգ անոր երթալով խնդրեց որ Հայաստանը արեամբ չողողէ: Ափ-շին առերես պատուեց կթղ.ը և խնդրեց որ Սըմ-բատ թագաւորն այ իրեն ներկայացնէ: Սմբատ յանձն չառաւ երթալ, ասոր վրայ Ափշին Գէորգ Բ. կթղ.ը երկաթեայ շղթայի զարկաւ և երկու ա-միս իր քով պահեց և միայն դրամական տուր-քի փոխարէն զինքը ազատ արձակեց: 897ին Գէորգ. տեսնելով աշխարհին բազմադիմի ա-ղէտները Վասպուրականի կողմերը գնաց և հոն նստելով, ատեն մը՝ հիւանդանալով վախճանեցաւ ու թաղուեցաւ Տոսպ գո.ի Զորավանքին մէջ 21 տարի կաթողիկոսութիւն ընելով: Իրեն յաջոր-դեց Մաշտոց Եզիվարդեցին:

ԳԷՈՐԳ. Գ. կաթողիկոս, նախապէս Գրիգոր Բ. վկայասէրին ատենադպիր եղած, յետոյ աթոռա-կից: 1071ին միացած հայ իշխաններու հետ Գրի-գոր Վկայասէր կթղ.ը գահընկէց ուղեց ընել, ո-րովհետև Հռոմայ հետ սերտ յարաբերութեան մէջ էր: Երբ խմացաւ Գրիգոր կթղ. Գէորգի ծրագրերը՝ զինքը այդ տարին կաթողիկոս ձեռնադրեց և ինքը առանձնացաւ Սեւա լեռան վանքին մէջ: Գէորգ պսով չգոհացաւ աշխատեցաւ Գրիգորը կաթո-ղիկոսութենէն ձգել, սակայն իշխանք և եկեղե-ցականք ո՛չ միայն չհաւանեցան՝ այլ Սեւա լե-ռան մէջ Գրիգորի նախագահութեամբ ժողով գումարելով Գէորգը գահընկէց ըրին, որ երկու տարի կաթողիկոսութիւն ընելէ ետք (1071—73) թաւրուրէն մեկնելով Տարսոն գնաց և հոն վախ-ճանեցաւ:

ԳԷՈՐԳ. Գ. կթղ. Քերեսէնեան, ծնած Կ. Պոլիս 1813ին, 1866 Սեպտ. 17ին կաթողիկոս ընտրուե-ցաւ, օծուեցաւ 1867 Մայիս 21ին, Գէորգեան ձեմարանը հիմնեց 1874ին, իր օրով և հովանա-ւորութեամբ սկսաւ հրատարակուիլ Արարտ ամ-սագիրը 1868ին Ս. Էջմիածնայ տպարանէն: 15



տարի կաթողիկոսութիւնը վարելէ ետք 1882 Դեկտ. 2ին ի Տէր հանգեաւ: (Հիւանդանոցի «Բն-դարձակ Օրացոյց» 1901):

Այսուամբ կաթողիկոսը որուն ընդարձակ գոր-



Գեորգ Գ. Կաթողիկոս

ծուէնէութիւնը գրած է Վահրամ Եպ. Մանկունի Գեորգ Գ. եւ իր ժամանակը անուենով՝ որուն Ա. մասը, մինչև կաթողիկոսութիւնը յոյս տեսաւ Վրացեանի վեմի մէջ իրր յաւելուած: (Տե՛ս ՅԱԻՆԼՈՒԱԾ-ին մէջ Գեորգ Գ ի մանրամասն կենսագրականը):

Գէորգ Ե. կթգ. ծնած է Թիֆլիսի մէջ 1846, Օգոստոս 28ին, 1868ին Գեորգ Գ. կթգ. ի օրով էջմիածին կ'երթայ և նոյն տարին սարկաւազ, 1871-ին արեղայ և 1872ին վարդապետ կը ձեռնադրուի, 1874ին Գեորգեան ձեռնարանին մէջ ուսուցչու-թիւն կ'ընէ: 1875ին զինքը իրրև առժամեայ առաջնորդ կը գտնենք Ղարաբաղի և միանգամայն տեսուչ տեղւոյն 7 գրոցին: Եռուշիի և Կանքարանի մէջ աղջկանց վարժարաններ կը բանայ, 1877ին Վերին Ագուլիսի Ս. Թոմա վանքին վանահայրութիւն և երկուսն վարժարաններուն տնօրէնու-թիւն կ'ընէ և 1878ին Այեքսանդրաբոյի առաջ-նորդ ընտրուելով հոն գալոց և Ս. Աստուածա-ծին եկեղեցին կը կառուցանէ: 1881ին իրրև փոխ-թեմակալ Երեան կ'անցնի և յաջորդ տարին Մակար Ա. կաթողիկոսէն եպիսկոպոս կը ձեռ-նադրուի: 1886էն Աստուսանի եպիսկոպոս ու 1894էն մինչև 1904 Թիֆլիսի առաջնորդութիւն կ'ընէ, Խրիմեան Հայրիկի մահէն ետք (1907) տեղակալ կաթողիկոս կը նշանակուի, նոյնպէս Իգ-միրլեան կ'ի մահէն ետք (1912) և 1912 Դեկտ. 13ին Ասանայն Հայոց կաթողիկոս կ'ընտրուի

և կը վախճանի 1930 Մայիս 8ին: (Թեոդիկ՝ «Ա՛ մեկուն Տար.»-ը 1914):

Իր օրով տեղի ունեցաւ Հայ աղգին ամենէն մեծ հարուածը 1915ի տեղահանութիւնը և 1918ի Հայաստանի անկախութիւնը, որ չկարենալով մոռնալ իր աղգին տառապանքը՝ մինչև մահը կը ստորագրէր վ. Եսակիր:

Գէորգ Ե. ուղղամիտ, լուրջ ու ազնիւ նկարագրով օժտուած, իր աղգն ու եկեղեցին խորապէս սիրող ու անոնց նուիրուած հարադատ հայ մըն էր: Իր հայրապետութեանը չըջանը. — ուր ամենամեծ յոյսեր և ամենամեծ աղէտներ իրա-րու յաջորդեցին — ամենէն մարկալիցներէն եղաւ զոր ճանչցած ըլլայ մեր պատմութիւնը:

Պայքանեան պատերազմներու միջոցին, ան վճարար ձեռք առաւ թրքահայ դատը, Հայոց աղգային հարցը կազմեց Աղգ. Պատուիրակու-թիւնը, անոր նախագահ տնուանեց Պօղոս Նուպար փաշան, անոր պաշտօն յանձնելով թրքահայոց դէմ վերսկսած հայաժանքներու մասին Պեր-լինի դաշնագիրն ստորագրող պետութեանց եւ ամերիկեան կառավարութեան մօտ դիմումներ ընելու եւ խոստացուած բարենորոգմանց գործադրութիւնը պահանջելու գործը: Այդ օրերուն, հայկական դատի ղեկավարման մէջ գործօն գեր ունեցող բոյր կազմակերպութիւններն ըմբռնեցին որ այդ դատը սեղ գրական ու տեւական լուծում չէր կրնար գտնել առանց Հայաստանի սահմանակից հսկայ Ռուսիոյ բարեհաճ մասնակցու-թեան և յաջողեցան ուս զիւանագիտութեան տրամադրութիւնները բարեոքել թրքահայ հարցի հանդէպ, որով և ան գլխաւոր պաշտպանն եղաւ այդ դատին և իր աջակցութիւնը տուաւ Աղգ. Պատուիրակութեան թափած ջանքերուն: Այդ ջանքերը որ կը ձգտէին թրքահայաստանի վեց նահանգներուն միացումով վարչական ինքնավարութեամբ օժտուած ու եւրոպական քօն-թրօլի տակ դրուած յատուկ չըջանի մը կազմու-թեան, չհասան այդ արդիւնքին՝ Գերմանիոյ եւ թուրք կառավարութեան բուն ընդդիմութեան պատճառով, բայց յանգեցան (Պօղոս Նուպարի գերման կառավարութեան մօտ ըրած մասնա-ւոր դիմումներուն շնորհիւ) շատ վերածուած բայց նորէն որոշ նշանակութիւն ունեցող արդիւնքի մը, այն է Վան—Պիթիս—Էրզրում—Տրապիզոն և Սվազ—Պարբերդ—Տիարպէֆր երկու նահանգախումբերու համար ինչ ինչ բարե-նորոգմանց պայմանագրման և անոնց գործադ-րութեանը հսկել կոչուած երկու Եւրոպացի քըն-նիչներու անուանուան: Ասոնք, տրուած ըլլալով



ուս զիւանագիտութեան զէպի հայ ժողովուրդը  
 և մասնաւորապէս զէպի Թուրքիոյ Հայութիւնը  
 բարեհաճ վերարեմունքի — անշուշտ չահաղէա  
 րայց մեզ համար օգտաբեր — ուղեղիծն ընդգրը-



Գեորգ Ե. Կարողիկոս

կած ըլլալը, և գերման զիւանագիտութեան  
 որոշապէս հակահայ ուղղութեան մեղմացումը,  
 պիտի կարենային գէթ խաղաղ զարգացման  
 շրջան մը բանալ Թրքահայութեան, եթէ հա  
 մաշխարհային պատերազմը եկած չլլար տակ-  
 նու վրայ ընել կացութիւնը և մեծագոյն աղէտ-  
 ներուն առջև դնել մեր ժողովուրդը Պատերազ-  
 մի առաջին ամիսներուն իսկ. Գեորգ Ե. վերա  
 կաղմեց Աղզ. Պատուիրակութիւնը, պնոր նա-  
 խագահութիւնը դարձեալ յանձնելով Պողոս  
 Նուպար փաշային և այս անգամ պաշտօն տալով  
 թրքահայ դատին աւելի արմատական լուծում մը  
 ստանալու համար ջանքեր ընելու ինչ որ անկից  
 յետոյ պատահեցաւ. — անհունութիւն մը զգա-  
 յացունց զէպքերու — մինչև Հայրապետին մահը,  
 ամենուն մօքին մէջ է, և կարելի չէ, պէտք ալ  
 չկայ զանոնք հոս յիշեցնելու Այդ արտակարգ տրա-  
 մին բոլոր տեսարաններուն մէջ, Գեորգ Ե. իր  
 բարձր պաշտօնը վեհութեամբ, արժանապատու-  
 թեամբ ու խղճմտութեամբ կատարող, իր աղ-  
 զին և անոր դատին հանդէպ սրտագին հոգա-  
 ծութեամբ լի Հայրապետ մը հանդիսացաւ Ու-  
 մանք կը մեղադրեն իրեն հայ կամաւորներու

գունդերը ճակատ երթալէ առաջ էջմիածնայ վե-  
 հավայրին մէջ պաշտօնապէս օրհնած ըլլալը, հա-  
 մարելով զայդ Թուրքերը զրգուող անքաղաքի-  
 տական արարք մը Գեորգ Ե. որ Պալքանեան  
 պատերազմի շրջանին արդէն վճռապէս ուսու-  
 սիրական ուղղութիւն ընդգրկած էր, այդպիսի  
 շրջանի մը ուր հայ ժողովուրդի և հայ դատի ճա-  
 կատագիրը Ռուսիոյ և իր դաշնակիցներու յաղ-  
 թանակէն կախուած էր, ուրիշ կերպ չէր կրնար  
 վարուիլ Այն այդ ժեսթով ցոյց կու տար Ռու-  
 սիոյ հովանւոյն տակ գտնուող Մայր Աթոռին  
 սրտակցութիւնը ուսուցի ապկ գտնուող Կով-  
 կասեան հայ կամաւորներուն և առավել յը յայտ-  
 նէր անգամ մը ևս թէ Ռուսիոյ զէքերու յա-  
 ջողութենէն կը սպառէր Թրքահայաստանի ա-  
 զաթումիւ Հայրապետը իր օրհնութեամբ կը նուէ-  
 րագործէր արդէն ինչ որ Ռուսիոյ և արաւստան-  
 ժանի գրեթէ բոլոր Հայերը կ'ընէին այդ պա-  
 հուն: Ատիկա քնական պէտք է թուէր Թուրքե-  
 բուն, որ իրաւունք պիտի ունենային զրգուելու  
 միմիայն եթէ Պոլսոյ Հայոց պատրիարքը այդ-  
 պիսի ժեսթեր ընելու ելլէր Գեորգ Ե. իմաստուն  
 վարքագիծ մը որդեգրեց համայնավար բժիմի  
 Հայաստան մտնելէն ի վեր և զայն անշեղ պա-  
 հեց մինչև վերջը թէպէտ այդ բժիմը հակակրօ-  
 նական ոգի ունէր և Հայոց հայրապետական ա-  
 թոռին առանձնաշնորհօ մներն ու գործուէնութ-  
 եան միջոցներ կը սեղմէր. ան գնահատեց՝  
 բարձր ու հեռատես ազգասիր. Թեամբ մը ինչ  
 որ այդ բժիմը կը թէ էր զրական՝ Հայաստանի  
 ժողովուրդին և ամբողջ Կովկասի Հայութեան  
 խաղաղութիւնը, ազգային լեզուի ու մշակոյթի  
 տիրապետութիւնը շինարարական քիմիաւոր գոր-  
 ծը, ազգային ճարտարաբանութեան ստեղծումը, և  
 իր սրտաուսուց կոնդակներով հրաւիրեց ամբողջ  
 աշխարհի Հայութիւնը օգնել կառ վար. թեան  
 այդ հայրենաւէն գործերուն մէջ. («Զօպանեան»  
 «Անահիտ» 1930 թ. 1 էջ 105):

Գեորգ Պատրիարք Կ. Պոլսոյ (1751—2) Ղափանի-  
 ցի, որ էջմիածնէն նուիրակ դացած էր գաւառ-  
 ները (1746ին Կ. Պոլիս տալուած Ոսկեփորիկին  
 մէջ Գեորգ Ղափանցի կը յիշուի իրր Գաղատիոյ  
 նուիրակ), 1751 յունիս 15ին յաջորդեց Մինաս  
 Ակնեցիին 1851ին Երուսաղէմ ուխտի կ'երթայ  
 Ակնցի Եաղուպ Ամիրա Յովհաննէսեան, պղղե-  
 ցիկ անձ մը, ուր նախկին պատրիարք Յակոբ  
 Նալբան կը յայտնէ թէ կը փափագի կրկին Կ.  
 Պոլսոյ պատրիարքական աթոռին վրայ նստիլ:  
 Եաղուպ Ամիրա երբ այդ նպատակով իր հետ  
 Պոլիս կը տանի Նալբանը՝ Գեորգ Ղափանցի կը



հրաժարի պատրիարքութենէն և իրր առաջնորդ Պրուսա կ'երթայ, ուր կը մեռնի 1856ին:

ԳԷՈՐԳ, եպ. Ամասիոյ, կը յիշուի 1317ի Սիսի ժողովին մէջ:

ԳԷՈՐԳ, եպ. Մանաղկերտոյ և միւս Գեորգ՝ եպ. Նփրկերտոյ 1179ին կը ստորագրեն ուրիշ ներու հետ Հայոց առ Յոյնս դրած կրօնական նամակին ներքեւ:

ԳԷՈՐԳ (Սուրբ), հին, գղ. Սիւնեաց Աղահէճք գաւի:

ԳԷՈՐԳ (Ս.) վանք Շապին Գարահիսարէն 4 ժամ հեռի. Թամղարայ գղ.ին կից. 1870ի ատենները այրեցաւ և Սերաստիոյ Պետրոս եպ. Թահմիզեանի նախաձեռնութեամբ ըստ կարելւոյն նորոգուեցաւ. Ս. Գէորգայ տօնին ուխտի կ'երթան շղջակայ զիւղերու բնակիչները:

ԳԷՈՐԳ (Ս.) վանք, կեսարիայէն երկու քուկէս ժամ հեռի էրքիլէթ անուն գղ.ի լեռնարլուրին վրայ: Այժմ ամայի է և Յունաց ձեռքն անցած:

ԳԷՈՐԳ (Ս.) ուխտատեղի Բաղրեւանդ գաւ.ի մէջ, Գաւոյ գղ.ի մօտ: Ըստ ժողովրդական աւանդութեան այս Ս. Գէորգը Սուքիասեանց ընկերներէն մին էր և հոս թաղուած:

ԳԷՈՐԳ (Ս.), վանք Բալուայ, որուն տեսուչն էր 1437ին Մինաս վրդ. (Յիւսակարանց):

ԳԷՈՐԳ (Ս.), վանք Տեւէկէշու (Գեւոցա) որուն եպ. Մկրտիչ 1636ին («Հայկարան»ը Հ. Ալիշանի ձեռագիր էջ 702):

ԳԷՈՐԳ Ս. ԶՕՐԱՎԱՐԻ ՎԱՆՔ, s. Ալոց վանք:

ԳԷՈՐԳ (Ս.) վանք, s. Սուլու մանասիր:

ԳԷՈՐԳ Ս. ՎԱՆՔ, s. Ռամլի:

ԳԷՈՐԳ (Ս.), վանք Գարատաղ Նորաշէն գղ.ի մօտ:

ԳԷՈՐԳ (Ս.), վանք Աղուանից Շաքէ գաւ.ի մէջ: Արտաքուստ քարերը ամբողջապէս տաշուած, ներքուստ՝ ոչ. արձանագրութիւն չունի: Ոչ միայն Հայք, այլ մահմեդականք ալ ուխտի կու գան: Միաբաններու սենեակներու հետքերը միայն կ'երևին:

ԳԷՈՐԳ (Ս.), լատին Բենեաթիկեանց վանք Սեւա լերան վրայ:

ԳԷՈՐԳ (Ս.) վանք Հայոց կիլիկիոյ մէջ: Ժ. Դարուն (1366ին) վանքիս առաջնորդը Ներսէս՝ Յակոբ վանականին հետ արեւմուտք կ'երթայ ապաստակներէն աւերուած վանքիս նորոգման նըպատ հաւաքելու և խնամն երթալով Անգլիոյ եղուարդ Գ. Թգ.էն դրամ հաւաքելու արտօնագիր կ'ընդունի: (Ալիւան՝ «Սիսուան» էջ 410):

ԳԷՈՐԳ (Ս.), վանք Երնջակ գաւ.ի մէջ, Երնջակ գղ.ի հիւսիսակողմը: Հաւանական է որ վանքիս

քով ի հնուամ Ս. Գէորգ անուամբ գիւղ մը եղած ըլլայ, որ, ինչպէս կը յիշուի Միաբանողաց վիճակագրին մէջ՝ 170 տուն բնակիչ ունէր: Վանքէս 20 քայլ հեռու ձգնաւոր կոչուած ուխտատեղի մը կայ:

ԳԷՈՐԳ (Ս.) ԵՐԿԱՅՆԻ ՎԱՆՔ Եկեղեցաց գաւ.ի մէջ, Երդնկայէն երկու քուկէս ժամ հեռու, Տուրի լերանց ստորոտը. Երկայն և կենցիք զիւղերու մօտ: Մթին, անշուք նկուղաձև: Երկու տաճար ունի, Ս. Գէորգ և Տիրամայր անուամբ երկուքն ալ լքուած և աղքատ: Վանքիս մէկ մասը նորոգուած է 1890ի ատենները: Յայսմաւուրքի յիշատակարանի մը համաձայն, վանքս անցելոյն մէջ նշանաւոր եղած է իր միաբաններով:

ԳԷՈՐԳ (Ս.) ԽՆԶՈՐՈՒՏԻ ՎԱՆՔ Մոկաց Վերին կարկառ գաւառակին մէջ, Խնձորուտ գղ.ի մօտ, 1895ի աւերմանց ենթակայ եղած:

ԳԷՈՐԳ Ս ՇԻՐՆԻՅ ԿԱՄ՝ Սկաւառակի վանք Մոկաց աշխարհի Սպարկերտ գաւ.ի մէջ, Շիրնից գղ.ի մօտ: Խիզան, կարկառ, Նար, Շէրվան, Պէրվան, Մարմառք, Մոկս և Սպարկերտ գաւառներէն բաղմաթիւ ազգայիններ ուխտի կ'երթան: Վանքս Բուժկու Ս. Գէորգ վանքին պէս ողբալի կացութեան մէջ է: Տաճարը որ պատկառելի հնութիւն ունի և հայկական հին ճարտարապետութեան հրաշակերտ մը կը թուի ըլլալ, չըջապատուած և խճողուած է մութ, խոնաւ, անկանոն խցիկներով և դոմբրով: 1895ի զէպքերուն վանքս կողոպտուեցաւ:

ԳԷՈՐԳ (Ս.), վանք Բալախու գղ.ի մօտ. այժմ անծանօթ:

ԳԶՈՐԳ (Ս.) վանք Տուրուբերանի Գոմս գղ.ի մօտ, կը կոչուի նաև Գոմաց վանք կամ Զոզգուլս Ս. Գեորգայ վանք:

ԳԷՈՐԳ (Ս.), Բուժկու s. Բուքկու Ս. Գեորգ վանք:

ԳԷՈՐԳ (Ս.), վանք Մողնիի մէջ (Տե՛ս Մողնի)

ԳԷՈՐԳ (Ս.), Ականց վանք, Վասպուրականի մէջ, 1650ին նորոգուելով եկեղեցի կը վերածուի: Տե՛ս նաև ՅԱԻԵԼՈՒԱՆՐ:

ԳԷՈՐԳ, եպ. Ոստանի՝ 768ին Սիոն կթ.ի հետ Պարտաւի ժողովին ներկայ կ'ըլլայ:

ԳԷՈՐԳ, եպ. Սիւնեաց, կը յիշուի Ժ. Գարու մէջ (Ալիւանի «Հայապատմ.»):

ԳԷՈՐԳ եպ. Զմեկաձակցի, կը յիշուի 1443ին իբրև առաջնորդ Խուշէի Ս. Գէորգ վանքին, սա «ղաղզաղեայ (ղողղոհայ) ձեռք 1248ին գրուած աւետարանի մը մէջ կը յիշատակագրէ թէ՛ վանքին միաբանները կէսկ-թիմուրի արշաւանքէն



սարսափած՝ այլեւայլ վանքեր ցրուած են (Մրուանեանց՝ «Քորոս Աղբար» Բ. էջ 349)։

ԳԷՈՐԳ Արքեպ. Բերիացի, առաջնորդ Ատանայի, կը յիշուի 1756ի յիշատակարանի մը մէջ։

ԳԷՈՐԳ ԿԱ. Աղրիանապոլսեցի, միաբան Երուսաղէմի Ս. Յակոբ վանքին, նուիրակ Ռուսէլիի կողմնակալն, կը վախճանի 1801ին և կը թաղուի Երուսաղէմայ Ս. Փրկիչ վանքին մէջ։ (Աղաւնուցի՝ «Միաբան»)։

ԳԷՈՐԳ ԿԱ. առաջնորդ Նոր Զուղայի, միաբան Ամենափրկիչ վանքին 1754ին առաջնորդ կը կարգուի Սա շրջակայ բռնաւորներու նեղութեանց և հարստահարութեանց չղիմանալով վանքին թանկագին անօթները իր հետ առած Պասրա քաղաքը կը փոխադրուի, ուր կը մնայ մինչև 1763, ուր կը վախճանի 1768 Հոկտ. 28ին։ (Յարութիւնեան Յովն.՝ «Պատմ. Նոր Զուղայի» Բ. էջ 61։ Չեռագրաց յիշատակագիրք կը յիշեն զինքը 1761-2ին)։

ԳԷՈՐԳ ԿԱ. Հայկեացի, միաբան Երուսաղէմայ Ս. Յակոբայ վանքին, 1769ին Առաջնորդ Բերիոյ (Հայէպ), 1772ին կ'ընդօրինակէ Բերիոյ մէջ Մսեղացոյց «այն է իւսրիւլպա»։ Երուսաղէմ դառնալով փոխանորդ կը կարգուի, կը վախճանի 1792ին և կը թաղուի Ս. Փրկիչ վանքին մէջ։

ԳԷՈՐԳ Ակեացի, իշխան, 853ին կը նահատակուի Բաղայէն՝ Սոսորով Գարեղեանի հետ։

ԳԷՈՐԳ «պատանի», գրիչ «Տօնապատճառ» 1410ին։

ԳԷՈՐԳ Աշիկայ. Տ. Աշիկայ Գեորգ։

ԳԷՈՐԳ, իշխան Բարձրբերդոյ, 1199ին Լեւոնի թագադրութեան հանդիսակից։

ԳԷՈՐԳ Հաւնուցի, 922ին Վասպուրականի Գազիկ թգ.ին կողմէ Ըսրուզ օստիկանին կ'երթայ հաշտութիւն խօսելու համար։

ԳԷՈՐԳ Մարգպետունի, քաջայաղթ Աշոտ Երկաթի օրով, 923ին կը հալածէ Բշր օստիկանին բանակը. 943ին՝ Արաս թգ.ի օրով կը կոտորէ Ափխազայ Բէր թգ.ին բանակը։

ԳԷՈՐԳ Սեւորդեաց, քաջ իշխան, 899ին Ափշին օստիկանէն կը նահատակուի։

ԳԷՈՐԳ վրդ. Երզնկայի, 1394ին, երբ Լէնկ-թիմուր Երզնկայ մտաւ՝ բռնաւորին առջև ելաւ՝ խնդրելու որ եկեղեցիներուն խնայէ։

Գէորգ վարդապետ Երզնկացի եղած է ուսուցիչը Յակոբ Արիմեցւոյ։ Գրիգոր Աստուածաբանի Առ ուս գրքին մեկնութիւնը գրած է և կը իրմէ մնացած են շատ մը քարոզներ և Մառցոյր անսխալ կերպով գործածելու համար գրուածք մը։

ԳԷՈՐԳ վրդ Հաղբաղայ առաջնորդ, թղթակից և մտերիմ ներսէս Շնորհալոյ. Գէորգ վրդ.ի խնդրանք՝ ն. Շնորհալի թարգմանել տուաւ Ս. Սարգսի վարքը 1166ին։

ԳԷՈՐԳ վրդ Մեղրիկ, սուրբ և զիտուն, ծնած է Վասպուրական գ.ա.ի Անալիւր գգ.ին մէջ 1043 թուականին։ Պատմիչները զինքը Մեղրիկ կը կոչեն՝ իր «քաղցրուսոյց վարդապետութեան» համար։ Գրեթէ 15 տարեկան հասակին Սեւանայ վանքին մէջ կրօնաւորեցաւ։ Ամբողջ յիտուն տարի փակուած մնաց այս կղզիին մէջ և այդ պատճառաւ Սեւանցի ալ կոչուեցաւ։ Գէորգ բարձրագոյն հրամանէ ստիպուած՝ այցելեց Կիլիկիոյ վանքերը, անոնց կանոններ հաստատեց, մանաւանդ ինչպէս որոշակի կը յիշուին՝ Գրագարկի և Սոյ անապատին ներքին կեանքը բարձրովին կերպարանափոխեց։ 1113ին կը վախճանի և Դրազարկ վանքին մէջ կը թաղուի։ (Մատթէոս Ուռհայեցի, Սամուէլ Անեցի, Վարդան և Կիրակոս պատմիչք)։

ԳԷՈՐԳ վրդ. Ուռնեցի, զիտնական և աստուածարան, կը վախճանի 1093ին և կը թաղուի Կամբըջաձորոյ վանքին մէջ։ (Վարդան պատմագիր)։

ԳԷՈՐԳ վրդ. Մխլայիս, հեղինակ կրօնական գրքերու (ընդդէմ երկարնակոյց). հրատարակուած ի Կ. Պոլիս 1734—1750 թուականներուն։

ԳԷՈՐԳ որդ. Սկեւոյցի. իր ուսուցչին Գրիգոր Սկեւոյցոյ շափ նշանաւոր եղած է, միաբան նոյն վանքին Գեռ 1267ին պատանի ըլլալով հոշակ հանած էր գրչութեան արուեստին մէջ։ Իր մէկ յիշատակարանին համաձայն՝ աշակերտած կ'երևի Վարդան Արևելցի վրդ.ին՝ Սոր Վիրապի վանքին մէջ։ Գէորգի կարեւոր աշխատութիւններէն մին է Արխատակէս անուն հետոր վարդապետի մը, որ նախորդ (Ժ.Բ.) դարուն կ'ապրէր, գրչութեան արուեստին վերաբերմամբ յօրինած գործին ընդարձակումն ու լրացումը Գոյներ Երիցանց Ստեփանոսի խնդրանքով Թէեւ իր կրթութիւնը վերին Հայաստանի մէջ առած էր Գէորգ, բայց յետոյ դարձած է Կիլիկիա (հաւանաբար իր հայրենիքը) ու մնացեալ կեանքը անցուցած կ'երևի Սկեւոյցի միաբանութեան մէջ։ Իր գրաւոր երկասիրութիւններէն հասած են Եսայի մարգարէին և Գործք Առաքելոցի մեկնութիւնները, երկուքն ալ քաղուածաբար յօրինուած ին հայերու գործերունու նախնեաց թարգմանութեան համեմատ։ Իրեն կ'ընծայուի նաև մեր Շարակնոցին վրայ եղանակի և բառերու սրբազրութիւն մը, որը թերևս միաժամանակ ձևի բերուած կրնայ ըլլալ խուլ կամ խիլ մականունը



կրող Սսեցի Գրիգոր վարժապետին օժանդակութեամբը: Գէորգի մահը պատահած է դարուն վերջին տարին 1300ին ('Գուրեան' «Պատմ. Հայ Մասեցեացի» էջ 236):


Գէորգ, որդի Մուրատայ, անուանի և հարուստ հայ որ 1539ին Անգոնացի կը գրուի եւ Ս. Օգոստինոսի եկեղեցւոյն մէջ Քրիստոսի մկրտութեան պատկեր մը նկարել կու տայ, 1560ին մայր եկեղեցւոյ աւագ խորանը կը շինէ:

Գէորգ Պատուելի Պալարեցի, s. Sեր Յովնանն Կեսեան Գեորգ պատուելի:

Գէորգ վրդ. Սսեցի, ապրած է Ժ. Դարու սկիզբը. Արիստակէս քերթողի գործերը կ'ընդօրինակէ՝ յապաւելով և աւելցնելով:

Գէորգ Ս. Զօրավար, Հայ եկեղեցւոյ տօնած գլխաւոր սուրբերէն. ծննդեամբ Կապադովկիացի, ապրած Դիոկղեսիանոս կայսեր օրով (Գ. դարուն վերջերը): Տեսնելով քրիստոնէից իրենց հաւատքին համար մարտիրոսանալը՝ ինքն ալ քրիստոնեայ եղաւ և նահատակուեցաւ 303ին: Հայ եկեղեցին Ս. Գէորգը կը տօնէ Սեպտեմբերին մէջ:

Գէորգեան ձեմարան, հիմնուած Ս. Էջմիած-



Գեորգեան ձեմարան

նայ վանքին քով Գէորգ Գ. Կաթողիկոսէն 1874 թուականին: Ձեմարանս տուած է շատ մը նշանաւոր աշակերտներ: Տես՝ ՅԱԻԵԼՈՒԱԾՐ:

Գէորգեան Բարդուղիմէոս եպ. ձուղարեանց, միաբան Ս. Էջմիածնի, ուսումնասիրող Մովսէս Արեւնացւոյ (հրար. 1899—1902):

Գէորգեան Գառնիկ, խմբագիր «Կռունկ»ի 1919ին Ֆիլատելիա, յետոյ 1924—1929 Նիւ Եորք, ապա կրկին Ֆիլատելիա լոյս տեսած: (Կենսագրութիւնը տես ՅԱԻԵԼՈՒԱԾՐ):

ԳԷՈՐԳԵԱՆ Թագուր, խմբագիր «Արծիւ» պարբերաթերթի, տպ. 1830ին:

ԳԷՈՐԳԵԱՆ Խաչիկ, ծանօթ գրածուիչ, ծնած է 1856ին Պալարի մէջ եւ աշակերտած տեղւոյն Արեւնեան ազգային վարժարանը, 14 տարեկանին մտած է գրածուիչ Տիգրան Ասլանեանի քով: Վէզիր խան. ուր մնացած է մինչև 1880: Թուրք մամուլին իր ծառայութեանց համար վարձաւորուած է «Մէարիֆ» պատուանշանով: Ինքնաշխատութեամբ յաջողած է հիմնել տառաձուլարան մը որ հետզհետէ վերածուած էր տիպար եւ առաջնակարգ հաստատութեան մը: Կը մեռնի 1932ին՝ 76 տարու:

ԳԷՈՐԳԵԱՆ Կարապետ, s. Ժօրժ Կարապետ:

ԳԷՈՐԳԵԱՆ Կարօ, խմբագիր ոտուցիչ, ծնած է Կիւմիւլճիւնա (Յունաստան), նախնական ուսումը առած տեղւոյն Աղգային վարժարանին մէջ, ուրկէ յետոյ անցնելով Պարտիզակ՝ մտած է Ա. մերիկեան Բարձրագոյն վարժարանը եւ յրջանաւարտ ելած է 1912ին:



ԳԷՈՐԳԵԱՆ ԿԱՐՕ

Իբրև ուսուցիչ պաշտօններ վարած է՝ Ֆիլիպէի, Սյիվէնի (Պուլկարիա), Տէտէ Աղաճի և Քօանթիի (Յունաստան) Աղգային վարժարաններուն մէջ:

1912—1922ի մինչև Իգմիրեան աղէտը, խմբագիր եղած է «Ճակատամարտ»ի 1925 Յուլիսին, «Արիք»ի խմբագրութիւնը ստանձնած, յետոյ Սելանիկի մէջ լոյս տեսնող «Հորիզոն» օրաթերթը վարած է իբրև Տէր եւ Տնօրէն: 1927ին խմբագրած է «Կամիթ» երգիծաթերթը, ուր գրած է սրամիտ յօդուածներ Տէրեկքիվ ծածկանունով:

Կ. Գէորգեան աշխատակցած է նաև զանազան թերթերու՝ յօդուածներով ու թղթակցութիւններով, զանազան կեդանուներով: Ունի կարգ մը թարգմանութիւններ: (Մակարեան՝ «Յուշագիրք» էջ 200):

ԳԷՈՐԳԵԱՆ Հայաստան գրագիտուհի, ծնած Շիրակի Դահարու գիւղին մէջ, հայրն էր՝ Թաղէոս Գէորգեան, նոյնպէս գիւղացի, ուսուցիչ, յետոյ վերապատոււց ուսու. պետական դպրոցներու: Հա-



յաստան Գէորգեան իր միջնակարգ ուսումը ստացաւ Կարսի լիսէին մէջ, ուր ուսաւ ուսւ լեզուէն և շրջանը աւարտեց փայլուն վկայականով Թիֆլիսի մէջ, ուր փոխադրուած էր լիսէն՝ ընդհ. պատերազմի առեան:

Վարժարանին մէջ խմորատիպ թերթ մը հրատարակեց. կամաւորական շարժման մէջ մտաւ. ինքն ալ ուղեց զէն ի ձեռին պատերազմիլ-բայց որովհետև Հայ կամաւորական բանակին մէջ ազջիկներուն զէնք չէին տար՝ Հայաստան մտնելը կտրեց. իր միջոցներով տղամարդու զգեստ պատրաստեց և ծպտուած փախաւ տունէն անցաւ Սարըղամիշ, ներկայացաւ որպէս պատանի և ընդունուեցաւ իբր կամաւոր զինուոր:

Իր հեղինակութիւնն է «Վիշապների աշխարհում» գիրքը. որ 1931ին Վիեննայի մէջ տպուեցաւ: Ամուսնացած էր գերմանացիի մը հետ Վալսճանեցաւ 1937ին: Տե՛ս նաև ՅԱԻՆԼՈՒԱԾը:

ԳԷՈՐԳԵԱՆ Մամիկոն, խմբագիր հրատարակիչ Փայլակ «հասարակական, քաղաքական և տնտեսական» թերթի: (Հ. Յ. Իսչնակցութեան) տպ. Թիֆլիս 1907:

ԳԷՈՐԳԵԱՆ Ներսէս, եպ. Թէքիրտաղցի, միաբան Երուսաղէմայ Ս. Յակոբայ վանքին, ծնած է 1828ին, աւազանի պնունը Կարապետ: Չեռնադրուած է 1853ին: 1854—6 թուականին Պէյրութի տեսչութիւն, 1856—63 աւագ թարգման՝ վանքին մէջ, 1877—88 Ռոտտսթոյի առաջնորդ կը կարգուի և 1889—96 վանքին մէջ դարպասընկալ: փոխանորդ՝ 1896—1906 և այդ տարին կը վախճանի:

Ներսէս եպ. իր նուիրակութեան առթիւ գրի առած է Հնդկաց կռապաշտական սովորութիւնները և 1874ին հրատարակած է «Սիոն»ի մէջ: (Աղաւնուցի՝ «Միաբան»):

ԳԷՈՐԳԵԱՆ Պերնուհի, երաժշտագէտ՝ Մարսիլիոյ մէջ, Տե՛ս ՅԱԻՆԼՈՒԱԾը:

ԳԷՈՐԳԵԱՆ Սաղաբիէլ (Սագունի), Հնչակեան նահատակ Լոնտոնի մէջ: (Տե՛ս «Յուշարձան Ս. Գ. Հնչ. Կուսակցութեան» էջ 22):


ԳԷՈՐԳԵԱՆ Վահան վրդ. ծնած է Մուսա լեռան Հաճի-Հապիպի գիւղը 1882 Սեպտ. 11ին: Նախնական ուսումը կը ստանայ ծննդավայրին՝ եւ ապա Անտիօքի վարժարանին մէջ:

1903ին Երուսաղէմ կ'երթայ: 1909ին ուրաբ կրելու արտօնութիւն կը ստանայ Տ. Յարութիւն Վեհապետեան պատրիարքէն: 1913ին սարկաւագ կը ձեռնադրուի և տակաւին սարկաւագ՝ 1917ին Վեհ. Տ. Սահակ կթղ.ին և Սիոնականնե-

րու հետ Երուսաղէմէն Դամասկոս կը տարադրուի ուր կը մնայ մինչև զինադադար: Երուսաղէմ վերադառնալով, օծում և վեղար, խկ 1922ին՝ վարդապետական աստիճան կը ստանայ:

1922—6 Երուսաղէմի պատր. փոխանորդութեան պաշտօնը կը վարէ ի Դամասկոս, շատ փափուկ շրջանի մը մէջ, երբ հայ բունագուրկ գաղթականութիւնը կ'աճի, կ'աճէ, նաև տեղացի Իսլամներու դժգոհութիւն, Գրիստոնէից զէմ:

1926—7ին կը վարէ Յոպէի Հայոց վանքի տեսչութիւնը: 1927-9 Լաթաքիա կը դրկուի Երսղի պատր. փոխանորդի պաշտօնով, և երբ Երուսաղիմ պատական երեք Սիւրիական թեմերը (Դամասկոս, Պէյրութ և Լաթաքիա) կը վ.Ա.ՀԱՆ Վ. ԳԷՈՐԳԵԱՆ



յանձնուին Կիլիկիոյ կաթողիկոսութեան՝ անկէ կը կոչուի Բեթղեհեմի Ս. Աստուածածին վանուց տեսչութեան: 929—31 կ'ընտրուի Տնօրէն Ժողովոյ անդամ: 1932էն ի վեր կը վարէ Ս. Հրեշտակապետ վանքին տեսչութեան հետ նաև Երուսաղիմացի Հայոց հոգևոր հովուութիւնը: Վահան վրդ. մին է Ս. Յակոբայ վանքին գործունեայ միաբաններէն: (Պսակ վրդ.):

ԳԷՈՐԳԵԱՆ Վարդան, խմբագիր, ուսուցիչ, գրագէտ, տե՛ս ՅԱԻՆԼՈՒԱԾը:

ԳԷՈՐԳԵԱՆ Սուրեն, ծնած է Թիֆլիս 1899ին, 18 տարու էր երբ Չիթա քաղաքին մէջ Ռուսական գիմնազիան աւարտեց ոսկի մետալի արժանանալով: Յետոյ Տոմսքի համալսարանի մէջ երկու տարի մնալէ վերջ՝ յեղափոխութեան պատճառաւ Չինաստան գնաց: 1921 Օգոստոսին Բալիֆորնիոյ Պրըքլի քաղաքը անցաւ, 1922ին Բալիֆորնիոյ համալսարանը մտաւ, Անտառագրութեան ճիւղը ընտրեց և 1924 Դեկտեմբերին մեծ յաջողութեամբ ատարտեց: 1925 Յունվարին գինքը դրկեցին Սթ. Փօլ, Մինն. Լեյք Սքէյքս Թարքս Էֆսիէրիմընք Սքէյքսն գործերու իբր բրօֆէսորին օգնական. այնքան գոհ մնացին իր գործերէն որ իրեն յատկացուցին հազար տոյար սքալըըշիֆ, որոյ յաջորդ տարին Հարվըրտ հա-



մայրարանի մէջ ձրի ուսանելու տիտղոս ստացաւ. Սեվիլ Սըրվիսի քննութեանէն յաջող անցաւ եւ որպէս կառավարութեան մնայուն պաշտօնեայ գործեց: Անտառարանութեան մասին գրած է չորս գրքեր, որոնք հրատարակուած են: («Հ. Կոչնակ» 1927, էջ 982):

ԳԷՈՐԳԷՆ Տ. ԳՈՐԳԷ և ԳՈՐԳԷ:

ԳԷՐԱՔԵԱՆՅ Յովհաննէս Յակոբեան, ազգային բարերար Հրեղեկաստանի Սուրբ քղ, ին մէջ, թոն Գէրաք աղայի: (Հիւ. Տարեցոյց 1937 էջ 287):



ԳԷՈՐԳԵԱՆՅ ՍՈՒՐԷՆ

ԳԷՐՏԱՐԱՎ Կամ Կերայա, գղ. Աարպատականի Ուրմիոյ գու.ի մէջ, Ուրմի քաղաքէն 7 վերստ հեռի զէպի հիւսիս Սալմաստի ճամբուն վրայ: Ունի եկղ. մը 1895ին նորոգուած վայելուչ կերպով: Գիւղս զուտ հայաբնակ է. 1900ին 130ի չափ տունն րն. ունէր, սակայն պանդըխտութիւն գնալու սովորութիւնը, արգելք կը դառնայ հասարակական գործերու յառաջդիմութեան: Աարպատականի Հայունեաց Բարեգործական Ընկերութիւնը 1890ական թուականին զըպրոց բացած է գիւղիս մէջ (էփրիկ. «Բնաւիստրիկ»):

ԳԷՐԷՔ Տ. ԿԵՐԷԿ:

ԳԷՕԹԻՆ, գղ. Հաճնոյ (Կիլիկիա), ուր կային սակաւաթիւ Հայեր:

ԳԷՕՈՆԱՎԱՅ. գղ. Իրանի Սուլդուղ գաւառակի, 1900ին ունէր 10 տուն հայ և եկղ. մը:

ԳԸԶ ԳԱԼԷՍԻ, լեռնակ Սիւնեաց վայոց ձոր գաւառի մէջ:

ԳԸԶԸԼ, այս ոկղրնաւորութեամբ անունները տե՛ս նաեւ Գզըլ ձևով գրուած:

ԳԸԶԸԼԵԱՆ Սարգիս. քարոզիչ-ուսուցիչ, ծնած Գընճըլար (Կէյվէ Նիկոմիդիա), նախնական ուսումը առած է՝ նախ տեղւոյն պղպային և ապա Աւետարանական Հայոց վարժարանին մէջ:

Պատանի հասակէն ուսուցչութեան կը հրաւիրուի՝ տեղւոյն Աւետարանական Հայոց վարժարանը՝ երբ իր մօրեղբայր-ուսուցիչը կը հրաժարի իր պաշտօնէն: Չկարենալով վենետիկ երթալ՝ Պարտիզակի Բարձրագոյն վարժարանը կը մտնէ, ուրկէ շրջանաւարտ կ'ըլլայ:

Պահ մը քարոզիչ-ուսուցիչի պաշտօն կը վարէ՝ Գուրտպէլէնի մէջ, Նիկոմիդիոյ Գաւառական Ժո-

ղովին և տեղւոյն երեք Բողոքական եկեղեցիներու կողմէ, Տոքթ. Ռ. Չէմպրոսի միջոցաւ եղած առաջարկը չկարենալով մերժել՝ Մարդուանի Աստուածարանական ձեմարանը կը մտնէ: Բաղաքական պատճառներով հազիւ երկու տարի կարենալով շարունակել դպրոցը՝ Ատապազար կը վերադառնայ, և ուսուցչական ու քարոզչական պաշտօններ կը վարէ:

1913ին Այնթապի գօլէճը կը մտնէ և 1913ին շրջանաւարտ ելլելով՝ Գընճըլար կը դառնայ երկսեռ վարժարանին տնօրէնի պաշտօնով:

Մեծ պատերազմին Սուլթանիէ կ'աքսորուի, ուր յետոյ շատ մը հայ ընտանիքներ աքսորէն կ'ազատէ: Գոնիա վերադառնալով հոն գաղտնի վարժարան մը կը բանայ 27-30 աշակերտներով:

Զինադադարին Իզմիթ վերադառնալով՝ Փրանսական վարժարանին մէջ անգլիերէն կ'ուսուցանէ, քիչ յետոյ իբր տնօրէն և քարոզիչ պաշտօնի կը հրաւիրուի տեղւոյն մէջ:

1921ին, Նիկոմիդիոյ պարպումով՝ Ռոտոսթօ անցած է և պահ մը տնօրէն - ուսուցչի պաշտօն վարած տեղւոյն վարժարանաց մէջ:

1922ի կիսուն, Տանիմարգացի Միս Եէնսինէ Էօրցի հաստատութեան մէջ, իբրեւ քարոզիչ - ուսուցիչ պաշտօն կը ստանձնէ:

Պատ. Գըզըլեան Արեւելեան Թրակիոյ պարպումով Սելանիկ կ'անցնի և միս Էօրցի Դանիական հաստատութեան մէջ պաշտօն կը վարէ իբր քարոզիչ-ուսուցիչ և փոխ-տնօրէն:

Պատ. Ս. Գըզըլեան ունի կարգ մը գործեր՝ տպուած և անտիպ (Մակարեան՝ «Յուսազիր» 234):

ԳԸԶԸԼ ԸՐՄԱԳ. Սարոսի օժանդակ զեա ի Կիլիկիա: Տե՛ս Ալիս:

ԳԸԶԸԼ-ՔԻԼԻՍԷՆ Տ. Գզըլ-Գիլիսէ:

ԳԸԶ-ԼԻՄԱՆ Կամ Գըզըլ-Լիման, երկայնաձև գեղեցիկ հրուանդան Կիլիկիոյ, Սեր Ատանայախարհի մէջ. ի հնումն կը կոչուէր Պոսիդոն:

ԳԸՆԱՂ, գղ. Իրանի Քեազազ գաւառակի նոր Ջուղայի: 1900ին ունէր 20 տուն հայ րն. եկեղեցի և դպրոց:



ԳԸԶԸԼԵԱՆ ՍԱՐԳԻՍ



ԳԼԶՆԱՃԱ զզ. Միւննաց Աղահէճք գո.ի մէջ, ԳԼԼԸՃ կամ Խրլրն, զզ. Եայովայի, Նիկոմիդիոյ առաջնորդութեան տակ: Շախաչի զզ.էն ժամ մը հետու է և ծովու եզերքէն երկու ժամ ներս: 1900ին 570էն աւելի դուռ հայ բնակիչ ունէր, Ս. Սարգիս անուամբ փոքրիկ քարուկի եկեղեցիով մը, ունէր նաև Սարգսեան զարոյց մը:

ԳԼԼԸՃԱՆ ԳԻԳՈՐ. ծնած է Տիվրիկ 1868ին. աշակերտ Թիրաոյրին (Մ. Պոյաճեան), 1883ին Պոլիս կ'անցնի և իրաւարանական վարժարան կը մտնէ. կը դառնայ Հնչակեան կազմակերպիչ. 1898ին կը մեռնի Աթէնքի մէջ (Ուսանողական Տար. Բ. էջ 199):

ԳԼԼԸՃԱՆ ՀՐԱՆՊ. բրոֆ. ջութակահար, ծնած է Սերաստիա 1896ին: Ուսումը առած է տեղւոյն Ամերիկեան Գոյլէճին մէջ: Զուլթակի իր առաջին բրոֆէսորը եղած է Նշան Պէկեան: Հ. Գըլըճեան մտառով հասակին ցոյց տուած է երաժշտ. փայլուն կարողութիւն, այդ նկատելով է որ թեյաղրած է անոր Պէկեան՝ պարզ մեղեդիներ շարադրել և ինքը 12 տարու պատանին քաջալերուած՝ գրած է Սերաստիոյ Արամեան վարժարանի քայլերգը:

Հետեւած է նաև Ազգ. Արամեան վարժարանի Զ. կարգին, ուսանելու համար Հայ եկզ. պատմութիւն, մատենագրութիւն և հայկ. երաժշտութիւն, միեւնոյն ատեն պաշտօնավարելով յիշեալ վարժարանին մէջ:

Համաշխարհային պատերազմին իր կեանքը ազատած է խիտ դժուարին զինուորական եղանակ մը անսխալ ձայնագրելուն փոխարէն:

1920—23 իրը երաժշտութեան դաստիարակ պաշտօնավարած է Գոնիայի Ճէնանեան Գոյլէճին մէջ: 1924—9 նոյն պաշտօնով դասախօսած է N. E. R,ի Յունաստանի Կեզր. Որբանոցին մէջ ի Սիրա:

Այժմ (1938) կը գտնուի Պուէնոս Այրէս ուր 1932էն ի վեր կը պաշտօնավարէ Հայ Կեզրոնի «Արարանեան» վարժարանին մէջ՝ իրր տեսուչ:

Իր երաժշտական հեղինակութիւններն են. 1. Արամեան վարժարանի Քայլերգը, 2. Վարդանի մահը, 3. Վահազնի ծնունդը, 4. Հայկականերու Որորանը, 5. Հովուական պարեր,



ԳԼԼԸՃԱՆ ՀՐԱՆՊ

6. Պարալիին մէջ (գարնանային), 7. Հայու վիշաբ:

ԳԼՅԸՃԱՆ ԳԻԳՈՐ. աշխատակից «Հայ Հանրագիտակ»ի, ծնած է Իզմիր 1910ին: Յաճախած է տեղւոյն Սէն-Փողէֆ ֆրանսական վարժարանը և և Աթէնքի Lycée Léonin: 1926ին եղած է bachelier ès Sciences:



ԳԼՅԸՃԱՆ ԳԻԳՈՐ

Հետեւելով Աթէնքի ֆրանսական հնագիտական վարժարանին ուսուցչութեան յատուկ բաժինը, 1932ին կը ստանայ բրոֆէսորի տիտղոսը Հիլլէն կրթ. նախարարութեան կողմէ: Աշխատակցած է «Նոր Օր»ի (Աթէնք) և «Արեւադար»ի (Աթէնք) պատմական-բանասիրական յոդուածներով:

ԳԼՅԸՃԱՆ ՄԻՐԱՆ, ծնած է Մանիսա 1883ին: Կանուխէն Իզմիր երթալով կը յաճախէ Մեսրոպեան վարժարանը: 17 տարեկանին կը մտնէ Դաշնակցութեան շարքերը և կը լծուի յեղափոխական գործունէութեան: Մտնակցած ըլլալով այն խումբին, որ ուժանակով օգը պիտի հանէր Credit Lyonnais դրամատունը, 1905ին կը ձերբակալուի: Յմահ բանտարկութեան դատապարտուելով կը զրկուի Պատրումի բանտը: 1908ի «Հուրիէթ»ի օրերուն ներման արժանանալով կը վերադառնայ Իզմիր, սակայն բանտի տառապանքներու հետեանքով չուսով անդամայոյժ կը դառնայ և կը մեռնի 1917ին: Եղած է Իզմիրի Դաշնակցական կազմին ամէնէն գաղափարական ընկերներէն (Գ. Գ.):

ԳԼՅԸՃԱՆ ՍԱՐԳԻՍ, (Արմէն Սեթո) ծնած Աֆ. Գարահիսար 1894ին: Ուսումը կը ստանայ Գոնիայի Ճէնանեան գոյլէճի մէջ, Նախկին Հ. Յ. Դ. կազմակերպիչ. 1921ին Աթէնք կը հաստատուի ու 1933ին կը սպաննուի (Ամբոց Ա. տարիք 20):

ԳԼՆԸԳ կամ Խրնրգ, գիւղաքաղաք Զմիւռնիոյ կուսակալութեան և առաջնորդութեան տակ, Արշա-գայա և Պէշիկթաշ կոչուած լեռանց ստորոտը, 1900ին ունէր մօտ 1200 տուն բնակիչ, որոնց 117ը Հայոցն էր: Տեղւոյն նախնիք գրեթէ երկու քուկէս դար առաջ գաղթած են Հայաստանի զանազան կողմերէն: Հայերը կառուցած են Ս. Աստուածածին անուամբ եկեղեցի մը որ 1847ին



ի հիմանդ նորոգած են ընդարձակ, գեղեցկաչէն և կամարակապ: Ունէր Հայկազնեան և Վարդանեան անուամբ երկու դպրոց:

ԳԸՆԸԲ s. Գիւնիկ:

ԳԸՆԻԱԹ s. Քրնիաք:

ԳԸՆՃԸԼԱՐ կամ Ղրննրլար, զուտ հայաբնակ գիւղ Նիկոմիդիոյ վիճակին կէջվէ գաւառակին մէջ, Սաղարիա գետին մօտ և Գուրապէլէնէն ժամ մը հեռու, շինուած բլուրի մը վրայ: Գիւղին կից կայ մայրիկ անտառ մը: Ունի պաղ մշտանոս աղբիւրներ, Բնակչաց թիւը աւելի քան 1500 էր. կը դրաղէին գլխաւորաբար շերամաբուժութիւնով և այգեգործութեամբ, կային արհեստաւորներ ալ, գիւղին մէջ կային երկու մետաքսի մանարաններ: Բազմաթիւ գիւղացիներ Պոլիս և այլուր կը զբաղէին աղիւսաշինութիւնով: Կար Ս. Սարգիս փառաւոր եկեղեցին և Արշարունեաց երկսեռ վարժարանը, սւր կը յաճախէին շուրջ 250 աշակերտ: Կային փոքր թիւով հայ բողոքականներ ևս, որոնք ունէին իրենց ժողովարանը: Գիւղին մօտիկը կը գտնուի Ս. Սարգիս անուանով հին ուխտատեղի մը, որուն եկեղեցիին հիմերը և խորանի կամարը ընդհ. պատերազմէն առաջ հաստատ կը մնային, հոն կայ քարայր մը ուր հազիւ մարդ մը կրնայ մտնել որուն ներսը կայ քաղցրահամ աղբիւր մը:

Մաս մը գիւղացիք բնակչութիւն հաստատած էին մերձակայ Թաւօ օլուգ քաղաք տեղը, որուն տրուած էր Գրնճըլար Նոր Գիւղ անունը: Մաս մը Գրնճըլարցիներ ալ գաղթած են Ատապազարի մօտ Խանթէկ և հոն Օրտուէն եկող գաղթականներու հետ հաստատած են Սէր գիւղը:

Գրնճըլարի նախարնիկները գաղթած են Ակնէն: ԳԸՆԻԿ, քարայր Սասնոյ Հավկինք գիւղի վերերը, ուր 1915ին հարիւրաւոր հայ բազմութիւն մը ապաստանեցաւ և պարէնի ու ջուրի չգոյութեան պատճառաւ անձնատուր ըլլալով թշնամիին յանձնուեցան և ամէնքն ալ ջարդուեցան:

ԳԸՍԱՃԸԳ, հայաբնակ գ. Տրապիզոնի առաջնորդական վիճակի մէջ. ունէր եկեղեցի և վարժարան մը 45 աշակերտներով:

ԳԸՍԸՐ-ՏԱՂ, երկար շղթայ լեռանց, Սիւնեաց աշխարհի մէջ:

ԳԸՐ, գ. Տիգրանակերտի Լճէ գիւղի մէջ. ունէր 30 տ. հայ բնակիչ:

ԳԸՐԳԱՂԱՃ, ք. փոխ-կուսակալանիստ Չմիւռնիոյ հիւսիս-արեւելակողմը, համանուն գ.ի մէջ: Հայերը ԺԸ դարու կէսերը գաղթած են Թաւրիզէն, Սալմաստէն, Ղափանէն, Ղարապազէն և

Երեւանէն և տակաւ բաղմացած: Հայք իրենց գաղթականութեան սկիզբը՝ քաղաքին միջավայրը հաստատած կ'երևին իրենց բնակութիւնը, ուր և Անեմ խանի մէկ սենեկին մէջ սեղան կանգնելով՝ պաշտօն կատարեր են ժամանակ մը:

1900ին 160—170 (800 հոգի)տուն հայ կար քաղաքին մէջ. ունէին Ս. Աստուածածին եկեղեցի մը, որ տեղւոյն բոլոր չէնքերուն մէջ Պառաջինը կրնայ համարուել: Եկեղեցւոյս տեղը կար 1796ին շինուած ուրիշ հին եկգ. մը, որուն փոխան 1871ին վերաշինած են. այս շինութեան, բացի ուրիշ բարերարներէն միայն Արրահամ փաշայ Երամեանը նուիրած է 500 օսմ. ոսկի:

Տեղւոյս հայ երիտասարդաց և օրիորդաց մէջ զանազան մշակութային ընկերութիւններ եղած էին: Հայերը լաւ դիրք ունէին. կային գործարանատէրեր և փաստարաններ (Յովհ. Մըսրեան և Յարութիւն Տայեան):

Հայերը ունէին երկու գերեզմանատուն առանց նշանաւոր քանդակագործ տապանաքարերու: (Բօսնան «Հայի ի Զմիւռնիա եւ ի օրջակայս» Բ. էջ 141—153):

ԳԸՐԳ-ԲԶՈՎԱՆԻ, գ. Երեւանայ նահանգի, Գէմէլլիի վիճակի մէջ, 1900ին 26 տ. հայ բն. ունէր:

ԳԸՐԳ-ԿԷՉԻՏ, գետակ և ձորափոր լեռնային կիլիկիոյ մէջ:

ԳԸՐԳ-ԿԷՕԶ, լեռ Սիւնեաց Աղահէճք գ.ի արեւելակողմը, Արցախի սահմանակից, բարձր է 8770:

ԳԸՐԳ ՄԱՂԱՐԱ, ժամանակին Եղսիոյ Ս. Սարգիս վանքին մասն էր. այժմ քրտարնակ է:

ԳԸՐԳ-ՊՈՒԼԱԳ s. Ղրխբուլաղ:

ԳԸՐԳ-ՊՈՒՆԱՐ (Քառասուն աղբիւր), այս անուամբ գիւղ մը կը յիշուի Այրարատայ Վանանդ գ.ի մէջ, ուր 1887 տարւոյ Յուլիս 4ին բանակ դրաւ Մուխթար փաշա:

— Այս անուամբ լեռ մը կայ Կիլիկիոյ մէջ:


ԳԸՐԳ-ՏԷԿԻՐՄԷՆ, հայաբնակ գ. Այրարատայ Շիրակ գ.ի արեւելեան մասին մէջ: 1900ին 853 բնակիչ ունէր:

ԳԸՐԸԳ-ԽԱՆ, գիւղաքաղաք Հիւսիսային Սիւրիոյ, Ալեքսանտրէթի Սանճագին մէջ. ունի 10000 բնակիչ, իսկ իր գիւղերով միասին 48000: Հայոց թիւն է 700 ընտանիք, 465 լուսաւորչական, 160 կաթողիկէ և 75 բողոքական:

Գրբըղ-խանի բնակչութեան մեծամասնութիւնը կը կազմեն Հայերը, որոնք իրենց դիրքով ալ կը գերազանցեն տեղացի թուրքերը: Բնիկ հայ չկայ գրեթէ. եթէ ոմանք տեղացի կը համարուին ու



կալուածներ ունին, անոնք ալ գաղթած են Ալեքսանտրէթէն կամ Պէլլանէն: Իսկ գաղթականները այսօրվերջին տարադրութեան միջոցին եկած ու



Գ Լ Բ Գ - Խ Ա Ն

հաստատուած են 1925էն սկսեալ ու քանի մը տարի վերջ ձեռնարկած են փառաւոր եկեղեցիի մը շինութեան:

Երեք յարանուանութիւններն ալ ունին իրենց տղօթատեղին, կաթնղիներու հոգեւոր պաշտամունքը կը կատարեն Յիսուսեան կրօնաւորներ: Հոս հաստատուած Հայերը ընդհանրապէս զաղթած են Կիլիկիայէն:

Քաղաքապետութեան մէջ՝ իրր արժանաւոր քաղաքապետ պ. Ստեփան Ֆարաճեանն է, իսկ քարտուղարը պ. Ստեփան Տէր Արրահամեան ծերունին և բժիշկը՝ Տոքթ. Լեւոն Տէր Գրիգորեան: Աւանիս բոլոր բժիշկներն ալ Հայեր են, նոյնպէս բոլոր զեղազորները:

Հայ Ազգ. վարժարանը նախակրթարանի բաժնին մէջ ունի 215 երկսեռ աշակերտ, իսկ մանկապարտէզի բաժնին մէջ՝ 250: Կաթնղի Յիսուսեաններու դպրոցը 200, իսկ բողոքականներու դպրոցը 180 երկսեռ աշակերտներ կը յաճախէին: (Սարգիս Պալեան՝ նմս. «Հայ Մամուլ» 1937 Յունուար թիւ 110):

ԳԼԲԳ-ՄԻԲԶԱ, հանգրուան՝ Այրարատայ Կոզովիա գաւառի մէջ:

ԳԼԲԱՆԿԸՆԱՆ Գեորգ, ծնած է Կ. Պոլիս 1878 Սեպտ. 23ին: Նախնական ուսումը առած է Վիեննական Միսիթ. Բանկայթիի վարժարանին մէջ, ընդ հսկողութեամբ Հ. Նիկողայոս վրդ. Աւգերեանի, որուն ձեռքին տակ ճաշակն պոած է բանաստեղծութեան, և Իիծառն գրչանուան տակ՝ սկսած է գրել ոտանաւորներ «Հանդէս Ամսօրեայ»ի, «Հանրագիտակ»ի և «Ուսումնարան»ի մէջ, իսկ հասարակական յօդուածներ՝ այլ և այլ

թերթերու մէջ, ինչպէս «Մէճմուաի Ախպար»ի, եւ այլն:

Գէորգ ունի նաև բաւական թիւով անտիպ բանաստեղծութիւններ, որոնցմէ մաս մը հրոյ ճարակ եղած է Բանկայթիի հրդեհին:

Իր բոլոր գրածները լի են նուրբ զգացումով, յստակ իմաստով, լաւ կշռոյթով և ճօխ յանգերով:

1896ին մտած է Օսմ. Հանրային պարտուց Ընդհ. Տնօրէնութեան Քննիչութեան Դիւանը, և տասնեակ մը տարիներ յետոյ անուանուած է փոխ-տնօրէն նոյն դիւանին: Ըստ ինքեան՝ սոյն ճիւղին բուն Տնօրէն մը նշանակուած չլլալուն՝ ինքն էր որ տարիներով կը վարէր ամբողջ գործերը: Թերևս իր հիւանդութեան (urémie) այնչափ ծանր հանգամանք մը ստանալուն պատճառներէն մին ըլլայ այն չափազանց աշխատութիւնը որ կը ճնշէր իր վրայ:

Գէորգ անսահման սէր ունէր Ազգին և Մխիթարեանց վրայ:

Ընդհ. պատերազմին՝ երբ կարելի չեղաւ ազդային գործերով զբաղել, Գէորգ բարեգործական ձեռնարկութիւններու մէջ ասպարէզ դտաւ:

Գրական ու թեան մէջ՝ ան հիացող մըն էր Պետրոս Դուրեանի բանաստեղծական հրգոր ոգիին, Սիպիլի նուրբ արուեստին, Ա. Փանոսեանի յանգերուն մշտարուղիս աղբիւրին, Դ. Վարուժանի մեծ տաղանդին, եւ այլն:

Գէորգ մեռած է Կ. Պոլսոյ մէջ, 1919 Նոյ. 14ին: (Բ.):

ԳԼԲԱՐ. գղ. Տրամայի (Յունաստան) ուր 1922-էն ետք 14 տուն Հայեր եկած հաստատած են իրենց բնակութիւնը:

ԳԼԲՄԸԸԳ-ԳԻԼԻՍԷ, փոքրիկ շէն Այրարատայ Շիրակ գո.ի մէջ Հոգեվանքին մօտ:

ԳԼԲՇԷՀԻՐ, քղ. Անկիւրիոյ կուսակալութեան, համանուն գո.ի և Կեսարիոյ առաջնորդական վիճակի մէջ: 1900ին 9000 բն. ունէր, թուրք, հայ և սակաւաթիւ յոյն: Հայերը ունէին Ս. Գէորգ եկղ. մը և Հայկական անուամբ դպրոց մը, ուր 130 աշակերտ կ'ուսանէին:

ԳԼԲՇԷՀԻՐ, գղ. Եողգատի, 1926ին 30 տուն



Գրլանկրեան Գեորգ



Հայեր եկած հաստատուած էին:

ԳԹԵՎԱՆՔ, կը յիշուի Սիւնեաց Ծղուկ գո.ի գիւղորէից շարքի մէջ, ըստ Ստ. Օրպէլեանի՝ Տարսայիճ իշխանը Գթեվանքը Տաթևու կալուած տուեր է:

ԳԻ կամ Գեհի, գղ. Երզնկայի, ի հնումն կը կոչուէր Այգի:

ԳԻԼԱՅԵՐԳ, Սիւնեաց Կովսական գաւառը վերջին գարուց մէջ այսպէս կը կոչուէր:

ԳԻԼԱՁՕՐ կամ Գեյազուր, ա՛յլ կերպ գրուած անուն Գեյիգոր (տե՛ս) գղ. ի:

ԳԻԼԱՆ, հիւսիսային Իրանի նահանգ, մայրաքաղաքն է Ռաշտ. բն. 35000, որոնց 500ը հայ:

ԳԻԼԱՆ կամ Կիլեան, գետ Քասաձոր վիճակի մէջ, կը համապատասխանէ հին Գիրանայ:

ԳԻԼԱՆԵԱՆ Հայկ, ջուրհակահարարուեստագէտ Թիֆլիսի մէջ:

ԳԻԼԱՆԵՆՅ ՊԵՏՐՈՒ ԳԻ Սարգիս, «Կոռնկ Հայոց Աշխարհի» թերթին մէջ (1863 Գ. տարի թիւ 2, 3) ունի ժամանակագրութիւն 1723 թուականին, Ջուղայեցոց բարբառով գրուած:

ԳԻԼԻՇԷՆ, հին գղ. Սիւնեաց Գեղարքունի գո.ի:

ԳԻԼԻՍԷ կամ Քիլիսե-Խարապա, Տ. Ալաշալու:

ԳԻԼԻՍԷ ՏԷՐԷՍԻ (Եկեղեցաձոր) Սիւնեաց Վայոց ձոր գո.ի մէջ:

ԳԻԼԻՍԷՔԷՆՏ, գիւղակ Հայոց Սիւնեաց Կովսական գո.ի մէջ, 1900ին 20 տ. բնակիչ ունէր:

ԳԻՀԻ Տ. ԳԻ:

ԳԻՃԻ Տ. Կիճի:

ԳԻՄՍԷԳԱ Տ. Դալիթեան Գ. Ա.:

ԳԻՆԱԹԱՂԱՐ, ամրոց կամ հանգրուան Աղա-հէճք գո.ի: Հաբանդի Գեհեքրաղէ գիւղը, կը յիշեցնէ:

ԳԻՆԱԼ, Արցախու մօտ Մաււ լիւրան գագաթներէն մին, ուսկից սկիզբ կ'առնու Սեւ զետակը:

ԳԻՆԱԿԱՆ ԳԵՏ, Սիւնեաց Ծղուկ գո.ի մէջ:

ԳԻՆԱՅ ՎՏԱԿ Տ. Գիւնեղոյն գետ:

ԳԻՆԻՐԱՆՅ կամ Կեղրանց, գղ. Վանայ Կարճկան գաւառակին: 1900ին 25 տ. հայ բն. ունէր, ինչպէս նաև եկղ. մը և Ս. Պօղոս անուամբ վանք մը, որ անտէր և լքեալ է:

ԳԻՆԵՅԵՐ ՎԱՆՔ, Վասպուրականի (Վան) Արճիշակովիտ գո.ի, Ականց գիւղաքաղաքէն 4 ժամի չափ հեռի գեղեցիկ բլրակի մը վրայ շինուած էր վանքս, որ ի վաղուց ամայացեալ է: Վանքս կը կոչուի եղբր Գիւնեբեր Ս. Նեան. գրուած կը գտնենք նաև Կեմաբեր Ս. Գեորգ և Կեմափորի վանք: (Էփրիկեան «Յնաւարանի»):

ԳԻՆԵԳՈՅՆ, Գիւնոյ գետ կամ Գեմայ վտակ գետ Այրարատայ Մասեաց ոտն գո.ի, որուն կը հա-

մապատասխանէ այժմեան Գարատուն: Կ'աւանդուի, թէ զետոյս ահանց մօտ Արտաւաղղորսի ժամանակ կորսուեր է, մեծ վհի մը մէջ գահավիժելով:

ԳԻՆԵԿ, գղ. որ կը յիշուի Բագնայի (Շիրակ) արձանագրութեան մը մէջ, որ կը կարծուի լինել Գրնրէ գիւղը, ուրկէ 1691ին Հ. Վիլլոզ Յիսուսեանը անցած է էջմիածնէն եկած ատեն:

ԳԻՆԻՇԷԿԱՁՈՐ և ԳԵՏ Տ. Գեիւիկ:

ԳԻՆՈՅ ԲԼՈՒՐ, Այրարատայ Մասեաց ոտն գո.ի մէջ, որուն անուամբ կոչուած է վերը յիշուած Գիւնոյ գետը: Սա կը թուի այժմեան Քափեայրու կոչուած բլուրը: Երբ Արարացիք նեղը ձգեցին մեր Արաս թագաւորը, Գագիկ Արծրունին եկաւ այս կողմերը և բլրանս մ'ո գրաւ իր բանակը. նոյն միջոցին Եղիսէ հայրապետն ալ «ի կատարս բլրին Գիւնոյ» քահանայական դասուն հետ կ'աղօթէր պատերազմի յաջող ելից համար:

ԳԻՇԵՐ, «գրական, հայրենասիրական, անկուսակցական թերթ», ըստ Գ. Լեւոնեանի լոյս տեսած է Պարտիզակի մէջ՝ 1908—1910ին:

ԳԻՇՆԻԳԵԱՆ, գղ. Իրանի Զարմանալ գաւառակի, 1900ին ունէր մօտ 50 տուն հայ բնակիչ և եկղ. մը:

ԳԻՈՒԿ կամ Գայուկ, խան Թաթարաց, որդի Ուխաթախանի, 1246ին իր հօրը կը յաջորդէ եւ Հայոցմէ հարկ կը պահանջէ:

ԳԻՍ կամ Գիւ վանք, Աղուանից Շաքի գո.ի մէջ կը գտնուի հինաւուրց նշանաւոր վանքս: Ըստ Մովսէս Կաղանկատուացիին, Աղուանից այս առաջին և մայր եկեղեցին հիմնուած է Եղիշէ առաքեալէն: Կառուցուած է Շաքի քաղաքէն վեր, Կովկաս սարի ստորոտը, Գիւ գետակի աջ ափի վրայ: Ս. Մեսրոպ իր աշակերաներով եկած է այս կողմերը, ցարդ ուխտատեղի է ո՛չ միայն Հայոց՝ այլ նաև թուրքացի:

ԳԻՍ գղ. համանուն վանքին կից, բնակիչք՝ մահմետականացած Հայեր են:

ԳԻՍԱԿ, նախնին Դիմակիսեան կամ Դիմակեան տոհմին, ապրած է Քրիստոսի 88 թուին:

ԳԻՍԱԿ Տ. Պեիկեան Առաքել:

ԳԻՏԱԿԱՆ ՇԱՐԺՈՒՄ, «Հանգէս ամսեայ», տնօրէն խմբագրապետ Ն. Տաղաւարեան, տպ. Կ. Պոլիս 1885—1887:

ԳԻՏԱԿԱՆ ՇԱՐԺՈՒՄ, «պարբերագիրք ամերիկահայ գիտական միութեան» տպ. Նիւ Եորք, խմբագրական կազմ՝ զոկո. Մ. Գարակէօղեան (խմբադրապետ) Յովհ. Թորիկեան:

ԳԻՏՈՒԹԻՒՆ. «Տրատարակութիւն Լոզանի հայկական վարժարանի». տպ. Լոզան 1904—5, Պարիս 1908—9. Տնօրէն Մ. Նալբանդեան:



ԳԻՏՈՒԹԻՒՆ ԵՒ ԳԻՏԵԼԻՔ, շրջանական պատկերազարդ ամսագիր», Երև. Անվերս 1928—9. խմբագիր Մ. Տէր Սահակեան: Երկրորդ շրջան՝ Երև. Պրոսվոսաս 1930—1. խմբ. Յ. Գ. Աթանասեան:

ԳԻՐԻՍՏՐԱԿՈՒԹՅՈՒՆ, գր. Աղուանից Հոգի (Նուխի) գու. մէջ. 1900ին 150 Կ. Բն. ունէր, որոնց նախնիք գաղթած են Արցախի Ռաչեն և Վարանդա գաւառներէն: Եկգ. Ս. Աստուածածին՝ շինուած 1881ին:

ԳԻՐԻՒԵՎԱՆ, հայաբնակ գր. Գանձակի Ղազարի գու., 1900ին 500 Բն. ունէր:

ԳԻՐԵՆԶ ԿԱՄ ԿՐԵՆԻ, հին գր. Չորրորդ Հայոց Հայաստանի գու. մէջ:

ԳԻՐ ԵՒ ԱՐՈՒԵՍ, Երկրորդ հայաբնակ պարբերաթերթ. Երև. Գանձակի 1938:

ԳԻՐԿ ԿԱՄ ԳԻՐԲ, հայաբնակ մեծ գր. Շամախու: Ունի քարաշէն Ս. Աստուածածին եկգ. մը և ուսումնարան. 1900ին 250 Կ. Բնակիչ ունէր:

ԳԻՐԿ, հին գր. Սիւնեաց Կովսական գու. մէջ:

ԳԻՐՍ, գր. Պուլանըխի, որուն զիմացը նուազակայ լճի հիւսիսային ափի վրայ կը գտնուի Գրսայ Ս. Յովնանեան անուն աւերակ հին վանք մը, շրջապատուած փոքրիկ անտառով:

ԳԻՐԶՈՒՄՆ ԿԱՄ ԿԻՂՈՒՄՆ, հայաբնակ գր. Շամախու Գիրի գրի մօտ: 1900ին 46 Կ. Բնակիչ ունէր:

ԳԻՐԼԱԳԱՐՍԿ, հայաբնակ գր. Լորի (Գուգարք) գու., 1900ին՝ ունէր 1180 Բնակիչ Ս. Աստուածածին եկեղեցիով: Մօտը բլրակի մը վրայ կը գտնուի Ս. Գէորգ ուխտատեղւոյ մառուար:

ԳԻՐԼԱԳԱՐՍԿ, գր. Խ. Հայաստանի Ստեփանաւանի շրջանին մէջ:

ԳԻՐԼԱԶԵՄՆ ՍՊԱ, ժողովրդական գերատանուհի Երևանի մէջ:

ԳԻՐԼԱՄԵՐՍԿ, գր. Ղազարի Գանձակ գու. Պատիւորի հասարակութեան մէջ: Մօտը կայ Հոսոմաեան անուամբ եկեղեցի, ուր երբեմն կրօնաւորներ բնակած են և այժմ աւերակ է. ըստ ասանդութեան՝ եկեղեցին շինուած է եղբ. Յունաստանէն (751ին) Հայաստան փախչող կրօնաւորներէն:

ԳԻՐԼԱՍՊԵՆՅԵՆ ՉԱՐԽԻԱ ԵՍ. միաբան էջմիածնի ապրած ժ. դարուն մէջ:

ԳԻՐԼԱՓԼՈՒ, մեծ գր. Շուշի գու. մէջ: 1900ին ունէր 1400 Բնակիչ: Գրեղիս մէջ կ'երևին հայկական գերեզմանաց մնացորդներ:

ԳԻՐԼԱՊԵՄՆ ՍԱՄՈՒԿ, տեսուչ Թաւրիզի Արմենի վարժարանի 1874ին և յետոյ 1882ին. ունի նաև հեղինակած գրքեր: (Հայկ Անեմեան):

ԳԻՐԼԻԶՄՆ, գր. Սարմատի, ուր քանի մը տուն Հայ մնացած է. կայ եկեղեցի մը:

ԳԻՐԼԻՍՍՆ, գր. Գանձակի, շրջապատուած լեռներով. առջեւ կը հոսի Խնայ-չայր գետը. ունի աւերակ եւ նոր եկեղեցի մը, որուն մէջ կը պահուի «Մեր-աւետարան» կոչուած հրատարակած ձեռագիր մը նշանաւոր է հին քարաշէն ապարանք մը. 1900ին 350 Բնակիչ ունէր: 4 ժամ հեռու կը գտնուի Գիւլիստանի հին մէլիքներու բերդը:

ԳԻՐԼԻՍՍՆ, այսպէս կը կոչուի ներկայիս Խ. Հայաստանի Իրզուան գր.:

ԳԻՐԼԻՍՍՆԻ ՄԱՀԱԼ, Մէլիք Բէկլարեաններու յատուկ գաւառն կամ մասն. իր անունը ստացեր է համանուն գիւղէն և բերդէն, որ կը կոչուի Թալիսի մահալ, Թալիս գր. անուամբ: Փամանակին կը կազմէր այս երկիրը զօրեղ մէլիքութիւն մը, Մէլիք Բէկլարեաններու իշխանութեան տակ Այս երկիրը լեռնոտ է, հոս կը բարձրանան Ծիւրեփեփե, Գոլ-օղաղ և ուրիշ լեռներ: Վերջին քաղաքական բաժանումով Գիւլիստանի մէկ մասը կ'ընկնայ Գանձակի մէջ:

ԳԻՐԼԻՍՏԻՑ (Վարդալի դաւ), բազմասեան քաղաքով իր զաշտ Սիւնեաց Վայոց ձոր գու. մէջ, ուր կան վանքեր, մատուռներ, խաչարձաններ:

ԳԻՐԼԻՍՏԻՑ ԿՈՒՄԻՍ:

ԳԻՐԼԻՍՏԻՑԻ ԿԱՄ ԿԻՂԻՍԵՆ, հայաբնակ գր. Լեւինականի գու. Մեծ Գարաղիլիսէ վիճակին մէջ. 1900ին 100 Բն. ունէր: Տե՛ս ԿԻՂԻՍԵՆ:

ԳԻՐԼԵՄՆԳԱՆԵՄՆ ԱՐԱՅԱՄ, Կ. ՅԱՆԵԼՈՒՄՆԵՐ ԳԻՐԼՏԵՐՎԻՇ Կ. ՂԻՂ ՏԵՐԻՍԵ:

ԳԻՐԼՈՒՍԻ, Կ. Չորս բերան:

ԳՅՈՒՂՈՒՐՄՆԱՎՈՐ Կ. Գիւղ. Բանվոր:

ԳԻՐԼԱՏՆՏԵՄ, երկչարաթաթերթ Երև. Թիֆլիս 1909—1917. խմբագիր հրատարակիչ՝ Ալոս Աթանասեան:

ԳԻՐԼԱՏՆՏԵՄ, պատկերազարդ ամսաթերթ. Երև. Կ. Պոլիս 1913—16. խմբագիր հրատարակիչ՝ Յ(ովսէփ) Միրզոյեան:

ԳԻՐԼԱՏՆՏԵՄՍՍՐԵՅՈՅՅ, տարեգիր, Երև. Կ. Պոլիս 1914. խմբագիր-տնօրէն Հ. Արամեան:

ԳԻՐԼԱՏՆՏԵՄՍՍՍՐԵՅՈՅՅԻ ԲԱՏՎՈՐ (ԲԱՏՎԱԿ), «Որգան Հայաստանի Գյուղանտառ Միութեան Հանրապետական Կոմիտէի (Իրկոբեա)», Երևան 1931, պատ. խմբ. Ա. Պետրոսեան:

ԳԻՐԼԱՏՆՏԵՄՍՍՍՐԵՅՈՅՅԻ ԲՅՈՒԼԵՏԻՆ, Երև. Երևան 1923—1925:

ԳԻՐԼԱՏՆՏԵՄՍՍՍՐԵՅՈՅՅԻ ԿԵՄՆԵՐ, երկչարաթաթերթ, «Որգան ՀՍԽՀ Հողագործութեան Ժողովրդ. Կոմիտարիատի Բամբակագործ. Կոմիտէի» Երև. Երև.



րեւան 1922—29. խմբագրական կոլլեգիա. պատ. խմբագիր՝ Արամայիս Երզնկեան ապա Շաղուհն:

ԳԻԻՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՆԴԻՍ, «գիտական ուսումնասիրական օրգան՝ Գիւղատնտեսական եւ Պետական Գոյքերի Մինիստրութեան Գիւղատնտեսական Բաժանմունքի»։ տպ. Երեւան 1920:

ԳԻԻՂԱՐՔՈՒՆԻ, ա՛յլ կերպ գրութիւն Գեղարուցի գ.ի:

ԳԻԻՂԱՅԻԱԿԱՆ ԿՈՄՈՒՆԱ, «օրգան Ղարաբաղի եւ Զանգեզուրի գիւղացիական առաջին ինդերնացիոնալ համագումարի» (հայ, ուսւ եւ թուրք լեզուներով)։ տպ. Շուշի 1920:

ԳԻԻՂԱՅԻ ԿՈՄՈՒՆԻՍՏ «Որգան Հ. Կ. (Ր) Կ. Կենդ. յեվ Յերեվանի Կոմիտեաների»։ տպ. Երեւան 1924. խմբագրական կոլլեգիա, պատասխանատու խմբագիր Մ. Չոլախեան:

ԳԻԻՂԱՅԻԱԿԱՆ ՄԻՈՒԹԻՒՆ, «Շիրակի Գիւղացիական Միութեան Օրգան, հասարակական, գրական, քաղաքական եւ կօօպերատիւ շարաթաթերթ»։ տպ. Ալեքսանդրապոլ 1919. խմբագրական կոլլեգիա:

ԳԻԻՂԱՅՈՒ ՉԱՅՆ, «օրգան Հայաստանի աշխատաւոր գիւղացիական միութիւններ-հասարակական շարաթաթերթ»։ տպ. Երեւան 1920, խմբագրական Մարմին (Դրասդամատ Տէր Սիմոնեան)։

ԳԻԻՂԳՐՈՂ, «Որգան Նոր Բայազիտի Գյուղացիական Գրողների Միութեան»։ տպ. Նոր Բայազիտ 1925: խմբագրական կոլլեգիա:

ԳԻԻՂԻ ԿՈՄՈՒՆԻՍՏ, «Որգան ՀԿԿ (Ր) Կենդրոնական յեվ Յերեվանի Կոմիտեաների» (ամսագիր)։ տպ. Երեւան 1929—30. խմբագրական կոլլեգիա, Ամատուհի, Հ. (Յ.) Բարյուհեան եւ Հ. (Յ.) Մկրտիչեան: Պատասխանատու խմբագիր Մ. Չոլախեան:

ԳԻԻՂԻԿ, կը յիշուի գիւղս Վասպուրականի ծուռալ գ.ի մէջ:

ԳԻԻՂԻՎԱՆՅ, գեա, կը յիշուի Վրասն Ո՛ր գ.ի մէջ գտնուելը անյայտ:


ԳԻԻՄԲԱ, հանգրուան մը որ կը յիշուի Ծղուկ գ.ի մէջ:

ԳԻԻՄԲԷԹ կամ Գումբէք, ամայի գղ. Այրարատայ Վանանդ գ.ի. ունի հին եկեղեցի մը, որուն գմբէթը ինկած է: — Այս անուամբ այլազգարնակ գիւղ մ'ալ կայ Կարին:

ԳԻԻՄԻՆՇԱՆՆԷ կամ Կիւմիւսեանեք (Արմաբեայ քաղաք), քաղաք Տրապիզոնի կուսակալութեան եւ առաջնորդութեան ներքե համանուն գ.ին մէջ, կը գտնուի Տրապիզոնի եւ Կարինի ճամբուն վրայ 1900ին ունէր մօտաւորապէս 600 տ. բն.

որոնց 200ը Հայոց. եկղ. Ս. Աստուածածին, բաւական մեծ եւ գեղեցիկ, զոր կառուցած է Յարութիւն աղա Խարայէլեան, որ բացի ամէն տեսակ աշխատութենէ 3—400 լիրա ալ նուիրած է եկեղեցւոյն շինութեան ժամանակ. ինչպէս կը վկայեն Ս. Փրկիչ վանքին յիշատակարանք եւ արձանադրութիւնք: Հայերը ունին Մեսրոպեան անուամբ երկսեռ վարժարան մը: Հոս ծնած է Վենետիկի Միսիթարեան անուանի Հ. Մանուէլ վ. Ջախջախեան:

Գիւմիշխանէէն գրեթէ մէկ ժամ հեռու կը գտնուի Հայոց Ս. Փրկիչ կամ Ամենափրկիչ վանքը. գեղեցիկ ձորակի մը մէջ. չըջապատուած գե-



Գիւմիւսեանեքի Ս. Փրկիչ վանքը

ղեցիկ բլուրներով եւ անտառներով: Ս. տաճարը փոքր, սիրուն եւ վայելուչ շէնք մըն է. կառուցուած խիստ հին աւերակաց վրայ: Տաճարի մօտ կառուցուած են զանազան շինութիւններ եւ մօտ 20 սենեակ ուխտաւորաց համար որոնք ընդհանրապէս կու գան Բարերգի թեմերէն Վանքս բաւական հարուստ էր. ունէր անօթներ եւ եկեղեցական շարճեր:

ԳԻԻՄՈՒՐՈՒՍ, հայարնակ գղ. Գուգարաց Ախալքալաք գ.ի, 1900ին ունէր 1200 բնակիչ: ուսումնարանով եւ եկեղեցիով: Նշանաւոր է հին աւերակ եկեղեցին, սեւ եւ կարմիր սրբատաշ քարերով: Ներքին ձեւը նման է Անուոյ Ս. Փրկչին, բայց անկէ անհամեմատ մեծ, արտաքինն ալ նման է Անիի կաթողիկէին: Գիւղիս այժմեան բնակիչք՝ Հայք, հին եկեղեցւոյն մէկ խորշին մէջ շինած են իրենց աղօթատեղին Վրացոց իշխանութեան ժամանակ նշանաւոր եպիսկոպոսանիստ տեղ էր Գիւմուրտա: (Էփրիկ. «Բնագ.»):

ԳԻԻՄՐԻ, լեռ Վանանդ գ.ի մէջ, բարձր է 2850 մէզր:



ԳԻԻՄԲԻ s. Լեւնիցական:

ԳԻԻՆԵԼԻ կամ Կիւնեի վանք, սա է հին կնե-վանքը, որ կը գտնուի Սիւնեաց Վայոց ձոր գո.ի մէջ: Ստեփ. Օրպէլեան պատմիչին գրածին համեմատ՝ ժամանակաւ այստեղ խաղացող եղներ արածող պատանիներ կնիւ մը կտրելով խաչ կը շինեն և քարի վրայ մը դնելով կ'երկրպագեն:

Յետոյ Սիւնեաց իշխանք հոս եկեղեցի և վանք կը շինեն և կնիւ փայտէ խաչին պատճառաւ Կիւնեի վանք կը կոչուի Վանքս տակաւին կը մնայ լքեալ և ամառի վիճակի մէջ: Եկեղեցին սագաշէն է, կառուցուած կոփածոյ քարերով: Հիւսիսային որմոյն վրայ կը տեսնուի կիսեղծ արձանագրու-



Գիւնեի վանքի աւերակները թիւն մը, յորմէ կը տեղեկանանք, թէ Տարսայիճ իշխանը նուիրեր է Ս. Գրիգորի Խոսրովի աշակին:

Այս արձանագրութենէն կը յայտնուի նաեւ, թէ վանացս եկեղեցին կը կոչուէր Ս. Գրիգոր, որ կը հաստատուի հարաւային որմոյն վրայ գրուած «նորոգեցաւ Ս. Գրիգոր» արձանագրութենէն: Վանքս շրջապատուած է փոքր հասարակ քարերով շինուած պարսպով, այժմ կիսակործան: Վանքիս արեւելակողմը կան դամբարաններ. մին Սերովբէ անուամբ եպիսկոպոսի մը՝ հանդերձ օձանիչ գաւազանի քանդակով: Ուրիշ մը ունի ՉՀԻ (=1323) թուականաւ արձանագրութիւն: Եկեղեցւոյն արեւմտեան դրան վրայ կայ 1524 թուականաւ և արձանագրութեամբ խաչարձան մը, զոր անշուշտ վերջը գրած են: Միարաններու սենեակները պարսպին մէջ ըլլալու են, որոնց հետքերը չեն երևիր, ծածկուած ըլլալով փլատակաց տակ: (Էփրիկեան՝ «Բնագիտութիւն» քաղուած Հ. Ալիւսանի «Սիսական»էն):

ԳԻԻՆԵԼԻՑ-ՃԱՐՏԱՐ կամ Կիւնի Գարսար, գղ. Արցախու վարանդա գո.ի մէջ, զիւղիս տունները սփռուած են Ղալին-Պոսթ լեռան լանջերուն վրայ. ունի Ամենափրկիչ անուամբ քարուկիր եկղ. մը և Գրիգորեան անուամբ դպրոց մը: 1900ին 2000 բն. ունէր դաղթած իրանիէն, Չարտախուէն, Ազուլիսէն: Մօտը Կոնակ անուամբ ուխտառեղի մը կայ: (Բարխուդարեանց՝ «Արցախ» 117—8):

ԳԻՆԵԼԻՑ կամ Կիւնեի, Թուրքերը այսպէս կը կոչեն Սիւնեաց Արեգունի վիճակը:

ԳԻԻՏ, կաթողիկոս, աշակերտ Սրբոյ Սահակայ և Մեսրոպայ, ծնած շուրջ 395ին՝ Հայոց Արահեղ զիւղին մէջ: Մովսէս Ա. կթղ.ի մահէն ետք 465ին զինքը բարձրացուցին կաթողիկոսական աթոռին վրայ: Գիւտ քաջ տեղեակ էր յունական դպրութեան ուսած ըլլալով Բիւզանդիոնի մէջ. սա հայ եկեղեցւոյ ժամերգութեան ու եկեղեցական պաշտամանց մէջ շատ մը կարգադրութիւններ մտցուց և փայլեցաւ իբրև լուսապայծառ ջահ մը. ինչպէս կը վկայեն իր ժամանակի պատմիչները: Սակայն շատեր փոխանակ լուսաւորուելու այս գիտնական կաթողիկոսէն՝ ուրացողներու հետ միացան և իրեն դէմ դարաններ լարեցին, երբ մանաւանդ յայտնապէս սկսաւ խօսքով ու գրով յանդիմանել ուրացողները: Այդ պատենի ուրացողներու կարգին երկրորդ Վասակն էր Գաղիշոյ Մաղխազ Խորխոռունի, որ պարսից Պերոզ թագաւորին երթալով ամբաստանեց Գիւտ կաթողիկոսը: Պերոզ զայրացած հրամայեց Գիւտին իրեն երթալ: Երբ Պերոզ նզատ Վչնասպի միջոցաւ Գաղիշոյէն լսած ամբաստանութիւնները հաղորդեց հայրապետին՝ վերջինս քաջաբար պատասխանելով ըսաւ. — «Ատոնց մէջ բաներ կան որ ճշմարիտ են և բաներ կան որ սուտ են: Ընչ ա է որ քրիստոնէութիւնը կը սիրեմ, զի ի մանկութենէ քրիստոնեայ եմ»:

Պերոզ ստիպեց Գիւտը որ արեգական երկրպագէ, հակառակ պարագային զինքը կաթողիկոսական գահէն վար պիտի առնէ:

Հայրապետը պատասխանեց — Ուրախ պիտի ըլլամ եթէ կաթողիկոսութենէն զիս ազատ կացուցանէք, որովհետև պիտի կարենամ աղօթքով պարապիլ:

Պերոզ զայրացած Գիւտը գահընկէց ըրաւ 475ին և կաթողիկոսական աթոռին վրայ դրաւ Քրիստափոր Ա. Արծրունին:

Գիւտ երկու տարի ևս պպրելով ի Տէր հանգեաւ 671ին և թաղուեցաւ Վանանդ գո.ի Որմուս աւանին մէջ:

Գիւտ իբրև մատենագիր գրած է մի քանի թուղթեր՝ զանազաններու ուղղուած: «Իր առ Դաւիթ գրած թուղթը նոյնագրութեան (tautogramme) հին նմոյշ մը կը բերէ մեզի, իսկ առ Վաչէ (թագաւոր Աղուանից) գրածը նմանութիւններու և ուրուցիկ ոճի օրինակ մը կրնայ ըլլալ» կ'ըսէ Դուրեան (Պատմ. Հայ Մատենագրութեան, էջ 100):

ԳԻԻՏ Շաբիթեան, իշխան Գողթնի, որուն նախ-



կին անուշը Վասակ էր. ապրած է Ե. զարու սկիզբները (Տես Գիւլայ վանք):

ԳԻԻՏ եպիսկոպոս, այս անունով ծանօթ է էջմիածնայ միաբան Տէր Ղազարեան Գիւլայ եպիսկոպոսը: Ծնած է Թիֆլիս 1880ին, նախկին անունն էր Իսահակ. աշակերտած է Գէորգեան ձեմարանին, 1916ին վարդապետ ձեռնադրուած, եւ 1922ին՝ եպիսկոպոս:

Բարձրագոյն կրթութեան հետեւած է Մոսկուա և Գերմանիա: Տակաւին աշխարհական՝ ուսուցչութիւն ըրած է Շուշիի Թեմական դպրոցին մէջ, 1908էն յետոյ. ժամանակ մը անօրէնի պաշտօն վարած նոյն քաղաքի օրիորդաց Մարիամեան վարժարանին մէջ: Ուսուցչական պաշտօն վարած է նաև Բագու, Արմաիր և Ախալքալաք:

Վերջապէս, մին է եղած Մայր-Աթոռոյ այն միաբաններէն որոնք համալսարանական ուսում են ստացած: Իբր գրաւոր երկ, բացի Թիֆլիսի Հովիւ կամ Հովիս կղերաթերթին աշխատակցութենէն, գրեանք միայն Սեւանի անապատին վրայ գրուած համառօտ ուսումնասիրութիւն մը, հրատարակուած Հանդէս Ամսօրեայի մէջ (1928 տարի՝ էջք 51, 168 և 504, 1929 տարի՝ էջք 48, 234, 289, 384):

Իր աչքառու գործն է Արեւելեան Անապասականը եւ Նարեկը, տպ. 1937ին Երուսաղէմայ Ս. Յակոբայ վանքին մէջ, 234 էջերով:

Ասոնցմէ զատ ունեցած է անտիպ գործ մը Ռուսաւայ եկեղեցին, 1892—1920 ընդհանուր վերնազրին տակ, երեք մասերէ բաղկացած ուսումնասիրութիւն մը (որուն բովանդակութիւնը տես «Արեւելեան Անապասականը» սկիզբը): 1920ին էջմիածին շարաթաթերթը խմբագրած է: Գիւլայ եպիսկոպոս վախճանեցաւ 1928ին: (Կենսագրականը Բաղուած է «Արեւելեան Անապասական» են):

ԳԻԻՏԱՅ ՎԱՆՔ, կը կարծուի թէ վանքս Սիւնեաց Բաղք գո.ի մէջ կը գտնուի, և կոչուած է Գողթան գու.ի իշխան Շարթիթի Գիւլայ որդւոյն անուամբ:

Այս Գիւլայ կանխաւ Վասակ կը կոչուէր, եւ ժառանգութեան համար իր Շապուհ եղբայրը վերաւորելէ ետք՝ զգլացած փախած էր ուխտելով որ եթէ իր եղբայրը մահէն ազատի՝ ինքը իր երկիրները եղբորը տալով կրօնաւոր պիտի դառնայ: Այդպէս ալ եղաւ և ընակեցաւ Բաղսց կողմերը: Անգամ մը պարսից արքայորդին որսի ելած ատեն հանդիպելով Գիւլայ՝ կը սքանչանայ անոր վրայ՝ որ արջերու մէջ կենալով՝ անոնց վերքերը կը բժշկէր: Ինքն ալ հաւատալով ի Քրիստոս և մկրտ-

ուելով ի կոչուեցաւ Քրիստոսասէր, և շատ արծաթ բերելով «շինեցին և ժողովեցին եղբարս բազումս», և պարսից թագաւորէն՝ ի սէր որդւոյն զրկուած հաղար գործաւորաց աշխատութեամբ սոյն տեղը շինեցին Ա.Երրորդութիւն անուամբ եկղ.մը: Այս համար աւել կողմ տարածուեցաւ, և վանքս շուտով լեցուեցաւ բազմաթիւ եղբայրներով: Վանքիս մէջ կային 200 եղբարք և 300 ալ մերձակայ քարանձաւներու, անտաններու և անապատներու մէջ: Յետոյ Գիւլայ ինքզինքը յայտնեց իր ընտանիքին և բժշկեց կուրացած մայրը. և Գողթան եպիսկոպոսը հրաւիրելով՝ անոր յանձնեց եկեղեցին: Կը պատմուի զարձեալ, թէ Քրիստոսասէրի եղբայրն ալ փեսայանալով Աղուանից Վաչագան թագաւորի՝ բերդ մը շինեց է նոյն կողմերը վանականները պահպանելու համար: Վանքիս հինգ զիւղ նուիրած էին. ունէր նաև 1000 արջառ, 1400 ոչխար, 700 ուղտ, 800 ձի, 400 եղ և 700 այգեգործ: Այս պատմութիւնը թողած է Գիւլայ վանքին Յովհաննէս միաբանը, որ յատկապէս եկեղեցապան կոչուած է: Տարիներ վերջ, պարսից թգին որդին կամ թողը զօրքեր զրկելով աւերեր է, կ'ըսեն, վանքս և եկեղեցին, կրօնաւորներէն շատերն ալ կ'ոտորելով: Սակայն մնացած կրօնաւորները կառուցած են ուրիշ մը աւելի վայելուչ, ուր ժողովուած են 600 հոգի: Հայր Գիւլայ 84 տարու, Քրիստոսասէրի հետ կը նահատակուի անօրէններէ: Գիւլայ եկեղեցւոյն մէջ կը թաղուի Այս վանքին մէջ կրթուած էր Նրիցակ, որ շինած է Երիցու վանքը՝ և Սիւնեաց եպ. եղած: Կարծողներ կան թէ Գիւլայ վանքը նոյն է Աղուանից Գայ կամ Գշայ վանք ըսուածին հետ: (Էփրիկեան՝ «Բնաճխարհիկ», Բագուած Հ. Ալիսանի «Սիսական» են):

ԳԻԻՏՆԱՆ (Բիւքեան) Պետիկ, օրէնսդէք, ծնած Պարթիզակ, ուր նախնական կրթութիւնը կը ստանայ ազգ. վարժարանի մէջ, ապա Իզմիտի իրատէն աւարտելով Պոլիս կ'անցնի և օրէնագիտութեան կը հետևի շնորհիւ իր մօրեղբոր Եր. Տէր Անդրէասեանի Ա. կարգի վկայականով համալսարանը աւարտելէ ետք թուրք թերթերու մէջ Ֆրանսերէնի իբր թարգմանիչ պաշտօններ կը վարէ:

Պատերազմի առաջին տարին կը յաջողի զբաղընելի ըլլալ՝ զինուորական ծառայութեան փոխարէն. միեւնոյն ատեն աշխատակցելով հայատառ թրքարարառ ձերթի Եարֆի և Թերնիման թերթերուն:

1908ին Օսմ. Սահմանադրութեան հռչակումէն



հաք Պայխար օրաթերթը խմբագրեց, որ կարճ կեանք ունեցաւ:

Հնչակեան կուսակցութեան հասցէին Պոլսոյ թղթատունը եկած վտանգաւոր գրութիւն մը անհետացնելու վայրկեանին բռնուելով՝ իրրպարզ ղինուոր բանակ կ'ուղարկուի Տարի մը հազիւ ղինուորութիւն ըրած կը վերադառնայ փրկագինը հաաուցանելով և Թէրնիմանի խմբագրատունը պաշտօն կը վարէ: Լրատուութեամբ կը ձերբակալուի և կը ղրկուի Մէսկէնէէն անգին՝ Նարտէպ գիւղը, ուր կը մեռնի ժանտատենդէ (Յ. Յ.):

ԳԻԻՏԻ կամ ԳՏԿՈՅ ՎԱՆՔ, այս անուամբ վանք մը կը յիշուի Այրարատայ Դարեղենք գո.ի մէջ ըստ Յայսմաուուրէի մը, ուր գրուած է. «Յեազատնելոյ զմարմին սրբոյն Վարոսի, որպէս զսուրբն կոչեցին Գիւա, նոյնպէս և յայն անուն զմե՛նաստանն: Այլև զտեղի նորա շինեցին վանք, որ մինչև ցայսօր կոչի Գիւսի վանք»: Այս վանքը շինած է Կամսարական Դաւիթ իշխանը, և Բագրեւանդայ Հեզ գիւղը, հաստատուն գրով սեփականած է վանքին: Նորանոր տեղեկութիւններ կարևոր են վանքիս նկատմամբ:


ԳԻԻՐԼԿԵԱՆ Սիմոն իրանահայ, Տ. ՅԱԻԵԼՈՒ ԱԾՐ ԳԻԻՐՋԵԱՆ Գարբիէլ, նկարիչ Խ. Հայաստանի, ծնած է Արղուին 1892ին. 1920ին կ'աւարտէ Պէնզայի գեղարուեստական դպրոցը: 1922ին Երևան կ'անցնի ու նկարչական դպրոցի ուսուցիչ կ'անուանուի: («Անահիտ» 1920 թ. 2 եջ 24):

ԳԻԻՐՋԵԱՆ Յակոբ, Արձանագործ: Ծնած է Շուշի 1883ին: Մոսկուայի միջնակարգ դպրոցը աւարտելէ հաք ղինուորական ծառայութիւնն ալ կը կատարէ և բժշկութեան կը հետևի: 1905ի Ոչնչական Յեղափոխութիւնը տակն ու վրայ կ'ընէ իր ծրագիրը: Համալսարանը կը փակուի ու Գիւրջեան 1907ին Բարիզ կ'երթայ ուսումը շարունակելու, ո՛չ սակայն իրր բժշկական ուսանող, այլ իրր արձանագործ և Ժիւլիան ակադեմիոյ մէջ կը մտնէ: ուր կ'աշխատի օգտուելով Վեռլէ և Լանտովքի արձանագործներէն: Գործեր կը ցուցադրէ, ապսպրանքներ կը սաանայ, իր տաղանդը կը գնահատուի Բայց պատերազմը կը ծագի, կը ղինուորագրուի ի Ռուսիա, ուր կը մասնակցի Չարական բանակներու յաղթանակներուն և ձախողանքներուն: Յետոյ Յեղափոխութիւնն է, և ահա կեանք մը դաժան, ահուելի և երբեմն յուսահատ ոգորումներով: Սոյն կեանքը տեեց 4տարի, մինչև այն օրը երբ, 1921ին արտօնուեցաւ Բարիզ երթալ: — «Այս արձանագործին տաղանդը կը գրէ Մոռիս Ֆէօլիէ Քրանսացին, նման իր արկածալից կենցաղին, լի

է պէսպիսութեամբ և անակնկայներով: Կարելի է ըսել թէ իր գործը կը բաժնուի երկու մասի, — ներկայացում մարդկային էակին, և զարդարական յորինում, բայց փոխանակ բաժնելու՝ ինքը կը միաւորէ զանոնք, և այս կերպով ձեռք կը բերէ էապէս քանդակական լուծում մը իր հարթելիք խընդիւններուն համար: Իր Օրհասական Յիսուսը՝ յիշակերտային և զարդարական համադրութեան մը մէջ՝ գործ մըն է մեծ զգացումի: Այդ գլուխը որ կը հակի, և փոսացեալ ականդիքով կրողաց բերնով հիւծած այդ զէմքը կ'արտայայտեն անհուն տառապանք և վիշտ. անոր մէջ կը գուշակուի Ֆիլիքական ընկճումը մարմնի մը որ կը կքի ու կը ձգտուի դժնդակ ոգեվարի մը հուսկ բոպէներուն: Նմանօրինակ արդիւնք մը ձեռք բերելու համար, արուեստագէտը զէպի խարխիւր կ'ուղղէ ընդհանուր գիծերը, անոնց տալով ձեւ եռանկեան մը՝ որուն սուր ծայրը զէպի ներս դարձած է: Ուղղադատ զարդարուե՛ստն է այս, եւ լաւագոյնը՝ նոյն կողմնակալութիւնն այն արձանիկներուն համար՝ ուր Գիւրջեան, հին յոյն մարմնաձևիչներու պէս, իրականին վրայէն, ամենասիրուն կեցուածքներով ճըշգըրտօրէն կը նմանցընէ կանացի զէմքեր՝ Ֆրանսական թէ օտար ընտրանիէն: Հոֆառ սր Թիւրքօ կոմսունիին պզտիկցուած քանդակապատկերին մէջ, օրինակի համար, ա՛յնքան նուրբ, անխլթական ու գանգրագեղ վարսակոյտովը նէ կը նմանի եգիպտական վաղեմի արքայացեղի մը մէկ իշխանու հուշ, և միեւնոյն երկարաձիգ և



ԳԻԻՐՋԵԱՆ ՅԱԿՈՅ



Օրհասական Յիսուսը

մէջ, օրինակի համար, ա՛յնքան նուրբ, անխլթական ու գանգրագեղ վարսակոյտովը նէ կը նմանի եգիպտական վաղեմի արքայացեղի մը մէկ իշխանու հուշ, և միեւնոյն երկարաձիգ և



ուանկիւնը կը մեկնի ուսերէն՝ աւարտելու համար ուսարուին ծայրը, մեծավայելուչ տեսք մ'ընծայելով ամբողջութեան, հակառակ զառքայի մը



(լայնածաւալ շքեղազգեստ) որ կրնար ծանրարեանել զայն»։ (Թեոդիկ՝ Ամենուն Տարեցոյց»ը 1926 էջ 519)։

Գիւրջեանի հրաշակերտները կը համարուին նաև Թոյստոյի, Մաքսիմ Կորքիի և տիկնոջ, Թատերերգակ Սուրկուչօֆի, հրաժշտազէտ Քուսէվիցքիի, Շիրվանզատէի արձանները։

Մասնակցած է Բարիդի, Լոնտոնի և Էտինպուրկի ցուցահանդէսներուն։ Այժմ

Հոֆաւ սը Թիւոքօ կոմսուկին Խ. Հայաստան կը գտնուի (Յ. Յ.)։

- ԳԼԱԴՍՕՆ Տ. Կլասսոն։
- ԳԼԱԿԱՅ ՎԱՆՔ, Տ. Կարապետ (Ս.)։
- ԳԼԱԿ Զեմոբ Տ. Զեմոբ Գլակ։
- ԳԼԱՍԱԿ, գղ. յիշուած վրացի պատմիչ վախուշաէն, կը գտնուի Շուլավէրի ձոր գո.ին մէջ։
- ԳԼԱՁՈՐ Տ. Գայլեմոն և Առաքելոց վանք։
- ԳԼԱՆ, յարաթաթերթ տպ. Սոֆիա 1927ին։
- ԳԼԱՎՈՒԶ Թէֆէ, լեռնարուր Շիրակ գո.ի արեւելեան մասին մէջ։
- ԳԼԴԵՔԱՐ, լեռ եւ բերդ Մանգլիացիորի մէջ։
- ԳԼԷՊՆԱ, գղ. Իրագի, ուր քանի մը տուն Հայեր կ'ապրին։ (Հայ Մամուլ ք. 101)։
- ԳԼԷՍՈՐ, սակաւարնակ Հայոց գիւղ Շատախու։
- ԳԼԸՃԵԱՆ Եղուարդ.

բժիշկ որդի Կեսարացի Յարութիւն Գլըճեանի, Բարիդի բժշկական համալսարանէն 1925 Փետր.ին վկայուած, ներկայիս (1938) Գահրէի մէջ կը գործէ իբր մասնագէտ բժիշկ ներքին հիւանդութեանց։ (Ալպոյանեան՝ Հայ Կեսարիա» 2304)։



ԳԼԸՃԵԱՆ Գրիգոր Տ. Հայկազուն Պարոյր։

ԳԼԸՃԵԱՆ Յարութիւն, քեռորդի Ազգ. բարերար Մելքոնեան եղբարց Գրիգորի և Կարապետի, հայր Տոքթ. Եղուարդի, Կեսարացի, մեռած 1925ին։

ԳԼԸՃԵԱՆ Սեդրակ, արուեստագէտ, ծնած է Մարզուան 1867ին, նախնական կրթութիւնը ստացած է տեղւոյն Սահակեան դպրոցը, ապա կը մտնէ ատաղձագործի մը քով ուր կը սորվի փայտէ. փղոսկրէ և սատափէ մոզայիքներ շինել, 1893ին կ'անցնի Նիւ Եորք։

ԳԼԸՃԸԼ, գղ. Այրարատայ ճակատք գո.ի Տէրէքէնդ վիճակի մէջ։

ԳԼԸՃԸԼ, այլազգարնակ գիւղ Սիւնեաց վայոցձոր գո.ի մէջ։

ԳԼԸՃԿԵՏԻԿ կամ Ղլին Կեսուկ, կիրճ Այրարատայ Բագրեւանդ գո.ի, Բրձօի կրճի արեւլակողմը և Ալաշկերտի դաշտի ուղղակի հարաւակողմը։

ԳԼԻԶՆԱՁՈՐ, աւերակ գիւղատեղի Հաղարատայ (Գուգարք) մօտ, ձորադաշտի մը մէջ, անուսկը նշանակէ գլի կամ գլորեցի զնա ձոր։ Մեծն վարդան Պարսից դէմ պատերազմելու գացած ատեն այս տեղ իջեաներ է և իր յիշատակին Ս. Ըսահասակ խաչքարը կանգնեցնեց և նահատակութեանէն ետք։

ԳԼԻԶՈՐ Տ. Գայլիմոն։

ԳԼԽՈՅ ՎԱՆՔ, կը կարծուի թէ վանքս Աղուանից կողմերը կը գտնուի, որուն համար վարդան պատմիչ կը գրէ. «Եւ եկեալ Իօրայէլ (ոմն) հրամանաւ վարադարդատայ Աղուանից իշխանի, եւ խնդրեալ զճնոտ Լուսաւորչին, տարեալ եղ ի Գլխոյ վանս կոչեցեալ տեղւոյ»։

ԳԼԽՈՆՅ, գղ. Բարերդի, այժմ թրքարնակ։ Մօտը ապառաժուտ լեռանց գլուխը Ս. Լուսաւորիչ անուամբ կիսակործան չէնք մը կայ, լեռան տափարակ դաշտավայրին վրայ ուրիշ եկեղեցի մ'ալ կայ, որ կը կարծուի, թէ համանուն վանք մըն էր ժամանակին։

ԳԼԽՏԵՂ, գղ. Սերաստիոյ, ուր նահատակուեր է Սեւերիանոս Սերաստացին։

ԳԼՀՈՒԿ Տ. Գեյիօֆ։

ԳԼՈՍԻՈՍ բրոֆ. Դորպատի համալսարանի, աոր կ'ուղղէ Յովհ. կթղ. բստ Մ. վ.ի յօղուածին (Արարտս ամսագիր 1901 էջ 392)։

ԳՂԱԿ կամ Գլակ, նահապետ Հայկազն, 1227-1197 (ն. ք. Բ.)։

ԳՂԵՐԻԿՈՍ Տ. Երկուց Բիւրոց։

ԳՂԻԹՈՏ, հին գղ. Սիւնեաց Ծղուկ գո.ի։

ԳՅՈՒԼՅԵԱՆ (Գեօրգեան), խմբագիր 1929ին Ղարաքիլիսէ հրատարակուած Ուզնայ հնգօրեայ թերթի։

ԳՄԲԷԹ կամ Գիւմպիք, գետակ և գիւղ վանանդ գո.ի Տե'ս Գումբէք։



ԳՆԱԿԵԱՆ Կ. Ս. Տոքթ. 1902ին Կ. Պոլսոյ մէջ հրատարակած է բժշկական գրքոյկ մը:

ԳՆԱՃԵԱՆ Կարապետ, բժիշկ Նիւ Եորքի մէջ, ծնած է Ռեքթա 1843ին, բժիշկ վկայուած է Նիւ Եորքի մէջ 1880ին և երկար տարիներ Կիլիկիոյ մէջ բժշկութիւն ընելէ ետք կը վախճանի 1910ին:

ԳՆԱՃԵԱՆ Մ. Յ. հրատարակած է 1920ին—1928ին քանի մը գրքեր Յրէզնոյի մէջ (Ամերիկա):

ԳՆԱՃԵԱՆ Յարութիւն, Կեսարացի, 1894ին Պոլիս գաղթած և իրրև վաճառական փայլած է 1880ական թուականներէն ետք: 1895ին իր ծախքով նորոգած է Կէտիկ Փաշայէ Ս. Յովն. Աւետարանիչ եկեղեցին, ուր թաղուած է ինք այդ տարին: Իր գործը շարունակած են երկու որդիքը Վահան (ի Մանչէսթըր), Սարգիս ի Կ. Պոլիս:


ԳՆԱՃԵԱՆ Սարգիս, որդի Յարութիւնի, ծնած է Օրթագիւղ (Պոլիս). Յ. Գուրգէնի Հայկական կրթարանէն չրջանաւարտ եղած է և Քաղ. Ժողովոյ անդամ ընտրուած է 1912—17:

ԳՆԴԱՇԷՆ, հին գղ. Սիւնեաց Ծղուկ գւ. ի մէջ:

ԳՆԴԵՎԱՆԻՔ, գղ. և վանք Սիւնեաց Վայոցձոր գւ. ի մէջ, Արփա գետին ձախակողմը, գեղեցկադիր և ջրարբի բարձրութեան մը վրայ: Պատմութեան մէջ ծանօթ է նաև Գնդեվանս անուամբ, վերջին դարերու մէջ ոսմիկներէն ծեփուելով կոչուեր է Գնդեվաս կամ Գնդեվազ: Գիւղս Սիւնեաց եկեղեցւոյ հարկատուներու հին ցուցակին համեմատ, որովհետև 10 բնահարկ կու տար, յայտնի է թէ բաւական ընդարձակ և բազմամարդ բլլալու էր այդ առան: 1900ին 307 հայ և 127 թաթար կը բնակէին: Հիւսիսային կողմը կ'երևի բերդի աւերակները, արեւելակողմը՝ հին գերեզմանատուն և խաչքարեր. գիւղին մէջ անտաշ քարերով եկղ. մը կայ, որուն շինողն եղած է Պետրոս վրդ. և եկեղեցին նուիրած է Ս. Աստուածամանի:

Գնդեվանից չքնաղակերտ եկեղեցին կը գտնուի գիւղէն քիչ մը հեռու հարաւային կողմը: Ստեփանոս Օրբելեան պատմիչի գրածին համեմատ վանքս շինած է Սիւնեաց Սմբատ իշխանի տիկինը Սուփիա, որ դուստրն էր Դերենիկ Արծրունւոյ. որ 936 թուականին կամ քիչ առաջ այս խորածոր վայրը ուխտի եկած էր, ուր ի հնուց մենաստան մը կար: Տեսիլք մը կը տեսնէ Սուփիա, և ասոր վրայ քաջ արուեստաւորներ և քարտաշներ ըրելով տալով փառաւոր եկեղեցիս շինել

կու տայ և կրօնաւորներ ըրելով տալով հոս կը բնակեցնէ: Պատմիչը կը յիշէ վանացս երէց ոմն Հ. Սարգիս և զործակալ Եղիշա երէց նկարիչ: Վանականներէն ճգնութեամբ փայլող կը յիշուի Սուփան Գնդունի: Եկեղեցին նկարելէ ետք մեծանանդէս նաւակառիք կատարելով, եկեղեցին կը կը կոչեն Ս. Վկայից անուամբ: Բարեպաշտ տիկինը Սուփիա վանքս կ'անուանէ Գնդեվանք և յետոյ կը շինէ համանուն գիւղը վանքէն վեր:



Գնդեվանքի ներկայ վիճակը

Հայկական ՆՆԼ (=999) թուականին վանահայր Գրիստափոր՝ կը շինէ եկեղեցւոյ գաւթը. նոյնպէս հայր Գուրգէնը՝ որ երանելի և սուրբ կոչուած է պատմիչէն, մեծ արդիւնք ունեցեր է վանքիս վրայ: 1008ին ալ կը յիշուի արդիւնաւոր առաջնորդը Սարգիս:

Գնդեվանքի քարաշէն պարիսպները և աշտարակները այժմ կիսակործան վիճակի մէջ կը գտնուին Եկեղեցին, որ մեծ սրբատաշ քարերով կառուցուած է, ունի դեղեցիկ կաթողիկէ մը: Մինչև 1870ի առեւնները՝ տաղաւարի օրեր պտտարաղ կը մատուցուէր: Եկեղեցիս նորոգուած է 1309ին Գրիգորէ մը. և 1671ին՝ գիւղիս Ս. Աստուածածին եկեղեցին շինող Պետրոս վրդ. էն: Առաջին շինութենէն մնացած են քանի մը արձանագրութիւններ, որոնցմէ մին 931 թուականը կը







մէջ, որ Չէլիթէսէվի հետ յաջողած է շինել ւի-  
րեցիկը որ քիցիկը կը փոխարինէ և անկէ աւելի  
լաւ կը բուժէ մալարիան:

ԳՆՈՒՆԻ Եղիշե ք. ծն. Շապին Գարահիսարի  
Միպէս գիւղը 1845ին, ուսումը ստացած է Պոլիս  
և 15 տարի ուսուցչութիւն ըրած է գաւառները,  
1890ին ամուսնանալով առևտուրի ձեռնարկած է  
հաստատուելով Կիրասոն և յաջորդ տարին քա-  
հանայ ձեռնադրուած է: Բանի մը տարի ետք  
Օրտու կը հաստատուի, ուր 11 տարի կը մնայ  
և դպրոց կը կառուցանէ: 1900—8 Եւզոկիա, յե-  
տոյ Տիմոթէքա և 1911ին Իզմիր՝ ուր 1919ին  
առաջնորդական փոխանորդ կը կարգուի. յոդ-  
ուածագիր և հեղինակ գրական վաստակոց (ան-  
տիպ): Կը վախճանի 1922 Յունուար 22ին:

ԳՆՈՒՆԻ (Սարգիս Բարսեղեան), ծնած է Վան,  
ԺԺ. դարու կիսուն, Ս. էջմիածնի երթալով հոն  
ուսած և հրատարակած է կրօնագիտական եւ  
ուրիշ գրքեր. 1879ին լոյս ընծայած է Գէորդ Գ.  
կաթողիկոսի ձօնած «Քրիստոնէական վարդապե-  
տութիւն»ը, 268 էջ: Մեռած է 1889ին եւ  
մահուան առթիւ «Արարատ» այդ տարուայ մէջ,  
էջ 297, գրուած:

ԳՆՈՒՆԻՎ, նախարական տոհմ Հայոց, սերած  
ասորեստանեաց Սենեքերիմ թգ.ի զաւակէն, ու-  
րոնց նախահաւը Վաղարշակ թգ.ի տակառապե-  
տը լինելով, տոհմին անունը կոչուեցաւ Գնու-  
նիք իբր թէ Գիւնի-ուցնիք: Այս տոհմէն միջին Տիգ-  
րանի օրով, Հայոց թգ.ի Գնէլ տակառապետը  
հեծելազօր գնդով Երուսաղէմ զրկուեցաւ: Ար-  
շակ թգ.ը գործակալութեան և հաղարապետութ-  
եան մեծամեծ պաշտօններու բարձրացուց այս  
տոհմը: Մեծ նախարարաց կարգին էր տոհմս, և  
աշխարհախումբ բանակին կը մասնակցէր 500  
հոգով: Ոչ սակաւ նշանաւոր անձինք կլիւն են  
տոհմէս, որոնք հայրենիքի և եկեղեցւոյ համար  
պատերազմեր ու նահատակուեր են:

Գնունեաց երկրին վրայ թէպէտ յայտնի բան  
մը գրուած չենք գիտեր ի գիրս, բայց Վարդա-  
նայ խօսքերէն կը հասկցուի ըլլալ Տուրուբերանի  
Աղիովիա գաւառը, մանաւանդ որ թովմա՛  
Արծրունւոյ շարունակողը, Արճէշ քաղաքը կը  
ղնէ Գնունեաց մէջ, ըսելով Սրահանդոյ Հա-  
գարացի ներքինւոյն համար, թէ ԺԱ. դարու  
մէջ առաւ «ըԱրճէշ քաղաք Գնունեաց գաւառի»:  
Թէպէտեւ նոյն քաղաքը Վասպուրականի Արճի-  
շակովիա գաւառի կը վերաբերի, որ սահմանակից  
է Աղիովիայ: (Էփրիկեան՝ «Բնագիտութիւն»):

ԳՆԻԿ ԼԵՈՒ, ըլլալ Խարբերդի Մօրէնիկ զդ.ի  
մօտ:

ԳՆԼԱԳ s. Ղ.Ելախ:

ԳՈՇԼԱԿԵԱՆ, դերասան Երեանի մէջ:

ԳՈՐԸՉԼՍԹ, զգ. Ռուսմանիոյ Ֆօքշան քաղաքի  
մօտ. ուր քանի մը տուն Հայեր կան:

ԳՈԳԱՇԷՆ, վրարնակ զգ. Գուգարաց Ջաւախք  
(Ախալքալաք) գա.ի. որ կը պատկանի Ախալցխա-  
ցի Գրիգոր Բագրատունեանցի:

ԳՈԴԻՍ, կը յիշուի Շիրակայ Մարմաշէն վանքի  
արձանագրութեան մէջ:

ԳՈԶՈՍ կամ Գօզոլս, զգ. Արծկէի (Խորխոռու-  
նիք), եկդ. Ս. Աստուածածին, աւերակ:

ԳՈԶՈՉՍ. s. Գօգոչա:

ԳՈԹԱԶՈՐ, կրկին գիւղեր Ներքին և Վերին, կը  
յիշուին Սիւնեաց Մզուկ գա.ի Ալախ վիճակին  
մէջ:

ԳՈԹԻ, զգ. Այրարատայ ձակատք գա.ի մէջ:

ԳՈԹՔ կամ Գուրք, ազգ. Ասիոյ և Եւրոպայի  
սահմանակից, հիւսիսակողման բնակիչ: Նշանա-  
ւոր իրենց ճարտարապետութեամբ:

ԳՈՒԱՆՃԵԱՆ s. Գօլանեան:

ԳՈՒԱՍՍԱԿԱՅ ԳԵՏ, Սիւնեաց Գեղարքունի գա.ի  
մէջ. այլազգեաց Կիւղի skrk կոչածը:

ԳՈՒՈՄՊԻՍ, համալսարան ի Նիւ Եորք, ուրկէ  
շատ մը Հայեր չրջանաւարտ եղած են:

ԳՈՒՈՇՏԻ ՎԱՆՎ, կը յիշուի Սիւնեաց Վայոց  
ձոր գա.ի մէջ: Կը յիշատակուի նաև Գոլոցի  
բերդ:

ԳՈՀԱՆԱՄ s. Սեպուհ:

ԳՈՀԱՐԵԱՆ ԱՆՈՒՇ, դերասանուհի Խ. Հայաս-  
տանի մէջ:

ԳՈՀԱՐԻՆԵԱՆՎ, այսպէս կը կոչուին Գաւիթ  
իշխանին չորս օրդիք՝ որոնք 1136ին Ալիրասէն  
նահատակուեցան Սեբաստիոյ մէջ:

ԳՈՂԹԱՆ ԵՐԳԻՉՔ և ԵՐԳԵՐ, այսպէս կը կոչ-  
ուին այն բանաստեղծները և բանաստեղծու-  
թիւնները՝ զորս Մ. Խորենացին մեղի հասցու-  
ցած է և որոնց գլխաւորն է «Երկնէր երկին»  
սկզբնաւորութեամբ քերթուածը: Հայ և օտար  
բանասէրներ շատ մը ուսումնասիրութիւններ ը-  
րած են Գողթան երգերու վրայ (սե՛ս Հ. Ղազիկ-  
եանի «Նոր Մատենագրութեան» մեջ, սե՛ս Լաւր  
«Բազմավեպ» 1906. էջ 105. Հ. Ն. Անդրիկեանի  
ուսումնասիրութիւնը):

ԳՈՂԹՆ, Գողթան տուն, Սիւնեաց աշխարհի  
գլխաւոր գաւառներէն մին, որուն սահմաններն  
են, արեւելքէն՝ Արեւիք և Զորք, հիւսիսէն՝ Մզուկ  
և Երնջակ, արեւմուտքէն՝ Երնջակ և հարաւէն  
Երասխ գետը: Մ. Խորենացին, Վասպուրականի  
գաւառ կը համարի Գողթնը, և եղած է ժամա-  
նակ որ Սիւնիքն ու Վասպուրականը մրցած են  
իրարմէ առնելու և իրենց սեփականացնելու այս



փոքրիկ գաւառը: Գաւառիս հիւսիսային կողմը մանաւանդ Բոտածորը՝ անտառային է, հարաւայինը օդաւար բուսաբերութեամբ ճոխացած՝ այգիներով և պողոսքեր ծառերով, և հին հռչակին համեմատ զիմաւէս: Այժմ Գողթան հին այգիներուն հաւասար կրնան պարծիլ և թերևս աւելի շահարեր են բազմաթիւ թթենիներ:

Գողթան գաւառը ի հնու մեծ դեր խաղացած է մեր աշխարհի մէջ, թէ զօրութեամբ եւ թէ կրթութեամբ, և Հայկազանց առանձնակ աշխարհաց և տոհմից նման, երկար ժամանակ իրարու յաջորդեր են իր իշխանները: Թովմայ Արծրունէին յայտնապէս կ'ըօէ թէ Գողթան գաւառը Ս. Վահանայ նահատակութենէ ետք՝ գրեթէ 734ին Սիւնեաց վիճակած էր: Գաւառիս անունը ծանօթ էր նաև Պողոմէոս աշխարհագրին, որ ժամանակակից էր անոր պայծառութեան, Արտաշէս Բ. ի օրով, այսինքն է Քրիստոսի Բ. զարու կիսուն, սա Գոլթիկի կը կոչէ և լատինները Գոլթեմէ: Գաւառիս մեծութեան և զօրութեան նշան են, իրեն տրուած հետեւեայ կոչումները: Գողթանացի, Գողթան ռու, Գողթանց քնառ:

Գաւառս մեր պատմութեան մէջ անբնական անգամ կը յիշուի Քրիստոսէ վեց դար առաջ երբ Տիգրան Հայկազն Աժտահեկայ զարմէն կը բնակեցնէր մինչև ի սահմանս Գողթանս: Իշխանաց կամ նահապետաց կարգէն քիչեր կը յիշուին, և առաջինն կը յիշուի Շար կամ Շարիթ, Քրիստոսի Ա. դարու կիսուն, և ասոր կինը Նշան, որդին Խոսրով եւ թոռն Վահան: Ասոնցմէ վերջ Գողթան առաջին իշխանը կը յայտնուի Մ. Ասով Գ. դարու վերջերը, նոյն ատենը Ներսիսեան գահնամակի մէջ կարգաւ 46երորդ կը յիշուի Գողթնեաց տէրը: Իսկ Սահակայ գահնամակի մէջ Ե. դարու սկիզբը 15երորդ կը յիշուի Արքունի բանակին Գողթնեաց զօրաբաժինն էր 500 հոգի: Հինգերորդ զարու վերջերը ծանօթ է գաւառիս Շարիթ անուն նահապետը, որուն երկու որդիքն էին Շապուհ և Վասակ (Գիւտ): Ասոնցմէ վերջ գրեթէ ամբողջ դար մը անծանօթ կը մնան գաւառիս իշխեցողները եւ ղէպքերը: Ետոյ է դարու սկիզբը երեւան կ'ելլէ ոմն Վառն, նոյն դարու կիսուն (652) ըստ պատմութեան Ղեւոնդայ: Արարացիք կ'ստպատակեն այս գաւառը, եւ գերիներ ու աւար առած կ'անցնին Երասխէն: Եօթներորդ դարու վերջերն էր Խոսրով հոչակաւոր եւ երեւելի վկային Վահան Գողթնացու չայրը: Այդ ատեն (737ին) է որ գաւառս կ'աւերուի: Ութերորդ զարու վերջերը Սիոն կ'իջ. ի ժողովին

կը յիշուի իրրե Գողթան գ. ի տէր՝ Սահակ: Անկէ ետք այլևս օտարազգի ամիրաներ են որ կ'իշխեն գաւառիս, մինչև Ռուսներէն զբաւուիլը:

Գողթն, բնական բերքերէն և քաղաքական անցքերէն աւելի նշանաւոր է կրօնականովը. ժողովուրդը խիստ պաշտօնատէր կը նկատուի, հին հեթանոսական կրօնից ժամանակէն սկսեալ, եւ հին աւանդութեանց ջերմ պաշտպան: Քրիստոնէութիւնը մեր պատմիչներու աւանդածի համեմատ, ընդունած են Բարդուղիմէոս առաքեալէն, թերևս նաև Թովմայէն, և ըստ այնմ ռմանք կ'ըսեն, թէ Գողթնեցիները և Սիւնեցիները Հայաստանի միւս գաւառներէն առաջ ընդունած են ճշմարիտ կրօնքը: Գաւառիս մէջ Ս. Բարդուղիմէոս նախ չինեց եկեղեցի՝ զոր կոչեցին Տեւառն ընդ առաջ, և Որդուատ գետին վրասակար ջուրերը ըլլորովին անյայտ ըրաւ, մկրտեց Շար կամ Շարիթ իշխանը բոլոր ընտանիքով, և առաջնորդ եզրակոպոս զբաւ կուժսի անուամբ իր աշակերտը: Ըստ աւանդութեան՝ Առաքելոյս աշակերտներէն սկսուած կը համարուի Գողթան եպիսկոպոսայ կարգը, ընդհանուր ազգիս Ս. Գրիգորի լուսաւորութենէ առաջ: Ս. Լուսաւորչն սկսեալ մինչև Թ. դար, 303 տարիներու մէջ, Գողթան գաւառի եպիսկոպոսներն են. Մովսէս Խորենացի, Սահակ Տարօնացի, Արուսեակատ, Ստեփանոս, Յովհաննէս, Մուշէ, Անաստաս Սիոն, Մարտիրոս և Եսայի՝ որ յետոյ կաթողիկոս եղաւ (778ին): Իններորդ զարէն մինչև Ժ. դար չեն յիշուիր Գողթան եպիսկոպոսները, և յայտնի է թէ Սիւնեաց մետրապօլիտներու իշխանութեան ներքե էր նոյն միջոցները: Այդ դարէն վերջ դարձեալ կը յայտնուին եպիսկոպոսներ, Սիւնեաց կամ Տաթևի թեմէն անկախ, և ծանօթներն են. Սարկաւաղ՝ 1280—1300, Տէրունական՝ 1421, Խաչատուր՝ 1669, Պետրոս՝ 1680, Թովմաս Վանանդեցի՝ 1691—1712, Յովհաննէս՝ 1708, Թովմաս՝ 1737, Յովհաննէս՝ 1740 և Սիմոն՝ 1830էն վերջը, որ է վերջին եպիսկոպոս Գողթան. վասն զի 1838ին գաւառիս եպիսկոպոսութեան աթոռը վերցաւ և անուհեաւ զրուեցան լոկ առաջնորդներ:

Ս. Մեսրոպ, զրոց գիւտէն առաջ հոս առանձնացաւ իրրե աստուածախոհ և մենասէր անձն, հոս առանձնացաւ և տեսնելով որ տակաւին հեթանոսական ազանդը վերցուած չէ՝ գաւառին Շարիթ իշխանին օգնութեամբ և իր քարոզներով, բոլորովին վերցուց այն ազանդը և քրիստոնէութեան մէջ հաստատեց ժողովուրդը: Հայերէն տառից գիւտէն վերջ վերադարձաւ Ս. Մես-



րոպ «ի նախնի աշակերտեայն Գողթն», ինչպէս կ'ըսէ Մ. Խորենացին, կամ այսպէս զաստակերտն իւր», ըստ Կորիւնի, և կրկին աւետարանելով «կարգէր յամենայն գիւղս զաւառին դասըս սրբոց վանականաց. որում և հասեալ ժամանեալ հայրաբարուն Գտայ՝ որդւոյ Շարաթայ, առն Քրիստոսասիրի, բազում սպասաւորութիւն իբրև հաւասարի որդւոյ՝ վարդապետին առնէր»։ Ս. Մեսրոպ իր առաջին զայտեան՝ զաւառիս մէջ հաստատած էր վանք մը, որ իրեն անուամբ յետոյ համառոտուելով կամ ձեքուելով կոչուեցաւ Մասրեւան. ուր կ'ուզէին ոմանք հանգուցանել սրբոյն մարմինը, բայց Վահան Ամատունին չթողուց և տարաւ հանգոյց Օշականի մէջ։— Նոյն տեղերը, ուր առանձնացած էր Ս. Մեսրոպ, ժամանակ մը առանձնացաւ Ազան Արծրունի՝ որ էր առաքինազարդ աշակերտ Ս. Սահակայ և ուսուցիչ Դազար Փարպեցւոյն։ Ժէ. դարու սկիզբն ալ Պօղոս վրդ.ը, որ անապատական կենաց ի Հայս վերանորոգող երեք գլխաւոր հայրերէն մին եղած է, սկսաւ քարոզել զաւառիս մէջ, և բաւական հալածանք կրելով՝ ստիպուեցաւ երթալ ի Տաթև։

Ս. Մեսրոպայ երկրորդ զալուստն ի Գողթն ոչ միայն կրօնական կրթութեան համար էր, այլև գրականութեամբ ապահովել կրօնքը և զարգացընել։ Գողթան զաւառս իրեն սեփնական առանձնայատկութիւնն ունի նաև գրականութեան մէջ՝ մեր աշխարհի ուրիշ զաւառներէն աւելի։ Իւր բնակիչները հեթանոսական պաշտամանց հետ պնդութեամբ անմոռաց պահած էին նաև իրենց նախնեաց զիւցաղնական աւանդութիւնները և Հայոց քաջերօւ և թագաւորաց արութեան գործերը իրենց քնարովի ու բանաստեղծութիւններով անմահացուցած. մեր պատմահայր Խորենացին այդ բանաստեղծութիւնները, որոնք ծանօթ են Երգք թուելեաց և Վիպասանութիւն անուններով, ստէպ կը յիշէ։ Դիտաւորաբար երկու վիպասանութիւնք պահուած կ'երեւին Գողթան մէջ. որոնք են Հայկազն Տիգրանայ գործերը կամ Աժդահակայ հետ ըրած պատերազմը և Արտաշէս Բ.ի գործերը, և ինչ որ նոյն ժամանակները հանդիպած են Արտաշէսի վրայ երգուածը, թերևս իւր որդին Վրոյր՝ որ նշանաւոր բանաստեղծ մ'էր, երգած լինի։ Բուզանդ՝ կը կարծուի թէ Գողթնեցիները կ'ակնարկէ, երբ մեղադրելով Հայերը կ'ըսէ, թէ սիրելով և երգելով իրենց նախնեաց վիպասանութիւնները՝ կը թուլանային քրիստոնէական կարգերէն, Մեծին Ներսէսի մահէն վերջ։ Այս երգերու մեր ձեռքն հասած տողերէն, կը տեսնուի թէ ինչ աստիճան զար-

գացեալ վիճակի մէջ կը գտնուէր զաւառս ի հնուին Այդ երգերն չեն նմանիր այժմեան Գողթնեցւոյ ռամկական լեզուին, այլ գրուած են ընտիր կասպարդ հայկական բարբառով։ Այժմեան Գողթնեցւոց բարբառը խիստ կը տարբերի ուրիշ զաւառաբարբառներէ։ Գաւառիս Ազուլիս վիճակ բարբառը, յատուկ և քննելի անուամբ Զոկ կը կոչուի, զոր ոմանք կը համարին ծագած Պարսից Զօնակ անունէն (որ է Աժտահակ), իբր թ. անոր սերնդոց խառնուրդ լինին Գողթնեցիք։ Սարգիս Սարգսեան 1883ին հրատարակեց Մոսկուայ մէջ լեզուաբանական հետազօտութիւն մը Զօկեր լեզուն տիտղոսով. սա կերպով մը կը հաւան, Պատկանեանի կարծեաց, թէ Զօկ հայցական հոլով Զօկ կամ Օկ դերանուան, զոր յաճախ Ազուլեցիք խօսելու միջոց կրկնելու են համար, օտայներէն հեզնօրէն նոյնպէս կոչուած է։ Ոչ միայն Ազուլեցիք՝ այլև Յղնեցիք եւ ուրիշ մերձարնակներ, նոյն բարբառը կը գործածեն։ Ոմանք կը կարծեն թէ զաւառիս բնակիչք կամովին այս փոխած են իրենց բարբառը, որպէսզի անհասկանալի ըլլան այլազգիներուն։ Նշանաւոր են Գողթնեցիք վաճառականութեան մէջ եւ միանգամայն հանճարեղ. յիշեմք միայն Վանանդեցի թովմասեպիսկոպոսը եւ իւր քերորդին Ղուկաս՝ որք մ դարու վերջին քառորդին և ԺԼի սկիզբները՝ Հլանտայի Ամսթերտամ քաղաքին մէջ տպագրութեամբ ի լոյս ընծայեցին շատ գրքեր։

Օրբելեան պատմիչը Երնջակ և Գողթն զաւաները միացուցած մէկ զաւառ կը նշանակէ միայն 30 գիւղերու անուններ կը գրէ, յորո որովհետև միայն երրորդ մասը մեզ ծանօթ գրիւք, չգիտենք թէ միւս անծանօթները երկու զաւառներէն որուն կը վերաբերին։ Այդ պատճառաւ մենք աստ կը զնենք այդ գիւղերու առանք հանդերձ եկեղեցւոյ տրիւքը, նշանակելով միանգամայն փակագծի մէջ ծանօթներու գաւառը. այս ալ ըսենք, թէ նոյն պատմիչ գրմի քանի օրինակաց մէջ գրուած է Երնջակ գաւառ՝ տասը գիւղերով.

Բուս	12 (Գողթն)
Տելի	12 (Գողթն)
Ամսուոյ վանք	12 (Գողթն)
Նորակերտ	12
Ողոնի	12 (Գողթն)
Թեղեակ	8
Գուկալանք	8
Ոսկեձոր միւս	12
Անգուղիք	12
Նորագիւղ	12



Արեւեք	8
Շաղկերս	8 (Գողթն)
Ս. Գեորգ	8 (Երնջակ)
Չաւաշրի վանք	12
Ապարանք	12
Վան	12 (Գողթն)
Գոչեմ	8 (Գողթն)
Գաղ	12 (Երնջակ)
Ուփիկ	8
Մայրեակ	12
Վանանդ	18 (Գողթն)
Ագուլիք	12 (Գողթն)
Տարեկունքի կամ Բե- ֆերունքի	12
Ամառաւեկն	10
Ողղաւ. Ողղու կամ Ուղղաւ	12
Քղվնա կամ Տֆովնա	8
Ապրակունքիք	12 (Երնջակ)
Քարկովի	12
Բերդիկ	12 (Երնջակ)
Ռապաս	12

Ասոնցմէ զատ Գողթան բաժնին մէջ կը յիշուին նոյնչափ ևս զիւզեր, ըստ նոր վիճակագրութեանց և արձանագրութեանց, որք են հետեւեալները:

Թագաւորամարգ	Վեռն
Դաւոս. Ստրին Ագու- լիս	Գեցցիկ Գեղերեցիկ
Յղնա	Նուրից
Ռամիս	Որդուս
Բուհրուս	Վաղաւեր
Փառակա	Փառակերս
Շրջու	Փորադաւոս
Աղանեցիկ	Մցգուն
Դասակ	Ասուածածնի գիւղ
Տրունիք	Բազմառի
Տնակերս	Գանձի
Օբովանիս	Գեղսար
Քաղաքիկ	Սալ
Անապաս	Պելեւ
Անղամեջ	Խուրս

Գողթան գու. հայրենի պայազատութեան զաղրելէն վերջ, վերցաւ նաև իր անունն, եւ կոչուեցաւ այլազգիներէն Որդուս՝ ուր կը նըստէր ամիրայ մը և կը կառավարէր ամբողջ հին Գողթն գաւառը: Այնուհետև Պարսից և Օսմանեանց տիրապետութեան միջոց և յետոյ Ռուսաց ժամանակ ևս մինչև ցայսօր, այս անուամբ ծանօթ է գաւառս, որ վիճակակից է Նախճաւանի

կուսակալութեան: Պարսիկները կոչած են նաև Էգաս-նիրան, որ է մեր հին Ագաս Գիրանը: Թէպէտ գաւառս այնչափ ընդարձակ չէ և չունի զօրաւոր զեաւեր, բայց իւր ձորերու և ձորակաց համեմատ այլազգիներու իշխանութեան ժամանակ բաժնուած էր զանազան վիճակաց: Այժմ ևս բաժնուած է հինգ մասերու. Ա. Որդուս իրեն գետակովք. Բ. Ագուլիք. Գ. Տասին, իսկ մեզ աւելի յարմար կը թուի կոչել Վանանդ և Վանանդաձոր՝ անուանի զիւղին համար, և կամ Տրունիք. Դ. Չիւանաւ որ է Վանանդայ և Բոտաձորոյ մէջտեղ, և կարելի է կոչել Յղնա. Ե. Պելեւ՝ որ ի նախնեաց կոչուած կը գտնենք Բոտաձոր, և կը թուի թէ նախապէս կոչուած լինի Ագաս Գիրան, վասնզի ցարդ իւր զեաւը կը կոչուի Գիւեան և նոյն անուամբ աւերակ տեղ մի ևս կայ: Գաւառիս հարաւ արեւելեան ծայրը կայ Քեալիք անուամբ այլազգարնակ աւան մը որ կը համարուի լինել հին Գողթն աւանը: (Էփրիկեան՝ «Բնաւիտարիկ» ֆաղուած Հ. Ալիւանի «Սիսական» էն): Գողթն գաւառի վրայ առանձին ուսումնասիրութիւն ունի նաև Ե. Լուկեան «Նախիջեւան» գաւառի մէջ:

ԳՈՂ, ՁՈՐ, հին գղ. Սիւնեաց Գեղարքունի գու. մէջ:

ԳՈՂ, ՈՐԵԱՆՅ ՎԱՆՔ, Սիւնեաց հին վանքերէն մին կը կարծուի. տեղն ու զիրքը անծանօթ:

ԳՈՂ, ՈՅ Ա.Գ.Ս.Ա.Կ, կը գտնուի Սիւնեաց Սողք գու. մէջ:

ԳՈՂ, ՈՅ Ա.Ղ.Բ.Ի.Բ, ըստ Յովհաննէս Մամիկոնեանի կը գտնուի Տուրուբերանի Տարօն գու. մէջ:

ԳՈՂ, ՃՈՅ ՎԱՆՔ, Վանայ կուսակալութեան Մոկաց գու. մէջ կը գտնուի վանքս: 1870ին Պարվարեան Օսման աղայէն և իր խումբէն կողոստուեր, աւերուեր և ամառացիք է:

ԳՈՂ ՎԱՍԻԼ, քաջ իշխան Քեսնոյ, (Մարաշի մօտերը), 1081 թուականին կը սկսի փայլել անականակալօրէն օտար թշնամեաց վրայ յարձակելուն պատճառաւ զինքը կոչած են Գող Վասիլ, 1092ի առեւնները երբ Սկիւթացիք Հայաստանի բնակչութիւնը նեղել սկսան՝ շատեր Քեսնոյ սահմաններուն մէջ ապաստանեցան, ուր Գող Վասիլ սարսափ աղղած էր: 1105ին Գրիգոր վկայասէր կիթղ. Գող Վասիլի և տիկնոջ թախանձանաց վրայ Ռապան գնաց, որ Քեսնոյ եւ Մարաշի մէջտեղ քաղաք մըն էր, եւ իր քեռորդուոյն Ապիրատի երկու զաւակները՝ Գրիգոր եւ Ներսէս (Շնորհալի) իշխանին խնամքին յանձնեց: 1107ին Պարսիկները կիլիկիոյ վրայ յարձակելով Թորոս



իշխանի քանի մը գիւղերը և աւանները աւարի առնելէ ետք Քեսնոյ վրայ գացին. Գող Վասիլ իսկոյն բանակ մը կազմեց և յարձակեցաւ Պարսիկներուն վրայ. կոտորեց անոնց զօրքերը, ազատեց հայ դերիները և Թորոսէն տարուած աւարը: Այս յաղթանակը բաւական եղաւ որ Պահլաւունիներ և Բագրատունիներ Վասիլի քով հաւաքուին՝ ապագայ Ռուբինեանց թագաւորութեան կորիզը ուժեղացնելու համար: Նոյն իսկ շատ մը կրօնաւորներ Հայաստանէն ու Տաւրսի լեռներէն մեկնելով Վասիլի իշխանութեան մէջ եկան:

Երբ պարսից արքայն իմացաւ իր բանակին պարտուելը Գող Վասիլէն՝ յաջորդ տարին (1108-ին) աւելի մեծ եւ ընտիր բանակով Վասիլի վրայ յարձակեցաւ: Պարսից բանակը հազիւ Հասանմսուր հասած էր՝ երբ Վասիլ կորովի հայ զինուորներով չորս բանակ կազմեց, յարձակեցաւ թշնամիին վրայ և կոտորելով ու ցիրուցան ընելով զայն՝ Քեսուն դարձաւ յաղթական: 1112ին՝ Անտիոքի լատին կոմսը Տանգրի, որ Վասիլի բարեկամն էր նախապէս, շատ մը զօրքով եկաւ պաշարեց Ռապանը և սաստիկ պատերազմով առնելով զայն Վասիլի ձեռքէն՝ յարձակեցաւ Քեսունի վրայ, սակայն չհամարձակեցաւ հայ իշխանին դէմ պատերազմիլ, այլ հաշտուեցաւ ու Ռապանը ետ տուաւ և կրկին բարեկամացաւ Վասիլի հետ. վերջինս սակայն, այդ քաղաքը Տանգրիի վերադարձուց, որովհետեւ զայն Լատիններէն գրաւած էր: Այդ տարին սակայն Գող Վասիլ վախճանեցաւ և թաղուեցաւ Կարմիր վանքին մէջ. և որովհետեւ ինքը զաւակ չունէր՝ իրեն յաջորդեց Տղայ Վասիլ կոչուած իր զօրավարներէն մին:

ԳՈՃԱՄԱՆ ՊԱՇԵՆ, հայաբնակ գիւղ Ճանիկ առաջնորդական վիճակի: Ունէր Ս. Յակոբեան վարժարան մը՝ 72 աշակերտներով:

ԳՈՃՈՅ ՉՈՐ կամ Կոնոնոր, հին գղ. Սիւնեաց Գեղարքունի գ. ի:

ԳՈՄ, գղ. Գուգարաց Ջաւախք գ. ի, այժմու Բարայէթի վիճակին մէջ: 1900ին ունէր 800 հայ բնակիչ: գիւղիս մէջ կայ Ս. Գէորգ անուամբ ուխտատեղի մը:

ԳՈՄԱԶՈՐ, երբեմն մեծ շէն, այժմ գղ. Այրարատայ Բասեն գ. ի մէջ: Ըստ Ասողկոյ (Բ. Ղ.) այս գիւղաքաղաքը Թէօփիլոս կայսեր ժամանակ 836-7 Յունաց ինքնագլուխ ասպատակները կը խողխողեն շատերը, յետոյ իրենք ալ Վանայի կողմերը կը կոտորուին: 1900ին 110 տուն բնակիչ ունէր: 1900ին Ազգ. վարժարանը 70 մանչ կ'ուսանէին:

ԳՈՄԱԶՈՐ, գղ. Վարժնուհեաց գ. ի արեւելա-

ծայրը, փոքրիկ ձորի մէջ՝ լեռան ստորտը: Աչոտ Ա. դեռ չթագաւորած՝ և իր զուստըրը Սոփի, տիկինն Սիւնեաց՝ գիւղս Սեանայ կը նուիրեն: 1900ին 55 տուն հայ բնակիչ ունէր. եկեղեցին անշուք է:

ԳՈՄԱԶՈՐ, գղ. Վանանդ (Կարս) գ. ի, որ այժմ գոյութիւն չունի. մօտը կայ Ալեքսանդրովկա նոր գիւղ:

ԳՈՄԱԶՈՐ, այս անուամբ եղած են քանի մը գիւղեր, որոնք կամ ամայացած են, կամ անունին փոխած:

ԳՈՄԱՆ, գղ. Տիգրանակերտի. քանի մը տուն հայ բն. ունէր:

ԳՈՄԱՆՅ, հայաբնակ գղ. Վանայ Մովք գ. ի, 1900ին 40 տուն բն. ունէր. եկղ. Ս. Գէորգ:

ԳՈՄԱՐՏԻՐ, գղ. Շատախի, բն. հայ և քուրա էին:

ԳՈՄԱՅ ԱՍՏՈՒԱԾԱԾՆԻ ՎԱՆՔԻ կամ Տարաբլուակ Ասուածածին, Աղձնեաց Սայնոյ ձոր գաւառի մէջ կը գտնուի վանքս, Բաղէշ քաղաքի արեւմտեան կողմը, և Գոմս կոչուած գիւղի կամ քաղաքամասի հիւսիսային արեւելակողմը, երկու քարընկէց հեռու: Տարաբլուակ կոչուելու պատճառ եղած են այս տեղ գտնուող բազմաթիւ տաճարակները: Սրբատաշ քարերով կառուցուած վանացս գաղարիկ տաճարի զանգակատունը կը բարձրանայ վսեմ կերպով և կը հսկէ չուրջը գտնուող 8—10 խցիկներու և 2—3 խորտուրոտ գոմերու վրայ: Տաճարի մէջ կ'ըսեն թէ կը պահուի կենաց փայտի մասն մի, Բարսղի Կեսարացուոյ աջը, Լուսաւորչի բեւեռը և Ս. Գէորգայ նշխարներէն Վանքս ունի հողային բաւական կայուածներ և մէկ քանի թեմական գիւղեր: Մենաստանս շրջապատող լեռները վեհութեան փայլ մը կու տան իրեն եւ անմահական բոյր մը կ'ազդեն օդին և ջրոյն. ծառերն ու ծաղիկները՝ որ կը պնդարդեն տեղւոյս գարունը՝ Սաչաթիակ և Սոց աղբիւրներու մեղրածորան կայլակաց հետ, կ'սքանչացնեն զմարդիկ: Վանքիս տաճարի աջ թեւին տակ կը գտնուի, Բաղէշի նշանաւոր վաճառականներէն Շողիկեան գերդաստանի նահապետ Մ. Ղարիպճեանի ծախքով կառուցուած վարժարանն (էփրիկեան «Բնաւարանիկ»):

ԳՈՄԱՅ ՉՈՐ, Բաղէշ քղ. ի ձորերէն մին:

ԳՈՄԱՅ ՎԱՆՔԻ կամ Ջոզղլուխ Ս. Գէորգայ վանք, Գոմս կամ Կոմս գղ. էն ժամ մը հեռու, Վանայ ծովակի եզերքը, այժմ անմարդաբնակ է. վանքիս մէջ կը պահուէր Ս. Գէորգայ գլուխը, յետոյ փոխադրուեցաւ Գոմս գիւղը՝ ուր կը նրստէր վանքին առաջնորդը:



ԳՈՄԵՐ գղ. Կամախ (Քեմախ) գ.ի. որ իր աղի եւ քարածուխի հանքերուն պատճառաւ՝ նոյն գաւառի կեդրոնավայրը կը համարուի: Աւելի յարգի են աղի լճակներն, որոց աղբիւրը՝ գիւղիս մէջ լեռնակի մը ստորոտէն կք բղխէ: Արեգական սաստիկ ջերմութենէն, աղը կը բիւրեղանայ մաքուր, սպիտակ եւ անուշահոտ: Ամառը վեց ամիս այս արծաթափայլ հարիւրաւոր լճակաց եզերքը կը հաւաքուին շատ հեռաւոր տեղերէ եկած յաճախորդք: Շատ առողջարար է տեղւոյս կլիման. ի հնուց հայ անուամբ կը կոչուի Գոմեր. իսկ ի թրքաց Քեօմիւր: Կը գտնուի Եփրատայ եզերքը: Ունի 80 տուն բնակիչ, կէսը հայ եւ կէսը մանմետական: Հայք ունին Ս. Աստուածամայր անուամբ եկեղեցի մը. եւ Արամեան անուամբ քարաշէն դպրոց մը ուր 1900ին 61 մանչ եւ 8 աղջիկ կը յաճախէին:

ԳՈՄԵՐ, գղ. Տուրուբերան գ.ի. Մուշէն 2 ժամ հեռու: 200 տուն հայ բնակիչ ունէր եւ եկեղեցին Ս. Քառասուն Մանկունք կը կոչուէր:

ԳՈՄԵՐ, գղ. Մոկաց աշխարհի. 1900ին 50 տ. հայ բնակիչ ունէր. եկղ. Ս. Գէորգ:

ԳՈՄԵՐ, ըստ Յայսմաւուրաց՝ Այրարատայ Կոգովիտ գ.ին մէջ կը գտնուէր:

ԳՈՄԵՐ, Բարձր Հայոց Մասատ Տէրէսի կոչուած տեղը, Բարբրղէն մէկուկէս ժամ հեռու, ուր կը գտնուին բազմաթիւ զոմեր եւ ախոռներ, որոնք շուրջ եղած երկիրները կը ներկայացնեն Շասգոմմ գաւառը:

ԳՈՄԵՐ, հին գիւղ մը Սիւնեաց Ծղուկ գ.ին մէջ:

ԳՈՄԵՐ, գղ. Շահապօնից մէջ. տեղը անծանօթ: ԳՈՄԵՐՈՒ ՁՈՒՐ, Կամախ գ.ի մէջ, հաւանօրէն Գոմեր գղ.ի մօտ:

ԳՈՄԷՇՏՈՒՆ, գղ. Շապին Գարահիսարի, 50 տ. թուրք եւ 40 տ. հայ բնակիչ ունէր 1900ին. Հայերը ունէին Ս. Աստուածածին եկեղեցի մը եւ 50 աշակերտներով դպրոց մը:

ԳՈՄԸԿԱՆ, ամայի գղ. Բոնաշէն գ.ի մէջ, Մշոյ դաշտին հարաւակողմը. աւերակ հայ եկեղեցին միայն մնացած է:

ԳՈՄԻԿ, երկու այլազգարնակ գիւղ Այրարատայ մէջ:

ԳՈՄԻԿՆԵՐ, կը յիշուի Կամախ գ.ի մէջ:

ԳՈՄԿՈՒՆՔ, հին գղ. Տարօն գ.ի մէջ, կը յիշուի Փաւստոս Բիւզանդէն:

ԳՈՄՇԱԽՐԱՄ, տեղի Աշտարակ գղ.ի մօտ:

ԳՈՄՇԷՃՈՒՊԱՆ, աղբիւր մը Սիւնեաց Աղահէճք գ.ի մօտ:

ԳՈՄՈՅ ԳԻԻՂ, s. Գոմմ:

ԳՈՄՍ կամ Գոմմ, գղ. կամ քաղաքաւան Բաղիշոյ, 1900ին 60 տ. հայ բնակիչ ունէր: Տե՛ս Գոմաց Աստուածամմի վանք:

ԳՈՄՍ կամ Կոմս, հայաբնակ գղ. Տուրուբերանի Երեւարք գ.ի. 1900ին 100 տ. հայ բն. ունէր. եկեղեցին Ս. Թովմայ՝ անաձեւ էր: Տղաք նախապէս Եղեգիսի դպրոցը կը յաճախէին: 1870ին կառուցուեցաւ Ս. Աստուածածին դպրոց մը. ուր 1900ին 36 մանչ եւ 5 աղջիկ կ'ուսանէին: Հոս կը նստէր Գոմաց վանքի առաջնորդը, ուր փոխադրուած էր վանքին Ս. Գէորգայ գլուխը:

ԳՈՄՍ կամ Կոմս, գղ. Վանայ շրջակայքը. ունէր մօտ 50 տ. հայ բնակիչ. եկղ. Ս. Ստեփանոս:

ԳՈՄՍՈՒՐ, գղ. Սերաստիոյ, 1915ին 36 տուն հայ, 12 տուն քուրտ բնակիչ ունէր. եկեղեցին Ս. Աստուածածին կը կոչուէր:

ԳՈՄՅԵՑ ՁՈՐ, Շիրակ գ.ի Հառիճոյ վանքին արձանագրութեան մէջ կը յիշուի:

ԳՈՄՓՈՐ s. Բուլբօր:

ԳՈՄՔ, հայաբնակ գղ. Չորրորդ Հայոց Հանձիթ (Խարբերդ) գ.ի մէջ. 1900ին 200 տ. բն. ունէր. եկղ. Ս. Կարապետ վարժարանը՝ Ս. Փրկիչ:

ԳՈՄՔ, գղ. Կարնոյ, 1900ին 70 տուն բն. ունէր. եկղ. Ս. Յակոբ: Ազգ. վարժարանին մէջ 30 մանչ, 20 աղջիկ կ'ուսանէին:

ԳՈՄՔ, գղ. Սիւնեաց Գեղարքունի գ.ի:

ԳՈՄՔ, գղ. Սիւնեաց Վայոց ձոր գ.ի:

ԳՈՄՔ, քանի մը այլազգարնակ գիւղեր Այրարատայ Բագրեւանդ գ.ին մէջ:

ԳՈՄՔ s. Կուսազեր:

ԳՈՄՔ, գղ. Սասնոյ Հրէջվառի ստորոտը՝ արգաւանդ հողերով. 1900ին 30 տուն, գիւղիս վերելը շինուած է Ս. Մատին Առաքելոց վանքը: Սրբավայրերն են Վարդենանք, Ս. Քառասուն Մանուկ, Ս. Խաչ, Ս. Աստուածածին եւ Ս. Հեղինէ. ուր շրջակայ Հայերը ուխտի կ'երթային եւ մասաղներ կ'ընէին: (Բազմավեպ՝ 1936 ր. 1—2 էջ 40—5):

ԳՈՅԱՄԱՐՏ, պատի «Օրացոյց» Հ. Յ. Դ. Պատենական Միութեան», 1930էն սկսաւ լոյս տեսնել Մարտիի մէջ:

ԳՈՅԱՄԱՐՏ, օրաթերթ (Հ. Յ. Գաշնակցութեան) տպ. 1920. լոյս տեսած է 1—83 թիւ:

ԳՈՅԱՆ, գղ. Տիգրանակերտի լճէ գ.ի մէջ. բն. 40 տուն հայ էին. ունէին եւ եկեղեցի մը:

ԳՈՆ, հին գղ. Սիւնեաց Կովսական գ.ի:

ԳՈՆԱԳԱԼՄԱՁ, գղ. Խարբերդի. 1900ին 50 տ. հայ եւ 100 տ. մանմետական բն. ունէր. եկղ. Ս. Աստուածածին. ունէին եւ դպրոց մը:



ԳՈՆԱԳԼԸԳ, գղ. Ճանիկու Չարչամպա գաւառակի մէջ. ունէր մօտ 60 տուն հայ. եկղ. Ս. Լուսաւորիչ և նոյնանուն զպրոց մը 40 աշակերտով:

ԳՈՆԴԷ ԼԱԼԷ, գղ. Տիգրանակերտի Սլիվան գւ.ի, 2 տուն հայ կար:

ԳՈՆԴԷ ՁԱՆՈՅ, գղ. Տիգրանակերտի Պէրիկ գւ.ի, բն. 100 տուն էին, ունէին և եկեղեցի:

ԳՈՆԴԸԿ, գղ. Տիգրանակերտի. 8 տուն հայ կար:

ԳՈՆԹԱՐ, գորավար Յունաց, ապստամբ 545ին կը սպաննուի Հայերէն:

ԳՈՆԻԱ. Ղոնիա կամ Ի՛նօնոն, գլխաւոր քաղաք և կեդրոնավայր համանուն կուսակալութեան և գաւառին, ի հնուին մայրաքաղաք Սելճուգեանց: Դիրքը թէև գեղեցիկ չէ, կառուցուած հարթ ու ընդարձակ դաշտի մը վրայ և չբնակատեալ բարձր լեռներով, բայց օդը լաւ է, իսկ ջուրը լաւ կը լինի եթէ քանի մը ամիս պահուելէ վերջ խմուի: Ջրոյն այս յատկութեան պատճառ կը համարուի՝ հողին մէջ բորակ խառնուած ըլլալն, ըստ հետազօտութեան բժշկաց, Բաւական հնութիւնք կան քաղաքիս մէջ. Սուլթան Ալայէտինի գահն ու դամբանը հողէ բլրոյ մը վրայ է. գահուն շէնքի հիմքը մնացած է: Նշանաւոր են Սէլիմ և Ապտիւլ Ազիզ սուլթանաց շինել տուած մզկիթները և Մէվլանայի դամբարանին կանաչ գմբէթը, որ 650 տարուան հնութիւն մ'է, համակ մարմարիօնէ և սքանչելի ցցուն քանդակներով:

Քաղաքս ունի 44000 բնակիչ, և ըստ վ. Քիւնէի հետեւեալ կերպով բաժնուած.

Մահմետականք	39,300
Հայ Լուսաւորչականք	3,000
Հայ Բողոքականք	50
Յոյնք	1,500
Ղ.փտի Կաթուղիկեայք	150
Գումարն	<u>44 000</u>

Հայք ունին փոքրիկ եկեղեցի մը Ս. Ասուածածին կամ Ս. Յակոբ անուամբ և վարժարան մը Ս. Սահակեան: Քաղաքիս հին սուլթանները, ինչպէս պատմութենէն յայտնի է, մերթ դաշնակից եւ մերթ թշնամի եղած են մեր Ռուսիեաց: Տեղւոյս Հայոց գրեթէ կէսը Կեսարացի են: Հայ Բողոքականք ունին ցերեկօթիկ և գիշերօթիկ դպրոց: Եւրոպացի Եղբարք (Ֆռէս) և Բորք ունին վարժարաններ: Յոյնք անջատ թաղի մը մէջ կը բնակին, ունին իրենց եկեղեցին և վարժարանը: — Տեղական բերքերու (գորգ, բուրդ,

այծմազ, բամպակ, մորթ, արմաթ, ալիօն եւն.) առատ արտադրութիւն կայ: Կ. Պոլսէ՝ Պրուսայի ճանապարհաւ գրեթէ 600 հազարամեղր հեռու է, և այժմ երկաթուղիով 30 ժամ գծով մը մօտեցած է Կ. Պոլսի Ընդարձակ է շուկան, կան բաւական թուով վաճառատունք կոկիկ ու կանոնաւոր, մեծ մասն տարազագործարան (manufacture), մնացեալք արհեստաւորաց և մանրավաճառաց խանութներ: — Քաղաքիս իրր միակ զրօսավայր՝ սուլթան Ալայէտիինի սարահարթը կայ. մահմետական, հայ ու յոյն ժողովուրդք հոն կը վազեն առաւօտ և երեկոյ զրօսնելու և մաքուր օդ ծծելու համար: Այս սարահարթի վրայ են Հայոց, Յունաց եկեղեցիները ու սուլթան Ալայէտիինի մզկիթը, որ ամփոփուած է նոյն սուլթանը, ու կը կենայ տակաւին անաղարտ կանգուն, առանձին կամարակապի մը մէջ: Հոն է նաև քաղաքին նախասելճուգեան ժամացոյցը. Յունաց եկեղեցւոյ կաթողիկէի քով գետեղուած: Այս շէնքերէն քիչ մը հեռու կը կը տեսնուին Սելճուգներու պալատը, բանտը, զինարանը, եւայլն, ամէնքն ալ կիսափուլ՝ բայց պատկառելի հնութիւններ են: — Գոնիայի կուսակալութեան մէջ կան միահամուռ 1,088,000 բնակիչ, որոնց միայն 10000ը հայ են, մնացեալք մեծաւ մասամբ մահմետական, յոյն եւայլն: (Էփրիկ.՝ Քնաօխարհիկ):

Գոնիայի Սահակեան դպրոցը 157 մանչ և Ս. Սանդուխտեանը 77 աղջիկ, իսկ մանկապարտէզը 160 երկսեռ փոքրիկներ կը յաճախէին 1900ին:

Քաղաքիս մէջ հիմնած է վեր. Յարութիւն ձէնանեան իր անուանով կոչուած գոյէճը, յիշեալը 1891 Սեպտ.ին քաղաքս կու գայ իրրև քարոզիչ եւ 1892ին կը բանայ ցորեկեայ դպրոցը: 1892ին վեր. Մելքոն ձէնանեան, եւ Յարութիւնի եղբայրը ձեռնադրուող դպրոցի անօրէն կը կարգուի:

Ընդհանուր պատերազմէն ետք, մարդահամարի մը համաձայն 1926ին Գօնիա-Էրեյլիի մէջ 289 Հայեր կ'ապրէին:

Գոնիայի եւ Շրջ. Հայրենակցական Միութիւն մ'ալ գոյութիւն ունի. որուն հասցէն է (193/ին) Մ. Պալեան, 2 Rue Neuve S. Catherine, Marseille (France):

ԳՈՆԻԱՅԻ կուսակալութեան բնակիչն էր 1900ին 3,100,000, որոնց 10000ը հայ էին:

ԳՈՆԴԱ ՎԱՍԻԼԷ s. Գօնրա Վասիլէ:

ԳՈՆՏԱՄԵԱՆ (Գոնսայեան) Յակոբ. ծնած է Պարտիզակ 1879ին, իրրև պարզ արհեստաւոր մը (սակառագործ) Ռուսմանիա անցած է 1896ի ղէպքերուն և իր արհեստը կատարելագործած



է ինքնաշխատութեամբ ու նուրբ և ճաշակաւոր գործեր արտադրած է և 1906ի ցուցահանդէսին ինքը, իսկ ընդհանրապես պատերազմէն ետք իր որդին արծաթ և ոսկի մետալլներ ստացան Ռուսէն պետութենէն: Յակոր մեռաւ 1937-ին:



ՅԱԿՈՒԲ ԳՈՆՏԱՄԵԱՆ

ԳՈՆՏԱՅԵԱՆ Սիրարփի, ջութակահարուհի, ծնած է 1904-ին Նիկոմիդիոյ մէջ. դուստրն է Պարտիզակցի ուսուցչուհի Սիրանոյշ Տէր Գրիգորեանի և Մինաս Գոնտայեանի: Չորս տարեկանին Լոնտոն, յետոյ իր ծնողաց հետ Ամերիկա գացած է, ուր առած է իր ուսումը: Փոքր տարիքին յայտնուած է իբր տաղանդաւոր եւ զգայուն ջութակահարուհի և իր արուեստը կատարելագործելու համար՝ 1923-5ին հետեւած է Պերիինի քոնսէրվատիւթուսին, ուրկէ անցած է նոյն նըպատակով Վենետիկ:



Օր. Սիրարփի Գոնտայեան հանդէսը տուած է Տիթորոյի մէջ Շահ-Մուրաթեանի հետ՝ փայլուն յաջողութեամբ և անկէ վերջ Ամերիկեան շրջանակներու մէջ ցոյց տուած է իր տաղանդը: Ամերիկեան թերթերէն Պոստօնկոպ, Պիվերլայ, Իվինկլ թայմզ, Փետրիա-Սրնէյ Սքառ, Փետրիա Սքառ, Տիքսոյիթ Նիւյզ, Նիւքոն Կրաֆիք և ղեռ շատեր մեծ գովեստով և խանդավառութեամբ գրած են «երիտասարդ հայ արուեստագիտուհի»ին մասին, բազմաթիւ գայննչանաւոր ջութակահար Գրայոյէրի հետ: Օր. Սիրարփի տաղանդը հրապարակաւ զնահատողներն եղած են անուանի բրոֆէսորներ, ինչպէս Վան Լառ (Պերլին), Կարնիէնի (Միլանոյի) եւ այլն: Օրիորդ Սիրարփի ներկայիս կ'ապրի Վոթըրթաուն Պոստոնի մօտ. Հասցէն է S. Kondaian, 522 Mt. Anburn str. Watertown Mass (U. S. A.):

ԳՈՆՏԱՅԵԱՆ Վահրամ, ծնած է Պարտիզակ, որդին Յակոր Գոնտայեանի և մօր կողմանէ թոռ Մինաս Սըլըեանի: Տեղւոյն Բարձրագոյն վարժարանի շրջանը փայլուն կերպով աւարտելէ ետք տարի մը ուսուցչութիւն կ'ընէ և յետոյ կ'անցնի Պոլիս և Ռոպէրթ Գոլէճի շրջանն ալ կ'աւարտէ ճարտարագետի վկայական ստանալով:



Վ. ԳՈՆՏԱՅԵԱՆ

Միլան և Ճիպութի կը պաշտօնավարէ իբրև վարիչը Առեւտրական Տունի մը և ներկայիս Ճիպութիի Ամերիկեան փոխ-հիւպատոսութիւն ալ կ'ընէ:

ԳՈՆՅԱ, կին Աւագ Իւանեանի, 1260ին Սմբատ Օրբելեանէն (Ուսպելեան) կը սպաննուի:

- ԳՈՇ ԱՆՏՈՆ Տ. Պոյանեան Անտոն:
- ԳՈՇ ՄԵԻԹԱՐ Տ. Մխիթար Գոռ:
- ԳՈՇ ՄԵԻԹԱՐԱՅ ՎԱՆՔ Տ. Գեթիկ վանգ:
- ԳՈԶԱՐ ԳԴ. Չարսանճագի, մօտ 200 բնակչօք, 50ը Հայեր էին:

ԳՈԶԱՆ, Ակնէն գրեթէ կէս ժամ հեռու միւսպաղաղ քարաժայռ լեռ մը, այսպէս կոչուած է այն պատճառով որ իր գագաթէն ձմեռ ժամանակ առատ ջուր սահանակարկաչ, մեծ բռնութեամբ և զոչմամբ վար կը հոսի:

ԳՈԶԱՐՆԵՐ, ԳԴ. Իրազի, ուր քանի մը տուն Հայեր կ'ապրին:

ԳՈԶԵՆ, հին ԳԴ. Սիւնեաց Գողթն գո.ի:

ԳՈԶ ՀԻՍԱՐ, ԳԴ. Սերաստիոյ, ուր 40 տուն հայ բն. կար:

ԳՈԶՈՎԻ, այլազգաբնակ ԳԴ. Կամախի:

ԳՈԶՈՒԼՈՒԳ, ԳԴ. Ատանայի, որուն ազգային վարժարանը 20 մանչ կ'ուսանէին:

ԳՈԶՈՒՆԵԱՆ Տ. Գօյունեան:

ԳՈՌ Արեակունի, եղբայր Տիգրան Բ.ի:

ԳՈՌ Մարգպետունի, որդի Գէորգայ, 956ին Ալտո Գ. թգ.էն սպարապետ կը կարգուի:

ԳՈՌԱԿ, Նահապետ Հայկազն (1285—1267 Ն. Ք. Բ.):

ԳՈՌԻԹ, ԳԴ. Տիգրպնակերտի Սլիվան գաւառակի, 1900ին 100 հայ կաթողիկէ կային, որոնք քրտախօս էին եւ ունէին գեղեցիկ մատուռ մը եւ դպրոց մը:

ԳՈՌՃԱՆ, ԳԴ. Սարսանճագի, 8 տուն մահմե-



տական և 20 տուն հայ բնակիչ ունէր. եկեղեցի Ս. Աստուածածին:

ԳՈՌՆԵՅԻ, Պեսրու, (Pierre Corneille), ֆրանսացի թատերագիր, ապրած է 1604—1684, գրած է Պոլիսնս վկայ Հայկազն ողբերգութիւնը, զոր թարգմանած Հ. Գէորգ Վ. Հիւրմիւղեան, (սպ. Վենետիկ 1858ին և 1873ին):

ԳՈՌՈՋ կամ Գորոզ, տեղի Մաչնոյ և Սեւորդեաց մօտ, ուր Բուղայի ժամանակ Մուկաթլ Վանանդեցին նահապետեցաւ. և որովհետեւ թովմա Արծրունին կ'ըսէ «մեր ի լեառն Քիւ» և այդ լեռան անունը կը յիշեցնէ Աղուանից Գիւ վանքը, հաւանական կը թուի կարծելն, որ այն կողմերը գտնուի տեղս:

ԳՈՍՏԻԿԵԱՆ Արուսեակ օրիորդ, յայտնի դաշնակահարուհի Նիւ Եորքի մէջ:

ԳՈՎՈՒՔ Փէլիս կամ Գեղամ գիւղ, Նիկոմիդիոյ առաջնորդական վիճակի, որուն Գեղամեան զրպրոցին մէջ 1900ին 40 աշկ. կ'ուսանէին:

ԳՈՎՐԻԿԵԱՆ Գրիգոր (Յովհաննէս Անեցի), Արք. և Արքայ Վիեննայի Մխիթարեան Միաբանութեան, ծնած է Դրանսիականիոյ Կերլա (Սամոյուլար) հայաքաղաքը 1841 Մայիս 23ին: Մանուկ հասակին զրկուած է Վիեննայի Մխիթարեանց վանքը ուր 1861ին քահանայ ձեռնադրուած է: Հ. Գովրիկեան երկար տարիներ գտնուած է Վիեննա, Պոլիս. Կերլա դաստիարակչական պաշտօնով, ինքն եղած է դոկտ. Սոնկող Գրիշտովի աջ բազուկը և զլխաւոր աշխատակիցը Armenia հունգարերէն լեզուով հրատարակուած ամսաթերթին որ 1887ին սկսաւ լոյս տեսնել Կերլայի մէջ: Հ. Գովրիկեան միակն եղած է որ Դրանսիականիոյ նշանաւոր ազգայիններու գործունէութիւնը և կեանքը գրած և հրատարակած է «Հանդէս Ամսօրեայ»ի մէջ:

Հ. Գ. Գովրիկեան թէ՛ Կերլայի և թէ՛ Եղիսարեթուպոլի (Տրմպրովենի) — ուր շատ տարիներ իրրե օգնական ժողովրդագետի պաշտօնավարած է — ժողովրդագետարանի և քաղաքային զիւանները պրպտած, նիւթեր քաղած և անոնց հիման վրայ լոյս ընծայած է իր արժէքաւոր գործերը Հայկ յեղիսաբերուպոլիս Դրանսիականիոյ, որ է այս գաղթականութեան պատմութիւնը՝ քաղուած Դրանսիականիոյ իշխանաց եւ Աւստրիոյ կայսերաց առանձնաչորհութեանց կոնդակներէն, ժամանակակից արձանագրութիւններէն, պաշտօնական գրութիւններէն եւն., եւն., 1680—1779: Տպ. Վիեննա, Մխիթ. սպ. 1893 էջ 533: Երկրորդ հատորը՝ 1780—1825. սպ. անդ 1899ին է+554:

Հ. Գովրիկեան 1896ին լոյս ընծայեց Դրանսիականիոյ Հայոց մեքապոլիս կամ նկարագիր Կերլայ Հայաբաղախի ի գիր և ի պատկերս, սպ. Վիեննա, էջ 352:

Հ. Գովրիկեան Իզմիրեան մրցանակով վարձատրուած է: Բացի այս գրական գործերէն, «Բազմավէպ», «Եւրոպա», «Արեւելք»ի և «Ար-



Հ. Գ. ԳՈՎՐԻԿԵԱՆ

մենիայ»ի ու «Հանդէս Ամսօրեայ»ի մէջ հրատարակած բազմաթիւ բանասիրական, աղագրական յօդուածներէն 1868ին լոյս ընծայած է Բանալի արքայութեան աղօթագիրքը, որ մէկէ աւելի անգամներ ապուած է: Իսկ 1877ին հրատարակած է Բարձրագոյն երկրագրութիւն, 1879ին՝ Ընդհանուր պատմութիւն համառոտ, ազգային զարոցաց համար:

Հ. Գովրիկեան, Եղիսարեթուպոլսոյ օգնական ժողովրդագետի պաշտօնէն յանկարծ բարձրացաւ և Վիեննայի Մխիթարեան Միաբանութեան Ընդհանուր ժողովով վանքին Արքայ ընտրուեցաւ 1909 Յուլիս 19ին և արքեպիսկոպոս ձեռնադրուելով 1910ին, 1911ին, իր քահանայութեան յիմամեակը, իսկ 1921ին 60 ամեակը տօնուեցաւ: Քսաներկու տարի վանքի արքանայրութիւն ընելէ ետք ի Տէր հանգեաւ խոր ծերութեան մէջ 1931ի Յունուարին:

ԳՈՎՐԻԿԵԱՆ Թեոգոր Տ. ՅԱԻԵԼՈՒԱՅՐ. ԳՈՏԱՌԻՃ կամ Կոստրին. գղ. Չարսանձագի Փէրին զաւառակի, ունէր 30 տ. հայ, եկղ. Ս. Գէորգ, նախակրթարանին մէջ 30 մանչ կ'ուսանէին:

ԳՈՏՈՂ կամ Գոսով վանք, այս անուամբ վանք մը կը յիշուի Այրարատայ Մաղազ գա.ի Գառնոճորի



մէջ, զոր Սմբատ Ա. Թագաւոր Տաթևայ վանքին նուիրեց: Գորոզոյ խաչը որ կը պահուէր Միծեռնաքարի վանքին մէջ, Թերեա այս վանքին սեփականութիւնն ըլլար, որ r տառի s փոխուելովն միայն կը տարբերի:

ԳՈՏՈՐՁ կամ Գոսեր s. Խուսայգ:

ԳՈՏՈՒՍ կամ Գոսուզ վանք, Սիւնեաց Վայոցձոր գո.ի մէջ կը գտնուի վանքս, որուն մատուցներէն միոյն մէջ կը նշմարուի Չի (=1271) թուականը: Այս մատուռը և կամ ուրիշ փոքրիկ եկեղեցի մը կը կոչուի Սրբիկ վանք, Քննութեան կարօտ է այս վայրը:

ԳՈՐԱԳԵՏ, կը յիշուի Սիւնեաց Բաղք գո.ի Քաչուհիք վիճակի մէջ:

ԳՈՐԱՅԻՔ, հին գղ. Սիւնեաց Հարանդ գո.ի:

ԳՈՐԳ, իշխան Արջուց, 630ին կը պատերազմի Պարսից զէմ. ու ներսէս Գ. կթղ.ի օրով՝ Տարօնոյ Ս. Կարապետ վանքէն Ս. խաչափայտի մաս մը գողնալ տալու համար՝ Վահան Կամսարականէն կը բանտարկուի Ողկան ամրոցին մէջ:

ԳՈՐԳ ԼԱՇԱՍ. s. Լաւա:

ԳՈՐԳ սարկաւազ. Յովհաննէս պատմարան կթ.ի օրով նըսր ոստիկանէն հալածուած՝ Բիւրակոսն ամրոցին մէջ կ'ապաստանի 923ին:

ԳՈՐԳ կամ Գեորգ Անեցի, 1060ին վրէժխնդութեան համար՝ վարձուած թուրքերով Յունաց վրայ կը յարձակի:

ԳՈՐԳ. գրիչ Սուխարայի Աստուածածին վանքին մէջ (ի Քաջբերունիս) 1425ին:

ԳՈՐԳԷ կամ Գեորգի Դեմեաբեան, թգ. Վրաց 1161ին Անին Փատուունի ձեռքէն կ'առնէ. յաջորդ տարին Դուռնը՝ Պարսիկներէն, և հոն վերակացու կը զնէ Իւանէ Որբելիանցը, յետոյ անոր հետ թշնամանելով 1177ին կը ջնջէ Որբելիանց ցեղը: Կը մեռնի 1184ին: Տե՛ս Գորգի:

ԳՈՐԳԷՆ s. Կորիկէ և Գուրգէն:

ԳՈՐԳԻ կամ Գեորգէ Բագրատունեան. թգ. Վրաց և Ափխազաց 1015ին:

ԳՈՐԳԻ Բագրատունեան, թգ. Վրաց Լէնկթիմուրի օրով (1400).


ԳՈՐԳԻ Մելիք, եղբայր Թովմա Մեծորեցւոյն, տանուաէր Աղուի, Արծկէի և Արճեչոյ տանուաէրներու հետ՝ 1430ին Սքանտար շահ արմէնին կ'երթայ ընծաներով՝ անոր բարկութիւնը իջեցընելու և կը յաջողին:

ԳՈՐԳՈՐ, կը յիշուի Այրարատայ Աչոցք գո.ի մէջ:

ԳՈՐԳՈՓ, կը յիշուի Կամախի մէջ:

ԳՈՐԷՍ, Գորիս կամ Կորես. նշանաւոր աւան՝ Սիւնեաց Հարանդ գո.ի մէջ, Զանգեզուր գո.ի կեդրոնը՝ կը թափուի ճիւղ և նոր մասերու: Գորիսի արեւելակողմն է Տեղի և արեւմտեան

կողմը՝ Ուշքեփէլէր բարձրաւանդակները. ասոնք զէպի հարաւ իրարու կը մօտենան, իսկ հիւսիսային կողմը իրարմէ հեռանալով կը ձեացնեն փոքրիկ նովիտ մը, որուն մէջէն կը հոսի Գորիսի գետակը: Տեղի բարձրաւանդակը կը կտրուի ուրիշ ձորակով մը՝ որ արեւելքէն կ'իջնէ զէպի



Գ ո Ր Է ս ա լ ա ն ը

արեւմտահիւսիս: Զորակի մօտ կը բարձրանայ Լաստ գագաթը, իսկ աւոր մօտ՝ ապառաժ բարձր ժայռ մը՝ որուն վրայ ի հնունմ բերդ կայ եղբր և ցարդ կը տեսնուին հետքերը: Բերդի ժայռ իր շարունակութեան վրայ ունի զանազան մեծութեամբ կոնաձև գագաթներ, որոնք կազմուած են ջրոյ ազդեցութեամբ: Նոյնպիսի կոնաձև ժայռեր շարուած են նաև մօտակայ ձորակի երկու կողմերը: Ասոնք ընդհանրապէս բաղկացած են կարմիր աւազի շերտերէ, տեղ տեղ ժայռ քարերու խառնուրդով. իրրև բացառութիւն կան նաև սպիտակներ: Նոյնպիսի կազմութիւն և կարմիր կամ ստիտակ գոյն ունի նաև բարձրաւանդակի բերդի հանդէպ գտնուող լանջը, որ ուղղահայեաց զառիվայր է: Այս լանջի, ինչպէս և ձորակի ու բերդի քերծի մէջ կան բազմաթիւ և փոքր արհեստական քարայրներ, որոնք երբեմն ծառայեր են իրրև խոտնոց: Ի հնունմ այս արհեստական քարայրները կը կազմէին մելիքանիսա Գորիս գիւղը. որուն աղքատ զասակարգը. դարձեալ կը շարունակէ այդպիսի բնակարաններ կտրել իրեն համար, իսկ հարուստները սկսեր են շինել կանոնաւոր տներ:



Գիւղի կեղրոնը կը գտնուէի Ս. Հռիփսիմէ հին եկեղեցին և մօտը Մելիք Հիւսէինեաններու նախկին ապարանքը, որ այժմ աւեր է: Գորիսի հին մասը ընդհանրապէս կեղտոտ է, անկանոն և իրարու վրայ դիզուած տներով, նեղ և ծուռուծուռ փողոցներով:

Գորիսի նոր մասը հնոյն հակապատկերն է: Այս մասը հիմնուած է 1870ին, կը գտնուի հնոյն դիմացը, գետոյն աջակողմը: Հինգ կանտնաւոր և շատ լայն փողոցներ կ'երկնան հարաւէն հիւսիս, ուրիշ հինգ փողոցներ ալ խաչաձև կը կրտրեն այս փողոցները: Գրեթէ կեղրոնը կը գտնուի մեծ հրապարակ մը: Տները ընդհանրապէս գեղեցիկ են, մեծ մասամբ երկյարկանի: Համարեա բոլոր տները իրենց առջև պարտէզներ ունին: Կայ նաև նորաշէն եկղ. մը, ոչ այնչափ մեծ, որուն դռները անհամեմատ մեծ են և պատուհանները չափազանց նեղ: Գիւղիս բնակիչք ամբողջ հայ են. 1902ին մօտ 4000 հոգի: Գերմանացի ճանապարհորդ մը 1850ին աւանին գաւառապետին տունը իջեանելով, որ էր հայկազն և ազնուատոճճ ձիւնակիր բէկը, գոնութեամբ կը յիշէ անոր հիւրընկալութիւնը: Ռուս արևելագէտն Նիկողայոս Սանիքով, այցելած է աւանիս 1848 տարւոյ Նոյեմբերին մէջ: — Նոր Գորիսէն վերստ



Գորիսի լեռնային տեսարանը

մը հեռու դէպի հիւսիս, նոյն հովտի մէջ կը գտնուին քարաշէն գեղեցիկ վանքի մը աւերակները, քանդուած պարսպով և քանի մը խուցերով: Աւերակաց մէջ արձանագրութիւններ չեն

նշմարուիր, միայն աւանդութեամբ կը պատմուի, թէ երբեմն սա ևս շատ հարուստ վանք է եղեր: Այստեղ կայ եղեր և այնպիսի մեծ զանգակ մը, որուն ձայնը շատ հեռու կը լսուի եղեր. ուստի և ժողովուրդը սովորեր է ըսել «Զանգը-զօռ», այսինքն զանգը զօրաւոր, և իբր թէ ասկից առաջ եկած է Զանգեզուր անունը: (Էփրիկեան՝ «Բնագիտութիւն», քաղուած Հ. Ալիբախի «Սիսական» քնն):

Գորիսի մէջ 9 թերթ լոյս տեսած է, առաջինը Գաւառ, 1910ին, Ռուսան և Սիւնիք (1918), Զանգեզուրի Կոմունիստ և Կարմիր Զանգեզուր (1920), Ազատ Սիւնիք, Խորհրդային Զանգեզուր, Կարմիր Ռաւապար և Երիտասարդ Ռաւապար (1921):

Գորիսը կարճատեւ մը մայրաքաղաքն եղած է Ս. Վրացեանի կառավարութեան:

Ներկայիս Գորիսը Ս. Հայաստանի շրջաններէն մին է. ամբողջ շրջանին բնակչութիւնը կը համարուի 30 հազար:

ԳՈՐԻՍ Հին կամ Վերի Շէն, Սիւնեաց Հարանդ (Զանգեզուր) գ. ի մէջ, Գորիս գետի ուղղութեամբ, դէպի հիւսիս կ'երկնայ բլրակներու շարք մը, որոնց մէջ կայ բարձր. կարմիր ժայռ մը, զոր տեղացիները կը կոչեն Պղնձաբարձ և նոյն անուամբ բոլոր բլրակներու շարքը՝ Պղնձաբարձ սարեր: Սոյն ժայռէն քիչ մը հիւսիս, համանուն բլրակներու լանջին վրայ կը գտնուի հին Գորիս կամ Վերի Շէն կոչուած գիւղը: Գիւղս ունի փոքր եկեղեցի մը, կիսով չափ քերծի մէջ փորուած՝ Նարակունց (Նորակունք) անունով, որոյ զրան վրայ գրուած է հետեւեալ արձանագրութիւնը. «Թ. ՌՉԷ (=1628), Ես Նասիս կանգնեցի սր. եկեղեցիս ի փրկութիւն հոգւոյս: Այս եկեղեցին, այժմ ևս իբր աղօթատեղի է. կայ նաև ուրիշ հին եկեղեցոյ մը աւերակը: Աւետարանի մը յիշատակարանին մէջ, որ գրուած է 1667ին «ի յերկիրս Զազաձոր, ի գիւղս՝ որ կոչի Կորէս», կը յիշուի Ս. Գրիգոր Թ. Ս. Աստուածածին անուամբ եկեղեցիներ 1667 թուին: Գիւղս 1902ին 112 հայ բն. ունէր: Գորիսի Մելիք Յարութիւնը կ'ըլլայ որ առաջին անգամ, Զանգեզուր գ. ի մէջ գետնախնձորի մշակութիւնը կը մտցնէ, որուն համար 1848ին Վորոնցովէն Աննայի ժապաւէնով տրած ժամտալ կը ստանայ: (Էփրիկեան՝ «Բնագիտութիւն»):

Յիւսակարանաց մեջ Գորիսեցի՝ Գորեցի կը կոչուի. 1470ին Գորեցի Մարտիրոս մը կը յիշուի. 1588ին՝ Գորեցի Բարսեղ եպ.:

ԳՈՐՄՈՐԹ կամ Գորձոն, նշանաւոր և բազմամարդ գղ. Հայոց, Վասպուրականի Առերբունի (Բերկրի) գ. ի մէջ, Ունի գեղեցիկ գիրք և 1902-



ին 80—90 տուն բնակիչ, ուր կային հետեւեալ նուիրական տեղերը, ումանք կիսակործան, ումանք փոքր մատուռ, Ս. Յովհաննէս, Ս. Կարապետ, Ս. Սանդուխտ, Ս. Վարոս, Ս. Կապոյտ Խաչ, Ս. Զընճըլուոր (չղթալուոր): Գիւղացիք յատուկ սնտուկի մը մէջ կը պահէին Թուխ Մանուկ անուամբ ձեռագիր աւետարան մը, զոր երբեմն միայն քահանան մատուցէր պէս դուրս հանելով կը կարգար հիւանդներու վրայ: Գործոտ Բերկրիի ամէնէն շէն գիւղը լինելով՝ 1878ի Ռուս-Թուրք պատերազմի տարին շատ վնաս կրեց Շէյխ ձէլլայէտիների բանակէն: Միայնեալ Ընկերութիւնը հոս նախակրթարան մ'ուսնէր. եկեղեցին Ս. Կիրակոս կը կոչուէր:

ԳՈՐՈՐՈՒ ՎԱՆՔ s. Թեոդորոսի (Ս.) վանք:

ԳՈՐՈՁ s. Գոռոզ:

ԳՈՐՈՅ, աւերակ գիւղ Այրարատի Կողովի գաւ. մէջ:

ԳՈՐՈՅԵԱՆՅ Նազար Յ. հեղինակ եւ դասագիր, իր առաջին գործը Գասխարակուրիւն Հայոց՝ տպուած է Կ. Պոլիս 1880ին. կը մեռնի Պոլիս, 1902ի սկիզբները: Սա գրած է նաեւ Պարսկահայք գործը, որ 1901ին Իզմիրեան մրցանակին արժանացած է. (այդ մասին տես «Բազմավէպ» 1902 էջ 188 Հ. Զրաքեանի յոդուածը):

ԳՈՒԳԱՐԻ կամ Գուգարաց աւխարհ. Հայաստանի ընդարձակագոյն նահանգներէն մին, որ կը տարածուի գրեթէ Հայոց Մեծաց ամբողջ հիւսիսային կողմը: Սահմաններն են հիւսիսէն Վրաստան, արեւելքէն Ուտի, հարաւէն Այրարատ եւ արեւմուտքէն Տայք: Նահանգիս հիւսիսային սահմանները խիստ հին ժամանակներէ եւ հարաւային սահմաններէն առաջ Վրացիք գրաւելով՝ իրենց սեփականած են երկար ժամանակ, այդ պատճառաւ չեն յիշուիր նոյնիսկ Գուգարաց գաւառներու շարքի մէջ: Նշանաւոր է նահանգս բնական վայրերովն ու տեմարաններով. բարձր եւ խորածոր լեռներով, մացառախիտ անտառներով, եւ մանաւանդ բազմաթիւ լճերովն ու գետերով: Արեւմտեան կողմէն Տայոց լեռներէն կը բխէ Արսանուշայ գետը՝ ձորոտի հզօր օժանդակը, ուրիշ զօրաւոր օժանդակ մ'ալ Ահարա-սու՝ կ'ոռոգէ նահանգիս հիւսիսային արեւմտեան եղերքները, ասոնց մէջ կը բարձրանան Շաւշթու լեռները: Այս լեռներու արեւելեան կողմէն Կուր գետը ելլելով Տայոց Կող գաւառէն՝ Արաքսանէն կ'անցնի, ուր կայ Թեք-կէօլ փոքր լճակը, եւ անոր արեւելեան կողմը կը գտնուի, նահանգիս եւ Թերեւս բոլոր Հայաստանի, ի բաց առեալ Ուրմիոյ, Վանայ եւ Գեղամայ ծովակներն, մեծպ-

գոյն լիճը Զրլսր-կէօլ կամ Պալկացիս եւ լաւ եւս Ծովակ Հիւսիսոյ կոչուածը, որուն հիւսիսային կողմն է Կեօֆ-սաղ եւ վերջնոյս հիւսիսային կողմն ալ ուրիշ լճակ մը Խոզապիւն անուամբ: Այս լճակս արեւմտակողմէն դէպի հիւսիս կը վազէ Կուր գետը, եւ յետոյ դէպի արեւմտահիւսիս դիմելով՝ կ'անցնի Ախալցխայի արեւելեան կողմէն, եւ ապա դիմելով արեւելահիւսիս՝ կը հասնի մինչեւ Գօրի քաղաքի սահմանները, այնուհետեւ կը սկսի վար իջնալ դէպի հարաւային արեւելք, մինչեւ նահանգիս սահմանածայրը: Իւր այս ընթացից մէջ կ'ընդունի բազմաթիւ վտակներ՝ ոչ այնչափ զօրաւոր, բայց ստորին կողմերը կ'ընդունի աջակողմէն երկու բաւական հզօր օժանդակներ Այկէք եւ Խրամ կամ Քցիա գետ կոչուածները՝ հանդերձ ասոնց ոչ այնչափ փոքր օժանդակներով, որոնք են Յուրսագե, Մաւիլերի կամ Փոքր Խրամ, Քոսաւրի Պոնչալու կամ Չորոյ գե: Հիւսիսոյ ծովակի արեւելեան կողմն եւ Արփա կէօլ լճակը՝ ուսկից սկիզբ կ'առնու Արփա-չայ կամ Ախուրեան գետը, եւ անոր հիւսիսային կողմը Էօրիլիլ լեռը եւ Տեալան լեռները, որոնց հիւսիսակողմերն ալ է Սաղամ կամ Խանչալը լիճը: Խանչալի արեւելեան հիւսիսային կողմն է Թումանյը կամ Տուման լիճը եւ ասոր արեւելեան հիւսիսը Փառաւան կամ Թուխրավան մեծ լիճը: Նահանգիս լեռներէն յիշենք. Քոսեան Տիկորի, Լեախլու, Մալ-սիսի. Քալմարի, Շիցար, Մոքրայա (Խոնալ), Ապոց, Պեգոպսալ. Բալպակի լեռից, Չարսալի, Չարսր սաղ, Կեօֆ սաղ, եւ այլն: Լեռանց խոր հովիտները շատ անգամ կը պարսպեն նահանգիս հին գաւառները. որոնք կը ձեւանան Փոքր եւ Չոր մասնիկներով, ինչպէս Չորոփոր, Կողբփոր, Մանգըլեաց փոր, եւ այլն: Այլսարհիս բերքերը առանձն են եւ զանազան տեսակ, փայտ, ընդեղէնք, լեռանց մէջ կան պղնձոյ եւ այլ հանքաց բովեր, մեր հին աշխարհագիրը կը յիշէ Գուգարաց մէջ «գԱնալութ, զՀաճարածառ, զՍերկելիլ, եւ զՏօսախ». անալութ անուանածը որոշ չգիտենք ինչ է. բայց աւելի բոյս կը թուի եւ ոչ ընձուխ կենդանին: Ստրարոն՝ պողաւէտ ծառերէ զատ, կը յիշէ նաեւ նահանգիս մէջ ձիթենիներ:

Աւելի նշանաւոր է նահանգս քաղաքական հանգամանքներով: Ի հնումն սահմանակից եւ մերձաւոր լինելով այլ եւ այլ ազգաց եւ աշխարհաց, անոնց տիրապետութեան ենթակայ եղած են իւր մասերը: Գուգարք անուան ստուգաբանութեան վրայ եւս քանի մը խօսք ըսենք. նախ կը թուի Գով-արէն ծագած, հաւանական է մեկնիչներէն



ոմանց ըսածն, թէ Գովք եւ Մազովզ մէկ ազգ էին եւ իրենց քննաւայրն էր այս նահանգս, ուսկից սփռած տարածած է իրենց սերունդը Կովկասու կողմերը եւ ի Սկիւթիա:

Գուգարաց բուն երկիրը Հայկազանց միջոց կը թուի թէ կառավարուեր է առանձին նախարարներով եւ թագաւորով եւ Աղեքսանդր Մեծէն վերջ գրաւուած էր Վրաց եւ յետոյ դարձեալ Հայոց այն թագաւորաց իշխանութեան տակ է անցած, որոնք թագաւորեցին Վաղարշակէն առաջ, Սելեւկիացւոց ժամանակ: Վաղարշակ թգ. ը հոս մեծ բղնչխուսթիւն հաստատեց, որպէսզի Հայաստանի հիւսիսային կողմը Կովկաս լեռներու մէջ բնակող պաշտօնող ազգերէն պահպանէ, ահա Խորենացւոյն խօսքերը. «Կարգեաց կողմնակալ հիւսիսոյ զմեծ եւ զօր ազգն, եւ նահապետութեանն անուն կարդայ՝ Բիբեխ Գուգարացւոց»: Այս բղնչխը կ'իշխէր միանգամայն երբեմն սահմանակից Վրաց վրայ. այդ պատճառաւ գրոց մէջ կը հանդիպինք տեղ տեղ կոչուած Բիբեխ Վրացի կը թուի, թէ երբեմն բուն Վրաց թագաւորն իսկ Հայոց թագաւորի գերիշխանութեան ներքոյ եղած ըլլայ միանգամայն նահանգիս բղնչխ, ինչպէս Տրդատայ ժամանակի Այս բղնչխներէն անուամբ կը յիշէ Խորենացին ոմն Ասուրա՝ բղնչխ Գուգարացւոց: Առաջին անգամ Հայոց Արտաշէս թագաւորը Գուգարաց բղնչխի իշխանութեան վրայ աւելցուց նաև Պոնտոս ծովու կողմնակալութիւնը, ինչպէս կը յայտնէ Խորենացին. «Բայց (Արտաշէս) զղուսար իւր զԱրտաշատայ՝ տայ կին Մհրդատայ ումեմն Վրաց բղնչխի մեծի... եւ հաւատայ սմա զկողմնակալութիւն հիւսիսային լեռանցն եւ Պոնտոս ծովու: Նահանգիս գաւառներէն մէկ քանին, ինչպէս Խորենացին կը գրէ Վաղարշակ թագաւորը ժառանգեցոյց Շարայի որդիներէն Գուգարայ. «Իսկ Գուգարայ որ յորդուոյն Շարայի՝ ժառանգեաց զլեռն Մթին որ է Կանգարք. եւ զկէս մասինն Ջաւախաց, զԿողք, զԾոր, զՁոր, մինչև ցամուրն Հնարակերտ»:

Երկրորդ Արշակայ օրով, ուրիշներու հետ ապրտամբելով նաև այս նահանգս՝ Վրաց ձեռքը անցաւ, բայց Պապ թագաւորի քաջակորով սպարապետն Մուշեղ, Բուզանդայ (Ե. ԺԵ) գրածի համեմատ, շուտով նորէն Հայոց իշխանութեան ներքոյ նուաճեց. «Ապա խաղայր սպարապետն Մուշեղ ի վերայ Վրաց արքային, եւ նեղէր զնա մեծապէս, եւ հարկանէր զերկիրն, եւ վանէր զամենայն աշակերտն Վրաց, եւ հանէր ընդ սուր զամենայն ազատս եւ զազգս նախարարացն... եւ զբղնչխն Գուգարաց՝ որ յառաջն ծառայ էր թա-

գաւորին Հայոց եւ ապստամբեաց, կալեալ զԸխատէ... եւ թափէր զամենայն զաւառն. եւ առնոյր պատանգս, եւ զմնացեալսն ի հարկի կացուցանէր, եւ զհին սահմանսն որ յառաջ ունէր լեալ ընդ երկրին Հայոց եւ ընդ երկրին Վրաց, որ է ինքն գետն Կուր, այնուհետև յինքն վտարեալ զառնայր անտի»: Բայց տարակոյս չկայ որ քիչ ժամանակ վերջը նահանգիս տիրացան Վրացիք. յետոյ Բագրատունիք ժամանակ մը տիրեցին արեւելեան եւ հարաւային մասին: Վերջին դարուց մէջ Օսմանցիք տիրեցին արեւմտեան մասին, իսկ միւս մասն՝ Վրաց թագաւորի իշխանութեան ներքոյ էր: Ռուսերը՝ Վրաստանի տիրելով, այս մասն ալ իրենց անցաւ. անցեալ դարու մէջ տիրեցին նաև Օսմանեանց իշխանութեան ներքոյ գտնուած մասին: Այս նահանգէս շատ անգամ հիւսիսային բարբարոս ազգերը անցան սպառնակելով զէպի Հայաստան, եւ շատ անգամներ եւս Հայոց քաջերը անոնց ետեւէն յարձակելով քիչցին այս սահմանածայր աշխարհէս, շատ արեւն խառնելով Կուր գետոյն ջուրերուն հետ:

Մ. Խորենացին Գուգարաց մէջ ինն գաւառ կը դնէ, որոնք են. Ա. Կղարջի՝ նահանգին արեւմտեան հարաւային ծայրը, Կողի արեւմտեան եւ թալուսկարայ հիւսիսային կողմը. Բ. Արսահան՝ Կղարջայ արեւելեան հիւսիսային կողմը. Գ. Ջաւախի՝ Արտահանայ արեւելեան հիւսիսային կողմը. Դ. Թուեղի՝ Ջաւախքի արեւելեան հիւսիսային կողմը. Ե. Կանգարի՝ հարաւային կողմը. Զ. Տաւիւր՝ Կանգարաց արեւելեան կողմը զէպի հարաւ. Է. Ծորփոռ՝ Տաշրաց արեւելեան հիւսիսային կողմը. Ը. Զորփոռ՝ Ծորփոռի հարաւային եւ արեւելեան կողմը. Թ. Կողփոռ՝ Զորփոռի հարաւ արեւելեան կողմը: Բայց հին օրինակի մը մէջ Ջաւեռ անուամբ գաւառ մը եւս կը յիշուի, եւ է ըստ մեզ Ժ. Շաւեթի: Ասոնցմէ զատ կան կան նաև երեք գաւառներ, զորս Վրացիք ի հնուէն առած են ի Հայոց, ասոնք են՝ ԺԱ. Մանգրլեացիոն՝ բոյր գաւառներու հիւսիսային կողմը, Տփլիսի եւ Գորի քաղաքաց մէջ տեղ: ԺԲ. Բողնփոռ՝ Մանգրլեաց հարաւային եւ Ծորփոռոյ հիւսիսային կողմը. ԺԳ. Պարուար՝ Մանգրլեաց եւ Բողնփոռի մէջ տեղ, Տփլիսեաց արեւմտակողմը: Ասոնց վրայ կարելի է յաւելուի նաև ԺԴ. Կայեհ գաւառը՝ որ սահմանակից է Ուտիի եւ կը գտնուի, Զորփոռի, Կողփոռի եւ Աղստե գետոյն մէջ տեղ մանաւանդ որ Գուգարաց մասն ու գաւառ եւս կոչուած է: Այս բաժանմունքները, ըստ կարի սահմանները նշանակելով՝ մենք զրինք հայկական աշխարհագրութեան համեմատ, բայց Վրաց







ցումն կ'ուսանին: Ըին եկեղեցին 1870ին այրեցաւ, բայց 1875ին նորէն շինուեցաւ: Քաղաքս ունի նաև հայկական մատուռ մը գերեզմանատան մէջ, զոր կանգնած է իւր ծախքով Լոբի-սիմէ Ռոմաշկան, ուրիշ մատուռ մ'ալ կայ Պանելով գղի մէջ՝ Աննա Պողոսովիչ արդեամբ կառուցուած: (Էփրիկեան՝ «Բնաշխարհիկ»: Լ. Յ. Ազգերէն բարգմանուած ընդարձակ ուսումնասիրութիւնը քաղաքիս մասին՝ Տե՛ս «Բազմավեպ» ԾԶ (1898) էջ 387, 419, 520 651):

ԳՈՒԹԼՈՒ-ԳԸՇԼԱԳ Տ. ՂՈՒՐԻԻ:

ԳՈՒԹ ՄԱՅՐ Տ. ՔՈՒՐԱՄԱՐ:

ԳՈՒԹՈՒՃԵԱՆ Լաճի Յարութիւն (Ղարիպ), աշուղ, Մարաշի, ծն. 1834ին. որդի Յակոբի եւ Թրվանդի կը մեռնի 1915 Հոկտ.ին. երգած է սէրը (Գալուստեան «Մարաշ» 539):

ԳՈՒԻՏՈՆ կամ ԳԻՍՏՈՆ, ԿԻՍՏՈՆ, ԿԻՏ որդի Զարուհի (Զապէլ) դստեր Մեծին Լեւոնի, սա առնելով մը Կիպրոս փախցուեցաւ իր Յովհաննէս եղբոր հետ և ապրեցաւ իր հորեղբոր Էնրիկոս թգ.ին մօտ: 1326ին Գուիտոն առողջ երիտասարդ մը դարձած Յոյն և Լատին մեծամեծներէն կը յարգուէր: Բիւղանդիոնի Հայկազն կայսրուհին Մարիամ, Գուիտոնի մօրաքոյրը զինքը Պոլիս հրաւիրելով՝ մեծ պատրիկի մը զուտորերէն մին ասոր կնութեան տուաւ. երբ կինը անորդի մեռաւ Գուիտոն Սիւրբիանոս անուն երեկի մէկուն դստեր հետ ամուսնացաւ եւ Անդրոնիկոս կայսրէն Աքայիոյ իշխան և վերակացու դրուեցաւ: 1343ին, Կիլիկիոյ Կոստանդին Դ. թագաւորին սպաննուելէն ետք հայ իշխանները Գուիտոնը թագաւոր զրին: Այդ տարին իսկ Եգիպտացիք և Բարեւացիք Կիլիկիոյ վրայ յարձակեցան: Գուիտոն անպատրաստ գտնուելով ընդդիմ մը մէջ ամրացաւ և Հոռոմայ կղզեմէս Պապին դիմեց որ օգնէ իրեն. Անդրիոյ և Գաղղիոյ թագաւորները Քահանայապետին դիմումին վրայ թէև խոստացան օգնել Հայոց, բայց խոստումը գործի չանցաւ երբեք: Գուիտոն Պապին սիրոյն և համակրանքին արժանանալու և նիւթապէս օգտուելու համար իր եղբորը պէս լատինամոլութեան սկսաւ և այդ եղաւ իր սպաննուելուն պատճառը, երկու տարի թագաւորելէ ետք (1345ին):

ԳՈՒԻՏՈՆ ԼՈՒՍԻՆԵԱՆ, թգ. Երուսղէմի եւ Կիպրոսի 1190ին:

ԳՈՒԵՐԳՈՒԻՆԵԹ, գղ. Գուգարաց Թուեղք գու.ի մէջ:

ԳՈՒԼԱ, գիւղաքաղաք Զմիւռնիոյ Սարուխան գու.ի, բն. 6—7000. սակաւաթիւ Հայեր կային:

ԳՈՒԼԱՍԸԶ, ամայի գղ. Այրարատի Մաղաղ Ոստան գու.ի մէջ:

ԳՈՒԼԱԶԵԱՆ Օլկա, գերասանուհի, ծն. 1885ին Թիֆլիսի մէջ: Կը մահէ տեղւոյն նախակրթարանը, սակայն չքաւորութեան պատճառաւ չի կրնար ուսումը շարունակել: Կը նուիրուի բեմին: Առաջին անգամ բեմ կ'ելլէ Գ. Մունդուկեանցի «Էլլի մէկ գոն» թատերախաղի ներկայացման մէջ, Սորոմէի եւ Նատալյայի դերերով: Առաջին իսկ օրերէն կը գրաւէ Մունդուկեանցի ուշադրութիւնը: Ժամանակ մը կը խաղայ Ամօ Քարաշեանի խումբին մէջ, յետոյ՝ կը հրաւիրուի խաղալու Թիֆլիսի գեղարուեստական թատրոնին մէջ, որ այդ շրջանին Տիկին Սիրանուշի ղեկավարութեան տակ կը գտնուէր: Յատկապէս աչքի կը զարնէ իր խաղարկութիւնը վօտվիչներու մէջ՝ մանուկներու և սպասուհիներու (սուպրէթ) դերերով: Ծնորհիւ իր յամառ աշխատանքին եւ ինքնօգութեան՝ Գուլայեան հետզհետէ կը ստանձնէ բարդ դերեր:

Օլկա Գուլայեանի բեմական ընդունակութիւնները հարուստ եղած են և ընդարձակ: Ողբացած է Անդրկովկասի զանազան քաղաքներու, ինչպէս նաև Թուրքիոյ եւ Իրանի մէջ:

1926ին կը տօնուի Թիֆլիսի մէջ իր բեմական գործունէութեան 25 ամեայ յորելանը: Այնտեղ, պետական թատրոնի մէջ իր դերերը կը կրեն կատարելութեան կնիք: 1935ին իր բեմական գործունէութեան 35 ամեակի առթիւ Ո. Հայաստանի Կեդր. Գործ. Կոմիտէի որոշումով ժողովրդական դերասանուհի տիտղոսը տրուեցաւ իրեն:

ԳՈՒԼԱՍՔԷՆՏԻ, գղ. Սիւնեաց Աղահէճք գու.ի մէջ:

ԳՈՒԼԱՄԻՐԵԱՆ Սեփաննոս Յովհաննէս, աշխատակից 1794ին Մաղարաի մէջ յոյս տեսնող Ազգարարի:

ԳՈՒԼԱՄԻՐԵԱՆ Աբգար Սեփանոսեան, Տե՛ս ՅԱԻԵԼՈՒԱԾՐ:

ԳՈՒԼԷԼԻ Տ. ՂՈՒՂՎԻ:

ԳՈՒԼԷ ՄԻՐԵԱՆ, գղ. Տիգրանակերտի, 12 տ. հայ բն. ունէր:

ԳՈՒԼԻԿԵԱՆ Սարգիս Բ. (Կիլիկեան) առաջնորդ Զէյթունի 1861ին:

ԳՈՒԼԻՃԱՆ Տ. ՂՈՒՂԻԱՆ:

ԳՈՒԼԻԿԷՄ Տ. ԿԻԼԻԿԵԿՏ:

ԳՈՒԼԻՊԷԿՏԻՉԷ, գիւղակ Սիւնեաց Նախճաւան գու.ի մէջ, 1902ին 40 տ. հայ բն. ունէր:

ԳՈՒԼԱ ԿԵԱՆ Արմէն, Երևանի պետական թատրոնի վաստակաւոր բեմավար (ոչ ժիւսէօս), Սա 1937ին Արեւիկայ թատերախաղը կը գրէ եւ Երևանի ժիւրիէն 10000 ռուպլի մրցանակ կը չահի:



ԳՈՒԼՆԱԶԱՐ Նախապետ, ծնած 1629ին Ագուլի-  
սի մէջ և այդ պատճառաւ «Ագուլիցի» կոչուած:  
Մեռած է 1 Յունուար 1695ին: Վաճառական:  
Հայոց լուսաւորութեան գործին իրր մեկեկեանս՝  
լիարուան ծախսած է: Վայելուչ գիրեր ձուլել տա-  
լով՝ Վենետիկ կը հիմնէ տպարան մը 1687ին ու  
նոյն տարին լոյս կ'ընծայէ Պարգաբանութիւն Սաղ-  
մոսացը՝ Պոլսեցի Յովհաննէս վրդ.ի ձեռամբ:  
(Քեդիկ՝ «Տիպ ու Տառ 44»):

ԳՈՒԼՈՅԵԱՆ ԱՔՐԱՏԱՄ, նախագահ Ժողկոմխորհի,  
յաջորդ Սահակ Տէր Գարբիէլեանի. ծնած է 1893-  
ին չքաւոր ծնողքէ. 1905ին գիւղական դպրոցը  
աւարտելէ ետք կը մտնէ էջմիածնի ձեմարանը:

Տակաւին դպրոցական նստարանէն՝ ձեմարանի  
մէջ կը մասնակցի ան սոցիալ դեմոկրատական  
խմբակի աշխատութիւններուն:

1911ին ձեմարանը աւարտելէ ետք Ա. Գու-  
լոյեան կ'աշխատի իրր Ժողովրդական ուսու-  
ցիչ: 1913ին կ'անցնի Թիֆլիս և 1914ի սկիզբները  
կը մտնէ Բոլշեւիկեան կազմակերպութեան շար-  
քերը և կ'օգտաստի ոնի կարգով կ'անցնի Թիֆլիսի  
կոմիտէի կազմին մէջ, ուր գործօն մասնակցու-  
թիւն կ'ունենայ գաղտնի տպարան և բանուո-  
րական-բոլշեւիկեան խմբակներ կազմակերպելու  
ընդյառակեալ աշխատանքին:

1915ի ամառը Թիֆլիսի օստիկանութեան կող-  
մէ կ'ենթարկուի խուզարկութեան և հետագըն-  
դումի, այդ պատճառաւ ան Մոսկուա կը մեկնի:  
Մինչև Փետրուարեան յեղափոխութիւնը կ'ուսանի  
Մոսկուայի Շանեալսկիի անուան Ժողովրդական  
համալսարանը, յետոյ Բեդերսպուրկի Հոգեկենսա-  
բարանական Ինստիտուտի իրաւագիտական բա-  
ժանմունքը: Թէ՛ Մոսկուայի և թէ՛ Բեդերսպուր-  
կի մէջ ան իր գործօն մասնակցութիւնը բերած  
է բոլշեւիկեան ուսանողական ընդյառակեալ խմ-  
բակներու աշխատանքներուն:

Փետրուարեան յեղափոխութենէն յետոյ Ա.  
Գուլոյեան Բեդերսպուրկէն կը վերադառնայ Բա-  
գու՝ կուսակցական աշխատանք տանելու, և կը  
կազմակերպէ ու կը ղեկավարէ Արմենիաքենգի  
չրջանի բոլշեւիկեան ջոկատը:

Պորհրդային իշխանութեան հաստատումէն  
վերջ ան Բագուի մէջ կը մտնէ Կարմիր բանակը՝  
դարձեալ կուսակցական աշխատանք տանելու  
համար. սկիզբները՝ իրր առաջին վաշտի կոմի-  
սար, իսկ յետոյ՝ նոր կազմուած Կարմիր Բանա-  
կի սպայակոյտի կոմիսարի օգնական:

Բագուի կոմունայի անկումէն յետոյ Ա. Գու-  
լոյեան կ'անցնի Աստրախան, այնտեղէն ալ  
Մոսկուա՝ զեկուցանելու Ժողկոմխորհին Բագուի  
կացութեան մասին: Մոսկուա 1918—20 կ'աշ-  
խատի «Գլաւսախար»ի մէջ՝ իրր քաղաքական

կոմիսար. 1920—22 ան կ'աշխատի Մոսկուա՝  
տանելով պատասխանատու խորհրդային պարտա-  
կանութիւն:

1922ին Ա. Գուլոյեան կը մտնէ Կարմիր պրո-  
ֆեսուրայի Ինստիտու-  
տի տնտեսագիտական  
բաժինը, զոր կ'աւար-  
տէ, 1925ին: Ինստի-  
դուտն աւարտելէ յե-  
տոյ ան կը գործէ Աշ-  
խատանքի պաշտպա-  
նութեան խորհուրդին  
մէջ՝ իրր գիտական  
աշխատող. ապա կ'ու-  
ղարկուի Թիֆլիս՝ կու-  
սակցական աշխա-  
տանք տանելու: 1927-  
ին կը նշանակուի  
Անդրկովկասեան Կոմ-  
համալսարանի տեսուչ:  
1928ին՝ Անդրկովկասեան  
Ժող. Տնտեսութեան Գլխաւոր  
Պորհուրդի փոխ-  
նախագահ, զոր կը վարէ  
մինչև 1930, երբ կը  
նշանակուի Պետրլանի  
նախագահ, յետոյ՝ Պոր-  
հրդային Հայաստանի  
Հոգաբարձութեան Ժող.  
Կոմիսար, Բիենոյն ատեն  
ըլլալով Հայ Կոմկուսի  
Կեդր. Կոմիտէի անդամ՝  
իրր Գիւղրամնի վարիչ:



ԳՈՒԼՈՅԵԱՆ ԱՔՐԱՋԱՄ

Այս պարտականութիւնը կը տանէր երբ նշա-  
նակուեցաւ Հայաստանի Ժողովրդական Կոմիտե-  
ութեան Պորհուրդի (Ժողկոմխորհի) նախագահ  
1935 Փետր. 19ին:

Ա. Գուլոյեան անդամ էր Կուսակցութեան  
Անդրկովկասեան Երկրային Կոմիտէի (Անդրերկոմ),  
Հայաստանի Կոմկուսի Կեդր. Կոմիտէի, Անդրկով-  
կասի և Հայաստանի Կեդր. Գործ. Կոմիտէներու:

Պորհուրդներու Միութենական 7րդ համագու-  
մարին Ա. Գուլոյեան ընտրուած է Պորհրդային  
Միութեան Կեդր. Գործ. Կոմիտէի անդամ եւ  
Կեդր. Գործ. Կոմիտէի նախագահութեան անդա-  
մութեան թեկնածու:

Երկու տարի վարեց նախագահի պաշտօնը եւ  
1937ին ինքն ալ շնորհազուրկ եղաւ:

ԳՈՒԼՈՅԵԱՆ Յակոբ ԲԺԻՂԿ. Ժընեվէն վկայ-  
ուած, կը գործէ Թաւրիզի մէջ (Իրան):

ԳՈՒԼՈՒՏԻ, գղ. Նիգ գա.ի, Հայերը կը կոչեն  
Չորոյբերան:

ԳՈՒԼՉԱԼԱՐ, գղ. Պաֆրայի, 1902ին ունէր 100  
տուն հայ բնակիչ:

ԳՈՒԿԱԿԱՆ, հին գղ. Սիւնեաց Բաղք գա.ի:

ԳՈՒԿԱՆ, հին գաւառ Վասպուրականի:

ԳՈՒԿԱՆՍ, գղ. Ռչտունեաց գա.ի ըստ Ղևոնդ  
պատմչի (Գլ. Զ.):







տորներով գրուած իր ձեռագիր կենսագրականը շատ հետաքրքրական է եւ խրախուսիչ:

ԳՈՒՅՈՒՄՃԵԱՆ Կարապետ, բժիշկ, նիւ Եորք հաստատուած:

ԳՈՒՅՈՒՄՃԵԱՆ Յ. գրող աշխատակից «Կեանք և Արուեստ» (1932):

ԳՈՒՅՈՒՄՃԵԱՆ Յակոբ, ծնած է Ատանա 1905-

ին Կեոարացի ծնողքէ (Երեմիա և Ուսաննա Գուլումճեան): Նախնական կրթութիւնը ստացած է Ատանայի Արգարեան վարժարանը: 1924ին անցած է Ամերիկա, ուր արպարանի մը մէջ աշխատելէ վերջ մտած է թէ՛մփլ և Փէնսիլվանիոյ համալսարանները: Հետեւած է գրականութեան և լրագրութեան:



ԳՈՒՅՈՒՄՃԵԱՆ ՅԱԿՈԲ

1925-1932 հրատարակած է Ֆիլատելֆիոյ մէջ Հայ Սիւրս թերթը, երբ մէկ կողմէն համալսարան կը յաճախէր: Հիմա (1937) Բանուորի քաղաքական բաժնի խմբագիրն է: Հրատարակած է Ալյուպէս և Ամերիկա, Լեհիճեան երգեր և Արձակ բանաստեղծութիւններ հատորները:

Անդամ եղած է ՀՕԿին, Պետական Հայ Կարճիր Պաշին եւ այլն: (Ալյոյանեան՝ «Հայ Կեսարիա» 2044):

ԳՈՒՅՈՒՄՃԵԱՆ Յակոբ, վաճառական, ծնած թալաս 1842ին, հորը հետ գացած է Կարին եւ առեւտրական ասպարէզը մտած. նոյն դործով Տիգրանակերտ կը փոխադրուի իբր ընկեր և գործակից Գիւլպէնկեան տան:

Տիգրանակերտի մէջ կուսակալութեան Իտարէի ժողովի անդամ եղած է երկար ժամանակ, առեւտրական սենեկի նախագահ և անդամ կառավարական ժողովներու: Այս առթիւ ստացած է Միւթէմայիզ աստիճան և զանազան պատուանշաններ: Ազգային շրջանակի մէջ ալ երկար ժամանակ Բաղաքական ժողովի ատենապետութիւնը ըրած է և տեղւոյն Ազգ. գործերու օգտակար ուղղութիւն տալով՝ գնահատուած է ժողովուրդէն: Նպաստած է տեղւոյն Ա. Կիրակոս եկեղեցւոյն վերաշինութեան թէ՛ անձնապէս նուիրելով կարեւոր գումար մը և թէ՛ յորդորած ուրիշներ որ տան և կրցած է գլուխ հանել այդ հոյակապ տաճարին շինութիւնը:

Հայկական կատորածներուն ատեն (1895-6), Տիարպէքիւր Զարդի օրերուն իր տունը ընդունած է հարիւրաւոր Հայեր և շարաթներով պահած է զանոնք:

Տիարպէքիւրէն Հայէպ փոխադրուելով, Կիւլպէնկեան Տան շահակից ընկերի հանդամանքով, հոն ազգ. ձեռնարկներու սպասարող եղած է: Առեւտրական պատճառներով յարաբերութեան մէջ ըլլալով ձիգրէ գաւառակին հետ (Տիգրիսի վրայ) կը տեղեկանայ թէ՛հոն ցիրուցան Հայեր կան մինչև գաւառակին խորբըր, առանց եկեղեցիի և քահանայի. ինք ընտրել կու տայ քահանայ մը և ձիգրէ կը զրկէ, անոր ըրնակարանի, ապրուստի, մատուռի վարձքի ծախքերը վճարելով:




ԳՈՒՅՈՒՄՃԵԱՆ ՅԱԿՈԲ

Պաղտատ փոխադրուելով, հոն ալ ժողովուրդը ընտրած է զինքը անդամ Գաւառական ժողովին, պաշտօն մը որ պահեց իր վրայ մինչև մահ: Հոն ալ կառավարական յանձնաժողովներու և Իտարէի ժողովներու անդամ եղած է:

Պատրայի եկեղեցւոյ վերաշինութիւնն ալ իր գործունէութեամբ եղած է:

Այս ազգասէր հայը մեռաւ 1913 Յունիս 22-ին և մեծաշուք յուղարկուորութեամբ մը թաղուեցաւ. ունէր 5 արու զաւակներ և երկու աղջիկներ: Յակոբի չորս զաւակները Պաղտատ կը գտնուին, ուր Ֆէլուճէ գիւղաքաղաքին մէջ ունին իրենց մեծ ագարակը, ուր այցելած է հանգ. Ֆէյսալ թագաւորը: (Ալյոյանեան «Հայ Կեսարիա» էջ 2212):



ԳՈՒՅՈՒՄՃԵԱՆ ՅԱԿՈԲ

ԳՈՒՅՈՒՄՃԵԱՆ ՅԱԿՈԲ (Սարի), Կեսարացի, ներածող մեծաքանակի վաճառական Պուէնոս Այրէս հաստատուած է ընդհ. պատերազմէն ետք:



ԳՈՒՅՈՒՄՃԵԱՆ Նիկողայոս, ատամնարոյժ, ծն. Գոնիա, նախնական և երկրորդական կրթութիւնը ստացած է տեղւոյն ձեռնարկեալ Գոյէճը, ապա հետեւած է Պոլսոյ բժշկական ֆաքիւլթէի ատամնարուժական ճիւղին և ուրկէ շրջանաւարտ եղած՝ 1916ին:

Ընդհ. պատերազմին իր ատամնարոյժ, «միւլազմ էվէլէ»ի աստիճանով թրքական բանակի 36րդ զօրաբաժնին մէջ, կովկասի ճակատին վրայ ծառայած է:

Զինադադարին անցած է Պոլիս, ուր ժամանակ մը մնալէ վերջ, հաստատուած է Տարտանէր 1922ին Սեյանիկ անցած է, ուր կը գործէ ցարգ (Մակարեան՝ «Յուշագիրք» 218):

ԳՈՒՅՈՒՄՃԵԱՆ ՇԱԼԱՐԵ, վրդ. Սրբոյ Յակոբեանց Ուխտէն, ծնած է Հաճըն 1908ին, 1924ին մտած է Երուսաղէմայ վարժարանը, աշակերտած է Գուրեան Եղիշէ պատրիարքին (1926—9) և Բարդէն կթղին, 1936ին սարկաւազ ձեռնադրուած է և իր ավարտածու ուսումնասիրած է Եզնիկի «Ընդդէմ Աղանդոց» հեղինակութեան Գ. զիրքը՝ «Եղձ Աղանդոյն Մարկիոնի»:

1930 Յունիսին արեղայ ձեռնադրուած է Տ. Մեսրոպ եպ. Նշանեանէն՝ ութ ընկերներով: 1930—1 օգնական Ելեւմտից Տեսչութեան, Ատենադպիր Միաբ. Ընդ. Ժողովոյ և քարտուղար Ս. Տեղեաց: 1931—3 հանգ. Պատրիկ կիւլլէնկեանի Ս. Աթոռոյ ըրած բարերարութեամբ յաճախած է Լոնտոնի համալսարանի King's Collegeը, որու երկու տարիներու քննութիւնները անցած է վկայականով, և ուսած է Աստուածաբանութիւն, աշակերտելով Rev. Dr. W. R. Matthews-ի այժմ ավագերէց Լոնտոնի Ս. Պողոս Մայր եկեղեցւոյն, 1934-5 տարանապետ. Բարտուղար Ս.

Տեղեաց, ուսուցիչ ժառանգաւորաց, իսկ ընծայարանի սարկաւագաց՝ դասախօս եկղ. պատմութեան և իմաստասիրութեան:

1935-8 հովիւ հոգեւոր Հայֆայի և Հիւսիսային Պաղեստինի, Տեսուչ և Դասառու Հայֆայի Ազգ. վարժարանի: 1938 Յունիսին Երուսաղէմ վերադառնալով՝ անդամ և ատենադպիր՝ Տնօ.

րէն Ժողովոյ և զիւանապետ հայերէն թղթակցութեան: Ս. Աթոռոյ զիւանապետի բացակայութեան՝ երկիցս վարած է փոխ-զիւանապետի պաշտօնը: Աշխատակցած է «Հայ Պատմախօսի և Եկեղեցի»:

ԳՈՒՅՈՒՄՃԵԱՆ Սարգիս, ծնած է Ռուսնուք 1855ին. նախնական ուսումը առնելէ ետք մանիֆաթուրաի գործով կը զբաղի նախ Շուժէն, յետոյ Ռուսնուք. մասնաճիւղեր կը բանայ Վանայ, Բլովտիլ, Սոֆիա, իսկ 1890ին արդէն իսկ իր սեփական տունը կ'առնենայ Մանչէսթըր, զոր կը վարէր իր հանգ. եղբայր Մանուկ կը վախճանի 1915ին: Ս. Գույումճեանի 4 զաւակներէն մին է Մայքըլ Արլէն (Տիգրան Գույումճեան) և փեսան է Մարքո Պաքրճեան (Մանչէսթըր):

ԳՈՒՅՈՒՄՃԵԱՆ Սիսակ Ս. Առանձար:

ԳՈՒՅՈՒՄՃԵԱՆ Վահան, ծնած Ակն 1880ին, նախնական կրթութիւնը ստացած տեղւոյն Ներսէսեան դպրոցը: 1893ին կ'ընդունուի Կարնոյ Սանսարեանը. 1900ին շրջանաւարտ ելլելէ վերջ՝ 3 տարի կը պաշտօնավարէ հոն Նոյն խնամակալութեան կողմէ կ'որոշուի Եւրոպա ուղարկել զինք՝ ուսումը կատարելագործելու բայց Համիտեան խստութեան հետեւանօք ծրագիրը ջուրը կ'իյնայ: Գույումճեան իր իտէպլէն ողեւորեալ՝ զաղտագողի խոյս կու տայ սահմանազիւն. յանդուգն քա՛յլ որ քիչ մնաց իր կեանքն արժէր. Քիւրտերէ հետապնդուելով՝ կը բանտուի Հասան-Փայէ, ուրկէ կարին: Երկամսեայ տաժանագին բանտարկութենէ մը վերջ կ'աքտուուի Ակն որուն առաջն. փոխանորդ Գէորգ վրդ. Արսլանեանի բարեխօսութեամբ ազատ կը թողուի և 2 տարի կը վարէ տեղւոյն ազգ. վարժարանի տնօրէնութիւնը, 1906—1908ին ալ Արարկիր՝ նոյն պաշտօնով: Հուրիէթէն յետոյ կը հրաւիրուի Սանսարեանէ, ուր կը մնայ 3 տարի 1911ին հրաժարելով կը մեկնի ծննդավայր՝ ուր տարի մը տնօրէն կ'ըլլայ նորահաստատ Նարեկեան վարժարանի 1912ի ամբան Պոլիս հասնելուն՝ կ'ընտրուի հայերէնի ուսուցիչ Ատափաղարի Կեղրոնականին և հոն կը մնայ մինչև 1915ի տեղահանութիւնը. ձերբակալեալ մտաւորականներու խումբին խառնուելով՝ հազիւ շունչը կ'առնէ Գոնիա՝ ուր պահ մը ծուարած կ'ապրի. հոնկէ փախչելով Պէլէմէտիք՝ երկաթուղ. շինութեանց գործին մէջ կը ծառայէ բուսնիքօրի պաշտօնով, գերմ. զին. իշխանութեանց մօտ, շնորհիւ իր զերմանագիտութեան: Զինադադարի վաղորդայնին կը դառնայ Պոլիս. տարի մը Պանտրմայի վարժարանին տնօրէն, ապա Պէլիկթաշի որբանոցին, ուր ուրեմն ուսումնապետ Գուլէլիի Մաք-



Շալարե վրդ. Գույումճեան



րիքէօյի Տառեան վարժարանի տնօրէնն էր, երբ Պոլսոյ քաղաքական հորիզոնը մթազնեցաւ եւ շատ մը մտաւորականներու հետ ինք եւ հեռացաւ Պոլսոյ ջուրերէն, իյնալով Գորֆու՝ իրր ուսուցիչ Բիլիֆի որբանոցին: Այս հաստատութեան ամերիկացի վարիչներուն կամակոր գործունէութեան արձագանքը կ'ըլլար «Ճակատամարտ»-ի մէջ Վանէ ծածկանունով պաշտօնակից մը. Գուլումճեան իրր այն ամբաստանուելով՝ վտարուեցաւ առանց բերան տալու իր «ընկեր»ը. զոհուած իւրեն որ իրեն արժեց ամիսներու անզոր-ծութիւն՝ օտար հորիզոնի տակ, մինչեւ պաշտօնի կոչուելը Սիրա: Այժմ կը գտնուի Ֆրանսա:

Որչափ ատեն որ առիթը ներկայացաւ իրեն՝ ծննդավայրը եւ շրջակայ գիւղերը մնալու, հետամուտ եղաւ պրպտելու: Ակնայ հարուստ գաւարաբարբառը, մանաւանդ այդ շրջանի «անգիր դպրութիւն»ը, պատրաստելով Ակնայ Անսունի-նետուն եւ ուրիշ երգերուն լիակատար հաւաքածոն, — Ճանկեանի եւ այլոց գործերէն անհունապէս ճոխ: (Թեոզիկ՝ «Ա.մ. Տար». 1925 էջ 355):

ԳՈՒՅՈՒՄՃԵԱՆ Վանէ, զաւակը վրպասան Առանձարի (Սիսակ Գուլումճեանի). փոքր հասակէն (1914ին) կը կորսնցնէ իր հայրը: Նախ կը յաճախէ Երուսաղէմի ժառանգաւորաց վարժարանը, յետոյ Պէրպէրեան (Պոլիս) եւ կ'աւարտէ: Կը փորձէ առեւտրական պաշտօններ: Կը մտնէ երկրագործական վարժարան, կ'անցնի անասնաբուծութեան, զոր կը փոխանակէ լուսանկարչու-թեան: Պ. Գուլումճեան ի վերջոյ կը փարի թատրոնին ու կ'երթայ գեղարուեստի մայրաքաղաքը Վիեննա: Երկու տարուայ ընթացքին կ'աւարտէ Ռայնարտ սեմինարի դասընթացքը յաջողագոյն վկայականով:

Պ. Գուլումճեան ներկայացուցած է Դանիացի նշանաւոր Հոլբերդի մէկ գործը «11 Յունիս»: Ներկայացումը անգլի ունեցած է կայսերական պալատի Շէօնպրիւնի թատրոնին մէջ եւ ջերմօրէն ծափահարուած է աւստրիացի հանդիսականներէն: Վիեննայի թերթերը զրուատական սիւնակներ նուիրած են բեմադրութեան, յիշելով Գուլումճեանի հայ ըլլալը ու գուշակելով անոր ապագայ լայնածաւալ գործունէութիւն մը: Յիշելով նաեւ որ Գուլումճեան ազգակիցն է աշխարհահռչակ Ռուբէն Մամուլեանի:

ԳՈՒՅՈՒՄՃԵԱՆ Տիգրան, գործիչ Լ. Բ. Ը. Միւս-թեան, ծնած է Տիգրանակերտ 1880ին, որդի Յակոբի, 1900ին մեծ յաջողութեամբ կ'աւարտէ Պոլսոյ Ռոպէրթ Գոյէճի շրջանը, ապրած է Լոն-տոն. Կովկաս. 1911ին կ'ամուսնանայ Նոր Զու-

ղայի մէջ. 1913ին մասնակցած է Գէորգ. Ե. կաթողիկոսի ընտրութեան, որպէս լիազօր պատուի-րակ Պաղտատի: 1937ին Պաղտատի մէջ կը վախճանի:

ԳՈՒՅՈՒՄՃԵԱՆ Քերոբէ, ծնած է Թայաս, որդի Մարտիրոսի եւ կրտսեր եղբայր Յակոբի, հայր Սիսակ Գուլումճեանի (Առանձար). իր եղբոր հետ Պաղտատ կը հաստատուի եւ մեծ համբաւ կը վայելէ իրրեւ նշանաւոր վաճառական եւ ընկեր Կիւլպէնկեան Տան: Մեծ ազդեցութիւն ունեցած է կառավարական շրջանակներու մէջ եւ պատուուած Միւսթէմայիզի աստիճանով:



ԳՈՒՅՈՒՄՃԵԱՆ ՔԵՐՈԲԷ

Պոլսոյ մէջ կազմուած Սովետոյ Յանձնաժողովին կողմէ խնդրուած ըլլալով շատ վստահելի եւ ազդեցիկ Հայու մը առաջումը Վան, Կիւլպէնկեան Տան յանձնարարութեան վրայ Գերոբէ Գուլումճեան Վան գացած եւ Սիրմեան Հայրիկի աջակցած է արմատիքի եւ դրամներու բաշխման:

Իր մէկ զաւակը Պաղտատ կը գտնուի, իր թոռն է նշանաւոր բեմավար Վահէ:

ԳՈՒՅՈՒՄՃԵԱՆ ՏԱՂ, լեռ Սիւնեաց Վայոց ձոր գ. ի մէջ:

ԳՈՒՆԿԱՐ, լեռ Սիւնեաց Սողք գ. ի մէջ:

ԳՈՒՆԳԻ կամ Գիւս Վահեանի վարդանանց օրով (450):

ԳՈՒՆՏԱԳՃԵԱՆ (Յովնանեան) Ֆիլիփ, բժիշկ, ծնած է 1880ին Հասան պէյի (Ամանոս լեռ). երկրորդական ուսումը ստացած է՝ նիւթական զըժուարութիւններու գնով՝ Տարսոնի Ամերիկեան St. Paul's Instituteին մէջ, եւ ապա բժշկական ճիւղին հետեւելով՝ վկայուած է 1907ին, Պէյրութի Ամերիկեան բժշկական համալսարանէն: Երկու տարի Այնթապի մէջ բարեխիշտակ Տոքթ. Շէփըրթի հետ գործակցելէ վերջ, վերադարձած էր իր ծննդավայրը եւ նուիրուած իր հայրենակիցներուն ծառայելու գործին. իրրեւ բժիշկ, մտաւոր գործիչ եւ նոյնպէս երբեմն՝ իբրեւ քարոզիչ: 1912—19ին, Թուրքիոյ գեներական փոթորիկներու շրջանին, եղած էր Պաղտատի գերման երկաթուղազմին բժիշկը եւ օգտակարապէս ծառայած նաեւ՝ պատերազմի ընթացքին տարազրուող



հայ խլեակներու շատերու կեանքերուն փրկութեան, կարելիութեան սահմանին մէջ, որուն համար թուրք կառավարութեան կողմէ ամբասանուած էր իրրեկ

դրամ և պարէն հայթայթող ինքնապաշտպանութեան համար լեռ բարձրացող հայ չեքեներու???: Սակայն բախտի տարօրինակ զուգադիպութեամբ, ողբ. բժիշկը ազատ արձակուած էր Պատերազմական Ատեանի նախագահին կողմէ, որուն տիկինը դարմանուած և բժշկուած էր տղթորէն — թէև անգիտակ անոր անձնաւորութեան — երկու տարի առաջ:



ԳՈՒՆՏԱԿԵԱՆ ՖԻԼԻՓ

1919էն ի վեր Հայէպ հաստատուած էր ան եւ արժանացած բոլոր հայութեան համակրանքին:

Տղթ. Ֆիլիբի մահը հետեանքն էր եղած արեան թունաւորումի մը: Արար մշակի մը թոքին վրայ կատարած մէկ գործողութեան ընթացքին, ողբ. բժիշկը գժբախտութիւնը կ'ունենայ փոքրիկ կտրուածք մը բանալու իր մատին վրայ: Թէև կը կը փութայ անմիջապէս հականեխական միջոցներու, սակայն մահացու միբոսպը արդէն իր քանդիչ դերը կատարած էր և հինգերորդ օրը՝ 1936 Յունիս 1ին, ան ոչ ևս էր: Անոր յուղարկաւորութիւնը կատարուեցաւ աննախընթաց շուքով և խոր յուղման մէջ: Հայէպի մէջ չէր մնացած բժիշկ, դեղագործ, փաստաբան, պմէն դասու մտաւորական, առևտրական եւայլն, եւայլն: Հայերէն զառ դամբանականներ խօսեցան արար ազգայնական առաջնորդներէն D. I. Keyali, Action Chrétienneէն Dr. P. Berron:

Սուրիոյ նախարարաց խորհուրդի որոշումով՝ տրուեցաւ Սուրիական Արքունեաց Գ. կարգի պատուանշանը:

Յ. Գունտագձեան օր մը հիւանդի մը կը կանչուի Ամանոսի լեռներուն մէջ. կը ձանչնայ դայն, իր վեր. Տիղրան եղբայրը սպաննող թուրք ոճրագործն է. վրիժառութիւնն ու պարտականութիւնը կը փոթորկէ իր միտքն ու հոգին. բարին կը յաղթէ չարին և Տղթորը կը բժշկէ իր եղբոր ոճրագործը: (Ռոսուհի՝ «Հ. Կոչնակ» 1936 էջ 684):

ԳՈՒՆՏԱԿԵԱՆ Գեղամ, բանաստեղծ, ծնած է Պարտիզակ 1894ին և 1915 մեծ եղեռնին նահատակուած է: 1908—1914ին բանաստեղծութիւններ գրած է. ունի «ղամբարաններ» անուն թատերերգութիւն մը:

ԳՈՒՆՏԱԿԵԱՆ Թորգոմ, պարթ. անս թորգոմ պատիւաբ Գուշակեան:

ԳՈՒՆ ԱՏԱ, գայժաբամըք քղ. Զմիւռնիոյ հարաւակողմը ծովախորշի մը առջև շինուած: 1902ին 4000 բն. ունէր, 30 տունը հայ էին. եկղ. Ս. Աստուածածին. երկեսո Սահակեան զրպրոց մ'ունէին:

ԳՈՒՆՏԱՆ Գեորգ Պարոյր, ծնած է Կիլիկիոյ Հաճըն քղ.ին մէջ 1895 Սեպտ. 25ին, սրղին Կարապետ Կէճէզուշեանի. 1902ին օր կը մնայ ևւ Ամերիկեան որբանոցը կ'ընդունուի: Նախնական և երկրորդական ուսումը կը ստանայ Հաճնոյ Բողոք. Ակադեմիային և յետոյ Էվէրէկ—Ֆէնէսէի Ամերիկեան Բարձր. վարժարանին մէջ: Մի քանի տարի բարձրագոյն ուսման կը հետեի Գոնիայի Ճէնանեան Գոլէճի մէջ մինչև 1915, երբ արդէն Գոլէճին անօրէնը Տղթ. Արմ. Հայկազեան և միւս ուսուցիչները աքսորուած էին:

Ատանայի մէջ միանալով իր ընտանիքին կ'աքսորուի տեղւոյն Հայերուն հետ: Հայէպ մնալով ուսուցչութեամբ կը պարապի և յետոյ կը ձերբակալուի ու Տէր Զօր կ'աքսորուի: Ամիսներ վերջ փախուստ առալով կրկին Հայէպ կ'երթայ, ուր թուրք հրամանատարին աղվկան ու տղուն ֆրանսերէնի և անգլիերէնի դասեր կու տայ:

Չինադադարէն ետք Անգլիական նպաստամատոյցի մէջ պատասխանատու պաշտօններու կը կոչուի:

1919 Ապրիլին ընտանեօք Ատանա կ'երթայ և հոն Բողոքական վարժարանին ուսուցչութիւն կ'ընէ և միևնոյն ատեն ուրիշներու ալ անգլիերէն դասեր կու տայ:

1921ին Մ. Նահանգները երթալով Քայիֆօրնիոյ Փասատէնա քաղաքը կը հաստատուի: Յորեկները կ'աշխատի ու գիշերները դպրոց կը յաճախէ, ուր գրականութիւն և փիլիսոփայութիւն կը սորվի:

1928—30 հայ նոր սերունդին համար դպրոց մը կը հիմնէ, ուր զրբլ կարդալէ զառ կը սորվեցնէ գրականութիւն և պատմութիւն, սակայն վերահաս տնտեսական տագնապը վերջ կու տայ անոր:

Այժմ (1938) երբեմն դասախօսութիւններ կու տայ հայ և ամերիկացի բեմերէ, և բնականացման դասեր կու տայ քաղաքացիութեան թեկնածուներուն: Վարած է պատասխանատու պաշտ







լուրջ ուսուցման արժեքները ըրած է նորանոր յայտնութիւններով և անդրադարձութիւններով: Տե՛ս ՅԱԻԵԼՈՒԱՆԻՐ:

ԳՈՒՏՐՈՅ, փոքրիկ հայաբնակ զգ. Պոռչայու գ. ի: ԳՈՒՐԱԳ. ՉԱՅ Տ. Կուրակ:

ԳՈՒՐԱՊԵԱՆ ՆՐԱՆՈՂ, (Գ. Նրանոլ), վիպագիր-խմբագիր: Ծնած է Պոլիս 1895ին: Նախնական կրթութիւնը ստացած է Բանկալիթի Աղքատասիրաց և էսաեան վարժարաններուն մէջ. իսկ երկրորդական ուսումը ստացած Բագրատունի առեւտրական-լիզ-ուազիտական վարժարանը, ուրկէ վերջ հետեւած է Համալսարանի բժշկական և իրաւաբանական ուսմանը:



ԳՈՒՐԱՊԵԱՆ ՆՐԱՆՈՂ

Հ. Գուրապեան շատ կանուխէն նուիրուած է գրական և խմբագրական ասպարէզին:

1912ին լոյս ընծայած է, «Կոկոն», օտանաւորներու պրակը: 1926ին հրատարակած է Ֆախի Թահրա պէյի Զարմահահրաօ Փորձերը, 1929ին Սիմոն Փեհլիվան (վէպ), 1929ին թարգմանած և հրատարակած է Իշխան Եուսուփօֆի Իճնչպես սպաննեցի Ռասփուրիներ, 1930ին Գազազ Արքիւ ամիրա և Սուլթան Մահմուտ Բ. (վէպ), 1930ին Օրմանեան պատիարք և Կարմիր Սուլթան (վէպ), ինչպէս նաև թարգմանած է թուրք գրականութեան յայտնի դէմքերէն Բիշատ Նուրիի Աւերակներու ծաղիկը (Թերթօն «Հայ Կին»ի) և Իրիկուան արեւը (Թերթօն «Արեւելք»ի), Մէհմէտ Բաուֆի Յասսիկ և Մեխակը (Թերթօն «Նոր Լուր»ի) գործերը և զանազան նորավէպեր: Ինքնազիր թերթօններն են Երեւ հոգի չսրս գաւաք քեյ (Պապկեր շարթ.), Եգիպտացի իբխանուհին և Հեյպէլիի վանականը (Նոր Լոյս շարթ.), Մեղաւոր Մարեամ (Մամուլ) և այլն:

Վ. Սիրունեանի «Շող» ամսաթերթին (1912) միջ կը գտնենք իր գրական նախափորձերը: Ընդհ. պատերազմին իրր սպայ ծառայելէ վերջ, Պոլիս վերադառնալով 1919ին ատամնարոյժ Վ. Ալթունեանի հետ հրատարակած է Հայ Բժիշկ ամսաթերթը: 1925ին իր խմբագրութեամբ լոյս ածած է Արծիւ շարթերթը. իսկ 1932ին հիմնած է Մամուլ օրաթերթը: Ասոնցմէ զատ ինք-

նազիր արտադրութիւններով աշխատակցած է Հայ Կին, Հայ Խօսնակ, Ամսուան գիրք պարբերաթերթերուն և Նոր Լուր, Ժամանակ, Արեւելք, Զարթօնք, և այլ օրաթերթերու և տարեգրքերու: Իր ծածկանունները եղած են Պալասուցի, Գրոն, Կ. Իխնոլ ու Բզեզ:

Հ. Գուրապեան ունեցած է նաև հանրային ծառայութիւններ: Անդամակցած է Վանօրէից Խորհուրդին և Բանկալիթի Ս. Լուսաւորիչ եկեղեցւոյ հոգարարձութեան: Վարած է նաև միջոց մը Պէշիքթաշի Մաքրուհեան Ազգ. վարժարանին տնօրէնութիւնը:

ԳՈՒՐԱՓԱՓԱՆ, հանգրուան Սիւնեաց Կողովոյ գ. ի մէջ:

ԳՈՒՐԱՎԵՆԵԱՆ Հ. Աւսեւնոլոս, Վենետիոյ Մխիթարեան, ծնած է Պոլիս 1826ին. մանուկ հասակին Վենետիոյ Ս. Ղազարու-վանքը զրկուած է, ուր ուսումը ստանալէն ետք 1844ին քահանայ կը ձեռնադրուի և կը վարէ ուսուցչական, վարչական պաշտօններ վանքին մէջ, Պոլիս և Հոռոմ: Կը մեռնի վանքին մէջ 1900ին:

Գործերն են. 1. Համաոս Քերականութիւն անգլիական բարբառոյ աւանդեալ ի քսան դասս, տպ. Վենետիկ 1853 էջ Ի + 366: 2. Տարեք իմաստասիրութեան, ընդարձակ թարգմանաբար յօրինեալ տպ. ի Ս. Ղազար 1869ին, 4 հատոր. թարգմանած է կրօնական և այլ գրքեր: (Մահուան առթիւ տե՛ս «Բազմավէպ» 1900 էջ 129):

ԳՈՒՐԱՎԵՆԵԱՆ (Յ. Սահակ Տէր Ասեփանեանց) հեղինակ Պանդուխտ կամ Կեանք Աղուանցոց, գրքոյկին, տպ. Պոլիս 1864:

ԳՈՒՐԱՎԵՆ ԽԱՅԻԿ Արժուցի թգ. Անձեւացեաց, որդի Արուսաչի Համադասպի, Գուրգէն 972ին, հօրը մահէն ետք Անձեւացոց վրայ կը թաղաւորէ. 973ին ինքն ալ կը միաբանի Աշոտ ողորմածի Չմշկիկի ղրմագրելու գործին մէջ. 983ին կը մասնակցի Ապարանից խաչի տօնակատարութեանը, կը մեռնի 1003ին և որովհետև իր երեք որդիքն ալ անչափահաս էին, Գուրգէնի Սենեքերիմ եղբայրը տիրեց ղովանդակ Վասպուրականի (Չամչեան՝ ՀՏՏ. Բ.):

ԳՈՒՐԱՎԵՆ Անձեւացի, նախարար. 896ին կը սպաննէ Մոկաց Մուշեղ նախարարը և կը նուաճէ Վասպուրականը Գաղիկ Ապուրանի հետ միացած: (Թովմա Արժուցի):

ԳՈՒՐԱՎԵՆ Արժուցի, եղբ. Գաղիկ բռնաւոր թգ. ի, 901ին Սմբատ թգ.էն սպարապետ կը կարգուի, 908ին կը միանայ իր Գաղիկ եղբոր հետ ընդդէմ Սմբատ թգ. ի: 922ին Գուրգէն իր եղբոր հետ ղրմագրեց Յուսուփայ արշաւանքին: (Չամչեան՝ ՀՏՏ. Բ.):



ԳՈՒՐԳԷՆ Ափխազաց իւխան, 915ին կը միա-  
բանի վրաց Ատրնեքսե՛ թգ.ին հետ Աշոտը Հայոց  
վրայ թագաւորեցնելու համար. սա Աշոտ Բ. Եր-  
կաթի եղբոր Արասի աներն էր. 922ին Արաս,  
Աշոտի եղբայրը տմբաստանեց զրպարտելով եւ  
Գուրգէնի հետ միացած դարաններ լարեցին Ա-  
շոտը սպաննելու եւ սակայն Աշոտ կարենալով  
ճողոպրիլ՝ Գուրգէնի երկրին վրայ յարձակեցաւ եւ  
մեծ վնաս հասցուց: Գուրգէն այդ տարին կրկին  
փորձեց Աշոտի դէմ պատերազմիլ, բայց վերջինս  
միացած վրաց Ատրնեքսե՛ թգ.ին հետ Գուրգէնի  
բանակը ջախջախեց: (Չամչեան՝ Բ.):

ԳՈՒՐԳԷՆ Բագրատունի, կրտսեր որդի Աշոտ Ո-  
ղորմածի, 982ին կը տիրէ Տաշրաց երկրին, Տա-  
ւուշի. կը մեռնի 989ին:

ԳՈՒՐԳԷՆ Բագրատունի, Տարօնցի, իշխան Տա-  
րօնի, 896ին կը սպաննուի ապստամբ Սմբատ ու-  
տիկանէն: (Յովն. կրդ. պատմաբան):

ԳՈՒՐԳԷՆ Գնունի, իշխան 917ին, իր եղբոր Դա-  
ւիթի հետ զերի կը բռնուի Յուսուփէն. բռնա-  
պետը շատ մը պարզներ խոտացաւ պայմա-  
նաւ որ ուրանան հաւատքնին Դեռատի հայ իշ-  
խաններուն պատասխանն եղաւ — «Քրիստոնեայ  
ենք»: Երկու եղբարքը միասին նահատակուե-  
ցան այդ թուականին: (Տե՛ս Հ. Մ. Պոսուրեանի  
«Սրբազան Հայկազունքը էջ 67—70):

ԳՈՒԳԷՆ Մակաղի, եզր. Գրիգոր Մոկաց իշ-  
խանի, Գազիկ բռնաւորին ձեռնտու կ'ըլլայ ընդ-  
դէմ Յուսուփի, 921ին:

ԳՈՒՐԳԷՆ, թգ. Վրաց 988ին:

ԳՈՒՐԳԷՆ թգ. Վրաց, թոռն վերնոյն 998ին:

ԳՈՒՐԳԷՆ Յակոբ (Յակոբ Անոն Պիպեռնեան),  
գրագէտ, խմբագիր, զաստիարակ, ծնած է 13  
Յուլիս 1850 Պէշկիթա՛ն՝ ուր զպրոցակից Ե. Տէ-  
միրճիպաչեանի, յետոյ Օրթաքէօյի Թարգմանչաց  
վարժարանը յաճախած եւ հոնկէ մեկնած 1864ին  
Քանի մը տարի առեւտրական ասպարէզի մէջ  
դեգերելէ վերջ, 1870ին «Փող Արեւելեան» լրագրի  
վարչութեան մէջ կը մտնէ իրր ներքին լուրե-  
րու խմբագիր, վարելով նոյն պաշտօնը մէկուկէս  
տարի: 19 Հոկտեմբեր 1872ին կը սկսի զաստիա-  
ռել Կ. Փանոսեանի գիշերօթիկ վարժարանը (Սկիւ-  
տար. նու՛ն Գուրջուսու), հայերէնի օգնական ու-  
սուցիչ, եւ երկու տարի ետք կը կարգուի տե-  
սուչ՝ մինչեւ 1876: Այդ թուականին զպրոցը  
փակուելով, Յուլիս 1ին կը հիմնէ իր անձնական  
զպրոցը «Հայկական կրթարան» անուն, Օրթա-  
քէօյ, մինչեւ 1890 Հոկտեմբերի վերջ արդիւնա-  
ւոր շրջաններ բոլորելով եւ ընծայելով ազգին 70  
ընթացաւարա, մեծամասնութիւնը կարեւոր դիր-

քերու տիրացած: Իր կրթարանին մէջ զաստիա-  
րակուած են առաւել քան 25 գիշերօթիկ ձրիա-  
վարժներ: Հայերէնի ուսուցչութիւնը շարունա-  
կած է Պոլսոյ գրեթէ բոլոր հայ դպրոցներուն մէջ,  
եւ 1894—96 կարինի Սանասարեան վարժարանի  
հայկարան: Քաջ գրարարազէտ եւ ուսուցիչ հայ  
մատենագրութեան. շուկեղարձու լեզուն զազո-  
նիք չուէի իրեն համար, զոր աւանդած է Կեղ-  
րոնականի բարձր զասարանի ընդհատելով զայն  
հիւանդութեան հետեանօք: Ա. յօղուածն երեցած  
է 13 Մայիս 1870ին «Մասիա»ի մէջ: Խօսած է  
կրթական ճառ մը Վարազդատեան Ընկեան» կի-  
րակնօրեայ լսարանին մէջ, որ 1875ին լոյս ըն-  
ծայուած է Դալֆայեան տպարանէն: Ունի յօղ-  
ուածներու շարք մը Կ. Փանոսեանի «Մանգու-  
մէի էֆֆիար»ի մէջ՝ Գուրգէն ծածկանունով զոր  
ապա նուիրագործեց արտօնատէրը: Գր. միւս  
ծածկանուններն եղած են Սմբատ եւ Վահե («Ա.  
Մամուլ»ի մէջ), իսկ Արեւ («Արեւելք»ի մէջ՝ որուն  
աշխատակցած է 1898—1904, Եւրոպական ֆրոնիկ-  
ներով), Ունեցած է լեզուարանական վէճ մը ի  
մասնաւորի Հ. Ա. Ղազիկեանի հետ 1903ին  
գրարարի շուրջ, ինքը ջերմ ախոյեան գոլով Ա.  
նոր՝ որով թարգմանած իր 2 անստգիւտ ոտանա-  
ւորները (Նազովրեցիկ եւ Աւեսարան) կը կրեն  
զրոյձն Ոսկեղարու մասին իր ունեցած խոր հրմ-  
տութեան: Ատոնցմէ առաջինը մանաւանդ Ա.  
Չօպանեան ժամանակին կարդացած ըլլալով՝ հը-  
րածարած է օտար լեզուով հրաշակերտներ աշ-  
խարհարարի վերածելէ, քանի որ տեսած է անոնց  
վսեմացումը Գրոց լեզուով միայն: Երեսփոխան  
1883 — 1890, պատկանելով ժողովրդական  
կուսակցութեան եւ մղելով հայ մեծատանց դէմ  
եռանդուն պայքար՝ որ հուսկ ուրեմն կըր-  
թարանին փակումը փութացուցած է: 1896-1908  
անդամ Ուսումնական Խորհուրդին: Երկերը՝ Ու-  
ղեւորութիւն յԱրեւն եւ Չմիւռնիա (1881) որ ար-  
ժանացած է Յունաստանի թագաւորին գնահատ-  
ման ընդունելով Ս. Փրկչի ասպետական աստիճանը,  
ձաւակ Ոսկեղեկ զպրութեան (ամսաթերթ 1886-88),  
Պատկեր Ասխարհիկ Գրականութեան 2 հատոր: Հա-  
մառօս արուեստաշաղապիութեան (1897): Մեռած  
է 1915ին: (Թեոդիկ՝ «Ամ. Տար.» 1911 էջ 252):

ԳՈՒՐԳԷՆ ԲԱՐՁՐ, Այրում գ. ի մէջ, Ծարայ  
հի: սիսակողմը՝ այս անունով լեռներ կը բարձրա-  
նան:

ԳՈՒՐԳՈՒԹԱ, կը յիշուի Պարուար (Վրահայք)  
գ. ի մէջ:  
ԳՈՒՐԳՈՒՍ կամ Գիւրդա, յետամնաց գղ. Աղուա-  
նից Գարգման գ. ի մէջ: 1902ին ունէր 30 ա.  
հայ բնակիչ:







մօտակայ Ազ-հիսար գիւղին մէջ ունէր քարուկեր բաղնիք մը:

ԳՈՒՏՐ-ՔԷՕՅ Տ. ԳՈՒՆՅՈՒ:

ԳՈՒՔԻ Տ. ԿՈՒՄԻ:

ԳՈՒՋԱՐԱԿ Տ. ԿՈՂԱՔԱԿ:

ԳՈՒՆԵՐ, երբեմն հռչակաւոր վանք Լեւոնային Կիլիկիոյ Մոյլեւոնի գաւառին մէջ, Բարձրերդ զղեկի մօտ. երբեմն Անապատ կոչուած է եւ երբեմն Սուրբ ուխտ: Ներկայիս վանքիս բուն զիրքը անյայտ է, բայց իր հին մեծութեան և համարաւին վկայութիւն կրնայ համարուիլ Վարդան աշխարհազորին այն խօսքերը՝ որով Կիլիկիոյ չորս հռչակաւոր վանքերու հետ կը յիշէ «և զԳոնեբոյ սուրբ ուխտն»: Այս վանքս թեմ էր Յովհաննու արքեպիսկոպոս, որ պայծառացուցած և հռչակաւոր զարձուցած էւհոս գրուած են շատ մը եկեղեցական զրքեր: 1263ին նոյն Յովհ. Արքեպիսկոպոսէ գրուած ակտարանի մը յիշատակարանն է հետեւեալը. «ի սուրբ անապատն Գոնեբ կոչեցեալ, ընդ հովանեաւ սուրբ և աստուածակիր Նշանին Կայտէնի կոչեցեալ, և սրբոյն Սիաւնի մօր մերոյ»: Վանքէս մեզի հասած բոլոր յիշատակները այս Յովհաննէսին են, կամ իր վրայ կը խօսին: Միայն գաւաղանազրի մը մէջ կը յիշուի Մխիթար Կաթողիկոսը, որ նախապէս Գոնեբոյ եպիսկոպոս եղած էր: (Էփրիկեան՝ «Բնաշխարհիկ» Հ. Ալիւսանի «Սիսուան» են քաղուած:

ԳՏԱՅ Տ. ԳՏԻԿ:

ԳՏԱՆԻՍ, հին գղ. Սիւնեաց Արեւիք գաւ.:

ԳՏԱՒԱ, հին գիւղ Սիւնեաց Հարանդ գաւ.:

ԳՏԻԶ, ԳՏԱՅ կամ ԳՏԱՅ վանք, Այդուանից Գիւղակ գաւ. մէջ, Թաղար աւանի հանդէպ, Ղուրու չայ գետակի աջ կողմի գեղեցկատես և հիւսիսահայեաց սարահարթակի մը վրայ կը գտնուի վանքս: Ծիհուած է համակ սրբատաշ տորոնագոյն քարով, խաչաձև քառակուսի, չորս կամարներով, որոց վրայ բարձրացած է գեղեցկաձեւ կաթողիկէն՝ վրան բուսած է մի ճապղի և մի խնձորի ծառ: Վանքիս տաճարն ունի մի աւագ՝ և չորս փոքր խորաններ, 13 լուսամուտ և մի գուռ: Երկայնութիւնն է 10 մ. եւ լայնութիւնը 7,50 մ.: 1868 թուի մեծ երկրաշարժէն արտաքուս թափած են տաճարիս հարաւ արեւելեան անկիւնի քարերը: Հիւսիսային որմի վրայ արձանագրուած է հիմնարկութեան յիշատակարանը, որուն մէջ լինելով նաև վանացս նուիրուած կարուածոց անունները կարեւոր կը համարենք հոս ամբողջութեամբ դնել.

«Յանուն Հաւր եւ Որդոյ եւ Հոգւոյն սրբոյ եւ Սարգիս եւ Վրդանէս եպիսկոպոս հիմնարկեցաք

գեղեղեցիս ի ՈՂ (=1241) քալիս. շատ աւխասութեամբ աւագ խորանն խփեցաւ եւ եղբայրս իմ Տէր Սարգիս ի Քրիստոս փոխեցաւ: Ես Տէր Վրդանէս կասարեցի բազում աւխասութեամբ եւ հալալ արդեամբ իմով ՈՂԷ. քալիս ի դառն եւ ի նեղ ժամանակիս՝ որ ազգն նետոյաց զբազում գաւառս աւերեաց եւ մնաց այլաւետից արոս եւ վիճակ սրբոյն Գրիգորիսի, որ է հաստատայ աշով եւ սուրբ նշանուն եւ գաւազանուն սրբով. վիճակեցաւ եւ սահմանով ի յԱղուանոյ գետոյ մինչեւ ի Երասխն, մինչեւ ի Աւագն Գարունասի, Վալուցիս Վաղարկագետով, ի Քարասնիս եւ Խոզանագետովն, Ջառիս իւր գետովն. Հափարի Հազարագետովն, Քրեսագետ իւր գետովն, իւր սահմանովն, Գիգակ, Բելուկան իւր գետովն եւ հայրենիքն եկեղեցոյս սրւիքն, Փարսիս եւ Գոսանոցն, Եկեղեցածոն իւր սահմանովն. Ա. Լուծ հող ի Տայիս, Ա. Լուծ ի Գող, ի Գաղս, Ա. ի Մոխրեհիս. ով որ այս սահմանէս յետ առնէ կարողիկոս կամ ի յսան կամ հայրապետ, երեք սուրբ ժողովոյն նզոված եղիցի. յԱսուծոյ եւ ամենայն սրբոց անիծեալ, մասն եւ բաժին ընդ Յուդայի առցէ»:

Ներքուստ հարաւային փոքր խորանի ճակատին կայ ՈՂԵ թուականաւ ուրիշ արձանագրութիւն մը Տէր Վրդանէսի Հիւսիսային փոքր խորանի ճակատն ևս կայ համառօտ արձանագրութիւն մը: Տաճարս ունի նաև հնաշէն գաւիթ, որոյ գոյութիւնը շատ աւելի հին է: Գաւիթս կառուցուած է մի քանի կամարի վրայ, հոս ամփոփուած են մի քանի եպիսկոպոսներու և վարդապետներու մարմիններ որոնց վրայ կան տապանաքարեր: Տաճարի զրան երկու կողմը կանգնած են երկու գեղեցկաքանդակ խաչարձաններ՝ որոնց վրայ կան արձանագրութիւններ: Գաւիթի արեւելեան հիւսիսային կողման կից է աւելի հին եկեղեցի մը, որոյ առջեւ տապանաքարի մը վրայ կայ հետեւեալ կարեւոր արձանագրութիւնը. «Այս է սապան Տէր Սիմեոնի որդի Մեսրոբ վարդապետին քովն ՌձՀԲ: Լուսահողի Մեղիք Եկանն ձեռնադրի սլաւ եպիսկոպոս, կարգեց Կսիչոյ վանքին առաջնորդ: Որ եկի հաստատեցի սուրբ արոսս քովն ՋձՂՁ. ով որ կարգայ մեկ բերան ոլորմի ասէ»: Վանքս այժմ քանի մը հին սենեակներ եւ մէկ աշխարհական պահապան ունի: Գրեթէ ամբողջապէս յափշտակուած են իւր կարուածները. եւ հետզհետէ քայքայման վիճակի մէջ կը գտնուի: (Էփրիկեան՝ «Բնաշխարհիկ» քաղուած Բարխուդարեանցի «Արցախ» են):

ԳՏԿՈՅ ՎԱՆԻՔ Տ. ԳԻՒՄԻ ՎԱՆԻ:

ԳՐԱԳՈՒՄ, սակաւարձակ Հայոց գիւղ Վասպու-



րականի Արճիշակովիտ գ.ա.ի մէջ, Ունէր Ս. Ստեփանոս անուամբ եկղ. մը:

ԳՐԱԿԱՆ ԵՒ ԳԵՂԱՊՈՒԵՍԱԿԱՆ ԱԼՄԱՆԱՆ. տպ. Թիֆլիս 1917—1919, 5 թիւ (1918ին լոյս տեսած չէ), խմբագիր եւ հրատարակիչ՝ Միսաք Էփրիկեան եւ Ն. Մկրտչեան:

ԳՐԱԿԱՆ ԳԻՐՔԵՐՈՒՄ «գրական գեղարվեստական պատկերազարդ ամսագիր, Օրգան Հ. Պ. Գ. Ասոցիացիայի» տպ. Երեւան 1927—32, պատասխանատու խմբագիր Ն. Դարաղեան եւ Այազան:

ԳՐԱԿԱՆ ԵՒ ԻՄԱՍՏԱՍԻՐԱԿԱՆ ՇԱՐԺՈՒՄ, ամսագիր, տպ. Կ. Պոլիս 1883—1885, խմբագիր Տնօրէն՝ Եղիա Տէմիրճիպաշեան (Գրասէր Ատոմ), 1885էն՝ Շարժում Գրական եւ Իմաստասիրական (ՏԵՍ):

ԳՐԱԿԱՆ ԱՐՇԱՎ «գրական, գեղարվեստական հավելված պրովեսար թերթի» շաբաթաթերթ. տպ. Թիֆլիս 1930—1931, շարունակութիւն Գրական Շաբաթ»:

ԳՐԱԿԱՆ ՇԱՐՔ «գրական գեղարեստական հավելված Պրովեսարի, տպ. Թիֆլիս 1929—1930, 1930ին՝ Գրական Արշավ»:

ԳՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ ԵՒ ԿԵՆՐ, «հասարակական, արեւստագիտական պատկերազարդ շաբաթաթերթ». տպ. Թիֆլիս, (1908—9ին երեք թիւ, 1911ին մէկ թիւ լոյս տեսած), խմբագիր հրատարակիչ՝ Գրիգոր Բալասանեան:

ԳՐԱՄԲԱ s. Կրամիա:

ԳՐԱՃԵԱՆ s. ՅԱԵԼՈՒԱՅՐ:

ԳՐԱՍԷՐ, պարբերաթերթ, տպ. Ալեքսանդրիա 1904—5: Հրատարակութիւն Գրասիրաց Միութեան:

ԳՐԱՍԷՐ ԱՏՈՄ կեղծանուն, տե՛ս Տեմիրճիպաշեան Եղիա:

ԳՐԳՈՒՌ, նշանաւոր և պատմական լեռ Տուրուրեան աշխարհի մէջ, Նեբրովք լեռան հարաւ արեւելեան կողմը: Տարածութեամբ փոքր և հասակաւ կարճ է Նեբրովթէն, սակայն իւր բնական գիրքովն աւելի հպարտ և գոռոզ քան զայն: Լեռս իւր հինգ վիթխարի կլոր գլուխներով վեհանձօրէն բազմած է ասփարակ և ընդարձակ երկրի մը վրայ: Իւր կողերը ծպծկուած են անտառներով: Գրգուռ լեռան անուան ստուգարանութեան նկատմամբ կը պատմուի թէ Պարսից Վախաանք զօրավարի Գրգուռ որդւոյն անունէն ծագած է: Այս լեռը Հայաստանի բարձր լեռներէն մին կարծուելուն համար, տեղացիք յարմարցուցած են այս աւանդութիւնն որ մինչև ցայժմ մնացած է, իրրև թէ՛ Նոյի տապանը նախ

այս լեռը եկեր է, ըսելով. «Գրգուռ առ զիս». լեռն ալ պատասխան տուեր է. «Գնա ի Մասիս, զի բարձր է քան զիս»: Լեռանս ստորոտը կը գտնուի Ջրոր անուամբ հայաբնակ գիւղ մը որոյ բնակիչք մեծաւ մասամբ Գրգուռի անտառներով կ'ապրին: Լեռան բնական գոռոզութիւնն կարծես թէ ազդած է այս բնակչաց վրայ: Երբեմն ուրիշ տեղերէ անտառահատներ հոս գալով լեռնէն փայտ կտրելու ղաւած ժամանակը, Ջրորցիք զանոնք կը վռնտեն ըսելով թէ՛ Գրգուռ մերն է և անոր անտառներն ալ մեր են:

ԳՐԳՈՒՍ ԱՒԱՆ, Տուրուրեանի Տարօն գ.ա.ի մէջ, վերոգրեալ Գրգուռ լեռան մէկ կողին վրայ ի հնունն Պարսից Վախաանկ զօրավարը իւր որդւոյն անուամբ աւան մը շինեց, որուն գիրքը և աւերակները մասնաւոր քննութեան կը կառօտին:

ԳՐԶԻ կամ Քրզի, գղ. Բարերգի, 5 ժամու ճանապարհ հեռու արեւմտեան հիւսիս, հայ և թուրք բնակիչով: Գրզի անունն կը համարուի Գզիբի բառի ազաւազեալն: Գիւղս առաջին օթեւանը կ'ընծայէ ուղեւորին՝ որ կ'երթայ ի Սիւրմէնէ կամ Տրապիզոն՝ լեռնական ճանապարհով, սահմանակից է Օձեղ, Վանաճեհն, Նիխարս և Խափուռիկ գիւղերուն: Գիւղիս բնակիչք կ'աւանդեն չրջակայից վանքերու և ուխտատեղիներու պատմական անցքերն: Կառուցուած է քուրի մը ստորոտը և 50ի չափ բնակիչներէն 30ը Հայոց էին. նիւթական ու բարոյական յետին աղքատութիւն ընկճած է զիրենք, պանդխտութեամբ կը հայթայթեն իրենց օրապահիկի միջոցները: Երկրագործութենէ վաստակ չկայ. երկիրը թէ և մեծ մասամբ ջրարբի, բայց գրեթէ ճախճախուա է. վասնզի զանազան առուներէ միութիւն կազմած վտակ մը, զարնան՝ արտերուն աւելի աւերիչ կը զառնայ քան թէ օգտակար: Քանի մը ամաց առջեւ գերեզմաններ կան. յարգանօք կը վարուին այդ գերեզմանական կոթողներու հանդէպ: Ունին եկեղեցի մը Սուրբ Պօղոս անուամբ, 1848ին կառուցուած Կիւրինցի Կարապետ վարդապետի ձեռամբ. ձախակողմեան խորանի մէջ ճարտարարուեստէ մը նկարուած անագնահայեաց պատկեր մը կայ: Վարժարան չկայ, և տղայք ձմեռները ախոռի մը կից սենեակին մէջ կը ժողովին:

ԳՐԷՎՈՐԻ, գիւղ Տիգրանակերտի Սլիվան գ.ա.ի Խուրի գաւառակի մէջ. 10 տ. հայ կար:

ԳՐԷՎՈՐԱՆ, գղ. Տիգրանակերտի Պշէրիկ գ.ա.ի, 7 տ. հայ բնակիչ ունէր:



ԳՐԻԽ ԹԷՓԷ, լեռ Սիւնեաց Ծղուկ և Աղահէճք գաւառներու մէջտեղ:

ԳՐԹՄԱՆԻՎ, այլ կերպ գրութիւն Գարդման անուան:

ԳՐԻԳՈՐ (Ս.) ՆԻՒՍԱՅԻ, վանքս կը գտնուի կեսարիայէն 3 ժամու ճանապարհ հեռու, հարաւ արեւելեան կողմը Նիրգե գիւղի մէջ: Այժմ կիսափրկն փլած ու աւերակ է, միայն փոքրիկ եկեղեցին և արտաքին պարիսպը կանգուն կը մնան: Նիրգէ գիւղի քահանային յանձնուած է եկեղեցին, որ երբեմն բարեպաշտ ուխտաւորներու կը բանայ յուստ և յերկրպագութիւն: Վանացս արեւմտեան պարսպի տակէն ջուր մը կը ըխէ մեծ քանակութեամբ:

ԳՐԻԳՈՐԻ (Ս.) ՎԱՆՔ, Այրարատայ Արագածոտն գաւառի, Փարպի գիւղի արեւելեան կողմը այգեստաններու մէջ, Շրջապատը բոլորովին քանդուած է, իսկ եկեղեցւոյն միայն որմերը մնացած ըլլալով, Փարպեցիք փայտայարկ ծածկելով առ ժամանակ մը իբր եկեղեցի կը գործածէին: Վանացս եկեղեցւոյ դրան վրայ կայ 1264 թուականաւ արձանագրութիւն մը: Ներկայ վիճակին վրայ տեղեկութիւնք կը պահսին:

ԳՐԻԳՈՐԻ (Ս.) ՎԱՆՔ ԽԱՆՁՈՐԻ, Հին վանքս կը գտնուի Երզնկայի և Դերջանայ (Բարձր Հայք) մէջ տեղ: Հիմնարկուած է տասներորդ դարուն մէջ Սիմոն անուն ճգնաւորէ մը: շինութիւն ժամանակակից է Կամրջաձորի, Հոռոմոսի, Նարեկայ, Տաթեւու վանքերուն, ինչպէս նաեւ Մշոյ Ղաղարու վանքի շինութեան: Վանացս միարանները իրենք զիրենք կամովին պարտաւոր կացուցած էին օրը մի անգամ կերակուր ու տելու և մի անգամ ջրով զովանայու: Խլածորի Ս. Գրիգոր վանաց ներկայ վիճակին վրայ մասնաւոր տեղեկութիւն մը չունինք:

ԳՐԻԳՈՐԻ (Ս.) ՍԱՆՏԱՊԱՏՈՒ կամ ՁՈՐԱՎԱՆՔ, Վասպուրականի Տոսփ գաւառի հին վանքերէն մին, որ կառուցուած է Վարազայ լերան հիւսիսային լանջի վրայ, Կողբանից հայաբնակ գիւղի մօտերը, խոր ձորի մը մէջ: Վանացս հին կոնդակի մէջ գրուած է թէ ի հնուսն կը կոչուէր Սալնապատսու վանք, որուն ստուգարանութիւնը ոմանք կը համարին իբր սալաւանապատէն առաջ եկած, և ոմանք ալ՝ մեծամեծ սալ քարերով շինուած ըլլալէն կը հետեւցնեն: Վարազայ սարը որ թեատարած արծուի կը նմանի, կարծես խորհրդաւոր կերպով իւր երկու թեւերու վրայ, իբրև պահապան կը կրէ երկու վանքեր՝ աջակողմը Վարագ, ձախ կողմը Ս. Գրիգոր, մէջ տեղ, որտի՛ն՝ վերին Վարագ, կրծքին վրայ՝ Կարմրուր Ս.


Աստուածածին, իսկ կաթարը՝ Աստղկան բերդ:

Ճարտարապետական ոճին նայելով՝ Ս. Գրիգորի վանքը Արծրունեաց ժամանակէն մնացած տասներորդ դարու պատմական յիշատակներէն մին է, հիմնարկութիւնը ոմանք կու տան Մեծին Ներսէսի, իսկ ժողովրդական աւանդութիւնն ալ կը վերագրէ սուրբ Գրիգոր Լուսաւորչի, որ իբր այս վանքը հիմնեց է յանուն սուրբ Յովհաննու Կարապետի. և յիրաւի վանքի աւագ խորանն ալ մինչև այսօր այդպէս կը կոչուի: Վանքս ունի երեք մատարանաչափ տաճարներ, նուիրուած Ս. Աստուածածնի, և Ս. Գրիգոր Լուսաւորչի: Այս տաճարներէն միայն մին գործածելի է, և միւսներն՝ կիսակործան կամ աւերակ: Ժողովուրդը կը պատմէ, թէ ժամանակ մը այս տեղ ապրեր է Ս. Գրիգոր, այս տեղ հանգիստ առեր է մեծ հայրապետը և այստեղ աղօթելու վանքի արեւմտակողմը լերան լանջին վրայ կայ փոքրիկ բայց գեղեցիկ անտառ մը, որ ամբողջ Վարագի միակ բնական անտառն կարելի է համարել: Հոն ծառերու ստուերներու տակ փոքրիկ մատուռ մը կայ՝ Սուրբ Գրիգորի Աղօթատեղի: Յովհան Կաթողիկոս յիշելով Գէորգ Կաթողիկոսի մահը կը յայտնէ՝ թէ «եղին զնա (զԳէորգ) ի քնարանի Ձորոյ վանաց որ ի Տոսպ, մերձ յեկեղեցին՝ ուր եղեալ իսկ էր սրբոյ Լուսաւորչին մերոյ զգաւազանն իւր, և զսեղանն տէրունական խորհրդոյն՝ զոր նախ քան զհաստատելն եկեղեցեաց սրբոց ի Հայս՝ ընդ իւր շըրջեցուցանէր»: Թովմաս Արծրունին ալ կը յայտնէ՝ թէ այս վանացս մէջ հանգուցեր են Ռշտունեաց Համագասպուհի տիկնոջ մարմինը: Վանացս մէջ թաղուած են նաև ուրիշ ազնուատոհմ և եկեղեցական անձանց մարմիններ: Կ'ըսուի թէ վանացս եկեղեցւոյ կամարի մէջ կը պահուէր Ս. Հռիփսիմեայ փողպատը և հողաթափը: Վանքս ժամանակ մը եպիսկոպոսանիստ եղած է, ինչպէս 1441ին. Կիրակոս Ա. Վիրապեցի կաթողիկոսի ընտրութեան ատեն, Ս. Էջմիածնայ ժողովին մէջ գտնուած է վանացս Կիրակոս անուն եպիսկոպոսը: Յովհաննէս Կաթողիկոսը իր վերջին օրերը այս Սալնապատու վանքին մէջ անցուց եւ հոն վախճանեցաւ 925 թուին. իր յաջորդն Ստեփանոս Բ. կաթողիկոս, ամբողջ փոխադրեց Աղթամարայ վանքը:

Ինչպէս Վարագայ ամէն մի անկիւն, նոյնպէս և Ս. Գրիգորի վանքն ունի հրաշալի տեսարաններ: Սալնապատսու շուրջ կը բղխէ վանքէն դէպի հարաւ, սարի կուրծքէն, պաղորակ ու յստակ, կարկաշտով կ'անցնի վանքի պատի տակէն, իւր մէջ ընդունելով անտառէն վազող վճիտ աղբեր:



րակներ, այս ջրոյն եզերքը կան բարձր սօսիներ, հաստարուն ընկուղենիներ և ստուերախիտ ուռենիներ։ Ս. Գրիգորի վանքս ունեցեր է և ունի միշտ իւր բազմաթիւ ուխտաւորները։ Վանքս վերջին տարիներս համարեա անընակ և ամայի դարձած էր, բայց 1898 թուականին որբանոց մը



Ս. Գրիգոր Սալնապասու վանքը

բացուեցաւ, որուն ձեռքը կը հոգան Ազգ. Պատրիարքարանի միջոցաւ նիւ Եորք քաղաքի որբարհամ ազգայինները։ Ս. Գրիգոր Լուսաւորչի անուամբ դեռ ուրիշ շատ վանքեր կան, որոց մէկ մասը նկարագրած ենք Լուսաւորչի վանք անուան ներքոյ։ Տես նաեւ Ամարաս, Հերմոնի, Առապարի, Խորվիրապի վանք։ (Եփրիկեան՝ «Քննախարհիկ»)։

ԳՐԻԳՈՐ (Ս.) ՆԻԻՍՍՅԻՈՅ ՎԱՆՔ, Կեսարիոյ Հիզրէ գիւղի մօտ։ Տե՛ս նիւսացոյ վանք

ԳՐԻԳՈՐ Ս. ՍՔԱՆՉԵԼԱԳՈՐԾԻ ՎԱՆՔ, տես Սփանչելագործ Ս. Գրիգոր։

ԳՐԻԳՈՐ (Ս.) կամ Գրիգորիոս Ա. Կարողիկոս, Լուսաւորիչ կոչուած՝ մեր ազգը ի քրիստոնէութիւն դարձնելուն համար։ Գրիգոր (որ Արթուր կը նշանակէ) որդին էր Անակ Պարթեւին, որ Հայաստան եկած էր մեր Խոսրով Ա. թգ.ը սպաննելու 258ին։ Գրիգոր ծնած ըլլալով Վաղարշապատի մէջ 257 թուականին՝ մէկ տարու էր, երբ Անակ դաւաճանութեամբ սպաննեց Խոսրով Ա.ը։ Հայ նախարարները դաւաճանին ցեղը սրէ անցուցին. միայն Գրիգոր մանկիկը ու Սուրէն աղատեցան, այդ կոտորածներէն։ Սուրէն Պարսկաստան տարուեցաւ իսկ Գրիգոր՝ Կեսարիա Սփիա անուն բարեպաշտ ստնտուհի մը, որ հոն մկրտել տուաւ ապագայ Հայոց Լուսաւորիչը, դաստիարակեց զայն իբրև քրիստոնեայ։ Շուրջ 270ին Գրիգոր ամուսնացաւ Մարիամ անուն պարկեշտ օրիորդի մը հետ, որ քրիստոնեայ Դա-

ւիթի մը դուստրն էր և հոն ծնան Վրթանէս և Արիստակէս։ Ամուսնութենէն ևաք Գրիգոր և Մարիամ իրարարու հաւանութեամբ բամուռեցան, Մարիամ իր մօտ առած միամեայ Արիստակէսը՝ կանանց վանք մը առանձնացաւ, իսկ Վրթանէս դայեկին քով մնաց մինչև մեծցաւ, մինչև Գրիգոր Հայաստան գնաց Խոսրովի որդւոյն Տրդատայ ծառայելու համար, որպէսզի ասով քաւէ իր հօրը ոճրագործութիւնը։

Երբ Տրդատ Հոռմէն Հայաստան եկաւ՝ իր բանակին մէջ գտաւ Գրիգորը, իբրև մին իր հաւատարիմ ծառաներէն։ Տրդատ Երզնկա հասնելով Անահտայ չաստուածուհիին զո՛հ մատոյց առ ի երախտագիտութիւն և երբ Գրիգորի ևս հրամայեց որ ծաղկանց փունջեր նուիրէ Անահտայ՝ Գրիգոր յանձն չառաւ և յայանեց իր քրիստոնեայ ըլլալը։

Տրդատ զայրացած տեսակ տեսակ չարչարանքներով տանջել սկսաւ Գրիգորը, պարտադրելով որ ուրանայ Գրիստոնէութիւնը և զո՛հ մատուցանէ Անահտի։

Երբ տեսաւ Տրդատ որ ո՛չ եռացած իւզերը ու կապաները, ո՛չ շիկացած երկաթները չկրցան զինքը սպաննել՝ Տրդատ հրամայեց որ զինքը Արտաշատի մէջ Խոր վիրապը նետեն։

Այս դէպքէն 14 տարի ետք, 301 թուին, երբ Տրդատ որսի ելած էր՝ յանկարծակի կը դեւահարի ու կառքէն վար կ'իյնայ, ո՛չ մէկ բժիշկ չէ կարող զինքը առողջացնել։ Այդ ատեն հրեշտակ մը կ'երևայ թագաւորին քոջ Խոսրովադուխտին ու կ'ըսէ. — «14 տարի առաջ Խոր վիրապը նետուած Գրիգորը միայն կարող է բժշկել եղբայրդ»։ Խոսրովադուխտ երբ Հրեշտակին այս խօսքերը կը կրկնէ նախարարներուն՝ անոնք կը ծաղրեն զինքը ըսելով — Դո՛ւն ալ մոլեգնեցար, քանի՞ տարիէ ի վեր Գրիգոր Խոր վիրապը նետուած է»։

Երբ տեսիլը կրկնուեցաւ հինգ անգամ՝ Օտա նախարարը Արտաշատ գնաց Գրիգորը Խոր վիրապէն հանելու և բերելու համար։ Երկար պարան մը վար իջեցուց Օտա և գոչեց. — Եթէ կենդանի ես՝ ձա՛յն տուր։ Գրիգոր չուանը շարժեց և երբ վեր հանեցին զինքը տեսան որ մարմինը ածուխի պէս սեցած էր. լուացին և նոր զգեստներ հագցնելով Վաղարշապատ տարին։ Նախարարները ու բազմութիւն մը ժողովրդեան ուրախութեամբ ընդունեցան Գրիգորը և Տրդատ իսկ եկաւ Սրբոյն ոտքը ինկաւ։ Գրիգոր աղօթեց և ճմարիտ Աստուածը քարոզեց և բժշկեց թէ թագաւորը և թէ՛ դիւահար իշխանները։ 302 թուականին Գրիգոր Կեսարիա գնաց և Ս. Կեռնդիոսէն եպիսկոպոս ձեռնադրուելով Հայաստան



վերադարձաւ և յանուն Յիսուսի Գրաստոսի մկրտեց Տրդատը, թագաւորական ընտանիքը, նախարարներն ու ժողովուրդը. քանզից բոլոր մեհեանները, անոնց տեղ եկեղեցիներ և վանքեր կառոյց և Հայաստան պաշտօնապէս ընդունեց քրիստոնէութիւնը:

Լուսաւորչի և Տրդատի նախաձեռնութեամբ զպրոցներ բացուեցան, ուր կը յաճախէին մանաւանդ քրիստոնէութիւնն ընդունող քրմական ընտանիքներու զաւակները՝ եկեղեցական կրթութիւն ստանալու համար:

Մեր պատմիչք կ'աւանդեն նաև Գրիգոր Լուսաւորչի այցը ի Հռոմ՝ Տրդատայ հետ. Քննադատութիւնը սակայն չի հաստատեր այդ ճամբորդութիւնը. մեր պատմիչներուն նպատակն եղած է ցոյց տալ Ս. Գրիգորի ճանաչումը Հռոմայ գահերէցութեան:

Գրիգոր 303ին Ս. Էջմիածնի Մայր եկեղեցին կը հիմնէ, նուիրապետութիւնը ու պաշտամունքը կը կարգադրէ. 318ին իր Արիստակէս որդին որ կեսարիայէն Հայաստան բերուած էր 306ին իրեն իրրև օգնակպն, եպիսկոպոս կը ձեռնադրէ ու իր տեղը կաթողիկոս դնելով իր կեանքը ճգնութեամբ կ'անցընէ: 325ին երբ Նիկիոյ մէջ առաջին եկեղեցական ընդհանուր ժողովը զումարուեցաւ՝ իր տեղը Ս. Արիստակէսը զրկեց, որը երբ Քրիստոնէական Հանգանակը բերաւ՝ դայն կարգալէ ետք «իսկ մեք փառաւորեցուք»ը աւելցուց:

Անկէ ետք բոլորովին առանձնազաւ Եկեղեցաց Սեպուհ լեռը Մանեայ այրին մէջ ուրվախճանեցաւ շուրջ 331ին (ըստ Չամչեանի, ուրիշներ 325ին վերջերը կը համարեն):

Հովիւները Մանեայ այրին մէջ մեռած գտնելով՝ կը թաղեն առանց դայն ճանչնալու. քանի մը տարի վերջ Գառնիկ անուն ճգնաւոր մը, ճանչնալով Մանեայ այրէն Թորդան կը փոխադրէ Լուսաւորչայ մարմինը, անկից Վաղարշապատ եւ կը գրուի հայրապետական եկեղեցւոյ մէջ և կը տարուի Դուին՝ երբ հոն կը փոխադրուի հայրապետական աթոռը: Մաս մը Բիւզանդիոն և մաս մ'այ Իտալիոյ Նարոլի քաղաքը կը տարուի Ս. Գրիգորի նշխարէն:

Ըստ աւանդութեան Ս. Գրիգորի կ'ընծայուի Յանախապատում գիրքը որուն մէջ ճառեր կը բովանդակուին, և առաջին անգամ տպուած է 1737ին, ի Կ. Պոլիս՝ հետեւեալ ճակատով. «Գիրք որ կոչի Յանախապատում, ասացեալ Սուրբ Հօրն մերոյ երանելոյն Գրիգորի Լուսաւորչին: Յորում պարունակին ճառք Յոգնապատում քսաներեք: Վասն անհաս էութեանն Աստուծոյ, եւ

խնամոցն սիրոյն որ առ ստեղծուածս: Եւ վարուց ուղղութեան և հատուցման գործոց»: Բ. տպագրութիւնը՝ 1824ին, ի Կ. Պոլիս, Գ. տպագրութիւնը՝ 1838ին ի Ս. Ղաղար (Վենետիկ), Գ. տպագրութիւնը՝ 1894ին՝ Էջմիածնի մէջ:

Գրիգոր Լուսաւորչի վարքը մանրամասն գրած են, հիներէն՝ Աղաթանգեղոս, և բոլոր պատմիչները, իսկ նորերէն՝ Եւզոկիացի Հ. Մատթէոս, Բոնուկկի. Աւգերեան Հ. Մ. (Վարք Սրբոց) և այլն (սե'ս Հ. Ս. Ղազիկեանի «Նոր Մատենագրութիւն»ը):

Վերջերս Ս. Սոփիայի մէջ (Այա Սոփիա) խրճանկարը երեան եկաւ Ս. Գրիգոր Լուսաւորչի, բանասէրք սակայն տարակարծիք են և զեռտարակուսելի է անոր վաւերականութիւնը: Մեր նախնիք շատ մը գանձեր, շարականներ, տաղեր գրած են ի պատիւ Ս. Գր. Լուսաւորչի: Ներբող մ'իսկ գրած է Յովհ. Ոսկերեան. որուն թարգմանութիւնը հասած է մեզ և տպագրուած:

Նաբոյիի մեջ, միանձնուհիք պահած են Ս. Գրիգոր Լուսաւորչի նշխարը. եւ մեծ ջերմեռանդութեամբ կը սօսեն, «ժամագիրք սրբոյն Գրիգորի Լուսաւորչին» իսկ շարագրած են ի պատիւ մեր սրբոյն: Թե' յոյն եւ քե լատին եկեղեցիցի կը սօսէ Ս. Գրիգոր Լուսաւորչիք Սեպս. 30ին, իսկ Հայ եկեղեցիցի մեկէ աւելի անգամներ, «Մուսն ի խոր վիրապի» Ծաղկազարդէն առաջ շաբաթ օր, «Եյն ի վիրապէս» Ս. Երոզդուքիւն սօսեն ետք յաջորդ շաբաթ օրը, իսկ այդ սօսեն երկու շաբաթ ետք հանդիսաւորապէս կը սօսէ «Գիւտ նշխարաց Ս. Գրիգորի»:

ԳՐԻԳՈՐ Բ. Վկայասէր որ և Վահրամ՝ աւագանի անուամբ, որդի Գրիգոր Մագիստրոսի, որ հօրը խնամքին ներքև կրթուեցաւ, և իր ուսումնասիրութեան իրրև վարձք՝ իր իսկ անունին ձօնուած քերթուածներ ընդունած է հօրմէն: Ի սկզբան քաղաքային յատուկ պաշտօն ունենալով՝ Բիւզանդական վիտս արտադրող կը կրէր. հօրը մահէն ետք կրօնաւորեցաւ ու եկեղեցական կարգը ստանձնելով կ'ընտելեցաւ Գրիգոր: Քիչ ատենէն Ուլիկ կ'Թ.ի մահէն ետք անոր՝ յաջորդեց 1065ին Գրիգոր միակ կաթողիկոսն եղած է որ Հայաստանէն դուրս ճամբորդած է. նախ Հռոմ, յետոյ Պոլիս և անկից ալ Երուսաղէմ դիմած է իր ուխտը կատարելու համար, սակայն հովը փոխանակ զինքը Յոպպէ հանելու՝ Աղեքսանդրիա տարած է, այցելած է Եգիպտոսի մօտ Թեփայիտի կրօնաւորաց անապատները և անկից գացած է Երուսաղէմ 1099ին, ինչպէս կը գրէ Մատթէոս Ուռհայեցի գրելով «էր յայնժամ յերուսաղէմ հայրապետն Հայոց տէր Վահրամ, և զօրքն



այլազգեաց կամեցան սպաննել զնա, և Տէր փրկեաց զնոսա ի ձեռաց նոցա:» ԺԲ. դարու զրիչ մը Վարդան Հայկազն իր Տաղ գերեզմանական վասն փոխմանն երանեալ և սուրբ կաթողիկոսին Հայոց Գրիգորի վկայասէրի» օտանաւորին մէջ հետեւեալ առղերը կը գրէ անոր հետիոտն ուխտաւորութեան առթիւ.

«... Ապա ուխտիցն փափագէր  
 Ձաշխասուրբեան գործ համբուրէր,  
 Ի հետիոտս ուղեւորէր  
 Եւ ի Ս. Բաղաբա հասանէր,  
 Ձտօրինական տեսանէր.  
 Անդ ուր Փրկիչն ներգործեալ էր.  
 Խրնդայր հոգւովն եւ բերկրէր,  
 Մարմնովն յերկնի գոյ համարէր,  
 Յընծայր Բաղաբա եւ զարդարէր,  
 Ձհայրապետ սուրբ ընդունէր:»

(«Բազմ.» 1873 էջ 268):

Գրիգոր Վկայասէր Ծամնտառի մէջ փոխադրեց կաթողիկոսական աթոռը, 1071ին Գէորգ Լոսեցիին իրեն յաջորդ ձեռնադրեց ու յետոյ զահրեհեց զայն 1072ին: 1074ին է որ կը ճամբորդէ Պոլիս, Հռոմ, Եգիպտոս եւ այլն ինչպէս վերը պատմեցինք. 1082ին իր հաւանութեամբ հայ իշխանները Բարսեղ Անեցիին կաթողիկոս զրին և առկից ետք կրկին զնաց Կ. Պոլիս, որովհետեւ Յոյները սկսած էին հալածել Հայերը իրրե հերիտիկոսներ, Գրիգոր կթ. կայսրէն խնդրեց որ փոխանակ Հայերը հալածելու սիրով միաբանեցնէ զիրենք Հայոց հետ. ասոր վրայ կայսրը հանգարտեցաւ թէպէտ, բայց միաբանութիւնը չյաջողեցաւ:

1105ին Գրիգոր Վկայասէր, իր քեռորդուոյն Ապիրատի երկու հրեշտականման որդիքը Գրիգորն ու Ներսէս հետն առնելով Բեսուն քաղաքին մօտը գտնուող Ռապան քաղաքը զնաց, այդ կողմերու իշխան Գող Վասիլի տիկնոջ խնդրանքին վրայ, մօտակայ Կարմիր վանքը առանձնացաւ եւ զգալով որ մահամերձ է՝ Բարսեղ կաթողիկոսն ու Գող Վասիլը իրեն կանչեց, անոնց խնամքին յանձնեց Ապիրատի երկու զաւակները, պատուիրելով որ Բարսղի մահէն ետք Գրիգորը բարձրացնեն կաթողիկոսական աթոռին վրայ: Եւ զամէնքը օրհնելով՝ յետին թոշակն առաւ և վախճանեցաւ 1105ին և հոն թաղուեցաւ:

Գրիգորիս մեր մպտենագիրներուն շարքին դասուած է իր նախասիրած գրական աշխատանքով, այն է սուրբերու վկայաբանութեանց թարգմանութեամբ, այդ պատճառաւ իսկ Վկայասէր կոչուած: Հակառակ անոր որ աթոռէն հեռու գտնուած

է ստէպ, բայց եկեղեցական բարեկարգութեան նախանձախնդիր եղած է և սօնական հանդիսաւորութիւններ սահմանած, որոնց մէկն է Ոտընլուայի կարգը մեր եկեղեցւոյ մէջ, ինչ ինչ ընթերցուածներով:

«Պէտք է ընդունիլ սակայն, կը գրէ Եղիշէ պատրիարք Գուրեհան, (Պատմ. Հայ մասնագրութեան էջ 189) որ Վկայասէրին ընծայուած բարգմանութիւնները աւելի ուրիշներու քան թէ իր աշխատութեան արդիւնքն են. վասնզի յոյն կամ ասորի հայազէտ թարգմանիչներու (Թէոփիստէ, Անդրէաս Երէց, եւ այլն) աղճատ հայերէնը սրբազարել տալով հանդերձ իրեններուն (Մատթէոս քահանայ, Կիրակոս վարդապետ, և այլն) ինքը կը նկատուէր զարձեալ գործին թարգմանիչը: Այսօրինակ աշխատութիւններէն մէկն է Ոսկեբերանի վարուց պատմութիւնը, զոր իր ծերութեան հասակին մէջ կատարած է Վկայասէր, Տաւրոսեան «Սեւ լեռներու» վանքերն այցելած միջոցին:

«Այսուամենայնիւ Վկայասէր կաթողիկոսի թարգմանական ձեռնարկները ունեցան իրենց կարեւորութիւնը հայերէն լեզուի տեսակէտով, և կերպով մը ինքն ուղեցոյց հանդիսացաւ հետեւեալ դարուն (ԺԲ) ծաղկող մեր արձաթի մատենագրութեան, որուն ոսկեղարեան հայերէնի ճաշկը վերերեցաւ ըստ կարելւոյն:»

Ըստ Հ. Գ. Զարբանալեանի Գրիգոր Վկայասէրի հեղինակութիւնը կը համարուի Գործոց Առաջինի մեկնութիւն մը: (Հ. Ալիշան Շնորհալի եւ պարագայ իւր գործին մէջ մանրամասն կը խօսի Գր. Վկայասէրի մասին (գլխ. Գ.): Ն. Շնորհալին հայրապետիս համար կ'ըսէ.

Երկրորդ Մովսէս մեզ հետեւեալ  
 Ձգիւս բազումս բարգմանեալ,  
 Առ ի Յունաց եւ յԱսորոց՝  
 ձառս Սրբոց վերաբերեալ:»

ԳՐԻԳՈՐ Գ. կաթողիկոս Պահլաւունի, որդի Ապիրատի քեռորդուոյն Գրիգոր Բ. վկայասէրի, եղբայր Ներսէս Շնորհալուոյ. ծնած է մօտաւորապէս 1092ին, մեծցած Գրիգոր Վկայասէրի խնամքին տակ, զոր իր մահէն ետք յանձնած է Գող Վասիլի և Բարսեղ Անեցի կաթողիկոսի հոգածութեան, խնդրելով որ վերջնոյն մահէն ետք զինքը նոտեցնեն կաթողիկոսական աթոռին վրայ. Գրիգոր իր ուսումը շարունակած է Բեսունի մօտ գտնուող Կարմիր վանքին մէջ և 1113ին Բարսղի մահէն ետք երբ դեռ 21 տարու էր կաթողիկոս ընտրուած և նստած Սեւ լեռը, ուր 1114ին ժողով գումարելով մերձեց Աղթամարայ



կաթողիկոսութիւնը: 1125ին կաթողիկոսական աթոռը Ծովք և յետոյ 1147ին Հռոմկլայ փոխադրեց ուր 19 տարի ևս շարունակելով կաթողիկոսութիւնը իր կրտսեր եղբայրը Ներսէս Ծնորհային իրեն յաջորդ ձեռնադրեց և այդ տարին (1166) վախճանեցաւ:

«1141ին, Անտիոքի մէջ ժողով մը կը գումարուի պապական նուիրակ Ստեփոյ կարաինայ Ալբերկոսի նախագահութեամբ, դատելու համար Անտիոքի լատին պաթարարք Հռոտոլփոսի արարքները: Յատուկ հրաւիրմամբ, սոյն ժողովին ներկայ կ'ըլլան Գրիգոր կթ. Պահլաւունի և եղբայրը Ներսէս Ծնորհային: Հռոտոլփոս կը դատապարտուի, ժողովէն յետոյ Ալբերկոս փափազ կը յայտնէ Գրիգորիս կաթողիկոսին հետ միասին ուխտ կատարել Երուսաղէմ. Պահլաւունին թէ՛ իր ուխտը կատարելու և թէ՛ լատինաց հետ իր յարաբերութիւնները ամրապնդելու համար, կ'ընդունի նոյն առաջարկը և 1142ի Զատկին Երուսաղէմ կը գտնուի և կը նախագահէ հանդիսութեանց, կը մասնակցի Սիոնի մէջ գումարուած ժողովին, ուր ատենաբանութեամբ կը պարզէ հայ եկեղեցւոյ հաւատալիքը և դաւանութիւնը, ընդհանուրին հաւանութեան և ակնածանքին կ'արժանանան կթ. ին խօսքերը և լատինք սիրով կը վերաբերուին հանդէպ Հայ եկեղեցւոյ եւ Ս. Յակոբի միաբանութեան: Մեր պատմիչներէն Սամուէլ Անեցիին կը յիշէ Գրիգորիս կթ. ին այս այցելութիւնը: Իսկ օտարներէն Տիւրացի Գուլիէլմոս հետեւեալ կերպով կ'արձայնատուի Գրիգորիսի մասին.

«Մեծ հայրապետ Հայոց, զլուխ և պետ ամենայն եպիսկոպոսաց Կապաղովկացւոց և Մարաց և Պարսից և Երկաքանչիւր Հայաստանի, և գերագոյն բարունապետ, որ կաթողիկոսն անուանի»: (Չամչեան՝ Գ. 53):

«Գրիգոր Գ. պշակերտած է Շուգր անապատի գիտնական Ստեփանոս Մանուկ վրդ. ի: Կիրակոս պատմագիր կը գրէ Գրիգորիսի համար, «սկսաւ թարգմանութիւնս առնել աստուածային գրոց. և բաղում գիրս ետ թարգմանել ի Հայ լեզու. զորս ինքեամբ և զորս այլոց ձեռամբ»: Կը կոչուի Փոքր Վկայապետ և ունի շարականներ եւ տաղեր, ինչպէս կը վկայէ Գրիգոր Տաթևացիին»: (Աղաւնուի՝ «Միաբանք» 77—8):

Հ. Չամչեան կը պատմէ թէ՛ երբ Գրիգորիս Երուսաղէմէն դարձաւ՝ Լատինները իր մասին շատ գովասանքներ գրեցին Հռոմայ Պապին. վերջինս գաւազան և հայրապետական քօղ զըրկեց սիրոյ թղթով մը, ինչպէս կը յիշատակէ Ն.

Լամբրոնացին իր Ներսէս Ծնորհալոյ վրայ գրած ներբողեանին մէջ:

Ոթոն եպ. Փրիսինգուցէ (Է. 31) կը պատմէ թէ երբ Հայոց և Յունաց մէջ կրօնական և ծիսական վէճ ծագեցաւ՝ Գրիգոր կթ. 1145ին յատուկ թղթով մը պատուիրակներ ղրկեց Հռոմայ Եւգինէոս Գ. պապին՝ անկից խնդրելով, այդ խնդիրներուն լուծումը: Պապը կը պատուէ հայ պատգամաւորները և սիրալիր նամակով մը կը պատասխանէ Գրիգորի նամակին: (Չամչեան՝ Գ. էջ 54):

ԳՐԻԳՈՐ Գ. կթ. Տղայ, որդի Ներսէս Ծնորհալոյ Վասիլ եղբոր, ծնած չուրջ 1133ին, անած և կրթուած իր հօրեղբոր Ներսէսի քով՝ կաթողիկոսարանին մէջ, փոքր հասակին եպիսկոպոս ձեռնադրուած էր: Երբ Ներսէս Ծնորհային ի Տէր հանգեաւ՝ Գրիգոր հեռի էր Հռոմկլայէն, ուր փութաց իր վերջին մեծարանքը մատուցանելու իր հողեւոր ծնողին:

Ն. Ծնորհալոյ թաղման պատճառաւ Հռոմկլայ ժողովուած եպիսկոպոսները իրրե Ծնորհալոյ յաջորդ՝ Գրիգոր Տղան գտան արժանաւոր. եկեղեցի տարին զինքը ու կաթողիկոս օծեցին 1173ին:

Գրիգոր Տղայ Ներսէս Ծնորհալոյ սկսած միութեան փորձին փարեցաւ և 1178ին Հռոմկլայի մէջ եկեղեցական ժողով մը գումարեց, որուն ներկայ էին հայ եպիսկոպոսաց և նշանաւոր վարդապետաց մեծամասնութիւնը. այդ ժողովին մէջ էր որ Ներսէս Լամբրոնացի իր սքանչելի առեւնապետութիւնը ընելով՝ ժողովականները միութեան սիրով հրահրեց: Ժողովականք միաձայն հաւանութեամբ ընդունեցան և ամէն ոք սիրով Յունաց պահանջած պայմանները ստորագրեց կիտ. Մանուէլի ղրկուելիք նամակը: Գործը աւարտած կ'երևէր, բայց պատգամաւորները զեռ Պոլիս չհասած կիտ. Մանուէլ մեռած էր, և այնուհետեւ քաղաքական և ուրիշ եկեղեցական խնդիրներ ալ ծագելով՝ միութեան գործը վերջնականապէս խափանեցաւ, և հակառակութեան ոգին երկու կողմերուն ալ տիրեց:

Յոյները չրաւականանալով իրենց անձնական հակառակութեամբ՝ Հռոմայ առջեւ ալ սկսան ամբաստանել Հայերը՝ իրր մոլորեալ և հերիթիկոս: Այս զրպարտութեանց իրր հերքումն, հաւատոյ դաւանութեան և սիրոյ թուղթ մը գրեց Գրիգոր Տղայ հայրապետ առ Լուսինոս Գ. (1182—1185) Հռոմայ Պապը: Դահանայապետը շատ սիրով ընդունեց այս թուղթը և կոնդակով մը միասին ղրկեց նաև հայրապետական եմփիորոն, պալիում եւ խոյր մը՝ ի նշան սիրոյ: Այս կոնգակը Ն. Լամբրոնացին ի հայ թարգմա-



նեց կաթողիկոսին հրամանով: Այս կերպով Հայոց ընդհանուր եկեղեցւոյ հետ միութեան գործը զարգացաւ և հեղհեղ ընդարձակեցաւ քաղաքակրթութեան ճանապարհը: որ շատոնց բացուած էր հայութեան և արեւմուտքի մէջ:

Գրիգոր Տղայ կթղ.ի ջանքը միայն արքային միութեան մէջ շահմանափակուեցաւ, այլ մեծ անձնուիրութեամբ իր հօտն ալ կը յանձնաձէր: Ն. Լամբրոնեցւոյ հետ միացած՝ կ'աւրէին ինչ որ զեղծուած էր, կը շինէին՝ ինչ որ բարեկարգութիւն էր: Ն. Շնորհալուոյ երգերն ու շարականները մշտատեւ կերպով հաստատեց, եւ Ն. Շնորհալին անմիջապէս մահէն ետք Սրբոց դպօր կարգեց: Դարձեալ այս հայրապետն էր՝ որ Լեւոն Բ. իշխանին եւ Ս. Ներսէս Լամբրոնեցւոյն հետ միասին՝ Գերմանիոյ Փրեզբերիկոս Շիկամօրուսկայսեր ընդ առաջ գնաց մինչեւ Սելեւկիա քաղաքը, որ նոյն ժամանակ Հայոց ձեռքն էր. սակայն չկրցան կայսրը տեսնել, որովհետեւ խղղուած էր Սելեւկիոյ գետին մէջ՝ անցնելու կամ լողալու միջոցին:

Գրիգոր Տղայ 20 աարի կաթողիկոսութիւն ընելէ ետք 1193 Յուլիոսին ի Տէր հանգեաւ: Մեծ հանդէսով թաղեցին զինքը Հոռմկլայի մէջ աւրնթեր Գրիգոր եւ Ներսէս կաթողիկոսներու, թաղման ներկայ էին Ն. Լամբրոնեցին եւ Լեւոն Բ. իշխան:

Գրիգոր Տղայէն ունինք քանի մը բուղբեր, որոնցմէ երկուքը Առ Կիւ Մանուէլ կայսրը գըրուած են, հատ մ'ալ Առ Միխայէլ պատրիարք Կոստանդնուպոլսոյ, վերը յիշուած միութեան խնդրոյն նկատմամբ:

Թուղբ առ Հաղբասացիս կամ առ Գրիգոր Տուգեորդին և Թուղբ առ վարդապետ Հայոց հիւսիսային կողմանց, հայելի մ'են անոր եռանդուն հոգւոյն, խոր հմուտութեան և սրաբան ճարտասանութեան:

Իրեն ժամանակ Երուսաղէմը առնուելով այլազգիներէն՝ գրած է Ողբ Երուսաղէմի, նմանութեամբ իր հօրեղոր (Ն. Շնորհալուոյ) Ողբ Եղեսիոյի: Տիւրքիէ հրատարակած է դայս Ֆրանսերէն թարգմանութեամբ *Recueil des historiens des Croisades*. Paris 1869: (Սրբազան Հայկազունց՝ Հ. Մ. Պետրեանի, էջ 134):

ԳՐԻԳՈՐ Ե. կթղ. Բարալեք, եղբորորդի կամ ըստ այլոց քեռորդի Գրիգոր Տղայ կթղ.ի, որուն մահէն ետք Լեւոն թգ. եպիսկոպոսներն ու վանահայրերը ժողովի հրաւիրելով Գրիգոր Բարալեքը ընտրելու առաւ, թէեւ հասակաւ «մանուկ» էր: Ն. Լամբրոնեցին ի սկզբան ընդդիմացաւ այս ընտրութեան որովհետեւ այդ «մանուկ»ը անընդունակ էր կաթողիկոսական

պաշտօնը վարելու: Հիւսիսային կամ արեւելեան վարդապետք ընդհակառակն, մանաւանդ Զորոզնետացիք, Հաղբասացիք եւ Սանահնեցիք Գրիգոր Տուգեորդին ու Դաւիթ Քորարեցին որոնք Գրիգոր Տղայի նակաւորդներն եղած էին՝ իրենք խնդրած էին Լեւոնէն որ հանգուցելոյն ազգական այս Գրիգոր «մանուկ»ը բարձրացնէ կաթողիկոսական աթոռին վրայ, յուսալով որ ան իրենց պիտի անսայ:

Գրիգոր հաղիւ տարի մը կաթողիկոսութիւն ըրած ուրիշ կերպ սկսաւ վարուիլ, նախնեաց հաստատած կարգն ու սարքը իր քմահաճոյքին համեմատ փոփոխել սկսաւ. հայ իշխանք եւ բարձրաստիճան եկեղեցականք ահաճած՝ Լեւոնի ղիմեցին որ դարման մը տանի: Լեւոն Բ. իշխան Գրիգոր «մանուկ»ը արգիլափակելէ ետք զրեց արեւելեան եպիսկոպոսաց թէ ինչ պէտք է ընել ու անոնցմէ զոմանս Կիլիկիա հրաւիրեց. իրեն կանչեց նաեւ Ն. Լամբրոնեցին, բայց նա հրաժարեցաւ երթալէ. Լեւոն իր հրամանը կրկնեց հինգ անգամ, ի վերջոյ Ն. Լամբրոնացի Սիս գնաց, բայց արդէն Գրիգոր աղիտալի մահուամբ մեռած էր, պարկեր իրարու կապելով պարան ձեացուցած փորձեր էր բերլին պարսպէն վար իջնալ, առաջին պարկին կապը քակուելով վար ինկած, քարի մը զարնուելով հոն տեղն ու տեղը մեռած էր 1195ին, հաղիւ մէկ տարի և հինգ ամիս կաթողիկոսութիւն ընելով: Զինքը թաղեցին Դրազարկ վանքին մէջ:

ԳՐԻԳՈՐ Զ. կթղ. Ապիրատ. սա ալ Ներսէս Շնորհալուոյ Շահան կամ Զօրավար եղբոր որդին էր: Երիտասարդական հասակին՝ Ապիրատ անունով զինուորական վիճակի մէջ մտաւ և երեսնամեայ հասակին կը պատուուէր Կոստանդնուպոլսոյ կայսերական զնդին մէջ:

Հասուն հասակին մէջ էր՝ երբ 1195ին, Գրիգոր Ե. Քարալէթի դժբախտ մահէն ետք Սիսի մէջ ժողով գումարեցին հայ եպիսկոպոսներն ու իշխաններն և Ապիրատը կաթողիկոս ընտրեցին ու օծեցին Գրիգոր Զ. կոչելով: Հիւսիսային այն անուանի վարդապետները — Գրիգոր Տուգեորդի Դաւիթ Քորարեցի և իրենց համախոհները՝ զառնացան այս ընտրութեան համար, և շուղեցին հնազանդիլ անոր իրեւ կաթողիկոսի, այլ ամէն ջանք ըրին որ իրենց կուսակից Բարսեղ Անեցին նստի կաթողիկոսական աթոռին վրայ:

Գրիգոր Զ. ի օրով Կիլիկիա իր թագաւորն ունեցաւ յանձին Լեւոն Բ. իշխանի, որ այլևս թուրքովին տիրած էր երկրին, կը մնար միայն թագաւոր պսակուելիւ Հռոմայ Կեղեսափնոս Գ. քա-



հանայապետը շքեղազարդ թագ մը դրկեց Լեւոնին Կոնրադոս կարտինային ձեռքով, որ թագն առած Գերմանիա անցաւ. Փրեաեբրիկոս կայսեր խոստման համեմատ՝ անոր յաջորդը Հենրիկոս ալ ուրիշ թագ մը տուաւ Երբ նուիրակը Կիրիկիա հասաւ, յետ քանի մը միջնակեալ խնդիրները լուծելու, Տարսոնի եկեղեցւոյն մէջ, Գրիգոր Զ. փառաւոր հանդիսով Հայոց թագաւոր օծեց Լեւոնը: Թագադրութեան հանդէսներէն ետք երբ լատին նուիրակը Հռոմ կը մեկնէր. Լեւոնի շնորհակալութեան թուղթէն զատ Գրիգոր կթղչն ալ Կեղեասինոս քահանայապետին նամակ մը գրեց միութեան և հպատակութեան խոստումներով: Պապը գովելով անոր գնացքը, ի նշան իր հայրական սիրոյն՝ գրոյն պատասխանին հետ դրկեց անոր եմփիորոն և մատանի մը, իսկ թագաւորին ալ Ս. Պետրոսի շքանշանը:

Իմաստութեամբ առաջնորդելով իր հօտը՝ կենաց վերջին օրերը հասաւ. բայց ան ալ առանց արդեանց չմնաց. վասնզի կը մնար տակաւին փափուկ խնդրի մը մէջ միջնորդութիւն ընել:

Նոյն ամենները (1201) Յոյները կ'ուզէին խարդախութեամբ բռնել և սպաննել Լեւոն թգը, որպէս զի զիւրաւ կարենային Կիրիկիոյ տիրել. սակայն այս քաջ թագաւորը անոնց գործած դարանները ի վնաս իրենց կը դարձնէր, ուստի անգամ մ'ալ երբ Յոյները ժողոված էին որ զինքը բռնեն՝ իրենց կողմակից ունեցան Ն. Լամբրոնեցւոյ եղբայր Հեթում Բ. Սեբաստոսը, որ ապրտամբած էր Լեւոնէն:

Հայոց արքայն քաջարար Յոյները վանելէ ետք երբ Հեթումը պատրուակով մը Սիւ կանչեց իր ընկերներով ու զիրենք բանտարկեց՝ ձերունազարդ հայրապետը ներումն խնդրեց իր արենակից Հեթումին համար և երաշխաւորեց որ Լամբրոնի իշխանք միշտ հպատակ պիտի ըլլան իրենց թագաւորին: Լեւոն ո՛րքան որ զայրացած էր՝ չկրցաւ մերժել պատկառելի հայրապետին խնդիրքը. հանեց բանաէն Հեթումը, ներեց անոր և հաշտուեցաւ: Այս միջնորդութիւնը յաջողութեամբ աւարտելով Գրիգոր, երբ կ'ուզէր իր աթոռը վերադառնալ՝ հոն հիւանդացաւ և ի Տէր հանգեաւ Սիսի մէջ 1203ին ու թաղուեցաւ Արքակաղնի վանքին մէջ (Հ. Մ. Պոսուեան՝ «Արքազան Հայկազուն», էջ 139):

Գեորգի է. կթղ. Անաւարգեցի, մականուամբ Տուրբ երիցանց և Երգեցող կոչուած 1294ին, Ստեփանոս Դ.ի մահէն ետք կաթողիկոս կ'ընտրուի և կը նստի Սիսի մէջ, Վանականք և առաջնորդք այս ընտրութեան հաւան չէին «հռոմ» է ևւ

այր պարզամիտ՝ կ'ըսէին: Սա Չանաց հայկական ծէսը փոփոխել և յարմարիլ լատինաց հետ, բայց չյաջողեցաւ. ինքը կարգադրեց Յայտաւուրքը և գրեց շարականներ: 1305ին Սիսի մէջ թագաւոր օծեց թորոսի որդին Լեոն Գ. թգը (Դ. իշխան): Յաջորդ տարին 1306ին (ըստ այլոց 1307ին) ի Տէր հանգեաւ 13 կամ 14 տարի պաշտօնավարելէ ետք:

Գրիգոր Ը. կթղ. Խանձողաս, Յակոբ Գ. կաթողիկոս Սսեցիի մահէն ետք երբ անոր յաջորդը ընտրողները չկրցան միաբանիլ՝ ոմն Գրիգոր վրդ. Խանձողաս կոչուած՝ Սսոյ կաթողիկոսական աթոռը բարձրացաւ 1411ին: Ոմանք դաւաճանել ուզեցին զինքը, զայդ զգալով Գրիգոր՝ իր թշնամիները հայածեց Կիրիկեցւոց այլազգի ամիրային ձեռամբ: Սսեցիք աննելով որ կաթողիկոսական աթոռոյն շուրջ անպակաս են ազմուկ և խռովութիւն՝ Գրիգոր Ը.ը զահնկէց ըրին 1416ին ու աքսորեցին բերդի մը մէջ ուր վախճանեցաւ 1420ին:

Գրիգոր Թ. կթղ. Մուսաբէկեանց, սա 1440ին կաթողիկոսական աթոռը կը բարձրանայ (ըստ Օրմանեանի 1439ին), և տարի մը ետք Արեւելեան եպիսկոպոսները Ս. Էջմիածնայ մէջ ժողով կը գումարեն, 1441ին կաթողիկոսական աթոռը հոն կը փոխադրեն և Կիրակոս Վիրապեցին Ընդհ. կաթողիկոս կ'ընտրեն: Գրիգոր Թ. կը մնայ Սսոյ մէջ իբրև կաթողիկոս, և ցայսօր կ'ուենենայ իր յաջորդները:

Ըստ Չամչեանի Գրիգոր ապրած է մինչեւ 1447, իսկ ըստ Օրմանեանի մինչեւ 1442 («Հիւ. Տարեցոյց» 1901 էջ 391): 1442ին Խարբերդի մէջ գրուած Յայտաւուրբի մը գրիչը կը յիշէ Կիրիկիոյ Գրիգոր եւ Վաղարշապատ Կիրակոս կաթողիկոսները:

Գրիգոր Ժ. կթղ. Մակուեցի Ջալալբէկեան, ազնուատոհմ եպիսկոպոս, որ 1441ին Մայր Աթոռոյ Էջմիածին փոխադրութեան մէջ գործօն մասնակցութիւն ունեցած է, իբր եպսկ. Արտազու Ս. Թաղէոսի աթոռի 1443ին ի կենդանութեան Կիրակոս կթ. Վիրապեցիի Ս. Էջմիածնայ կթ. կ'ընտրուի. սա 1457ին իրեն Աթոռակալ կամ Աթոռակից կ'օծէ Արիստակէսը. 1461ին Աղթամարայ Զաքարիա կթ. ը 2 տարի գրաւեց Էջմիածնի աթոռը: Գրիգոր 23 տարի կաթողիկոսութիւն ընելէ ետք 1466ին ի Տէր հանգեաւ: Իրեն յաջորդեց Արիստակէս Բ. աթոռակալ:

Գրիգոր ԺԱ. կթղ. Բիւզանդացի, 1537ին (ըստ Չամչեանի 1536ին) կթղ. ընտրուեցաւ, հաւանարար սա է եղբորորդի Զաքարիայի՝ որ 1526-1536 կ. Պոլսոյ պատրիարք եղաւ: Գրիգոր 5 տարի վարեց և հանգեաւ 1542ին:



ԳՐԻԳՈՐ ԺԲ. կթղ. Վաղարշապատցի, սա նախապէս 1552ին Աթոռակից եղաւ Ստեփաննոս Ե. Սալմաստցի կթղ. և 6 տարի ալ Միքայէլ Ա. և Աթոռակցութիւն ըրաւ. 1564—1570, և երբ Միքայէլ Ա. վախճանեցաւ ինք վարեց կաթողիկոսութիւնը, 1570էն սկսեալ իրեն Աթոռակից պահելով Ստեփանոս Զ. Առնջեցին որ 1575ին մեռաւ և նոր Աթոռակիցներ՝ Թաղէոս Բ. 1571ին, որ Լեհաստան գնաց 1576ին դարձաւ 1577ին եւ վախճանեցաւ 1579ին, Առաքել Վաղարշապատցի՝ 1575ին մեռած 1586ին, Դաւիթ Վաղարշապատցի 1579ին: Գրիգոր պաշտօնը վարեց 17 տարի, և 1587ին 90 տարու ի Տէր հանգեաւ, ըստ Օրմանեանի («Հիւ. Տար.» 1901 էջ 393):

Հ. Չամիչեան Գրիգոր ԺԲ. ի միայն 4 տարի կաթողիկոսութիւն ընել կու սայ 1569—1573):

ԳՐԻԳՈՐ ԺԳ. կթղ. նոյն է Սրապիոն Եղեւսիացի, սա 1603ին Մեղիքեօղեկի բացակայութեան կաթողիկոս կ'ընտրուի Ս. Էջմիածնի մէջ և 2 տարի ետք հրաժարելով Տիգրաւնակերտ կ'երթայ ուր 1606ին կը վախճանի: Տե՛ս Արապիոն վրդ. Եղեւսացի:

ԳՐԻԳՈՐ կթղ. Ստոյ 1721—6 Ուղուրլու կոչուած, Կեսարացի, նախապէս միաբան Կեսարիոյ Ս. Կարապետ վանքին: Կը յիշուի իր ժամանակի ձեռագրաց յիշատակարաններու մէջ: Տե՛ս ՅԱԻԵԼՈՒԱՅՐ:

ԳՐԻԳՈՐ կամ Գրիգորիս Աղթամարայ կաթողիկոսներ, մեծ և փոքր: Տե՛ս ՅԱԻԵԼՈՒԱՅՐ:

ԳՐԻԳՈՐ կաթողիկոս-պատրիարք ի Զմմառ եւ ի Պէյրութ: Տե՛ս ՅԱԻԵԼՈՒԱՅՐ:

ԳՐԻԳՈՐ Ա. պատրիարք Երուսաղէմի, Եղեւսացի, 670—697:

ԳՐԻԳՈՐ Բ. պարք. Երս. ի, 1358—1366: (Ըստ Հ. Չամչեանի 1347—65): Ասոր օրով, Ստեփանոս կրօնաւոր ՊԹ թուին (=1360) Ս. Յակոբի մէջ կ'ընդօրինակէ նախկինը և ձառեւ: Ս. Յակոբայ մատենադարանին մէջ Գրիգոր պարք. կը յիշատակուի հետեւեալ կերպով. «Ի հայրապետութեան Մեսրոպայ և ի պատրիարքութեան Երուսաղէմի Տէր Գրիգորի (Աղաւնունի՝ «Միաբան» էջ 81):

ԳՐԻԳՈՐ Դ. պարք. Երսղի, Եգիպտացի, 1385—1390 (Հ. Չամչեան չի ճանչնար). Աղաւնունի «Միաբան»-ին մէջ կը գրէ «Ս. Յակոբայ Մառե-նադարանի թ. 661 բոլորգիր Մաշտոցի մը յիշատակարանը՝ այս պատրիարքի մասին տեղեկութիւններ ունի». զանոնք սակայն չի հրատարակեր: ԳՐԻԳՈՐ Ե. պարք. Երսղի, Մարգարեան Գանձակեցի կամ Մոկացի (Չամչեանի համաձայն), որդին Մարգարի և Թուրվանտայի, ծնած Գանձակի Սպիտա-

կաչէն գիւղը, 1581ին ուխտաւորութեամբ կ'այցելէ Երուսաղէմայ Ս. Յակոբի վանքը, կը ձանապարհորդէ Արեմուտք և ապա կը դառնայ հայրենիք. կ'աշակերտի Պետրոս վրդ. Կարկանցեոյ ( յետոյ կթղ. Ստոյ 1602—9): Գրիգոր վերստին կու գայ Ս. Յակոբ և կը ձեռնադրուի արեղայ և կը կարգուի վերակացու 1610—11ին: Գրիգոր Պարոնտէրի վերակացութեան օրով, Ս. Յակոբի պարտուց հատուցման համար մեծ գումարներով կը մասնակցին Վանեցի, Զուլայեցի, Բաղէշցի, Ուռնայեցի, Հալէպցի եւ այլն խօժաներ (Սաւալան էջ 673), որոնցմէ շատերը անձամբ բերած են իրենց նպաստը: Պարոնտէր 1613ին եպս. կը ձեռնադրուի Աւետիս կաթողիկոսէն (Արոտակից կրդ. Տե՛ս «Հայ Հանր.» էջ 325) Ս. Յակոբի տաճարին մէջ: Լատինք պարանատեղւոյն նորոգութեան ժամանակ, լատինական վերտառութիւններ դնելով՝ կ'ուղէին տիրել տեղւոյն, Հայք օրինաւոր դատավարութեամբ, 1617ին կը տիրանան իրենց իրաւունքին: Գրիգոր պարք. կը նորոգէ Բեթղեմէմի Ս. Աստուածածին եկեղեցին (1621—2), ըստ հետեւեալ յիշատակարանի. որ զետեղուած է նոյն եկեղեցիին ձակատը. «Սս Գրիգոր եպս. որ եմ առաջնորդ սր. Երուսաղէմայ նորոգեցի ի սր. Ծնունդ զվիճակ ազգիս մերոյ Ռ. Թվին (=1621). յիշատակ հողւոյ իմոյ և ծնողացս, ի վայելումն և ի պարծանս Հայոց, որք տեսնէք լի սրտիւ ասացէք Աստուած ողորմեսցի. և Տէր ձեզ ողորմեսցի, ամէն»:

Կը նորոգէ Ս. Յակոբի վանքը, վճարելով նաև անոր պարտքը ծանր և մեծ աշխատանքով և կը ձեռնարկէ վանքին ոսկեղէն և արծաթեղէն աւանդները (1614—1630): Շինել կու տայ Ս. Յարութեան մօտ՝ Ս. Յովհաննու մատրան կամարները 1631ին. Վերնաառան եկեղեցիին (Բ. Գողգոթա) երկայնութիւնը ընդարձակած է երեք կամարներ առնելով լատիններէն, և փոխարէն անոնց տալով երգեհոնին կից խուցը 1632ին. 1634ի Մուղաթակին Գրիգոր պարք. աջակցութեամբ Արքունի հանդերձապետ Բաղիշեցի Աւետիքի, խաւովութեանց առաջարկը կ'առնու եւ խաղաղութեամբ կը կատարուի Զատիկը, Ս. Յարութեան տաճարին մէջ Մուղաթակի առթիւ գոյացած ծախսերն և Ս. Յակոբի մնացած պարտքը վճարելու համար կ'ուղեւորուի Տիգրանակերտ 1634ին, (Մուղանսեանցի «Թորոս, Աղբար Բ էջ 432) և ապա Բերիա: Նոյն թուականին վերադառնալով կը շինէ Ս. Փրկչի վանքին պարիսպները, զերծ մնալու համար տեղացիներու գիշերային յարձակումներէն. 1641ին, Պեթլաճա գիւղի



մօտ կը գնէ այդիններ և ձիթաստաններ, և կը կառուցանէ Վէլիճէ գիւղի աղբիւրը 1642ին: Գրիգոր պարք. կը վախճանի 1645ին, և մարմինը կ'ամփոփուի ի նշան երախտագիտութեան, Ս. Փրկչի վանքին մէջ. այս ժամանակէն սկսեալ, սովորութիւն կը դառնայ Ս. Յակոբի հանգուցեալ պատրիարքներու մարմինները ամփոփել Ս. Փրկչի մէջ: Իր մահէն յետոյ, Ս. Յակոբի և Ս. Տեղեբու մէջ Ս. պատարազի ատեն Գոհուրիւն եւ փառաբանութիւն քարոզին մէջ կը յիշատակուի իր անունը: Ըստ 1711—2ի ուղեւորի մը գրութեան՝ Գրիգոր պարք. Պարոնտէրի դամբարանը գմբէթաւոր էր:

Գրիգոր պարք.ի ժամանակակից գրիչ մը՝ Յովհանն Խիղանցի նոյն չպարքին կենսագրականէն յետոյ՝ կը յիշէ՝ օրուան միաբաններուն անունները ՌՁԷ (1638) թուական ձեռագիր Յայսմաւուրի մը (ՄՁ. թ. 1919) յիշատակարանին մէջ:

Գրիգոր Պարոնտէր պատրիարքի տապանադիրն է հետեւեալը.

Այս է պատրիարք Գրիգոր Պարոնտէր. Այր բազմավասակ բարեաց բարեսէր. Բազում շինութեանց աշխատքս անէր. Գեղեցիկ վարուց օրինակ լինէր. Մեծ անուն թողեալ առակերս կարգէր. Իւր բարի կրօնից բնիւր հոգեւոր. Ամբս սասնելչորս? հայրապետ հոսէր Բազում գեղեցիկ կանոն յօրինէր: 1645 ՌՂԳ.

Սոյն տապանաքարին մէջ Գրիգոր Պարոնտէրի պարք. իշխանութեան տեղողութիւնը տասնևչորս տարի նշանակուած է, ինչ որ ճիշտ չի թուիր. վասնզի յիշատակարանք երկար գործունէութիւն մը կ'ընծային Պարոնտէր պատրիարքի, բաց աստի Երուսաղէմի պատրիարքաց յաջորդութեան վերաբերեալ յիշատակարան մ'ալ (ՄՁ. թ. 997) կը գրէ «և կալաւ (Պարոնտէր) զաթոռ հայրապետութեանս ամս Խ. և չորս»: Պարոնտէր-պատրիարքին իշխանութեան թուականը, որ է 1613, այն ատեն երեսուն և երկու տարուան ժամանակամիջոց մը վարած կ'ըլլայ իր պատրիարքութիւնը. հետեւաբար սխալ է տապանադիրն նշանակուած «ամս տասնևչորս» խօսքը: (Աղաւնունի՝ «Միաբան» էջ 81):

Հ. Չամչեան, կ'երեւի վերի սապանագրին «ամս սասնելչորս» ի վրայ ճիմնուած՝ Գրիգոր Պարոնտէրի պատրիարքութեան բուականը կը դնէ 1631—1645 14 տարի: Եւ անկէ առաջ ալ Դաւիթ Բ. ի պատրիարքութեան տարին՝ 1609—1631:

Աղաւնունի սրբազանի վերը մէջ բերած յիշա-

տակարանի վկայութիւնը եւս նիւթ չէ: Գրիգոր Պարոնտէր 1611ին երբ վերակացու կը կարգուի (սե'ս վերը) ըսել է այդ բուականին արդէն պատրիարքական ասան իր ձեռքն է եւ երկու տարի ետք ալ եպիսկոպոս կը ձեռնադրուի. որով 44 տարի պատրիարքութիւնը քաճ կ'ըլլայ:

ԳՐԻԳՈՐ Զ. պարք. Երսղ. Շիրուանցի (Շամախի գաւառ) Շիրայակիր (Բաղիշեցի ալ կը կոչուի): Պրզի Աւետիտի և Ճօհարի (ՄՁ. թ. 1464), աշակերտ վարդան վրդ. Բաղիշեցիին. 1707ին վախճար վարդան վրդ. Ստեփաննոս վանքին (Մեսրոպ Արքեպ. Սմբատեանցի «Նկր. Սպիտակ» էջ 33): Վանահայր Տարոնի (1710—15). կ'ընտրուի պատրիարք 1715ին. կը հաստատուի պատրիարքութիւնը 1717ին, Ս. Յակոբի վանքին մեծաքանակ պարտուց վճարման համար երկամիջ չըլթայ կ'անցընէ պարանոցը և կը կոչուի Շիրայակիր: 1711ին Պոլսէն զրկած իր արդիւնքներովը կը նորոգուի Ս. Յարութեան տաճարը. 1720ին միեւնոյն ժամանակ կը նորոգուին նաև Հանգերսից բաժանման սեղանը, Իւրաբերից խորանը Ս. Գերեզ մանի զմբէքը: Յուպէի վանքին մօտ, երեք քսուրուկիր մաղաղաներուն, փռան և խահուէխանէին գետինները նախապէս կը վերաբերէին Ս. Յակոբի վանքին, Բամի փաշան նոյն գետինները իւրացուցած ևւ շէնքերը կառուցած էր, Գրիգոր պատրիարք անոր որդիներէն կը գնէ 1720ին նոյն շէնքերը և վազձ կ'ընէ Ս. Յակոբի եւ կոնդակով մը, ՌճԿԹ (=1720) թուին՝ այս պարագան Պոլսէն կը ծանուցանէ միաբանութեան: 1720ին կ'ուղեւորուի Երուսաղէմ, և իր ուղեւորութեան առթիւ կը նորոգէ Հայէպի Հոգեւորները, ըստ հետեւեալ յիշատակարանի (գետեղուած Հոգեւորան արեւելեան ճակատին վրայ) «ի թժին ՌճՂ (=1721) առաջնորդութեամբն Աստուծոյ, եւ Գրիգոր... վարդապետս, պատրիարք Ս. Երուսաղիմայ եկի ի քաղաքն Հայէպ, տեսի զՀոգեւորնս խաւարեալ և շինեալ ի Գրիգոր Պարոնտէրէ էր հնացեալ. Աստուծով նորոգեցի խցերօք և օղտներօք, վերստին պայծառացեալ զարգարեցի յիշատակ ինձ և ծնողաց իմոց, և Յովհաննէս վարդապետին. պատրիարքն Բիւզանդիոյ, և բազմաշխատ-գանձապետացն Երուսաղէմի և ազգս Հայոց և ամենայն ողորմութիւն տուողաց ևւ որք ընթեանուք ասացէք Աստուած ողորմի. ամէն» («Սիոն» 1868 էջ 230—3): Այս առթիւ կը նորոգէ նաև Դամասկոսի եկեղեցին: Ութը տարուան ընթացքին կը վճարէ հին պարտքերը և կը սկսի վանական բարենորոգութեան, ընկերակցութեամբ իր մտերիմ Յովհաննէս Կոլոտ պարք. ի Կարապետ կթղ. Զէյթունցի և Կոլոտ թախան-



ձագին կը խնդրեն որ Գրիգոր պատրիարք շղթան հանէ պարանոցէն 1728ին. պարտքը վճարելէն և շղթան հանելէն ետք կը նստի Առաքելական Ս. Աթոռը 1728ին: Շղթայակիր Պոլիս կը մեկնի Ս. Յակոբի խնդրոյն համար. 1736ին Շղթայակիր և կոյտ պատրիարքները և Յարութիւն ամիրայ Մուրատեան կ'աղատեն Ս. Յակոբի վանքը Յոյներուն ոտնձգութիւններէն. 1737ին թղթակցութիւն Շղթայակրի Փարիզի Արքեպ. Տը Յիլէօրի կարտինային հետ. 1739ին գրաւոր համաձայնութիւն Հայոց և Յունաց Ս. Տեղերու խնդրոց մասին. 1739ին Շղթայակիր ազգային սեփականութեանց համար նոր հրովարտակ հանել կուտայ, միջնորդութեամբ Գաղղիոյ դեսպան Վիլնէօլի, կը վերադառնայ Երուսաղէմ 1740ին. Լաթինաց կողմէն՝ Հայոց Իւղարերից սեղանին սեփականութեան ոտնձգութեանց դէմ բողոքի գրեր կը գրէ, 1742ին առ թագաւորն Գաղղիոյ Լուդովիկոս ՓԵ, առ ժողովն Կարտինայաց, առ Վիեննէօլ՝ դեսպանն Գաղղիոյ (Սաւայեան) (ժ.պե.), Գրիգոր պատրիարք կը վախճանի ՌձՂԸ (=1749 Փետր. Ժ.Բ.ին (ՄՁ թ. 677) և կը թաղուի Ս. Փրկչի վանքին մէջ, Պարոնտէր պարքի դամբարանին մօտ. իր անունն այ նմանապէս կը սկսի յիշատակուի Գոհուրիւն եւ փառաբանութիւն քարոզին մէջ: Ըստ գրաւոր յիշատակարանաց, Շղթայակրի դրամով Կիպրոսի Բիթրէայի մէջ կը գնուի 1744ին երեքուկէս արտավար հող. (Կիպրոս կղզի էջ 71): Շղթայակիր Պոլսոյ իր Ուղեւորութիւնը գրի առած էր՝ որ 1866ին Ն. րատարակուած է («Սիոն» էջ 122, 141, 184):

Շղթայակիր երեք անգամ կաթողիկոս ընտրուած է, ըսյց հրատարած է («Սիոն» 1866 էջ 142): Իր օրով, ՌձՆԴ (=1725) թուին, Պոլսէն եկող ուխտաւորներ ծովամոյն եղած են և այդ առթիւ երկաթագիր յիշատակարան մը գրած է:

Շղթայակիրի տապանագիրն է հետեւեալը.  
 Կամօք Փրկչին արքուն անունս անցկացեալ, Զպասութիւն վեսաց նորին ներանձնեալ, Զուր հարիւրակ քակ պարտուց վնարեալ, Սուրբ Յակոբայ սիւն ամբուրեան կառուցեալ: Վեհ առակետս մեծ վարժողին Վարդանայ, Հրեթակական վարուի նզնեալ անխնայ. Սրբեավար քաղաքալար յարակայ. Յօրէնս էին միտս ակն ի բաց աներկբայ. Ուրսուն ամօք միտս կուսութեան պարապեալ, Մարմնոյն հանգիստ խուն մի երբեք ոչ տուեալ, Յասպարիզի մարտին յաղթող ներգեալ. Գրեաց անուոյ զանեղմ պսակ պարաստեալ. Ննչէ մարմնով Գրիգորին որ արքուն,

Հոգևովն հսկէ առ միտս բարին որ աննուն. Որում եւ գործին պսակէ զիւրն անուն, Զի հաւատով եւ սուրբ գործովն եր սքուց. Յիշեալ լիցի միտս ի բարին Բարիբարոյ մեծ մեծ Մահեստին. Շինոյ շիւմին մերոյ վեհին. Որ Սեղբեսրոս երեւանին:

1749—ՌձՂԸ:

(Ալիւանունի՝ «Միաբանք էջ 83—7: Տե՛ս նաեւ Վ. Զարգարեանի «Յիշատակարանք» հր. Գ.):

ԳրիԳՈՐ Ա. պարք. Կ. Պոլսոյ (1526—37), եղբորորդի Զաքարիա Վաղարշապատացի կաթողիկոսին, յաջորդեց Մարտիրոս Ս.ի: 1534ին Գանուկի Սուլթան Սիւլէյման պատերազմի զնաց Պարսից դէմ և օսմանեան յաղթական բանակը կարգ մը ասիական քաղաքներու հետ տիրեց նաև Վան քաղաքին և շրջականներուն: («Ազգ. Հիւ. Տար». 1901 էջ 83):

ԳրիԳՈՐ Բ. պարք. Կ. Պոլսոյ (1601—1610, 1611—21—1636) Կեսարացի, առաջնորդ Կեսարիոյ, Գրիգոր փառաւոր կերպարանքով խիստ մարդ մըն էր: «Աւագ աշակերտ»ն էր Ուսուցիցի Սրապիոն եպիսկոպոսին. իմաստուն եկեղեցական մը՝ որ կաթողիկոս ալ եղաւ Գրիգոր ԺԳ. անուամբ: Գրիգոր որդին է Եաղուպի ծնած շուրջ 1570ին եւ կոչուած է Երկայնահասակ: Սիրած է կոչուիլ միշտ «վարդապետ»: Գրիգոր վրդ. Կեսարիոյ մէջ 1595ին ստացաւ Սրապիոն վրդէն վարդապետական դաւաղան: 1601ի սկիզբները Կիլիկիոյ Աղարիա կաթողիկոսին երուսաղէմի պարտքին համար Սմիթի մէջ գումարած ժողովին որոշումով՝ Գրիգոր Տիարպէքիւրէն ուղղակի Կ. Պոլիս գնաց ժողովարարութեան համար, և հոն համակրութիւն գանհիլով՝ տակաւին վարդապետ՝ պատրիարք ընտրուեցաւ 1601ին՝ Յովհաննէս Առաջին յաջորդելով: Կ. Պոլսեցիք կը գրեն «առ կարողիկոսն Ս. Էջմիածնի ձեռնադրել իւրեանց առաջնորդ»: Գրիգոր ըստ տեղեկութեան մը՝ ձէլայիներու ապրստամբութեան պատճառով չկարենալով ձամբան շարունակել զէպի Էջմիածին՝ Թօգատէն շեղած է Սիս: Կամ ըստ իր յայտարարութեան Կ. Պոլսէն Կեսարիա գացած է և անկէ ալ Սիս՝ իր Երուսաղէմի համար հաւաքած դրամը տալու համար. Կիլիկիոյ նորընծայ Յովհաննէս կաթողիկոսին եւ իրաւարարութիւն ընելու համար անոր և հակաթոռ Պետրոս կաթողիկոսին միջև, իբր Կ. Պոլսոյ պատրիարք: Այս առթիւ ի Սիս բնակութեան միջոցին (1602 Մայիս 29—Յունիս 28) կը ձեռնադրուի «Եպիսկոպոս և առաջնորդ Սամբոյու»: Սիսէն ուղղակի կ'երթայ Կ. Պոլիս իր աթոռը եւ



«անդ արար բազում ուզողութիւնս: 1605—71ի ատենները կ'երթայ Կեսարիա, ուր զինքը կը գրտնենք իբր «վերատեսուչ» կամ առաջնորդ: (Զեռագրաց յիշատակարանք 1607էն մինչև 1633՝ զինքը Կեսարիոյ իբր «վերատեսուչ» կը յիշատակեն): Սակայն քիչ յետոյ Պոլսոյ վէճիւններէն կը հրաւիրուի Կ. Պոլիս, ուր 1607ին կու գայ «մեծաւ ամբողջութեամբ... անեղագոյն և խորիստ կերպիւ որպէս զառիւծ» (Դարանաղջի Գրիգոր, 117) և աններող հակառակութեամբ մը կը հալածէ իր թշնամիները և մանաւանդ եկեօորնները, հաճելի ըլլալու համար աշխարհական վեփիւններուն որոնց հրաւէրով եկած էր:

Այս պատճառով գաղթականները իրենց հոգեւոր պետ նշանակել կու տան Գրիգոր վրդ. Դարանաղջին, որ երկու տարի (1607—9) այս պաշտօնը կը վարէ: Գրիգոր Կեսարացի հետզհետէ դորանալով ատելի կը դառնայ Տեղակալներուն, որոնք զինքը զրպարտութիւններու կը մատենն, սակայն ան կը յաջողողի շահիլ բոլոր եկեօորնները և զանոնք բողոքի մղել իր հալածիչներուն գէմ, ինքն առանց մասնակցելու, վասնզի թագաւորէն պէտք չունէր, և հաւանօրէն Տեղակալներու իբր գործակից կը պաշտօնավարէր:

Ժողովուրդին զիմուժը կառավարութեանէն նըպաստաւոր ընդունելութիւն կը գտնէ, սակայն քիչ յետոյ Կեսարացի կ'անցնի դարձեալ աշխարհակալ վեփիւններու կողմը և կը հալածէ եկեօոր քահանաները և անոնց պետք Գրիգոր Դարանաղջին: Վէճին վերջ տալու համար իրաւախոնութիւն մը կը գոյանայ և Դարանաղջին Ռոտոսթոյ զրկուելով պատրիարքական երկուութեան վերջ կը տրուի (1609), սակայն Կեսարացին ինքն ալ չի կրնար մնալ և կը վանուի աթոռէն և 1609ին իր աշակերտին Մովսէս վրդ. Տաթևացիի հետք գիպտոս, Սինա և Երուսաղէմ ուխտագնացութենէ մը յետոյ կ'երթայ Տիարպէթիւր, ուր հաւաքոյթ մը կատարելով Երուսաղէմի պարտքին համար կարգադրութիւն մը ընելու կը յաջողի: Այս միջոցին Կեսարիա գացած ըլլալը յայտնի չէ: 1611ին դարձեալ Կ. Պոլիս կը տանին և պատրիարք կը նստեցնեն երրորդ անգամ: Հոն կը շարունակէ իր բուռն գործունէութիւնը, ինչ որ պատճառ կ'ըլլայ որ հաղիւ 6—7 ամիս պաշտօն վարելէ յետոյ իյնայ պատրիարքութենէ և երթայ Կեսարիա իր թեմը, ուրկէ իրեն հետ առնելով իր ձեռնադրիչ Յովհաննէս Այնթապցի Կիլիկիոյ կաթողիկոսը (1602—1622) կու գայ ի Կ. Պոլիս 1613ի սկիզբները. սակայն Յովհաննէս Ռուլ պատրիարքը կը յաջողի պետութեան միջոցաւ կաթողիկոսը եւ

իր հետեորդները աքսորել տալ 25 Մայիս 1613ին: Գրիգոր Կեսարացի սակայն 1615ին դարձեալ չորրորդ անգամ կը յաջողի գրաւել Կ. Պոլսոյ աթոռը. ուրկէ 1617—8 վանուած դարձեալ Կեսարիա կը գտնուէր, երբ Սիմէոն զպիր լեհացի այցելեց այդ քաղաքը: Ան կ'ըսէ «գնացի մօտ Գրիգոր վարդապետն, առ որ կացեալ էի, զոր սիրեալ զիս յոյժ ուրախացաւ և սիրով զիս ընկալաւ»: Սիմէոն զպիր այս առթիւ կ'ըսէր թէ «վարդապետն ունէր մեծ էզի որպէս քաղաք, և անդ բազում անգամ զնացեալ մխիթարեցաք: Եւ ասն թէ նրա էզին տասներկու ազգ խաղող կայ» («Հանդես Ամս.» 1935, էջ 91—2): Գրիգոր Կեսարիա կը մնայ 1618էն մինչև 1625: 1625ին անկէ դարձեալ կու գայ Կ. Պոլիս հինգերորդ անգամ և կը յաջողի վանել Յովհաննէս Ռուլը և աքսորել տալ Պրուսա և ինքն ալ աթոռը գրաւել, սակայն Մելքիսեղեկ կաթողիկոսի և անոր համախոն եկեղեցականներու ղէմ իր ունեցած ատելութենէն զրդուած՝ կաթողիկոսին գործունէութեան արգելք ըլլալու համար և Երզնկացի Յովհաննէս «Պակթամուրի ձագ» մականուանեալ եպիսկոպոսը փոխանորդ ձգելով 1627ին կ'երթայ Լեհաստան, ուրկէ իբր լրտես Նիկոլ եպ. Թորոսովիչի մատնութեամբ սահմանէն դուրս կը հանուի: Կեսարացին Պուղտանայ երկիրէն (Ռումանիա) Նիկոլի ղէմ բանադրանք արձակելով կը դառնայ Կ. Պոլիս, խռովութեան մատնելով Լեհահայերը:

Մինչև իր դարձը սակայն Կ. Պոլսոյ պատրիարքութիւնը յափշտակուած էր Զաքարիա Վանեցիէն (1629): Կեսարացի ուղղակի կ'երթայ իր թեմը ուր կը գտնենք զինք 1629էն 1632: 1633ին կ'երթայ Սիս և կաթողիկոսի ընտրութեան կը նախագահէ. և Սիմէոն Սեբաստացիի օժոժէն յետոյ կ'երթայ Կ. Պոլիս նոր կաթողիկոսին հետ և կը յաջողի գրաւել դարձեալ պատրիարքութիւնը, ժողովուրդին յօժարութեամբը: Այս անգամ կը պաշտօնավարէ մինչև իր մահը՝ 1636:

Գրիգոր Կեսարացի իր ժամանակին զարգացած եկեղեցականներէն էր. զրաբարի հմուտ և բանաստեղծ: Վեր վկայեալ յամենեցունց և յոյժ հմուտ աստուածայնոց հին և նոր կտակայինաց նաև տեղեակ արտաքնոցն հանճարաց», «քաջ հոգեոր», «քաջ և անյաղթ փիլիսոփայ»:

Ունի Գանձեր և Տաղեր: Մասնաւորապէս ունի ողբեր իր ուսուցիչին՝ Սրապիոն կաթողիկոսի († 1606 Ապրիլ 24) մահուան առթիւ: Ան ունէր շնորհեալ աղօթք հոգեխառ, մաղթողականք ի Ս. պատարտգին, ի ղէմս ամենասուրբ երրորդութեանն և ի մի աստուածութեանն»: Ան գը-



րած է նաև Բարոզգիրք, Դասասանագիրք և Կանոնագիրք: Հմուտ էր նաև ժամանակին գիտութեանց և Առատուրյապին և երկրաչափականին յի և անթերի: Երկու գիրք յօրինած է Թվականի եւ պատմութիւնի յԱղամայ մինչև ի մեր ՌՁԵ (=1636) թուին, որոնց համար «աշխատեալ (էր) մինչև ի վախճան իւր»: Գրիգոր վրդ. Թարգմանած էր արարերէնէ, Ուսուրլապի գիրք մը: Շինած է նաև երկրագունդ մը հայերէն գիրով և լեզուով: Նոյնպէս կ'երևի թէ Գրիգոր վրդ. Կեսարացի կատարած էր սրբազրութիւններ: Կեսարացին շատ աշխատած է իր «մեծ վարպետ»ին Սրապիոնի կտակին համաձայն Առտուածաշունչի տպագրութիւնը կատարելու, սակայն չէ յաջողած (հմմտ. Հ. Ղազիկեանի «Նոր Մատենագրութիւն»ը Բ. էջ 224, «Յիսուս» որդի, 1643):

Գրիգոր Կեսարացի չափազանց խտտակրօն, Հայ եկեղեցւոյ աւանդութեան սաստիկ նախանձախնդիր եկեղեցական մը եղած է: Ունեցած է ճոխ մատենարան մը, որ կապկած է զանազաններու, սակայն զինքը Ղալաթիոյ եկեղեցին թաղելու համար Շահին Չէլէպիի ըրած ծախքերը, որպէսզի հատուցուին՝ թէ՛ այդ գիրքերը և թէ՛ այգին ծախել կը պարտաւորուի իր եղբոր որդին Տ. Յակոբ քհ. Կեսարացի:

Իր աշակերտներն են Մովսէս Տաթևացի նշանաւոր կաթողիկոսը և Սիւնեաց զպրոցին վերանորոգիչը, Յովհ. վրդ. Տարօնցի, Յակոբ եպս. Դէօթհանեացի եւ այլն: (Ալպոյանեան՝ «Հայ Կեսարիա» էջ 916):

Գրիգոր Կեսարացիի զրչի արտադրութիւններէն մէկ քանին Վիեննայի Միթրեանց միաբանութեան վանքին մէջ կը պահուին, (Տե՛ս «Մայր ցուցակ» Հ. Տաւեանի էջ 732):

Յակոբ քհ. Կեսարացի իր հօրեղբոր մահուան առթիւ կը գրէ... «վախճանեցաւ բապունապետս մեր ի սեփական վիճակ իւր Ստամպուլ, եւ ևս ունին սովորութիւն այլազգիք, որ ոչ թողուն թաղել զմեռեալս ի շինամէջս քաղաքին. այլ անչէն տեղիս և հեռի ի քաղաքաքէ, զոր Շահին Չէլէպին արքունական հրամանաւ թաղեաց ի Ղալաթիա ի Ս. Լուսաւորիչ եկեղեցին. և սակս թաղելոյ նմա զնշխարան և թէ այլ ինչ քարճ զոր արարեալ էր և էառ ի մէնջ ԳՌԻՆԷ (=3047) զուչ. և միանգամայն եղև խարճ ԴՌԷՃ (=4700) զուչ. և այս եղև պատճառ վաճառելոյ գրեանց եւ այգոյն. զոր բաղում վիշտս եւ չարչարանս կրեցաք ի բազմաց վասն վախճանի սրբոյս»: (Աղաւունցի՝ «Միաբան», էջ 89):

Պ. Ա. Ալպոյանեան քննարակ եւ վարկերկիս

ուսումնասիրութիւն մը րած եւ հրատարակած է «Սիոն» ամսագրին մէջ՝ Գրիգոր պրք. Կեսարացիի վրայ. որը առանձին հաստատվ ալ լոյս տեսաւ 1948ին:

ԳՐԻԳՈՐ Գ. պարք. Գ. Պոլսոյ (1764—1773) Պատմանեան, ծնած է Սամաթիա (Գ. Պոլիս) 1715ին. թոռն է Սամաթիոյ Ս. Գէորգ եկեղեցւոյ աւագերէց Մովսէս քհ. ի: Գրիգոր Շղթայակիր պարքի օրէն սկսեալ՝ նուիրուած է Ս. Յակոբի վանքի ծառայութեան (1737—1774), 1737 կամ 1738ին կը կարգուի հրաւիրակ և վերակացու Երուսաղէմի ուխտաւորաց նաւին. Թէոդորոս պարքի 1755 ապրիլ 23 թ. նամակէն կ'երևի թէ՛ Գրիգոր վրդ. Ս Յակոբի վանքին Արքուակալն էր, ուրկէ հրաժարած էր Ս. Էջմիածին երթալու եւ եպիսկոպոսանալու համար: Նուիրակ Թոքթաթի (1755—7), այդ միջոցին է որ Մարգուանցիք՝ իր նուիրակութեան առթիւ՝ շնորհակալութիւն կը յայտնեն Թէոդորոս պարք.ին Վերջնոյն կողմէն՝ Պոլսոյ փոխանորդ կը կարգուի 1757ին, և կը հաստատուի նոյն պաշտօնին մէջ 1762ին Կարապետ պատրիարքին կողմէն: Այս պաշտօնը վարեց մինչև պատրիարք ընտրուելը: Թէոդորոս պարք.ի մահէն ետք 1761ին Երուսաղէմայ պատրիարք կ'ընտրուի, բայց յանձն չ'առնեք, իսկ 1764ին, տակաւին վարդապետ՝ Պոլսոյ պատրիարք կ'ընտրուի, այդ ալ ի սկզբան չ'ընդունիր, բայց Յակոբ Նալեան պարք.ի և Մուրատեան ամիրաներու պնդումին վրայ ակամայ կը հաւանի եւ Սիմէոն կթղ. 1705ին կոնդակով կ'արտօնէ, որ Պատմանեան միայն իրր պարք. վարդապետ եպիսկոպոսական թաղ դնէ պատարագի առնու: 1772ին, Պատմանեան պաշտօնապէս կը հրաժարի, բայց չ'ընդունուիր իր հրաժարականը, վերջապէս կը պնդէ և կը հրաժարի 1773ին և կը քաշուի Սկիւտարի վանքը, ուր կը մնայ իրրեւ ամիսս տասն: Պատմանեան պատրիարքութենէ եւ իր հակառակորդներուն թշնամանքէն ու նեղութենէն ազատուելու համար կ'ուզէ Երուսաղէմ երթալ կամ Պոլսոյ մէջ տուն մը քաշուիլ. երբ այս ծրագիրը չի յաջողիր՝ մոտոսթոյի առաջնորդութիւնը կ'ուղէ. բայց այս ալ ոչ լուաջանալով վերջապէս Կիպրոսի Առաջնորդութիւնը կ'ուղէ և կ'երթայ հոն: Այս կը պաշտօնավարէ 10 ամիս միայն նեղուած իր գլխէն անցած դէպքերէն կ'որոշէ բեւմուտք անցնիլ. և ձմեռնային եղանակին մէջ ծովային երկար ճամբորդութենէ ետքը, կը հասնի Վնէժ (Վենետիկ), հինգ ամիս հոն կը մնայ և 1776ին այն տեղէն Հոռոմ կը հրաւիրուի, ուր կը մնայ ինչ ամիս և անկից ալ կ'անցնի ծովե-



գերեայ Անգոնա քաղաքը 1777 Ապրիլին և կը մնայ հոն 6 տարուայ չափ մինչև 1782: Անգոնայի մէջ կը նեղուի ի կողմանէ ժամուց եւ ժամերգութեանց լատիներէն չգիտնալուն համար, ուստի 1782ին Վենետիկ կ'երթայ և կը հիւրընկալուի Ս. Ղազարու միաբանութեան արքանայր Ստեփանոսէն և Սեղոսեան Յովհաննէսէն: 1784ին Անգոնայի մէջ կաթուածի մը կ'ենթարկուի և կը խնամուի փրօնականտայի հոգածութեամբ, այսպէս հիւանդկախ կ'ապրի մինչև շուրջ 1791 թուականը և կը վախճանի 75-6 տարեկան հասակին: Տապանադրին ընդօրինակութիւնը Անտոնեան հարց միաբանութեան մատենադարանին մէջ կը պահուի, ուր չէ նշանակուած ո՛չ ուր մեռած ըլլալը և ո՛չ մահուան թուականը:

Պատմական պարբ. կողմէ Ս. Յակոբի նուիրուած կը յիշատակուի աղամանդազարդ և տկանակուռ ոսկի սկիւ՛ մը հետեւեալ յիշատակարանով. Ողորմութեամբն Ասուծոյ կազմեցաւ սկիին ոսկիով և ակամբ արդեամբ ազգին խմոյ յիշատակ ինձ Գրիգոր պարբ. իս Կ. Պոսոյ և ամենայն ողորմութիւն տուողաց զոր եղի յիշատակ անջինջ յԱթոն սրբոյն Յակոբայ որ Երուսաղէմի թուին Հայոց ՌՄԻԲ (=1773) Յունվ. Ա.»: (Աղաւնունի՝ «Միաբանք» էջ 91):

Գրիգոր Գ. պարբ. Կ. Պոսոյ (1801—2), Խամսեցի, 1801 Հոկտ. 1ին Յովհաննէս Չամաչըրճեանէն ետք պարբ. կ'ընտրուի նորընտիր պատրիարքը թօզատի նուիրակ էր, ուստի պատրիարքական փոխանորդ կարգուեցաւ Երուսաղէմի վեֆիլ Յակոբ եպիսկոպոս: Գրիգոր Սամսեցի 1801 Դեկտեմբերին մէջ Պոլիս հասաւ և 19ին հազաւ պատրիարքական խիլան:

Գրիգոր պատրիարք իսկոյն կոնդակ գրեց ամէն կողմ Դաւթի տեղ Դանիէլ կթղ. ի անունը յիշատակել տալու համար եկեղեցիներուն մէջ: Դանիէլ կթ. կը բանադրուի 1802ին Էջմիածնի մէջ գումարուած ժողովին և Դաւթի կողմնակիցները կը յաջողին հարկադրել Գրիգոր Սամսեցին որ թողու պատրիարքութիւնը՝ վերջինս նորէն Յովհաննէս Չամաչըրճեանի կը յանձնէ աթոռը և քիչ ևտք Ելեան կը մեկնի անկէ ալ Թիֆլիս, ուր կը մեռնի:

Գրիգոր Ա. պապ, Հռոմայ, «Մեծն» կոչուած 590—604:

Գրիգոր Է. պապ, ծնած 1015ին պոսի կ'ընտրուի 1073ին, կը վախճանի 1085ին: Սա Գլխոյր Վկայաւեր կթղ. ին թուղթ գրեց և պատուեց գրեքը:

Գրիգոր Թ. պապ, 1127—1241, ևա թղթակցեալ և չեթ. թ. թ. ին և Կոստանդին կթ. ին հետ:

Գրիգոր Ժ. պապ, 1271—6, թուղթ գրեց մեր Մեծն Լեւոնի և Կլայեցի կաթողիկոսին:

Գրիգոր ԺԱ. պապ, 1370—78, Հայոց թաղաւորին համար թուղթ կը գրէ:

Գրիգոր ԺԳ. պապ, 1572—85. նորոգող տոմարի: Հայոց համար առանձին կոնդակ կը գրէ: Ուզեց 1585ին Հռոմի մէջ հայ կրօնականներ պատրաստելու համար վարժարան մը բանալ, սակայն մահը արգելք եղաւ:

Գրիգոր Արքեպ. Անուոյ, որուն տոհմին սեփականութիւն եղած է Լմբատ վանքը, որուն կը նուիրէ Թաղք գիւղը:

Գրիգոր Եպ. Անճեւացեաց, ներկայ կ'ըլլայ 645ին Դուբնի մէջ գումարուած ժողովին:

Գրիգոր Եպ. Աւուլեցեաց, ներկայ կ'ըլլայ 645ին Դուբնի մէջ գումարուած ժողովին:

Գրիգոր Եպ. Աշտարակեցի, որդի Հասան Բուղայի, գրիչ ի Բջնի 1478ին:

Գրիգոր Եպ. Ասանոյ, ներկայ կ'ըլլայ 1342ին Սիսի մէջ գումարուած ժողովին:

Գրիգոր արքեպ. 1353—75 Իտալիոյ Բիզա քաղաքը կը գտնուէր, ուր 1320ին Հայերը Ս. Անտոն եկեղեցին շինած էին և 1366ին Պետրոս Մեհրունի որդին հիմնած է Կարթուսեանց վանքը քաղաքէն 10 հազարամեր հեռու: (Ալիսան՝ «Սիսուան» 450—2):

Գրիգոր Եպ. առաջնորդ Բասենի, կը յիշուի 1602ին:

Գրիգոր Եպ. Բչնոյ 1246ին:

Գրիգոր Եպ. Գաղաւսացի, առաջնորդ Սերաստիոյ 1799—1807, կի նորոգէ Ս. Նշան վանքը և Ս. Աստուածածին եկեղեցին: Եպիսկոպոս կը ձեռնադրուի Էջմիածնի մէջ՝ Սիմէոն կթ. էն: Նուիրակ կը նշանակուի թէ՛ Էջմիածնի և թէ՛ Երուսաղէմի կողմէ 1807ին, Գաղատիոյ առաջնորդութիւն կ'ընէ մինչև մահը 1810: (Աղաւնունի՝ «Միաբանք»):

Գրիգոր Եպ. Դունայ 1205ին:

Գրիգոր Եպ. Երուսաղէմի, միաբան Ս. Յակոբայ. 1652ին այցելու քարոզիչ Եթովպիոյ եւ Հնդկաց: (Աղաւնունի՝ «Միաբանք»):

Գրիգոր Եպ. Զէյթունցի, առաջնորդ Հալէպի 1642ին: («Տարեւ» 1926 էջ 36):

Գրիգոր Եպ. Էօսեմեցի, միաբան Ս. Յակոբայ, կը վախճանի 1812ին: (Աղաւնունի՝ «Միաբանք 73»):

Գրիգոր Եպ. առաջնորդ Թիւրքթի վանքին, 1310ին Սիսի մէջ գումարուած ժողովին ներկայ կ'ըլլայ:

Գրիգոր Եպ. Լեհաստանի և Մոլտովայի առաջնորդ, Լէմպէրկի մէջ կը նստի 1365ին:



ԳՐԻԳՈՐ ԵՍ. Խոթայ (Արցախ) վանքին առաջնորդ, որդի Վախտանդ թգ.ի, ժ.Բ. դարու երկրորդ կիսուն, որուն մօտ կու գան եղբայրն Հասան և կինը Մամա Խաթուն և կը կրօնաւորին (1182ին):

ԳՐԻԳՈՐ ԵՍ. Խորխոռունեաց, ներկայ կ'ըլլայ 645ին Դուինի մէջ գումարուած ժողովին:

ԳՐԻԳՈՐ ԵՍ. Ծերուն կամ Պարոնէր ... 1629—1630... կը յիշուի շարականի մը յիշատակարանին մէջ գրուած 1629ին «ի գաւառն Կեսարիոյ Կապադովկիոյ, ի գեաւղն Տուճարղայ, ի հայրապետութեան այսմ նահանգին Կեսարու Գրիգոր վրդի (Գրիգոր Բ. պարք. Կ. Պոլսոյ) և յառաջնորդութեան այսմ գաւառի Գրիգոր Ծերուն Եպիսկոպոսի»: (Ալպոյանեան՝ «Հայ Կեսարիա» ցոյցը կը համարի Զէյթունի Ա. Ասուածածին վանքին Գրիգոր Ծերուն արեւայիսկոպոսին նե, որ կը յիշուի 1596ին):

ԳՐԻԳՈՐ (ԵՍ.) Կամրջաձոր վանքի առաջնորդ ժ.Գ դարու կիսուն, յաջորդ Խաչատուրի:

ԳՐԻԳՈՐ ԵՍ. Կարնոյ 1310ին կը սպաննուի բաժակին մէջ շուր խառնելուն համար:

ԳՐԻԳՈՐ ԵՍ. Կարնոյ Դիւնիք գիւղէն, կը յիշուի 1603ին:

ԳՐԻԳՈՐ ԵՍ. Կաֆայի առաջնորդ, այցելած է Ս. Յակոբայ վանքը Յակոբ կթ.ի օրով: Աղաւնունի սրբազան («Միաբանք» էջ 519) չէ կարող ճշտած թէ Յակոբ Ջուղայեցիի (1655—1680) թէ Յակոբ Շախեցիի (1759—1763) օրով ապրած է. զի յիշատակարանը անթուական է: Մեղի ծանօթ է 1655ին Գրիգոր առաջնորդ Ղրիմու:

ԳՐԻԳՈՐ ԵՍ. Կեսարիոյ Տ. Գրիգոր Բ. պատրիարքի Պոլսոյ:

ԳՐԻԳՈՐ ԵՍ. Կեսարիոյ 1681—5, կը յիշուի յիշատակարանի մը մէջ՝ «քաջ արհի եպիսկոպոս, աստուածաբան վարդապետ»: (Ալպոյանեան՝ «Հայ Կեսարիա» 920):

ԳՐԻԳՈՐ ԵՍ. Կիրակոսի որդի, Տգրիչ Մելիտինէի Մուշաղկան գգ.ին մէջ 1576ին: (Տե՛ս Գրիգոր Ես. Մելիտինէի):

ԳՐԻԳՈՐ ԵՍ. առաջնորդ Հաղբասի ժ.Գ. դարուն մէջ (Էփրիկեան՝ «Բնագոյարհիկ» Ա. 273):

ԳՐԻԳՈՐ ԵՍ. առաջնորդ Հաղբասի Տ. Գրիգոր Ես. Տուսեորդի:

ԳՐԻԳՈՐ ԵՍ. առաջ. Ճերմակ վանքի ի Բասն կը յիշուի 1570ի յիշատակագրէ մը:

ԳՐԻԳՈՐ ԵՍ. Մաշկեւոր վանքի առաջնորդ, ներկայ կ'ըլլայ 1342ին Սիսի մէջ գումարուած ժողովին:

ԳՐԻԳՈՐ ԵՍ. Մարաշոյ, 1307ին՝ Սիսի և 1316-

ին Ատանայի մէջ գումարուած ժողովներուն ներկայ կ'ըլլայ:

ԳՐԻԳՈՐ ԵՍ. Մարաշոյ (ա՛յլ) 1342ին Սիսի մէջ գումարուած ժողովին ներկայ:

ԳՐԻԳՈՐ ԵՍ. Մելիտինի, 1568ին կը յիշուի յիշատակագրէ. (տե՛ս Գրիգոր Ես. Կիրակոսի որդի): ԳՐԻԳՈՐ ԵՍ. Մեղրեցի, 1168ին Վայոց ձոր գու.ի Խարձայ գղ.ին մէջ կը վախճանի և մարմինը նորավանքի մէջ կ'ամփոփուի:

ԳՐԻԳՈՐ ԵՍ. Մշեցի, միաբան Ս. Յակոբայ վանքին, կը վախճանի 1812ին և կը թաղուի Ս. Փրկչի մէջ: (Աղաւնունի՝ «Միաբանք» 73):

ԳՐԻԳՈՐ ԵՍ. առաջ. Մուշողկու վանքին, կը յիշուի 1581ին. (տե՛ս Գրիգոր Ես. Մելիտանէի):

ԳՐԻԳՈՐ ԵՍ. Յանկիւնեաց վանքին (Աշոտայ երկրին մէջ) կը յիշուի 1474ի յիշատակագրէ մը. ևս 1477ին:

ԳՐԻԳՈՐ ԵՍ. Ուռնայու, 1720ին՝ Հոռմի Հայոց եկեղեցւոյ բակին մէջ աղբուր մը կը լինէ: («Բազմապէս» 1931, էջ 320):

ԳՐԻԳՈՐ ԵՍ. Ռշաունեաց, կը յիշուի 1374ին:

ԳՐԻԳՈՐ ԵՍ. Սամսոտիոյ, կը յիշուի 1179ին:

ԳՐԻԳՈՐ ԵՍ. Սեբաստիոյ, կը յիշուի 1204ին: Տ. Գրիգոր Ես. Գաղասացի:

ԳՐԻԳՈՐ ԵՍ. Սաթևու, կը յիշուի 1294ին:

ԳՐԻԳՈՐ ԵՍ. Վահանայինաց, 1307ին Սիսի մէջ գումարուած ժողովին ներկայ կ'ըլլայ:

ԳՐԻԳՈՐ ԵՍ. Վարագեցի կամ Վանցի, առաջ. Լեհաստանի 1552—1574: Երուսաղէմ ուխտի կ'երթայ 1567ին յետոյ Հոռմ: 22 տարի առաջնորդութիւն ընելէ ետք կը վախճանի Պոլսոյ մէջ 1574ին:

ԳՐԻԳՈՐ ԵՍ. Փիլիպուպոլսոյ, Գրիգոր Տղայ կթղ.ին կողմէ՝ 1184ին Հոռմ Լուսիսս պապին կ'երթայ:

ԳՐԻԳՈՐ Ասուածաբան, (Ա.) Նազիանդացի, Կապադովկիոյ Նազիանդայ կամ Դիոկեսարիա քաղաքը ծնած է հեթանոս հօրմէ և քրիստոնեայ մօրմէ. վախճանեցաւ շուրջ 389ին Հայ եկեղեցին կը տօնէ Յունուարին մէջ: Մեր նախնիք Ս. Հայրապետիս գրուած քներէն թարգմանած են բաւական գործեր: (տե՛ս Զարպիսեանի «Մատենադարան Հայկ. բարգմ.» էջ 340—358, տե՛ս Եւ «Նոր Մատենագիտութիւն», Հ. Ա. Ղազիկեանի էջ 460):

ԳՐԻԳՈՐ ԵՍ. Երէց Քեսունցի, ապրած է ժ.Բ. դարու կիսուն, սա Մատթէոս Ուռնեցւոյ գրած պատմութիւնը շարունակեց, 1137—1163ի դէպքերը գրի առնելով, որոնց մէջ կարեւոր տեղ մը կը բռնէ Պաղտին իշխանի մահը և այդ առթիւ իր խոստովանահօր Բալսեղ վրդի դամբանական



բաղըրը, որ ուղղուած է Քեսուէնի, Գերմանակի (Մարաշ) և այլն Հայերուն:

Գրիգոր երէց վախճանեցաւ շուրջ 1185ին:

ԳՐԻԳՈՐ Թաքալեկերի որդի, Գանձակեցի, ապրած ժ.Ա. դարու վերջերը և մեռած 1120ին, սա ա՛յնքան ընթերցասէր մէկն էր որ շատ անգամ կը մոռնար ճաշել: Երբ կը հարցնէին «չե՞ս ուտեր», ան իր գրքերը ցոյց կու տար: Կ'աւանդուի թէ ընթերցուածոց մեկնութիւն մը չարագրած է:

ԳՐԻԳՈՐ Կարեցի, 1682ին Պոստոյ մէջ կը նա-հատակուի:

ԳՐԻԳՈՐ Կեսարացի s. Գրիգոր Բ.պս. Կ. Պոլսոյ:

ԳՐԻԳՈՐ Կրօնաւոր. որդի Սարգսի, 1479ին Երուսաղէմի Ս. Փրկիչ վանքին մէջ Աղօթամատոյց մը կ'ընդօրինակէ: (Աղաւունցի՝ «Սիւրբանգ» էջ 520):

ԳՐԻԳՈՐ Հաղբակեան. իշխան Սաշենցի, որդի Հաղբակայ, 1223ին Պարսիկներէն կը նահատակուի:

ԳՐԻԳՈՐ Հայկազն (Ա.), ծաղլած է ժ. դարուն վերջերը Եւրոպիոյ մէջ: Իր ծնողաց անունը և աստիճանը մեզի անծանօթ են, բայց պէտք է հարուստ եղած ըլլան՝ որ կրցան զինքը երեւի վարժապետներու յանձնել: Պատանի հասակէն՝ կը փայլէր վրան դարմանալի խոնարհութիւն մը: Երբ ծնողքը մեռան, ի բոլոր ինչքը աղքատներուն բաժնեց, հեռացաւ հայրենիքէն ու Նէրկեսարիոյ մօտ գտնուող վանքերէն մէկուն մէջ առանձնացաւ. հոն դարմացուց մեծաւորներն և ընկերները իր գերադանց առաքինութիւններով և գիտութեամբ նիկոպոլսոյ (այժմ Շապին Գարահիսար) եպիսկոպոսը լսելով Գրիգորի համբաւը, իրեն կանչեց զինքը, իր խորհրդականն ըրաւ և քիչ ժամանակէն քահանայ ձեռնադրեց: Եպիսկոպոսին մահը լայն ասպարէզ բացաւ Գրիգորի առջև, որ որչափ կը ծածկէր իր առաքինութիւնները՝ այնչափ աւելի ժողովրդեան ուշադրութիւնը գրաւելով՝ եպիսկոպոս ընտրուեցաւ նիկոպոլիս քաղաքին Գրիգոր բարձր իշխանութիւնը առնելէն ետքը՝ մեծ գործեր սկսաւ, Մանիքեցի ազանդաւորները իր թեմէն դուրս հանեց, այրիները, որբերը և խեղճերը պաշտպանեց հարստահարող բռնաւորներուն դէմ: Բայց Գրիգոր քան ամէն պատիւ և բարիք գերադաս համարելով իր հոգւոյն փրկութիւնը, թողուց եպիսկոպոսական ծանր բեռը, և երկու յոյն կրօնաւորներու հետ հեռացաւ քաղաքէն անծանօթ աշխարհ մը երթալու համար:

Իտալիա և Գաղղիա շրջելէն ետքը՝ Յրէշանի վիճակին Բիլվիլիէ կամ Բիլսիլիլիէ քաղաքը հասաւ. և լսելով թէ մզոն մը հեռու Ս. Մարտինոսի մատուռ մը կայ, հոն գնաց, խրճիթ մը շինեց տեղ-

ւոյն Լուիզ իշխանուհւոյն հրամանով: Երեք տարի խիստ կրօնաւորի մը կեանք վարեց: Անոր կերակուրները քիչ մը գարիէ հաց էր, կամ եփած արմատներ և ջրոյ մէջ կակղցած ոսպ. շարաթուան մէջ երկու անգամ միայն կ'ուտէր: Գրիգորի համբաւը իրեն ձգեց խուռն բաղմութիւն մը, ոչ միայն մերձակայ քաղաքներէն, այլ նաև հեռաւոր վայրերէ, որոնք գունդագունդ ուխտի կ'երթային, իրենց հետ ժամերով պարէն և փոքրիկ բնձաներ:

Այս հրաշագործ սուրբը ժ.Ա. դարու սկիզբները Մարա 16ին ի Տէր հանգեաւ:

Հաւատացեալները՝ որ արդէն իրր մեծ սուրբ մը կը պատուէին Գրիգորը, անոր մարմինը Ս. Մարտինոս մատուռին աւագ խորանին առջև ամփոփեցին: Բայց Լուիզ իշխանուհին զայն մեծ թափորով իր քաղաքին Ս. Սողոմոն եկեղեցին փոխադրել տուաւ. և ինչպէս Օրլէանու եկեղեցւոյն վարժ սրբոցին մէջ նշանակուած է՝ մինչև հիմա նոյն եկեղեցւոյն մէջ կը հանգչի Հայկազն Գրիգորի մարմինը:

Ս. Գրիգորը, զոր Գաղղիացիք կը կոչեն Grégoire d'Arménie եւ իսպերէն S. Gregoria d'Armenia — ո՛չ Լուսաւորչըր — Լաշին եկեղեցիէն կը սօնուի Մարտ 16ին (մմմս Migne, հասոր ԻԱ. մս. Բ.)

Գրիգորի վարուց պատմութիւնը քաղեցինք Migneի բաղկիւրէն և Հ. Ալիւանի բոս բուականի ընդարձակ գրութեան, որուն աղբիւր եղած է անտուս Օրլէանի եկեղեցւոյն մէջ գտնուած վարք սրբոցը:

Գրիգորի համբաւը արիւնքեք ետ Հայաստան ալ հասաւ. անոր ազգականներ Եւրոպա գացին զինք տեսնելու յոյսով. բայց վախճանած գտան: (Հ. Մ. Պոսուրեան «Սրբազան Հայկազունց» էջ 85):

ԳՐԻԳՈՐ Մագիստրոս, Պանլաուուցի. որդի Վասակ Պահլաուուհի զօրավարին († 1021): Հորը մահուան ատեն պատանի էր զեռ և կը բնակէր Բջնի ամրոցին մէջ:

Գրիգոր 1042ին Գաղղի Բ.ը Հայաստանի վրայ կը թագաւորեցնէ, յետոյ քառթեամբ Վեստ Սարգիսի կը հալածուի Գաղղիէն. 1044ին Տարոն քաղաքը շինելով՝ ետեւ կ'ըլլայ հոն եկեղեցիներ և վանքեր շինելու, բայց հոն ալ կը հալածուի և կը ստիպուի Պոլիս անցնելու, ուր Մագիստրոս և Դուխ փառողներուն կ'արժանանայ: Երբ Յոյները Անին առին՝ Գրիգոր ստիպուեցաւ իր հայրենի ամրոցները — Բջնին, Կայեանը և Կայծոնը — Յունաց յանձնել և փոխարէն Միջագետքի մէջ ստացաւ քաղաքներ ու գիւղեր, ուր քաշուած կեանք անցընելով՝ մեռաւ 1058ին:



Գրիգոր Մազիստրոս մեր առաջին աշխարհական մասնագիրներէն կը համարուի (իրմէ առաջ սպարապետ) է պատմագիր Շապուհ Բագրատունի, սպարապետ)։ Մազիստրոս հետեող մ'եղած ըլլալով թէ՛ սրբազան և թէ՛ արտաքին ուսումններուն միանգամայն «Անձանձրոյթ ուսումնասիրութեան շնորհիւ՝ ծանօթացած էր արեւելեան լեզուներու և յունական գրականութեան։ Ինքն իսկ պարծանքով կը յիշէ, թէ դադրած չէ երբեք կարդալէ և թէ թարգմանելէ՝ որով մէկ կողմէն հետամուտ եղած էր հաւաքելու հայերէն բոլոր այն ձեռագիրները՝ որոնք կրնային գիտական և փիլիսոփայական արժէք մ'ունենայ, միւս կողմէն թարգմանելով նաև Պղատոնի մէկ քանի գործերը՝ (Օրէնք, Չասագովութիւն Սոկրատի, Երթիփան, Տիմոն, Փեդոն)։ Յայտնի չէ թէ որո՞ւ աշակերտեցաւ Մազիստրոս, բայց ստոյգ է որ ժամանակին եկեղեցականներէն շատեր աշակերտեցան իրեն (ԲՆՆՅՅ եպ. Եփրեմ, Աերաստիոյ եպ. Եղիսէ եւ այլն) քերականական կամ քերթողական արուեստը ուսանելու համար...

Սուրբ տեղ գրիչ շարժելու հակումը զօրաւոր էր Մազիստրոսի մէջ։ Մեծ մտադրութիւն կը նուիրէր զբաւոր յարաբերութիւններ մշակելու հայ և օտար նշանաւոր անձերու հետ, և ատոր արդիւնքն են 80է աւելի իր ընդարձակ և համառօտ թուղթերը, որոնք ո՛չ միայն ժամանակին քաղաքական, կրօնական և այլ հարցերուն, այլ և իր իսկ բարոյական նկարագրին վրայ կրնան լոյս արձակել։ Այդ թուղթերը Մազիստրոսի գլուխ գործոցները կը համարուին, զժբախտաբար սակայն՝ միօրինակ և մ.թ.ուր ոճով մը չեն խմբագրուած անոնցմէ շատերը, մանաւանդ երբ փիլիսոփայական կամ գիտական ծանօթութիւններով կամ զիցարանական ակնարկութիւններով կը խօսի։ Վասն զի արուեստականօրէն խրթնացած լեզու և բոլորովին անսովոր բառեր կը կիրարկէ։ Խրթնաբանութեան այլանդակ նմոյշներ կրնան նկատուիլ իր բերուածներն ալ, որոնցմէ միայն «Մեծ են գործք աստուածային» սկզբնաւորութեամբ հաղարատողեան տաղասացութիւնը (առ Մանուչէ Հագարացի գրած) բաւական պարզ ոճով մը յօրինուած է։

«Մազիստրոս իրը քերթող՝ հայերէն ոտանաւորի մէջ նախընծայ փորձեր բրած է որոշ չափ և յանգ ներմուծելու, առաջինը Հովհաննէս հագներգութենէ, և երկրորդը Արաքական քերթութենէ փոխադրելով։ Հեղինակ է նաև հայերէն Քերականութեան մը. որ Սիւնեաց զպրոցին կողմէ պատրաստուածին ճոխացած մէկ հրատարա-

կութիւնն էր, և որուն վրայէն կ'աւանդէր իր աշակերտներուն հայերէն շարագրութեան զժուարակնճիտ արուեստը (Դուրեան՝ Եղիսէ պրք. «Պատմ. Հայ Մասնագրութեան» էջ 182)։

Գրիգոր Մազիստրոս որ հալածիչն եղաւ Թոնգրակեցւոց ազանդին՝ ասոնց ձէտին, արարողութեանց, հաւատարեաց դէմ ընդարձակ թուղթ մը գրած է առ կաթողիկոսն Ասորոց։ Մազիստրոսի տաղերը հրատարակած են 3 անգամ, նախ Կ. Պոլիս՝ 1748ին սա ճակատով. «Տաղասացութիւն Գրիգորի Մազիստրոսի նումարիս եւ ուղղափառ ՎԱՄԻՒՍՏԻ», (!) Բ. տպ. սրբագրուած ճակատով «Տաղասացութիւն ներհուն առն Գրիգորի ուղղափառ ԻՇՆԱՆԻ... տպ. Կ. Պոլիս՝ 1825ին, Գ. տպ. Ի Վեներտիկ Ս. Ղազար՝ 1868ին։

Մազիստրոսի այլեւայլ բոլորոց նրատարակութեանց մասին տե՛ս Հ. Ղազարիկեանի «Նոր Մասնագիտութիւն» էջ 470—1։

ԳՐԻԳՈՐ Մամիկոնեան, եղբորորդի Մեծն Վահանայ, 486ին կապոյտ լերան ամրոցին մէջ նրատելով՝ կ'իշխէ մերձակայ գաւառներուն վրայ։

ԳՐԻԳՈՐ Մամիկոնեան, իշխան, հակառակորդ Աշոտ պատրիկի (744), Գրիգոր և Դաւիթ Մամիկոնեան իշխանք 759ին կը հանեն Աշոտի աջքերը։

ԳՐԻԳՈՐ Մամիկոնեան, պատրիկ, 653ին Հաղարացւոց քով պատանդ կը մնայ։ 659ին իր Համազասպ եղբոր կը յաջորդէ պատրիկ անուանուելով։ 683ին Սաղարաց դէմ մղած պատերազմին մէջ կ'իյնայ։

ԳՐԻԳՈՐ Մամիկոնեան՝ վերջին, Բուղայի օրով 850ին կը բանտարկուի և 855ին փախչելով՝ կը մեռնի Գազանաձակք ըսուած այրին մէջ՝ իրրեւ խոստովանող։ ( Հ. Մ. Պոսուրեան՝ «Մրբազան Հայկազունք» էջ 49)։

ԳՐԻԳՈՐ Մանուկիւն Թափիկ սա քրիստոնէութիւնը ընդունելով՝ կոչուեցաւ Գրիգոր և 550ին Դենշապուհէն նահատակուեցաւ Դուրինի մէջ։

Նահասակիս վրայ ուսումնասիրութիւն մ'ունի Ս. Էջմիածնի միաբան Գ. Տէր Մկրտիչեան։

ԳՐԻԳՈՐ Մոկացի, նախարար, ձեռնտու Գազկայ բռնաւորի՝ ընդդէմ Յուսուփի (912—921)։

ԳՐԻԳՈՐ Նարեկացի, մեր ամէնէն նշանաւոր գրագէտ-մատենագիրներէն մին, ծնած շուրջ 951ին, որդի Անձեւացեաց Թոսրով կալիսկոպոսի, կ'ուսանի Նարեկ վանքին մէջ՝ աշակերտելով Անանիա պապնորդ-վարդապետին։ Հրաշագործ ճրգնասուն կեանքով մը կ'ապրի ու կը վախճանի իրր 60 տարու և կը թաղուի Նարեկ վանքին մէջ։

Նարեկացիի երիտասարդ հասակին նախընծայ երկն է Երգ Երգոցի Մեկնութիւնը, զոր Անձեւաց-



եաց թագաւոր՝ Գաղիկ Արծրունիի խնդրանքովը գրեց. պարզ ոճով մը, ինչպէս կը պահանջէր գործին հանգամանքը:

«Սակայն Նարեկացիին հետեակ մնալու սահմանուած չէր, ուստի նախընտրեց յօրինել Եւրբողներ, ինչ որ գրականութեան բարձրագոյն մէկ սեռը կը նկատուէր ժամանակին: Այդ Եւրբողները նուիրուած են Ս. Ասուածածնի, Առաքելոց, Ս. Յակոբայ (Մծրնայ հայրապետ), ինչպէս նաև Ապարանից խաչին, որուն կցած է պատմական մաս մըն ալ միևնոյն ոճով շարագրուած: Ունի նաև նշանաւոր Թուրք մը, գրուած առ վանահայրն Կճաւի վանքին, որ Թոնդրակեցի հայ ազանդաւորներէն խարուելու միամտութիւնը ունեցած էր:

«Նարեկացիի բանահիւսական հանճարին վայելուչ զարդերը կը կազմեն իր Գանձերը, և մանաւանդ Տաղերը, որոնք եկեղեցական տօներու մեղեդիներ են, ժողովրդական լեզուի կամ արուեստի ազդեցութեան տակ գրի առնուած: Ընդունուած է սակայն որ Նարեկացիի գլուխ գործոցն է իր Աղօթագիրքը: Տեսակին մէջ անհաւասար գրուած մը, զոր ՆԾԱ (=1002) թուականին աւարտած է հեղինակը, իրեն աշխատակից ունենալով իր հարազատ Յովհաննէս եղբայրը: 95 կտորներէ բաղկացած այդ աղօթքները կամ ապաշխարողի ողբերը թարգման կը հանդիսանան ինկած ու անմաքուր հոգիներու կսկիծին ու ճիշերուն, միևնոյն ատեն լսելի ընելով նաև վերելքի մը թափն ու թռիչք դէպի յաւիտենական բարձրութիւնն ու սրբութիւնը: Իր մտածումները, որոնք խորհրդաւոր խրթնութեամբ մը կը ծածկուին շատ անգամ, զուրկ չեն սակայն փայլակի այն շողիւններէն որ ցաւերու աշխարհի մը մութ խորութիւնները կը լուսաւորեն մերթ ընդ մերթ: Իր ոճը պահանջուած յստակութիւնը չունի՝ բառական բարդութիւններու և քերականական անճշտութիւններու հետեանքով. այսու ամենայնիւ, իր ծանր պարբերութիւններուն զանգուածային այս կազմը, որ իմաստ մը փոխադրելու անյարմար պիտի ըլլար ինքնին, զօրեղ շունչի մը շարժմամբ կը թաւալի, իր մէջ լուծելով նաև քերականական այն անհարթութիւնները, որոնց յաճախ կը հանդիպինք իր գրչին տակ, ու այդ պղտոր հոսանքին մէջէն դժուար չէ ընդունումարեւ սակայն խորտակուած կիրքերու յուսահատ մաքառումը: Եթէ զղջացող մեղաւորի մը անյան անկեղծ խօսքերուն, և ջերմ հաւատալիքներուն քիչ խառնուէին գրական արուեստի ճիգեր ու շափաքերական տողերու շարքեր — այս

վերջիններուն շատ մտադիր է Նարեկացի — թերևս ամբողջ գործը աւելի պարզ և հասկնալի ըլլալու առաւելութիւնը պիտի ունենար, սակայն և այնպէս իր բանաստեղծական խանդը Ասուածոյ հետ խօսելու լեզուին կրցած է տալ նորագոյն ճաշակ մը, առանց զերծ մնալու ժամանակին զարտուղի բերումներէն» (Եղիշե Գուրեան պրֆ. «Պատմ. «Հայ Մատենագրութեան» էջ 171-3):

«Գրիգոր Նարեկացւոյ վանից վանականի մատենագրութիւնք»-ը յոյս սեսած է Վեներսիկ 1827ին (487 էջ), որուն մէջ կը բովանդակուին գրեթէ բոլոր գործերը: Բ. սպագրութիւնը հոն տեղի ունեցած է 1840ին (535 էջ) որուն մէջ աւելցուած են «Բան խրատոյ վասն հաւատոյ եւ մաքուր վարուց առաքինութեան՝ ի խնդրոյ նորին հարագասի վարդանայ դիւանագալիք» (Գուրեան Եղիշե պատրիարք կը գրէ թէ Գրիգոր Նարեկացի *Վարդան* անունով եղբայր ունեցած չէ եւ այս *Պատմ. Դաւանութիւնը* Նարեկացւոյ չ'ընծայեր. ինչպէս եւ Մխիթարեանք զայն աւելի Գրիգոր Ակիւռացւոց գործը կը համարեն):

Գրիգոր Նարեկացւոց *Աղօթագիրքը* առաջին անգամ սպուած է Մարտիլիա՝ 1673ին, Բ. սպ ը 1700ին՝ ի Կ. Պոլիս, միասին սպուած են «Սրբոյ հօրն մերոյ Գրիգորի ասացեալ ճառս: Յիշատակագրութիւն պատմաբանութեան Ամենագոր նշանի Ասուածեան խաչին. Որ ի վերուս ամենահայեաց նախասեան ակնարկութենէ Ստորին կողմանց կայից աշխարհի. Ազգացն յունաց. Բերեալ հանգուցաւ ի սահմանս վայրից գաւառին Մակագ՝ Ի շինուած բնակութեան Ուխտին Սրբութեան Որ կոչի Ապարանք»: Կը յաջորդեն «Գուրմարք խմբից» սկրք բնաւորութեամբ Տիրամօր նուիրուած Եւրբողը. յետոյ *Երկոտասան առաքելոց ու Յակոբ Մծրնայ* հայրապետին Եւրբողները: Ճիշտ (127) էջէն՝ Նարեկացւոյ քանի մը գանձերը:

Նարեկացւոյ Աղօթագրքին Գ. նաք ըղած է ի Կ. Պոլիս 1726ին. Գ.ն 1755ին. Ե.ն 1763ին. Զ.ն 1774ին. Է.ն 1782ին. Թ.ն 1790ին ի Կ. Պոլիս, Ժ.ն 1795ին ի Վեներսիկ. ԺԱ.ն 1802ին, ԺԲ.ն 1807ին ի Կ. Պոլիս, ԺԳ.ն ի Վեներսիկ 1807ին:

Նարեկացւոյ *Գիրք Աղօթիցը* ունեցած է շատ մը սպագրութիւններ, ընդհանրապէս Թուրքիոյ մէջ (տես Ն. Ղազիկեանի «Նոր Մատենագիտութիւն» էջ 493—5): 1902ին Մխաթ Ա. Մ. Գօշուկեան (Քասիմ) եւ յետոյ ուրիշներ աշխարհաբարի բարգմանեցին Նարեկացւոյ Աղօթագիրքը:

Նարեկացւոյ *Մեկնութիւն Երգոց Երգոյնը* սպուած է ի Ս. Ղազար (Վեներսիկ) 1789ին, իսկ 1856ին՝ Երուսաղեմայ Ա. Յակոբայ վանին մէջ



հրահարակուեցաւ ճառք և խոստովանութիւնք հաւատոյն (Գրիգոր Նարեկացոյ գործ համարում, իսկ իրականին Գ. Ալիլուացոյ) սպագրում եւ

Հ. Արամաս Տիրոյեան 1904ին Գրիգոր Նարեկացոյ Ս. Ասուածածնի «Գումարք խմբից» սկզբնաւորութեամբ ներքողը իսպիւրենի բարգմանեց եւ հայերէն բնագրին նեւ լոյս բնծայեց Ս. Ղազարու սպարանէն:

Նարեկացոյ վրայ գրումներ եւ ուսումնասիրութիւններ՝ տես Ղ. Ղալիկեանի «Նոր Մասեմագիսուրիւն» էջ 500:

ԳՐԻԳՈՐ ՆԻՒՍԱՅԻ, (Ս.), եղբայր Մենն Բարսեղի Կեսարացոյ, Նէոկեսարիոյ կամ Նիւսայի աշխարհիկ կրէցներէն մին, այդ պատճառաւ Նիւսացի կոչուած, յետոյ նոյն քաղաքին եպիսկոպոս ընտրուած, որ արիոսեան վաղէս կայսրէն աքսորուեցաւ առնն մը: Յօրինած է շատ մը ճառեր, մեկնութիւններ և հոգեշահ ու իմաստասիրական գրքեր, վախճանեցաւ 396ին: Հայ եկեղեցին կը տօնէ Ս. Բարսեղի հետ Յունուարին, երբեմն Դեկտեմբերին: Մեր նախնիք Նիւսացոյ ճառերէն թարգմանած են (Տես Ղ. Գ. Զարպանալեանի «Մատենադարան հայկ. թարգմանութեանց նախնեաց»), «Յինն երանութիւն» (ճառք չորեքտասան), «Մեկնութիւն ժողովին» (ուր ճառք), «Յորդորումն մանկանց ի կուսութիւն», «Թուղթք յաղագս երգոյ երգոց», «Խօսք յաղագս Երգոյ Երգոց» (խօսք չորեք տասան), «Յաղագս բնութեան մարդոյ», «Տեսութիւն յաղագս մարդոյս կազմութեան», «Ի յիշատակ հանգուցելոց ի Գրիստոս» «Ի թաղումն Տեառն և ի Յովսէփ Արիմաթացի», «Ի Ս. վկայն թէպորոս», «Ի վարս և ի սքանչելիս սրբոյն Գրիգորի Աքանչկազործին», «Ի մանկուսն Բեթղեմէմի», «Ի Ս. Սաեփանոս Նախավկայ», «Ի սուրբ հայրն Եփրեմ», «Ամենայն չար տանջելի»:

Գր. Նիւսացոյ «Ի թաղումն Տեառն և ի Յովսէփ Արիմաթացի» ճառը տպուած է 1712ին ի Կ. Պոլիս ճառք եւ գիրք հոգեւորի մէջ:

ԳՐԻԳՈՐ ՊԱՆԿԱՆՈՒՆԻ Տ. Գրիգորիոս Պանկաուելի, ԳՐԻԳՈՐ ՊԱՅԼԻ ԻԿԻԱՆ Կոստիկոսի 1277ին:

ԳՐԻԳՈՐ ՄԱՐԿԱՒԱԳ, իններորդ դարուն ապրած, Ատովմայ վկայի վանքին առաջնորդ Գագիկ վրդի աշակերտ, սա իր ուսուցչին հետ սրբոց վկայաբանութիւնները հաւաքած և Յայսմաւուրքի հիմը գրած է:

ԳՐԻԳՈՐ ՍԻՒՆԻ, Սուփան՝ որդի Սահակայ, 825ին իր հօրը կը յաջորդէ: Կը սպաննուի 849ին Բարկէն Սիւնիէն:

ԳՐԻԳՈՐ ՍԻՒՆԻ, որդի Գաբաուու Վասակայ, թոռն վերնոյն, 887ին իր հօրը կը յաջորդէ, օգ-

նական ունենալով իր երեք եղբայրները Աշոտ, Սահակ եւ Վասիր, 909ին երբ Յունուսի ոստիկանի բանակը Սիւնեաց երկրին վրայ կը յարձակի՝ նախապէս կը ջարդուի, սակայն երբ Յունուսի նոր ուժերով կը յարձակի և Սիւնեաց աշխարհի ամուր քաղաքներէն դուրս գանուող բընակչութիւնը կը կոտորէ: Գրիգոր անձնատուր ըլլալով կը իստատանայ բնակարան հարկ տար Սակայն յաջորդ տարին Յունուսի դայն զապանապէս թունաւորելով կը սպաննէ և անոր կառուցած Ս. Սիմէոն եկեղեցւոյն մէջ թաղել կու տայ:

ԳՐԻԳՈՐ ԱԿԵՒՈՒՄԻ ԿԱՄ ԼԱՄԲՐՈՒՄԻ, ապրած է ԺԳ. դարու սկիզբները, մին եղած է Սկիււայ վանքի միաբաններէն և թերևս աշակերտած ներսէս Լամբրոնացոյ, Լեւոն թղի մտերմութեան ալ արժանանալով՝ անոր խոստովանահայր կը կարգուի:

Գրիգոր Սկիււացի գրած է քանի մը ճառեր ի խորհուրդ Մեծն Ուրբարուց, ի Յարութիւն Տեառն, ի Կանայս Իւղաբերս, և այլն և ներքող մը ներսէս Լամբրոնացիի վրայ (1205ին), զոր կը զբուռատէ մեծ հիացումով: Գրիգորի գրուածներուն մէջ կարեւոր տեղ մը գրաւէ սակայն իր Աղօթագիրքը, որ գրեթէ միայն շարադրութիւն մըն է՝ երեք մասերէ բաղկացած (Ա. Աղօթք առ Ս. Երրորդութիւն, Բ. Աղօթք ի վերայ ուր մեղաց, Գ. Աղօթք ի ժամու Ս. Պատարագին):

Հեղինակը Նարեկեան ոճի նմանողութեան կը ձգտի մերթ ընդ մերթ, և երբեմն ալ արծակը թողլով՝ չափական տաղեր կը հիւսէ, ինչպէս կ'ընէր նաև Լամբրոնացին իր ճառերուն մէջ:

Գրիգոր Սկիււացի բանաստեղծական ձիրք ալ ունի, ինչպէս կ'երևի իր «Արեգականն արդարութեան» սեղանաւորութեամբ շարականէն, զոր երգած է այրուրենական կարգով ի պատիւ Թննդեան Յովհաննու Մկրտչի:

Ըստ Անաւարդեցի կաթողիկոսին († 1307) սոյն Սկիււացիին կ'ընծայուի թ. դարուն մէջ Նիկիոյ Վահան կամ Յովնան անուն հայ-հուսամ եպիսկոպոսին կողմէ առ Զաքարիա կաթողիկոս դրուած դաւանութեան թուղթին հայ թարգմանութիւնը. բայց ուղղակի յունարէն թարգմանութիւն մը չէր կրնար ըլլալ ան, այլ հաւանաբար թուղթին հայերէն աղքատ ոճը միայն սրբագրած պիտի ըլլայ Գր. Սկիււացին, ինչպէս նման աշխատութիւններ (թարգմանութիւններ) ըրած է ներսէս Ենորհային (Դուրեան Եղիսէ պսք.՝ «Պատմութիւն Հայ Մասեմագրութեան», էջ 233):

Գրիգոր Սկիււացոյ զործը պիտի ըլլայ Գրիգոր Նարեկացոյ ընծայուած Խրատ Դաւանութ-



եան: որ գրուած է Վարդան դիւանադպիր հարազատին խնդրանօք: (Տե՛ս Գրիգոր Նարեկացի):

Գրիգոր Սկեւոպոյ Գիրք Ազօթիցը ի Կ. Պոլիս սպուած է 1742ին: Ներքողեան ի Սուրբն Ներսէս Լամբրոնացին սպուած է ի Ս. Ղազար «Սովիեբ Հայկական» ի ժե. հասարին մէջ:

ԳՐԻԳՈՐ ՍԲԱՆՅԵՂԱԳՈՐԾ (Ս.) Գամբաց կամ Պոնտոսի Նէոկեսարիա քաղաքը ծնած էր հեթանոս ծնողքէ, ժամանակ մը աշակերտելով Որոպինէսի. յետոյ Կեսարիոյ արքեպիսկոպոսին ի մանկութենէ քրիստոնեայ եղած էր: Ամասիոյ եպիսկոպոսէն Նէոկեսարիոյ եպիսկոպոս ձեռնադրուեցաւ ե շատ հրաշքներ գործելուն համար Սբանչեղագործ կոչուեցաւ ու խոր ձերութեան մէջ՝ 268ին կամ 270ին ի Տէր փոխեցաւ: Սրբոյս վարքը գրած է Գրիգոր Նիւսացին: Հայ եկեղեցին Նոյեմբերին մէջ կը տօնէ:

Գրիգոր Սքանչեղագործ գրած է ճառեր եւ ներքողեաններ, որոնցմէ մեր նախնիք թարգմանած են հետեւեալները. «Ի ծնունդն Գրիստոսի» (երկու ճառք), «Յաւեաթիս Աստուածածնի», «Գովհատ ի սուրբ կոյսն Մարիամ» (երեք ճառք), «Յողջօյն Մարիամու առ Եղիսարիթ», «Ներքողեան ի սուրբն Ստեփանոս», Երկոտասան գլուխք նզովից», «Հարուածք»: (Տե՛ս «Մատենագարան քարգմանութեան» Հ.Գ.Զարգիսանայեանի, էջ 374):

1895ին Ս. Էջմիածնայ «Արարատ» ամսագրին մէջ (թ. 4. Յաւելուած) հրատարակուեցաւ նորագիւտ մէջ գործը. «Երանելոյն Գրիգորի Սքանչեղագործի ի յարութիւն Տեառն մերոյ Յիսուսի Գրիստոսի»: «Արարատ» ի նոյն տարւոյ մէջ, էջ 366 լոյս տեսաւ «Նորին (Գրիգորի) ի Սուրբ Աստուածածին և միշտ կոյսն» ճառը:

ԳՐԻԳՈՐ ՏԱՐԵԼԱԳԻ, վրդ. մատենադիր, աշակերտ Յովհաննէս Կախիկ Որոտնեցոյ: Գրիգոր ծնաւ ԺԴ. դարու կիսուն 1346ին Սիւնեաց Վայոց ձոր գ.ա.ին մէջ, իր հայրը Արճէջ քաղաքէն, իսկ մայրը Քաջբերունեաց Փարպայ գիւղէն գաղթած էին Վայոց ձոր:

1373ին Յովհ. Որոտնեցիին հետ Երուսաղէմ այցելած է ուխտաւորութեամբ: (Աղաւնուհի՝ «Միաբան», էջ 103):

Գրիգոր յետ մահու Յովհաննէս Որոտնեցոյ (1386ին) ի՛նքը Գրիգոր սկսաւ ուսուցանել Ապրակունեաց վանքին մէջ: Քիչ ատեն հոք Գրիգոր այս վանքէն ելլելով Ստաթեի կամ Տաթեի վանքին մէջ հաստատուեցաւ, ուր սկսաւ գրել գործերը: Արդէն 1401ին՝ Տաթեի վանքին մէջ «Հարցմանց գիրք»ը ընդորինակողը կը յիշէ Գրիգոր Տաթեացին իբրև «քաջ հոգեւոր» և «աստ-

ուածարանական վարդապետ»: Էջմիածնայ մատենադարանի հին թիւ 2253 Մովսէս Քերթողի «Քերականութիւն»ը որ Տաթեի մէջ կ'ընդօրինակուի 1403ին՝ հետեւեալ յիշատակարանը ունի «Զստացող սորին զտիեզերալոյս զմեծ վարդապետն Հայոց Յովհաննէս Որոտնեցի և զիս սակաւ աշխատողս Գրիգոր սպասաւոր նմին՝ աղաչեմ յիշել ի Տէր, ի թվ. ՊԾԲ (=1403) գրեցաւ վերջին գիծս, ընդ հովանեաւ Ս. Առաքելոյս միաբանից ուխտիս Տաթեոյ»: Որովհետև Յովհ. Որոտնեցի 1388ին վախճանած էր՝ կ'երեւի Գրիգոր վ. Տաթեացի Որոտնեցիի համար ընդօրինակած այս ձեռագրին վրայ կ'աւելցնէ այս տողերը՝ իր վարդապետին մահէն 25 տարի հոք:

Գրիգոր Տաթեացի 1405ին կը շարադրէ Մեկնութիւն կամ լուծումն Սաղմոսացը, յաջորդ տարին, 1406ին, Թովմաս վրդ. Ս. Ստեփանոսի եւ աշկ. Մարտիրոս քնի՝ Գր. Տաթեացոյ այս լուծումնէր կ'ընդօրինակէ Տաթեու վանքին մէջ: Այս Թովմասը նշանաւոր Մեծօփեցին է, որ իր գրածին համաձայն՝ 12 կրօնաւորներով իր բնակավայր Քաջբերունեաց երկրէն եկած Տաթեու վանքը ապաստանած էր: Յաջորդ տարին 1407ին Տաթեի վանքին մէջ աւետարան մը կ'ընդօրինակուի (Նոր Զուգա կը գտնուի ձեռագիրը): «Յառաջնորութեան Ս. Աթոռոյս (Տաթեոյ) Գրիգորի քաջ հոգեւոր»: Այնքսանդրապոլի Ս. Աստուածածին եկեղեցոյ մէջ պահուած Աւետարան մ'ալ գրուած է 1407ին «ի դիտապետութեան բարունական գործոց Գրիգոր առն սբանչելոյ, յորոյ և բազում թեղադրութենէ եղև զրաւ յայսմ Աւետարանի, և յեպիսկոպոսութեան Տէր Առաքելոյ քեռորդոյ նորա» (Առաքել Սիւնեցի բանաստեղծ եպիսկոպոսն է, որուն Գրիգոր Տաթեացոյ քեռորդին ըլլալը ուրիշ աղբիւրէ ալ ծանօթ է մեզի): Այս տարին է (1407) որ Գրիգոր Տաթեացի կը շարադրէ Քարոզգիրքը Տաթեու վանքին մէջ:

Կ'երեւի Գրիգոր Տաթեացի 1408ին, ձմեռը, առանձին կամ Տաթեի վանքը ապաստանող թովմա Մեծօփեցոյ վանքը կ'այցելէ և հոն կը ձմերէ, որովհետև այդ ատեն կը շարադրէ Յոբայ լուծումը կամ մեկնութիւնը ըստ հետեւեալ յիշատակարանին «Եկեալ իմ (Գրիգոր Տաթեացոյ) յերկիրս Քաջբերունեոյ և ձմերեալ ի հրեշտակաբնակ վանս Մեծօփայ, ի սպասու դամբարանաց վարդապետացն սրբոց, և ընթերցմամբ հաւաքեցի զղծուարալոյժ բանս Յոբայ և զմեկնաց նորա: Այլ սակաւ լուծումն Արիստակիսի և Գէորգայ ի խրատ գրչութեանն»:

Գրիգոր Տաթեացի, իբրև Արևելեան վարդա-



պետներէն ամէնէն զիտունն, աղիցիկը եւ պերճախօսը՝ այդ դարու մեր եկեղեցական պատմութեան մէջ մեծ դեր խաղացած է, և Զանացած է Կիլիկիոյ կաթողիկոսութիւնը անջատելի Հռոմէն:

2. Չամչեան (Պատմ. Հայոց» Գ. էջ 455) կը յիշատակէ Գրիգոր Տաթևացւոյ իր աշակերտներով Մեծոփայ վանք մնալը (1408—9) Յակոբի կաթողիկոսութեան առաջին տարին, և կը յիշատակէ թէ Գրիգոր Տաթևացին ո՛րքան աշխատած է որ Աղթամարայ կաթողիկոսութիւնը վերնայ և ամբողջ թեմը Սսոյ կաթողիկոսին գերիշխանութեան ներքե անցնի:

1411ի սկիզբը սակայն, ըստ Մատթէոս վրդ.ի յիշատակագրութեան՝ Գրիգոր Տաթևացի կը վախճանի և կը թաղուի վանքին մէջ: Արեւելեան վարդապետք ատեն մը սուրբերու կարգը կը դասեն զինքը իր Յովհաննէս Որոտնեցի վարդապետին հետ:

Գրիգոր Տաթևացւոյ ապագրուած դործերն են. «Գիրք Հարցմանց երիցս երանեալ սրբոյ իօրն մերոյ Գրիգորի Տաթևացւոյն», Կ. Պոլիս՝ 1729ին, (808 էջ):

Գիրք որ կոչի Ոսկեփարիկ»: Արարեալ սրբոյ իօրն մերոյ Գրիգորի Տաթևացւոյն եօրնալոյս վարդապետի. Կ. Պոլիս 1746ին, (592 էջ):

«Բարոզգիրք»: Գիրք քարոզութեան որ կոչի Ամեհան հասոր: Տպ. ի Կ. Պոլիս 1740ին՝ (746 էջ):

Գիրք քարոզութեան որ կոչի Ամսուան հասոր»: Կ. Պոլիս 1741ին, (740 էջ):

Գրուածներ Գր. Տաթևացւոյ վրայ՝ տե՛ս «Նոր Մատենագիտութիւն» Հ. Ա. Վաղիկեանի էջ 507:

ԳՐԻԳՈՐ ՏԱՐՈՆԵՅԻ ԱՇՈՏԵԱՆ, 976ին իր Բագարատ եղբոր հետ կը զինակցի Բիւզանդոնի Վարդ Սիկլաոսս բռնակալ կայսեր հետ, իսկ 989ին երբ Վարդ Նուաճուելով Վասիլ կայսեր հնազանդեցաւ՝ նո՛յնը ըրին և Գրիգոր ու եղբայրը Բագարատ 991ին երբ Վասիլ կայսրը Պուլղարիոյ Սամուէլ թգ.ին վրայ պատերազմի գնաց՝ իր հետ տարաւ Գրիգոր Տարոնեցին, և երբ Վասիլ տիրեց Վեոխա քաղաքին՝ հոն դտաւ Գրիգորը և անոր որդին Աշոտ ու Սահակ իշխանը իրենց զօրքերով: Երբ Վասիլ հեռացաւ Վեոխայէն Պուլղարները քաղաքին վրայ յարձակեցան, որոնց ղէմ էլաւ Աշոտ, Պուլղարներէն ձերբակալուեցաւ: Գրիգոր դառնացած՝ ինքն էլաւ թշնամուոյն ղէմ և այդ ճակատամարտին մէջ սպաննուեցաւ:

ԳՐԻԳՈՐ ՏԱՐՈՆԵՅԻ ԱՇՈՏԵԱՆ, պատրիկ, թոռն վերնոյն 1041ին երբ յոյնք կը պատրաստուէին

Անին առնել՝ ապստամբեցաւ Միքայէլ կայսրէն, և ուրիշներու հետ ձերբակալուելով՝ պատժուեցաւ:

ԳՐԻԳՈՐ ՏԱՐՈՆԵՅԻ ՄԻԽԱՅԷԼԵԱՆ, մօր կողմանէ որդին է Ալեքս կայսեր կոմսենոս քրոջ: Ալեքսիօրով (չուրջ 1115ին) իր եղբոր Յովհաննու յաջորդեց պառնովիսիարոս տիտղոսով ու Յովհաննէս Պերփետուէնէն (1168—1143) արքունի հաղարապետ կարգուեցաւ իբր 1120ին:

ԳՐԻԳՈՐ ՏՈՒՏԵՈՐԴԻ ԵՎ., առաջնորդ Սանահին և Հաղրատ վանքերուն: Սա եղած է Արեւելեան կոչուած վարդապետներուն պարագլուխը, հակառակորդ Արեւմտեան կամ Կիլիկեան վարդապետներու: 1178ին արդէն կը սկսի յիշուի Գրիգոր Տուաէորդին իբրև վանահայր Սանահինի, և ինքն է որ 1180ին պատասխանեց 1179ինին Հռոմկլայվ ժողովոյն հաղորդած որոշումներուն, խիստ նամակ մը գրելով Գրիգոր Տղայ կթղ.ին:

Ժ.Գ. դարու սկիզբները 1204ին Չաքարէ սպասալար, որ Լուիի կ'իշխէր, Սսոյ կաթողիկոսին ծիսական խնդրոյ շուրջ այլևայլ հարցումներ ուղղած էր, որոնց պատասխանած էր Սիսի ժողովը: Իր կարգին Չաքարիա Լոսիի մէջ ժողով գումարելէ ետք, Սիսէն եկած Մինաս եպիսկոպոսը Հաղրատի վանքը զրկեց ժողովոյն որոշումները հաղորդելու համար: Վանահայրը Գրիգոր Տուաէորդի լսելով այդ՝ քանի մը կատաղի մարդիկ զրկեց որպէսզի եպիսկոպոսը վանք հասած սպաննեն: Երբ լսեց այդ Չաքարիա՝ զօրք զրկեց Հաղրատ Տուաէորդին և չարագործները կալանաւորելու համար: Գրիգոր վանքէն փախչելով՝ Կայնոյ գաւառը անցաւ և Գետիկ վանքը երթալով Միսիթար Գօշի ապաստանեցաւ, ի սկզբան թէ և Միսիթար Գօշի միջնորդութեամբ ներեց Չաքարէ, բայց յետոյ Կեչառուտոյ սահմանը գալիս բռնելով բանակ տուաւ և անոր տեղը Հաղրատի առաջնորդ ղլաւ Յովհաննէս վրդ.ը, որ նախապէս այդ պաշտօնը կը վարէր և վատրուած էր Գրիգոր Տուաէորդիէն:

ԳՐԻԳՈՐ ԱԿՆԵՅԻ, յիշատակաւ իր 1386ին:

ԳՐԻԳՈՐ ԱՊՈՒՄԱՏՈՍ ԱԵԾՐՈՆԻ, որդի Վասակայ ռոզկոուարճ խմատութեամբ առյցեալ» (ըստ թովմա Աբժրուհուոյ), կը բնակէր իր Արուճք (տե՛ս Արուճա) ամրոցին մէջ, սա իր Մլքէ զուստրը կնութեան կու տայ Դերէնիկի երկրորդ որդւոյն Գազիկի (Վասպուրականի թաղաւորին), յետոյ անխօհմուծիւնը կ'ուսննայ ինքնիշխան կառավարելու: Գազիկ թգ. Վասպուրականի զօրք կը ղեկէ, կը ձերբակալէ զինքը որդւոց հետ միասին, յետոյ կը ներէ ու կը բանակ զիրենք Արուճքամ-



բացին մէջ որպէսզի չփորձեն կրկին ապստամբու-  
լու: (Տե՛ս Գրիգոր Արժուռնի խօսանք):

ԳՐԻԳՈՐ Արժկեցի, 1441ին Երուսաղէմի մէջ Աւետարան մը կ'ընդօրինակէ:

ԳՐԻԳՈՐ ՎՐԴ. Պոսեցի, Միաբան Երուսաղէմի Ս. Յակոբ վանքին, ծնած է Սամաթիա, քարտուղար Թէոդորոս պատրիարքին: Իր երկասիրութիւններն են. Պարսեզ Ծաղկաւեհ խորագրով ձեռագիր մը, Երեւոյք Կրից անուամբ ճառ մը (տպ. Ս. Յակոբ 1851) և Թարգմանութիւն մը Սիրուն Զբօսարան (տպ. Ս. Յակոբ 1875):

ԳՐԻԳՈՐ Իմաստասէր, ԺԲ. դարու մատենագիր, հեղինակած է Գիրք վայից եւ մեղայից կոչուած միջնակ գրուածքի մը: (Գուրեան եղիշէ պսք. «Պատմ. Հայ Մատենագրութեան», էջ 220):

ԳՐԻԳՈՐ ՎՐԴ. Արեւիցեցի, 1480ին ուխտաւորութեամբ Ս. Յակոբի վանքը կ'այցելէ, ուր երեք տարի կը մնայ և կը դասախօսէ Իգնատիոս վրդ.ի Մեկնութիւն Դուկասու գրքէն, ինչպէս յուշագրած է նոյն գրքին մէջ: (Աղաւնունի՝ «Միաբանք», էջ 94):

ԳՐԻԳՈՐ ՎՐԴ. Դարանաղցի. եպիսկոպոս, կոչուած է նաև Կամախեցի և Բուխ, ծնած է 1576ին Կամախի մէջ. հայրը Գրիգորիս, մայրը Կիւլվարդ, աշակերտած է Բարերդի Սրապիոն վրդ.ի: Եկեղեցականութիւնը զգրկելէ յետոյ կ'ընտրուի նուիրակ Մելքիսեդեկ կթղ.էն Հին Զուղայի համար: 1603ին ներկայ կ'ըլլայ միւռոնօրհնութեան հանդէսին, հաւանաբար նոյն ատեն եպիսկոպոս կը ձեռնադրուի Մելքիսեդեկ կթղ.էն Ծրջաղայած է Հայաստանի շատ մը գաւառները և վարած է կարևոր պաշտօններ, ինչպէս նաև Պոլսոյ մէջ զբաղած է եկեղեցական գործերով ու ումանց կողմէ պատրիարք ընտրուած: (Մանրամասն տե՛ս Դարանաղցիի պատմութեան ներածութիւնը):

Դարանաղցին ուխտաւորութեամբ երեք անգամ այցելած է Ս. Յակոբի վանքը 1606—7ին, 1616ին և 1625—1628ին, 1628ի Զատկին կը կատարէ Ս. Յարութեան տաճարին մէջ լուսանալութեան պաշտօնը, փոխան Գրիգոր պարք. Պարոնաէրի, որ Երուսաղէմէն կը բացակայէր նոյն միջոցին: Դարանաղցին Ս. Յակոբին մէկէ աւելի յիշատակներ տուած է (սպասք և ձեռագիրներ). իր ժամանակագրութիւնն ալ Թէքիրտաղէն յիշատակ բերուած է Ս. Յակոբին: Գրիգոր Դարանաղցին վախճանած է 1643 Սեպտ.ին 67 տարեկան հասակին՝ Թէքիրտաղի մէջ: Մարմինը կ'ամփոփուի տեղւոյն Ս. Փրկիչ եկեղեցին, ուր կայ մինչեւ այսօր իր տապանագիրը, ուսկից կը հասկցուի թէ Թէքիրտաղ տարած է Գրիգորոսի խաչափայտի բեւեռը:

Դարանաղցին գրական գործն է ժամանակագրութիւնը, որը պատրաստած է իր հոգեւոր որդւոյն Ակնցի Դասպար երէցի խնդրանքով. նոյն երէցը Դարանաղցին հետ 1611ին, իր դպիր, 1616ին և 1626ին իր քահանայ այցելած է Երուսաղէմ: Դարանաղցին ժամանակագրութիւնը 1915ին Երուսաղէմայ Ս. Յակոբայ պատրանէն լոյս ընծայուած է Մեսրոպ վրդ. Նշաննանի ներածութեամբ: (Աղաւնունի՝ «Միաբանք» էջ 97):

ԳՐԻԳՈՐ ՎՐԴ. և աշակերտ Պօղոս՝ 1238ին ստացողք Թւեհարանի Անդուլ վանքին մէջ:

ԳՐԻԳՈՐ ՎՐԴ. միաբան Երուսաղէմայ Ս. Յակոբ վանքին, 1618ին Հաւաքածոյ մը կ'ընդօրինակէ: (Աղաւնունի՝ «Միաբանք», 96):

ԳՐԻԳՈՐ ՎՐԴ. Եղաբեցի կամ Ծերեց, միաբան Արժկէի Ս.Ստեփանոս վանքին, որ կը կոչուէր նաև Յիպնատլաթեցի ծնած է 1350ին, բնակւորակերթով մահտարին Աշակերտած է Սարգիս վրդ.ին: 1400—5 թուականներուն ուխտաւորութեամբ Երուսաղէմ կ'այցելէ Ս. Յակոբի վանքը և երկու տարի մնալէ յետոյ իր հայրենիքը կը վերադառնայ Առաջնորդ կ'ըլլայ Սուխարու ուխտին (Արժկէի մօտ) և յետոյ Յիպնատ վանքին. Բուրաբըրը 1425ին Յիպնատ վանքին վրայ յարձակելով Գրիգոր Ծերեցը կը նահատակեն:

Սյաթեցի հաւաքող և յարգարող եղած է եկեղեցական քաղերու, գանձերու, ժամագրոց խրատներու ու Յայմաւուրէի և միանգամայն ընտիր գրչագրող մը (Մուսանձեանց՝ «Թորոս Աղբար Բ», էջ 259), ունի նաև Յիւստակարան Աղբից խորագրով պատմական քերթուած մը, հրատարակուած մը, «Արարատ»ի մէջ (1897էջ 412—3): Առաքել Բաղիշեցի յօրինած է ներքողեան մը հետեւեալ խորագրով. վարք եւ նահատակութիւն սուրբ հաւրն մերոյ եւ երանաւորն վարդապետին մերոյ Գրիգորի (Սյաթեցոյ): Ն. Բարամանյ Գրիգոր Ծերեցի վրայ ուսումնասիրութիւն մ'ունի «Արարատ» հանդէսին մէջ (1895, էջ. 55, 90, 124):

ԳՐԻԳՈՐ Ակրակաղացի, (Ս.), եպիսկոպոս, Սիկիլիոյ Ակրաքանդա քաղաքէն Ե. դարուն մէջ ապրած. Հայ եկեղեցին կը տօնէ նոյնմբեր ամսոյ մէջ:

ԳՐԻԳՈՐՆԵՐՈՒ ԵԱՐՈՒՆԱԿՈՒՅԻՆԵՐ ՏԵՍ ԶԱԽԵԼՈՒՄԸ:

ԳՐԻԳՈՐՍՏՈՒՐ Առնախաձորեցի, է. դարու առաջին կէսին ծագած է, Մայրագոմեցւոյ ազանդին դէմ մաքառողներէն մին եղած է:

ԳՐԻԳՈՐԵԱՆ. մշակոյթի և շինարարութեան ուժ Երևանի մէջ (1938):



ԳՐԻԳՈՐԵԱՆ Արամ (= Համր), Հնչակեան նա-  
հատակ:

ԳՐԻԳՈՐԵԱՆ Գ. Բժիշկ Երևանի մէջ:

ԳՐԻԳՈՐԵԱՆ Գալիք, Պաղտատացի, գեղագործ:

ԳՐԻԳՈՐԵԱՆ Գեորգ, Սարբերդցի Հնչակեան  
անձնուէր զինուոր: (Հնչ. «Յուշարձան» էջ 166):

ԳՐԻԳՈՐԵԱՆ Գեորգ, խմբագիր 1832—1840 Պոլ-  
սոյ մէջ լոյս տեսած «Լոյս զիր» շաբաթաթերթին:  
184—9 կը շարունակէ «Յայտարար Լոյս զիր»  
անուամբ:

ԳՐԻԳՈՐԵԱՆ Եղբարբ, արձանագործ Թաւրիզի  
մէջ:

ԳՐԻԳՈՐԵԱՆ Եփրեմ, 1907—1911 Այկեքսանբա-  
պոլի մէջ լոյս տեսնող «ժայռ» թերթի խմբագիր  
կ'ըլլայ Յովակիմ Բիւղանդեանցէն ետք:

ԳՐԻԳՈՐԵԱՆ Զաւարիա, ծնած է 1840ին, վա-  
ղեմի ազգային գործիչ, Թիֆլիսի Գայեանեան  
Օրիորդաց վարժարանի հիմնադիր, խնամակալ,  
դասախօս և տեսուչ: Աշխատած է «Մեզու Հա-  
յաստանի» թերթին. երկերն են Մարդակազմու-  
քեան տարրական դասեր, տպ. Թիֆլիս 1881ին,  
Բնագիտութիւն տպ. 1896ին, Գարձակաւ սառե-  
րուսուցիչ ուսուց լեզուի տպ. 1883, Զուր. տպ.  
1893, Մանկութիւն տպ. 1895, Բացարձակաւ ձեռ-  
նարկ մանկութեան, տպ. 1895. Թարգմանած է  
Բանչիւսկիէն: Մեռած է 1910ին:

ԳՐԻԳՈՐԵԱՆ Լեւոն, երաժշտագէտ ծնած է  
Թաւրիզ 1887ին, որդի Բալասանի. 3 տարու-  
հօրմէն որը կը մնայ. նախնական և միջնակարգ  
ուսումը կ'առնէ Թաւրիզի Հայկազեան—Թամար-  
եան դպրոցին մէջ: Ի տղայ տիոց ցոյց կու տայ  
երաժշտական կարողութիւնը: Նախ Ռաշտի մէջ  
(1904—5) յետոյ Թաւրիզ երգեցողութեան ու-  
սուցչութիւն կ'ընէ հայ դպրոցներու մէջ: 1907ին  
Թիֆլիս կ'երթայ և ծանօթ ջութակահար վա-  
սիլեիցին կ'աշակերտի և Թաւրիզ դառնալով կը  
շարունակէ ուսուցչական պաշտօնը (Հ. Անեմեան  
1937):

ԳՐԻԳՈՐԵԱՆ Լ. Տոքթ. խմբագիր և հեղինակ  
ս. ՅԱԽԵԼՈՒԱԾ:

ԳՐԻԳՈՐԵԱՆ Կարապետ, քն. Պարտիզակցի, զբած  
է Յովհաննէս վրդ. Պարտիզակցւոյ վկայարա-  
նութիւնը, տպ. Երուսաղէմի Ս. Յակոբ վանքին  
մէջ, 1933ին:

ԳՐԻԳՈՐԵԱՆ Համբարձում, երաժշտագէտ, ծնած  
է Գուբու-Չէշմէ (Պոլիս) 1861ին, 50 տարի ու-  
սուցչութիւն ըրած է իր բնակած թաղին Գուբու-  
Չէշմէի վարժարանին և Եկեղեցւոյն մէջ: Մեռած  
է 1926ին:

ԳՐԻԳՈՐԵԱՆ Հայկ, Բժիշկ, Նաւրիժեցի, կու-

սակցական գործիչ, ուսած Եւրոպա, կը վախճանի  
1922ին:

ԳՐԻԳՈՐԵԱՆ Մ. խմբագիր «Մուրճ և Մանգաղ»  
պարբերաթերթի, լոյս տեսաւ Ռոստովի մէջ 1925-  
1932?:

ԳՐԻԳՈՐԵԱՆ Մ. ճարտարապետ Երևանի մէջ:  
ԳՐԻԳՈՐԵԱՆ Յակոբ, Չորդեղցի, Հնչակեան գոր-  
ծիչ, նահատակուած 1915ին: (Հնչ. «Յուշարձան» 150):  
ԳՐԻԳՈՐԵԱՆ Տէր Յակոբ «Պուկտիկոս» Ժէ դա-  
րու մէջ: («Բնագիտութիւն» Ա. 179):

ԳՐԻԳՈՐԵԱՆ Յովնանէս Գ., բրոֆ. ծնած Այն-  
թապ՝ 1855ին Նախակրթութիւնը առած «Աստ-  
ուածատուր Խալիֆէ»ի դպրոցին մէջ, 1870ին կ'ա-  
շակերտի Մարաշի ձեմարանը. 1876ին կը վերա-  
դառնայ Այնթապ և զբէժէր կ'ուսուցանէ և 1880-  
ին կու գայ Ամերիկա և էմհըրսթ Գոլէճին մէջ  
մէկ տարի կ'ուսանի և կը վերադառնայ Այնթա-  
պի Գոլէճը սուսուցանելու համար: 1888ին կ'ա-  
մուսնանայ 1889ին երկրորդ անգամ կու գայ  
Ամերիկա. 1902ին կը հրաւիրուի Աւեսպերի խմբ-  
րադրութեան, Պոլիս, նոյն տուն կը չովուէ  
Պայպըլ Հասուղի էմմանուէլ Եկեղեցւոյ ժողո-  
վուրդը: 1910ին կը սկսի հրատարակել Բաննիւմա  
շաբաթաթերթը, որ կը շարունակէ մինչեւ 1915:  
1921ին կու գայ Ամերիկա և կը վերահրատակէ  
Բաննիւման, նախ՝ իրրե շաբաթաթերթ ու յետոյ  
իրրե կիսամսեար 1930 Փետր. 2ին կը տօնուի  
ձնդեան 75 ամեակը: Բրոֆ. Գրիգորեան իրրե  
բաղձարդիւն կրթական մշակ, քարոզչական եւ  
հրատարակադրական օգտակար գործունէութե-  
ամբ մը, շուրջ 60 տարիներ ծառայած է՝ կի-  
լիկիոյ շրջանի հայութեան մասնաւորապէս (Գա-  
լուսեան՝ «Մարտ», էջ 508):

ԳՐԻԳՈՐԵԱՆ Ոսկան, Բժիշկ ս. ՅԱԽԵԼՈՒԱԾ:

ԳՐԻԳՈՐԵԱՆ Պողոս Ա. ս. Պողոս Ա. պատրիարք  
կ. Պոլսոյ:

ԳՐԻԳՈՐԵԱՆ Ռեքեոս (Ռեքիկ Հօնա), նշանաւոր  
հայկաբան, արարագէտ և ուսուցիչ: Ծնած է Պո-  
լիս, որդի տիրացու Գրիգոր պատուելիի, որ նոյն-  
պէս քաջ հայագէտ և յունագէտ մ'ըն էր ու կա-  
րապետ պատրիարքի օրով (1823—31) առնւա-  
ղալի պաշտօն կը վարէր պատրիարքարանի մէջ:  
Ռէքէոս կ'աշակերտի թուրք հօճայի մը, ուրկէ  
կը սորվի արարեղէնն ու պարսկերէնը:

18 տարեկանին կը սկսի դասախօսել մայր վար-  
ժարանին մէջ, 50 տարի անդադար. այցելած է  
նաև ուրիշ վարժարաններ: 1868ին հեղինակած է  
Խիլասար Իու սարֆ զուտ թուրքերէն քերա-  
կանութիւն մը, ասկէ դատ 1892ին հրատարա-  
յած է Քերականութիւն արաբերէն լեզուի ի պէս



վարժելոց եւ քերականից (180 էջ): Ռեթէնս լաւ հայերէն ալ գիտէր. աշակերտած էր Թորոս Նազարեանի եւ Յովսէփ պատուելի Մալեղեանի Գրած է նաև քանի մը ոտանաւորներ ալ, որոնք հրատարակուած են իր ժամանակի օրացոյցներու սկիզբը: Մեռած է 1904 Մարտ 7ին: (Յ. Յովնան-նեսեան):

ԳՐԻԳՈՐԵԱՆ Ռուբիկ, ջութակահար Թաւրիզի մէջ տե՛ս ՅԱԻԵԼՈՒԱԾՐ:

ԳՐԻԳՈՐԵԱՆ Վ. գրող Խ. Հայաստանի մէջ:

ԳՐԻԳՈՐԵԱՆ Վանան աղա, 1750ին Երուսաղէ-մայ Ս. Յակոբ վանքը կ'այցելէ եւ 1749ին Գահիրէի Ս. Սարգիս եկեղեցին կը վերաշինէ: (Աղաւնունի՝ «Միաբան», էջ 493):

ԳՐԻԻՈՐԵԱՆ Քորնելի s. Քրդեցանովից Քորնելի:

ԳՐԻԳՈՐԻՈՍ, Անտիօքայ արքեպիսկոպոս, 1179-ին Հայոց առ Յոյնս գրած կրօնական թուղթը ստորագրողներէն մին եղած է:

ԳՐԻԳՈՐԻՈՍ Եպ. Կոկիսոնի, 1179 Հայոց առ Յոյնս գրած թուղթը ստորագրած է:

ԳՐԻԳՈՐԻՈՍ Իշխան Պանլաւունի, հաւ Գրիգոր Մպղիստրսի, մին էր Նիզ գա.ի երեւելիներէն՝ Ժ. դարու կիսուն, սա Աբաս թգ.ի եւ Աշոտ ողորմածի օրով ապրեցաւ ու 882ին մեռաւ: (Չամչեան՝ «Պատմ. Հայոց» Բ. էջ 831):

ԳՐԻԳՈՐԻՈՍ Եպ. Եգիպտոսի, քեռորդի Գրիգոր կթղ. Վկայասիրի, 1077ին, Գր. Վկայասէր կաթողիկոսէն եպիսկոպոս կը ձեռնադրուի:

ԳՐԻԳՈՐԻՍ, գղ. կամ արուարձան Եւզոկիոյ լեռան կողմն վրայ: 1902ին 60 տուն հայ բնակիչ ունէր: Եկեղեցին Ս. Աստուածածին. ունէր եւ զպրոց մը: Հոս ծնած է Ս. Գրիգոր Սքանչելագործ, ուր գտնուած է սրբոյն մարմինը եւ այդ պատճառով Գրիգորիս կոչուած է զիւզս:

ԳՐԻԳՈՐԻՍ կամ Գրիգոր կթղ. Աղթամարայ տե՛ս ՅԱԻԵԼՈՒԱԾՐ:

ԳՐԻԳՈՐԻՍ կամ Գրիգոր, կթղ. Աղուանից, որդի Ս. Վրթանէսի, թոռն Գրիգոր Լուսաւորչի, երիտասարդ հասակին Փայտակարան աշխարհի եպիսկոպոս ձեռնադրուեցաւ Դ. դարուն (340ին): Տրդատի մահէն ետք 342ին Փայտակարանցիք եւ Աղուանք Գրիգորիսը ձիու մը ագիին կապելով նահատակեցին, սրբոյն սարկաւազ աշակերտք Ամարաս աւանը թաղեցին եւ 489ին, Աղուանից Վաչագան բարեպաշտ արքային օրով գտնուեցաւ Գրիգորիսի մարմինը եւ գերեզմանին վրայ եկեղեցի մը կառուցուեցաւ յանուն սրբոյն: Յուլիսին մէջ կը տօնէ Հայ եկեղեցին Գրիգորիսի տօնը: «Ճոռաքաղ»ի մէջ հրատարակուած է «Պատմութիւն կե-

նաց նշխարաց եւ եկեղեցւոյ սրբոյն Գրիգորիսի Աղուանից կթղ.ի»:

ԳՐԻԳՈՐԻՍ Եպ. Աբաղունեաց կամ Գրիգոր Բու-կիսկոպոս, Կամսարականաց երկրին մէջ ծնած. 648ին Սահակ կթղ.էն Արշարուենաց եպիսկոպոս ձեռնադրուեցաւ, երեսուն տարի մինչև 714 եպիսկոպոսութիւն ըրաւ (Չամչեան հօր. Բ. էջ 374). սա Կամսարական Վահան Պատրիկի խնդրանօք՝ եկեղեցական պաշտամանց Ընթերցուածոց մեկնու-րիւնը կը շարագրէ: Իսկ ըստ Ստեփանոս Ասողկի Գրիգորիս իր ընթերցուածոց մեկնութիւնը գրած է ի խնդրոյ ներսէս պատրիկ Կամսարականի, Սամուէլ Կամրջաձորեցի կը գրէ ընդհակառակն թէ Յովհանէս Իմաստասէր կթղ.ի խնդրանօք շարագրած է Ընթերցուածոց մեկնութիւնը: Գրիգորիս քորեպ. ներկայ եղած է 651ին գումարուած Մանազկերտի ժողովին մէջ ըստ Եղիշէ պարք. Դուր-եանի («Պատմ. Հայ Մատենագրութեան» էջ 148): Այս չի համապատասխաներ եպիսկոպոսութեան թուականին որ տեղի ունեցած է 648ին (տե՛ս վերը):

ԳՐԻԳՈՐԻՍ Եպ. Դատաւանից 1250 թուականին: ԳՐԻԳՈՐԻՍ Երգեցող, գրիչ Աւետարանի 1238ին՝ Կիրիկիոյ Անդուլ վանքին մէջ:

ԳՐԻԳՈՐԻՍ առաջնորդ Խօջաւանքին 1218ին:

ԳՐԻԳՈՐԻՍ վրդ. 1868-7ին Խօջաւանքը բոլորո-վին կը նորոգէ:

ԳՐԻԳՈՐՈՒՊՈՒՍ կամ Գրիգորիուպոլիս, քաղաք Պեսարապոյ, Քերտնի կուսակալութեան մէջ, Տնեսթէր գետին եզերքը, հիմնուած 1792ին, հրամանաւ Ռուսաց Կաթարինէ կայսրուհւոյն, որուն հիմունքը օրհնած է Տէր Յովսէփ Երկայնարազուկ Արղութեանց արքեպիսկոպոսը: Գրիգորու-պոլիս կոչուած է վերակացու Իշխանին անուամբ: Գրիգորուպոլիս հիմնարկութեան երկրորդ տարին, 1793ին, Հայք Ս. Փետրպուրկի փորագրել տուած եւ տպագրած են քաղաքիս յատակաձեւը 44×34 հարիւրամէտր մեծութեամբ: Ի սկզբան Հայոց համար շինուած է քաղաքս, որոնք գաղթած են իսմայիլէ, Բիլիէ, Ղաւշանէ եւ Ռաշքօյայէ. յետոյ եկեր են նաև Ռուսք եւ Հրէայք: Հ. Բժշկեան կը գրէ, թէ կանխաւ կային 900 տունք Հայոց, բայց շատերը օղին վարժած չըլլալով մեռան, եւ ոմանք ուրիշ կողմեր ցրուեցան. իսկ իր այցե-լութեան միջոց հազիւ 350 տուն կային, որոնք առանձին դատարան եւ հինգ դատաւորներ ունէին: Ասոնք հայերէն դատաստանագիրք ունէին, որուն կանոնները մեծ մասամբ առնուած էին Ս. Գրքէն. այժմ կը գործածեն Ռուսաց կանոնա-գիրքը: Քաղաքս 1902ին ունէր 7000 բնակիչ, հայ, ռուս եւ հրեայ: Ռուսաց Պօղոս կայսրը յա-



տուկ հրովարտակով մը 1799ին Հայոց զանազան արտօնութիւններ տուեր է և 30 հաղար հարիւրակալ երկիր, երկրագործութեան համար, որուն կէսը յետոյ առնելով Գերմանացոց տուին (Այս հրովարտակին պատճենը տես «Բնագիտական» էջ 567):

Քաղաքիս Հայոց մայր եկեղեցին նուիրուած է Ս. Կատարինէի, փայտաշէն ընդարձակ և անշուք, կառուցուած մեծ հրապարակին վրայ, այս եկեղեցին քարաշէն կառուցուելու համար ի վերջոյ յարքունուստ զրամ արուած է: Երկրորդ եկեղեցին է Ս. Լուսաւորիչ և երրորդը Ս. Խաչ՝ զոր կառուցած են անցեալ (ժ.Ը.) զարու առաջին կիսուն մէջ, քարաշէն է բայց անձեւ, առաջնորդարանի մօտ, ուր կայ նաև Հայոց տղայոց ուսումնարան: Այս եկեղեցիներու վրայ այժմ նոր տեղեկութիւն չունինք, բայց կը յիշէ ոմն, թէ տեղւոյս Ս. Պօղոս Պետրոս եկեղեցւոյն մէջ կը պահուի Ս. Նշան անուամբ պղնձեայ խաչ մը, որուն համար աւանդութիւն է, թէ Քրիստոսի տաշտէն Թաղէոս առաքեալի շինած երեք խաչերէն մին է, Անուոյ գաղթականներէն այս կողմերս բերուած: Ոչ միայն Հայք, այլև Ռուսք, Հրեայք և այլք հեռաւոր տեղերէ կու գան յերկրպագութիւն այս Ս. Նշանին: Քաղաքիս Հայոց եկեղեցիներուն մէջ կը պահուին մագաղաթի վրայ գրուած հին Յայսմաւուրք, Աւետարան, ճաշոց և այլ գրքեր: Քաղաքս ըստ հոգեւոր վարչութեան կը պատկանի (ընդհ. պատերազմէն առաջ) Նախիջևանոյ և Պետրապոլոյ թեմին: Հայք ունին նաև աղջկանց ուսումնարան մը՝ Սրբուհեան անուանով: (Էփրիկեան «Բնագիտական»):

Գրեթ, կը յիշուի Բարձր Հայոց Սպեր գ.ա.ի մէջ:

ԳրիՉ. ամսաթերթ, տպ. Կ. Պոլիս 1910ին, խմբագիր տնօրէն՝ Շահնազար Որբունի (և Գօծապըյրգեան Վահան):

ԳրիՉ, «Աղգային, հասարակական, գրական շաբաթաթերթ» տպ. Նոր-Նախիջևան 1912—4, խմբագիր-հրատարակիչ Ստեփանոս քն. Պապանան:

ԳրիՉ. ԽԱՆ, քաջարի զինակից Եփրեմ Խանի, կը մեռնի 1933ին Անվազի մէջ:

ԳրիՉ. Կամ Կրիչ գ.գ. Կարնոյ, 1902ին 90 տ. բնակիչ ունէր, որոնց 50ը հայ էին. եկդ. Քրիստոս-Թագաւոր:

ԳրիՉ. ԲՆԱԲ, Տ. Գալուսեան Գրիգոր:  
ԳրիՉ. ԵՇԹ, գ.գ. Ռուսմանիոյ Եաշ գ.ա.ի, ուր քանի մը տուն Հայեր կան:  
ԳրիՉ. Կամ Գրիլի, հին գ.գ. Սիւնեաց Վայոց ձոր գ.ա.ի

ԳրիՉ. Կամ Գուրհամ, կը յիշուի անուս Սիւնեաց Կոստական գ.ա.ի մէջ: Ստեփանոս Օրբելեան այս անուամբ բերդ մ'այ կը յիշէ Սիւնեաց մուր բերդերու կարգին:

ԳրԶԵԼԵԱՆ Գեորգ. րոֆ. Երեանի համալսարանի Այգեգործութեան ամպիոնի վարիչ:

ԳրՈՂ, երկշարաթաթերթ (Հ. Յ. Դաշնակցութեան). տպ. Բագու 1906—7, (Խմբ. Մարմին):

ԳրՈՂ, «Որդան Համկոմկուսի Հյուսիսային Կովկասի Երկրկոմի (ապս) ՀԿԿ (ը) Ա.ՂՈՎԱՅԻՄՈՎ-ՅԱՆ ՅԵՐԿՐԿՈՄԻ» տպ Ռուստով, Ռ. Վ. 1925—1934, Պատ. խմբագրի տեղակալ՝ Ա. Մելիքյան:

ԳրՈՂ. ՆԱՅ. ք.գ. Ռուսիոյ, Վլատկովկասէն 101 վերստ հեռու: Բն. Հրեայք, Մասմեաականք, Ռուսք. մօտ 40 տ. հայ կար 1902ին, ունէին քարաշէն եկդ. մը:

ԳրՈՒԱԿ, հին գ.գ. Սիւնեաց Եղուկ գ.ա.ի:  
ԳրՈՒՋԻՆԵԱՆ Տ. Վրացեան Սիմոն:

ԳրՉի ՓՈՐՉԵՐ, թերթ ձեռագիր, Խարբերդի Եփրատ Գոյէճին մէջ լոյս կը տեսնէր 1904ի առնները:

ԳՐՍԱՅ Ս. ՅՈՎ. ՀԱՆՆԵՍ Տ. ԳԵՐԱ:  
ԳՕՁԱՆ ՏԱՂԸ, լեռ Կրիկիոյ մէջ Սիւնեի ալին մօտ:

ԳՕՁԱՆ ՍԻՍ, գ.ա. Ատանայի նահանգի: (Գալուսեան Գր. «Մարտ» 16):

ԳՕՁՈՒԼՃԱ Տ. Ղօզուլան:  
ԳՕՁՈՁԱՅ Կամ Գոզոյայ Թեոսոբ Kozocsa Tivador) ծնած է Թրանսիլվանիոյ Եղիսարեթուպոլիս (Տըմպրավենի) քաղաքը 1853ին. տեղւոյն հայկ. վարժարանին մէջ նախնական կրթութիւնը ստանալէ ետք՝ համալսարան աւարտած է և Պուտարէշթի մէջ մանկավարժութեան ուսուցչապետութիւն ըրած, ուր մեռած է 1895 Մարտ 6ին:

ԳՕՁՈՁԱՅ Թիպոյր, (Kozocsa Tibor), նշանաւոր զանակահար եւ երգահան Պուտարէշտի մէջ, որդին Գօզոյայ Թէոսոբի, ուր շատ մը բարձրագոյն վարժարաններու և երաժշտանոցի ուսուցչապետութիւն կ'ընէ:

ԳՕՁ-ՕԼՈՒԳ, գ.գ. Տարսոնի, 40 տ. հայ բն. ունէր 1902ին. եկդ. Ս. Սարգիս: Տարսոնի բնակչաց ամարանոցն է զիւղս:

ԳՕԼԱՆԸՂԸՌԱՆ Կամ Քեօլանդրան, հայաբնակ գ.գ. Սիւնեաց Գեղարքունի գ.ա.ի, որ նախ ծովուն եզերքը կը գտնուէր, յետոյ 1850ին ծովէն 100 քայլ ետ փոխադրուած է: 1902ին 1410 բն. ունէր, եկդ. Ս. Աստուածածին: Մօտը Կարմիր Խաչեր գիւղավայր մը կայ ամայի եկեղեցի մը երկու խորաններով. եկեղեցւոյ միայն որմերը







Փ. Գոյանճեան Յունաստանի մէջ նշանաւոր չէնքեր կառուցած է. եղած է նաև ուսուցիչ: Պոլսոյ թերթերուն քաղաքական բաժնի խմբագրութիւնը վարած է և Պոլսոյ մէջ 1903ին հրատարակած է «Հոս-հոս» երգիծաթերթը: (Մալաբեան «Յուսագիր» էջ 226):

ԳՕԼԵԱՆ Աբրահամ Տ. Աբրահամ Գոլեան պրֆ. Կ. Պոլսոյ:

ԳՕԼԹԻԿ, հայաբնակ զդ. Մալաթիոյ, Պօնթիոյ Շիրոյի շուրջ. ունէր հայկական դպրոց:

ԳՕԼԻՅԻՆԻ տէրօրիստները եղած են Շանթ, կայծակ, Վարչակ (Գեմքերնիկ Տեւ «Հնչակեան Յուսագիր» էջ 264):

ԳՕԼՁԷՔԷՆԻ ԲԱԼԱՆԿԱՍ. հայաբնակ գիւղակի Երզնկայի:

ԳՕԼՕԼԵԱՆ Պողոս Տօքթ. ծնած 1870ին Կ. Պոլսոյ 1888ին ուսուցիչ:

Մէրպէ Բեան վարժարանի, ապա Ճրանսա անցնելով՝ բժիշկ. վկայական ստացած Բարիզի բժշկանոցէն: Բարիզի առաջին հայ «էնթէզ»-ը: Բժշկական համով հոտով յօդուածներ հրատարակած «Հայրենիք»-ի, «Մասիս»-ի, «Արեւիք»-ի և Ա. Զօպանեանի «Ծաղիկ»-ին մէջ. հեղինակ «Մալո-Տսֆր. ՊՕԼՕԼԵԱՆԻ գիրք» զուարճալի



բժշկութեան և Traité de Therapeutique des maladies mortelles et nerveuses-ի, այս վերջինը Տօք. կառնիէի հետ պատրաստած: «Ասլոնի Գիրք»-ին սկիզբը կայ ընդարձակ և հմտալից յառաջարաննամակ մը ուսուցչապետ Պէրպլերեանէ: Ունի բժշկական բազմաթիւ յօդուածներ, «Վօնէա տը լ'էնթէթիլէ է տը լ'Աքատէմի տը Մէրսիսին» մէջ. կ'աշխատակցի «Արլիվ տը Նէվոօթի»-ի և մասնագիտական «Փօսթիլէ»-երու: Անդամ Բարիզի «բժշկահոգեբանական Ընկ.եան» և բժիշկ Բարիզի Տրդ շրջանակի «Փոստադարձ Օգնութեան Ընկ.եան»: Ամուսնացած է ազնուատոհմ Ֆրանսուէի մը հետ: (Թեոդիկ՝ «Ամենուն Տարեցոյց»-ը 1911, էջ 254):

ԳՕԼՕԼԵԱՆ Վարդան, յեղափոխական գործիչ ծնած է Վան 1887—8, Թիֆլիս ապրած, համալսարանաւարտ. ուսուցիչ Սալմաստի գիւղերուն մէջ:

ԳՕԱՊՐԵՅԳԵԱՆ Վահան. բժիշկ, 1911ին Շահնապար Որբունիի հետ «Գրիչ» ամսաթերթը կը հրատարակէ:

ԳՕՄՕԹԻՆԻ կամ Կիւմիլիճեան, քզ. Յունաստանի, Թրակիոյ մէջ: Հին գաղութը, որուն կազմակերպութեան ճշգրիտ թուականը յայտնի չէ՝ եկած է Էտիրնէէն, Ռոտոթոթոյէն, Մալկարայէն, մաս մ'ալ Գաղատիայէն: Կը հաստատուի որ 1840 — 1850ի առնները այս գաղութը կը բաղկանար 25—30 հայ ընտանիքներէ որոնք ունէին իրենց դպրոցն ու եկեղեցին: Հայկական թաղը հաստատուած էր քաղաքին արեւելակողմը: Հին գերեզմանատան մէջ 1839 թուականով տապանաքարեր կան: Հին արձանագրութիւններէն կը հաստատուի որ Գոմօթիւնի գաղութը 260, մինչև 290 տարուայ հնութիւն ունի առանց ազգային կազմակերպութեան:

Առաջին եկեղեցին շինուած է 1834ին ըստ հետեւեայ արձանագրութեան. «Շնորհիւ Տեառն, շինեցաւ Ս. եկեղեցիս, առաջնորդութեան Մեսրոպ եպս. Թրակիանապոլսոյ և Հոգարարձութեամբ Եղուպ աղա Եղուպեանի, յամի Տեառն 1834 Նոյ. 25»: Դպրոցը 1880ին շինուած է, բայց ասկէ առաջ ունեցած են տեղւոյն Հայերը ուրիշ դպրոց մը ուր քահանաները Նաբեկ և Սաղմոս կը կարդացնէին:

Գոմօթիւնի հայ գաղութը մինչև 1912 Նոյ. 7 թուրք տիրապետութեան տակ ապրեր է. Նոյ. 9ին հայ կամաւորական վաշտը՝ հրամանատարութեամբ Անդրանիկի և Դարեգին Նժդէի քաղաք կը մտնէ Պուլկար յառաջապաններու հետ: Պուլկարները մինչև 1913 Յունիս 20 Գոմօթիւնի կը մնան, երբ Գալաթայի, Տէւէ-Աղաճի Գոմօթիւնի Հայերը և Պուլկարները խուճապահար Պուլկարիա կը փախչին՝ ցամաքի ճամբով Պուլկար բանակին հետ. մաս մը Հայեր ալ՝ Սեյանիկ: Պահ մը Գոմօթիւնի կը գրաւուի Յոյն բանակին կողմէ, (1913 Յուլիս 13) իսկ քիչ ետք Թրքական կամաւորական զունդ մը քաղաք մտնելով «Ղարպի Թրակիա» անունով անկախ կառավարութիւն մը կը հիմնէ, որուն կեանքը կարճ կ'ըլլայ: Գոմօթիւնի կրկին Պուլկարներուն ձեռքը կ'անցնի յետոյ (1913 Օգոստ. 11), ի վերջոյ (1920 Մայիս 14—15ին) երբ Դաշնակիցները Թրակիայէն կը քաշուին՝ քաղաքը Յոյն բանակին և կառավարութեան կը յանձնեն:

Գոմօթիւնի հայ գաղութը կը բաղմոնայ 1922 Սեպտ. 30ին, երբ Թրակիոյ պարպումով Յունական բանակին կողմէ, հոտ կը հասնի Թրակիոյ բոլոր քաղաքներէն հայ գաղթականութիւն մը:



Թրակիացի կամ Փոքր Ասիացի, այս վերջինները ապաստանած ըլլալով այդ քաղաքները:

Նորագոյն գաղթականութիւնը կը կազմեն՝ Թրակիոյ, Պրուսայի, Նիկոմիդիոյ, Ասապազարի, Պանարմայի, Աֆիօն Գարա-Հիսարի, Պիլէճիկի և Պօլուի չըջաններէն Հայեր: Նորագոյն գաղթականութենէն առաջ, Գոմօթիինի հայ գաղութին թիւն էր 109 ընտանիք, որուն վրայ բարդուեցաւ նորագոյն գաղթականութիւնը 491 ընտանիքով, գիւղերն ու քաղաքը միասին, որով գաղութի ընդհանուր թիւը հասաւ 600 ընտանիքի՝ 2085 անդամներով: 1924ին հայ բնակչաց մէկ մասը 321 ընտանիք Պելուպոնէս քաղաքացաւ մաս մ'ալ Հայաստան մեկնեցաւ ու մնաց մօտ 750—800 հոգի:

Գոմօթիինի հայ գաղութը ունի իր դպրոցը 130-140 աշակերտով և երեք բաժանումով, կան մշակութային միութիւններ և քաղաքական կուսակցութիւններ: (Մանրամասն տես՝ Ա. Մակարեանի «Յուճազիր» էջ 396—415):

ԳՕԹՈՒԼ, լեռ Այրարատայ Արագածոտն գւ.ի: ԳՕԹՈՒՆ ԿէՉԻՏ, հուսն կուր գետոյն, Պարտաւրի մօտ:


ԳՕՆՏԱ կամ Գոնեսա Վալիլ, ասիկա անունն է Ռումէն այն մեծանուն փիլիսոփային, որուն հայ մը ըլլալը՝ նոր յայտնութիւն մ'ըն է թէ՛ Ռումէն ժողովուրդին և թէ՛ մեզ՝ Հայերուս: Ռումանիոյ ժԹ. դարու մեծագոյն դէմքերէն համարուող այս անձը — օրէնսգէտ, հրապարակագիր, ուսուցչապետ և փիլիսոփայ — հայ քահանայի մը զաւակն է:

Օգտաւ Մինար, Ռումէն գրագէտ մը, ապշեցնող մանրամասնութիւններով ներկայացուցած է Գոնետայի կենսագրութիւնը, 1200 էջնոց ստուար հատորի մը մէջ: Փափաքելի էր որ այս գիրքը՝ եթէ ոչ ամբողջութեամբ, գոնէ ամփոփումով մը թարգմանուէր հայերէնի, իր մէկէ աւելի շահեկանութեան համար:

Յետագայ շատ ամփոփ տեղեկութիւնները կը քաղեմ Մինուրի այս արժէքաւոր հատորէն:

Գոնետա ծնած է 1845 Նոյ. 15ին. Պեսարապիոյ Գահուզ գիւղին մէջ, ուր ան կ'անցնէ նաև իր պատանութիւնը: Վերջէն, իր ծնողները, նիւթական շատ համեստ միջոցներու տէր մարդիկ, իրենց զաւկին բարձր կրթութիւն մը տալու մտահոգութիւնով՝ կը փոխադրուին Թըրկուլ-Նէամց կոչուած գիւղաքաղաքը, ուր Վասիլ, ղեռ ինը տարեկան, կը մտնէ նախակրթարան: Ան այս դպրոցը կը լրացնէ չորս տարիէն:

Յետոյ, հայրը զայն կը ասնի Եաշ և կը դնէ Մինայէլէի Ակադեմիին, ուր երկու տարի վերջ՝ Վասիլ կը ծանօթանայ հուշակաւոր ղերասան Լուփէսկուի հետ: Վասիլ կ'ընդհատէ իր ուսումը և կը մտնէ անոր խումբին մէջ, իբր յուշարար: Երկու տարի կը շարունակէ այս գործը: Յետոյ, ձանձրացած, նորէն ափ կ'առնէ գիտութեան դռները, և այս անգամ կը գտնէ Եաշի համալսարանը: Կաւարտէ անոր դասընթացքը և կը գրէ իր չըջանաւարտի թէզիսը Այս գրութեան մէջ է որ առաջին անգամ կը յայտնուի Գոնետայի ճանճարը: Գոնետա իր այդ ուսումնասիրութիւնով կը յայտնէ շարք մը տեսակէտներ, որ յայտնած էր մեծանուն անգլիացիին Հերբըրդ Սպէնսըր, որու գործերուն, սակայն, անձանօթ էր ան. որովհետև Սպէնսըր նոր էր տակաւին, և իր գործերը թարգմանուած չէին ֆրանսերէնի:



Վ. Ա. ՍԻԼԷ ԳՕՆՏԱ

Ուսման պապակը ղեռ վառ՝ Գոնետա կ'երթայ Ենվերս, Պելճիգա, բարենպատակ ընկերութեան մը ծախսովը. հոն կը հետևի համալսարանի առեւտրական ճիւղին: Միաժամանակ կը յաճախէ նաև Պիւլքսէլի համալսարանը ուսանելու համար իրաւագիտութիւն, և կարճ ժամանակամիջոցի մը մէջ (1869—1872) կ'աւարտէ այս երկու դասընթացքներն ալ:

Այս միջոցին ուսուցչութեան հրաւէր կը ստանայ Եաշի առեւտրական վարժարանէն. կը մերժէ, որովհետև ղեռ նպատակ ունի երթալու Անգլիա, Գերմանիա և Իտալիա և ուսումնասիրելու այդ երկիրներն ու անոնց լեզուները:

Վրայ կը հասնին, սակայն, դժուարութիւններ: Նիւթական միջոցներու պակասը մէկ կողմէն — զինքը զրկող բարենպատակ ընկերութեան տուած գումարները չէին բաւարարեր կեանքի իր ամենատարրական պէտքերն իսկ — և քայքայուող առողջութեան մը տագնապը միւս կողմէն, կը ստիպեն որ անիկա վերադառնայ Եաշ: Իբր իրաւարան Եաշի մէջ կը ստանձնէ քանի մը դատեր. բայց տեսնելով որ օրէնքը կը գործէ միշտ խեղճերուն և աղքատներուն դէմ և



արդարութիւնը կը մնայ միշտ չորսացուած թըռչունը, զոլուանքով կը հեռանայ և կը լքէ իրաւարանաման ասպարէզը:

Կու գան տխրութեան և լիկումի օրեր: Չհասկըցուած և չմարտուած՝ իր շրջապատէն, Գոնտա կը խզէ իր յարաբերութիւնները մարդոց հետ և կ'ապրի առանձնացած կեանք մը:

Այս միջոցին զրի կ'առնէ իր կարգ մը երկերը: որոնք հրատարակութեան կը արուին շատ չանցած: Ասանց գլխաւորն է Ճակատագրապատեան Տեսութիւնը: Կարեւոր գործեր են նոյնպէս Տիեզերական Շարժումը և Բնագանցագիտութեան փորձերը: Ժամանակակից ուսմէն յայտնի զբաղէտներ, ի շարս որոնց նաև նեկրուցցի և Ալեքսանտրին, առանձին հիացումով կ'արտայայտուին այս երկասիրութիւններուն մասին:

1877 Յունիս 20ին, կրթական իշխանութիւնները Պուքրէշի մէջ, քուէարկութեամբ մը, որու մէջ ամենաշատ քուէ ստացողը կ'ըլլայ Գոնտա, զայն կը նշանակեն ուսուցչապետ Քաղաքիական Իրաւունք ճիւղին, Եաչի համալսարանին մէջ: Գոնտա այս պաշտօնը կը վարէ չորս տարի: Այնուհետև, նորէն քուէարկութեամբ և առաւելագոյն քուէով՝ ան կը հրաւիրուի Պուքրէշի համալսարանը: Բայց կը մերժէ այս հրաւերը, չուզելով փնաս հասցնել իր այն երկու ուսուցչապետ բարեկամներուն, որոնք պաշտօնէ պիտի արձակուէին, եթէ ինք ընդունէր իրեն եղած առաջարկը:

1879—1881 Գոնտա կը նետուի լրագրական կրկէսը և կը սկսի խուլ պայքար մը «ազատական» կուսակցութեան դէմ: Ասոր կը հետևի իր ընտրութիւնը ուսմանական խորհրդարանին՝ Մոլտովայէն: Այստեղ անիկա կը բոլորէ փայլուն շրջան մը: Կը խօսի այնպիսի ճառեր, որոնք հիացումի կ'արժանանան նոյնիսկ թագաւորին կողմէ: Նախարարապետ Եիօնէլ Պրաթիանու տեսնելով այն ոյժը, որուն Գոնտա տիրացած էր պարլամենտին մէջ, կը փորձէ զայն առնել իր կուսակցութեան մէջ, առաջարկելով անոր ժողովրդական լուսաւորութեան նախարարի պաշտօնը: Եւ Գոնտա կը դառնայ նախարար:

Շուտով ծայր կու տայ հակառակորդներու պայքարն ու սաղրանքները: Գոնտա զզուած այդ բոլորէն, և ընկճուած զինք կրծող հիւանդութեանէն, կարճ ժամանակ մը պաշտօնավարելով կը հրաժարի: Կը ստանձնէ Գերագոյն դատարանի դատաւորի պաշտօնը: Այս պաշտօնին մէջ ևս երկար չի մնար ու կ'անցնի, Պիդա, Իտալիա:

Պիդայէն կարճ ժամանակ մը վերջ կը վերա-

գառնայ Թումանիա, իր հայրենիքը, ուր կը մեռնի 1882 Ապրիլ 21ին, 37 տարեկան դեռ երիտասարդ հասակին մէջ: Կը թաղուի Եաչի «Յաւիտենութիւն» գերեզմանատունը, ուր կանգնուած է շքեղ յուշարձան մը իր շիրմին վրայ:

Թումաններ այսօր Գոնտան կը նկատեն ԺԹ. դարու իրենց ամենամեծ ազգային դէմքերէն մէկը, ինչպէս են էմինէսքու, Կրէանկա, և և Ռոզետտի: Անգամ համաշխարհային հռչակ ունեցող միտքեր, ինչպէս՝ Օտտօ Հիէրման, Ճօն Լըպօք, Ջիլէր, Էնստ Էէքէր, Պիլսնէր, Էէրբերտ Սպէնսէր և Չարլզ Դարվին, ու բազմաթիւ ուրիշներ: որոնց հետ թղթակցութիւններ է ունեցեր Գոնտա իր ողջութեան, գնահատանքի և հիացումի խօսքեր ըսած են իր մասին: (Յ. Խաւմանեան՝ «Ամերիկահայ Հանրագիտակ Տարեցոյց Բ. Տարի 1926, էջ 147—155»):

ԳՕՇ Մեծ Թաւր կամ Գօցայ վանք տե՛ս Գեօրգի վանք:

ԳՕՁ ՀԻՍԱՐ, զղ. Սերաստիոյ, 6 ժամու ճանապարհ հեռի, 1902ին 200 ա. բնակիչ ունէր: Հայերը 150 ա. էին և ունէին Ս. Յակոբ եկեղեցի մը և վարժարան:

ԳՕՊ ՈՒՆԵԱՆ Մանուկ Յ. ծնած է Կիւրին 1851ին: Չաւկին (Մկրտչի) հետ առեւտրական գործով երկար ատեն պարապել է ետք՝ 1910—1ին կը հիմնէ տպարան մը Մեծ Նոր խան (Պոլիս), լոյս ընծայելով «Ասդ Բերլինեմի» կրօնաբարոյական պարբերաթերթը՝ (1911—12, 9 թիւ միայն)՝ իր խմբագրութեամբ: (Թեոդիկ՝ «Տիպ ու Տառ» էջ 132):

ԳՕՐ ՈՒՆԵԱՆ Մարտիրոս, խմբագիր, ծնած է Պոլիս 1900 Նոյ.ին: Նախնական կրթութիւնը Գոմգարուի Դրսի Պօղոս-Վառվառեան աղգ. վարժարանին մէջ ստանալէ յետոյ յաճախած է «Նոր Դպրոց», և ապա իր երկրորդական ուսումը ստացած է Բօպէրթ Գօլէճի մէջ: Կանուխէն ընդգրկած խմբագրական ասպարէզը Երկար տարիներ իբր մնայուն խմբագիր աշխատած է «Ժամանակի» և այլ թերթերու մէջ: 1934ին հիմնած է «Թուրքիա» քաղաքական մեծ օրաթերթը, որ ատեն մըն ալ «Ժամանակի» հետ միասնաբար հրատարակուելէ յետոյ դադրած է: Իր խմբագրած թերթերուն մէջ ստորագրած է քաղաքական և ազգային նիւթերու շուրջ այժմէական յօդուածներ կուռ և ուժեղ ոճով մը: Ազգային կեանքի վերաբերեալ իր տեսութիւնները մասնաւորաբար քննադատական բնոյթ կրած են: Մ. Գօլունեան 1936էն ի վեր որպէս մնայուն խմբագիր մաս կը կազմէ «Սօն Փոսթա»ի խմբագրական մարմինը:



ԳՕԶՈՒՆԵԱՆ ՄԵԼԻԲ, արածնատէր - խմբագիր «Ժամանակ» օրաթերթի: Ծնած է Պոլիս 1908ին: Երջանաւարտ Պէդագոգեան իսէէն: Իր գործունէութիւնը սկսած է և կը շարունակուի խմբագրական ասպարէզին մէջ: Ութը էջ հրատարակուող միակ օրաթերթն է «Ժամանակ», որուն վարչական և խմբագրական պատասխանատուութիւնը ստանձնած է Մ. Գօշուենեան, պահելով անոր ժողովրդական չէզոք ուղղութիւնը:

ԳՕԶՈՒՆԵԱՆ ՄԻՍԱԲ, վիպագիր հրապարակագիր: Ծնած 16 Սեպտ. 1863 Հայէպո Նախնական կրթութիւնը ստացած է Կիւրիինի Ազգ. յետոյ Այնթապի «Կիլիկեան» գիշերօթիկ դպրոցները: Վերջինէն շրջանաւարտ 1877ին: Մանկութենէն օժտուած գործնական միտքով մը, կանուխէն նետուած է առեւտրական ասպարէզ, անցնելով Կեսարիա, ուրկէ Պոլիս (1831), ապա Եօզղատ, կրկին Հայէպո, Քիլիս և Այնթապ, իսկ 1886 Հոկտ. 16ին վերջնապէս հաստատուած Պոլիս: Պահ մը Գուճգարու վարժարան բացած է «Հեթումեան» անուն որ երկու տարուան կեանք ունեցած է, յետոյ պաշտօնավարած Թօփալեան վաճառատունը: Իր Ա. գրուածքը՝ Կեսարիայէն Մելիքեանի «Հայրենիք»ին զրկուած թղթակցութիւն մըն է (Սիսակ Գօշուենեան), իսկ անկէ առաջ «Մանկը» թատերաստան անտիպո Այնթապ ուսանող եղած ատեն՝ դասընկերներուն հետ «Բիւրակն» անուն զպրօցական թերթ մը հրատարակած է ձեռագիր, 1 տարի: Քէյֆսիզեան Մկրտիչ կաթողիկոսի հիմնած «Կիլիկեան» վարժարանի մէջ սիրելի աշակերտն էր Նշան Թէրզեան անուն Սերաստացի հայերէնի ուսուցչին, որ առաջին Հայն էր երկրագործութիւնը սորվելու համար գաւառէն Եւրոպա անցնող, մինչ անոր բուն նպատակն էր յեղափոխութիւնը հասունցունելու՝ Լօղանի մէջ: 1891-ին երբ «Մանգումէ»ի արտօնատէր Կ. Փանոսեան կաթուած ունեցաւ, մասնախումբ մը թերթին խմբագրական եւն. ամէն ճող յանձնեց Քասիմի, որ 500 մը հազիւ ծախուող այդ լրագրին սպառումը բարձրացուց 3500ի, նոյն ատենի թրքաբարբոսու հայաթերթի մը համար մեծ բան: Բայց տիտուր մատնութեամբ մը «Մանգումէ» գոցուեցաւ և ինք խիստ հարցաքննութիւններէ դժուարաւ պրծելով՝ անցաւ էրէյլի, Ունճեանի հիմնած հանքածուխի ընկ.եան վարիչ հաշուակալի պաշտօնով զոր տարի մը շարունակելէ ետք դարձաւ Պոլիս 1894ին, մտնելով «Սապահ» խմբագրատուն՝ իրր վարիչ պաշտօնեայ: 1887ին սկսած է կանոնաւորաբար թղթակցիլ «Նոր Դար»ի Անուշաւան ծածկանունով: Նոյն ատեններուն էր

որ «Արեւելք»ի մէջ գրած է «Անկլիզան եկեղեցին և Մկրտիչ Եպո.» յօդուածը շանկան, յուզելով նոյն եկեղեցիին՝ Կիլիկիա հիմնուելուն պարագաները: Յետոյ ծայր տուած է Թե ինչո՞նքերու շարքի մը (Ա.ը «Թէ ինչո՞ւ չեմ ամուսնանար»), ուր ընկերային և ընտանեկան շատ մը հարցեր իրենց լուծումը կը գտնէին բարացուցական զուարթատոճ ոճով մը որ զայն ստորագրողին նկարագիրը կը յատկանշէ արդէն. (եթէ երբեք սակայն ստորագրութիւն կրէին անոնք, զի շատ մը յօդուածներ անստորագիր պահելու մեծամոլութիւնն ունի ցարդ): Այդ յօդուածները Նշան Պերպէրեան խմբած էր իր Տարեցոյցներուն մէջ: Օր մը Մ. Մամուրեանի ուղղելով անհատական նամակ մը խմբագրելուն, անկէ ստացած գրուատալից պատասխանէն քաջալերուած՝ Քասիմ սկսած է թրքթակցիլ «Ա. Մամուլ»ի (իր գրած ծածկանունին) կնքահայր ունենալով մեծանուն իզմիրցիին, պատկերելով Պոլսահայ ազգ. կեանքը, որուն իրր լրացուցիչ՝ Շահնուր իր խայթնամեղ թղթակցութիւնները կ'երեւցունէր յաճախ: Աւելցունենք թէ առոնց քննադատական ուղղութեան մօտեցող՝ Վալիլուկ մը յաջորդեց, նոյն պարբերականին վերջին ասորներուն: Քասիմ 1887ին գրած է Մեգարսա պիւր իզսիլան թրք. թատերաստան մը, Գալաֆեանէ վճարուած իր առաջին երկը զոր շարած է՝ հիմայ ծանօթ գոհարափաճա Սիսակ Աշճեան (ան ատեն գրաշար՝ Գալաֆեանի քով): Քասիմ 1896ին կարգուած է սկերիչ Կարապետ Քիւրքեանի աղջկան Օր. Արտէմի հետ և կնքած երջանիկ ամուսնութիւն մը զոր ցարդ կ'երգէ՝ ի դէպս պարագայի՝ իր խմբագրականներուն մէջ: Զարդի տարին. ինչպէս շատ մը Հայեր՝ ինք ևս մատնուեցաւ նիւթական ճախողանքի: Այդ թուականին է որ դիմած է Թիֆլիսի Հրատարակչականին, Կեանքի տեսաբան խորագիրով նոր ձեռագիրներ յղելով և պրակ գրուի 3 ոսկի ստանալով: «Մանգումէ» երբ վերջնապէս անցաւ Յովհ. Գալաֆեանի, թերթին խմբագրութիւնը յանձնուեցաւ Քասիմի որ նոր



ՄԻՍԱԲ ԳՕԶՈՒՆԵԱՆ (Քասիմ)

որ «Արեւելք»ի մէջ գրած է «Անկլիզան եկեղեցին և Մկրտիչ Եպո.» յօդուածը շանկան, յուզելով նոյն եկեղեցիին՝ Կիլիկիա հիմնուելուն պարագաները: Յետոյ ծայր տուած է Թե ինչո՞նքերու շարքի մը (Ա.ը «Թէ ինչո՞ւ չեմ ամուսնանար»), ուր ընկերային և ընտանեկան շատ մը հարցեր իրենց լուծումը կը գտնէին բարացուցական զուարթատոճ ոճով մը որ զայն ստորագրողին նկարագիրը կը յատկանշէ արդէն. (եթէ երբեք սակայն ստորագրութիւն կրէին անոնք, զի շատ մը յօդուածներ անստորագիր պահելու մեծամոլութիւնն ունի ցարդ): Այդ յօդուածները Նշան Պերպէրեան խմբած էր իր Տարեցոյցներուն մէջ: Օր մը Մ. Մամուրեանի ուղղելով անհատական նամակ մը խմբագրելուն, անկէ ստացած գրուատալից պատասխանէն քաջալերուած՝ Քասիմ սկսած է թրքթակցիլ «Ա. Մամուլ»ի (իր գրած ծածկանունին) կնքահայր ունենալով մեծանուն իզմիրցիին, պատկերելով Պոլսահայ ազգ. կեանքը, որուն իրր լրացուցիչ՝ Շահնուր իր խայթնամեղ թղթակցութիւնները կ'երեւցունէր յաճախ: Աւելցունենք թէ առոնց քննադատական ուղղութեան մօտեցող՝ Վալիլուկ մը յաջորդեց, նոյն պարբերականին վերջին ասորներուն: Քասիմ 1887ին գրած է Մեգարսա պիւր իզսիլան թրք. թատերաստան մը, Գալաֆեանէ վճարուած իր առաջին երկը զոր շարած է՝ հիմայ ծանօթ գոհարափաճա Սիսակ Աշճեան (ան ատեն գրաշար՝ Գալաֆեանի քով): Քասիմ 1896ին կարգուած է սկերիչ Կարապետ Քիւրքեանի աղջկան Օր. Արտէմի հետ և կնքած երջանիկ ամուսնութիւն մը զոր ցարդ կ'երգէ՝ ի դէպս պարագայի՝ իր խմբագրականներուն մէջ: Զարդի տարին. ինչպէս շատ մը Հայեր՝ ինք ևս մատնուեցաւ նիւթական ճախողանքի: Այդ թուականին է որ դիմած է Թիֆլիսի Հրատարակչականին, Կեանքի տեսաբան խորագիրով նոր ձեռագիրներ յղելով և պրակ գրուի 3 ոսկի ստանալով: «Մանգումէ» երբ վերջնապէս անցաւ Յովհ. Գալաֆեանի, թերթին խմբագրութիւնը յանձնուեցաւ Քասիմի որ նոր



ուժեր իր շուրջը խմբած՝ տարուէ տարի աննախընթաց կերպով ժողովրդական դարձուց դայն, թէ և թերթը քանիցս դադրեցուեցաւ զրաքննութենէն, և արտօնատէր ու խմբագրապետ բանտուեցան ստոր զրպարտութեանց հետեւանօք որ ընթացիկ նորոյթն էին Հին Ռէժիմին: Այդ ժողովրդականութեան նպաստեցին իր թերթօն-վէպերը: Նարեկի թարգմանութիւնը, Ե. Տէր Անդրէասեանի, Ժ. Շիրակացիի, Յակոբ Տէր Յակոբեանի և այլոց մշտապէս պաշտակցութիւնը, մանաւանդ այն ոգին որ օրուան զանազան հարցերու շուրջ քողարկեալ քննադատութեանց մէջ կը յածէր միշտ: Իր խմբագրապետութեան շրջանը տեւած է մինչև Սահմանադրութեան հռչակում, որմէ յետոյ 15 Հոկտ. 1908ին, հիմնեց իր առաւօտեան թերթը «Ժամանակ» զոր ցարդ կը շարունակուէր: Երկերը 1. «Կեանքի տեսարաններ» (տպ. Թիֆլիս 1897). 2. «Սորհրդաւոր Աղջիկը», 3. «Տունէն ներս», 4. «Կարապետ» (գրէժխընդիրը), 5. «Ժողովուրդին գիրքը», 6. «Աշխարհաբարձարեկ», նաև «Ինչզանդիօն»ի, «Մանգումէ»ի, ու «Ժամանակ»ի մէջ թերթօնուած ընդհ. և ազգ. այլ վէպեր՝ Բախսախնդիրը, Ժաւանգորդը, Կննոս նանգոյց մը, Ոսկինբու նամբուն վրայ, Կրակին մեզէն եւայլն: (Թեոդիկ՝ Ամ. Տարեցոյց»ը 1912 էջ 380):

ԳՕՁՈՒՆԵԱՆ Մկրտիչ, Կիւրինցի, իր Մանուկ հօրը հետ Պոլիս գալով ատեն մը առեւտրական գործով կը զբաղի. կ'անցնի Պէյրուէթ, ուր 1924-ին Պէյրուէթի մէջ կը հրատարակէ իր արտօնատէրութեամբ և պատասխանատուութեամբ նոր փիւնիկ «ազգային, քաղաքական» կիսաշաբաթաթերթը:

ԳՕՁՈՒՆԵԱՆ Սարգիս, ծնած է Հայէս 1867 փետրուարին և Քիլիսի ազգային վարժարանը ստացած է իր նախնական կրթութիւնը: Եղբոր Միսաքի հետ 1886ին Պոլիս գաղթելով՝ իր գլխաւոր զբաղումը րամ Պոլսոյ բոլոր թերթերուն ծանուցմանց բաժինը՝ 1895-էն սկսեալ: Եւրոպական մեծ տուներու պմէն լեզուէ ազդեր Պոլսական լրագրաց մէջ առաջին անգամ



ԳՕՁՈՒՆԵԱՆ ՍԱՐԳԻՍ  
ընդհանրացնողի փառքն

իրեն կը վիճակի: Սարգիս Քասիմի հիմնած ժամանակ օրաթերթին վարչական գործերը վարած է և անոր մահէն ետք արտօնատէր եղած է: Սարգիս պատասխանատու տնօրէն եղած է 1912—3 Պոլսոյ մէջ «Ժամանակ» օրաթերթի փոխարէն լոյս տեսած (74 թիւ միայն) օրաթերթին: (Թեոդիկ՝ «Տիպ ու Տառ» էջ 126):

Սարգիս Գօշուենեան վարած է նաև ազգային պաշտօններ, ատենապետած է Ազգ. պատրիարքարանի Ելեմօից Հոգարարձութեան և մեռած 1926ին Պոլսոյ մէջ:

ԳՕՈՒՆԵԱՆ Գեորգ. շրջանաւարտ Պոլսոյ Անտառաբանական վարժարանէն 1870ին:

ԳՕՎԱՆ Էլիզ. Թիքեմեհեան Էլիզ:

ԳՕՎԱՆՏԻՔ հայաբնակ գղ. Խնուսի (Տուրուբերան), 1902ին 1000էն աւելի բնակիչ ունէր:

ԳՕՎՈՒԳ կամ Քուպուզ, ամայի գղ. Այրարատայ Բազրիւանդ գու. մէջ:

ԳՕՎՈՒԳ ՓէլիՏ, գղ. Նիկոմիդիոյ առաջնորդական վիճակի մէջ: Ունէր (1902ին) Գեղամեան անուամբ երկսեռ վարժարան մը 40 աշակերտով: Կը կոչուէր նաև Գեղամ զիւզ:

ԳՕՏԱՌԻՃ. գղ. Չարսանձաղի առաջնորդական վիճակի մէջ, 1902ին ունէր վարժարան մը 30 աշակերտով:

ԳՕՐԱԳԱՐԱՍ. Գորաղարա:

ԳՕՐԱՆ Մանգիկ, հայ դերասանուհի անգլիական բեմին վրայ: Տնս ՅԱԻԵԼՈՒԱԾՐ:

ԳՕՐԳՈՒՆ, գետ և ծովահովիտ Լեւոնային Կիլիկիոյ:

ԳՕՐԻ կամ Կորի, գլ. քղ. համանուն գու.ի, Տփղիսի նահանգի մէջ: Ծինուած Վրացիներէն ժ.բ. դարու սկիզբը: 1902ին ունէր 1470 տուն բնակիչ 8000 հոգի, որոնց 3500ը Հայեր էին, մընացեալները՝ Վրացիք, Ռուսք: Քաղաքիս 9 եկեղեցիներէն 5ը Հայոց էին և 3 եկեղեցիներու մէջ միայն ժամերգութիւն կը կատարուէր, իսկ երկուքին մէջ երբեմն՝ իբրև ուխտատեղի: Հայերը մէկէ աւելի նախակրթարաններ ունէին. ունին նաև Մարիամեան անունով Օրիորդաց ուսումնարան մը, հիմնուած 1870ին:

Տեղւոյս Հայք Անիի գաղթականներ են, բայց կորուսեր են իրենց մայրենի լեզուն և Վրացերէն կը խօսին: Հայոց եկեղեցիներէն մին Ս. Ստեփանոս՝ երկյարկ է և կը բաղկանայ երկու եկեղեցիներէ: Գորիի սահմանաց մէջ հին աւանաց և եկեղեցիներու շատ աւերակներ կան, նշանաւոր է Ուփլոսցիիս գուտ հայաբնակ զիւզը՝ բլրի մը



մը մօտ. այդ բլրի գագաթը կը տեսնուին խիստ հին ժամանակները կակուղ քարի մէջ փորուած քաղաքի հետքեր:

ԳՕԲԻ, գո. Տփղիս նահանգի մէջ, որուն մէջ կան 70է աւելի գիւղեր՝ որոնց բնակիչք կամ ամբողջովին կամ մասամբ հայ են: Ամբողջ գաւառին մէջ, հաշուելով նաև քաղաքի բնակիչները Հայոց թիւը կը հասնէր (1902ին) 15147 հոգւոյ, բաժնուած 2860 տան:

ԳՕԲԻՆՁՈՒԿ կամ Գեօրնջակ, հայաբնակ գղ. Գուգարար, այժմեան Պոռչալու գաւառի մէջ, գեղեցիկ և զուարճալի դիրքով: Նրջապատեալ անտառներով ու ծաղկազարդ լեռներով: Ունի Ս.

Գէորգ անուամբ համակ կոփածոյ քարերով շինուած եկղ. մը. զոր զարդարած և ճոխացուցած է ներքուստ և արտաքուստ հայազգի աղնուականն Գէորգ Եսայիան Փիթօեանց: 1902ին գիւղս 30 տուն բնակիչ ունէր:

ԳՕԲՈՒ, հայաբնակ գղ. Սիւնեաց Հաբանդ (Զանգեզուր) գո.ի մէջ: Ունէր (1902ին) 516 բնակիչ, բաժնուած 56 տան:

ԳՕԲՈՒՆ, սակաւարնակ գղ. Այրարատայ կողմիտ գո.ի մէջ, և Բագրեւանդայ առաջնորդութեան ներքև: Այժմեան վիճակն անձանօթ:

ԳՕԲՕԳ, գղ. Ռումանիոյ Դէզուջ գո.ի, ուր քանի մը տուն Հայեր կան:



ԳԱԴԻՍԹԷՈՍ յոյն սպարապետ Չ. դարու կիսուն, որուն բանակին մէջ էին Արտաւան, Յովհաննէս Քօշ և Ներսէս հայազգի զօրավարները:

ԳԱԴԵԱՆ Խաչիկ, վրդ. միաբան Ս. էջմիածնի, որ երևան հանեց Զուարթնոց եկեղեցւոյն մնացորդ քանդակները. աե՛ս ՅԱԻԵԼՈՒԱՅՐ:

ԳԱԴԻ, Խորայ կամ խուրոյ վանք, կը գտնուի Արցախի Սաչն գու.ի մէջ, Թարթառ գետի ձախակողմը: Վանքս առաջին անգամ հիմնարկած է, ըստ աւանդութեան, Թաղէոս Առաքեալի Դադի անուն աշակերտի անուամբ: Կոչուած նաեւ Սուրբայ վանք, խուրի մը վրայ շինուած ըլլալուն համար: Անյայտ է շինութեան թուականը, վասնզի հետզհետէ նորոգուած է վանքս, և իր մէջ գտնուած բազմաթիւ արձանագրութիւնք, վերջին նորոգութեանց և շինութեանց յիշատակարաններ են: Արձանագրութեան մը համեմատ, ՈԼԱ (=1182) թուին վանացս վանահայրն էր Վախթանկ թագաւորազնի որդի Գրիգոր եպ. առ որ գալով կրօնաւորեցան իր եղբայրն Հասան, և եղբօր կինը Մամա թագուհին: Յետոյ ՈԿԳ (=1214) թուին թագաւորազն Վախտանկի բարեպաշտ տիկինը Արզու Սաթուն, չորս սիւներու վրայ կառուցանել կու տայ սրբառայ քարերով վանացս կից հրաշալի եկեղեցի մը, և իր յիշատակարանը գրել կու տայ հարաւային որմի վրայ արտաքուստ Վանքիս եկեղեցին, ինչպէս ըսինք, և գաւիթը Արզու Սանուր շինել տուած է այն նպատակաւ, որ ծառայէ իրրև հանգրուան Վախտանկեան տոհմին: Գաւթի մէջ ամփոփուած են Վախտանկ թագաւորազնի, Արզու Սաթունի, Հասանայ, Գրիգորի, Մամքանայ, և Զաքարիայ, Աթանաս, Յովհաննէս, Գրիգոր կաթողիկոսներու և Սարգիս եպ.ի մարմինները. ասոնց տապանաքարերը ունին արձանագրութիւններ: Վանքս յաջորդաբար Վախտանկեան տոհմէն վերջ, Դոփեանց տոհմի պայազատներէն շէն մնացեր է: Այս տոհմէն Վահրամ իշխանի որդի Սարգիս եպ.ի ձեռքով շինուած է վանացս գեղեցիկ գանգակատունը: Զանգակատան մօտ, արեւելեան կողմէ կան երկու մատուռներ, որոց մէջ աչքի կը զարնեն երկու հիանալի ձարտարաքանդակ խաչեր՝ հանդերձ արձանագրութեամբք: — Վասակ նահատակի որդին Գրիգոր եպիսկոպոս, շինած է վանքիս մէջ ուրիշ գաւիթ մը անտաշ քարերով: Հասանի որդի Գրիգոր եպիսկոպոսն ալ շինած է

ուրիշ եկղ. մը չորս սիւներու վրայ, որ վանքէս քիչ հեռու է և կը գտնուի խղճալի և անմաքուր գրութեան մէջ: Վանքս ներկայիս միաբան չունի:

Այլեայլ ժամանակաց մէջ, ինչպէս արձանագրութիւնք կը յայտնեն, զանազան իշխաններէ վանացս նուիրուած ահագին կայուածներն, անտաներն և հողերը յափշտակուած են, և վանքս օրաւոր քայքայման և աւերման ենթակայ է: Վանացս մօտ ժամանակաւ կար Խոր անուամբ գիւղ մը, որ ունէր մօտ 300 տուն բնակիչ, որոնք գաղթեր են Երևանի կողմերը և հոն հիմներ ԵՆԻՉԱ գիւղը և յետոյ տեղափոխուեր են Շուլավերի կողմերը: Դադի վանքին վար Թարթառի ձախակողմը կայ քարայր մը, որուն մուտքը գետնի երեսէն է: Լուսահողի Բաղտասար մետրապոլիտի կենդանութեան օրով Քէօլանի մահմետական որսորդ մը քօշ մը կը զարնէ որ թաւալազոր կ'անյայտանայ: Ետեէն կը հասնի որսորդը և կը տեսնէ որ քօշը ընկած միջոց՝ ջարդուեր են այրի բերանի փաած փայտերն, այրի մէջ ընկած է որսը, ուր և շարուած կան շատ գրքեր: Որսորդը առնելով գրքերէն մին կ'աճապարէ Շուշի, կը յայտնէ Պաղտասար մետրապոլիտին, որ պարգև կու տայ որսորդին և ձեռագրերը Շուշի փոխադրել կու տայ: Այս գրչագրերու մէջ կայ եղբր ընտիր Մաքսոց մը՝ գրուած Ս. Մետրոպի աշակերտ Ստեփանոսի ձեռքով որ այժմ կը պահուի Ս. էջմիածնի մէջ: (Եփրիկեան՝ «Յնագիտութիւն», քաղուած Բարխուդարեանցի «Արցախ»էն, էջ 203—210): Տե՛ս Խորայ վանք:

ԳԱԴԵԻ, Դադոյի կամ Դադուի վանք: Սիւնեաց վանքերէն մին, կը յիշուի Քաշաթաղքի մէջ:

ԳԱԴԻ-ԲԷԿԵԱՆՅ ՎԱՆՔ, կիսաւեր վանքս կը գտնուի Արցախի Կիւստան գիւղէն վար, ինչպէս գետի աջ կողմը: Մենաստանիս մօտ կան միաբանից սենեակներ և հանգստարան: Զախին ցահասակ անուամբ գիւղատեղի, հանգստարան եւ կիսակործան փոքր եկղ. մը կայ վանացս հիւսիսային կողմը, Պարնապատ անուն անտառի մէջ, իջնայ ձախ կողմը:

ԳԱԴՈՒՄԵԱՆ Գ. պատ. խմբազիր 1934ին Արազդայանի մէջ լոյս տեսնող Հարվածայից վոյսխարաբոյձ պարբերաթերթի:

ԳԱԺԳՈՅՆՔ, հին և մեծ աւան Սիւնեաց նախջաւան գու.ի մէջ, Երասխայ եղերքը, Մասեաց



լերան արեւելեան կողմը, այժմ կը մնան միայն աւերակները: (Էփրիկեան՝ «Բնագիտութիւն»):

ԳԱԱՆԻԿ, գղ. Տիգրանակերտի 1,6 է գ. ի Բէչար գաւառակի մէջ. քանի մը տուն հայ կար:

ԳԱԱՆՈՍ, յոյն Մազիստրոս, որ 994ին յունական և հայկական գնդերով Եգիպտացւոց դէմ պատերազմեցաւ Վասիլ Բ. կայսեր հրամանով: ԳԱԱՌ, գղ. Տուրուբերանի:

ԳԱԱՐԻՍ կամ Ածուղ, հին գղ. Տուրուբերանի Ապահունեաց գ. ի մեղ ծանօթ է պատմութեան մէջ: Ըստ Փաւստոս Բուզանդայ, երբ պարսից զօրավարը Վարադ մեր Տիգրան թգ.ը կապուած Դալարիս բերաւ և հրամայեց որ ածուղ բերեն երկաթ տաքցնելու համար և Հայոց արքային աչքերը խարկուէ՝ զիւղս այն ատենէն Ածուղ կը կոչուի: Վարդան պատմիչ Ածուղ կը գրէ, իսկ Սաեփան Ասողիկ՝ Արնիկայ:

ԳԱԱՐԻՆՔ, գղ. Սիւնեաց շահուկ գ. ի յ  
ԳԱԱՐՁՈՐ կամ Դալար, գղ. Սասուն Շատախի գայմազամութեան ներքեւ. 1902ին 30 տ. բն. ունէր. մեծ մասը Հայ և մնացեալը Քուրա:

ԳԱԱՐՍ, զիւղակ Սպարկերտ գ. ի ի Մոկս. եկղ. Ս. Գէորգ:

ԳԱԻՂԱՐՎԱՇ կամ Տեխի Գաւառ, գղ. Սիւնեաց Գեղարքունի գ. ի մէջ: 1902ին ունէր 3100 հայ բնակիչ (315 տուն): Բակիչք բնակչութեամբ կոչտ ու կոպիտ. գուցէ այդ պատճառաւ զիւղս Դալիարգաւ (գիծ եղբայր) կը կոչուի: Եկղ. Ս. Սաչ. զիւղին ծայրը կայ նաև Ծաղկավանք եւ Ս. Գեորգ երկու մատուռ. կայ նաև Թուխ Մանուկ կոչուած մատուռ մը: Գերեզմանատան խաչքարերը ունին արձանագրութիւններ՝ վերջին շարուց վերարեբնալ թուականներով:

ԳԱԻՀՈՐ գղ. Սասնոյ, որուն իշխանն էր 1912-ին Արուշ:

ԳԱԻՔ, հին գղ. Սիւնեաց Կոլասական գ. ի:

ԳԱԽԱՐԵԱՆ, հին գղ. Կոլասական գ. ի

ԳԱԽՆ, հին գղ. Սիւնեաց Բաղք գ. ի:

ԳԱԿԱ, զիւղաքաղաք Հնդկաստանի ուր քանի մը հայ ընտանիքներ կ'ապրին (Գրպ. Տարեցոյց 1927 էջ 71):

ԳԱՀԱՐՈՒ, հայաբնակ գղ. Շիրակ գ. ի, 1902ին ունէր 700 բնակիչ, որոնք Շիրակի զանազան կողմերէն գաղթած են: 1868ին կառուցած են քարայէն Ս. Յովհաննէս եկեղեցին. ունին նաև դպրոց:

ԳԱՀՐԱԶ, հայաբնակ գղ. Արցախի Վարանդա գ. ի. Եկղ. Ս. Աստուածածին, կառուցուած է Սողոմոնեան Բաղտասարի և Աղամեան Դաւիթի ծախքով: 1902ին 500 բն. ունէր:

ԳԱՀՐԱԻ, գղ. Արցախի Սաչնի գ. ի Եկեղեցին Ս. Յովհաննէս, 1902ին 800 բն. ունէր: Մօտը

կայ նահատակի մը զերեզմանը, վրան մատուռ մը:

ԳԱՂ ԱՌԱԻԵՂԱՆ, Ղեւոնդեանց օրով (452ին):

ԳԱՂԱՌԱՆՅ. ուսանայ բանասէր, 1893ին Պերլինի մէջ հրատարակած է իր և աւարտածա՝ «Հիմնարկութիւն Բաղրատունեաց պետութեան ի ձեռն Աշոտոյ Բաղրատունեոյ» (գերմ. լեզուով): Յ. Դաղբալեան իր բանասիրական յօդուածները և ուսումնասիրութիւնները հրատարակած է «Հանգէս Ամսօրեայ» ի մէջ: Իր երկերն են.

1. Փ. Բիւզանդացի եւ իւր պատմութեան խաղախոյրը: Քննութիւն Մ. Խորենացու աղբիւրների մասին: (Ազգ. Մատեն. Իթ): Վիեննա, Միսիթարեան տպարան, 1898, 172 էջ:

2. Լիակատար բառարան Ռուսերէնից Հայերէն: Կազմեց Յ. Դաղբալեան: Պրակ առաջին: Թիֆլիս տպ. Կ. Մարտիրոսեանցի, 1902, 144 էջ: Բ. պրակ 145—280 էջ: Գ. պրակ 281—400 էջ, կ'աւարտի 1906ին:

3. Լիակատար բառարան Հայերէնից Ռուսերէն: Տպ. Թիֆլիս 1905,

Դաղբալեան 1927ին Ռուսերէն-Հայերէն բառարանին երկրորդ հրատարակութեան կը ձեռնարկէ Թիֆլիսի մէջ, մասնաւորապէս ճոխացնելով «Երես պատերազմեան» գիտական բառերով: Տե՛ս ՅԱԻԵԼՈՒԱԾՐ:

ԳԱՂԵԹ ԽԱԶԻՆ, հայաբնակ գղ. Տփղիսու գ. ի մօտ. 1902ին 1700 հայ բն. ունէր եկեղեցիով եւ զպրոցով:

ԳԱՂԵԹ ՓՈՒՐ, Տփղիսու գ. ի մէջ. ուր քանի մը տուն հայ կայ:

ԳԱՂՁԱՆՈՅ Տ. Եարփուղու:

ԳԱՄԱԻԹ, կրկին զիւղեր կը յիշուին Թուրք և Դմուսիք գաւառներու մէջ:

ԳԱՄԱՍԿՈՍ կամ Շամ, գլխաւոր և նշանաւոր քղ. համանուն կուսակալութեան Պատերազմէն առաջ 150000 բնակիչ ունէր, որուն 110000ը մահմետական էին, 8000ը հրեայ և մնացեալը այլեւայլ ազգէ քրիստոնեայ 1860ի կոտորածէն առաջ 30 տունի չափ բնիկ հայ բնակիչ կար եւ բաւական թուով պանդուխտ հայ վաճառականներ: 1902ին 500 հողի հայ կար. մինչև 1929 Դամասկոս Երուսաղէմի թեմ կը նկատուէր:


Դամասկոսի արեւելակողմը պապ շարքիի դրան մօտ, պարիսպին կից կայ Ս. Սարգիս վանքը որ նախապէս Երուսաղէմի վանքին կալուած կը նկատուէր և եղած է Երուսաղէմ ուխտի գացողներու կայան:

Կը նկատուի որ այս վանքը իր կայան հին դարերէ մնացած է: Եօթներորդ դարուն մէջ Սահակ Բ. կաթողիկոս Չորափորեցին երեք ասարի



Դամասկոսի մէջ կը հաստատէ իր բնակութիւնը. Քէոզորոս Ռչտունի զօրապետը Դամասկոս կը հաստատուի և հոն կը մեռնի Վանքիս շինութեան թուականը յայտնի չէ, որովհետև 1860ին հին վանքը հրոյ ճարակ եղած է եւ ներկայս վերստին շինուած է 1864-6ին, անկէ առաջ Գրիգոր Պարոնտէր պատրիարքի օրով կը վերանո-

նորէն և կ'ուսննայ 13000 հայ տարագիր ժողովուրդ: Դամասկոսեան ծանօթ դէպքերուն (1925) 6-7000 Հայեր կը հեռանան այլուր: Ապստամբական շարժումները դադրելէ ետք՝ տակաւ կը վերադառնան և դարձեալ անոնց թիւը կը հասնի 8000ի, որոնք եղած են Սիւրիահայաբան և կը վայելեն ֆրանսական հոգաբար և տեղական արար կառավարութեանց բարիքները: (Սուրիանայ Տարեգիրք 1929 եջ 222):



Դամասկոսի Ս. Սարգիս վանքը

րողուի վանքս 1617ին և 1786ին Գրիգոր պարք. Շղթայակիրի օրով կրկին կը նորոգուի: Վանքիս հին առաջնորդներէն ծանօթ են (ըստ Աղաւնուների Սրբազանի) Ստեփանոս արեղայ (1694ին), Պետրոս վրդ. (1786):

«Ընդհանուր պատերազմին (1915) Դամասկոս եղած է մեծ գաղթական մը Հայաստանի եւ կիլիկիոյ ամէն կողմերէն եկած: Ըստ արձանագրութեան նոյն թուականին գաղթականութեան համագումար թիւը եղած է 30000է աւելի: Զինադադարին (1919) գաղթականները կը մեկնին կիլիկիա: կիլիկիան Ճրանասացւոց կողմէ պարսղութուն (1921—2) Սուրիոյ ուրիշ վայրերու նման Դամասկոս ևս անմասն չմնաց հայ գաղթական-

1936ին Դամասկոս ունէր 6500 անձ Առաքելական եկեղեցւոյ զաւակ, 1110 բնտանիք, իսկ թեմին մէջ կայ 8 հայաբնակ գիւղ 1615 բնակչով: Բացի Ս. Սարգիս Առաջնորդանիստ եկեղեցիէն կայ նաև մատուռ մը Ս. Լուսաւորչի նուիրուած Վահեայի թաղին մէջ:

Կրթական տեսակէտով, լուսագոյն թեմը կարելի է նկատել Դամասկոսը, վարժարաններու գոյութիւնը ապահովուած է Հ. Բ. Ը. Միութեան առաւելագոյն չափով օժանդակութեան շնորհիւ: Դամասկոսի մէջ կայ երկու աղգային վարժարան, մէկ կաթոլիկ և մէկ բողոքական: Աղգային վարժարաններու (Թարգմանչաց և Սահակեան) մէջ 600 երկսեռ աշակերտ կ'ուսանին: Հայ կաթոլիկ վարժարանը ունի 50—60 երկսեռ աշակերտ, իսկ բողոքականաց հայ վարժարանին մէջ կ'ուսանին 180—200 երկսեռ աշակերտ:

Քաղաքս օժտուած է մշակութային և այլ հայրենակցական ու կուսակցական միութիւններով:

ԴԱՄԲԱԼՈՅ, գղ. Տիգրեսու նահանգի, Դուչէթի գաւառի մէջ, 1902ին 20 ա. հայ և 12 ա. վրացի կ'ապրէին:

ԴԱՄԲԱԼՈՅ, կը յիշուի Գուգարաց Բողոքոտոր դո.ի մէջ:

ԴԱՄԻՐՉԻԼԱՐ, այլազգարնակ գղ. Գուգարաց Բողոքոտոր դո.ի մէջ, ժամանակին հայաբնակ եղած է. կան հայկ. հանգոտարան և եկեղեցի:

ԴԱՅԵԿԻ ՔԱՐ, քարաբլուր Սիւնեաց վայոց ձոր դո.ի մէջ:

ԴԱՅԼԱԵԼՈՒ, այլազգարնակ գղ. Սիւնեաց վայոց ձոր դո.ի մէջ: Ուրիշ մ'ալ Շապահօնք դո.ի մէջ:

ԴԱՅԼԱՅԻԿ, երկչարաթաթերթ՝ Զուռնա թերթի փոխարէն. լոյս տեսաւ Պոստոն 1910ին՝ (երկու թիւ մ'իայն):

ԴԱՅԼԱՅԻԿ (Հնչակեան կուս.) «Կոհակ»ի փոխարէն լոյս տեսաւ Կ. Պոլիս 1914ին. խմբ. Հմ. Արամեանց:

ԴԱՅՄԱ-ԴԱՂԼԸ, գղ. Աղուանից կոկիսոն դո.ի, բն. 80 գաղթած այլեայ տեղերէ:

ԴԱՆԱԲՈՒՐՈՒՆ, գղ. Զարսանճաղի Մեծկերտ



գաւառակի մէջ. 1902ին 18 ա. հայ բն. ունէր:

ԳԱՆԻԷԼ (Ս.) զեառակ Խնուսայ (Տուրուքերան), որ կ'ուռզէ Ախրդեման զրախտանման ընդարձակ մարգագետինը:

ԳԱՆԻԷԼ (Ս.) ՎԱՆՔ, հինաւուրց վանք կեսարիոյ Ս. Կարապետի վանքին մօտ, 10 վայրկեան հեռու, Պալակէսի գիւղին վարը գտնուած փոքրիկ գեղատեսիլ ձորակի մը եզերքը, հարթ տեղւոյ մը վրայ կառուցուած էր պարսպապատ վանքս խիտ մրգաստաններու մէջ թաղուած ակնապարար համայնապատկերով մը:

Այս վանքին հիմնարկութեան թուականը անծանօթ է. Ոմանք մինչև քրիստոնէութեան Ա. դար կը բարձրացնեն վերագրելով զայն Թաղէոս առաքեալին («Հայ Վանօրայք», 65) որ իբր թէ 38ին կու գայ Կեսարիա քարոզութեան և այս վանքին տեղը կը զնէ աւաղան մը և կը մկրտէ շատերը: Մինչև վերջը ցոյց կու տային աւաղան մը որ կանչուէ էր և առհասարակ Թաղէոս Առաքեալի աւաղան կը կոչուէր:

Կեսարիոյ և չրջակայից Հայերը երբ վարդափառին Ս. Կարապետ և Ս. Դանիէլ վանքերը ուխտի կ'երթային իրենց անկնունք զաւակները այդ աւաղանին մէջ մկրտել կու տային (ձիվան Աւրղեան, «Վրպանի Տարեցոյց» 1932 եղ 185—95):

Աւանդօրէն կը պատմուէր նաև թէ Ս. Գր. Լուսաւորիչ իր ձեռնադրութենէն յետոյ, Սեբաստիոյ ձամբով Հայաստան զարձին կ'այցելէ այս աւաղանին և կը հրամայէ անոր կից յանուն Տիրպօր Ս. Կուսին մատուռ մը շինել (նոյն):

Այս աւանդութիւնը կ'երևայ թէ Յունաց մէջ ալ արձագանգ գտած է. վասնզի իբր թէ Տափալարխոն յունական վանքին մէջ դահուած Քրիստոսի 1295 թուականով յունարէն կանօնիզմոսի (=կանօնագիր) մը յիշատակարանին մէջ գրուած էր հետեւեալը. «Յովնաննէս Կարապետի մեկասաննէս հազիւ հիւնց վայրկեան հեռու կը գտնուի Հայոց Ս. Ասուածածին մատուռով Գանիէլ մեկասանը, որ Գ. դարուն կառուցուած է Հայ իտալաններու կողմէ. Ս. Գրիգորի ձեռնադրութեան առիւ շինուած, Հայոց սեփականացեալ վանք մըն է»:

Յունական ձեռագիրը, որուն վաւերականութիւնը կասկածելի կը գտնեմ, վասնզի 1295ին դեռ այս վանքին Ս. Դանիէլի անունով կոչուած ըլլալը հաւանական չէ — ինչպէս պիտի տեսնուէր— արձագանգ կ'ըլլայ դարաւոր աւանդութեան մը, որ բոլորովին զուրկ չէ հիմէ, վասնզի որոշ է թէ այս վանքը հին առին Ս. Ասուածածին անունը կրած է և ունեցած՝ այս անունով մատուռ մը

որ մինչև վերջը կը մնար (ձիվան Աւրղեան, նոյն) վասնզի վատրանդին (Մասիս բ. 3848) կ'ըսէ թէ «Կար was մատուռ մը յանուն Ս. Ասուածածնայ



Կեսարիոյ Ս. Գանիէլ վանք

ուր ապա գալով Օւիկ ոմն իտալան ի Կիլիկիոյ կը մնայ անց եւ ի յիւստակ որդւոյ իւրոյ Գանիէլի՝ կը կոչէ եկեղեցին յանուն Ս. Գանիէլի Մարգարէին: Թէ ո՛վ էր այդ Օւիկ՝ յայտնի չէ»: (Տե՛ս նաև Էփրիկեան «Բնագիտարհիկ»): Ոմանք գայն կը ներկայացնեն Վասպուրականի Սենեքերիմ թագաւորին Դանիէլ անուն կրտսեր եղբօրը որդին Սենեքերիմ ինչպէս որ Սեբաստիոյ մէջ Ս. Նշանի վանքը շինած էր՝ Կեսարիոյ մէջ ալ Ս. Ասուածածին վանքը կառուցած էր, ուր յետոյ առանձնացած է իր կրտսեր եղբայրը Դանիէլ՝ հրաժարելով, ի նպաստ իր Օշին որդւոյն, Գարմուկի (= Կէմէրէկ) իշխանութենէն, և չորս տարի յետոյ մեռած էր: Օշին լսելով իր հօրը մահը, կու գայ Կեսարիա և մեծ շքով կը թաղէ զայն եկեղեցիին աջակողմեան դասին կողմը հիւսիսային որմին կից: Օշին այս այս առթիւ ի յիշատակ իր հօրը, վանքը նորոգել կու տայ հիմնովին և կը ծաղկեցնէ մրգաստաններով և ծառատաններով. կը շինէ ուխտաւորներու խուցեր բարձրակառոյց ամարանոցներով և վանքը կը կոչէ յանուն Դանիէլի ճգնաւորին՝ Ս. Դանիէլի մենաստան: Օշին նոյնպէս կ'ուխտէ 8 տարին անգամ մը այցելել վանքը և իր հօր գերեզմանը: Տարիներ յետոյ Օշին իշխան կու գայ Ս. Դանիէլ և հոն հիւանդանալով կը մեռնի և կը թաղուի իր հօրը գերեզմանին կից: (ձիվան Աւրղեան):

Այս պատմութենէն զատ ինձի անծանօթ յիշատակարանի մը համաձայն, որ պ. ձիվան Աւրղեան իբր թէ Աւետարանի մը լուսանցքին վրայ գտած է «վանքն հիմնեալ ի Ս. Թաղէոս Ա-



աւախելոյն յանուն Ս. Կուսին Մարիամու Տիրամօր եւ ապա նորոգմամբ Օսնի արքայի Սեբասիոյ կոչելով յանուն եղբօր իւրոյ նոյնանորի Ս. Գանիէլ»:

Ինչպէս կը տեսնուի, անգամ մը Դանիէլ կ'ըլլայ եղբայր Սենեքերիմ Արծրունիի եւ Օշին անոր որդին, և անգամ մը Օշին՝ թագաւոր Սեբասիոյ և Դանիէլ անոր որդին, որով կը տեսնուի խառնակութիւն մը, անշուշտ այն պատճառով որ բոլոր ասոնք ուշ ժամանակներու մէջ գիրի առնուած զրոյցներ էին, և պատմական հիմնուէին, վասնզի ժամանակակից պատմիչներ երբեք չէին յիշեր այս անձերը, որոնք եթէ պատմական զէմքեր ըլլային, վանքին հիմնարկութիւնը ապահով ժ.Ա. դարու պառջին կիսուն կատարուած ըլլալը պիտի հաստատուէր:

Վարանդին սակայն, ինչպէս տեսանք, աւելի հաւանական տեսութեամբ մը Օշինը կը համարէ կիլիկեան իշխան մը, որ աւելի կը համաձայնի պատմական տուեալներու, վասնզի Օշին անունը այդ շրջանին գործածական էր: Vital Cuinet (էջ 318) այս Օշինը կը համարէ կիլիկիոյ թագաւոր (1308-1320) որ իր Դանիէլ որդւոյն հետ հոն թաղուած էր: Իսկ Արիս Գալֆայեան (Չօմախու, էջ 66) վանքին հիմնադիրը կը համարէ «ձգնաւոր Դանիէլ», որ «զաւակն էր Լամբրոնի Օսնի իշխանին»: Գերեզ մանին թուականն ալ կը պատշաճի այդ շրջանին: Այս գերեզմանին «տաճ և անճոռնի» գիրերով արձանագրութեան կարգադրուած մասն էր հետեւեալը, որ գիրերուն ձեւէն և պարզութենէն դատելով V. Cuinet (318) կը համարէ վաւերական «Ի քվ. ՉՁէ (=1338) փոխեցաւ Ոսնի... նա որ զաս կիրս (գիրս?) կարգա... նաւ մեր որ երկին աս... իր նոգուն...» (Վարանդիի ընթերցումը հետեւեալն է. «Ի մեծ Թ. Վ. Չ. Չ. Ե. Փոխեցաւ Ոսնի Ա. որ զայս կիրս կարգա նայր մեր որ երկին ասս նոգուն»)...

Հնագոյն գրաւոր յիշատակարանը որ Դանիէլ-Օշինի գերեզմանի վիճակագրական արձանագրութենէն յետոյ կը յիշէ իր ծագումը առասպելներու մէջ պարուրուած այս վանքը Սիմէոն զպիր Լեհացիի ուղեգրութիւնն էր: Ան 1617—8ին այցելած է այս վանքը «Ս. Դանիէլ անուն, յոյժ գեղեցիկ եւ պատկազան, վիմաւեկն եւ կամարակապ» («Հանդէս Ամսօրեայ» 1925, էջ 92), որ ինչպէս կը հասկցուի իր դրածէն՝ այն ատեն ունէր «Եպիսկոպոս մի եւ երկու մարագ (նոյն): Այս եպիսկոպոսը, որուն յաջորդներէն մէկը 1838ին ինքզինքն կը կոչէր «պատրիարք Ս. Ասուածամնի եւ պեւ առաքելոյն Պետրոսի եւ Պողոսի ասուածամնակ խորանացն (տես «Յուշակ հայերէն ձեռագրաց ի

Թուրքիա Ա. էջ 31), կ'երեւի թէ պահած էր այդ դարուն տակաւին նաեւ իր Ս. Ասուածամնի վանք կոչումը, և իր յատուկ առաջնորդութիւնը:

Յետոյ, ինչպէս տեսնուեցաւ ժ.Վ.Վ. դարերուն անկա կապուած է Կեսարիոյ և 1798ին դարձեալ առանձին առաջնորդութեան մը կեդրոն եղած էր, ենթակայ կիլիկիոյ կաթողիկոսութեան (տես «Հայ Կեսարիա» էջ 912), ինչպէս կը հաստատուի մասնաւորապէս կիլիկիոյ Միքայէլ կաթողիկոսին (1737—1757) 1749ի մէկ կոնդակէն Դաւիթ անուն վարդապետի մը յանձնեալ և ուղղեալ առ «Եկեղեցասէր բարեպաւտ հայկազունս», ուր վանքին հնութեան և վաւերականութեան վրայ շատ մը ներբողներ հիւսելէ յետոյ, կը յորդորէ նըպաստամատոյց ըլլալ վանքին շինութեան և նորոգութեան (Մասիս ք. 3848) և կիրակոս Ա.ի (1791—1822) 1791ի կոնդակէն և ձեռագիր երկու յորդորական և օրհնութեան գիրերէն...

Վանքին եկեղեցին Ս. Աստուածածին կը կոչուի, և շինուած է 1842ին, նախապէս զոյսութիւն ունեցող եկեղեցիի մը տեղը, ինչպէս կ'երեւայ արձանագրութենէն...

Այս եկեղեցին երեք տաճարեան հնաւանդ ձեւով, չորս սիւներու վրայ կառուցուած, փոքրիկ կաթողիկէ մը ունի: Ներքին պատերը գեանէն սկսեալ գրեթէ երկու մէթր բարձրութեամբ կուտինայի յախճապակիներով զարդարուած էր...

Վանքին մաս կը կազմէին նաեւ միաբաններու և ուխտաւորներու յատուկ 30—35 սենեակներ, բաւական կոկիկ հիւրանոց մը, մառան, խոհանոց եւ այլն, որոնք պատերազմէն առաջ կը ներկայացնէին նորոգութեան կարօտ վիճակ մը...

Պատերազմէն առաջ (1914), զրեթէ անչքացած վիճակ մ'ունէր, և պատերազմին առնելէն էր միաբանութիւն, այլ միայն հոն կը մնային փոխանորդ վրդ. մը՝ Գէորգ վրդ. Պոյաճեան եւ քանի մը սպասաւորներ և մշակներ:

Իսկ հիմա Ս. Դանիէլի պատմական վանքն ոչինչ կը մնայ, հիմնայատակ քանդուած ըլլալով: Օրհնեալ ձեռք մը, հայրենի յիշատակներու խնամոտ հոգածութեամբ, վանքին զխաւոր պատմական յիշատակարանը, Օշինի գերեզմանաքարը, կրցած էր փոխադրել Ս. Կարապետի վանքը, որ սակայն իր կարգին դրաւուելով այսօր ոչինչ կը մնայ մեզի աւանդութիւններով օժուէն այս վանքին յիշատակ: (Ալպոյանեան «Հայ Կեսարիա» 993—9):

ԳԱՆԻԷԼ Ա. մարգարէ, Յուդայի ցեղէն, մասնակ հասակին Հրէաստանէն Բաբելոն գերի տարուած երեք մանկանց՝ Անանիայի, Աղարիայի



և Միսայէլի հետ: Երկու անգամ առիւծներու գուրը նետուած է և անփնաս մնացած: Կը վախճանի 90 կամ 100 տարու: Հայ եկեղեցին կը տօնէ Յունիսին:

ԳԱՆԻԷԼ Ասորի (Ա.) աշակերտ Գրիգոր Լուսաւորչի, ռակից քահանայ ձեռնադրուեցաւ և քորեպիսկոպոս կարգուեցաւ, ձերութեան ատեն առանձնացած կը նստէր Տարօնի Հացեաց Դրախս վանքին մէջ: Յուսիկ կթղ.ի մահէն ետք (362) Հայոց նախարարները զինքը կաթողիկոս ընտրեցին և Տիրան թգ.ի հաւանութեամբ Տարօնէն Վաղարշապատ կոչեցին: Դանիէլ Տիրանայ ներկայանալով՝ յանդիմանեց զինքը՝ գործած անօրէնութեանց համար և ապաշխարել յորդորեց: Տիրան բարկացած խեղդել տուաւ սուրբ հայրապետը: Սրբոյն աշակերտները Շաղետա և Եպեփան, զինքը թաղեցին Հացեաց Դրախս վանքին մէջ: Հայ եկեղեցին կը տօնէ Յունիսին մէջ:

ԳԱՆԻԷԼ կրօնաւորք (սուրբք), մէկէ աւելի օտարազգի անապատականներ եղած են Դանիէլ անուամբ Դ-Ձ. դարուց մէջ. որոց կենսազրականը կայ մեր Յայտնաւորքի մէջ: Հայ եկեղեցին կը տօնէ Դեկտեմբերին մէջ:

ԳԱՆԻԷԼ Ա. կթղ. Սուրմառեցի, միարան էջմիածնայ և ըստ ուղիորութեան՝ առաջնորդ գացած էր Իջմիր, ուր հակառակորդներ ունենալով՝ Ղուկաս կթղ. իր տեղը նոր նուիրակ զրկած էր հոն Կեսարացի Մարտիրոս եղբ. իսկ Դանիէլ Ռումէլիի նուիրակ կարգուելով՝ 1799ին սկիզբները դարձած էր Պոլիս, ուրկէ կը պատրաստուէր երթալ էջմիածին, երբ Կ. Պոլսոյ պատրիարք ընտրուեցաւ: Իր առաջին գործն եղաւ արտօնել Սիմէոն կթղ.ի Տօնացոյցը, ապա ձեռնարկեց վերաչինել Ղալաթիոյ Ս. Լուսաւորիչ եկեղեցին, որ գրեթէ 29 տարի առաջ այրած էր: 1799 Սեպտ. 12ին սկսաւ եկեղեցւոյ շինութիւնը և Նոյեմբեր 13ին օծուեցաւ:

1799 Դեկտ. 28ին Ղուկաս Կարնեցի կթղ.ը վախճանած ըլլալով՝ էջմիածնայ միաբանները երկու ընտրելի ներկայացուցին, Կ. Պոլսոյ Դանիէլ պատրիարքը և Եփրեմ Չորագեղեցին, ապա հարկադրուեցան նաև իրր ընտրելի առաջարկել Յովսէփ եպ. Արղութեանցը՝ որ թէև կթղ. ընտրուեցաւ՝ բայց օծումը չառած վախճանեցաւ Թիֆլիսի մէջ 1801 Մարտ 19ին: Կաթողիկոսական արժողը գրաւեց 1801 Ապրիլ 28ին՝ Դաւիթ Ե. Էնէզէթցի Ղօրղանեան, սակայն 1801ին օրինաւոր կթղ. ընտրուեցաւ Դանիէլ Սուրմառեցին, 1802 Մարտ. 28ին Ալաշկերտի մէջ օծուեցաւ և Դաւիթի անկումէն ետք 1804 Սեպտ. 21ին էջմիածնայ արժողը գրաւեց և 4 տարի կաթողիկոսութիւն ը-

նելէ ետք 1808 Օգոստոս 21ին վախճանեցաւ Երեւանի մէջ: (Տարեցոյց Ազգային Հիւանդանոցի, էջ 163 եւ 395):

1802ին Պոլսոյ մէջ Հայելի Ծանօթութեան անուցով սեփակ մը հրատարակուած է Դանիէլ եւ Գալուստիոյ Դաւիթ կաթողիկոսաց վեներու ռուբ:

1939ի «Գալուստիոյ Տարեգրք»ին մէջ պ. Ներսէս Գասապեանէ հրատարակուած «Դիւան Պուլկարանայ Պատմութեան» մէջ (Գ.) յիշուած Դանիէլ Արք.ը, որ 1798 Փետր. 14ին Եաւ (Ռումանիա) ձեռնադրուիւն մը կ'ընէ՝ է ինքն Սուրմառեցին:

ԳԱՆԻԷԼ եպ. Ասորի, Ե. դարու սկիզբները կ'ապրէր Միջագետքի մէջ: Ս. Մեսրոպ հայ նշանագրերը հնարելէ առաջ Վահրիճ քահանան Դանիէլի զրկեց և յետոյ ինքն անձամբ գնաց քանի մը աշակերտաց հետ և չգոհանալով՝ Եղեսիա անցաւ Պղատսրի և կրկին Դանիէլի:

ԳԱՆԻԷԼ եպ. Չմեկածագու, 1342ի Սոսոյ մէջ գումարուած ժողովին ներկայ կը գտնուի:

ԳԱՆԻԷԼ վ. Տիգրանակերտցի, առաջնորդ Խոջավանքին՝ 1685ին:

ԳԱՆԻԷԼ վրդ. Սսեցի, 1342ի Սոսոյ ժողովին ներկայ կը գտնուի:

ԳԱՆԻԷԼ վրդ. որդի Կարապետ քհ. Սեւանայ կղզիէն. 1461ին Առաքել արեղային Քարոզչիբք մը կը գնէ:

ԳԱՆԻԷԼ սրկ. որդի Կարապետի, աշակերտ Զաքարիա փիլիսոփայի, 1404ին գրիչ Աղթամարէ մէջ:

ԳԱՆԻԷԼ բարունապետ որդի Կարապետ քհ., 1471ին Աղջոց վանքին մէջ ստացող ձեռագրի (աե՛ս վերը Դանիէլ վրդ.):

ԳԱՆԻԷԼ վրդ. Առաջնորդ Ամգայ, աշակերտ Դանիէլ հեռորի 1686ին

ԳԱՆԻԷԼ վրդ. 1692ին ստացող՝ Արցախի մէջ, կը յիշուի և 1718ին: 1719ին իրրև եպիսկոպոսի (հաւաճօրէն նոյնը վերնոյն հետ):

ԳԱՆԻԷԼ բարունի, շնորհող օրինակի Արասամ զրիւն՝ 1584ին, նոյնը կը յիշուի և 1609ին:

ԳԱՆԻԷԼ Գաբրիէլ (Báro Dániel Gábor) պարոն. եղբայր Էսէօփ, ծնած է 1854ին: 1878էն ի վեր երեսփոխան ընտրուած է Պուտարէշտի խորհրդարանին եւ փոխ-նախագահ. ինքն է որ խորհրդարանի կանոնները խորացուցած է. մեռած է 1915ին Պուտարէշտի մէջ:

ԳԱՆԻԷԼ ԵԱՆ Գեբեցիկ, ծնած է Երզնկա 1878ին, նախնական կրթութիւնը ծննդավայրին մէջ ստանալէ ետք Կարնոյ Սանասարեան վարժարանին մէջ կը ստանայ երկրորդական ուսումը եւ



յետոյ Գերմանիա կ'երթայ ճարտարագիտութիւն ուսանելու:

Դանիէլեան ընդհ. պատերազմէն առաջ Թու-



ԳԱՆԻԷԼԵԱՆ ԴԵՐԵՆԻԿ

մանիա կ'անցնի եւ կը հաստատուի Պուքրէշ Իր † Հայկ եւ Վահան եղբայրներու հետ սուրճի գործով կը զբաղի եւ մեծ զիրք կը գրաւէ իբրեւ պատուարբեր վաճառական: Միշտ մասնակցած է ազգային գործերուն, իր ջանքերով վերաբացուեցաւ Պուքրէշի Ազգ. վարժարանը 1920ին: Եղած է Հոգաբարձութեան, Թաղականութեան Թեմականի անդամ եւ ատենապետ ու մահուանէն առաջ Թումանյան Միութեան նախագահ եւ իր յաջ կառավարութեան ունեցած ազգեցիկ զիրքով օգտակար եղած է իր հայրենակիցներուն: Մեռաւ 1934 Մայիս 7ին:

ԳԱՆԻԷԼԵԱՆ ԷՆՈՒԿՕ պարոն, (báro Dániel Ernő) նախարար, ծնած է Թրանսիլվանիոյ Էլէմիր (Elemér) գիւղը 1843 Մայիս 3ին, միջնակարգ ուսումը ստացած է Թիմիշուարայի իսկ բարձրագոյնը Պուտարէշտի մէջ. 1870ին զինքը երաժիշտան ընտրեցին Պուտարէշտի խորհրդարանին, և անընդհատ


30 տարիէ աւելի երեսփոխան մնաց, 1894ին Առեւտուրի նախարար անուանուեցաւ. իր նախարարութեան օրով ու նախագահութեամբ 1896ին տեղի ունեցաւ Պուտարէշտի համալսարնային ցուցահանդէսը և այդ առթիւ Ֆէրէնց-Յովսէփ Աւստրո - Հունգարիոյ կայսրը պարոն տիրոջսով պատուեց Դանիէլեան Էռնէօն:



Սոր ծերութեան մէջ 80 տարու. 1923-ին վախճանեցաւ Պուտարէշտի մէջ:

ԳԱՆԻԷԼԵԱՆ ԷՐՆԷՕ

ԳԱՆԻԷԼԵԱՆ ԹԻԱՅՐ. զկա. պարոն (Dr. báro



ԳԱՆԻԷԼԵԱՆ ԹԻՊՈՐ

Dániel Tibor), որդի պարոն Դանիէլեան Էռնէօի, 1902ին Թրանսիլվանիոյ Տէժ քաղաքին (Կերլայի մօտիկ ուր շուրջ 30 տուն Հայեր կան) երեսփոխան ընտրուեցաւ:

ԳԱՆԻԷԼԵԱՆ ԼԵՈՒՆ, և ԳԱՆԻԷԼԵԱՆ ՀԵՐՍԻԼԻԱ նշանաւոր պարոններ Միացեալ Նահանգաց մէջ, քոյր և եղբայր: Քոյրը Հերսիլա՝ ծնած է 1911

Մարտ 31ին Պրիճփորթ (Conn), իսկ Լեոն ծնած է 1921 Հօկա. 31ին Նիւ Եորք: Զաւակներն են Յրանչիսքօ և Վարսենիկ Դանիէլեաններուն. երկուքն ալ իրենց մանկական օրերուն պարելու ցոյց տուած ճարտարութեամբ՝ շարունակեցին դաստիարակուելի Տիկին Սեղա Սիւնիի մօտ: 1935-ին աշխարհահռչակ Ballet Marter Mchail Mordkin նկատելով դեռառի պատանիներուն տաղանդը՝ զանոնք իր խումբին մէջ հրաւիրեց: Mordkinի խնամքով և դաստիարակութեամբ Լեոն և Հերսիլա շուտով սկսան ամերիկայ պարելու գեղարուեստին 1937ին, երբ Mordkis Balletը իր առաջին շրջանը կ'ընէր մեծ քաղաքներուն մէջ, ամէն ուրիք Դանիէլեան զոյգը ջերմագին կերպով զնահատուեցան Ամերիկայի թատերասէր հասա-



բակուբեան և մամուլի կողմէն, թատերական քննադատները շոայօրէն փառարանեցին այս խոստմնալից պատանիները:



**ԼԵՒՈՆ ԵՒ ՀԵՐՍԻԼԻՍ ԳԱՆԻԷԼԵԱՆՆԵՐ**

ԳԱՆԻԷԼԵԱՆ Հայկանու, երգչուհի, Միլանոյի երաժշտանոցէն ելած ու Ս. Հայաստան գացած: ԳԱՆԻԷԼԵԱՆ Մարտինու, (Dániel Márton) երեսփոխան Պուտարէշտի խորհրդարանին, ծնած է Եղիսարեթուպոլիս (Dumbraveni) Թրանսիլվանիոյ հայաքաղաքին մէջ,

1836 Սեպտ. 2ին: Նախնական կրթութիւնը ստացաւ ծննդավայրին մէջ, յետոյ Վիեննա երթալով համալսարանը աւարտեց ճարտարագէտի վկայական ստանալով և հարաւային Եւրոպոյ շատ մը երկիրները այցելեց: Կերկին Հունգարիա վերադառնալով պետական պաշտօն:



ԳԱՆԻԷԼԵԱՆ ՄԱՐՏԻՆՈՍ ներ ստացաւ, 20 տարի երեսփոխանութիւն ըրաւ Պուտարէշտի խորհրդարանին մէջ: Վերջը Նոպէլի ուղմբի գործարան են տեսչութեան անդամ ըլլալուն համար հրաժարեցաւ երեսփոխանութենէն: Միշտ պարծանքով յայտարարած էր հայ ըլլալը: Մեռաւ Պուտարէշտի մէջ 1906 Ապրիլ 17ին: («Armenia» 1904, էջ 356):

ԳԱՆԻԷԼԵԱՆ ՆԵՐՍԵՍ, եպ. ծնած է Եարփուզ

(Մարաշ) 1868 Մայիսին: Ուսումը աւարտած է Սամաթիոյ Սահակեան վարժարանը 1886ին, նախապէս 1883ին աշակերտելով Սիսի մայրավանքին: Երջանաւարտելէ ետք ուսուցչութիւն կ'ընէ Ատանայի մէջ: 1890ին Վեհապետեան Մկրտիչ եպ.էն վրդ. կը ձեռնադրուի: Մինչև 1895 Առաջնորդական փոխանորդ Իսկէնաէրունի: Հայկական ղէպքին՝ իբր Զէյթունի ապստամբութիւն կազմակերպող՝ 1896ին 7 ամիս կը բանտարկուի Հայէպ: Ներման արժանանալով՝ կ'աքսորուի Դամասկոս: Յետոյ Օրմանեան պատրիարքի բարեխօսութեամբ կը բերուի Պոլիս ուր 1898-էն սկսեալ պատրիարքին անձնական քարտուղարութիւն կ'ընէ և 10 տարի Սկիւտարի քարոզչութիւն: Երկիցս կը ձերբակալուի և 1905 Յուլի 8ին Ելլաբլի դժոխային մեքենային ղէպքին պատճառաւ դարձեալ կը ձերբակալուի և Վեհապետեան սրբազանի հետ 3 գիշեր ի դիպանջ կը մնայ Ելլաբլի ուրկէ ազատ կ'արձակուի: 1907ին Կիլիկիոյ Ս. Կաթողիկոսին և Օրմանեան պատրիարքի երաշխաւորութեամբ Սիս կ'ուղեւորի: Կիլիկիոյ ջարդէն ետքը Մարաշի և Էրզրոյի պատերազմական տեսանի առջեւ կը դատուի իբր գործակից Մուշեղ եպ.ի: Հակառակ իր սահմանադրասէր զգացումներուն՝ որով Հաճընի ինքնապաշտպանութեան առթիւ 600 իսլամներու կեանքը պաշտպանած էր, երեքուկէս ամիս բանտերու մէջ տառապելէ ետք ազատ կ'արձակուի:

Դանիէլեան եպ. իբրև զբող՝ հետևող եղած է Խրիմեան Հայրիկի, որմէ վարձատրուած լանջախաչով: Սասկան Վարդ ծածկանունը ընդունած է Հայրիկէն: Կր ստորագրէր նաև Սասկան վարդապետ: 1910ին Հաճընէն Ատանա փոխադրուած է Առաջնորդական պաշտօնով: 1914ին Ծաղղատ կը մեկնի իբրև Առաջնորդ: Եպիսկոպոս ձեռնադրուած է 1911 Մարտին: Եղած է Ս. Գ. Հնչակեան՝ յառկանութեն: Ներսէս եպ. Դանիէլեան զոհ եղած է Եոզղատի արիւնալի սպանդին:



Աշխատակցած է շատ մը թերթերու երկերն են՝ Կեանք Առանց Հաւատքի քարոզչութիւն և Կարի մը Զուր Այրած Մեքու՝ հրատարակուած: Անտիպներ՝ Կեանք Առանց Յոյսի և Առանց Ներսէս եպ. ԳԱՆԻԷԼԵԱՆ



Սիրոյ, Կաթողիկոսութիւն Հայոց Կիլիկիոյ, Կիլիկիոյ Հայոց Գաւառաբարձար, Արիւնոս Մար, Սրբի Սփոփանք, Վերջին Լեւոնի Ողբերգը: (Գալուսեան՝ «Մարտ» էջ 68: Տե՛ս նաև «Ամ. Տարեցոյց 1911»):

ԳԱՆԻԷԼԵԱՆ Շմաւոն, բնիկ Գարամանցի, զաւակը խոնարհ ընտանիքի մը: Իր միջնակարգ ուսումը ստացած է Գոնիայի ճէնանեան Գոլէճին մէջ, 1915ի ընդհ. պատերազմի շրջանին կը միանայ անգլիական բանակին, իրրե պարզ թարգման, բազմաթիւ ուրիշ Հայերու հետ: Զինադադարէն ետքը շատեր կը հանուին իրենց պաշտօնէն և ոմանք ալ կը լքեն իրենց ասպարէզը. սակայն պ. Գանիէլեան, արդէն հասած զինուորական բարձր պատիճանի, մեծապէս կը գնահատուի իր գերադաս մարմիններէն, շնորհիւ իր անբիծ և անկաշառ նկարագրին: Աշխատած է առաւելապէս Միջագետքի շրջանին մէջ, զինադադարին և անկէ ետք, ուր հանդիսացած է իրրե աննկուն պաշտպանը հայ զաղթականութեան: Գանիէլեան բաւական ատենէ ի վեր Եսֆա հաստատուած է. իր զինուորական ծառայութեան 20 ամեակի աւթիւ 1936ին՝ ոչան-

դիկացիի համար բացառիկ պատիճանի է հասած՝ շնորհիւ իր հուլատարմութեան եւ ստացաւ բարձր շքանշան մը — «Անդամ Բրիտանական Կայսրութեան կարգին»: Այս պարագան 1937 Յունուար 12ին պաշտօնագրով մը իրեն հաղորդուեցաւ վարչապետ Պոլտուինի անձնական քարտու-



ԳԱՆԻԷԼԵԱՆ ՇՄԱՒՈՆ

ղարին կողմէ: Երկրորդ պաշտօնագիրով մ'ալ թագաւորին անձնական քարտուղարէն ստորագրուած՝ հաղորդուեցաւ թէ՛ փետր. 19ին Պրէքինկէ՛մ պալատին մէջ պիտի կայանայ նշանաբաշխութեան արարողութիւն մը, ուր թագաւորը անձամբ պիտի բաշխէ շքանշանները, եւ առ այդ Քէփթըն Դանիէլեան ալ կը հրաւիրուի ներկայ գտնուելու յիշեալ արարողութեան:

ԳԱՆԻԷԼԵԱՆ Վարսեիկ, (ծն. Գուլիճանեան), ծնած է Թիֆլիս 1897ին: Աւարտած է Թիֆլիսի Յովնանեան վարժարանի ուսուցչանոցը և իրրե

ուսուցչու՛նի պաշտօնավարած է Կոլկասի հայ վարժարաններու մէջ: Պատերազմի ընթացքին շրջագայած է Տանկահայաստան՝ զաղթականներու կազմակերպման գործով: Ամուսնանալէ ետք Ֆրանչիսկո Դանիէլեանի հետ՝ Ամերիկա զաղթած է 1917ին, ուր աշխատակցած է անդւոյն հայերէն թերթերուն՝ իր գողտրիկ գրուածքներով: Ներկայիս (1938) որպէս ուսուցչու՛նի կը պաշտօնավարէ Նիւ Եորքի հայ վարժարաններու մէջ:

ԳԱՆԻԷԼԵԱՆ Ֆրանկիսկո, (Frank Daniels), ծնած է Սարգերդի Սուլէ (Թըլկարին) գիւղը 1887ին: Իր նախնական ուսումը առած է անդւոյն Ֆրանսական դպրոցը: 1906ին Ամերիկա զաղթած է. 1909ին մասնակցած է Ամերիկեան Արմատական շարժման: William D. Haywood ուրիշ ընկերներու հետ կազմակերպած է գործադուլներ՝ Ամերիկայի ամէն կողմերը: Իրրե գործիչ I. W. W.ի (National Organizer) երկար տարիներ շրջագայած է Ամերիկայի շատ մը նահանգները և յաճախ բանտարկուած՝ իր ծայրահեղ Արմատական քարոզներուն համար: 1915ին մասնակցելով Ամերիկահայ առաջին կամաւորական խումբին՝ մեկնած է Հայաստան: Մասնակցած է զաղթականներու կազմակերպման գործին և Վարսեիկ Գուլիճանեանի հետ ամուսնանալով՝ 1917ին Ամերիկա վերադարձած է: Իր զաւակներն են նշանաւոր պարոզ՝ Լեւոն և Հէրսիլիա:

ԳԱՆԻԷԼԵԱՆ Խ. պատասխանատու խմբագիր 1932ին Թային հրատարակուած Բալթիկիյան Դրոսով հնգօրեայ թերթին:

ԳԱՆԻՇՄԱՆ կամ Դանւման, այլադգարնակ գղ. Այրարատայ Բասնն գո.ի, Հասանդալէի մօտ:

ԳԱՆՈՒԲ, հանդէս եօթնօրեայ, ասպ. Ռուսոնք 1891—2, տէր և խմբ. Մ. Ս. Թիւթիւնճեան:

ԳԱՆԳՈ Ե. Տիսնիքական խմբագիր 1929ին Երեւանի մէջ լոյս տեսած Հոկտեմբերիկ մանկական ամսագրի:

ԳԱՇԱԼԹԻ, կամ Բարսակ, հայարնակ գղ. Շուշիի 1902ին 150 տ. հայ բն. ունէր. ունի եկղ. առանց դպրոցի:

ԳԱՇԱԼԹԻ, ա՛յլ գղ. Շուշիի, 20 տ. բն. ունէր:

ԳԱՇԱՐԻՆ ՀԱՅՈՅ կամ Խարապա Դաւարիս, գղ. Շարուր գո.ի. ունէր (1902ին) 140 հայ բնակիչ:

ԳԱՇԱՐԶՈՆ, գղ. Վասպուրականի Մարանդ գո.ի Բուհի Նեան լեռան սնարներուն մօտ:

ԳԱՇ ԲՈՒԼԱՂ, գղ. Աղուանից Խենի գո.ի. 1902ին 1500 բն. ունէր, որոնց նախնիք զաղթած են Զրարերդ և Խաչեն զաւառներէն: Եկղ. Ս. Գէորգ, կառուցուած 1828ին: Եկեղեցւոյ մէջ կայ Պաշնճաղէն բերուած 1695 թուականով ծննդայ մը:



ԳԱՇ-ԲՈՒԼԱՂ, գղ. Արցախի Սաչին գո.ի եկղ. Ս. Պէտրոս, քարուկիր երեք կամարներու վրայ կառուցուած: 1902ին 1200 բն. ունէր. Գարոցը Մեծորպեան կը կոչուի:

ԳԱՇ-ԳԱԼԷ, գղ. Շիրակ գո.ի Հոգեվանքի արեւմտակողմը. 800 հայ բնակիչ ունէր 1902ին:

ԳԱՇԳԱՅԱ, լեռ Այրարատայ Վանանդ գո.ի, 2007 մեղր բարձր:

ԳԱՇ ԳԻԼԻՍԷ, բարձրագոյն և կոնածե հրաբուռըն կատար, Այրարատայ Մասեաց օտն գո.ի Մէրաարպուլագայ և Աւագ Մասեաց մէջ: Բարձրութիւնը 12000' է աւելի կը համարին:

ԳԱՇ-ԵՈՒՐԹ լեռ Այրարատայ Բագրեւանդ գո.ի:

ԳԱՇ-ԹԷՓԷ, լեռ Այրարատայ, կը կոչուի նաեւ Գզըլ Զիարէր:

ԳԱՇԻՆՔ, օրաթերթ քաղաքական և գրական (Ռամկալար թերթ), արածնատէր Հր. Մամուրեան, խմբագիր՝ Սուրէն Պարթեւեան, տպ. Զմբուհիա 1909—1919:

ԳԱՇԼԸ կամ Դաւիթ գետ Այրարատայ Բագրեւանդ գո.ի, օժանդակ Արածանէոյ:

ԳԱՇԼՈՒՃԱ, կրկին գիւղեր Վերին և Ստրին Բագրեւանդ գո.ի մէջ: Նոյն անուամբ գետակ մ'այ կայ:

ԳԱՇԽԱԶ, բլուր Սիւնեաց Վայոց Ձոր գո.ի, որուն վրայ է Եեկիհե հայաբնակ գիւղակը:

ԳԱՇՆԱԻՐ, այս մականունը արուած է Գեղամայ ծովակին: Ը. գարու մէջ գրուած Տօնական գրոց յիշատակարանի մը մէջ կը գրուի «Դաւեանոր անուանեալ ծովուն Գեղարքունեաց» թէ ինչ մտքով այսպէս անուանուած են՝ յայտնի չէ:

ԳԱՇՊԱՇԻ, կամ Քարալուխ, հայաբնակ գիւղ Արցախի Դիզակ գո.ի 1902ին 28 տ. բն. ունէր. քարաչէն եկղ. Ս. Աստուածածին:

ԳԱՇՊԱՇԻ կամ Քարալուխ, գղ. Արցախի Սաչին գո.ի. բնակչաց կէսը բնիկ, կէսը եկած են Սիւնեաց Արաւիւս և Դարապաս գիւղերէն եւ Բարկաչտաէն: Եկղ. Ս. Աստուածածին, 1902ին 650 բն. ունէր: Մօտը կը գտնուին խաչաղարհալ մահարձաններ որոնց մին 1253 թուականը կը կրէ:

ԳԱՇՊԱՇԻ, լեռ Սիւնեաց Գողթն գո.ի:

ԳԱՇՊՈՒԼԱՔ, լեռ Այրարատայ Նիգ գո.ի արեւմտեան սահմանածայրը:

ԳԱՇՊՈՒԼԱՔ, գետակ Այրարատայ Ուրծ եւ Արած գո.ի նոյն անուամբ ջուր մը կը հոսի Սիւնեաց Երնջակ գո.ին մէջ:

ԳԱՇՊՈՒՌՈՒՆ (Քարալիք), հայաբնակ գիւղ Այրարատայ ձակաք գո.ի 1902ին 1800 բն. ունէր, վարժարանով և եկեղեցիով: Մօտը Ազա-

տիչ անուսով ուխտատեղի մը կայ, ուր իգական սեռը միայն ուխտի կ'երթայ:

ԳԱՇՏ, հայաբնակ գղ. Սպարկերտ գաւառակի, ունէր 15—20 տ. բնակիչ, եկղ. Ս. Սարգիս:

ԳԱՇՏ գղ. Մակայ մէջ, 40 տուն բնակիչ ունէր: Ըստ 1490ի գրուած յիշատակարանի մը՝ գրուած Առաքել՝ Ս. Աստուածածին և Ս. Ստեփանոս եկղ. ունէր: Ժ. զարու մէջ շատ մը ձեռագիրներ գրուած են հոս:

ԳԱՇՏ, գղ. Սիւնեաց Գողթան գո.ի, այժմ կը կոչուի Ստրին Ազուլիս:

ԳԱՇՏ, Մշոյ վիճակներէն մին այս անունով ծանօթ է:

ԳԱՇՏԱԿԷՄ, գղ. Մշոյ Բունաչէն գաւառակի, ունէր 15 տուն հայ և 5 տուն քուրտ:

ԳԱՇՏԱԿ, գղ. Չարսանճազի Սողազ գաւառակի, ունէր 10 տուն հայ և Ս. Յակոբ եկեղեցի, ու 12 տ. մահմետական:

ԳԱՇՏԱԿԱՐԱՆ կամ Դաւեալարին, կը յիշուի վայրս Զ. Դարու մէջ, որուն տէրն էր Վարազներսէն:

ԳԱՇՏԱՀԱՏ, գղ. Արցախի Բերդաձոր գո.ի, այժմ այլազգարնակ. մէջը եկեղեցւոյ աւերակներ կը տեսնուին:

ԳԱՇՏԱՎԱՆՈՒՅ ԶՈՐ, կը յիշուի յիշատակարանի մը մէջ: Գաւառը անյայտ է:

ԳԱՇՏԵՆՅ Ս. նոր գրող Ս. Հայաստանի, ծնած է 1909ին:

ԳԱՇՏՈՅԵԱՆ Ռուբէն, Ս. Հայաստանի Կեղր. Կոմիտէի գործադիր քարտուղար 1930ին, և պատասխանատու խմբագիր 1928ին Երեւանի մէջ լոյս տեսնող Խորհրդային Շինարարութիւն ամսագրին:

ԳԱՇՏՈՒՆ, Դաւեան կամ Տաւեան, հին վիճակ և գղ. Սիւնեաց Արեւիք գո.ի: Կը յիշուի Ստեփանոս Օրբելեանէ, նաև 1684ի յիշատակարանի մը մէջ: Դաւիթ ըէկի ժամանակ Որդուատի խանին պսպատակաց ձեռքով աւերուեցաւ և բնակիչները Չաւըղուր փախան: Եկեղեցին Ս. Ստեփանոս կը կոչուէր: Այս անուամբ գետակ մը ևս կայ:

ԳԱՇՏՈՒՆԻ ԲԵՐԳ, ամրոց մը Սիւնեաց մէջ:

ԳԱՇՔԷՆՏ կամ Քարաւեհն հայաբնակ գղ. Չանգեղուրի, 1902ին ունէր 600 բնակիչ: Մօտը ծծմբային և թթուհամ ջուրեր կը բղխին, զորս այլազգիք Ղօրուրու կ'անուանեն:

ԳԱՇՔԷՆՏ, հայաբնակ գղ. Շուշի գո.ի, բն. 250 էր 1902ին:

ԳԱՇՔԷՍԷՆ կամ Քարաւոս, հայաբնակ գղ. Արցախի Դարդման գո.ի Երկիրը ապառաժուած է



և խիստ քիչ արգասաբեր: 1902ին 900 րն.ունէր. փայտաշէն եկեղեցին Սուրբ Աստուածածին: Գիւղիս մօտ Բանանց գետի երկու կողմերը երկաթի և պղնձի հանք և զանազան պատուական քարերու հանքեր կան: Հարաւային կողմը կը գտնուի Խաչ-աղբիւր անուամբ Հայոց աւերակ գիւղ մը. եկեղեցին ՌՃԾԹ (1760ին) շինուած է: (Ըստ Լալայեանի ՌՃԻԸ (=1679ին):

ԳԱՇ ՕԼՈՒԳ ԳԱՔՈՒՍՈՒ, լեռանցք Լեռնային Կիլիկիոյ մէջ, 8100' բարձրութեամբ:

ԳԱՊԱՆՄԵԼԱ կամ Ջալսամ, գիւղ Գուգարաց Պարուար գո.ի. րն. 20 ա. վրացի և 16 ա. վրախօս հայ: Գիւղիս քարաշէն եկեղեցին իր ծախքով կառուցած է Ղազար Աթաբէկեանց:

ԳԱՊԱՐ, հին գղ. Սիւնեաց Գողթն գո.ի:

ԳԱՋԱՆ, գղ. Վերին Փէրիայի (Իրան) ունի 214 հայ բնակիչ, եկեղեցի Ս. Ստեփաննոս:

ԳԱՌԻՆ կամ Դառինա s. Դարանգաւ:

ԳԱՌՆԻ, Վասպուրականի հին գաւառներէն մին:

ԳԱՍԻՈՍ ք.՝ Գրիգոր Լուսաւորչի օրով:

ԳԱՍՀՈՆԱԿԵՐՏ s. Իրասխանակերտ:

ԳԱՄՆԱՒՈՐՔ, Տուրուբերանի հին գաւառ մը:

ԳԱՄՄԱԶՈՐ կամ Թասմասուր, գիւղակ Կարնոյ, բնակիչք հայ և թուրք խառն. Հայերը ունին Ս Թորոս անուն աւերակ եկեղեցի մը:

ԳԱՄՆՈՅ ԱՆԱՊԱՍ, ըստ Մխիթար Գոշի Դասաստանագրոց յիշատակարանին, անապատս կը գտնուի Դանձակ նահանգին մէջ:

ԳԱՍՈՒԼ, լեռանցք Խղանի մէջ:

ԳԱՍՏ կամ Saus, այլաղգարնակ գղ. Սիւնեաց Գողթն գո.ի. սա է հին Իսասակ գիւղը: Տե՛ս Յիպնայ վանք:

ԳԱՍՏԱԿԵՐՏ կամ Դասսակիւլ, աւերակ գիւղատեղի Արցախի Ջրաբերդ գո.ի մէջ, ուր կայ Կիսաւեր եկղ. և հանգստարան: Եկեղեցւոյ շինութեան արձանագրութիւնն է ԶԻԵ (1276): Այժմ սկսեր է հոս շէն մը ձեանալ. ունի 100 րն. անասնապահք:

ԳԱՍՏԱԿԵՐՏ քանի մը գիւղեր՝ Սիւնեաց Բաղք, Կեղարքունի, Ծղուկ և այլ գաւառաց մէջ:

ԳԱՍՏԻԱՐԱԿ, ամասգիր պատկերազարդ, սպ. թէղոսիա 1873—4. խմբագրող և հրատարակիչ Գր. Տէվլէթեան:

ԳԱՍՏԻԱՐԱԿ, պարբերաթերթ, 1903ին լոյս տեսած է Շիքակոյի մէջ: (Միայն 3 թիւ):

ԳԱՎԱԼՈՒ կամ Տեվէլի, գղ. Այրարատայ Ուրծ և Արած գո.ի: Հայերը 1902ին 1975 հողի էին, իսկ օտարները 500: Մօտը 100 այգի ունի, զիրքը դաշտային է. ըստ աւանդութեան՝ Հայերը

Պարսկաստանէն զաղթած են Վեհի-չայ կ'ուողէ գիւղիս արտօրայքը: Դավալուի մէջ 1934ին հրատարակուի սկսաւ Հարվածային Կոլխոզնիկ հայերէն-թուրքերէն հինգօրեայ թերթը:

ԳԱՎԱԼՈՒ, գղ. Տիգրանակերտի 12 ա. հայ բնակիչ ունէր:

ԳԱՎԱՋԻ կամ Տեվէնի, գղ. Բալուի, ունէր 20 տուն հայ և 15 տուն քուրտ բնակիչ:

ԳԱՎԱԼՈՒՍՈՒՆ կամ Թալլուսուն, գիւղաքաղաք Կեսարիոյ, ձորի մէջ, 1886ին 120 ա. հայ բնակիչ ունէր, 1915ին այդ թիւը 30ի իջած էր: Եկեղեցին Ս. Թորոս կը կոչուէր. իսկ դպրոցը Մեսրոպեան:

1915ին Դալլուսունցիք չտեղահանուեցան, տեղացի թուրքերուն պաշտպանութիւնը վայելցին և 1919ին հոն 15 անուոր հայութիւն կ'ապրէր:

ԳԱՎԱԹԼՈՒ հողաբլուր Այրարատայ ձակաք գո.ի, որուն ներքեւէն 1886ին գտնուեցաւ բեւեռածե արձանագրութիւն մը:

ԳԱՎԱԼԻԺ, Դաւրեմ կամ Թաւրիգ քղ. Ատրպատականի Հայոց կեղոնավայրն և արեւմտեան Պարսկաստանի աբենավաճառաչա՛ քաղաքն է Դավրէժ, որ հետեւ է Թէհրանէն 566 հզմ. հիւսիսային արեւմտեան կողմը և Ուրմիոյ լճէն 53 հզմ. յարեւելս կառուցուած է Ուրմիոյ լճի եզերքէն յարեւելս տարածուող ընդարձակ դաշտի մը ծայրը, Աճի գետի մօտ, Սըհանցի արեւմտեան ստորոտքը. ծովի երեսէն բարձր է 1509 մեղր: Եւրոպացիք կ'ենթադրեն թէ Պաղոթէոս աշխարհագրի յիշած Դարբիս կամ Տարբիս քաղաքն է:



Դավրեմի Բերդաբաղի տեսարանը

Հայկական աւանդութիւնն ու պատմութիւնը կ'ըսեն, թէ հիմնուած է Գ. դարու մէջ Ռոսրով Մեծէն, որ «Դա ի Վրէժ Արտաշի» բացագան-



յած էր և քաղաքս կոչուած է Դալիքժ: Կոչուած է նաև Կանձակ:

Դալիքժ Մոնջողաց ժամանակ Պարսկաստանի մայրաքաղաք դարձաւ և մեծապէս ծաղկեցաւ: Հուլաւուն խանը Ժ.Դ. դարու մէջ նոս հաստատեց իր դահլը, այդ պատճառաւ նոյն ժամանակ ի Հայոց կոչուած է Հուլաւու Թախս:

1902ին քաղաքիս բնակչաց թիւն էր 200000, Պարսիկները բազմաթիւ են, Հայերը 750—800 տ:

Հայերը կը բնակին Ղալայի (Բերդաթագ) կամ ներսի և Լիլաւայի կամ Դրսի թաղերու մէջ: Ղալայի Հայք մօտ 300 տուն են և ընդհանրապէս հարուստ վաճառականներ: Հօս է Ատրպատականի վիճակի Հայոց առաջնորդարանը, որ անցեալ դարու կիսուն Ս. Թաղէոս առաքելոյ վանքէն փոխադրուեցաւ քաղաքս: Սաթուհեան Սահակ եպիսկոպոս կառուցած է առաջնորդարանը և Արամեան դպրոցը՝ 1851ին, որ ժամանակին նշանաւոր չէնք կրնար համարուիլ: Արամեան դպ-

բարեպաշտ հայազգի ժողովրդականաց: Սաթուհեան Մխիթարեան սրբազանը, մեծ համարձակութեամբ յաջողեր է եկեղեցւոյս դմբէթի վրայ խաչ մը դնել: Այս թաղի մէջ բացի Արամեան տղայոց ուսումնարանէն, որ ունէր մօտ 140 աշակերտ, դասարան Ե. տարի Ը. կայ նաև Ս. Աննայիան օրիորդաց դպրոց՝ հաստատուած 1883ին, Թումանեան Եղբարց շնորհիւ, ունէր 100 աշակերտուհի, դասարան Գ., տարի Ե: Այս երկուսն զբարոցները ունէին 13 ուսուցիչ և ուսուցչուհի: Այս թաղի մէջ 1895ին հաստատուած է նաև Մանկապարտէզ մը, Հայուհեաց Բարեգործական Ընկ.եան ծախքով, ունէր 40ի մօտ երախաներ. նոյն ընկերութիւնը միեւնոյն թուականին հաստատած է նաև աղջկանց համար կարուձեի Արհեստանոց մը. ուր կը յաճախէին 30 օրիորդներ: Ղալայի մէջ են Ռուսաց, Անգլիացւոց, Գաղղիոյ և Թուրքաց հիւպատոսարանները և եւրոպացւոց տները: 1901ին Լազարեան Միաբանութեան Հայրեր բացին տղայոց դպրոց մը. ուր կը յաճախեն 40 հայ աշակերտներ: Այս թաղին մէջ Ամերիկացի միսիոնարները ունին օրիորդաց դպրոց մը՝ 80 աշակերտուհիներով և Մանկապարտէզ մը՝ 30 երախաներով, բոլորն ալ հայ. ունին 5 ուսուցիչ և ուսուցչուհի:

Լիլաւայի կամ Դրսի թաղի Հայք 400 տան չափ են, մեծագոյն մասը հասարակ դասէ, կը պարապին հիւսնութեամբ, ոսկերչութեամբ, դերձակութեամբ. և այլ արհեստներով. կան նաև վաճառականներ, սակայն միայն չոր ապրանք կրնան վաճառել, վաճառի Պարսիկները քրիստոնեաներէն թաց բան առնելը մեղք կը համարեն: Ռուս-Պարսկական պատերազմէն վերջ հայ արհեստաւորները ամէն տեսակ տուրքերէ ազատ էին. քանի մը տարի առաջ կառավարութիւնը փորձեր է այդ իրաւունքը խլել, այժմ քիչ քանակութեամբ տուրք կ'առնու: Թաղիս Հայոց եկեղեցին կառուցուած է 1845ին և կը կոչուի Ս. Սարգիս, աշխատութեամբ Զաքարիա աւագ քհ. Տէր Զուքարեանցի և արդեամբ ժողովրդոց, ինչպէս կը յայտնէ արձանագրութիւնը: Լիլաւայի մէջ Հայք ունին Հայկաղեան տղայոց ուսումնարան՝ 1877ին Թումանեան Եղբարց կողմէ հաստատուած. աշակերտ 150, դասարան Ե. տարի Ը. և Թամարեան օրիորդաց ուսումնարան՝ 100 աշակերտուհիներով, դասարան Բ. տարի Գ: Այս երկուսն զբարոցները ունին 13 ուսուցիչ և ուսուցչուհի: Հայուհեաց Բարեգործական Ընկերութիւնը 1895ին այս թաղի մէջ ևս բացած է Մանկապարտէզ մը 25 երախաներով և մէկ



Թալիքի Հայոց Արամեան դպրոցը

րոցի անուամբ Հայոց տպարան մը բացուած է թաղիս մէջ, Ստ. Մխիթարեանց եպիսկոպոսի ժամանակ: Հօս կը տպուին զանազան ընկերութեանց տեղեկագրերը և այլ գրքոյկներ: Ղալայի Հայոց եկեղեցին կը կոչուի Ս. Աստուածամայր, որուն հիմնարկութեան բուն թուականը մեզ անյայտ է, երկրաչարմէն կործանուած լինելով, 1782ին հիմէն վերստին շինուած է Տէր Յովսէփ աւագ քհ. Մելիք Յովհաննիսեանի ջանքերով: Եկեղեցւոյս մուտքի դրան ճակատը, մարմարիոն քարի վրայ արձանագրուած է հեռեւեալն. «Շինեցաւ սուրբ Աստուածամայր եկեղեցիս ի 1 Ապրիլ 1782 ամի եւ ի ք. Հոյոց ՌՄԼԱ ի հայրապետութեան Տեառն Ղուկասու, աբխասութեամբ Յովսէփ աւագ քահանայի Մելիք Յովհաննիսեանի արդեամբ



Արհեստանոց 40 աշակերտուհիներով: Այս թաղի ուսումնարանաց մէջ, նշանաւոր է իւր յարմարութեամբ և ընդարձակութեամբ օրիորդաց թամարեան ուսումնարանը, զոր կառուցած են իրենց ծախքով Թումանեան յայտնի վաճառականները: Լիլավայի մէջ 1876ին Ամերիկացի միսիոնարներ «Պորտ» Ընկերութեան առաքեալները բացին տղայոց դպրոց մը. ունին 100 աշակերտ և 6 ուսուցիչ և ուսուցչուհի, բացած են նաև Մանկապարտէզ մը 30 երախաններով: Բողոքականները ևս ունին երկուսու դպրոցներ մօտ 100 աշակերտներով: Դավրէժի Հայերը ունեցեր են և ունին նաև շատ ընկերութիւններ. Լիլավայի մէջ է «Քաւրիզի Հայուհեաց Բարեգործական Ընկ.»-ը, որ աւելի նոր է և հարուստ, իսկ Ղալայի մէջ է «Ատրպատականի Հայուհեաց Բարեգործական Ընկ.»-ը, որ աւելի նոր է: Վերջին տարիներս (1898) հաստատուած է նաև «Վալ»-ի Լսարանական Ընկերութիւն» որ օգտակար դասախօսութիւններ կ'ընէ և հասարակութեան մեծապէս կը նրպաստէ: Արեւցողութեան պատճառած չարիքներէն ու վնասներէն նոր սերունդը փրկելու բարի նպատակով 1899ին կազմուած է «Պարսկաստանի Հակակոլովական Ընկերութիւն»-ը: Գեղարուեստի ճաշակը հասարակութեան մէջ տարածելու և բարձրը ազնուացնելու նպատակով 1901ին կազմուեցաւ «Երաժշտասիրաց Ընկերութիւն»-ը: Ուրիշ բազմաթիւ ընկերութիւններ ևս եղած են անյայտացած են զանազան ժամանակներու մէջ: Բարեգործական ընկերութիւններն մեծ օգտակարութիւն ունին, ոչ միայն քաղաքիս մէջ այլ և գիւղերը տարածելով գիտութեան լոյսը նորահաստատ ուսումնարաններով: Դավրէժի կրկին հայուհեաց բարեգործական ընկերութիւնները 1901ին միացան, և այժմ կը կոչուին «Քավրիզի Հայուհեաց Բարեգործական Ընկերութիւն»: Յիշենք նաև Ղալայի «Գրադարանական Ընկերութիւն» որ մօտ 20 տարուան գոյութիւն ունի. իւր գրադարան — ընթերցարանի մէջ կան 2000էն աւելի գրքեր, բաւական թուով լրագիրներ ևս կը ստանայ. ընթերցարան և գրադարան կայ նաև Լիլավայի թաղի մէջ:

Դավրէժի կրկու հայկական թաղերն ևս ունին իրենց առանձին թատերական դահլիճները, ուր երբեմն երբեմն կը լինին գրական երեկոյթներ և ներկայացումներ, յօգուտ ուսումնարաններու և կամ ուրիշ բարեգործական նպատակներու: Ներկայացումներու ներկայ կը գտնուին շատ անգամ գահաժառանգը, պարսիկ խաներ, պաշտօնեաներ և հիւպատոսներ: Դավրէժի բնակչաց

մէջ ամէնէն աւելի մտաւորապէս յառաջադիմած ժողովուրդը հայն է, որ հասկնալով ուսման կարիքը ըստ այնմ կը գործէ: Նա պարսկաստանի Հայերէն հպարտըն է բնաւորութեամբ և միանգամայն վեհանձն: Թէև ի հնումն քաղաքիս Հայք բազմաթիւ էին և Մարթինէի ըսածի համեմատ Պարսիկներէն աւելի քաջ էին վաճառականութեան մէջ, բայց անցեալ դարու սկիզբը հազիւ կային 40 տուն: Գրեթէ մէկ դարու շրջանի մէջ այս տանց թիւն բարձրացեր եղեր է մինչև 700: Այժմեան հայ բնակիչք մեծ մասամբ Գարատաղէն եկած են:

Դավրէժի հայ Դավրէժի Օրիորդաց Թամարեան Ուսումնարանը

Քաղաքացիի ճաշակով, իսկ երիտասարդները եւրոպական տարազի կանանց տաբաղը կովկասեան է, միայն տներէն զուրս ելնելու միջոց վրանին կապոյտ ծածկոյթ կ'առնուն:

Քաղաքիս մօտ հիւսիսային արևմտեան կողմը, Աճի գետի վրայ 18 ակն ունեցող հոյակապ կամուրջ մը: Իսկ մերձակայ լեռան վրայ ի հնումն կար Հայոց գեղեցկաչէն մեծաստան մը, որ յետոյ մղկիթի փոխուած է: Մեծ հրապարակին մօտ ևս կը յիշէ Ինճիճեպն մղկիթ մը, որ կանխաւ Ս. Յովհաննու Մկրտչի եկեղեցի է եղեր, ուր կ'ըսեն, թէ կը պահուէր երկար ժամանակ նոյն սրբոյն մէկ ձեռքը: Դավրէժի մէջ ծներ է պատմարան Առաքել վարդապետը, որ գրած է իւր ժամանակի 60 տարուան պատմութիւնը 1602-էն սկսեալ մինչև 1662: Տեղուոյս Հայերը կը գործածեն Ռուսահայոց լեզուն, զպրօցներն ալ նոյն



Դավրէժի Օրիորդաց Թամարեան Ուսումնարանը



ուղղութեան կը հետեւին: Հայք քաղաքէս 40 վայրկեան հետո՛ւ Ս. Ասուածամիկն անուշով ուխտատեղի մը ունին՝ փոքրիկ մատուռով մը, չըջապատուած գերեզմաննոցով և մեծ պարտիզով. պարտէզը ունի չըջապատ: Թէև Հայք ունին մասնաւոր գերեզմանատուն, բայց երբեմն այս ուխտատեղոյս գերեզմաննոցին մէջ մեռելներ կը թաղեն Դավրէժի շուրջը հայաբնակ գիւղեր Վան, միայն հիւսիս արեւմտեան կողմը 6—7 ժամ հեռու կան Մուծամբար, Ահօհրիլ և Ալլամուլի հայ գիւղերը: Ալլամուլիքը Մուծամբարէն 5 վերստ հեռու է. ունի 36 տուն բնակիչ և եկեղեցի: Միւս երկու գիւղերու նկարագիրը տես իրենց կարգին: (Էփրիկեան՝ «Բնագիտութիւն» 1902, որ իրեն աղբիւր ունեցած է Ն. Հայաստան. 404 408, Այրարատ Ամսագիր, 1898, էջ 301—308, Արաբ, 1892 Բ 52—54. և այլն):

ԳԱՍԱԿԵՒՏ, ի հնումն մեծ բերդ մը Հայոց և Մարաց աշխարհաց մէջտեղ:

ԳԱՍԱՅԻ, գղ. Այրարատայ Մասեացոսն գո. ի մէջ:

ԳԱՍԱՇԷՆ, աւերակ եկեղեցւոյ և գիւղատեղի Տայոց. կող գո. ի մէջ: Եկեղեցւոյ որմերը միայն կանգուն կը մնան:

ԳԱՍԱՇԷՆ, այլազգարնակ գղ. կող գո. ի մէջ 30 տուն բնակչով:

ԳԱՍԱԻՈՐԵԱՆ Անահիտ, ծնած է Ռուսմանիոյ Խոքչան քաղաքին մէջ, շուրջ 1906ին, ուր իր հայրը Դատաւորեան Յակոբոս քն. — նախկին ուսուցիչ իր ծննդավայր Պարտիզակի ներսէսեան վարժարանին — կը պաշտօնավարէր իրր հոգեւոր հովիւ:

Տէր Յակոբ քն. իր դուստրը մօրը հետ Պարտիզակ զրկած էր հոն հայ դաստիարակութիւն ստանալու համար: 1915ի տեղահանութեան օրերուն՝ հանին. մայրն ու ու եղբայրը զէպի Տէր Զօր կը քշուին: Անահիտ Իսլահիէի մէջ կը կորսնցնէ առաջին երկուքը՝ վրանին տակ: Այն ատեն հաղիւ 10 տարու՝ աքսորի բոլոր զրկանքները կը կրէ Աստիկ եղբորը հետ:



ԳԱՍԱԻՈՐԵԱՆ ԱՆԱՀԻՏ

Գառնալուն. հայրը Բարիդ կը զրկէ զինք. էգօլ

Նուամլ՝ ուր 3 տարի կ'ուսանի և 1926էն Բարիդի մէջ կը մասնակցի հայ թատերական ներկայացմանց, իբրև տրամաշիկ զերասանուհի՝ խոստմնալից ուժ մը հանդիսանալով (Թեոդիկ՝ Ամենուն Տարեցոյց 1928 էջ 566): Անահիտ Դատաւորեան ներկայիս 1924էն ի վեր Խ. Հայաստան անցած է և Երևանի բեմերուն վրայ կ'երևայ ստէպ:

ԳԱՏԵՄ կամ Թաղեմ, հայաբնակ գղ. Սարբերդի 200 տ. բնակչօք (1902ին): Ունի Ս. Աստուածածին եկղ. մը և համանուն վարժարան մը՝ 100 աշակերտներով:

ԳԱՏԵՄՈՒ ՎԱՆՔ, դատեմ գղ. ի մօտ, որ շքեղ և կամարակապ գմբէթաւոր քարաշէն տաճար մ'ունի Ս. Աստուածածնի անունով: Կ'աւանդեն թէ Ս. Թաղէոս առաքեալէն հիմնուած է, տաճարի շէնքը հին է և անեղծ մնացած:

ԳԱՏԻԿ s Տասիկ:

ԳԱՏՈՒԱՆ կամ Դասվան, հին և նշանաւոր հայաբնակ գղ. կամ գիւղաքաղաք Բաղէշի՝ որմէ հեռու է 4 ժամու ճանապարհ, և Վանայ ծովակի արեւմտակողմը, տափարակ դաշտի մը վրայ: Գիւղաքաղաքս ունէր խիտ առ խիտ սրածայր կտուրներով տներ, որոնք թիւն էր 90—100՝ մօտ 650—700 բնակչօք, մինչդեռ ի հնումն ունի եղեր 2000 տուն բնակիչ: Եկեղեցին Ս. Թէոդորոս. Միացեալ Ընկերութիւնը հոս նախակրթարան մը բացած էր:

Դատուանայ մօտակայ սահմանին մէջ, իրարմէ քառորդ ժամ հեռաւորութեամբ 6 եկեղեցիներ կան, որոնք են՝ Ս. Կիրակոս, Ս. Քառասուն Մանուկ, Ս. Գրիգոր, Ս. Սիմոն, Ս. Սարգիս և Ս. Ստեփանոս. այս եկեղեցիներէն միայն Ս. Սարգիս կանգուն կը մնայ, որ ճարտարարուեստ շինուած գեղեցիկ և փոքրիկ տաճար մըն է, ուր տարին անգամ մը Դատուանցիք մատաղ ընելու կ'երթային: Հոս կան ոչ սակաւ խաչքարեր՝ հանդերձ տապանազրութեամբք. ծանօթ թուականով հնագոյն համարուածը Ժ. Գ. դարու կը վերաբերի: Դէպի բլրակին բարձրավանդակն է Սեներբերմ թգ. ի Ամարանց ըսուածի հսկայաշէն աւերակը, քառեակ խորշեր խաչաձև կը ձևացնեն չէնքին յատակագիծը, որուն ճակատը զէպի ծովակ կը նայի. արեւմտեան զառիթափին վրայ գլանաձև միակտուր քարերէ ճարտարակերտեալ սենեակներն՝ էին զանձարաններ՝ ըստ աւանդութեան, ասոնցմէ երկուքը անվթար մնացած են: Դատուանայ կեդրոնը կը բարձրանայ ամրաշէն մեծ աւերակ մը, որուն հսկայ պարիսպներու մեծագոյն մասը քայքայուած է: Եյս չէնքը կը կարծուի թէ եղած է իր փրօջ նժոյգներու կամ հիւրընկալութեան տեղին: Տեղւոյս կեդրո-



նական հարաւը կը տեսնուի անկուած Յասման խաչ անուամբ խաչքար մը, զոր կանայք աւելի շատ կը յարգեն: Դատուանայ հիւսիսային կողմը 20 վայրկեան հեռու 6—7 տեղեր ընտիր ջրեր կը բղխին, որոնց ամբողջութիւնը ջաղացք մը կը բանեցնէ: Նոս կան նաև հանքային ջրոյ քանի մը աղբիւրներ: (Միւրախորեան՝ ցկարագր. Ուղեւոր. Ա. 81—84):

ԳՈՐ, «Հաւաքածոյ աղագային գիտական և այլն հասուածոց», խմբագիր Եղիա Տէմիրճիպաշեան, տպ. Կ. Պոլիս 1889 ( 1 տետր):

ԳՈՐԱԲԱՍ s. Դարբաս:

ԳՈՐԱԼԱԿ կամ Դարալրգ, գղ. Ատրպատականի Սօվուխպուլագ գաւառի, 80 տ. (500 անձ) բնակիչ ունի եկեղեցիով. դպրոցը կը պահուի Թաւրիզի Հայուհեաց Ընկերութեան ծախքով: 1910ին կը տեղահանուին և Թաղիարաշ կը փոխադրուին: (Անեմեան՝ «Մասիս» 1935):

ԳՈՐԱԿ, գետակ Այրարատայ կողովիտ գ. ռ. Օմանդակ Առաւն գետին:

ԳՈՐԱԿ, կրկին գիւղեր Վերին և Ասորին կողովիտ գ. ռ. մէջ:

ԳՈՐԱԿՆ, ուխտատեղի Սեպուհ լեռան, ուր հովիւներէն թաղուեցաւ Գրիգոր Լուսաւորիչ:

ԳՈՐԱՀՈՃ, գղ. որ կը յիշուի Ս. Գրիգորի տի նշխարաց գիւտի պատմութեան մէջ, և կը թուի բլլայ Աղուանից երկրին մէջ:

ԳՈՐԱՆԱԿ, հին գղ. Սիւնեաց Սողք գ. ռ.:

ԳՈՐԱՆԱՂԻ, Բարձր Հայոց հին անուանի գաւառներէն մին, որ սահմանակից է Եկեղեցաց գաւառի և այժմ կը կոչուի Կամախ: Յոյներէն Պողոմէոս կոչած է Դարանխաս, մեր մատենագիրներէն կը կոչուի նաև Աղեաց գաւառ: Յովհաննէս վարդապետ Երզնկացին Ս. Լուսաւորչի ճառին մէջ հետեւեալ կերպով կը նկարագրէ գաւառիս ձիւրքերը և անուան ստուգարանութիւնը. «Լեռամբ ծաղկաւէտ, ձորովք ջրաբուղիս, եղիմաբուղիս աղբերն Եփրատայ յորդառատ գետոյն ընդունակ. . . այլ և ի ծործորս քո լեռանց ի ներքոյ երկրի աղբիւրս աղի դարանացեալ ունիս, և ի խորութենէ ի վեր եկեալ ի ջերմութենէ արեգականն՝ զխառնեալ ջուրսն առանց աղի ծծէ հրոյն զօրութիւն. և յստակեալ պարզի աղն համեմիչ անուշահոտ. որով և Դարանաղի կոչիս յայժմ ներգործութենէ»: Նոյն Երզնկացին կը գրէ նաև թէ հրաշալի բան մը կը պատմուի գաւառիս համար, իբր թէ ամառնային եղանակին երբ ձիւնները կը հալին՝ ջրոց կաթուածները գաւառիս անձաւներու մէջ վրայէ վրայ դիզուելով կը սարին, որ առողջարար զօրութիւն ունենալով, ի

հնումն հեռաւոր տեղեր կը տանէին թագաւորաց համար. իսկ ձիւն ժամանակ երբ ուրիշ ջրեր կը սառնին, տեղուոյս անձաւաց սառերն կը սկսին հալիլ:

Դաւառիս նախկին բնակիչները դիւթութեանց և կախարհութեանց ետեւէ շատ կ'ըլլային. իսկ ուղղափառ հաւատքը ընդունեցան մեծամեծ նըշաններով և անմիջական քարոզութեամբ սրբոյն Գրիգորի՝ որ Ազաթանգեղոսի (էջ 588—9) գրածի համեմատ. «Երթայր հասանէր ի Դարանաղեաց գաւառն. . . ձեռնարկեալ զգաւառաւն, հանդերձ միամիտ սատարութեամբ թագաւորին՝ գերէր գամենեսին ի հայրենեաց աւանդելոյն ի սատանայապաշտ դիւական ի սպասաւորութենէն, ի հնազանդութիւն ծառայութեան Քրիստոսի մատուցանէր. . . որ և յայտնի իսկ բնակչաց գաւառին՝ նշանք մեծամեծք երեւեալ, կերպակերպ նմանութեամբք դիւացն փոխստական լինելով անկանելի ի կողմանս Սաղտեաց»: Դարանաղեաց մէջ է պատմական և սրբանուէր Սեպուհ լեռը՝ որ Դարանաղեաց լեռուն ևս կոչուած է, Թորգան աւանը և Անի ամրոցը: Տե՛ս նաև Կամախ: (Էփրիկեան «Բնագիտութիւն»):

ԳՈՐԱՆԱՂՅԻ Գ. ՎՐԳ. s. Գրիգոր վրգ. Դարանաղի:

ԳՈՐԱՆ ԴԱՇՏ, Վասպուրականի Դառնի գ. ռ. մէջ կը գտնուի դաշտս, որ ամառան բնակութեան վայր էր Հուլաւուն խանի: Անունս կը յիշուի Վարդանայ պատմութեան յաւելուածի մէջ:

ԳՈՐԱՆՔ կամ Surof, հին գղ. Սիւնեաց Սողք գ. ռ.:

ԳՈՐԱՇԱՄԲ s. Շամբ:

ԳՈՐԱՉԻՉԱԿ s Մաղկունի:

ԳՈՐԱՊԱՍ, բլուր Այրարատայ կոտայք գ. ռ. մէջ:

ԳՈՐԱՏԱՄԻ, հին գղ. կամ վայր կը թուի. Տաթեւի վանքի կալուածներու շարքին մէջ կը յիշուի:

ԳՈՐԲ, հին գղ. Սիւնեաց Վայոց ձոր գ. ռ. այժմ այլազգարնակ մօտը կան հին եկեղեցւոյ աւերակներ և գերեզմաններ:

ԳՈՐԲԱՆՏ կամ Sereyenis, հին և հռչակաւոր քաղաք, որ Աղուանից երկրի նախադուռն է, հիմնուած կովկասեան փոքր լեռնաշղթայէն դէպի Կասպից ծով կախուած լեռնաբազկի մը վրայ: Բերրաքաղաքս երկու միջնապատերով բամբուած է եղեր երեք մասի և միացած երկու զուգահեռական պարիսպներով, որոց արեւմտեան ծայրերը նեղնալով հպած են վերնաբերդին, որ կը կոչուի Նարին-Ղալա, իսկ արեւելեան ծայրերը միացած



են եղբեր ծովի մէջ: Այս կերպով Դարբանտը բաժնուած է եղբր չորս մասի՝ ծովային բերդ, ստորին քաղաք, միջին քաղաք և վերին բերդ:

Դարբանտի գոյութիւնն 2000 տարիներէ աւելի է, և միանգամայն հռչակաւոր իր պատմական և քաղաքական անցեալով: Քաղաքիս երկար ժամանակ (Ն. Ք.) տիրեցին Հայք, Ա. դարէն մինչև Ն. դարու սկիզբը Աղուանք, Ն. դարուն մէջ Պարսիկք, 2 դարուն Սազիրք, է դարուն դարձեալ Պարսիկք, Ը դարուն Արարացիք, ԺԱ. ԺԲ դարուց մէջ Աղուանից Սենեքերիմ և Գրիգոր Թագաւորները, յետոյ Թաթարք, ապա Լէնկ Թիմուր, երրորդ անգամ դարձեալ Պարսիկք և հուսկ ուրեմն Ռուսք 1906ին: Աւելորդ կը համարենք մեր խօսքը երկարել, այդ ժամանակաց մէջ հանդիպած պատմական զիպաց վրայ միայն ըսենք թէ մեծ տարածայնութիւն կայ և զանազան կարծիքներ Դարբանտի և իւր պարիսպներու հիմնադրի մասին: Ահագին պարիսպներով ամրափակել այս երկիրը և բոլորովին խզել Ներսիսի հիւսիսային հաղորդակցութիւնը Ասիայէն, այսպիսի մեծ գործի մը հանձարն, ոմանք կը համարեն միայն Աղեքսանդր Մակեդոնացին: Այս կարծեաց նպաստաւոր են նաև Հայոց պատմագիրներէն ոմանք: Ազաթանգեղոս (էջ 30) գրած է. «Ակսանէր Սոսրով Ա. Թագաւորն Հայոց... բանալ զդուռն Ալանաց և զիւրոյ պահակին, հանել զզօրս Հոնաց»: Այս խօսքերէն յայտնի կ'երևի, որ Վաղարշի և Սոսրովի ժամանակ արդէն կային թէ՛ Դարբանտի բերդերը և թէ՛ երկարածիգ պարիսպը՝ պահակներով հանդերձ: Այսպէս կը վկայէ նաև Սորենացին. «ուր ածեալ էր զպարիսպն Դարբանտայ...»: Իսկ Ղեւոնդ պատմագիրը (էջ 40—41) գրած է. «Զօրավարին Մայիմայ... եկեալ և մարտ եղեալ ընդ զօրս Հոնաց՝ որ ի Դարբանդ քաղաքի՝ հարին զնոսս և հալածեցին, և քանդեալ աւերեցին զղղեակապարիսպ ամրոցին: Եւ մինչդեռ քանդէին զպարիսպ ամրոցին՝ գտին վէժ մի մեծ ի հիմունս նորա, որ ունէր վերնագրի գրոյմեալ օրինակ զայս. Մարկիանոս ինքնակալ կայսր շինեաց զՖաղափ եւ զաւսարակս զայս բազում սաղանդօփ յիւրոց զանաւոց, եւ ի յետին ժամանակս որդիքն Խամայեի փակեցեմ զսա եւ յիւրեանց զանաւոց վերսին շինեցեմ: Եւ իբրև գտին զգրոյմ գրոյն... զաղարեցին ի քակելոյ զպարիսպն, և կացուցեալ գործավարս ի վերայ՝ վերստին շինեցին զկործանեալ պարիսպն»: Նոյն խօսքերը կը կրկնէ նաև Կիրակոս՝ բայց կը գրէ «Մակեդոն» կայսր». Ասողիկ ալ կը գրէ նոյն-

պէս «Մակեդոն»: Գրեթէ 15 տարի առաջ. Օսկասայի ընդհանուր պատմութեան և հնախոսողութեան ընկերութեան անդամն Կարայիմ Ֆէրկովիչ, փորել տալով Դարբանտի հարաւային կրկնապարսպի դրան ներսի կողմը կը գտնէ մեծ քար մը յունարէն արձանագրութեամբ, որուն սկզբնատառերն եղած են A. M.: Ռուս ճանապարհորդն Պ. Ի. Բերեզինս (Բ. հատ. էջ 22) կը գրէ. «Ես տեսայ աչքովս Գ. Բուչկիևի մօտ... Դարբանտի վերաբերեալ վաղեմի հնութիւն, մահէ պաշտպանուելու գործիք (թուր) մը, որոյ վրայ կարդացուեցաւ A. M. (Աղեքսանդր Մակեդոնացի)»: Պ. Ի. Բերեզինսն յենյով այս երկու փաստերու, քարի և թրի արձանագրութեանց վրայ, Աղեքսանդրեան դղեակ և Աղեքսանդրեան պարիսպ կ'անուանէ քաղաքիս փոքրիկ զղեակը և երկարածիգ պարիսպը: Եղիշէն (էջ 223) և սկանաւես Կազանկայտուացին (էջ 105) Դարբանտի պարիսպներու շինութիւնը կը յատկացնեն Պարսից Թագաւորներուն». Որպէս և յոյժ իսկ տրամեալ էր Թագաւորն (Յազկերտ), ո՛չ միայն ընդ աւերաշխարհացն և ընդ անկանել զօրացն, այլ ևս առաւել ընդ աւերել պահակին՝ զոր իբազում ժամանակաց հազիւ ուրեմն կարացին շինել, որ եւ յայնմ ժամանակի դիւրեաւ առեալ քանդեցաւ»: «Բազում ծախիւք Թագաւորացն Պարսից մաշեալ էր զաշխարհս իւրեանց՝ գումարելով ճարտարապետս և հնարելով ազգի ազգին իւր ի իշխուածս մեծասքանչ գործոյն որով փակեցին աղիսցին ընդ լեառն Կովկաս և ընդ մեծ ծովն արևելից»: Անտարակուսելի ճամարութիւն է, որ Հայոց Վաղարշ, Սոսրով և Տրգատ Թագաւորներու ժամանակ արդէն կային Դարբանտի բերդերը եւ պահակներու երկարածիգ պարիսպն: Ճշմարիտ է է նաև, որ ըստ Եղիշէի և Կազանկայտուացիի, Պարսից Թագաւորները հիմնական նորոգութիւններ ըրած են քաղաքիս բերդերու վրայ, բաց ի զղեակէն, որոյ գոյութիւնն խիստ հին է և մնացած է անփոփոխ: Ռոշակի կը տեսնուին տարբեր ժամանակի, տարբեր ճարտարապետութեան զանազանութիւնները: Այս ամէնը կ'ապացուցանեն նաև պարսկերէն և արաբերէն արձանագրութիւնները և առիւծի անդրին, անյայտ կը մնայ ուրեմն միայն քաղաքիս և բերդերուս բուն հիմնադրին, այն ալ ժամանակն պիտի պարզէ: Քաղաքէս դուրս Քառասնից դրան հիւսիսային կողմը կայ Ղրխլար կոչուած արարական հանգրտարանն, ուր ամփոփուած են 40 արարներ, որք իբրև թէ պատերազմի մէջ մեռած են: Տապանաքարերու երկայնութիւնն է 10-12 թիգ, և



զարդարուած են արձանագրութիւններով, ասոնց անուամբ կոչուած է զուէն Ղրխլար-Ղալիու: Վերնաբերդի արեւելեան դրան հարաւակողմը եւ կան երեք գերեզմաններ, արարական արձանագրութեամբք: Գարբանտի մէջ սկսած է Ազուանից թագաւորութիւնը Ա Վաչականով և վերջացած է նոյնպէս քաղաքին մէջ Գրիգոր թագաւորով ժ.Ա դարու վերջերը. կամ ժ.Բի սկիզբները:

Գարբանտի բնակիչք այժմ կը հաշուին 16000 հոգի, զանազան ազգերէ. բաւմաթիւ են Պարսիկք, յետոյ կու գան Հրեայք, Թաթարք, Հայք, Ռուսք, և այլն: Հայք կը հաշուին մօտ 900 1000 հոգի. գաղթած են մեծ մասամբ Արցախէն, Շամախէն և Ղզլարէն: Գարբանտի օդն եւ կլիման ամբան ծանր է: Հայք ինչպէս կանխաւ ըսինք կը բնակին քաղաքիս երկրորդ մասի մէջ և ունին նորաչէն, խաչածե, միջակ մեծութեամբ եւ սրբատաշ քարերով շինուած Ս. Ասուածամիմ անուամբ եկեղեցի մը: Տաճարիս հիմքը ձգած է ծխական ժողովուրդը հին եկեղեցւոյն պատրաստի գրամով և գեանէն բարձրացուցած է մօտ


րեպաշտուհի Տիկին Կանկանեան: Զանգակատունը իր վայելուչ կաթողիկէով, շինել տուած են պատուարժան Առաքել Բարայեանց և Յովհաննէս Փանեանց: Քաղաքիս Հայք ունին Ս. Մարմարեան ուսումնարան մը և Մեսրոպեանգրադարան մը: Քաղաքիս մօտը կը տարածուի ընդարձակ Վատնեան դաշտը, ուր ըստ ազգային պատմութեան Աղուանից՝ նահատակուեր է Ս. Գրիգորիս կթղ.: Գարբանտի երկաթի ղոնէն անցեր է մեծ յաղթական մեր Արաաչէս Ա. թգը, Քրիստոսի 80 թուին, երբ յաղթելով Այանաց՝ Սաթենիկը կնութեան առաւ: (Էփրիկեան «Բնագիր»):

ԳԱՐԲԱՆՏ հայտնակ գղ. Այրարատայ Շիրակ գ.ի արեւելեան մասին մէջ: Այեքսանգրապոլի հիւսիսային կողմը: 1902ին ունէր 495 բնակիչ, բաժնուած 52 տան:

ԳԱՐԲԱՆՏԻ ԳՈՒՌԻ կամ Անգէ, Գարբանտ քաղաքի անուամբ ծանօթ է այն հոշակաւոր անցքն՝ որ ամբափակուած է եղեր ծովեզերքէն մինչեւ Բալաքեանի կիրճը՝ շինական պատուարի նման ամուր պարիսպներով, անմասչիլ բուրդերով, երկաթեայ ղոներով և ամբողջոյն պահակներով: Անցքս մերձարնակ ազգաց և քաղաքներու անուամբ սաացած է զանազան դարուց մէջ այլևայլ անուններ, ինչպէս են Դոււնգ Ալանաց, Դոււնգ Կասպից, Դոււնգ, Պանակ կամ Կապուց ձորայ, Դոււնգ, Դոււնգ կամ Կապան Չողա, Դոււնգ Աղուանից, Դոււնգ Խակրաց, Դոււնգ Հոնաց, և այլն: Հայաստանի, Վրաստանի, Աղուանից երկրի եւ մինչև անդամ Պարսկաստանի ապահովութեան հիւսիսային ազգաց արշաւանքներու նկատմամբ, համարեա թէ կախուած էր նշանաւոր անցքի բերդերու պահակներու և ղոներու ամբողթեան: (Էփրիկեան՝ «Բնագիր»):

ԳԱՐԲԱՌՈՒ, գղ. Ատրպատականի Սայմասս գ.ի Քեարբուբար գաւառակի մէջ. 1902ին 40 տունն ունէր:

ԳԱՐԲԱՍ կամ Դարբաս, գղ. Սիւնեաց Զանգեզուրի նեղ ձորակ մը գիւղո կը բաժնէ հայկական և թուրքական կրկին թաղերու: Հայոց թաղին մէջ կը գտնուին Ս. Ստեփանոս եւ թաղի մէջ Ս. Աստուածածին եկեղեցիները: Ս. Ստեփանոս եկեղեցին, ուր կը կատարեն ժամասացութիւնք, փոքր և հասարակ շէնք մըն է: Խորաններէն միոյն մօտ կայ 211է (=1288) թուականով արձանագրութիւն: Ս. Աստուածածին եկեղեցին փոքր է, շինուած սրբատաշ քարերով, որուն ձեղունը բոլորովին քանդուած է: Ներքը հիւսիսային որմի վրայ շինութեան ընդարձակ



Դարբանցի Հայոց Ս. Ասուածամիմ եկեղեցին

երեք կանգուն: Իսկ մնացեալ մասերը ամբողջապէս աւարտած են իրենց սեպհական ծախքովը. բարեպաշտ եղբարքն Սարգիս և Ստեփան Կանկանեանց: Ոսկեզօծ եւ գեղեցկագոյն խաչկալը և մեծ կաթողիկէն ալ շինել տուած է բա-



արձանագրութիւն մը կայ, ՉիԱ. (=1272) թուականով, որմէ կը յայտնուի թէ շինողն է Սիւնեաց Լիպարիտ իշխանի Տարսայիճ որդին, այդ արձանագրութեան ներքե կայ ուրիշ յիշատակարան մը, որով կը յայտնուի, թէ ՌձիՉ (=1672) թուին եկեղեցիս նորոգած են: Ս. Աստուածածին եկեղեցիէն քիչ մը վեր կայ գերեզմանատուն, Ժ. Ե. դարու վերաբերեալ արձանագրութիւններով: 1902ին գիւղիս քնակչաց թիւը ընդամենը 886 հոգի կը հաշուէին, որոնցմէ 333ը հայ բնակչաց մնացեալ մասը թուրքեր են, որոնք կ'ըսեն թէ Սիւնեաց Անգոկ իշխանի ցեղէն են, իրենց պապերը հայ են եղեր: (Էվրիկեան «Բնաշխարհիկ» ֆաղուած Լալայեանցի «Ձանգեղուր գաւառ» զրէն):

ԳԱՐԲԱՐԻ, գլ. Ատրպատականի Բանադուզ գաւառակի. բն. 25 տուն հայ:

ԳԱՐԲԻՆ, «Շարաթաթերթ, Ժողովրդական հրատարակութիւն»: Խմբագիր հրատարակիչ Գ. Տէր Ղեւոնդեան, տպ. Թիֆլիս 1911 (1—4):

ԳԱՐԲԻՆԵԱՆ Արսակ, խմբագիր 1917—9 Թիֆլիսի մէջ լոյս տեսնող Վանսոսպ շարաթաթերթի և յետոյ Երևանի մէջ հրատարակուող (1919 1920) Հայաստանի Ձայն օրաթերթի (օրգան հայ Ռամկավար Կուսակցութեան), ու «Ապագայի» (տպ. Բարիզ 1921—4): Տես՝ ՅԱԻԵԼՈՒԱԾՐ:

ԳԱՐԲԻՆԵԱՆ Մասքոս, գրագէտ, ծնած է 1889ին. Շամշատին գաւառակի Թովուզ (Տաուս) գլ. մէջ: Հայրը չքաւոր գեղացի արհեստաւոր (գորբին), ուսմանց չափազանց սէր ունեցող, ամէն ջանք ի գործ դրած է որ իր որդին Թիֆլիսի մէջ ուսում ստանայ:

Դարբինեան 1900ին Ներսիսեան դպրոցը կը մտնէ, որուն իրակատար դասընթացքը կ'աւարտէ 1908ին: Բաղմանդամ ընտանիքի հոգը թոյլ չի տար որ աւելի բարձրագոյն ուսման հեռեի, այդ պատճառաւ կը պարապի ուսուցչութեամբ՝ մինչև 1915: 1918ին կը յաջողի մանկ Անգրկովկասեան Համալսարանի պատմա-լեզուաբանական ֆաքիւլտէն, բայց չ'աւարտեր ընթացքը, ֆաքիւլտէին փակուելուն պատճառաւ:

Դարբինեան իր գրական փորձը սկսած է զբոսորդական հասակին, 1907ին, Թիֆլիսի մէջ լոյս տեսնող Խարաբալա երգիծաթերթին մէջ կը տպագրուին իր գրութիւնները. իսկ առաջին մանկական պատմուածքը լոյս կը տեսնէ Թիֆլիսի մէջ լոյս տեսնող Հասկերի մէջ: «Խաթարալա»ի մէջ ստորագրած է Ձեղանեան իսկ Հասկերի մէջ Մասքոս: Բաւական զգալի դադարէ ետք Դարբինեան 1916ին Թիֆլիսի Պայքար թերթին մէջ

կը սկսի երևալ Ասլան ծածկանունով: Բացի մանկական պատմուածքներէ, հէքեաթներէ, լէկինտաններէ, առակներէ և ոտանաւորներէ՝ Դարբինեան կը սկսի գրել նաև տրամադիկական գլուխներ: Անոր առաջին Բիեսթը՝ Միւրադներ՝ որուն մէջ կը ծագուին Անդրկովկասեան Հանրապետութեանց նախկին «աէրեր»ը — Մենչեւիկները: Դաշնակցականները և Մուսաֆաթիստները, — ամէն տարի մի քանի անգամ կը բեմադրուի դպրոցներու, մանկական թատրոններու և



ԳԱՐԲԻՆԵԱՆ ՄԱՏՔՈՍ

ակուսմաներու բեմերուն վրայ: Կը տպագրուի Կոմսոմոլ բիւտը, և դեռ ունի երեք ձեռագիր բիւտներ:

Դժբախտաբար Դարբինեանի պատմուածքներու ժողովածուն առանձին գրքով լոյս չ'է տեսած, որոնց շատերը դասագրքերու մէջ մտած են և ոմանք ալ օտար լեզուներով (ռուսերէն, վրացերէն) թարգմանուած են:

Դարբինեանի ամենախոշոր ու արժէքաւոր աշխատութիւնն է Կիկոս վիպակը, որուն երկու մասը լոյս տեսաւ Նորքի մէջ, իսկ ամբողջը՝ Խ. Հայաստանի Պեահրատի հրատարակութեամբ՝ առանձին գրքով: Նոյն Պեահրատը լոյս կ'ընծայէ Ջաղացպան Անցոնը վիպակը, որուն նիւթը առնուած է ընդլատակեայ աշխատանքներու կեանքէն: Բացի իր հեղինակութիւններէն Դարբինեան ուսեա եւ օտար հեղինակներէ թարգմանած է պատմուածքներ, վէպիկներ և երկու բիւտ:

Այս բուպէիս (1930) Խ. Հայաստանի Պեահրատը տպագրութեան է յանձնած Մ. Դարբինեանի հեռեւեալ գրքերը. Ջարքոնդ գիւղը (պատմուածքներու ժողովածու) և Ջաղացպան Անցոնը (վիպակ): Դարբինեան ներկայիս կ'ապրի միմիայն գրական աշխատանքով:

Հիմնադիրն է եղած Վրաստանի Պրոլետ գրողներու հայկական բաժնին, որուն մէջ գործնականուպէս աշխատողն է հիմա (Արամ Երամեան՝ «Անահիտ» 1931 Յունուար էջ 130—1):

Մ. Դարբինեան խմբագրած է 1921ին Կարմիր Ալիոն «Երգիծաբանական սատիրական» շարաթաթերթը (Թիֆլիս), որմէ 6 թիւ լոյս տեսած է: 1922-



3ին Թիֆլիսի մէջ լոյս տեսնող Գարբնոց «գրական գեղարվեստական, քննական» ամսագրին «Խմբագրական կոլլեգիա»-ի մաս կազմած է նոյնպէս 1925ի Հայրենասէն «հրատարակութեան Հայաստանի օգնութեան կոմիտեի վրաստանում» Թիֆլիսի մէջ լոյս տեսնող «Խմբագրական կոլլեգիա»-ի: Իր հեղինակութիւնն է Սալզիմ ու Բուլղիմ պատմուածքը, որ առանձին հատորով լոյս տեսած է Երևանի մէջ:

ԳԱՐԲԻՆԵԱՆ Յ. պատասխանատու տնօրէն Արագած պատկերադարձ շարաթաթերթի (օրգան Ազգային Ազատական կուսակցութեան) որ 1919-20 լոյս տեսաւ Պոլսոյ մէջ:

ԳԱՐԲԻՆԵԱՆ Պ. Ա. հեղինակ 1896ին տպուած հայերէնէ արարերէն գրպանի բառարանի:

ԳԱՐԲԻՆԵԱՆ Ռուբէն Տ. ՅԱԻԵԼՈՒԱՄԵՐ:

ԳԱՐԲԻՆԱՅ ՔԱՐ կամ Դարբնաբար, տեղի որ կը յիշուի վասպուրականի կանգուար ամբողջի մօտ:

ԳԱՐԲԻՆԻ զԳ. Պարսից Փարիս գու. ի ուր Շահաբասի օրով Հայեր կ'ապրէին:

ԳԱՐԲԻՆՅ, շարաթաթերթ, տպ. Թոքաթ 1914ին:

ԳԱՐԲԻՆՅ, «գրական, գեղարուեստական, քննական ամսագիր, օրգան վրաստանի Պրլես գրողների Ասոցիատիայի Հայկական Սեկցիայի», լսմբ. կոլլեգիա Յովհ. Յակոբեան, Արագի, Մ. Դարբինեան, տպ. Թիֆլիս 1922—3:

ԳԱՐԲԻՆՅ, «քաղաքական, հասարակական եւ գրական երկօրեայ թերթ» (Խորհրդային հրատարակութիւն) տպ. Բարիզ 1932: Շարունակութիւն «Նոր Ուղի»-ի:

ԳԱՐԳԱՆԵԼ կամ Տարսանել (Չանազ գալէ, Գալայի-Սուլթանիէ) հին պատմական քղ. Թուրքիոյ համանուն նեղուցի Քաղաքի մէջ բաւական թուով Հայեր կը բնակէին ընդհ. պատերազմէն առաջ, ունէին Ս. Գէորգ անուամբ նորաշէն գոթաձև եկեղեցի մը: Հայոց թիւն էր 170 ընտանիք, ունէին քարուկիր նորաշէն դպրոց մը կառուցուած Արրահամ փաշա Երամեանի նպատակով եւ այս դպրոցին շնորհիւ նոր սերունդը սկսած էր հայերէն խօսիլ: Աւանդաբար կը պատմուի թէ տեղւոյս նախնի Հայք, Պիղայի Հայոց հետ Պիղայէ հեռու Թանիսմանլը գիւղի մէջ կը բնակէին, սակայն ի վերջոյ 1658ին ատենները փոխադրուելու են կէսն ի Պիղա եւ կէսը ի Դարդանէր (Էփրիկեան «Բնագիտական»):

ԳԱՐԳԱՆԵԼ, Յովհաննէս Տ. Յովհաննէս Դարդել:

ԳԱՐԵԱԼ Տ. Դարիալ:

ԳԱՐԵՆՆ կամ Չահրաս, կուսակալ Փոքր Հայքի Արշակ Պարթևի օրով (Քրիստոսէ մէկ դար առաջ):

ԳԱՐԵՆՆ Վ. Որոգես, կամ Վաղեգեսու Պարթև՝ արքայ Պարսից (51—91) որ Քրիստոսի 52 թուին

անագին զօրութեամբ վերին Հայաստանի վրայ յարձակելով վանեց անկից վրացիները եւ շատ մը քաղաքներու տիրելով Արտաշատի մէջ թագաւորեցուց Տիրիթը. զոր Հայք յօտարութեամբ ընդունեցին Արշակունի ըլլալուն համար: 61ին Հայք Դարեհի հետ կը պատերազմին Համայնացոց դէմ:

ԳԱՐԵՆՆ, այս անուամբ վերին եւ ներքին կրկին սակաւարժակ Հայոց գիւղեր կան Մոկաց աշխարհի Շատախու գաւառակի մէջ: Երբ Դարեհն ունի Ս. Շմաւոն անուամբ եկեղեցի մը: Վերին Դարեհն Ս. Աստուածածին անուամբ վանք մը: (Էփրիկեան «Բնագիտական»):

ԳԱՐԵՆՆ, հայաբնակ գղ. Աղձնաց աշխարհի այժմեան Խիզան գաւառակի մէջ, 1902ին ունէր մօտ 300 բնակիչ եւ Ս. Գէորգ անուամբ եկղ. մը:

ԳԱՐԵՆՆ ԳՕԼ, գղ. Տիրահայկերտի, 10 տ. հայ բն. ունէր:

ԳԱՐԵՆՆ Փաիւզացի, հին պատմիչ գրած է յոյն լեզուով Արգանաւորդազ ճամբորդութեան եւ Տրոյիոյ հռչակաւոր պատերազմին պատմութիւնը (Քրիստոսէ 1180 տարի առաջ):

ԳԱՐԵՆՆ ՔԱՐԻՔԱՆՆ, գղ. Շամախու գու. ի. 1902ին 38 տ. (210 հողի) հայ բն. ունէր, որոնց նախնիք 1798ին գաղթած են հոս Արցախի Մամձոր, Թաղար Յոր, եւ Ճարտար գիւղերէն:

ԳԱՐԻԱԼ կամ Դարեալ. նշանաւոր կիրճ Աղունից երկրի մէջ, որ կը կոչուի նաև Վլախիկաւիսի կիրճ: Կովկասու քարածայտ բլուր մըն է, ձոր տեղ մը բարձրացած, ուր երկու կողմերէ իրար մօտեցած են անաւոր սեպաձև լեռներ՝ ձեւացընելով սոսկալի կիրճ մը: Նոյն բլրոյն կատարը կայ հինաւուրց ամուր բերդ մը հանդերձ պատուարաւ, որ այժմ ամայի է: Թէրէք գետը, որ կը բղխէ Կովկասու բարձունքներէն, իր մէջ ընդունելով զանազան ձորերէ բազմաթիւ մտակներ՝ կ'անցնի կիրճիս մէջէն: (Էփրիկեան «Բնագիտական»):

ԳԱՐԶՕՐ, կը յիշուի Սասնոյ մէջ:

ԳԱՐՄԱՆ, Տ. Տարսան:

ԳԱՐՄԱՆ, «Բժշկա-առողջապահական եւ դիտական պատկերադարձ ամսաթերթ», տնօրէն զոք. Օննիկ Փափազեան, տպ. Կ. Պոլիս 1920:

ԳԱՐՄԱՆ-ՀԱՅ ԲՈՒԺԱԿ, ամսաթերթ, տպ. Կ. Պոլիս 1921 (լոյս տեսած է միայն 10 թիւ):

ԳԱՐՈՅՆԲ, Դարուն կամ Դարունից բերդ, հին եւ հռչակաւոր ամրոց Այրարատայ կողովիս գու. ի որ ԺՅ. դարէն սկսեալ ծանօթ է Բայազիդ անուամբ: Կը յիշուի ի պատմութեան Դ. դարու մէջ, նախ իրրև հզօր ամրոց եւ ապաստանարան արքունի պնձանց եւ գանձուց, իսկ յետոյ իրրև հայ-



րենի տուն Բագրատունեաց պայազատներուն և նախ կը յիշուի Մեծին Տրդատայ մահէն վերջ, հիւսիսայնոց կամ Մաղքթաց ի Հայս արշաւանաց ատեն, որոնց երկիւղէն «խոյս եա թագաւորն Հայոց Խոսրով. և անկաւ յամուր բերդն Դարօնից, և ընդ նմա ձերուներն Վրթանէս եպիսկոպոսապետն Հայոց»։ Բերդիս մէջ ամրացաւ երբեմն նաև Արշակ Բ. պարսից Շապուհ թգ. ի նետ ըրած երկար պատերազմաց ժամանակ, որոնք անոր գերութենէն վերջ տիրեցին նաև ամրոցիս, իսկ երբ իր որդին Պապ թագաւորեց, ուրիշ ամրոցներու նետ «Թափեաց յինքն... և զբերդն Տարօնից որ է յերկիրն Կողայ, ուր կային գանձք Արշակունեացն սաստիկ յոյժ»։ Ամրոցս Բագրատունեաց սեփականութիւն եղած միջոց, հոս էին սչ միայն անոնց արքունիքը այլև զբերդմանները. 616 թուին բազմայաղթ Ամբատ մարզպանը պարսից դուռը վախճանելով, հանդիսով ու փառօք հոս բերին «Ի բնիկ հանգստարանին, և եղին ի տապանի, ի գեօղն Դարիւնս, որ է ի Կողովիս գա. ի»։ Նոյնպէս 642ին, իր որդւոյն Վարաշիրոտ Ա. բարձին զմարմինե տարան թագեցին առ հօր իւրում ի Դարիւնս»։ Աշոտ Պատրիկ անուանի ի յսանապետն Հայոց եօթներորդ դարու մէջ, «չինէր զեկեղեցին Դարունից յիւրում ստանին»։ յորում զրուեցաւ նաև Քրիստոսի մարդեղութեան պատկերն՝ արևմուտքէն բերած, և եկեղեցին անուանեց Ամենափրկիչ, ինչպէս կ'աւանդեն մեր պատմիչներէն ոմանք։ Վերոյիշեալ պատկերը յետոյ տարած են ի Հաւուց թառ, և այժմ կը պահուի, էջմիածին։ Հէյժ ամիրապետէն 734 թուին իշխանապետ դրուած է այլ ոմն պայազատ Բագրատունիներէն Աշոտ Պատրիկ՝ որդի Վասակայ, որուն վրայ նախանձելով Մամիկոնեանները Գրիգոր և Դաւիթ, տասը տարի ետքը ուղեցին դաւաճանել զինքը. իսկ Աշոտ «ժողովէր զախս տան իւրոյ յամրոցն Դարիւնից, և զտիկիրնն և զամենայն ընտանիքս իւր, և թրդոյր ի վերայ պահապան զամրոցն պահել և ինքն անցեալ զնայր յաշխարհն Ասորոց առ իշխանն Իսմայէլի Մրուան»։ Մրուան ամիրապետին մեծ օգնութիւն ըրաւ Աշոտ, անոր թշնամիները քաջութեամբ վանելով, և մեծարուելով դարձաւ իր աշխարհը. բայց քանի մը տարի վերջ Գրիգոր իշխանէն ձերբակալուելով՝ զրկուեցաւ աչքերէն, որուն վրայ սղացին Հայոց աշխարհի բոլոր նախարարները։ Այդ դէպքէն վերջ Աշոտ 13 տարի ևս ապրելով վախճանեցաւ ձեր հասակի մէջ եւ փառաւորապէս թաղուեցաւ ի Դարիւնս 774 թուին Արարացոց զէմ միաբանած Հայոց նա-

խարարներէն ոմանք ապաստանեցան այս ամուր բերդը։ Իշխանական դահուն հետ, հարկ էր որ հոս ըլլար գէթ ժամանակ մը, նաև Բագրատունեաց տան եպիսկոպոսարանը, վասնզի 628ին կը յիշուի Դարունից եպիսկոպոս ոմն Քրիստափոր։ Տասներորդ դարու սկիզբը Գագիկ Արծրունի թագաւորը երթալով Կողովիս գաւը, պաշարելով «զանառն Դարիւնս, գողացեալ առնու ի գիշերի, ըստ յաջողելոյ նմա ի վերուստ»։ պատմիչը չի յայտնել թէ որուն ձեռքէն, բայց կը թուի Հագարացիներէն։ Այնուհետև ժամանակ մը Արծրունեաց իշխանութեան ներքոյ մնացած է ամրոցս և նոյնանուն գիւղը։ Ժե. դարուն մէջ վերջին անգամ կը յիշէ բերդս և զիւրս Թովմա Մեծփեցի։ (Էփրիկեան՝ «Բնագիտարնիկ», քաղուած Հ. Ալիբաքի «Այրարատ»էն)։ Տե՛ս Բայազիտ։

Դարունեաց եպ. Մկրտիչ Պատմականի կը յիշուի 1671ի յիշատակարանի մը մէջ։

ԳԱՐՈՒԻ կամ Դարուայ լեռն, կը բարձրանայ Երնջակ գաւ. մէջ, այժմ կը կոչուի Տաղի տաղ. անուշտ սխալմամբ գրուած է Դարուայ լեռն։ Անուանի է լերանս երկանաքարը։

ԳԱՐՈՒՔ, կը յիշուի Սասնոյ մէջ։

ԳԱՐՊԱՍ, այս անուամբ գետ, ձոր և զիւղ կան լեռնային Կիլիկիոյ մէջ։

ԳԱՐՊԱՍ Տ. Դարբաս։ — Այս անուամբ ուրիշ զիւղ մ'ալ կայ նոյն գաւառին մէջ, որուն բնակիչները այլազգիներ են։

ԳԱՐՊԱՍ, հայարնակ զիւղ Այրարատայ, Ալեքսանդրապոլի գաւ. ի մէջ։ 1902ին 340 բնակիչ ունէր։ ԳԱՐՊԱՍԵԱՆ Հրանդ Տ. ՅԱԻԵԼՈՒԱԾՐ։

ԳԱՐՊԱՍՆԵՐ, Արցախի Սաչին գաւ. ի մէջ ծանօթ է այս անուամբ Զալալեան մեծահամբաւ իշխանագն տոհմի ապարանը։ Այժմ ամայի եւ ընդարձակ շինութիւն մ'է ապարանս, ունի շատ սենեակներ եւ քարուկիր պարիսպով շրջապատուած է։ Այս սենեկաց մէջ նշանաւոր են ընդունարանն եւ ուրիշ սենեակ մը, որոնք կը ներկայացնեն ժամանակի ճարտարապետութեան եւ ճաշակին ոճը։ Ապարանէս քանի մը քայլ վար, կան անտաշ քարով շինուած միջակ մեծութեամբ երկու եկեղեցիներ։ Վերոյիշեալ ապարանի եւ եկեղեցիներու այս արձանագիր քարերը անյայտացած են։ (Էփրիկեան՝ «Բնագիտարնիկ»)։

ԳԱՐՊԱՍԿ, Ծովային Կիլիկիոյ ամրոցներէն մին։

ԳԱՐԻԻՇ Տ. ՍԵՆՈԿԵԱՆ։

ԳԱՐՕՆՔ Տ. Դարոյն։

ԳԱՐՖԻ Գեորգ գրած է Սիաուու եւ Սուսաբէ դրամա, տպ. Թեհրան 1936ին։

ԳԱԻԱՒԱՆԱՅ, հին գղ. Սիւնեաց Սողք գաւ. ի։

ԳԱԻԱՒՈՒ Տ. Արարատ գիւղ։

ԳԱԻԱՆԱՐԱՐԱ Տ. Աւագ։



ԳԱԻԹԵԱՆ Արիսակես Արքեպ. ծնած է 1883-ին Լօռիի մէջ, փոքրիկ հասակէն Պոլիս կ'երթայ եւ Օրթազիւղի Ազգային վարժարանին մէջ կը ստանայ իր նախնական ուսումը: 1860ին էջմիածին երթալով հոն կը հետեւի եկեղեցական ուսմանց ու 1868ին վարդապետ կը ձեռնադրուի: 1883—1895 Մայր Աթոռոյ տպարանական ժողովի նախադահ եւ միաժամանակ Գէորգեան ձեռնարանի ուսուցիչ կը կարգուի: 1886ին Մակար Բ. կթղէն եպիսկոպոս կը ձեռնադրուի եւ Սինոդին կ'անդամակցի: 1896ին կը ստանայ Արքութիւն: 1901ին Ռուս կառավարութենէն ստացած է Ստանիսլայի Ա. աստիճանի պատուանշան եւ 1908 Փետր. 7ին վախճանած է էջմիածնի մէջ իր հրատարակած երկերն են. Ծաղկաբաղ վարուց եւ սրբոց եւ սօնակատարութիւնք Հայաստանից սրբոյ եկեղեցւոյ, տպ. Վաղարշապատ 1887: Աղանդաւորք եւ մոլորութիւնք սոցա ի վարդապետութիւնս հաւատոյ, տպ. 1891ին Վաղարշապատի մէջ: Չեռագիր կը մնայ Հայ եկեղեցւոյ ժողովոց կանոնները: (Յ. վարժապետեան):

ԳԱԻԹԵԱՆ Մ. Նոր Գրող Խ. Հայաստանի մէջ (1937):

ԳԱԻԹԵԱՆ Յարութիւն, Ջուղայեցի, ուսեբեհնէ ի հայ կը թարգմանէ Պասմուքի սուրբ գրոց, «Արարեալ համառօտ հարցմամբք եւ պատասխանեօք, յաղագս դեռահասակ մանկանց: Թարգմանեալ ի ուսաց լեզուէ ի հայ բարբառ ի պարոն Յարութիւնէ Ջուղայեցւոյ... Յամի տեառն 1785... Ծախիւք եւ տպիւք պարոն Գրիգորին: Ի Սանկտպեղեբալուրք:

ԳԱԻԹԵԱՆ Պ. Սովեթական դեսպան Վարչաւիոյ մէջ որ 1937ին շնորհազուրկ եղաւ:

ԳԱԻԹԵԱՆ Սերիկ, պատասխանատու խմբագիր ժողովրդական Լուսաւորութեան ամսագրի, տպ. Երեւան 1926—7:

ԳԱԻԹԵԱՆ Սերոբէ վրդ. ապրած է Կ. Պոլիս ժթ. դարու կիսուն. հրատարակած է Պասնառ վիեից Հայոց Ուղղափառաց, տպ. Պոլիս 1870:

ԳԱԻԹԵԱՆ Սմբատ, ուսուցիչ, բանասէր, ծնած է Ակն 1858ին ու տեղւոյն Ազգ. վարժարանին մէջ ուսանելէ ետք անցած է Կ. Պոլիս կանուխէն, ուր շարունակած է իր ուսումը:

1887ին արդէն զինքը Աֆիոն Գարահիսարի Սմրատեան ընկերութեան վարժարանի տնօրէնդասատու կը զտնենք. 1888ին իր անդրանիկ երկդասագիրքը կը հրատարակէ վարժութիւն Մանկանց մասն Ա. որ տասէն աւելի տպագրութեանց կ'արժանանայ: 1889ին վարժութիւն մանկանցի երկրորդ մասը լոյս կը տեսնէ (այս ալ 10էն աւելի անգամ կը տպագրուի), 1891ին՝

նոյնին Գ. մասը լոյս կը տեսնէ (վեց-եօթն անգամ տպուած):

1903ին լոյս կ'ընծայէ Ուղեցոյց, երկրորդ վարժութեան հրահանգներու լուծումը:

1891ին՝ Տարրական Բերականուրիւն արդի հայերէնի (Բ. տպ. 1892ին):

1892ին՝ Գործնական ընթացի՝ շարադրութեան եւ վայելչաբանութեան (երեք անգամ կը տպագրուի):

1893ին՝ Ընտելարան հայ լեզուի (5-6 անգամ տպագրուած):

1894ին՝ Սկզբունք համաձայնութեան եւ շարադասութեան (2 անգամ տպուած):

1894ին՝ Լրացորցիչ դասընթացք տարրական բերականութեան արդի հայերէնի (3 անգամ տպագրուած):

1895ին՝ Պակերագարդ այլեմարան (մօտ 10 անգամ տպուած):

1897ին՝ Նուէր հայ մանուկներուն (երկու անգամ տպուած):

1891ին լոյս կ'ընծայէ Առաջին Փունջը (15 անգամ տպագրուած):

1892ին՝ Փնջակ (5-6 անգամ տպուած):

1894ին՝ Երկրորդ Փունջը (3 անգամ տպուած):

1896ին՝ Ծաղկաբաղ (2 անգամ տպուած):

1902ին՝ Հանդիսարան:


1903ին՝ Ընթերցարան մայրենի լեզուի Ա. տարի: 1904ին՝ Բ. տարի:

1904ին՝ ձառակ նոր գրականութեան, Ա. հատոր 1900ին՝ Նոր Գլորոց, Ա. պրակ 1901ին՝ Բ.—Ե. պրակ, 1902ին՝ Զ.—Թ. պրակ:

1903ին՝ Համառօտ Իրագիտութիւն եւ այլն:

Մ. Գալթեան Պոլսոյ մէջ բացած է նաեւ դրատուն եւ հրատարակած է Յայտադիր Գալթեան Գործակալութեան եւ Գրացուցակ (1896 - 1905), ու 1904ին Լիակատար Գրացուցակ: Թարգմանած է Տիւմա Ա. ի «ժանջը եւ ժ. էրմինաի «Մոնթէ Գրիսթոյի Որդին» վէպին Բ. հատորը:

Գալթեան 1901ին Բիւրակն ամսագրին տնօրէնն եղած է, եւ թէ այդ հանդէսին եւ թէ ազգային ուրիշ շատ մը հանդէսներու մէջ երեւցած է ազգագրական եւ այլ բանասիրական ուսումնասիրութիւններով: Մեռաւ 1926ին:



ՍՄԲԱՏ ԳԱԻԹԵԱՆ



ԳԱԻԹԵԱՆՆ Տ. Գաւիթեան:

ԳԱԻԹԵԱՆՆՅ Տ. Գաւիթեանց Գ.

ԳԱԻԹԵԱՆՆՅ Սողոմոն Խան, ճարտարագետ Արքուէնեաց, Իրանի մէջ, ԺԹ. դարու կիսուն:

ԳԱԻԹԻ ԲԵՆԳԻ, Սիւնեաց Հարանդ գո. ի Հալի-ձորի մէջ կը գտնուի նշանաւոր բերդս, ամայի վիճակի մէջ. Սիւնեցի կարիճն Գաւիթ կառուցած է իր ընդդէմ Օսմանեանց մղած պատերազմներու ատեն: Տե՛ս Գաւիթ Բէկ:

ԳԱԻԹԻ-ՄՐՁՕ կամ Մեգրե, գղ. Բալուէի, 1902-ին ունէր 30 տուն հայ և Ս. Թորոս անուամբ եկեղեցի մը և դպրոց:

ԳԱԻԹԻ մարզարէ (Ս.) որուն Սաղմոնները իբրև դասադիրք ծառայած են ատեն մը հին հայ դպրատուններու մէջ: Հայ եկեղեցիին Դեկտեմբերին վերջերը կը տօնէ:

ԳԱԻԹԻ Ա. կթղ. ծնած կոտէլից գաւառի Արամոնս կամ Արամօնք գիւղին մէջ, այդ պատճառաւ Արամանցի կոչուած է, սա 729ին Յովհաննէս իմաստասէր Օձնեցի կաթողիկոսին կը յաջորդէ: Դաւիթ երկու տարի Դուինի մէջ նստելէ ետք նեղուած Մահառոստիկանի զօրքերէն՝ իր ծննդավայր Արամօնք գիւղը գնաց նստաւ ուր գեղեցիկ եկեղեցի մը կառոյց ու մօտը վայելուչ բնակարան: Դաւիթ հոս այ հանգիստ չգտնելով ամիրայակահին դեսպան զրկեց խնդրելով որ Մահառոստիկանին տեղ Արդլաղիզը գնէ Հայաստանի վրայ ոստիկան, ամիրայակտը ընդունալ գնաց Դաւիթ խնդրանքին և Արդլաղիզ խաղաղութեամբ վարեց իր իշխանութիւնը: Դաւիթ մինչև 738 թուականը իր գիւղը բնակելէ ետք կրկին Դուին փոխադրեց կաթողիկոսական աթոռը և հոն ևս մօտ 3 տարի նստելէ ետք 741ին վախճանեցաւ, որուն յաջորդեց Տրդատ Առաջին:

ԳԱԻԹԻ Բ. կթղ. Կակաղեցի, Մազաղ գաւառէն, Յովսէփ Բ. կթղ. ի յաջորդեց 808ին Ասոր օրով Սմբատ սպարապետն ու Սիւնեաց իշխանը Սահակ Սեւադայի հետ միացած՝ Հոյ ոստիկանէն ապստամբեցան: Հոյ վստահելէ ետք թէ Դաւիթ անտեղեակ է և միանգամայն հաւան չէ այդ ապստամբութեան՝ միջնորդ կացոյց Դաւիթ կթղ. որ հայ իշխանները չմիանան Սեւադայի. երբ վերջինները տեղի չտուն՝ Հոյ պատերազմի ելաւ և յաղթեց: Դաւիթ կաթողիկոսի խնդրանքին վրայ Հոյ ներեց ապստամբ հայ իշխաններուն: Դաւիթ Բ. 27 տարի կաթողիկոսութիւն ընելէ ետք վախճանեցաւ 833ին և իրեն յաջորդեց Յովհաննէս Ովայեցին:

ԳԱԻԹԻ Գ. կթղ. Արքակաղնեցի, սա Արքայ վանքի նշանաւոր միաբաններէն էր, զոր Լեոն Մեծն 1203ին քանի մը եպիսկոպոսաց և վար-

դապետաց հաւանութեամբ Սիսի մէջ կաթողիկոս դրաւ, երբ Յովհաննէս Զ. Մեծօփեցին էր օրինաւոր կաթողիկոսը: Յաջորդ տարին (1204) Լեոնի հրամանաւ Դաւիթ Գ. Սիսի մէջ եկեղեցական ժողով գումարեց՝ Զաքարիա Ապասալարի հարցումներուն պատասխանելու համար: Երեք տարի կաթողիկոսութիւն ընելէ ետք Դաւիթ Գ. վախճանեցաւ 1206ին:

ԳԱԻԹԻ Կ. կթղ. 1398—1401 կաթողիկոսութիւն ըրած է Սիսի մէջ (ըստ Չամչեանի), Օրմանեան (Հիւանդանոցի Տարեցոյց 1901 էջ 390) իրաւամբ այս Դաւիթը Սոսյ կաթողիկոս չի համարեր, այլ Աղթամարայ: Տե՛ս Կարապետ կթղ.:

ԳԱԻԹԻ Ե. կթղ. Վաղարշապատցի, (ըստ Օրմանեանի Դաւիթ Ե.), սա Առաքել կաթողիկոսէն 1856ին իրրև աթոռակից կաթողիկոս կը ձեռնադրուի ու Առաքելի մահէն ետք 1587ին ինք նստաւ կաթողիկոսական աթոռին վրայ:

Սա ևս պտրտատէրներէն նեղուելով՝ Մելքիսեթեկ Գառնեցին Աթոռակից կը ձեռնադրէ 1593ին: Շահարասի օրով Էջմիածնայ պարաքը սաստկացած ըլլալով Դաւիթ ու Մելքիսեթեկ էջմիածնէն հեռու կը թափառէին, և 1602ին Տաթեւի վանքին մէջ առանձնացաւ. 1605ին Սպահան կը տարուի ժողովրդեան հետ. այդ միջոցին Հռոմայ Պողոս Ե. պապին դաւանութեան և հպատակութեան թուղթ կը գրէ (ըստ Չամչեանի Գ. էջ 600): 1611ին Դաւիթ երբ Էջմիածին իր աթոռը կը վերադառնայ՝ հոն իրեն հակառակորդ կը գտնէ Մելքիսեթեկը, յաջորդ տարին սակայն երբ Շահարասայ կը ներկայանայ և կ'իմացնէ թէ Մելքիսեթեկ կաթողիկոսական աթոռը դրաւ իր վանքին գահընկէց ընելով կը պատժէ և Դաւիթին կը յանձնէ կաթողիկոսական աթոռը 1616-ին Դաւիթ կրկին կը հալածուի Ամիրգոնա Խանէն, որ ամէն գնով Մելքիսեթեկը կ'ուզէր Էջմիածին բերել: Դաւիթ երբ իր վիճակը յայտնեց Շահարասայ՝ վերջինս Մելքիսեթեկը բռնել և կապանօք իրեն բերել հրամայեց: Դաւիթ յետոյ Շահարասի հրամանով Սպահան առանձնացաւ և Շահէն նուէր ստացաւ Ջղախոռ գաւառի Գոնդիկան գիւղը: Երբ Սահակ Գ. կթղ. (աթոռակից) 1626ին նոր Ջուղայ կ'երթայ հանդանակութեան համար՝ ժողովուրդը ո՛չ մէկ օգնութիւն կ'ընէ և որովհետեւ այդ առիտ հոն կը գտնուէր Դաւիթ՝ զինքը Սահակի դէմ կը զրգռեն ըսելով — Մենք իրր օրինաւոր կաթողիկոս չենք ճանչնար. պատրաստ ենք ծախքը վճարելու որ Շահարասին երթաս եւ թոյլտուութիւն ուզես կաթողիկոսական պաշտօնը վարելու: Բայց որովհետեւ Շահարաս կը բաղձար որ Սահակը կաթողիկոսութիւնը վարէ՝



Դաւիթ 1628ին հրաժարեցաւ վերջնականապէս և վախճանեցաւ 1633ին:

ԳԱԻԻԹ Ա. ԿԹՂ. Աղքամարայ, որդի Թոռնկայ, նախապէս արքեպիսկոպոս Աղթամարայ վանքին: 1113ին Գրիգոր Գ. Պահլաւունի Բարսղի մահէն ետք երբ կաթողիկոս ընտրուեցաւ՝ Դաւիթ պատճառելով նորընտիր կաթողիկոսի մանկական հասկը՝ 5 եպիսկոպոսներ Ձորոյ վանքը ժողովեց ինքզինքը կաթողիկոս ընտրելու ձեռնադրել տալով՝ Աղթամարայ մէջ նստաւ. պատճառելով մանաւանդ որ Վասպուրականի մէջ կը գտնուէի Վահան կթղի գերեզմանը, ինչ է նոյնպէս Ս. Գրիգոր Լուսաւորչի սեղանը, քօղն ու գաւազանը և մաշկեղէն գօտին նաև Ս. Աջը և ուրիշ սրբութիւններ: Ծատ մը իշխաններ և Արեւելեան վարդապետներ հաւանեցան Դաւիթ կաթողիկոսութեան և այդ թուականէն սկիզբն առաւ Աղթամարայ կաթողիկոսութիւնը:

Յաջորդ տարին 1114ին Գրիգոր Գ. Պահլաւունի Սեաւ լեռան մէջ եկեղեցական ժողով գումարելով բանադրեց Դաւիթն ու իր հետեւորդները: Պատմութիւնը կը լռէ:

ԳԱԻԻԹ Բ. ԿԹՂ. Աղքամարայ. 1344—1368 ըստ Խաչիկ Լեւոնեանի (քննելի):

ԳԱԻԻԹ Գ. ԿԹՂ. Աղքամարայ, 1441ին կը յիշուի էջմիածնի մէջ գումարուած ժողովոյն առթիւ:

ԳԱԻԻԹ Ա. պատրիարք Երուսաղէմի, (1316—1321), ասոր գերեզմանը՝ ըստ աւանդութեան Ս. Յակոբի Դաւթին մէջ կը գտնուէր, բայց երբ գաւիթը կը նորոգուի Դաւիթ պատրիարքին գերեզմանաքարն ալ տեղէն հանուելով նոյն գաւիթի աջակողմը գտնուող հարաւային սիւնին վրայ կը գետեղուի Տապանագիրն այս է. «Տապանն այս որ կայ աստէն, է գերեզման սա Տէր Դաւիթ գերեզմանիկ և սուրբ հեղինակի, զձեզ աղաչէ ազերսալի, յիշման առնել զիս արժանի. թվ. 22» (1321): ՄՁ թ. 271 ձառոցին յիշատակարանին մէջ իրր ստացող նոյն ձառոցին կը յիշատակուի Դաւիթ պարքի անունը հետեւեալ կերպով. «... Յամի եթն հարիւրերորդ վաթսնեբորդի հինգերորդի (1316) թուականութեան Հանոց, գրեցաւ սա ի Ս. յԱձակոխ քաղաքս Եմ (Երուսաղէմ) ընդ հովանեաւ սուրբ տաճարիս որ յանուն սուրբ և զաւրեղ հրեշտակապետացս Միքայէլի և Գարբէլի հրամանաւ և ծախիւք աստուածարեալ և հոգիւնկեալ եպիսկոպոսին Երուսաղէմի տէր Դաւթի, ձեռամբ և յոգնամեղ եւ անարհեստ սուտանուն գրչի Ստեփան մականուն երկայն կոչեցեալ ... Գրեցաւ ի թագաւորու-

թեան Հայոց Աւչնի և ի հայրապետութեան Տէր Կոստանդեայ, ի դառն և յանրարի ժամանակս... Արդ աղաչեմ զամենեւեան, որք վայելող էք եւ հանդիպողք այսմ լուսաղարղ մատենի յիշել եւ մեղաց թողութիւն խնդրել ի Քրիստոսէ յառաջասցեալ եպիսկոպոսին Տէր Դաւթի և ծնողաց նորա և բնաւին զարմիցն նորա կենդանեաց եւ հանգուցելոց... Գրեցաւ ժամագիրքս հրամանաւ Տէր Դաւթի՝ մեծի և հռչակաւոր կաթողիկէ եկեղեցւոյն Երուսաղէմի Ս. Յակոբայ Տեառն եղբաւրն և միւս ևս Յակոբայ եղբաւր Յովհաննու վանն այնորիկ՝ գրեցի զայլ աւելի կարգացմունքդ և գանձերդ և տաղերդ... ՄՁ. թ. 74 ձեռագիր ձառքնսիւր մը, որ ՁԿԷ (1318) թուին Դրազարկի մէջ ընդօրինակուած է Ստեփանոս երկայն կոչուած (վերի) գրչի ձեռք, Երուսաղէմի սոյն Դաւիթ եպիսկոպոսի յիշատակ կը տրուի Ս. Յակոբի վանքին: (Աղաւնուի՝ «Միաբանք» էջ 109):

ԳԱԻԻԹ Բ. պարք. Երսղ.մի, Մերտինցի, (քաջ երածիշտ). Մերտինցի Անդրէաս պարքի եղբոր որդին: Հայրը՝ մհա. Յովհաննէս, մայրը՝ մհտ. Ղամար, եղբայրները՝ Տէր Կիրակոս և մհտ. Չաքար:

Դաւիթ պարքի օրով Յովհաննէս Տէրգնցի վրդ. Հռոմ գացած է և թղթակցած է գրելով «բուլղ Հայոց Հռովմայ առ Դաւիթ պատրիարք Հայոց Երուսաղէմի, որուն մէջ սա փառասուրբ կու տայ Դաւիթ պատրիարքին. Մբոյն Յակոբայ Տեառն եղբօր սեղապանիդ, վեհագոյն եւ պատուեալ անուն պատրիարքի Երուսաղէմայ Տէր Դաւիթ Պուեթիկոսիդ, վերջին բառովս կ'ուզուի բացատրել Դաւիթ պատրիարքին քաջ երածիքս ըլլալը և համեղ ձայն ունենալը: Հաւանօրէն Դաւիթ պատրիարք կանխաւ թուղթ մը գրած էր Հռոմ. այդ պատճառաւ է որ Տէրգնցին իր նամակին մէջ հետեւեալ տողերը մէջկը բերէ. «որ եւ մի ի շառաւիղացդ փայլակնաման կայձակնասէս՝ ժամանեաց ի կայսերանիս եւ ի փափաբնակն ի մեծն Հռովմ»: Տէրգնցին յետոյ կը յօրինէ քերթուած մը՝ որուն տնագլուխ գրերը կը կապեն Տէր Դաւիթ Պատրիարք բառերը: Նոյն թղթով Դաւիթ կը կոչուի նաև Պատրիարք Սուրբ գերեզմանին Քրիստոսի Աստուծոյ մերոյ և կը խնդրուի իրմէ որ հաճի զրկել իրենց այնպիսի սուրբի մը մատուցելը՝ որուն համբաւը յսուած ըլլայ Հռովմի ժողովուրդէն. և անոր հետ զրկուի նաև մատուցելն անունը կրող սուրբին կատարած սքանչելիքներուն պատմութիւնը... յետոյ կը խնդրուի նաև որ պատարիարքը նամակ մը գրէ փափին



և յիշէ իր օգնութիւնը իրենց եկեղեցիին և մասունքին զրկուելը. միջնորդէ փափին մօտ, որպէսզի այն իրենց եկեղեցիին համար գթութեամբ շարժի եւայլն. պատրիարքին կ'ըսուէ նաև եւ առաքեցես զպետն նամակից հայու գրով. և զտուրք մասն ընդ առն ումեմն մահտեաի փափագողի սրբոյն Պօղոսի և Պետրոսի, և երբ մօտի Հոռովմայ աւուր միոյ ճանապարհ աղղ առնէ մեղ, զի մեք ելցուք ընդ առաջնորա և պատուով մուտցուք ի քաղաքն. կը խոստանան ճամբու ծախքը զրկել պատրիարքին ինչպէս նաև ընծաներ, ու կը գրեն որ առաջին առթիւ պիտի ջանան պատրիարքին հասցնելու տպագրուած հայերէն Սաղմոսը և Աւետարանը:

Տէրզնցին այս աղաչանքներէն վերջ, կ'աւելցընէ ուրիշ խնդիր մ'ալ և կ'ըսէ. Եթովպիա, Արարիա, Սուրիա. Վրաստան, Հայաստան, Միջագետք, Ռուսաստան իւրաքանչիւր ազգէ, ո՛չ թէ փափին կողմէն, հրաւիրակներ, գացած են Հոռովմ հրաւիրելու պատրիարքներ և եպիսկոպոսներ՝ հասկնալու համար փափին մէկ նոր նպատակը: Նամակը ստորագրողներ կը խնդրեն Դաւիթ պարք.է, որ իր իշխանութեան բոլոր շուքով այցելութիւն մը տայ Հոռովմի. և նոյն ատեն այնպիսի ընդունելութիւն մը պիտի ըլլայ իրեն որ եւ ոչ լիցի լեալ այնպէս յաւուրն Լուսաւորչի եւայլն: (Այս նամակին ամբողջութիւնը տեսնել «Հայապատումի մէջ, էջ 599—603):

Դաւիթ պարք. Մերտինցի իր ժամանակի գիտնական ու անուանի եկեղեցականներէն մին նկատուած էր, ինչպէս կը հասկցուի հետեւեալ տողերէն: 1583ին Սիդոնի եպ.ը՝ Léonard Abel կոչուած, Գրիգոր ԺԳ. պպին կողմէն Արեւելք կը զրկուի կրօնական նպատակով մը. յիշեալ եպ.ը 1587ին իր սեղեկագիրը կու տայ Սիքոտոս Ե. պպին: Էջմիածնի և Սսոյ մեր երկու կաթողիկոսութիւններու և վանքերու մասին կարեւոր տեղեկութիւններ կը հաղորդէ և նոյն ժամանակի Հայոց եկեղեցականներէն իրր անուանի գիտնականներ կը ներկայացնէ վերոյիշեալ Երուսաղէմի Դաւիթ եպ.ին հետ՝ Ազարիա պատրիարքը, Պետրոս վրդ. Կարկառեցին, Յովհաննէս եպ. Զէյթունի, Տիրատուր վրդ. Տիվրիկի»: (Աղաւունքի «Միաբանք» էջ 109:

Հ. Չամչեան Դաւիթի պատրիարքութիւնը կը զնէ 1606—1631:

ԴԱԻԻԹ Ա. պատրիարք Կ. Պոլսոյ, (1631—41, 1643—44, 1646—9, 1659—51), էջմիածնայ նուիրակ Դաւիթ եպ. յաջորդեց Չաքարիայի Պատ-

րիարք ընտրուելով 1639ին: Այդ միջոցին, Օսմանեան Պարսկական հաշտութենէն ետքը (1639 Սեպտ. 19), էջմիածին սկսաւ վերստին շէննալ, շնորհիւ Փիլիպպոս Աղբակեցի կաթողիկոսին, որ 1633ին յաջորդած էր Մովսէս Տաթևացիին և 1638ի վերջերք՝ Պարսկաստանէն էջմիածին վերագարձուցած Ս. Լուսաւորչի Աջը. Դաւիթ պատրիարքական Աթոռէն կը հեռացուի 1641ին և 1643ին կրկին նստելով անոր վրայ՝ պատրիարքարանէն կը հեռացնէ Կղեմէս Գալանոսը: Գիշ ետքը, հակառակ Ֆրանսական դեսպան պ. Ժան աը Լանէի միջամտութեան, Կղեմէս և իր համախոհներէն ոմանք կը ստիպուին Եւրոպա մեկնել, և այսպէս անհետեանք կը մնայ Կ. Պոլսոյ Հայոց մէջ Հոռովմադաւանութիւն տարածելու այս առաջին փորձը, որուն կ'օգնէին Կիրակոս Երեւանցի եւ Խաչատուր Սերաստացի պատրիարքները. իրենց հօտին մէջ ուսում տարածելու փափագով. իսկ Դաւիթ Արեւելցին, 5 ամիս պատրիարքութիւն ընելէ ետքը, կը հարկադրուի քաշուիլ Կիպրոս թովմաս Բերիացի կը յաջորդէ Դաւիթի, սակայն հազիւ երկու ամիս կրնայ պաշտօնավարել, աթոռէն հեռանալով Հոռովմ կ'երթայ և երրորդ անգամ նորէն Դաւիթ Արեւելցին պատրիարքական աթոռը կը նստի Կիպրոսէն վերադառնալով: Ասոր օրով 1645ին մեծ հրդեհ մը մոխիր դարձուց Գում Գափուի թաղը և Հայոց Ս. Աստուածածին Մայր եկեղեցին որ տարի մը ետք 1646ին վերաշինուեցաւ: 1649ին Դաւիթ Արեւելցի ինկաւ պատրիարքութենէ. իր յաջորդին ընտրութեան մասին կարելի չեղաւ համաձայնութիւն գոյացընել. և աշխարհական տեղակալներ 1649—1650 վարեցին պատրիարքարանի գործերը 11 ամիս:

Դաւիթ զինուամեր ընելով յաջողեցաւ վերստին գրաւել պատրիարքական աթոռը, ուր մնաց չորս ամիս միայն (1651) և նորէն աշխարհական տեղակալներ քանի մը ամիս վարեցին պատրիարքարանի գործերը մինչև որ Եղիազար Այնթապցի ընտրուեցաւ: («Հիւ. Տար» էջ 94—6):

ԴԱԻԻԹ Աննոյիցի ս. Դաւիթ Բագրատունի Գուրգենեան:

ԴԱԻԻԹ Անյաղբ ս. Դաւիթ փիլիսոփայ: ԴԱԻԻԹ Արժուցի, որդի Սենեքերիմ թգ.ի 1021-ին Շապուհ սպարապետին հետ Սկիւթացուց դէմ, պատերազմի կ'ելլէ և քաջարար կը կռուի. 1026-ին հօրը մահէն ետք ինք թագաւորեց Սերաստիոյ մէջ. ու մեռաւ 1037ին. և որովհետև որդի չունէր՝ իրեն յաջորդեց Ատոմ եղբայրը:

ԴԱԻԻԹ Բագրատունի, որդի Աշոտ թգ.ի, 889ին իր հօրը թագման ներկայ կ'ըլլայ. իր եղբորմէ



Սմբատ թգ.էն իշխանաց իշխան կը կարգուի ու 902ին կը մեռնի:

ԳԱԻԻԹ Բագրատունի, որդի Գագիկ թգ.ի, 1072-ին Ապլխարիպ իշխանի ղուստրը կնուծեան կ'առնու, 1079ին կը գժտի աներոջ հետ, որմէ կայանաւորուելով Պապեռոն բերդաքաղաքին մէջ ազատ կ'արձակուի. յաջորդ տարին սակայն թուանաւորուելով Ապլխարիպէն կը սպաննուի:

ԳԱԻԻԹ Բագրատունի Աննուլին, որդի Գուրգէնի, սա 990ական թուականին ընդարձակելով իր իշխանութեան սահմանը թագաւորեց Վրաց և Գուգարաց մասին վրայ Շամշուտէի մէջ գնելով աթոռը. յետոյ տիրեց Դմանիս քաղաքին, նուաճեց Տփղիսի ամիրան և յաղթեց բոլոր թշնամիներուն: Այդ ատեն Գանձակայ Փալտուն ամիրան Դաւիթի վրայ յարձակեցաւ զօրաւոր բանակով և յաղթուելով հազիւ ազատեցաւ Դաւիթի ձեռքէն: Հայ իշխան մը, որ Գագայ բերդին կը տիրէր՝ Վրացիներուն հետ միացաւ և կրկին մկրտուելով՝ Դիմեար կոչուեցաւ և նստաւ Գագայ բերդին մէջ իբր կուսակալ վրաց: Դաւիթ զայրացած կրկին մկրտուելուն համար՝ զնաց զրաւեց Գագայ բերդը և տիրեց Դիմեարի իշխած հողերուն: 1001 թուին Դաւիթ սպստամբեցաւ Գագիկ թգ.էն. վերջինս զայրացած շատ մը զօրքով Տաշիր գաւառը հասաւ, ուր կը տիրէր Դաւիթ, Գագիկ քանդեց ու աւերեց Դաւիթի տիրած երկիրը, վերջինս թէև քանի մը անգամ փորձեց ղիմադրել, բայց չհամարձակեցաւ: Այդ ատենի Սարգիս կաթողիկոսը Դաւիթը իր հօրեղբոր Գագիկ թգ.ի ոտքը տարաւ և հաշտեցուց, հնազանդիլ պարտադրելով սպստամբին:

Գագիկայ մահէն ետք երբ 1036ին, Յովհաննէս կը թագաւորէր՝ Դաւիթ կրկին զօրացաւ և տիրեց հայկական Աղուանից աշխարհին և նորոգեց շատ մը ամրոցներ ու աւաններ, կանգնեց 12 նոր բերդեր, շինեց Լօռի քաղաքը և իր Գուրգէն եղբորը տուաւ: Դաւիթ քոյրը կնուծեան արուած էր Դուռինի Ապուսվար ամիրային, որ տեսնելով Դաւիթի զօրանալը՝ պարսից Տուղրիլ արքային հետ միանալով Դաւիթի սահմաններուն վրայ յարձակեցաւ և շատ մը քաղաքներ ու գիւղեր զրաւեց: Դաւիթ չկարենալով առանձին ղիմադրել թշնամուոյն՝ պատգամաւորներ զրկեց Հայոց Յովհաննէս և Ափխազաց թագաւորներուն ըսելով որ «Ապուսվար իր հողերը զրաւելի է ետք ձեր երկիրներուն պիտի տիրէ»: Ասոնք ինը հազար զօրքով զօրացուցին Դաւիթի տասը հազարնոց բանակը, որուն վրայ աւելցաւ Աղուանից Յովսէփ կաթողիկոսի հաւաքած բազմութիւնը կրօնաւորներու և հաւատացեալներու:

Ապուսվար երբ պարսկական զօքքերով ճակատեցաւ Դաւիթի բանակին դէմ, արհամարեց զայն ու ծիծաղեցաւ: Այդ ատեն Դաւիթ հրամայեց և կեղեցականներուն որ փոխանակ զէնքի խաչ ու աւետարան առնեն իրենց ձեռք. ու երբ պարսից բանակը սկսաւ յարձակում գործել, բոլոր քահանաները բարձրաձայն զօչեցին. — «Արի Տէր, օգնեա՛ մեզ, և փրկեա՛ զմեզ վասն անուանդ քում սրբոյ»:

Գրիստոնեայ գինուորները խրախուսուած՝ յարձակեցան թշնամիին վրայ և զայն ցիրուցան բրին՝ հինգ օրուայ ճանապարհ զայն դուրս վանելով. ու Դաւիթ կրկին տիրեց իր հողամասերուն և իրեն օգնութեան հասնող գինուորները վարձատրեց: Դաւիթ մեռաւ 1046ին և թաղուեցաւ Սանահնի վանքին մէջ, որուն յաջորդեց որդին Գորգեն կամ Կորիկէ:

ԳԱԻԻԹ Գնուցի, նահատակ 917ին Յուսուփի օրով (ս. Գուրգէն Գնուցի):

ԳԱԻԻԹ, Գրիգոր քհ. որդի, կը նահատակուի Խարբերդի, կամ ըստ այլոց Կաֆայի մէջ 1495ին:

ԳԱԻԻԹ Գուցեցի (Ս.), որդի պարսկի և քրիստոնեայ մօր, կը մկրտուի Անաստաս կթղ.էն և թողրով իր իսկական Սուրբան անունը՝ կը կոչուի Դաւիթ: Կ'ամուսնանայ հայուհեոյ մը հետ, կ'ապրի Դուռինի մէջ և Արղլլայ ոստիկանէն խաչը հանուելով կը նահատակուի 693ին: Հայ եկեղեցին կը տօնէ Խաչվերացէն ետք:

ԳԱԻԻԹ եպ. Արարացի, կամ Խորվիրապցի, միաբան Ս. Էջմիածնի, 1596, 1612 և 1621 թուականներուն երուսաղէմ կ'այցելէ և Դաւիթ պատրիարքի թագման ներկայ կ'ըլլայ 1622ին: Նուիրակ կ'երթայ Էրզրում ու 1627ին վանքին Ասաուածաշունչ մը նուէր կը տանի: (Աղաւնուցի՝ «Միաբան»):

ԳԱԻԻԹ եպ. Կեսարիոյ (1633—1638...), երկու գրչագրի յիշատակարաններ 1637—38ին, կը յիշատակեն զինքը իբր Առաջնորդ կամ Հայրապետ «Կեսարու նահանգին»: Կիլիկիոյ Սէմէոն կաթողիկոսը (1633—48) իր առ Փիլիպպոս կթղ. (1633—1655) ուղղած թուղթին մէջ (ըստ Օրմանեանի առ նուազն 1638ին գրուած), Գրիգոր Կեսարացիի եպիսկոպոս ձեռնադրող Յովհաննէս Ե. յիշատակելով կաթողիկոսէն (1623 †) ձեռնադրուած եպիսկոպոսներու շարքին մէջ կը յիշատակէ նաև «գլխաւոր եպիսկոպոսն Կեսարիոյ որ այժմ առաջնորդ է»:

Ուրեմն Դաւիթ եպ. ամէնէն ուշ 1622ին եպիսկոպոս ձեռնադրուած էր, Գրիգոր Կեսարացի ողջ և Կեսարիոյ առաջնորդ եղած ատեն: Հետեւ-



բար անոր կենդանութեան իրր փոխանորդ գործած է, գէթ 1628 թուականէն սկսեալ, եթէ ոչ աւելի կանուխ, մանաւանդ անոր բացակայութեան ատեն, և անմիջապէս անոր յաջորդած է իրր առաջնորդ: Որ այժմ առաջնորդ է բառերը յառկանշական են եւ ցարդ ողջ է չեն նշանակեր, այլ՝ հիմա պառջնորդ եղաւ, մինչ ձեռնադրուած ատեն չէր: Այս մեկնութեամբ ինքն կը դառնայ անմիջական յաջորդը Գրիգոր Կեսարացիին, որուն մինչև 1633 Կեսարիոյ առաջնորդութիւնը պահած ըլլալը, ամէն տարակոյսէ դուրս է: Նոյնպէս ասկէ պարզօրէն կարելի է հետեւցնել թէ Դաւիթ եպ. Գրիգոր Կեսարացիի աշակերտներէն մին էր: Դժբախտաբար իր պաշտօնավարութիւնը մինչև ե՞րբ տեւած ըլլալուն մասին ուէ ծանօթութիւն չունինք:

Հաւանօրէն 1644էն առաջ պէտք է հրաժարած կամ մեռած ըլլայ վասնզի եթէ ողջ ըլլար՝ անցորդ եպիսկոպոսի մը (Լեհաստանի կողմերէն Անտոն եպի, որ 1644 Օգոստ.ին Յովհաննէս Բարձրբերդցին քահանայ կը ձեռնադրէ) Կեսարացիք քահանայական ձեռնադրութիւն ընել տալու պէտք պիտի չունենային, և Դաւիթ եպ. իրր վիճակին եպ.ը ինքն պիտի կատարէր: (Ալպոյանեան՝ «Հայ Կեսարիա» էջ 918—9):

ԴԱԻԻԹ եպ. Կեսարիոյ (... — 1709—...), կը յիշուի 1709ին գրուած Աւետարանի մը մէջ (Պալեան՝ «Հայ Վանօրայի» էջ 43): Վտարանդին (s. «Մասիս» 1886 Նոյ. 8 ք. 3847) կը գրէ 1709ին վանահայր եղաւ... Դաւիթ վրդ.: Հայր Դաւիթ կը յաջողի միաբանաց թիւը աւելցնել, վանուց արտաքին աղբիւրը շինել, նաև պարտէզ մը: Տրդատ եպ. կը կարծէ թէ միայն տարի մը պաշտօնավարած է, սակայն կարելի է ենթադրել թէ նոյն իսկ Վրթանէս Ստեփանեան Արքեպիսկոպոսը փոխանորդած է 1706էն սկսեալ: (Ալպոյանեան՝ «Հայ Կեսարիա» էջ 921):

ԴԱԻԻԹ եպ. Կեսարիոյ, Երեւանցի (1744—1776), կը յաջորդէ Աւետիք եպ.ի, որուն աշակերտած և աշխատակցած էր: ձգնազգեաց վարդապետ տիտղոսուած և «Հայր Դաւիթ» մականուանեալ այս եկեղեցականը 30 տարիներ պաշտօնավարած է մեծ գործունէութեամբ, սակայն առանց շատ խաղաղութեան կաթողիկ խմորումին պատճառաւ: Նախանի յաջորդին Պասմաճեան Գրիգոր պատրիարքի ատեն (1764-73) ինքն է որ մեղադրուած է օրուան պատրիարքէն, կրօնական համոզումներուն համար: Պասմաճեան պատրիարք, որ կաթողիկ համոզումներ ունէր և ի վերջոյ ինկաւ Հռոմի ձոցը, իր Յիւստակարանին մէջ սա տողե-

րը գրած է իր մասին, որ բաւական յատկանշական է.

«Ոչ որպէս դետին Կեսարիոյ քաղաքին, այսինքն Դաւիթ եպիսկոպոսին, որ մեծաւ հաւատով եւ ջերմեռանդ սրտիւ ուտէր զմիս մատաղին եւ զկնի ուտելոյն ի վերայ մնացեալ ոսկերաց նորին զկարգ թաղման մեռելոց կատարեալ և յետոյ ամփոփէր ի մէջ և ի ներքոյ հողոյ»:

Սիմէոն Երեւանցի կաթողիկոսի (1763—80) 1777ին գրած մէկ գրութենէն կը հասկցուի որ իր շուրջը վէճեր պակաս չեն եղած... Ասկէ որոշ կերեայ թէ նոյն իսկ Կեսարացիք խնդրամատոյց եղած են և Սիմէոն կթղ. զայն պաշտօնէ դադրեցուցած է և Զաքարիա Փօքուզեան կաղզուանցի պատրիարք (1773—81) անոր յաջորդին ֆէրմանը ստացած է: Դաւիթ Արքեպ.ի պաշտօնէ քաշուելէն տարի մը յետոյ (1777) Էջմիածնայ նուիրակ Սահակ վրդ. Կեսարիա կու գայ ժողովարարութեան համար և փոխանակ իր գործով զբաղելու՝ Դատաստանի կ'ենթարկէ Կեսարացիքը, — «Դուք զբաղմամեայ ձերունի Դաւիթ վարդապետն ո՞րպէս հանիք յառաջնորդութենէ և զՄատթէոս վարդապետ առաջնորդ արարիք» ըսելով: ... Սահակ 5 ժամ հեռի գտնուող գիւղը կ'երթայ, ուր Դաւիթ եպ. կը գտնուէր: Հոն երկուքն ալ կաթողիկոսին թուղթեր կը գրեն եւ «Փայեկ»ով կը զրկեն Էջմիածին. Կեսարացիք իմանալով՝ Փայեկը կը բռնեն և թուղթը ձեռքէն կ'առնեն ու իրե՛նք հանրագրութիւն մը կը գրեն Սահակ վ.ի դէմ:

Սիմէոն կթղ. երբ Կեսարացուց հանրագրութիւնը կը ստանայ, անմիջապէս նամակով ցաւ կը յայտնէ և սաստիկ կը պախարակէ նուիրակը որ իր իրաւասութեան սահմանէն դուրս գործերու միջամտած է և կը դատապարտէ զայն «որպէս խելագար եւ մոլեցնեալ (Աղանեան Գիւան Հայոց պատմ. ԺԱ. հր. էջ 31)...

Դաւիթ եպ. որ մեկուսացած էր Կեսարիայէն 5 ժամ հեռու գիւղմը (Գիւան Հայոց Պատմ. ԺԱ. 101) հաւանօրէն մինչև մահը հոն կը մնայ հակառակ իր յաջորդին զինքն հեռացնելու փորձին, և ինչպէս սովորաբար կը պատահի Հայոց մէջ՝ յետ մահու կը պատուուի իբր «լեկավար բնիք» և «նովուապետ արքուն», որ օգտակար եղած էր վանքին՝ անոր կրթական և նիւթական բարգաւաճման աշխատելով, և կատարելով շինութիւններ, — ինչպէս կը թուէ իր տապանաքարը: Կը թաղուի վանքին մէջ, Աւետիք եպ.ի գերեզմանին քով: (Ալպոյանեան՝ «Հայ Կեսարիա» 924—30 ուր սպուած է եւ սապանաքարը):



«ՀԱՅ ՀԱՆՐԱՊԵՏԱԿ»-Ի Գ. ԳՐԳԻՆ ՄԵԿԵՆԱՍ ԵՂԱՍԵ ԵՆ

Հոնտոնարնակ Կիիւղեկեան ԵՂԲԱՐԲ

Ջերմագին շնորհակալիք

Հ. Մ. ՊՈՏՈՒՐԵԱՆ

ԳՍՂՈՒԹԱՀԱՅ ՀՐԾՏԱՐԱԿՉԱԿԱՆԻ ցարդ արձանագրուած անդամներն են.

ՄԵԿԵՆԱՍ ԱՆԿՈՍՆԵՐ

1. Պուքրէշարնակ Տիար Արքաֆի Աչբէկեօղեան,
2. Կայացէն Տիար Արմենակ Պոնեկեան,
3. Լոմառնէն Տիար Ներսէս Կիւլպէնկեան

ՀԻՄՆԱԳԻՐ ԱՆԿՈՍՆԵՐ

1. Վսեմ. իշխան Պորիս Արղութեանց Երկայնարազուկ (Ֆրանսա).
2. Վսեմ. Ոսկան Մարաիկեան նախկին նախարար Թուրքիոյ (Գահիրէ),
3. Վսեմ. Տիգրան Կամսարական, գրագէտ (Բարիդ),
4. Վըսեմ. Սիմէոն Ղարիպեան (Պասրա),
5. Գեր. Յարութիւն վ. Տիւլէկեան (Պաղտատ),
6. Գեր. Պօղոս վ. Գըրմըղեան (Լէմպէրկ),
7. Վարդան Մըկըրտիկեան (Օմուր Ֆաքա),
8. Ղաղարոս Նահապետեան (Գահիրէ),
9. Հրանդ Վարդանեան (Պուքրէշ),
10. Աւետիս Էթտահար (Կերլա Ռուժանիա),
11. Ներսէս Գասապեան (Բլովփիվ),
12. Վարդան

- Մելքոնեան (Պասրա), 13. Արժ. Խորէն քհ. Գասապեան (Պասրա),
14. Լևոն Շահոյեան (Պաղտատ),
15. Արժ. Յարութիւն քհ. Տէր Մեսրոպեան (Ղաղվին),
16. Հայկաղ Տէլիսեան (Ալեքսանտրիա),
17. Տիգրան Փաշալեան (Տիթրոյիա),
18. Ա. Տատրեան (Ս. Փաւլո),
19. Տքթ. Ա. Կէօքճեան (Լառնաքա),
20. Տքթ. Ռ. Թագուրեան առամնարոյժ (Նիկոսիա),
21. Յովհաննէս Բարսեղեան (Ղաղվին),
22. Յովհ. Շէքէրճեան (Պուքրէշ),
23. Ներսէս Թօփալեան (Կայաց),
24. Թորոս Եէթէնէքեան (Յոպպէ),
25. Յովհ. Վարժապետեան (Մարսէյ),
26. Անդրանիկ Պաղտատրեան (Պրայա),
27. Տքթ. Յովհաննէս Արթինեան (Սոնուվլի),
28. Խաչատուր Լաղարեան (Նոր Ջուղա),
29. Գէորգ Հաճի Արթինեան (Պուքրէշ),
30. Յովհաննէս Աճէմեան (Պոստոն),
31. Արգար Մեսրոպեան (Պասրա),
32. Պր. Տիգրանեան (Լոս Անճէյոս),
33. Միսիրեան Էգրարք (Պրիւքսէյ),
34. Միքիլաս Արապեան (Թիմիշուարա),
35. Արամ Երեմեան (Նոր Ջուղա)

«Հ Ա Ն Հ Ա Ն Ր Ա Գ Ի Տ Ա Կ»

ԿԱՐԵԼԻ Է ՍՏԱՆԱԼ ՄԵՐ ՀԵՏԵԻԵԱԼ ԶԱՐԳԵԼԻ ԳՈՐԾՕՆ ԱՆԿՈՍՆԵՐԷՆ

Ֆրանսա Rev. I. Posbeyekian, 26 rue Troyon, Sèvres (S. & O).

Եգիպտոս Էւ Սուսան Mr. A. Alboyadjian, 16 rue Mahdi, Le Caire.

Պուլկարիա Mr. Nerses Kassabian, rue Trgovska 54, Plovdiv

Թուրքիա Mr. Toros Azadian, Billor Sokak Gül Han 8-9 Galata-Istanbul.

Ամերիկա (Հիւսիսային) Mr. Vahan Mozian 10 East 39th str. New York city (U. S. A.).

Ամերիկա (Հարաւային) Mr. A. Baraghian Los Incas 4561 Buenos Aires (Argentina).

Իրան Mr. Aram Yeremian, Djoulfa-Isbahan

Կիպրոս Mr. Dr. A. Cuukdjian Larnaka.

Իրազ Rev. Pascal Diuleguian, Armenian Catholic church Bagdad.

Յուճասուսան Mr. K. Kiyidjian, rue Klisthéous 7 Athènes.

Պաղեսիին Rev. P. B. Toumayan, Patriarcat Armenien, Jérusalem.

Պաղեսիին Mr. Sahag Sarkisian, Couvent Armenien Catholic, Jérusalem.

Լիբանան Mr. Vahan Ouzoun'ian, B. P. 491 Beyrouth.

Սիւրիա Librairie Bogharian, B. P. 295 Alep.

Անգլիա Mr. A. Safrastian, 18 Eton Villas London N. W. 3.



## Լ ՈՅՍՏԵՍԱԻ

### „ԳԱՂՈՒԹԱՅԱՅ ՏԱՐԵԳԻՐԲ“Ը

Որպէսզի «Հայ Հանրագիտակ»ի բաժանորդները նոր «արտոյ առքի» մեր կաղանդչեփով կարենանք սրտուած ըլլալ՝ լոյս ընծայեցինք ԳԱՂՈՒԹԱՅԱՅ ՏԱՐԵԳԻՐԲը, մեծագիր 280 էջերէ բաղկացած, արտասանմանի բոլոր յայտնի գրողներու՝ աշխատակցութեամբ: Այլազան յոգուածներով եւ հետաքրքրական ուսումնասիրութիւններով այս նոյն *Տարեգիրքը*, որուն զինն է մէկ տար. ԿէՍ ԳԻՆՈՎ, կը դիպենք բոլոր մեր բաժանորդներուն՝ ի բաց առեալ անոնց՝ որոնք նախապէս կը յայտնեն թէ չեն ուզեր:

Մեր բաժանորդները եթէ իրենց ծանօթներուն ասն այս գիրքը՝ իրենց եղած զեղչեալ գինով՝ շնորհակալութեան պիտի արժանանան:

«Հայ Հանրագիտակ»ի բաժանորդները Տարեգրքին համար պիտի վճարեն կէս տար կամ 2 շիլլին, 60 լեվա, 12, Ֆրանկ, 2 զուից, Ֆրանկ, 50 սրախմբի եւ այլն:

## Հ Ա Յ Մ Ա Մ Ո Ւ Լ

Ա Ն Կ Ա Խ Շ Ա Բ Ա Թ Ա Թ Ե Ր Թ

Կը խմբագրուի երիտասարդ կարող ուժերէ  
Տարեկան բաժնեգին 250 լեյ, արտասանման 2 տար

15 Ստ. էքիսոբուլ Ռասու, Պուերե 3

Արտասանմանի «Հայ Հանրագիտակ»ի ո՛ր եւ է բաժանորդ եթէ բաց քարով մը նմոյս մը ուզէ՝ կը դրկուի սիրով եւ եթէ ուզեն բաժանորդագրուիլ՝ կ'ընդունին բացառիկ զեղչ մը բաժնեգինին վրայ՝ դիմելով Հ. Մ. Պոսուրեանի (Ֆրումուսա-Չիուֆ — Ռումանիա)